Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅՈՑ ԳԻՐ ԵՎ ԳՐՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅՈՑ ԳԻՐ ԵՎ ԳՐՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

А. Г. АБРАМЯН

АРМЯНСКОЕ ПИСЬМО И ПИСЬМЕННОСТЬ

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ЕРЕВАН—1973

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅՈՑ ԳԻՐ ԵՎ ԳՐՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1978

Աշխատության մեջ տրված է հայոց գրերի պատմությունը՝ Մեսրոպ Մաշտոցից մինչև հնատիպ գրականության հանդես գալը: Առանձին գլուխներով ներկայացված են հայկական գրատեսակները, մատենագրության մեջ գործածված թվանշանները, համառոտագրությունները, ծածկագրությունները, կապգրությունը և հնագրության հետ կապված այլ հարցեր: Զգալի տեղ է հատկացված մասնավորապես հայկական տոմարին, գրչությանը, գրիչներին, նրանց աշխատանքային պայմաններին, գրչական ավանդույթներին և գրչության արվեստի հետ կապված այլ հարցերի:

Խմբագիր՝ Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Տակավին շատ մանուկ է հայ հնագրությունը (paléographie). ամենակարևոր խնդիրները լուծելու կանոնավոր փորձ մ' անգամ եղած չէ. բազմաթիվ կետեր տակավին առեղծված կմնան՝ թաղված խոր մթության մեջ»,— ցավով նշել է ձեռագրական մշակույթի լավագիտակ հայագետ Հ. Տաշյանը[1]։

Գրչության արվեստի մասին նման դիտողություն ունի նաև Գ. Հովսեփյանը. «Մեր գրչության հարուստ արվեստը,—գրել է նա,—յուր պատմությամբ, գրեթե խոպան, անմշակ վիճակի մեջ է, եթե չհիշենք Տաշյանի «Ակնարկ մը հայ հնագրության վրա» գործը»[2]։

Գիտնականը «Գրչության արվեստ» ասելով, անշուշտ, նկատի ունի հայկական գիրն ու գրչությունը իր նեղ առումով, այսինքն՝ այն աշխատանքը, որ դարերի ընթացքում կատարել են մեր ձեռագրական մշակույթի մեղվաջան մշակները՝ Մեսրոպ Մաշտոցից սկսած մինչև առաջին տպագրիչը՝ Հակոբ Մեղապարտը։

Տպագրությունից առաջ, դարեր շարունակ, հայ մատենագրության հուշարձանները դարերին ավանդելու ողջ ծանրությունն իրենց ուսերին կրել են գրիչները՝ մեր գրչության մշակները. Նրանց շնորհիվ է, որ մեզ է հասել հայկական ինքնուրույն և թարգմանական մատենագրությունը, նրանք են, որ օրեր-տարիներ շարունակ, ձիթե ճրագի աղոտ լույսի տակ, հաճախ արհավիրքների ու փոթորիկների մեջ ընդօրինակել են մարգարտաշար ձեռագրերը և թողել գալիք սերնդին՝ որպես «յիշատակ բարի»։ Մինչդեռ չկա ոչ մի առանձին ուսումնասիրություն, որ նվիրված լինի մեր գրչության այդ մեղվաջան մշակներին։

Գրչության արվեստին հայոց հին մատենագրության մեջ առանձնահատուկ տեղ է տրված եղել։ Հայտնի է, որ Մեսրոպ Մաշտոցը և նրա գործակիցները, հայկական գիր ստեղծելուց անմիջապես հետո, մեծ հոգածություն են ցուցաբերել գրչության արվեստի ստեղծման և ուսուցման գործին։ Գրի ստեղծումից և Աստվածաշնչի թարգմանությունից հետո, գրում է պատմահայր Մովսես Խորենացին, Մաշտոցն ու նրա լավագ աշակերտներ Հովհան Եկեղեցացին և Հովսեփ Պաղնացին սկսեցին գրչության արվեստն ուսուցանել «ման-

---

[1] Հ. Տաշյան, Ակնարկ մը հայ հնագրության վրա (Ուսումնասիրություն հայոց գրչության արվեստին), Վիեննա, 1898, էջ 1։

[2] Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, Հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ ժե։

կազոյն աշակերտացն»[3]։ Գրի ստեղծումից շատ չանցած, նշում է Ղազար Փարպեցին, «Բազմացան դասք գրչաց, ելեալ առնելով զմիմեամբք...»[4]։

Միջին դարերում Հայաստանում գործել են բարձրագույն մի շարք դպրոցներ, որոնք ունեցել են գրչության հատուկ մասնագիտացված բաժիններ։ Այսպես, տեղեկություններ կան, որ Տաթևի գրչության դպրոցում գոյություն է ունեցել երեք մասնագիտացված բաժիններ, որոնցից մեկում սովորեցրել են մանրանկարչություն, մյուսում՝ երաժշտություն, իսկ երրորդում՝ գրչագրություն[5]։

Գրիչ ասելով մենք այժմ հասկանում ենք գրչածայրը կամ գրչակոթը ծայրի հետ միասին։ Հնում այն ուներ այլ իմաստ. «գրիչ» ասելով հասկանում էին այն անձնավորությունը, որը գրում, ընդօրինակում էր ձեռագրերը։ Անցյալում «գրչության արվեստը» ևս ուներ այլ իմաստ. այն միայն ձեռագիր գրելու աշխատանքը չէր, այլ գրքի վրա կատարված բոլոր տեսակի գործողությունները ամբողջությամբ վերցրած՝ գրանյութի պատրաստումը, մաքուր և քերականորեն անսխալ գրելը, զարդանկարելը, կազմելը և այլն։

Հայկական գիրը և գրչությունը, սկիզբ առնելով հինգերորդ դարում, իհարկե, միշտ նույնական չի մնացել, այլ ենթարկվել է զգալի փոփոխությունների. փոխվել են և՛ տառաձևերը, և՛ ուղղագրությունը, և՛ կետադրությունը, և՛ պծանշանները։ Այս փոփոխություններին զուգընթաց, փոփոխվել են նաև գրչության արվեստի օրինաչափությունները։ Այդ փոփոխությունն այնքան մեծ է, որ հայ գրչության արվեստի պատմության հետ անծանոթ մեկի համար դժվար է կարդալ և անսխալ վերծանել գրչագիր բնագրերը։ Պետք է նկատի ունենալ, որ տարբեր ժամանակներում գրված ձեռագրերում քիչ չեն հանդիպում գաղափարանշաններ, հապավումներ, կապգրեր, ծածկագրություններ, հայկական տառանիշերով գործածված թվանշաններ, տարբեր էրաների հետ կապված թվականներ և այլ իրողություններ։ Հայոց հնագրության խնդիրն է լուսաբանել այս բարդությունները, ցույց տալ նրանց վերծանության ճիշտ ձևերը և եղանակները։ Միաժամանակ հայկական ձեռագրերում մեծ թիվ են կազմում թվական չունեցող գրչագիր բնագրերը, և եթե ուսումնասիրողը ծանոթ չէ գրչության մեջ տարբեր դարերում կատարված փոփոխություններին. ծանոթ չէ հնագրական օրինաչափություններին, անկարող է պարզել ձեռագրի գրչության մոտավոր ժամանակը, իսկ առանց ձեռագրի ժամանակը պարզելու դժվար է արժեքավորել ուսումնասիրվող բնագիրը։ Այս խնդրի լուսաբանումը նույնպես ծանրանում է հնագրության վրա։

Միջին դարերում փորձեր են արվել կազմելու գրչության արվեստին նվիրված աշխատություններ, որոնք և դասավանդվել են դպրանոցներում։ Գրչության դասընթացին այնքան մեծ նշանակություն է տրվել, որ այն անվանել են «Քանոն և կաղապար ամենայն արուեստից», այսինքն՝ ուղեցույց բոլոր տեսակի գիտությունների։ Ձեռագիր դրել տվող պատվիրատուն սովորաբար ընտրել է այնպիսի գրչի, որը պատշաճ կրթություն ունի, տիրապետում է գրչության արվեստին։ Եթե պատահում են գրչության արվեստին ոչ հմուտ գրիչներ, ապա այդպիսիներն իրենց հիշատակարաններում հազարաձայն խնդրում են անմեղագիր լինել իրենց՝ «Ախմար էաք յարհեստ գրչութեանս», «Ոչ ներհուն գոլով մեր յարհեստ գրչութեան», «Անհմուտ էաք գրոց գիտութեան և անվարժ արուեստիւք» և նման այլ արտահայտություններով։

---

[3] Մովսես Խորենացի. *Պատմութիւն Հայոց*. Տփղիս, 1913, էջ 327։

[4] Ղազար Փարպեցի. *Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան*, Տփղիս, 1904, էջ 15։

[5] *Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 7823, թ. 26 բ։*

Ստեփանոս գրիչը Ղրիմի Սուրխաթ վանքում 1357 թ., ընդօրինակելով Արիստակես գրչի (XII դ.) և Գևորգ Սկևռացու (XIII դ.) գրչության արվեստին նվիրված աշխատությունները, իր հիշատակարանում անհրաժեշտ է համարել նշել գրչության արվեստի կարևորությունը և այդ առթիվ հետևյալ կարծիքն է հայտնել. «Զի որպէս անհնար է թռչնոց ի լուծ լծել և ակաւս պատառել, և կամ եզանց յաւդս վերանալ, նոյնպէս առանց աշխատելոյ ի սմա ոչ ոք կարէ հասու լինել արուեստին մեծի գրչութեան. և որ յանդգնի համարձակիլ՝ ոչ կարէ գրել զճշմարիտն, այլ եղծանէ զարուեստն և աղաւաղէ զգրեալն, ըստ անիմաստ խոհակերի. այսինքն մսագործի, որ ոչ գիտէ զորոշումն յաւդուածին, այլ անհրմտաբար հանէ զանդամայն միսն ի միւս անդամն և զմիւսոյն՝ ի միւս և այլն»[6]։ Կան մարդիկ, շարունակում է Ստեփանոս գրիչը, որոնք ծաղրանքով են նայում գրչության արվեստի վրա, այդպիսիք, ասում է նա, տհասներ են, և գրչության արվեստն նմանների համար ունի այն արժեքը, ինչ որ մարգարիտը խոզի առջև կամ ոսկի մանյակը՝ իշու պարանոցում։ Վերջում նա գտնում է, որ այդ արվեստը սիրել կարող է միայն նա, ով «Գիտէ զճաշակ քաղցրութեան դորա»[7]։

Մեզ հասած հայկական գրչագիր մատյանների թիվը հաշվվում է շուրջ 25000։ Ձեռագրական ամենից մեծ հավաքածուն գտնվում է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում (Մատենադարանում)[8]։ Այստեղ հաշվվում է 10408 ձեռագիր։ Այդ թվի մեջ չի հաշվվում այլ լեզուներով գրված ձեռագրերը, ձեռագրական պատառիկները և, հասկանալի է՝ վավերագրերը։

Մաշտոցի անվան մատենադարանի հավաքածուի մեջ մտել են նախկին էջմիածնի մատենադարանի, Սևանի և Տաթևի վանքերի, Մոսկվայի Լազարյան ճեմարանի, Թբիլիսիի Ներսիսյան դպրոցի, Նոր Նախիջևանի և այլ ձեռագրական հավաքածուներից[9]։ Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին հայագետների ջանքերով հաջողվեց կորստից փրկել և Արևմտյան Հայաստանից բերել մոտ հազար ձեռագիր[10], այս նույնպես մտել է Մաշտոցի անվան մատենադարանի հավաքածուի մեջ։

Հայկական ձեռագրերի խոշոր մի հավաքածու գտնվում է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի Սրբոց Հակոբյանց մատենադարանում՝ շուրջ 3750 ձեռագիր։ Այս հավաքածուի ձեռագրաց ցուցակի առաջին հատորը կազմել է

---

[6] Մաշտոցի անվան մատենադարանի ձեռ. № 2371, թ. 292ա։

[7] Նույն ձեռագրում, թ. 292բ։

[8] Այսուհետև «Մաշտոցի անվան մատենադարան» տողատակ ծանոթագրության մեջ համառոտագրվելու է «ՄԱՄ» ձևով։

[9] Մանրամասն տե՛ս Օ. Եգանյան, Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, Ցուցակ ձեռագրաց, հ. Ա, Երևան, 1965, էջ 13—198։

[10] Մատենադարանի ձեռագրերը համառոտակի ներկայացված են «Ցուցակ ձեռագրաց» երկու հատորում, Երևան (1965 և 1970 թթ.)։

Արտ. Սյուրմեյանը[11], իսկ մյուս հատորները շարունակում է կազմել Ն. Պողարյանը։ Առ այժմ լույս է տեսել հինգ հատոր[12]։

Հայկական ձեռագրերի հարուստ հավաքածու ունեն Վենետիկի Մխիթարյանները. նրանց ձեռագրերի թիվը հասնում է երեք հազարի։ Առ այժմ լույս է տեսել հավաքածուի ցուցակի երեք հատորը, որի հեղինակն է Բ. Սարգիսյանը[13]։

Ձեռագրական արժեքավոր հավաքածու ունեն Վիեննայի Մխիթարյանները՝ 1200 ձեռագիր, որից 573-ը նկարագրել է Հ. Տաշյանը[14], իսկ շարունակությունը՝ Հ. Ոսկյանը[15]։

Հայկական ձեռագրերի արժեքավոր մի հավաքածու գտնվում է Նոր Ջուղայում (շուրջ 900 ընտիր ձեռագիր)։ Այդ հավաքածուի մի մասը Շահ-Աբասի կողմից քշված գաղթականության հետ տարած ձեռագրերն են, իսկ մյուսը ստեղծվել է տեղում։ Հավաքածուի ցուցակն, իրարից անկախ, կազմել են երկու հեղինակ՝ պրոֆ. Ս. Տեր-Ավետիսյանը և Մեսրոպ եպիսկոպոսը։ Տեր-Ավետիսյանի ձեռագրաց ցուցակի առաջին հատորը վերջերս հրատարակվեց Կյուլպենկյան մատենաշարով[16]։

Հայկական ձեռագրերի փոքրիկ ժողովածուներ կան Լոնդոնի Բրիտանական թանգարանում՝ շուրջ 500 ձեռագիր (ցուցակը կազմել է պրոֆ. Ֆ. Քոնիբիրը). Փարիզի Ազգային գրադարանում՝ մոտ 300 ձեռագիր (ցուցակը կազմել է Ֆ. Մակլերը), Բեռլինի Արքայական գրադարանում՝ մոտ հարյուր ձեռագիր (ցուցակը կազմել է Ն. Քարամյանցը)։ Հայկական հավաքածուներ կան Վրաստանի ԳԱ Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտում՝ ավելի քան 200 ձեռագիր, Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարանում՝ 316 ձեռագիր, Լենինգրադի արևելագիտության ինստիտուտում՝ 90 ձեռագիր, Զմմառի մատենադարանում՝ շուրջ 500 ձեռագիր, Անթիլիասի մատենադարանում՝ մոտ 300 ձեռագիր, Կոստանդնուպոլսի Ազգային պատրիարքարանում՝ 200 ձեռագիր և այլն[17]։

---

[11] Արտ. Սիւրմէեան, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի սրբոց Յակոբեանց վանքի*, Վենետիկ, 1948 (այսուհետ հիշվելու է «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի»)։

[12] Ն. Պողարեան, *Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց*, երկրորդ հատորը լույս է տեսել 1953 թ., երրորդը՝ 1954 թ., չորրորդը՝ 1956 թ.։ Հետագայում այդ հատորներն ամփոփվել են Կյուլպենկյան ֆոնդի միջոցներով լույս տեսնող նոր հրատարակությունների մեջ, որոնց մեջ և շարունակվել է տվյալ մատենադարանի մյուս ձեռագրերի նկարագրությունը։ Այդ հատորներից առաջինը լույս է տեսել 1966 թ., երկրորդը՝ 1967 թ., երրորդը՝ 1968 թ., չորրորդը՝ 1969 թ. և հինգերորդը՝ 1971 թ. (այսուհետ Ն. Պողարյանի ձեռագրաց ցուցակը հիշվելու է՝ «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի» համառոտագրությամբ)։

[13] Բ. Սարգիսյան, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*։ Առաջին հատորը լույս է տեսել 1914 թ., երկրորդ հատորը՝ 1942 թ., երրորդ հատորը՝ 1966 թ. (այսուհետ հղելու ենք «Ցուցակ ձեռագրաց Վենետիկի» համառոտագրությամբ)։

[14] Հ. Տաշեան, *Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա*. Վիեննա, 1895 (այսուհետ հղվելու է «Ցուցակ ձեռագրաց Վիեննայի» համառոտագրությամբ)։

[15] Հ. Ոսկեան, *Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա*. հ. Բ, Վիեննա, 1963։

[16] «Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի», կազմեց Սմբատ Տեր-Աւետիսեան, Վիեննա, 1970 թ.։

[17] Հայկական ձեռագրերը ներկայացված են ավելի քան 180 անուն ձեռագրացուցակներում. դրանց մատենագրությունը տե՛ս Հ. Ս. Անասյանի «Հայկական մատենագիտություն», հ. Ա, Երևան, 1959, էջ LXXVII—XCV։

Մեզ հասած ձեռագրերը, սակայն, մեր ունեցած երբեմնի գրչագիր ժառանգության միայն բեկորներն են։ Անցյալի գրադարանների հարուստ ժողովածուները ժամանակի ընթացքում կողոպտվել են Հայաստան խուժած օտարերկրյա ավարառուների կողմից։ Հայտնի են փաստեր, երբ նվաճողները նպատակադրված ձևով ոչնչացրել են հազարավոր ձեռագրեր։ Ի դեպ, նրանք ձեռագրի հետ այդպես են վարվել ոչ միայն Հայաստանում, այլև իրենց գրաված շատ երկրներում։ Հայտնի է, օրինակ, որ երբ 640 թվականին, Աղեքսանդրիայի գրավման ժամանակ խալիֆաթի զորքերը դիմել են Ամր խալիֆին և հարցրել, թե ինչպես վարվել ավար վերցրած հունարեն ձեռագրերի հետ, նա պատասխանել է. «Եթե անոնք համեմատ ու համաձայն են աստուծո գրքին (Ղուրանին), մեզ համար ավելորդ են, իսկ եթե հակառակ՝ վնասակար, ուստի բոլորն ալ փչացնել տուր»[18]։

Այդ հրամանից հետո այրում են Աղեքսանդրիայի նշանավոր գրադարանը, ուր հավաքված էին անտիկ ժամանակաշրջանի լավագույն ստեղծագործությունները՝ շուրջ 700 000 հատոր։

Հայաստան նվաճողները վայրենի այս մոլուցքով հաճախ են փորձել ոչնչացնել ու ջնջել հայ ժողովրդի ստեղծած մշակութային այն բոլոր արժեքները, որոնք խորթ են եղել իրենց ըմբռնումներին։ XIII դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը վկայում է, որ «անիծեալ և գիշախանձ» սելջուկները 1170 թվականին Տաթևի վանքը գրավելիս, նրա գրադարանում ոչնչացրել են «...կտակարանք յոլովք որք թուով աւելի քան զ10 000, զորս ամբարեալ էին անդ (այսինքն՝ Բաղաբերդում, ուր գտնվել է Տաթևի գրատունը—Ա. Ա.)։ Ամենայն առ հասարակ գերի վարեցան, և ցիր և ցան եղև ընդ երեսս աշխարհիս»[19]։

Մեծ թվով ձեռագրեր փչացել են նաև անշնորհք պահպանման հետևանքով։ Ականատես մի անձնավորություն պատմում է, որ 1778—1799 թվականների միջև ընկած ժամանակամիջոցում Հաղբատի Ս. Նշան վանքում Պետրոս անունով մի փոքրավոր, վանքը «մաքրելու» նպատակով, հավաքել է քայքայված ձեռագրերը, դարսել զանգակատան առջև ու, կազմելով 10—1 ոտնաչափ բարձրությամբ մի շեղջ, այրել է «իբրև անպիտան» գրականություն[20]։ Զարմանալի չէ, որ Հաղբատի վանքի ձեռագրական հարուստ ժողովածուից, որը պահվելիս է եղել յոթ տարբեր սրահներում, մեզ հասել են միայն աննշան բեկորներ։

Հնում առանձնապես անփույթ են վարվել վավերագրերի հետ։ Ըստ Մ. Թաղիադյանի վկայության, 1824 թվականին, երբ կաթողիկոսական արխիվը ցանկացել են էջմիածնից Հաղբատ տեղափոխել, նրա միջից ընտրել են միայն դրամական արժեք ունեցող վավերագրերը, իսկ մյուսներն այրել՝ որպես ոչ պիտանի թղթեր[21]։ Եղել են նաև միտումնավոր ոչնչացման դեպքեր։

Մեզ հասած ձեռագրական անգնահատելի ժառանգությունը, դժբախտաբար, ցրված է աշխարհով մեկ։ Կարելի է ասել, չկա մի անկյուն, շատ թե քիչ խոշոր մի գրադարան, ուր կարելի չլինի գտնել հայկական ձեռագրեր։ Միջին դարերում հայ ժողովրդի որոշ հատվածներ հարկադրյալ թողել են իրենց հայրենի հողը և «զօրէնս աստեղաց մոլորական կոչեցելոց» տարագրության դիմել և ցրվել աշխարհով մեկ։ «Ազգս օտարածնաց օտարացուցին զմեզ ի բնակութենէ մերմէ»—ցավով նշել է մեր ողբերգակ պատմիչ Լաստիվերտցին։ Տարագիր հայության հետ միասին ցրվել են նաև հայկական ձեռագրերն ու մշակութային արժեքները։ Սակայն գաղթավայրերում հայկական ձեռագրերի ընդօրինակման աշխատանքները չեն դադարել. ձեռագրեր են գրվել Հնդկաստանում, Վրաստանում, Եգիպտոսում, Լեհաստանում, Ղրիմում, Կիպրոսում, Ճավա կղզում և այլ վայրերում։

---

[18] «Թերթ մը թղթո պատմութիւնս» (տե՛ս «Բազմավէպ», 1875, էջ 164)։

[19] **Ստեփաննոս Օրբէլեան.** Պատմութիւն նահանգին Սիսական, Տփխիս, 1910, էջ 336։

[20] **Ա. Հանանյան,** Հայոց աշխարհի գրչագրերի ամենահարուստ մատենադարանի՝ Հաղբատի Ս. Նշան վանքի ողբերգական վախճանը 1778—1799 թթ. և Ս. էջմիածնի վանքի վավերագրերի անխիղճ ոչնչացումը Հաղբատում 1824 թ. (տե՛ս «Բազմավէպ», 1956, էջ 110)։

[21] **Մ. Թաղիադեան,** Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. Ա, Կալկաթա, 1847, էջ 333—334։

* * *

Վաղ շրջանում հայոց գրչության արվեստին նվիրված աշխատությունները կցված են եղել քերականական բովանդակությամբ բնագրերին։ Հայ գրչության առանձին հարցերի մասին խոսվում են Խորենացու, Դավիթ Անհաղթի և Մամբրե Վերծանողի՝ մեզ հասած քերականական պատառիկներում։ Գրչության հարցերին նվիրված հատվածներ կան Համամ Արևելցու (IX դ.) և Գրիգոր Մագիստրոսի (XI դ.), Վարդան Արևելցու (XIII դ.), Հովհաննես Պլուզ Երզնկացու (XIV դ.) և անանուն մի քանի այլ հայ հեղինակների քերականությունների մեջ[22]։

Հայ գրչության արվեստին վերաբերող ընդարձակ հատվածներ է պարունակում XII դարի գրչության ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Արիստակես գրչի «Վերլուծութիւնք բացերևապէս բազմազան բառից և բայից» վերնագրով աշխատությունը, որը գրվել է հատկապես գրչության զբաղվողների խնդրանքով՝ «Ի խնդրոյ բազմաց՝ յարհեստ գրչութեան»։

Արիստակես գրչի այս աշխատությունը փաստորեն շարունակել է «լուսաբան րաբունապետ» Գևորգ Սկևռացին (XII դար)՝ Ստեփանոս Կուլներիցանց գրչի հանձնարարությամբ։ Նա հեղինակել է երեք աշխատություն՝ «Խրատ վասն հանգամանաց հեգից», «Խրատ վասն առոգանութեանց» և «Խրատ յաղագս գրչութեան արուեստի»։ Թեև նշածս երկու հեղինակների աշխատությունները հիմնականում ուղղագրական ձեռնարկներ են՝ ներառյալ վանկատության, կետադրության և առոգանության խնդիրները, սակայն քանի որ միջին դարերում ուղղագրությունը ևս հնագրության առարկայի մասն էր կազմում, ուստի և այն վերնագրվել է «Խրատ գրչութեան»։

Արիստակես գրչի և Գևորգ Սկևռացու հայ գրչության արվեստի մասին գրած այս աշխատությունները XV դարում մեկնել է Գրիգոր Տաթևացին՝ Տաթևի համալսարանի ականավոր ուսուցչապետը։ «Լուծումն համառատ դժուարիմաց բանի ի գիրս գրչութեանն յԱռիստակիսէ Հռետորէ» և «Լուծումն համառատ ի խրատ գրչութեան Գէորգայ վարդապետի» վերնագրերով[23]։

Հայ գրչության արվեստի մասնագիտական ուսումնասիրությամբ առաջին անգամ զբաղվել է ականավոր հայագետ Հ. Տաշյանը և իր աշխատությունը հրատարակել 1898 թ. «Ակնարկ մը հայ հնագրության վրա» վերտառությամբ։

---

[22] Հայ քերականների աշխատությունների մեծ մասը հավաքել և հրատարակել է պրոֆ. Ն. Ադոնցը՝ „Дионисий Фракийский и армянские толкователи", ՍՊբ., 1915 թ.։

[23] Վերև հիշված հեղինակների (Արիստակես գրչի, Գևորգ Սկևռացու, Գրիգոր Տաթևացու, ինչպես և անանուն մի հեղինակի) գրչության արվեստին նվիրված աշխատությունները հրատարակել է Լ. Խաչերյանը «Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում» խորագրով արժեքավոր աշխատության մեջ (Երևան, 1962)։

Հետաքրքիր է այն շարժառիթը, որը ստիպել է Տաշյանին ձեռնարկելու գրչության արվեստի ուսումնասիրությանը։ Արևելագետ Շուխարդը ձեռք է բերում Եգիպտոսում գրված հայատառ հունարեն մի պապիրուս և այն վերծանելու համար անհրաժեշտ է համարում դիմել Հ. Տաշյանին՝ որպես ճանաչված աղբյուրագետի։ Նա խնդրում է մի շարք հարցերի պատասխանել՝ կապված հայ հնագրության հետ։ Տաշյանը, օգտվելով առիթից, ձեռնարկում է հայոց հնագրության ուսումնասիրությունը։ Այդ աշխատությունը նախ հրատարակում է «Հանդէս ամսօրեայ»-ում, իսկ 1898 թ.՝ առանձին գրքով։

Հ. Տաշյանը կանգ է առել հայկական գրի տեսակների, նրանց գործածության ժամանակի, հայկական կրկնագրերի, բառատրոհության, կետադրության և հնագրական այլ հարցերի վրա։ Մինչ այդ, հայկական հնագրության առանձին հարցերի ուսումնասիրությամբ զբաղվել էր Թբիլիսիի Ներսիսյան դպրոցի հայ ժողովրդի պատմության դասատու Իսահակ Հարությունյանը։ Նրա աշխատությունը հրատարակվել է 1892 թ. «Հայոց գիրը» խորագրով։

Հայոց գրի և գրչության պատմության համար արժեքավոր է Գ. Հովսեփյանի «Գրչության արվեստը հին հայոց մեջ» աշխատությունը[24], ուր Գ. Հովսեփյանը զետեղել է հայկական հնագրության 95 ցուցանմուշ՝ վերցրած տարբեր դարերում գրված ձեռագրերից և վիմագիր արձանագրություններից։

Հայկական հնագրության ուսումնասիրության գործում խոշոր ավանդ ունի ակադ. Հ. Աճառյանը։ Ամբողջովին հնագրությանն է նվիրված նրա «Հայոց գրերը» աշխատությունը[25]։ Հ. Աճառյանը իրեն հատուկ գիտական բարեխղճությամբ ուսումնասիրել է հայ հնագրության բազմաթիվ հարցեր՝ Հայաստանի նախաբնիկների գրությունները, դանիելյան գրերը, մեսրոպյան գրերը և նրանց զարգացումը, հայկական մատենագրության մեջ գործածված գաղափարագրերը, ծածկագրերը և այլն։

Վերջին տարիներս լույս տեսած ուսումնասիրություններից ուշադրության արժանի է պրոֆ. Կ. Ղաֆադարյանի «Հայկական գրի սկզբնական տեսակները» աշխատությունը[26]։ Այստեղ առանձնապես արժեքավոր է կապգրության մասին եղած բաժինը, որ հեղինակը կազմել է վիմագրության ուշադիր ուսումնասիրության հիման վրա։ Կ. Ղաֆադարյանը գրի ու գրատեսակների հարցին անդրադարձել է ավելի ուշ ևս՝ Մաշտոցի հոբելյանի օրերին[27]։

Հայ հնագրության հետ որոշ չափով առնչվում է Գ. Լևոնյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը» խորագրով աշխատությունը[28], թեև, ինքնին հասկանալի է, նա այդ խնդրով զբաղվելու նպատակադրում չի ունեցել։

---

[24] Լույս է տեսել 1912 թվականին՝ Հայոց գրի ստեղծման 1500-ամյա հոբելյանի առթիվ «Շողակաթ» ժողովածուում՝ «Քարտեզ հայ հնագրության» վերնագրով և հետո նրանից արտատպվել։ Ըստ տեղեկությունների, Հովսեփյանը կազմել է հնագրության ընդարձակ ծավալուն մի աշխատություն, որը, դժբախտաբար, դեռ մնում է ձեռագիր վիճակում։

[25] **Հ. Աճառյան**, *Հայոց գրերը*, Վիեննա, 1927։

[26] **Կ. Ղաֆադարյան**, *Հայկական գրի սկզբնական տեսակները*, Երևան, 1958։

[27] **Կ. Ղաֆադարյան**, *Տեկորի տաճարի V դարի հայերեն արձանագրությունը և մեսրոպյան այբուբենի առաջին տառաձևերը* (ՊԲՀ, 1962, № 2, էջ 39—54)։

[28] Լույս է տեսել Երևանում 1946 թ., ապա վերահրատարակվել 1958 թ.։

Մեր գրչության ատաղձը և նրա նախնական ձևերը պարզաբանելու հարցում արժեքավոր ներդրում է հայագիտության երախտավոր Ն. Ակինյանի «Հայերեն այբուբենի գյուտը» վերնագրով ուսումնասիրությունը, որը հրատարակվել է «Հանդէս ամսօրեայ»-ի 1938 թվականի սեպտեմբեր—դեկտեմբերի միացյալ համարում (էջ 289—318)։ Գիտնականն այդ խնդրին անդրադարձել է ուրիշ առիթներով ևս։

Հայոց գրչության արվեստի առանձին հարցեր քննարկված են Լ. Խաչերյանի «Գրչության արվեստի լեզվա-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում» վերնագրով աշխատության մեջ[29]։

Հնագրության որոշ խնդիրներ արծարծված են Ս. Քոլանջյանի՝ Կյուրեղ Երուսաղեմացու երկի պատառիկների վերծանությանը նվիրված աշխատության մեջ[30]։

Մենք ևս հրատարակել ենք հայոց գրին և գրչության արվեստին նվիրված երեք աշխատություն, որոնցից առաջինը լույս է տեսել 1940 թվականին «Համառոտ ուրվագիծ հայկական պալեոգրաֆիայի» վերնագրով, երկրորդը՝ 1948 թվականին «Հայկական պալեոգրաֆիա» վերնագրով և երրորդը՝ 1959 թ. «Հայ գրի և գրչության պատմություն» խորագրով։ Նշված աշխատությունները Երևանի պետական համալսարանում մեր կարդացած դասախոսությունների համառոտ սղագրություններն են։ Այդ դասընթացները հրատարակվել են ուսանողների անմիջական պահանջները բավարարելու նպատակով և չունեն հայ հնագրության գիտական լուրջ ուսումնասիրություն լինելու հավակնություն։ Վերջին աշխատության որոշ գլուխներ և հատվածներ մենք օգտագործել ենք ներկա աշխատության մեջ։

---

[29] Լ. Խաչերյան, նշվ. աշխատությունը։

[30] Ս. Քոլանջյան, Նորահայտ պատառիկներ Կյուրեղ Երուսաղեմացու Թ դարի մի գրչագրից (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 5, Երևան, 1960, էջ 201—238)։

I. ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Նախամաշտոցյան, ավելի ճիշտ՝ նախաքրիստոնեական հայ մատենագրության հարցը հայագիտության կարևոր հարցերից մեկն է. քրիստոնեությունից առաջ հայ ժողովուրդն ունեցե՞լ է արդյոք իր սեփական գիրն ու գրականությունը, թե դիմել է միայն այլալեզու և այլագիր գրություններին։ Այս խնդրում հայագետների մեջ կան տարաձայնություններ. ոմանք ընդունում են, իսկ ոմանք՝ հերքում։ Ճիշտ չէ այն կարծիքը, որ լրջմիտ բանասերների մեծ մասը իբրև թե ժխտում է նախամաշտոցյան հայկական գրի և դպրության գոյությունը։ Իրականում ընդունող գիտնականների մեջ կան այնպիսի ականավոր հայագետներ, ինչպիսիք են՝ Ղ. Ալիշանը, Ա. Գարագաշյանը, ակադ. Մ. Բրոսեն, ակադ. Հ. Մանանդյանը, պրոֆ. Հ. Հյուբշմանը, պրոֆ. Ք. Պատկանյանը, ակադ. Հ. Օրբելին, պրոֆ. Լեոն և շատ ուրիշներ։ Բերենք այդ գիտնականներից մի քանիսի հայտնած կարծիքները։

Ակադ. Ն. Մառն իր «Ани» ռուսերեն աշխատության առաջաբանում գրել է. «Ողջ Կովկասը, ներառյալ նաև Հայաստանը, կուլտուրական են եղել դեռևս ասորա-բաբելական քաղաքակրթության ժամանակաշրջանում։ Հայաստանում մայրենի լեզվով գրականություն գոյություն ուներ մեր թվականությունից դեռևս մի քանի դար առաջ»[1]։

Հայ ժողովրդի պատմության լավագիտակ Ա. Գարագաշյանն անդրադառնալով նախամեսրոպյան շրջանում հայկական գրության գոյության հարցին անվերապահ գտնում է, թէ՝ «...չէ ճշմարիտ այն որ ընդհանրապէս կը կարծուի, թէ Հայք յառաջ քան զՄեսրոպ չունէին նշանագիր, ուստի և էին անմասն դպրութենէ։ Նայելով հանգամանաց հայերէն լեզուին յառաջ քան զՄեսրոպ՝ անհնար էր լեզուին առանց դպրութեան հասնել յայն աստիճան զարգացման՝ յորում կը գտնենք զնա ի հատուկոտորս երգոց վիպասանաց, որոց կատարեալ նմանութիւն է թարգմանչաց լեզուին»[2]։

«Հայոց պատմության» I հատորում խոսելով հին հայկական հեթանոսական մշակույթի մասին, Լեոն եկել է հետևյալ եզրակացության. «Կարելի է, ուրեմն, ավելի մեծ հավանականությամբ ենթադրել, որ հայկական նշանագրեր գոյություն ունեին հին ժամանակներից... Որ հայ ժողովուրդը պիտի ունենար իր գրականությունը, այդ թելադրում է ասել և նրա լայն տարածված և ներքնապես զարգացած հեթանոսական պաշտամունքը»[3]։

---

[1] **Н. Я. Марр,** Ани. Книжная история города и раскопки на месте городища. М.-Л., 1934, էջ 5։

[2] Ա. Մ. Գարագաշյան, *Քննական պատմություն Հայոց*, Դ մաս, Թիֆլիս, 1895, էջ 39։

[3] Լեո, *Երկերի ժողովածու*, հ. I, Երևան, 1966, էջ 507։

Նախամաշտոցյան շրջանում հայկական գրի առկայությունը հավանական է համարում նաև ակադ. Հ. Մանանդյանը։ «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» երկրորդ հատորում նա գրել է. «Եվ միանգամայն հավանական կարելի է համարել, որ քրիստոնեության սկզբից հենց, ինչպես այդ երևում է աղբյուրների որոշ ակնարկներից, կարող էին փորձ արած լինել ստեղծելու հայերեն դպրություն, գլխավորապես, սեմական լեզուների այբուբենների օգնությամբ հարավային Հայաստանում»[4]։

Ղ. Ալիշանը պատասխանելով այն հարցին, թե նախամաշտոցյան շրջանում արդյոք հայոց գիր և գրականություն եղել է թե ոչ, գրել է. «...Հաւանիմք թէ որ և է կերպով կար գիր մի, բնիկ կամ օտարի, և մանավանդ նշանագիր»[5]։

Արդարությունը պահանջում է ասել, որ այն հարցադրումը, թե հին Հայաստանում եղել է գիր և գրականություն թե ոչ, այնքան էլ ճիշտ չէ, որովհետև եթե Հայաստանի նախաբնիկները գիր և գրականություն ունեին դեռևս երրորդ-երկրորդ հազարամյակներում մեր թվականությունից առաջ, ապա հիմք չունենք կարծելու, որ հայ ժողովուրդն էթնիկապես կազմավորվելուց հետո հետադիմեց, մոռացության տվեց իր նախնիների երբեմնի ստեղծած գիրն ու գրականությունը։

Անհիմն չէ չեխ ականավոր գիտնական Հրոզնու աշակերտ Հ. Ա. Մարտիրոսյանը, որը համարվում է գաղափարագրերի և սեպագրերի լավագիտակ մասնագետ, երբ իր «Սեպագրի կիրառումը մեր նախնյաց մոտ Ս. Մեսրոպից առաջ» հոդվածում գրում է. «Մեր նախնիները (այսինքն հայերը—Ա. Ա.) երկրորդ հազարամեակի երկրորդ կեսին արդեն սեպագիր կը գործածէին»[6]։

Պրոֆ. Հ. Մարտիրոսյանը ժայռագրությանը նվիրված իր ուշագրավ աշխատության մեջ մատնացույց է անում մի շարք ժայռագիր հիերոգլիֆներ և հանգում հետևյալ հետևության. «Վերև բերված հիերոգլիֆները, տասնյակ վերծանված և չվերծանված այլ նշանագրերի հետ միասին, ցույց են տալիս, որ նախնադարյան Հայաստանում, սկսած երրորդ հազարամյակից մեր թվականությունից առաջ, գործ էր ածվում հիերոգլիֆ նշաններ, իսկ հետագայում նաև գրություն»[7]։

Չպետք է մոռանալ, որ Հայաստանը Առաջավոր Արևելքի հզոր և ընդարձակածավալ երկրներից մեկն էր, նա մրցում էր աշխարհակալ այնպիսի պետության հետ, ինչպիսին Հռոմն էր։ Նման խոշոր պետության համար անհրաժեշտ էր կազմակերպել ժողովրդից գանձվող հարկերը, դիվանագիտական բանակցություններ վարել, երկրում ներքին կարգ ու կանոն սահմանել, առաջնորդել բանակները և այլն։ Իսկ այդ ամենն անկարելի էր իրագործել առանց այդ երկրի ժողովրդին հասկանալի գրի ու գրչության։

Հավաստի տեղեկություններ կան այն մասին, որ Արտաշեսյան Հայաստանում՝ Տիգրան Մեծի արքունիքում, հովանավորվում էին հույն գիտնականներ և գրողներ (Ամփիկրատես, Մետրոդորոս և ուրիշներ)[8]։ Հայոց Արտավազդ թագավորը, ըստ Պլուտարքոսի տեղեկության, ճառեր, ողբերգություններ և պատմական աշխատություններ է գրել, որոնց մի մասը, ինչպես վկայում է պատմողը, պահպանվելիս են եղել իր ժամանակ։ Իսկ Տիգրան II-ի հիմնած Տիգրանակերտ քաղաքը, ակադ. Հ. Մանանդյանի կարծիքով, հելլենիստական շրջանի այն քաղաքներից մեկն էր, որ «...կենտրոն էր դառնալու ո՛չ միայն միջազգային առևտրի, արհեստների և արդյունագործության, այլև հելլենիստական գիտության, արվեստի ու գրականության»[9]։

---

[4] Հ. Մանանդյան, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*, հ. Բ, Երևան, 1957, էջ 258—259։

[5] Ղ. Ալիշան, *Հայապատում*, Վենետիկ, 1901, էջ 21։

[6] *«Մարմարա»*, 1963 թ., հունվարի 23։

[7] **А. А. Мартиросян**, Первобытные иероглифы Армении и их урарто-армянские двойники *(տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, № 9, էջ 74)*։

Նախամաշտոցյան մատենագրության մերժողների առաջ քաշած այն պատճառաբանությունը, որ եթե Արտաշեսյան շրջանում հայերեն գիր լիներ, ապա Տիգրանը, Արտավազդը և Արտաշեսյան մյուս հայ թագավորներն իրենց դրամները չէին կտրի հունարեն, արդարացի չէ, քանի որ դրամները նրանք կտրել են շրջանառության մեջ դնելու ո՛չ միայն Հայաստանում, այլև՝ Հայաստանից դուրս։ Չպետք է մոռանալ, որ այդ ժամանակ դրամները հունարեն են կտրել նաև Փոքր Ասիայում, Եգիպտոսում, Պարսկաստանում և հելլենիստական ոլորտի մեջ գտնվող մյուս բոլոր երկրներում։

Հեթանոսական Հայաստանի գրի և գրականության հարցը մեծապես կապված է մեհենական մատենագրության հետ։ Ինչպես բոլոր երկրներում, այնպես և Հայաստանում մեհյանները կրոնական կենտրոններ լինելուց բացի, եղել են նաև մշակութային կենտրոններ։ Հայաստանի քրմական դասը պետք է որ ունեցած լիներ արարողական բովանդակությամբ գրքեր, տոմարական հաշվումների համար ուղեցույցներ, օրենսգրքեր և այլն։

Բարեբախտաբար, միջնադարյան հայ պատմիչների մոտ պահվել են միջանկյալ տեղեկություններ, որոնք նկատելիորեն փաստում են նախամաշտոցյան շրջանում հայոց գրի և մատենագրության գոյությունը։ Նշենք նրանցից մի քանիսը։

Հեթանոսական հայկական աստվածների պանթեոնում պաշտվել է Տիրը, որը համարվել է դպրության և արվեստի աստված։ Ենթադրելի է, որ այս աստծու մեհյանը գտնվել է Զվարթնոցի մոտակայքում։ Ագաթանգեղոսը Տիր աստծու մասին հետևյալ ուշագրավ տեղեկությունն է հաղորդում. «Ապա ինքն իսկ թագաւորն (նկատի ունի՝ Տրդատը—Ա. Ա.) խաղայր գնայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ՝ երթալ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբագինսն Անահտական դիցն, և որ յԵրազամոյն տեղիսն անուանեալ կայր։ Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազահան պաշտաման Տրի դից, դպրի գիտութեան քրմաց, անուանեալ Դիւան գրչի Որմզդի, ուսման ճարտարութեան մեհեան»[10]։ Տիրը համապատասխանում է եգիպտական Թոթ և հունական Հերմես աստվածներին[11]։ Տիր աստծու անունը ժողովրդի հիշողության մեջ մնացել է «Գրող» աստծու անունով՝ «գիր անող» աստծու իմաստով։ Մի ժողովուրդ, որ ստեղծել է գրի աստված, նա անպայման ունեցել է գիր[12]։ Հայագետներից ոմանց արած այն առարկությունը, թե Ագաթանգեղոսի մոտ Տիր աստվածը հիշված է որպես Որմիզդ աստծու դպիր, իսկ Որմիզդը պարսկական Ահուրամազդան է, հարցի էությունը չի փոխում։

---

[8] Իրավացի է պրոֆ. Գ. Սևակը, երբ գրում է. «Անկարելի է պատկերացնել, որ արդեն այդ ժամանակ (այսինքն՝ քրիստոնեությունից առաջ—Ա. Ա.) դարավոր մշակույթի տեր, պետականություն, քաղաքներ, արվեստներ և առևտուր ունեցող ժողովուրդները չունենային իրենց գրչությունն ու դպրությունը թեկուզ և օտար՝ ասորական, հունական, պարսկական գրերով կամ նրանցից սերված նշանագրերով» (տե՛ս Գ. Սևակ, Մեսրոպյան գրերը, նրանց կառուցվածքի սկզբունքները և աղբյուրները, «Մեսրոպ Մաշտոց», ժողովածու, Երևան, 1964, էջ 193)։

[9] **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, էջ 172։

[10] **Ագաթանգեղոս**, Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1909, էջ 404։

[11] Այս մասին տե՛ս **Ա. Գ. Աբրահամյան**, Հերմեսի փիլիսոփայական աշխատության հին հայերեն թարգմանությունը («Էջմիածին», 1957 թ., № 12, էջ 41—47)։

Պատմահայր Խորենացու մոտ տեղեկություն կա այն մասին, որ հին Հայաստանում (Դարանաղյաց Հանի, resp. Անի) գոյություն է ունեցել մեհենական արխիվ, և նա այդ արխիվում պահվող պատմական մի աշխատությունից, որի հեղինակն է եղել Օղյումպ քուրմը, օգտվել է։ Խոսելով Հայոց Արտաշես Թագավորի վերաբերյալ իր բերած տեղեկությունների մասին, նա գրում է. «Եւ զայս մեզ ստուգապէս պատմէ Ողիւմպ քուրմն Հանւոյ, գրող մեհենանական պատմութեանց, և այլ բազում գործս՝ զոր ասել կայ մեզ առաջի, որում և Պարսից մատեանքն վկայեն և Հայոց երգք վիպասանաց»[13]։

Պրոֆ. Գ. Սարգսյանը հանգամանորեն քննելով Արտաշեսի մասին Օղյումպ քուրմի մասին պատմահոր այս և համաբնույթ մյուս տեղեկությունները, որոնք պահվել են աղբյուրներում, եկել է հետևյալ եզրակացության. «Խորենացու մոտ հանդես եկող և նրա կողմից Օղյումպ քուրմին վերագրվող՝ Արտաշես Թագավորի պատմությունը իրապես Արտաշես Ա-ի պատմությունն է, և այն էլ ունի հավաստի ու ճշմարտացի լինելու բոլոր նշանները։ Այստեղից էլ, իր հերթին, բխում է նրա վավերականության, այսինքն իսկապես մի հին ու ճշմարտապատում հեղինակի գրչին պատկանելու, ու քանի որ Խորենացին այդ հեղինակին անվանում է Օղյումպ քուրմ, ուրեմն և հենց Օղյումպ քուրմի գրչին պատկանելու մասին եզրակացությունը»[14]։

Անիի (Հանիի) մեհենական արխիվին պատմահայրն անդրադառնում է մի այլ կապակցությամբ ևս։ Նա պատմում է, որ Բարդածան անունով մի ասորի քրիստոնյա գալիս է Հայաստան քրիստոնեություն քարոզելու, բայց հաջողություն չի ունենում։ Այնուհետև նա մտնում է Անիի մեհենական արխիվը, այնտեղ մի աշխատություն թարգմանում ասորերեն, իսկ հետագայում ասորերեն բնագիրը թարգմանվում է հունարեն, որից և օգտվել է Խորենացին և նշում է այդ մասին։ Անհրաժեշտ ենք համարում բերել Խորենացու իրեն իսկ խոսքերը. «Զրուցէ մեզ զայս Բարդածան, որ յԵդեսիայ։ Քանզի նա յաւուրս Անտոնինոսի վերջնոյ[15] երևեցաւ պատմագրող... եկն նա այսր, որպէս զի աշակերտել զոք կարասցէ ի խուժ հեթանոսացս. և իբրև ոչ ընկալեալ եղև՝ եմուտ նա յամուրն յԱնի, և ընթերցեալ զմեհենական պատմութիւնն, յորում և զգործս թագաւորացն, յաւելլով իւր և որ ինչ առ իւրեաւ, և փոխեաց զամենայն ի լեզու ասորի. որ և ապա անտի յեղաւ ի յոյն բանս։ Յորում պատմէ ի մեհենից սպաշտամանց՝ վերջին Տիգրանայ արքայի Հայոց... Յայսըմ պատմութենէ առնալ մեր երկրորդեցաք քեզ ի թագաւորութենէն Արտաւազդայ մինչև յարձանն Խոսրովու»[16]։

---

[12] Ըստ հին ավանդության Տիր աստծուն վերագրվում էր յուրատեսակ տոմարագրի պաշտոն. ըստ ավանդության, նա ծնվածներին մուտք էր անում ծննդյան մատյանում, իսկ մահացածներին դուրս անում մատյանից։ Եվ այն մարդու անունը, որին ելք էր անում, գալիս էր նրա մոտ, հոգին առնում և ծոցը դրած տանում երկինք։ Այստեղից էլ առաջացել են ժողովրդի մեջ այժմ պահպանված անեծքները. «Գրողի ծոցը մտնես», «Գրողը տանի քեզ», «Գրողը անունդ ելքի (այսինքն՝ ելից) մատյանում գրի» և այլն։

[13] Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 176։

[14] Գ. Խ. Սարգսյան. Նախամեսրոպյան շրջանի պատմագրությունը (տե՛ս ՊԲՀ, 1969, № 1, էջ 118)։

[15] Նկատի ունի Անտոնինոս Պիոս կայսրին, որը գահակալել է 138—161 թվականներին։

Չորրորդ դարում օտար լեզուներից Հայաստանում քաղաքացիություն ունեին հունարենը և ասորերենը։ Եթե հայ հեթանոսական մեհենական արխիվից Բարդածանի վերցրածը ո՛չ հունարեն էր և ո՛չ ասորերեն, ապա մնում է ենթադրել, որ նա գրված պետք է լիներ տեղական լեզվով՝ հայերեն։

Հեթանոսական Հայաստանում գրի և գրականության առկայության օգտին վկայող մյուս փաստը հայերեն զարգացած գրական լեզվի առկայությունն է, որը պատրաստի ձևով ժառանգեց Մաշտոցյան դպրոցը։ Անժխտելի է, որ հինգերորդ դարի գրական լեզուն քերականորեն արտակարգ օրինաչափված լեզու է եղել և ունեցել է հարուստ բառապաշար։ Բավական է մատնացույց անել այն փաստը, որ 5-րդ դարում ասորերեն և հունարեն բնագրերից հայերենի է թարգմանվել Աստվածաշունչը։ Ընդ որում, թարգմանությունը կատարվել է այնպիսի ճշտությամբ ու հարուստ լեզվով, որ եվրոպական հայագետներն այն կոչել են «թագուհի թարգմանությանց»[17]։ Լեզվի հարստությունը, ոճի շքեղությունը, ճարտասանական բարձր արվեստը հատուկ են հինգերորդ դարի բոլոր հայկական ինքնուրույն և թարգմանական աշխատություններին[18]։ Եթե հայկական գրական լեզուն սկիզբ առներ հինգերորդ դարից, անկարելի էր որ՝

Ա. տարբեր վայրերում ապրող և ստեղծագործող հեղինակների աշխատությունները միասնական քերականական մշակված ձևեր ունենային,

Բ. թարգմանությունների ժամանակ հարկադրված չլինեին բնագրերի լեզվից մեծ թվով օտարաբանություններ փոխ առնել,

Գ. ինքնուրույն աշխատությունների մեջ քննարկեին ճարտասանական և փիլիսոփայական այնպիսի բարդ հարցեր, ինչպիսին հանդիպում ենք Եզնիկ Կողբացու մոտ։

Նախամաշտոցյան հայ գրի և դպրության գոյության մասին ունենք մատենագրական մի շարք տեղեկություններ, որոնցից մի քանիսն անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ։

Փիլիստրատոս անունով մի հույն հեղինակ, որն ապրել է մեր թվականության երրորդ դարում, իր «Վարք Ապողոնիոս Տիանացւոյ» աշխատության մեջ հաղորդում է, որ Տավրոսի լեռներում մի հովազ են բռնել, որի վզին եղել է ոսկյա մի մանյակ, իսկ մանյակի վրա հայերեն տառանիշներով գրված. «Թագավոր Արշակ Նյուսիա աստուծո»('επέγραπτο 'Αρμενίοις γράμμασι

---

[16] Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 201—202։

[17] Տե՛ս М. Тер-Мовсесян, История перевода Библии на армянский язык, СПб., 1902 էջ 25:

[18] Աստվածաշնչի գրական լեզվի մասին մեր հայտնած այս կարծիքի առթիվ պրոֆ. Է. Աղայանի այն առարկությունը, թե անհնար չէր, որ հինգերորդ դարում գրական նման լեզուն մեկեն հանդես գար, որովհետև «...հինգերորդ դարի հայերենը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի լեզու էր և համապատասխանում էր այդ դարաշրջանի ճանաչողության մակարդակին, այնպես որ նա շատ ավելի զարգացած ու հարուստ էր, քան պահանջում էր Աստվածաշնչի մակարդակը» (տե՛ս «Գիտություն և տեխնիկա», 1969 թ., № 12, էջ 38), ըստ էության, խոսում է մեր օգտին. հայկական գրական լեզուն հինգերորդ դարում նման բարձր աստիճանի կարող էր հասնել միայն նախորդ դարերի մշակության հիման վրա՝ Արտաշեսյան և Արշակունիների կազմակերպված պետության շրջանում։

Βασιλεὺς 'Αρσάκης θεῷ Νοσίῳ)[19]։ *Մենք չգիտենք՝ խոսքը ո՞ր Արշակի մասին է, ինչո՞ւ է այդ մանյակը կախված եղել հովազի վզից, բայց որ գրության մեջ որոշակի ասվում է, թե մանյակի վրա հայերեն է գրված եղել, կասկածելու տեղիք չի տալիս։*

Պրոֆ. Հ. Աճառյանը, որի կարծիքով նախամաշտոցյան շրջանում հայոց բանավոր գրականությունը հայերեն էր, իսկ գրավոր գրականությունը՝ պարսկերեն, հունարեն կամ ասորերեն, առաջ է քաշում այն հակաթեզը, թե «Արշակ՝ եթե իրոք պատմությունը ճշմարիտ է, ավելի պարթև թագավորի մ՝ անունն ըլլալու է, և այն մակագրությունն ալ ավելի պահլավերեն քան թե հայերեն»[20]*։ Սակայն, եթե նույնիսկ ընդունելու լինենք, որ հույն հեղինակը իրոք շփոթել է և պահլավերենը հայերեն կարծել, ապա այդ ևս ինքնին հաստատում է հայկական գրի առկայությունը. պետք է ենթադրել ուրեմն, որ հայկական գրությունը երրորդ դարում այնքան էր տարածված, այնքան էր հանրաճանաչ, որ այլալեզու գրությունը շփոթում և հայերեն էին կարծում։*

Հիպողիտես Հռոմեացի նշանավոր մատենագիրը Աղեքսանդր Սևերիոսի թագավորության 13-րդ տարում, այսինքն՝ 234—235 թվականներին գրած աշխատության մեջ, առանձին գլխի տակ թվարկել է այն ժողովուրդներին, որոնք գիր և գրականություն ունեն։ Նրա մոտ ասված է. «Սրանցից (այսինքն՝ իր թվարկած հին ժողովուրդներից—Ա. Ա.), որոնք դպրություն ունեն, հետևյալներն են. եբրայեցիները, լատինացիները, որով և հռոմայեցիներն են վարում, սպանացիները, հույները, մարերը և հայերը»[21] (Οἱ δὲ ἐπιστάμενοι αὐτῶν γράμματα Ἴβηρες, Λατῖνοι, οἷς χρῶνται οἱ Ῥωμαῖοι, Σπάνοι, Ἕλληνες, Μῆδοι, Ἀρμένιοι)։

Հիպողիտեսի «Ժամանակագրության» վավերականության մասին կասկածներ չեն եղել։ (Գտնված է հեղինակի կիսանդրին՝ իր աշխատությունների ցանկով, ուր հիշված է նաև «Ժամանակագրություն»-ը)։ Եթե երրորդ դարի հույն հեղինակը այսպիսի տեղեկություն է հաղորդում հայկական դպրության մասին, ապա, կարծում ենք, այն կասկածի ենթարկելու հիմքեր չունենք։

Նախամաշտոցյան գրի և գրականության մասին են խոսում նաև չորրորդ դարում հայկական մատենագրական երկերի առկայության մասին եղած տեղեկությունները։

Ակնարկումներ կան, որ Մաշտոցյան դպրոցի Աստվածաշնչի թարգմանությունից առաջ գոյություն է ունեցել IV դարի հայերեն թարգմանություն, որի թարգմանիչն է համարվել Գրիգոր Լուսավորիչը։ Յոթերորդ դարի մատենագիր Թեոդորոս Քռթենավորը Մայրագոմեցու դեմ գրած մի ճառում մեղադրում է վերջինիս, որ նա և նրան հետևողները թշնամաբար են տրամադրված դեպի ավետարանի առաջին կամ հնագույն թարգմանությունը (մեկնությունը) կատարված Լուսավորչի ձեռքով։ Նա գրում է. «Արդ, կաճառք բանիցն յուզեալ՝ դարձեալ վիճաբանեն։ Եռակի ճառագրեալ աւետարանական աւուրցն պատմութիւնք անմիաբան ի միմեանց գտան, յորոց զմինն ընտրեալ գովեսցուք, և զմիւսն հերքեալ արտաքսեսցուք ի սրբումն կոչարանէ։ Քանզի բազ-

---

[19] *Տե՛ս* Philostrati de vita Apallonis Tianei, II *հրատ.* C. L. Kayser (*հմմ. Ն. Ակինյան, Ս. Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949, էջ 227*)։

[20] Հ. Աճառյան, *Հայոց գրերը, էջ 65։*

[21] **Hippolitus Werke, IV Bd.** Die Chronik, Hergestellt von **A. Bauer, Leipzig, p.** 58.

մերգելին Գրիգոր, առաքելաքարոզ նահատակն Քրիստոսի, զամենայն աւետարանական պիտառութիւնսն ճառագրեաց՝ զոր ինչ յաղագս աստուծոյ բանի տնօրինական կիրառութիւն պիտանէր»[22]։

Աստվածաշնչի և եկեղեցական-կանոնական նման գրականության գոյությունը չորրորդ դարում առավել հավաստի կդառնա, եթե նկատի ունենանք, որ հեթանոսությանը փոխարինելու եկած նոր կրոնի քարոզիչները պետք է որ գրեին, ժողովրդին բացատրեին (քարոզեին), թե ի՞նչ գաղափարներ է առաջադրում նոր կրոնը, ո՞վ է Քրիստոսը, ի՞նչ է ասել նա, ինչ տոներ պետք է տոնվեն. ե՞րբ և ինչո՞ւ և այլն[23]։

Որ չորրորդ դարում իրապես գոյություն է ունեցել հայկական գիր, այդ մասին որոշակի տեղեկություն է հաղորդում Ղազար Փարպեցին։ Նա, դատապարտելով Մաշտոցի գրեր ստեղծելուց առաջ եկեղեցիներում ասորերեն արարողություն կատարելու փաստը, մատնացույց է անում հայկական նշանագրերի գոյությունը. «...մանաւանդ թէ գոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է՝ ինքեան ձայնիւ, և ոչ մուրացածոյ բարբառով, շահել զոգիս արանց և կանանց առհասարակ յամենայն եկեղեցիս բազմութեանն»[24]։

Հայ մատենագրության գոյությունը IV դարում ապացուցվում է նաև տոմարական մատենագրությամբ։ Այդ մասին հանգամանորեն կխոսվի իր տեղում, բայց այժմ, Նախամաշտոցյան մատենագրության կապակցությամբ, հետևյալը կարելի է ասել։ Մինչև 325 թ. քրիստոնյա ժողովուրդները չունեին իրենց տոմարը և առաջնորդվում էին եբրայական տոմարով։ Նիկիայի ժողովում որոշում ընդունվեց կազմել «սեփական» տոմար։ Կարճ ժամանակների համար քրիստոնյա տոմարագետները կազմեցին զատկացանկեր, մինչև որ 353 թ. Անդրեաս Բյուզանդացին կազմեց իր նշանավոր 200-ամյա զատկացանկը, որով առաջնորդվեցին բոլոր քրիստոնյա ժողովուրդները, այդ թվում՝ նաև հայերը։

Վերջերս մեզ հաջողվեց հայտնաբերել այդ զատկացանկի որոշ հատվածներ հայկական թարգմանությամբ, որը հին հայկական թարգմանական մատենագրության եզական գործերից մեկն է։ Ահա այդ հատվածներից մեկի մեջ տեղեկություն է տրվում գարնանային գիշերահավասարի ժամանակի մասին։ Այնտեղ ասված է. «Արդ՝ սկիզբն հասարակելոյ տուընջեան և գիշերոյ ըստ թուոց եգիպտացւոցն ի ԻԴ (24) և Դ (4) ամսոյն լինի, որ անուանեալ կոչի պեմենովթ, որ գայ կշիռի ըստ թուոյն անդիոքացւոց ի ԻԸ-երորդումն դիւստրոս ամսոյն, այսինքն՝ մեհեկանի»[25]։

Տոմարական մանրամասնությունների մեջ չմտնելու համար ասենք միայն, որ գարնանային գիշերահավասարը եգիպտական անշարժ տոմարով լինում է սփմենովթ ամսի 24-ին (հռոմեական մարտ ամսի 20-ին), որը, տվյալ դեպքում, համապատասխանության մեջ է դրված հայկական մեհե-

---

[22] «Մատենագրութիւնք Յովհաննու Իմաստասիրի», Վենետիկ, 1833, էջ 154։

[23] Երկրորդ դարի վերջերից և երրորդ դարի սկզբներից սկսած կային հայկական քրիստոնեական համայնքներ (հմմ. Պարույր Մուրադյան, *Հայ-վրացական գրական-մշակութային փոխհարաբերությունների պատմությունից*, «Տեղեկագիր», 1964 թ., № 10, էջ 61—62, ծան. 37)։

[24] Ղազար Փարպեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 14։

[25] Ա. Գ. Աբրահամյան, *Անդրեասի տոմարագիտական աշխատությունները* (տե՛ս «Բնագիտություն և տեխնիկայի պատմությունը Հայաստանում», Երևան, 1967, հ. VI, էջ 58—82)։

կանի հետ։ Տոմարական անվրեպի հաշվումներով, մեհեկանը եգիպտական ամենովթ ամսվա հետ 381 թվականից հետո զուգահեռվել չէր կարող։ (Գիշերահավասարը հայկական շարժական տոմարով 353 թ. եղել է մեհեկանի 24-ին, սակայն չորս տարին մեկ օրով նահանջման հետևանքով, մեհեկան ամսի վերջին օրը եղել է 381 թվականին)։ Հետևապես տոմարական այդ բնագիրը գրվել է 381-ից առաջ։

Թե ինչ տառերով է գրված եղել Անդրեասի մեզ հասած հայկական բնագրի հատվածները, դժվարանում ենք ասել, բայց որ այդ բնագիրը հարմարեցված է եղել հայկական տոմարի հետ՝ հայ իրականության մեջ օգտագործելու համար, անվիճելի է։

Անդրեաս Բյուզանդացին իր անշարժ տոմարի համար հիմք է ընդունել հուլյան անշարժ տոմարը՝ դարագլուխ վերցնելով Դիոկղետիանոսի թվականը, որի սկիզբն էր 284 թ. օգոստոսի 29-ը։ Հայերը ևս ընդունած են եղել տոմարական այդ համակարգը և ամանորը սահմանել օգոստոսի 29-ը, սակայն չորս տարին մեկ օրով առաջ շարժվելով, դուրս են եկել անշարժ տոմարի զուգավորությունից, և 428—431 թվականներին, որ Մաշտոցի դպրոցի ստեղծագործության բեղուն շրջանն էր, հայկական ամանորը հասել էր օգոստոսի 11-ին, մի ամսաթիվ, որը հետագայում ընդունեց և անշարժ ամանոր սահմանեց Հովհաննես Իմաստասերը 1084 թ.։

Եվ այսպես, Անդրեաս Բյուզանդացու տոմարական զատկացանկից պարզվում է, որ հայերը չորրորդ դարում ունեցել են հունականից և ասորականից տարբերվող շարժական տոմար, որը մի նոր ապացույց է հայկական մատենագրության առկայության չորրորդ դարում։

Ի վերջո, նախամաշտոցյան շրջանում հայոց դպրության գոյության օգտին է խոսում նաև դպրության հետ կապված տերմինների քննությունը։ Այսպես, օրինակ, «կարդալ» գրաբարում նշանակում է ոչ միայն «ընթերցել», այլև «հմայել», «համարել». իսկ վերջինները, ինչպես հայտնի է, կապված են վաղընջական ժամանակների պաշտամունքի հետ։ Բարբառներում պահպանվել է երբեմնի նման հասկացողության վերապրուկը։ Կեսարիայում կախարդները հորջորջվում են «կարդացող», իսկ այլուր գործածական է «գրբացը», որ նույնպես առնչվում է «գիր» տերմինին։

Հարց է առաջանում, եթե նախամաշտոցյան դպրություն իրոք եղել է, ինչո՞ւ ոչ մի նմուշ կամ պատառիկ մեզ չի հասել։ Հարկավ, դրանում առեղծվածային շատ բան կա, բայց այդ զարմանալի չէ, քանի որ դարեր են անցել, ժողովուրդներ են անհետացել Հին Արևելքում՝ առանց հետք թողնելու, քաղաքներ են կորել, որոնց տեղերն այժմ փնտրում ենք, մի՞թե չէր կարող անհետ վերանալ և վաղ շրջանի հայոց դպրությունը։ Պատմությանը նման իրողություններ հայտնի են. ո՞ւր է մեր հարևան աղվան ժողովրդի գրականությունը, որն ստեղծվել է համեմատաբար ավելի ուշ շրջանում՝ 5-րդ դարում, ինչո՞ւ նրանցից որևէ նմուշ չի հասել, եթե չհաշվենք նորերս հայտնաբերված վիմագիր մի քանի արձանագրությունները։

Պետք է նկատի ունենալ նաև, որ նախամեսրոպյան, այսինքն՝ հեթանոսական հայկական դպրությանը կործանարար հարված հասցրեց քրիստոնեությունը։ Ըստ պատմիչների վկայության, Տրդատն իր զորքի գլուխ անցած, Լուսավորչի հետ միասին, քանդում, ավերում էր հեթանոսական մեհյանները և *դրանց տեղերում քրիստոնեական վանքեր, եկեղեցիներ կառուցում։ Այսպես, Ագաթանգեղոսը պատմում է. «Ապա յինքն իսկ Թագաւորն խաղայր գնայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ» մեհյաններ քանդելու։ Արտաշատի ճանապարհի վրա նրանք նախ Տիր աստծու տաճարը «քակեալ աւերեալ քանդեցին», Արտաշատում՝ «ամենայն շինուածք մեհենին ի հիմանց դղրդեալ տապալեցան», Թորդանում՝ «սպիտակափառ» կոչվող Վահագնի տաճարը «կործանէին, և զպատկերն նորին փշրէին»*[26]*, Երիզա ավանի մեհյանում փշրում են Անահիտի արձանը և այլն։*

Հին հայ պատմագիրները, պիտի կարծել, նախամեսրոպյան դպրության փաստը լռության են տալիս, որովհետև նրանք, որպես քրիստոնյա մատենագիրներ, նպատակ ունեն հեթանոսական շրջանը ներկայացնել բարբարոսական շրջան։ Նրանք հակված են վկայելու, թե Հայաստանում հեթանոսական շրջանում տիրում էր անգիտությունն ու խավարը, և քրիստոնեությունն էր, որ եկավ լուսավորելու մեր ժողովրդին։

Վաղ քրիստոնեական եկեղեցին հատուկ օրենքներ էր սահմանել. աղվեսադրոշմ դնել այն մարդու ճակատին, որը կմեղադրվի աղանդավորության մեջ, կտրել այդպիսիների ձեռքի և ոտքի ջլերը։ Նման դաժանության պայմաններում այլևս անկարելի էր հեթանոսական որևէ բան պահել։

Հարց է առաջանում, եթե իրոք եղել են նախամաշտոցյան գրեր, ապա ի՞նչ տեսակի գրեր են եղել նրանք՝ գաղափարագրե՞ր, սեպագրե՞ր, թե՞ ներկայիս գրի այլ տեսակներ։ Այս հարցին հայագիտության մեջ տարբեր պատասխան է տրվել։

***Պրոֆ. Ք. Պատկանյանը** գտնում է, որ Մեսրոպ Մաշտոցից առաջ գործ են ածվել դանիելյան կոչվող գրերը, որոնք, ինչպես հայտնի է, բերվեցին Վռամշապուհի ցուցմունքով և Մաշտոցի դպրոցում երկու տարի (կամ երկու ամիս) պարապեցին նրանով։ Մովսես Կաղանկատվացու «Պատմության» թարգմանության ծանոթագրություններից մեկում պրոֆ. Պատկանյանն այս մասին հետևյալն է գրում. «Ճիշտ է այն կարծիքը, որի համեմատ Մաշտոցը ոչ թե գտավ հայկական այբուբենը, այլ արդեն եղածը, բայց ընդհանուրի կողմից չօգտագործված դանիելյան հայկական այբուբենը կատարելագործեց»*[27]*։ Նույն կարծիքն են հայտնել նաև ակադ. Մ. Բրոսեն, պրոֆ. Հ. Հյուբշմանը, Լ. Մելիքսեթ-Բեկը և ուրիշներ։*

Կորյունը՝ Մաշտոցի աշակերտը, դանիելյան գրերի ծագման մասին խոսելիս, հետևյալ տեղեկությունն է տալիս։ Այդ գրերը, ասում է նա, «Յայլոց դպրութեանց թաղեալ և յարուցեալ դիպեցան», այսինքն՝ «Ուրիշի դպրություններից թաղված և հարություն առած գտնվեցին»։ Բնագրային ուսումնասիրությունները պարզել են, որ վերև բերված Կորյունի բնագրում գրչական երկու սխալ գոյություն ունի. «թաղեալ» բառն ուղղվում է «քաղեալ»[28]* և «յարուցեալ»-ը՝ «յանկուցեալ»*[29]*, որով բոլորովին այլ նշանակություն է ստանում այս նախադասությունը։ Նոր իմաստով այն կարելի է թարգմանել՝ դանիելյան* գրերը «քաղված էին այլ դպրությունից և հարմարեցված», այլ խոսքով ասած՝ հայկական գրեր չէին։

---

[26] **Ագաթանգեղոս**, *Պատմութիւն Հայոց, էջ 404—409։*

[27] «История агван Моисея Каганкатваци», писателя X века, перевод с армянского К. Патканьяна, СПб., 1861, стр. 326.

[28] **Ա. Գ. Աբրահամյան**, *Կորյունի երկու հնագույն ընդօրինակությունները (տե՛ս «Էջմիածին», 1945 թ., № 8, էջ 43)։*

[29] *Տե՛ս Կորիւն, Վարք Ս. Մաշտոցի, հրատարակութիւն Ն. Ակինեանի, Վիեննա, 1952, էջ 17։*

Ինչ վերաբերում է մաշտոցյան գրերի ծագման հարցին, ապա անվիճելի է, որ նրանք ինքնատիպ գրեր են՝ ստեղծված մասնավորապես իր ժամանակի ամենից զարգացած հունական գրերի ձևով և սկզբունքով։ Այսպիսով, հին հայկական գրերը դանիելյան գրեր համարելու վարկածը չի հիմնավորվում։

Մկրտիչ Էմինն իր «Об армянском алфавите» խորագրով հոդվածում այն կարծիքն է հայտնել, որ Մաշտոցից առաջ Հայաստանում գործ է ածվել հիերոգլիֆ գրություն, որի նշանագրերի մի մասը մնացել է քերականական բովանդակությամբ ձեռագրերում՝ «Նշանագիրք իմաստնոց» ընդհանուր վերնագրի տակ։ Էմինը այդ նշաններից 84-ը հրատարակել է նշված հոդվածի հավելվածում։ Այդ նշանագրերը հետագայում հրատարակել են ուրիշները ևս[30]։

Հանգուցյալ պրոֆ. Հ. Աճառյանը հանգամանորեն ուսումնասիրելով հայկական ձեռագրերում ընդօրինակված այդ նշանագրերը, ցույց է տվել, որ նրանց մեջ կան այնպիսիք, որոնք ստեղծված են ուշ դարերում մաշտոցյան գրերի հիման վրա[31]։ Տարիներ առաջ մենք ևս բաժանել էինք Աճառյանի այս կարծիքը[32], սակայն հետագայում մեզ հայտնի դարձավ «Նշանագիրք իմաստնոցի» այնպիսի մի ցանկ, որի պարունակած նշանագրերի մեջ մեծ թիվ են կազմում գաղափարանշանները և զգալի տարբերվում են «Նշանագիրք իմաստնոցի» մյուս՝ Կիլիկյան ցանկում եղածներից։ Հետագայում մենք վերանայեցինք մեր նախկին տեսակետը և հնարավոր համարեցինք, որ ցանկի որոշ գաղափարանշաններ կարող են լինել հայ մեհենական դրության նշանագրերից[33]։ Այս մասին մանրամասն կխոսվի «Նշանագիրք իմաստնոց» գլխում։

Ակադ. Հ. Օրբելին ենթադրում էր, որ հայկական ներկա գրերից առաջ Հայաստանում գործ են ածվել արամեական նշանագրերը։ Նրա կարծիքով, Սևանա լճի մոտ գտնված արամեական երկու արձանագրությունները գրված են արամեական գրերով, բայց հայերեն լեզվով։ Գտնված այդ երկու արձանագրությունները, գրում է նա, որոնք «գրված են արամեական նշանագրերով, պիտի կարդացվեն հայերեն»[34]։ Նշված արձանագրությունների վերծանությունը սակայն չհաստատեց մեծանուն ակադեմիկոսի ենթադրությունը. պարզվեց, որ և՛ գիրն է արամերեն, և՛ լեզուն[35]։

Ենթադրություններ են եղել, որ նախամաշտոցյան կարող է լինել մի քանդակապատկերի պարունակած գրությունը, որ հրատարակել է Գ. Լևոնյանը[36]։ Քանդակապատկերում երևում է պատվանդան՝ վրան դրված եղան գլուխ, որը

---

[30] Էմինի այս աշխատությունը հրատարակվել է 1858 թվականին՝ Խորենացու Հայոց պատմության ռուսերեն թարգմանության հավելվածում։ Նրա ֆրանսերեն թարգմանությունը հրատարակվել է «Revue d'orient» 1865 թվականին, իսկ հայերեն թարգմանությունը՝ «Հայկական աշխարհ»-ում՝ 1870 թվականին, էջ 42—46։

[31] Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 56—57։

[32] Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Հայկական պալեոգրաֆիա, Երևան, 1948, էջ 21։

[33] «Յոթ դասախոսություններ», Անթիլիաս, 1955, էջ 34—36։

[34] «Известия», օրաթերթ, 31 հունվ. 1941 թ.։

Տե՛ս А. Я. Борисов, Надписи Артаксия (Арташеса), царя Армении («ВДИ», 1946, № 2, стр. 98)։

[36] Տե՛ս Գ. Լևոնյան, Մի առեղծվածային քանդակապատկեր (տե՛ս «Սովետական արվեստ», 1941 թ., էջ 69—71, հմմտ. Գր. Ղափանցյան, Արա Գեղեցկի պաշտամունքը, Երևան, 1945, հա-

Քանդակապատկերի լուսանկարը։

լիզում է իր կաշին։ Պատվանդանի երկու կողմերում պատկերված է մի թագավոր և մի թագուհի, որոնք երկրպագում են եզանը։ Նրանց ձեռքում կան կապուկներ. որ նվեր են բերել աստծուն։ Թագավորի և թագուհու կողքերին շարված են իրենց վեց երեխաները։ Չորս փոքրիկ կճուճներ դրված են արկղաձև պատվանդանի վրա։ Ահա այս քանդակապատկերի ներքին կողմում բերված է երկու տող գրություն, որի տառերի մեծ մասը հայերեն է։ Պարզ կարելի է տեսնել ուղղագիծ գրված մեծատառ «Ա», «Մ», «Ս» տառերը և անծանոթ այլ տառեր։ Եզան պաշտամունքը, թագավորի առկայությունը հիմք են տալիս կարծելու, որ այդ գրերը կարող են և լինել հայկական հեթանոսական շրջանի։ Սակայն հնագրական մեր ուսումնասիրություններից պարզվեց, որ այն կեղծիք է. կեղծարարը, ինչպես երևում է, չի իմացել, որ հին հայկական գրերը ուղղագիծ ձև չունեն, և այդ էլ մատնում է իրեն։

Ենթադրություններ են եղել նաև մեհենական գրության նմուշ լինի Ցոլակերտի (Դաշբուրունի) քառաժայռի վրա քանդակված նշանագրերը, որը հրատարակել է պրոֆ. Խ. Սամուելյանը[37]։ Այդ նշանագրերն իրենց ձևերով շատ են նմանվում Սյունիքի ժայռապատկերներին։

---

[37] Տե՛ս Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. Ա, Երևան, 1931, նկ. 62՝ 35-րդ



Ցուլակերտի քարաժայռի գծանկարը։

Մենք այն կարծիքն ունենք, որ Հայաստանում նախաքրիստոնեական շրջանում գոյություն է ունեցել մեհենական մատենագրություն գաղափարագիր նշանագրերով։ Դարեր շարունակ Հայաստանում գործ է ածվել այդ գիրը և նրանով ստեղծվել հին հայկական մատենագրությունը։ Քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնական ճանաչում գտնելուց հետո վերացվել է մեհենական դպրությունը և ասպարեզ տրվել հունական և ասորական նշանագրությանը։

Նախամեսրոպյան շրջանի Հայաստանում եղել է դպրոց և մատենագրություն։ Այդ անվիճելի է։ Փավստոսը վկայում է, որ Ներսես Մեծը (353—373 թթ.) դպրոցներ էր բաց անում Հայաստանում, ուր դասավանդում էին հունարեն և ասորերեն (հավանական է՝ հունարեն և ասորերեն տառանիշերով). «Կարգէր ի տեղիս տեղիս դպրոցս յունարէն և ասորերէն գաւառս Հայոց»[38]։

Մեր ընդդիմախոսներից ոմանք իրենց աշխատությունների մեջ անարդարացի քննադատել են մեզ, որ իբրև թե մենք խոսելով նախամաշտոցյան մատենագրության մասին, ասել ենք, որ այն «շատ զարգացած է եղել»։ Իրականում, մեր գնահատականը նախամաշտոցյան մատենագրության մասին եղել է չափավոր։ Ավելորդ չենք համարում բերել տարիներ առաջ մեր տված գնահատականը «Նախամեսրոպյան հայկական գրականության հարցը» հոդվածից, որը հաճախակի հղում են մեր քննադատները. «Համարձակ կարելի է պնդել, որ Հայաստանում 5-րդ դարից շատ առաջ գոյություն է ունեցել հայերեն գրականություն։ Այդ գրականությունը մեհյանների տակ թաղվեց։ Նա քրիստոնեության մեծ զոհերից մեկն է»[39]։ Այստեղ, ինչպես կարելի է տեսնել, ոչ մի խոսք չկա հեթանոսական մատենագրությանը շատ զարգացած լինելու մասին։

Քննադատելով այն մարդկանց, որոնք հայոց վաղ շրջանի մատենագրության բացակայությունը բացատրում են հաճախ կրկնվող պատերազմներով և նշանագրերի բացակայությամբ, Խորենացին համարում է այդ անարդարացի. քանի որ «...գտանին և միջոցք լեալ պատերազմացն, և գիր Պարսից և Յունաց. որովք այժմ գիւղից և գաւառաց, ևս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց, և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ գրուցած մատեանք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պայազատութիւն»[40], Խորենացին, ինչպես տեսնում ենք, նշում է ոչ թե որոշ մատյանների, այլ «անթիւ գրուցած մատեանների» մասին։

---

[38] *Տե՛ս Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 119։*

[39] **Ա. Գ. Աբրահամյան.** *Նախամաշտոցյան հայկական գրականության հարցը (տե՛ս Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու», № 1, Երևան, 1941, էջ 52)։*

[40] **Մ. Խորենացի.** *Պատմութիւն Հայոց, էջ 11։ Պատմահայրը «գիր» բառը սովորաբար գործ է ածում «նշանագիր» իմաստով, իսկ «գրություններ»՝ պատմության։*

Դիոդորոս Սիկիլիացին (I դար մ. թ. ա.) հայտնում է, որ Հայաստանի թագավոր Երվանդը (Օրոնտեսը) Եվմենին ուղարկած նամակը գրած է եղել ասորերեն[41]։

Այս տեսակետից ուշագրավ է հունատառ հայերեն մի գրություն, որ պահպանվել է Երուսաղեմի պատրիարքարանի մատենադարանի № 1297 ձեռագրում. Այս բնագրում հայոց լեզվի հնչական արժեքներին համապատասխանող այնպիսի տառեր են ստեղծվել, ինչպիսիք չկան հունարենում։ Բերում ենք այդ բնագիրը մեր վերծանությամբ։

OPՂՓAPINC ԳԳOVE ATAKՓΛINH
ՈՐ ՋՔԱՐԻՆՍ ԳԳՈՒԵ ԱՏԱԿՔԼԻՆԷ

OՐIԾOⲮCEPMANEՂӘՒԾNCKEPAKPE
ՈՐԻԾՈՎ ՍԵՐՄԱՆԵ ՁՁԿՈՐՆՍԿԵՐԱԿՐԵ

ΔPEԳAKN KOIPAՔOՉԾAԳE EV OՉMTANE
ԱՐԵԳԱԿՆ ԿՈՒՐԱՑ ՈՉ ԾԱԳԵ ԵՎ ՈՉՄՏԱՆԵ

Այս գրությունը, որի մասին հանգամանորեն խոսելու ենք ներկա աշխատության «Ծածկագրություն» գլխում, առիթ է տալիս մտածելու, թե արդյո՞ք այն նախամաշտոցյան շրջանում հունարեն տառերի գործածության ավանդույթ չէ, որ հանդես է գալիս հետագայում՝ մաշտոցյան գրերի ստեղծումից հետո։ Մեզ հայտնի է նաև Եզր կաթողիկոսի թողած արձանագրության մեջ հայկական տառերի հետ միասին հունարեն տառերի գործածությունը, ինչպես և Սամուել Անեցու ինքնագիր ձեռագրում, որը գտնվում է Զմմառի ձեռագրական հավաքածուում, հունատառ հայերեն գրությունները և այլն։ Ավելորդ չենք համարում այստեղ բերել Երուսաղեմի պատրիարքարանի մի ձեռագրի հունատառ հայերեն հիշատակագրությունը, որը գրված է 1281 թվականին[42]։

ZCTEΦANΩC MEΓAΗAPT HXEЗEK
ԶՍՏԵՓԱՆՈՍ ՄԵՂԱՊԱՐՏ ԻՃԵՑԷԿ

Այստեղ ուշագրավ է այն, որ հայկական «Ղ» տառը հունարեն տրված է գամմայով, «ու» հայկական «Օ» նշանակությամբ գործածված տառանիշը տրված է ոչ թե օմիկրոնով, այլ՝ օմեգայով։ Եվ, վերջապես, հայերեն «Ց» տառը տրված է հունական զետա տառի մի տարբերակով։

Սիսիանի Սյունի վանքի 6—7-րդ դարերի հայկական արձանագրություններից մեկի վրա հունատառ հայերեն փորագրված է հետևյալ արձանագրությունը.

ЄC ΓPЄΓOP ΓPЄЗH[43]

Այն վերծանվում է. ԵՍ ԳՐԵԳՈՐ ԳՐԵՑԻ

---

[41] *Տե՛ս* «Диодор Сицилийский», кн. XIX, 29։

[42] *«Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. Դ, էջ 469։*

[43] *«Դիվան հայ վիմագրության», Պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմ. Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 88։*

Բոլոր տառերն էլ հունարեն են, բացառությամբ «Ց» տառից, որը բացակայում է հունարենում։ Եթե հունական ազդեցությունից շատ հեռու Սյունյաց լեռնաշխարհում գտնվում էին մարդիկ, որոնք իրենց հայերեն խոսքը գրի էին առնում հունարեն տառերով, ապա այդ ավելի սովորական պետք է լիներ Հայաստանի այն երկրամասերում, ուր նկատելի էր հունական ազդեցությունը։

Խորենացու տեղեկությունից հայտնի է, որ Արշակի ձերբակալությունից հետո, երբ պարսից զորքը մտավ Հայաստան, Մերուժանը հրամայեց վառել Հայաստանում եղած հունարեն ձեռագրերը, որոնք, նրա կարծիքով, հայերին կապում էին հույների հետ. «Եւ զորս միանգամ գիրս գտանէր՝ այրէր, և հրաման տայր մի՛ ուսանել զդպրութիւն յունարէն, այլ զպարսիկ, և մի՛ ոք իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել. այնպիսի ինչ պատճառաւ, զի ամենևին մի՛ լիցի Հայոց ընդ Յունաց ծանօթութիւն և հաղորդութիւն»[44]։

Այսպիսով, եթե մենք հանրագումարի բերելու լինենք վերը հիշված փաստերը, ապա կարող ենք ասել, որ 5-րդ դարի հայկական հարուստ մատենագրությունն ամայի անապատում չի ստեղծվել, այլ հիմնված է եղել հին հայերեն մշակված գրական լեզվի և անցյալի հարուստ մշակութային ժառանգության վրա։ Հեթանոսական Հայաստանում գոյություն է ունեցել հայկական մեհենական գիր և գրականություն, իսկ քրիստոնեությունը Հայաստանում հաստատվելուց հետո մի դար շարունակ գործ են ածել հունարեն և ասորերեն տա-

II. ԱՅԼ ՆՇԱՆԱԳՐԵՐՈՎ ԵՎ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՐՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Հնչունական գիրն ինչպես բոլոր երկրներում, այնպես և Հայաստանում, մեկեն հանդես չի եկել. այն ունեցել է իր նախագոյակ շրջանը։ Մարդն իր առօրյա կյանքի և զբաղմունքի կարևոր իրադարձությունները սովորություն է ունեցել պատկերների ձևով դրոշմել քարաժայռերի վրա։

Վաղնջական ժամանակներից մեզ հասած ժայռապատկերները հին մշակույթի թանկարժեք նմուշներ լինելուց բացի, մարդու առաջին պարզունակ գրառումներն են։ Դրանք, իհարկե, դեռ գրեր չեն ներկա հասկացողությամբ, բայց անտարակույս, տվյալ ժամանակաշրջանի բնաշխարհի իրական պատկերումներն են՝ նախնական պատկերագիր վավերագրությունը[1]։

Ժայռապատկերների հազարավոր նմուշներ են հայտնաբերված հյուսիսային Աֆրիկայում, Սկանդինավյան երկրներում, Սիբիրում, Միջին Ասիայում, Կովկասում և այլուր։ Ժայռապատկերները գիտության մեջ հայտնի են պիկտոգրամներ *կամ* պետրոգլիֆներ *անուններով*[2]։

Ժայռապատկերների գործածությունը Հայաստանում, ինչպես պարզված է, սկսվել է շատ վաղուց. հավանական է՝ նախնադարյան համայնական շրջանում, երբ տնտեսության իշխող ձևերն էին որսորդությունը և անասնապահությունը։ Հետագայում, սակայն, ժայռագրությունը շարունակվում է գործածվել դասակարգային հասարակության մեջ ևս։ Հնագետներից ու գրչության պատմաբաններից ոմանք ժայռապատկերների գործածությունը վերագրում են նեոլիթյան ժամանակաշրջանին։ Ի. Մ. Դյակոնովի կարծիքով՝ «Նախադասակարգային հասարակության ժամանակ, անգամ «գրագետ» քաղաքակրթության հարևանության մեջ, հնարավոր է միայն պրիմիտիվ գրության առկայությունը՝ մոգա-

---

[1] *Հայաստանում ժայռապատկերներ են հայտնաբերված Արագածի, Գեղամա լեռների և պատմական Սյունիքի ժայռերի վրա։ Մեր լեռնաշխարհի քարաժայռերը փաստորեն դարձել են յուրատեսակ քարե մատյաններ, որոնք խնամքով պահպանել են հազարավոր տարիներ առաջ ապրող մարդու առօրյա պատկերացումները։ Նրանց մեջ կարելի է տեսնել որսորդական տեսարաններ, կենցաղային պատկերացումներ, ընտանի և վայրի բազմաթիվ կենդանիներ, դաշտային գործիքներ, զենքեր և այլն։ Ժայռապատկերների մեջ մեծ թիվ են կազմում մասնավորապես այծերը կամ այծանման կենդանիները, որոնք, ըստ երևույթին, իբրև տոտեմ պաշտվել են, ժողովուրդը ժայռապատկերներին «այծագրեր» (իծագիր) անունն է տալիս։*

[2] *Պիկտոգրամ են կոչվում բացառապես պատկերագրերը, իսկ պետրոգլիֆները՝ երբ պատկերագրերի հետ միասին գործ են ածվում նաև երկրաչափական և այլ տեսակի գծագրական ձևեր (տե՛ս* **Լոուկոտկա**. *Գրի զարգացումը, Երևան, 1955, էջ 2 (հմմ.* **В. А. Истрин**, Развитие письма, М., 1961, էջ 25–26, 43–73)։

կան, հնարավոր է նաև հասարակ անհատական նշանակների համար օգտագործելու³:

Սևանում ժայռապատկերների ուսումնասիրությամբ զբաղվել են մի շարք գիտնականներ՝ Ե. Լալայան, Ա. Քալանթար, Խ. Սամուելյան, Ս. Բարխուդարյան, Ծ. Սարդարյան, Հ. Մարտիրոսյան, Գր. Կարախանյան և ուրիշներ: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակությամբ վերջերս լույս տեսավ մի ստվար հատոր⁴: Ժայռապատկերները վերջերս հատուկ ուսումնասիրության խնդիր են հանդիսացել պատմական գիտությունների դոկտոր Հ. Ա. Մարտիրոսյանի կողմից⁵:



Մի խումբ ժայռապատկերներից:

Առաջին իմաստավորված գրությունը պատմական Հայաստանի տարածքում գործ են ածել հեթիթները (խեթերը) և ուրարտացիները: Խոսելով հայկական գրության մասին, հասկանալի է, չի կարելի շրջանցել պետական-էթնիկական այդ հնագույն կազմավորումների գործածած գրությունները:

Հեթիթները, ինչպես հայտնի է, իրենց պետականությունը ստեղծել են պատմական Հայաստանի արևմտյան մասում՝ Հալիս գետից արևմուտք և արևելք ընկած տարածության վրա (մոտավորապես XX դար. մ. թ. ա. և շարունակել

---

³ **И. М.** Дьяконов, Предыстория армянского народа. Ереван, 1968, стр. 80 (14-րդ ծանոթագրությունը):

⁴ Տե՛ս Գ. Հ. Կարախանյան, **Պ. Գ.** Սաֆյան, Սյունիքի ժայռապատկերները, Երևան, 1970:

⁵ **А. А. Мартиросян**, Первобытн [illegible] Армении и их урарто-армянские двойники («Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, № 9, էջ 61—71):

իրենց գոյությունը մինչև XII դարը մ. թ. ա.։ Հեթիթական պետությունը Հին Արևելքի հզորագույն պետություններից մեկն է հանդիսացել, այնքան հզոր, որ մրցության մեջ է մտել Հին Արևելքի այնպիսի խոշոր պետությունների հետ, ինչպիսիք եղել են Եգիպտոսը, Բաբելոնը և Ասորեստանը[6]։

Հեթիթներն իրենց գոյության ավելի քան ութ հարյուր տարիների ընթացքում գործ են ածել գաղափարագիր և սեպագիր գրատեսակներ։ Բավական մեծ թվով հեթիթական բնագրեր գտնվել են Բողազ-Քոյում (պատմական Խաթուշաշ քաղաքի մոտ) և Թել-Ամարնայում (Եգիպտոսում՝ Նեղոս գետի վրա)։ 1906—1907 թվականներին գերմանացի հնագետ Հ. Վինկլերը գտավ հեթիթական թագավորների արխիվը՝ հազարավոր թրծաղյուս սալիկների վրա։



Մի նմուշ հեթիթերեն գրությունից։

Վերծանման գործում առանձնապես մեծ վաստակ ունի չեխ գիտնական, հեթիթագետ Բեդրժիխ Հրոզնին[7]։ Վերծանությունից պարզվեց, որ թրծաղյուսների այդ սալիկների գրությունները պարունակում են ծիսական կանոններ, հրահանգներ, պայմանագրեր և այլ նյութեր՝ հիմնականում սեպագրերով։ Այդ տեղեկությունները միաժամանակ բացառիկ արժեք ունեն Հայաստանի նախաբնիկների և Մերձավոր Արևելքի մյուս ժողովուրդների պատմության համար[8]։ Հեթիթական գաղափարագրերը բաղկացած են երկու տեսակի նշանագրերից. մի մասն արտահայտում է ամբողջական բառեր, իսկ մյուսները՝ վանկեր կամ առանձին հնչյուններ։ Ամբողջական բառեր արտահայտող նշանագրերից, որպես նմուշ, կարելի է բերել հետևյալները.

---

[6] Համապատասխան գրականության մատենագիտությունը տե՛ս **В. В. Иванов**, Хеттский язык, М., 1963, էջ 219—221։

[7] Տե՛ս **И. Фридрих**, Дешифровка забытых письменностей и языков, М., 1961, էջ 82—91։

[8] «Հաթիթ» (խեթ) տերմինը լայն կիրառում է ունեցել և վերաբերում է ոչ միայն բուն հեթիթներին (տե՛ս **Д. Дирингер**, Алфавит, М., 1963, էջ 113, ծան. 1)։

	Մայր աստվածուհի		Հաթի երկիր
	Աստված		Կարկեմիշ
	Թագավոր		Մեծ
	Իշխան		Հզոր
	Տեր		Գուրգում կամ Մարգաշ
	Քահանայապետ		Մի թագավորի անուն
	Ծառա		Արսանիա անուն
	Որդի, ժառանգ		Թագավորի այլ գաղափարագիր
	Երկիր		

Վանկ կամ տառ արտահայտող գաղափարանիշերից կարելի է բերել հետևյալները․

	Ա, Օ		մի
	Ի, Ն		թի
	Կ, կա, ակ		ար
	Թ		շտ
	Ն, նի		թար
	Մ		բլ, բկ
	Փ		2

Պատմական Հայաստանի սահմաններում գտնված առավել տարածուն գրչությունն ուրարտականն է։ Ուրարտուի պետությունն ընդգրկել է պատմական Հայաստանի միջին մասի՝ Վանի, Սևանի, Ուրմիայի լճերի միջև ընկած տարածությունը։ Նրա քաղաքական կազմավորումը տեղի է ունեցել 9-րդ դարում մ. թ. ա.։ Այդ ժամանակից էլ ուրարտացիներն սկսել են գործածել սեպագիր գրությունը. վերցրել են այն ասորականից և որոշ ձևափոխություններով հարմարեցրել ուրարտերենի պահանջներին։ Ուրարտուն քաղաքական բուռն վերելքի շրջան ապրեց ութերորդ դարում, մասնավորապես Արգիշտի Ա-ի թագավո-

րության տարիներին (786—764), որը և Էրեբունի (Երևանի) հիմնադիրը հանդիսացավ[9]։

Ուրարտուում, անշուշտ, գործ են ածվել տարբեր տեսակի գրություններ, սակայն մեզ են հասել միայն քարերի և աղյուսասալիկների վրա գրածները։ Մեկ-մեկ պատահում են նաև ուրարտական սեպագիր արձանագրություններ երկաթե իրերի ու առարկաների վրա։ Մեզ հասած ուրարտական արձանագրությունների թիվը անցնում է չորս հարյուրից[10]։ Նրանց մեծ մասը արդեն գիտականորեն վերծանված է։ Հիմնականում մնում են միայն ճշգրտման կարոտ առանձին սեպախմբեր ու բառ-արտահայտություններ։ Հրապարակի վրա կա անգամ ուրարտերենի համաբարբառը[11]։

Ի դեպ, ուրարտական սեպագիր արձանագրությունների մասին առաջին անգամ հայ մատենագրության մեջ խոսել է պատմահայր Մովսես Խորենացին։ Նա հիշում է Վանի քարաժայռի վրա եղած արձանագրությունը և սխալմամբ վերագրում ասորական Շամիրամ թագուհուն, որը, ինչպես պատմահայրն է ասում, Վանի քարաժայռի երեսը «...իբրև գրչաւ զմոմ հարթեալ՝ բազում գիրս ի նմա գրեաց, որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ»[12]։

Ուրարտական արձանագրության անդրանիկ հայտնաբերողը գերմանացի արևելագետ Ֆ. Շուլցն էր, որը 1828—1829 թվականներին ընդօրինակել է Վանի և նրա շրջակա վայրերի սեպագիր արձանագրությունները և ուղարկել Փարիզ, որը և հրատարակվել է 1840 թ.։ Հետագայում ուրարտական արձանագրությունների հավաքման և հրատարակության գործում մեծ աշխատանք են կատարել Լեման-Հաուպտը, Թելկը, Մեսրոպ եպիսկոպոս Սմբատյանը և այլ անձինք։

Սովետական Հայաստանի հնագետները, Երևանի Արինբերդ կոչվող վայրում կատարած պեղումների ժամանակ, հայտնաբերեցին շինարարական բնույթի ուրարտական մի արձանագրություն, որից պարզվեց, որ Երևան քաղաքը հիմնադրվել է ուրարտական Արգիշտի թագավորի կողմից 782-ին մ. թ. ա.։ Հայ ժողովուրդը մեծ հանդիսավորությամբ 1968 թ. նշեց իր սիրելի քաղաքի 2750-ամյա հոբելյանը։ Անհրաժեշտ ենք համարում բերել այդ կարևոր արձանագրությունը և առկա գիտական տառադարձության թարգմանությունը[13]։

---

[9] *Քաղաքի կառուցման շարժառիթների քննությունը տե՛ս* Ս. Տ. Երեմյան, *Էրեբունի Երևանը միջազգային մայրուղու վրա («Լրաբեր», 1969 թ., № 12, էջ 16—25)։*

[10] **Նրանց համահավաք հրատ.** *տե՛ս* **Г. А. Меликишвили**, Урартские клинообразные надписи, М., 1960 և **И. М. Дьяконов**, Урартские письма и документы, М.-Л., 1963։

[11] *Տե՛ս* **В. А. Гвахария**, Словарь-симфония урартского языка, М., 1963։

[12] **Մովսես Խորենացի**, *Պատմութիւն Հայոց, էջ 54։*

[13] *Տե՛ս* Մ. Ա. **Իսրայելյան**, *Էրեբունի Երևան (տե՛ս «Լրաբեր», 1962 թ., № 10, էջ 26—27)։* *Հմմ.* **К. Оганесян, Арин-берд**, Ереван, 1961, էջ 9։



Արգիշտիի Էրեբունի քաղաքի կառուցման արձանագրությունը։

Արձանագրությունը վերծանվում է.

Խալդյան մեծությամբ Արգիշտի Մենուայորդին այս բերդը կառուցեց:

Դրեցի Էրեբունի անունը, Բիայնա երկրների փառքի (?), թշնամիներին սարսափեցնելու (?) համար:

Արգիշտին ասում է. հողը ամայի էր (?) կատարեցի հզոր ձեռնարկություններ այնտեղ:

Խալդյան մեծությամբ Արգիշտի Մենուայորդին թագավոր (է) հզոր, թագավորը՝ Բիայնացոց, տերը՝ Տուշպա քաղաքի:

Անգլիացի նշանավոր արևելագետ Ա. Սեյսին է պատկանում ուրարտական արձանագրությունների կապակցված վերծանության պատիվը (1882 թ.), իսկ հետագայում ուրարտական արձանագրությունների վերծանման և ճշտման ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել ռուս և հայ արևելագետներ՝ Մ. Նիկոլսկին, Ք. Պատկանյանը, Ն. Մառը, Ի. Մեշչանինովը, Հ. Օրբելին, Գ. Ղափանցյանը և ուրիշներ։

Ուրարտագիտության ասպարեզում մեծ վաստակ ունեն հատկապես ակադ. Բ. Պիոտրովսկին, Գ. Մելիքիշվիլին և Ի. Դյակոնովը։ Կարմիր բլուրի պեղումների ժամանակ Բ. Պիոտրովսկին երկրի ընդերքից լույս աշխարհ հանեց ուրարտական մշակույթի բազմաթիվ ցուցանյութեր և զգալի չափով ընդարձակեց պատմագիտության տեսադաշտը Ուրարտուի մասին[14]։

Ուրարտական սեպագիր արձանագրությունները ունեն խառը նշանագրե-

---

[14] *Ուրարտական արձանագրությունների վերծանությամբ և նրանց ճշտման աշխատանքներով մեզ մոտ մեծ ջանասիրությամբ աշխատում են Ն. Հարությունյանը, Մ. Խաչիկյանը և Հ. Ղարագյոզյանը։*

րից բաղկացած գրության համակարգ, որոնցից մի մասը մի բառ է արտահայտում, իսկ մյուս մասը՝ մի վանկ կամ մի տառ։

Ամբողջական բառեր արտահայտող սեպագրեր.


տուն
տաճար
առաջ
որդի
լեռ
աստված
անել
ջուր
յուղ
գետ
զորք
կառավարիչ
պարտություն
ես
ճանապարհ
տեր
կով
գնալ
երկաթ
որդի
լինել
անիծել
ստրուկ
մեծ
ծառ
ձախ

Առանձին վանկեր կամ հնչյուններ արտահայտող սեպագրեր.


բե
բիր
բու
բուր
գան
գին
կուր
ար
ակ
ալ
ամ
ման
մար[15]
մե
նա
պի
խի
զու
ատ
բա
դալ

Ինչպես արևելքի մի շարք երկրներում, այնպես էլ Հայաստանում գործածության մեջ է գտնվել արամեական գրությունը։ Գտնվել են Հայոց Արտաշես I թագավորի (189—160 մ. թ. ա.) արամեական վեց արձանագրությունը Սևանի ավազանում, Սիսիանում, Գառնիում[15] ա,

---

[15] Պիտի լինի երկու ուղղահայաց սեպ։

[16] Վերջերս գտնվեցին արամեական այլ արձանագրություններ ես. մեկը Սիսիանում՝ գառ



Արտաշես թագավորի արամեական արձանագրությունը

Ակադ. Հ. Օրբելին գտնում էր, որ նշված արձանագրությունները[16] *պատկանում են Հայոց Արտաշես թագավորին, որը 189 թ. մ. թ. ա. ապստամբեց Սելևկյաններից և Մեծ Հայքի թագավորը դարձավ՝ միավորելով հայկական քաղաքական մանրատված միավորումները։ Հ. Օրբելին առաջ քաշեց այն կարծիքը, որ արամեական այդ արձանագրությունները կարող են լինել սահմանային այն քարերը, որոնց մասին տեղեկություն է տալիս պատմահայր Մովսես Խորենացին։*

Հետագայում այդ արձանագրությունների վերծանությամբ զբաղվեց Էրմիտաժի աշխատակից պրոֆ. Ա. Բորիսովը, որն իր ուսումնասիրությունը հրատարակեց „Вестник древней истории“ *ամսագրում*[17]*։ Նա գիտականորեն ապացուցեց, որ տվյալ արձանագրություններն իրոք պատկանում են Հայոց Արտաշես Առաջին թագավորին և գրված են մ. թ. ա. երկրորդ դարում։*

Արամեական արձանագրություններից համեմատաբար ընդարձակը՝ Սյունիքի արձանագրությունն է, որը գտնվել է Սիսիանից Գորիս տանող ճանապարհի վրա՝ Իշխանասար լեռան ստորոտում[18]*։ Վերջինիս լեզվա-ոճական ուսումնասիրությունը Ա. Փերիխանյանին բերել է խիստ ուշագրավ եզրակացությունների։*

Օտար գրչություններից Հայաստանում ամենից տարածուն է եղել հունարենը։ Այդպիսիք գտնվել են Արմավիրում, Տիգրանակերտում, Բաշ Ապարանում, Էջմիածնում, Գառնիում և այլ վայրերում։

Այդ արձանագրությունների մեծ մասը թվագրվում է երրորդ դարով մեր թվականությունից առաջ և շարունակվում մինչև մեր թվականության չորրորդ դարը։ Նրանք գրված են հունարեն լեզվով և տառանիշերով։

Տարբեր ժամանակներում հունարեն մեծ թվով արձանագրություններ են գտնվել Արմավիրում (յոթ արձանագրություն), որ վերծանել և հրատարակել է Ա. Ի. Բոլտունովան[19]*։ Նույն արձանագրությունները, որոշ ճշտումներով և մեկնաբանություններով, հրատարակել է նաև ակադ. Հ. Մանանդյանը*[20]*։ Հիշյալ արձանագրությունները թվագրվում են երկրորդ և առաջին դարերով մ. թ. ա.։ Նրանք հետաքրքիր են այն տեսակետից, որ ունեն բարոյախոսական բովանդակություն։ Նրանցից մեկը, օրինակ, պարունակում է հատվածներ Հեսիոդոսի «Աշխատանքներ և օրեր» աշխատությունից։ Մեկ ուրիշ արձանագրության մեջ հիշված է Երվանդյան հարստության վերջին ներկայացուցչի անունը՝ Երվանդի, մի փաստ, որ գալիս է հաստատելու Խորենացու՝ Երվանդյանների մասին*

ծի արծաթյա թասի վրա, իսկ երկուսը՝ Դիլիջանից Իջևան տանող ճանապարհի վրա՝ Թեղուտ գյուղի մոտ։ (Վերջին երկու արձանագրությունների մասին տե՛ս Գ. Կարախանյանի հաղորդումը «Արամեական նորահայտ երկու արձանագրություններ»՝ տպագրված ՊԲՀ-ի 1971 թ. № 3-ում, էջ 274—276)։

[16] *Տե՛ս* „Известия“, *օրաթերթ, 1941 թ. 31 հունվար, № 25։*

[17] *Տե՛ս* **А. Я. Борисов, Надписи Артаксия** (Арташеса), царя Армении ВДИ, 1946, № 2, էջ 97—107։ *Նույն արձանագրություններին հետագայում անդրադարձել են նաև Ի. Դյակոնովը, Ստարկովան, Գ. Տիրացյանը և այլք։*

[18] *Տե՛ս* **А. Г. Периханян,** Арамейская надпись из Зангезура *(տե՛ս ՊԲՀ, 1965, № 4, էջ 107—188)։*

[19] **А. И. Болтунова,** Греческие надписи Армавира *(տե՛ս «Տեղեկագիր ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի», 1942 թ., № 1—2, էջ 35—61)։*

[20] *Հ.* **Մանանդյան,** *Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946։*



Գառնիի հունարեն արձանագրությունը

հաղորդած տեղեկությունների հավաստիությունը, որը տարիներ առաջ կասկածելի էր համարվում[21]։

Հայաստանում գտնված հունական արձանագրությունների շարքում բացառիկ արժեք է ներկայացնում Գառնիում գտնվածը, որը, ինչպես պարզվել է, պատկանում է Տրդատ Առաջինին (298—330)[22]։ Այս արձանագրությունն առաջին անգամ վերծանել և հրատարակել է պրոֆ. Ս. Լիսիցյանը։ Այնուհետև նրա վերծանությամբ զբաղվել են Հ. Մանանդյանը[23], Ա. Գ. Աբրահամյանը[24], Կ. Վ. Տրևերը[25]։ Արձանագրությանն անդրադարձել են նաև Գ. Սարգսյանը, Ս. Կյարկյաշարյանը, Հ. Բարթիկյանը և ուրիշներ։ Անհրաժեշտ ենք համարում բերել այդ արձանագրության լուսանկարը (տե՛ս էջ 36)։



Վեդիի արձանագրություններից մի հատված։

Հայաստանում արձանագրություններ են գտնվել նաև լատիներեն լեզվով։ Առ այժմ հայտնի են նրանցից ութը՝ երեքը Խարբերդում, երկուսը՝ Վաղարշապատում, մեկը՝ Արտաշատի կամուրջի դիմաց[26] և երկուսը վերջերս հայտնաբերվեցին Փոքր Վեդիի մոտ՝ պատմական Արտաշատ քաղաքի հյուսիսարևելյան սահմանում[27]։

Խարբերդի արձանագրությունները գրված են առաջին դարում ռազմական մի կարևոր իրադարձությունից հետո, երբ Ներոն կայսեր զորահրամանատար Պետոսի գլխավորած հռոմեական բանակը 62 թ. Հռանդայում խայտառակ պարտություն կրեց հայ-պարթևական միացյալ ուժերի կողմից և հարկադրված եղավ կապիտուլյացիայի ենթարկվել ու կրել ռազմական ամոթաբեր խայտառակություն՝ անցնել հաղթողների «լծի տակից»։ Ենթադրվում է, որ արձանագրությունները գրված լինեն այդ դեպքից երկու տարի հետո, երբ Հայաստանի ռազմական գործողությունները գլխավորելու համար հռոմեական զորքերի հրամանատար նշանակվեց Կորբուլոնը, որին և շնորհվեց «պրոպրետորի» կոչում, և նա, գալիական լեգեոնով, շարժվեց դեպի Հայաստան։ Արձանագրությունները գրվել են ինչ-որ կառույցների կապակցությամբ, ամենայն հավանականությամբ, Արածանիի վրա կամուրջի կառուցման կապակցությամբ։

---

[21] Պրոֆ. Գ. Գոյանի կարծիքով, այդ արձանագրություններից մեկը պարունակում է Հայոց Արտավազդ թագավորի մեզ չհասած պոեմի հատվածները։

[22] «Սովետական Հայաստան», օրաթերթ, 1945 թ. սեպտ. 23։

[23] Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946։

[24] Ա. Գ. Աբրահամյան, Գառնիի հունարեն արձանագրությունը, տե՛ս «Էջմիածին», 1947 թ., 3—4, էջ 62—72։

[25] **К. В. Тревер,** Очерки по истории культуры древней Армении, М.-Л., 1953, стр. 174—211:

[26] Տե՛ս **К. В. Тревер,** Очерки по истории культуры древней Армении, էջ 222—223:

[27] Տե՛ս **Բ. Ն. Առաքելյան**, Լատիներեն արձանագրություններ Արտաշատ մայրաքաղաքից (ՊԲՀ, 1967, № 4, էջ 302—311)։

Շինարարական բնույթ ունեն նաև Փոքր Վեդիում գտնված երկու, Արտաշատի կամուրջի դիմացի՝ մեկ և Վաղարշապատի՝ երկու արձանագրությունները։

Լատիներեն արձանագրություններից առանձնապես ուշագրավ է Վաղարշապատի 185 թվականին գրված արձանագրությունը, որն ունի հետևյալ բովանդակությունը (բերում ենք Ալիշանի թարգմանությամբ).

> **«ԴՐՕՇԱԿԻՐՔ ԱՊՕԼԻՆԱՐԵԱՆ ԼԵԳԷՈՆԻ ԺԵ (15) ՈՐՈՑ ԷԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿ՝ ԿԵԼԻՈՍ ԿԱԼՈՒԻՆՈՍ, ՏՐԻԲՈՒՆ ԶՕՐԱՑ՝ ԼԻԿԻՆԻՈՍ ՍԱՏՈՒՌՆԻՆՈՍ, ԵՒ ՀԱՐՈՒԻՐԱՊԵՏ ԱՒՐԵԼԻՈՍ ԼԱԲՐԱՁ, ԿԱՆԳՆԵՆ ԶՅԻՇԱՏԱԿՆ ԿԱՅՍԵՐ Մ. ԱՒՐԵԼ. (ԿՈՄՈԴ.) ԽՕԹՆԻՑՍ ՏԻՐԱՊԵՏԻ, ԶՈՐՈՒՑՍ ՀԻՒՊԱՏԻ ԵՒ ՀՕՐ ՀԱՅՐԵՆԵԱՑ»**[28]։

Արձանագրության նախավերջին տողում մի բառ ջնջված է։ Ենթադրում են, որ այդ ջնջված բառը լինի Կոմոդոս կայսեր անունը, որը հետագայում անարժան ճանաչվեց և սենատի կողմից որոշում ընդունվեց՝ նրա անունը ջնջել արձանագրությունների վրայից։ Ենթադրություններ են եղել նաև, որ ջնջված այդ բառը կարող է եղած լինել «Armeniecus» («Հայկական»), քանի որ այդ կոչումը գործ է ածել Մարկոս Ավրելիոս Վիրոսը (161—180 թթ.) Վաղարշապատը վերցնելուց հետո, իսկ հայ հայրենասերները, չհաշտվելով արձանագրության մեջ հռոմեական կայսեր «Հայկական» հորջորջումի հետ, ջնջել են նրա անունը։

Հայաստանում արձանագրություններ են գտնվել ուշ դարերում նաև արաբերեն, վրացերեն, ույգուրերեն և այլ լեզուներով։

Օտարալեզու գրությունների գոյությունը Հայաստանում պատահական չէ. Հայաստանը տնտեսական և քաղաքական իր կյանքով մեկուսացված չի եղել իր շրջապատից, նա անընդմեջ գտնվել է արևելքի և արևմուտքի մշակույթների խաչաձևման կենտրոնում (հին արևելյան, հելլենիստական, պարսկա-արաբական և այլն)։ Հայ մարդը, իր մայրենի լեզվից բացի, կարիք է ունեցել գիտենալու իր հարևանների լեզուները։

---

[28] Ղ. Ալիշան. Այրարատ, Վենետիկ, 1880, էջ 206։

III. ՀԱՅՈՑ ԳՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Հայկական գրերի ստեղծման մասին մենք ունենք երեք պատմական սկզբնաղբյուր՝ Կորյունի «Վարք Մաշտոցի», Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» և Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» աշխատությունները։ Հետագա դարերի հայ պատմիչների հաղորդած տեղեկությունները, հիմնականում, այս հեղինակների կրկնություններ են։

Պատմիչներից ամենից ստուգախոսը Կորյունն է։ Եվ դա հասկանալի է. Նա եղել է Մաշտոցի աշակերտը, լավատեղյակ է իր ուսուցչի գործունեությանը և գործուն մասնակցություն է ունեցել հայկական գրերի ստեղծման գործում։ Սակայն այդ հիմք չի տալիս թերագնահատելու մյուս պատմիչների տեղեկությունները, ինչպես վարվում են որոշ գիտնականներ։ Արդարացի չեն նաև այն ուսումնասիրողները, որոնք թերահավատությամբ են վերաբերվում Կորյունի տեղեկություններին և՛ առաջնությունը տալիս են Ղազար Փարպեցուն։ Նշված երեք պատմիչների տեղեկությունների քննական և բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա հնարավոր է լինում կազմել հայոց գրերի ստեղծման բավականին մանրամասն պատմությունը։

Հայկական ներկա գրերի պատմությունը անմիջականորեն կապված է Մաշտոցի[1] անվան հետ, ուստի և անհրաժեշտ ենք համարում նախ համառոտակի ծանոթացնել Մաշտոցի կյանքին և գործունեությանը։

Մաշտոցը ծնվել է Տարոն գավառի Հացեկաց գյուղում։ Հոր անունն է Վարդան։ Այս մասին Կորյունը հետևյալն է գրում։ «Առն, զոր ի նախակարգ բանիս նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշթոց անուն, ի Տարօնական գաւառէն, **ի Հացեկաց գեղջէ** (ընդգծումը մերն է—Ա. Ա.), որդի առն երանելւոյ Վարդան կոչեցելոյ»[2]։

---

[1] **Մաշտոց** անունը ձեռագրերում հանդիպում է տարբեր գրությամբ՝ «Մածթոց», «Մաշտոց», «Մաշթոց»։ Որոշ հեղինակներ (Խորենացի, «Պատմութիւն սրբոյն Ներսեսի Պարթևի Հայոց հայրապետի», Շիրակացի և ուրիշներ) Մաշտոցին հիշում են Մեսրոպ անունով, իսկ «Կատարումն սրբոյն Սահակայ Պարթևի» հին վրացական թարգմանության մեջ հիշվում է երկու անուններով էլ. «Սահակն իբրև կաթողիկոսական աթոռի պահպան նրանց տվեց երանելի **Մաշտոցին**, որ **Մեսրոպ** էր կոչվում»։ Ուրեմն՝ աղբյուրներում «Մաշտոց» կամ «Մեսրոպ» հիշատակվելը որևէ հակասություն չունի։

[2] **Կորյուն**, Վարք Մաշտոցի, հրատարակությամբ պրոֆ. Մ. Աբեղյանի, Երևան, 1941, էջ 36։

Մ. Էմինը և Հ. Գաթըրճյանը, հիմնվելով Մաշտոցի հոր Վարդան անվան, ինչպես և Մաշտոցի ծննդավայրը Տարոնը հանդիսանալու փաստերի վրա, ազնվական ծագում են վերագրել նրան՝ սերած համարելով Մամիկոնյաններից[3]։ Սակայն այս կարծիքը պատմական աղբյուրներով չի հաստատվում։ Ճիշտ է, Շիրակացու մոտ կա մի անորոշ ակնարկ այն մասին, որ իբր Մաշտոցը էր «յազատ տանէ»[4], սակայն այդ՝ ավատական պաշտոնական մատենագրության սովորական ձգտումն է՝ ազնվականական ծագում վերագրել հայ մատենագրության ասպարեզում աշխատող աչքի ընկնող բոլոր դեմքերին։

Անհիմն է նաև հայագիտության մեջ արտահայտված մյուս տեսակետը, որ իբր Մաշտոցը ճորտ գյուղացու որդի է եղել։ Տվյալ եզրակացության համար հիմք է ծառայել Փավստոս Բուզանդի մի վկայությունը, ուր Հացեկաց գյուղը «կարճազատ» գյուղ է անվանում[5]։ Բայց Փավստոսի մոտ «կարճազատ» բառը ունի ո՛չ թե «ճորտական» գյուղ, այլ «սահմանափակ ազատություն ունեցող» գյուղ իմաստը, որից գուցե կարելի լինի ենթադրել, որ այն ֆեոդալական կախվածության մեջ ընկած գյուղ է եղել։

Բոլոր դեպքերում, վերևում բերված երկու կարծիքներն էլ ծայրահեղություններ են. սկզբնաղբյուրների հիման վրա կարող ենք միայն հաստատապես ասել, որ Մաշտոցը եղել է աշխատավոր գյուղացու որդի։

Կորյունի տեղեկությունից երևում է, որ Մաշտոցը մանուկ հասակում հունական կրթություն է ստացել՝ «Ի մանկութեան տիսն վարժեալ հելլէնական դպրութեամբ»[6]։ Եթե հավատալու լինենք «Պատմութիւն սրբոյն Ներսիսի» անվավերական մի գրության տեղեկության, Մաշտոցը սովորել է Ներսես Մեծի մոտ[7]։ Սակայն, ինչպես իրավացի նկատել են Էմինը[8] և Հ. Մանանդյանը[9], այդ տեղեկությունը ստույգ չէ, որովհետև անհնար է, որ այդ մասին լռեր Մաշտոցի կենսագիրը։ Ավելի հավանական է Ն. Ադոնցի ենթադրությունը[10], որ Մաշտոցը սովորել է Անտիոքի հունական նշանավոր դպրոցում։ Այս դպրոցի սաներից են եղել վաղ քրիստոնեության աչքի ընկնող գործիչներ՝ Հովհան Ոսկեբերանը, Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Նազիանզացին, Թեոդորոս Մոպսուեստացին, Ղևոնդիոս Հայկազնը (որը հետագայում Աթենքի համալսարանի ուսուցչապետն էր) և ուրիշներ։ Մաշտոցի՝ Անտիոքի դպրոցում սովորելու օգտին է խոսում Թեոդորոս Մոպսուեստացու մոտիկությունը Մաշտոցին, որը մոգակրոնության մասին հատուկ աշխատություն է գրել Մաշտոցի համար։

---

[3] Տե՛ս Н. О. Эмин, Исследования и статьи, Москва, 1896, էջ 206։ Հ. Գաթըրճեան, Տիեզերական պատմութիւն, Վիեննա, հ. Բ, 1852, էջ 258։

[4] Տե՛ս Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 389։

[5] Տե՛ս Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1889, գլ. ԺԲ, էջ 111։

[6] Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 36։

[7] Տե՛ս «Սոփերք Հայկականք», հ. Է, Վենետիկ, 1853, էջ 28։

[8] Տե՛ս Н. О. Эмин, Исследования и статьи, էջ 206։

[9] Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, էջ 250։

[10] Տե՛ս Ն. Ադոնց, Անծանոթ էջեր Մաշտոցի և նրա աշակերտների կյանքից՝ ըստ օտար աղբյուրների («Հանդէս ամսօրեայ», 1925, էջ 195)։

Բանասեր Հ. Գաթըրճյանը Մաշտոցի ծննդյան թվականն է համարում 361-ը. «Մեսրոպ... ծնեալ յամի 361»[11]։ Նույն տեսակետն է պաշտպանում Ն. Ակինյանը[12]։ Հ. Աճառյանը ենթադրում է, որ Մաշտոցը ծնված պիտի լինի 360 թվականին[13]։

Մաշտոցի ծննդյան կոնկրետ տարեթվի մասին թեպետ հաստատուն տվյալներ չկան, սակայն տոմարական որոշ հաշիվներ հիմք են տալիս ենթադրելու, որ նշված գիտնականների հաշվումները մոտավորապես ճիշտ են։ Մաշտոցը ծնված պետք է լինի 361—364 թվականներին (այս մասին խոսք կլինի ստորև)։

Հացեկացցի երիտասարդը, տեղում կրթություն ստանալուց հետո, գալիս է Վաղարշապատ և ծառայության մտնում Խոսրով Երրորդի (383/4—388/9 թթ.) արքունիքում իբրև դիվանադպիր՝ Առավանի հազարապետության օրոք։

Մաշտոցն իր ժամանակի կրթված անձնավորություններից մեկն է եղել։ Այն փաստը, որ նա կարողացել է դպրի պաշտոնով աշխատանքի ընդունվել արքունիքում, վկայում է նրա պատրաստվածության մասին։ Սկզբնաղբյուրներում եղած ակնարկներից կարելի է ենթադրել, որ Մաշտոցը արքունիքում որոշ ժամանակ դիվանադպրի պաշտոնում ծառայելուց հետո անցնում է զինվորական ծառայության։ Բայց շուտով թողնում է իր պաշտոնը և հոգևոր կոչում ընդունում՝ միաբանելով Գողթնի ճգնարաններից մեկում։

Մ. Աբեղյանը ենթադրում է, որ նա ճգնած պետք է լինի Երնջակ գավառի Մեսրոպավանք կամ Մեսրոպավանիս, Մսրավանիս գյուղում[14]։ Ըստ Կորյունի, Մաշտոցի զինվորական ծառայությունը թողնելը և հոգևոր կոչում ընդունելը տեղի է ունեցել Վռամ Դ Կրմանի չորրորդ տարին, այսինքն՝ 391/2 թվականին (Վռամ Դ-ն գահ է բարձրացել 388/389 թվականներին)։

Հոգևորական դառնալուց հետո Մաշտոցը զբաղվում է շրջիկ քարոզչությամբ։ Պետք է նկատի ունենալ, որ այդ ժամանակ հեթանոսությունը դեռ բավականաչափ ամուր էր Հայաստանի լեռնային շրջաններում, և նման քարոզչական աշխատանքի կարիքը խիստ զգացվում էր։ Ենթադրվում է, որ Թեոդորոս Մոպսուեստացին 391/2 թվականին է գրել մոգակրոնության մասին իր

---

[11] **Հ. Գաթըրճեան**, *Տիեզերական պատմութիւն*, հ. Բ, էջ 523։

[12] **Ն. Ակինյան**, *Ս. Մաշտոց վարդապետ*, Վիեննա, 1949, էջ 26։

[13] **Հ. Աճառյան**, *Մեսրոպ Մաշտոցը* («Էջմիածին», 1954 թ., № 11, էջ 30)։ Գիտնականը հետագայում վերանայել է իր կարծիքը և Մաշտոցի ծննդյան թվականն է համարել 364 թ. (տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայոց գրերը*, Երևան, 1968, էջ 84)։

[14] **Մ. Աբեղյան**, *Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի և գրականության սկիզբը* (տե՛ս «Սովետական գրականություն», 1941 թ., № 1, էջ 48)։ Արտատպությունը տե՛ս «Մեսրոպ Մաշտոց» հոդվածների ժողովածու, Երևան, 1962, էջ 242—305։

աշխատությունը Մաշտոցի (Մաստուբիոսի) համար, իսկ հիշյալ աշխատության վերնագրում Մաշտոցն անվանված է «քորեպիսկոպոս» (χωρεπίσκοπος), *իսկ ինքը՝ Թեոդորոսը՝ «երեց»* (πρεσβύτερος)[15]*։ Հայտնի է, որ Թեոդորոսը երիցության աստիճանում մնացել է 383-ից մինչև 392 թվականը, իսկ այնուհետև՝ Մոպսուեստի (Մամուեստայի) եպիսկոպոս, հետևապես, Մաշտոցը քորեպիսկոպոսի կոչում է ստացել 391/2 թվականներին*[16]*։*

Այստեղ՝ Գողթնում, Մաշտոցը մոտիկից շփվում է ժողովրդի հետ, տեսնում, թե ինչպես հունական և ասորական ազդեցությունները, նրանց դպրությունները ծանրանում են ուսումնասիրող հայորդիների վրա։

Նա խոր վիշտ է զգում. «...յարաժամ տրտմէր երանելի այրն Մաշտոց, տեսանելով զմեծ ջանն և զառաւելապէս ծախս մանկանցն Հայաստան աշխարհիս, որք բազում թոշակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմաժամանակեայ դեգերմամբք մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս ասորի գիտութեան»[17]*։ Նա համոզվում է, որ հունարեն և ասորերեն լեզուների գերիշխող այդ վիճակը չի նպաստում նոր հավատի ամրապնդմանը, իսկ հեթանոսության դեմ կռվելու լավագույն միջոցը՝ սեփական գիր և գրականություն ստեղծելն է։*

Մաշտոցը Գողթնից վերադառնալուց հետո լինում է կաթողիկոս Սահակ Պարթևի մոտ և պատմում ժողովրդի ծանր վիճակի մասին ու հայտնում իր մտահոգությունը։ Սահակ կաթողիկոսը, Մաշտոցի հետ միասին, դիմում է Վռամշապուհ թագավորին։ Վերջինս հավանություն է տալիս նրանց մտադրությանը և հայտնում, թե ինքը տեղեկություն ունի, որ Աղձնիքի Արզն քաղաքի Դանիել եպիսկոպոսն ունի հայերեն գրեր։ Որոշվում է բերել տալ այդ գրերը։ Դանիելից գրեր բերելու համար ուղարկում են Վահրիճ անունով մեկին, որը գնում է Դանիելի բարեկամ Հաբել քահանայի մոտ և վերջինիս միջոցով բերել տալիս Դանիելյան գրերը։ Այս տեղի է ունեցել, ըստ վարքագրի տեղեկության, Վռամշապուհի գահակալության **հինգերորդ** *տարին*[18]*, այսինքն՝ 403—404 թվականներին*[19]*։*

Տե՛ս **Migne**, Patrologia Graeca, t. *103,* col. *291։ (Բնագիրն ու թարգմանությունը տե՛ս Ն. Ադոնց. Մաշթոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների, «Մեսրոպ Մաշտոց», ժողովածու ՀՍՍՀ ԳԱ-ի, էջ 201—230)։*

[16] *Հմմ. Հ.* **Անասյան**, *Մեսրոպ Մաշտոց (տե՛ս «Էջմիածին», 1954 թ., № 11, էջ 26)։ Պրոֆ. Ն. Տեր-Մինասյանը չի ընդունում Մաստուբիոսի և Մաշտոցի նույնանձնությունը և յուրովի է բացատրում Մաշտոցի կյանքի ժամանակագրությունը (տե՛ս* **Ն. Տեր-Մինասյան**, *Հայոց գրերի գյուտի թվականի և այլ հարակից խնդիրների մասին, «Բանբեր Մատենադարանի», 1964 թ., № 7, էջ 25—47)։*

[17] **Ղազար Փարպեցի**, *Պատմութիւն Հայոց, էջ 13։*

[18] *Տե՛ս* **Կորյուն**. *Վարք Մաշտոցի, էջ 44։*

[19] *Վռամշապուհի գահակալության վերաբերյալ աղբյուրները խիստ հակասական են. ոմանք ընդունում են 388 թ. (Օրմանյան, Մանանդյան, Լեո), մյուսները՝ 391 թ. (Ասատուրյան), 398 թ. (Մարկվարտ, Թաքոսյան, Գ. Տեր-Մկրտչյան, Ակինյան, Ն. Տեր-Մինասյան)։*

Մաշտոցը դպրոց է բաց անում, աշակերտներ հավաքում և սկսում պարապել դանիելյան այս գրերով։ Սակայն որոշ ժամանակ այդ տառերով պարապելուց հետո տեսնում են, որ նրանք մեծ թերություններ ունեն և չեն արտահայտում հայոց լեզվի հնչյունական առանձնահատկությունները[20]։

*Այբուբենի այս պակասը լրացնելու նպատակով, Մաշտոցը Սահակի հանձնարարությամբ, մի խումբ աշակերտների ուղեկցությամբ մեկնում է Միջագետք՝ հայկական համապատասխան այբուբենի ստեղծումն այնտեղ հոգալու նպատակով[21]։ Լինում է Ամիդ և Եդեսիա քաղաքներում։ Նա արտակարգ լավ ընդունելություն է գտնում այդ վայրերի հույն և ասորի մտավորականների կողմից։ Իր հետ տարած աշակերտներին Մաշտոցը բաժանում է երկու խմբի՝ մի մասին հանձնարարում է հունարեն սովորել, իսկ մյուսին՝ ասորերեն, իսկ ինքը, տեղացի գիտնականների աջակցությամբ, զբաղվում է այբուբենի ձևավորումով։ Գրերը ձևավորել է տալիս Սամոսատ քաղաքում (Եփրատի վրա) Հռոփանոս (*Rufinus*) անունով մի գեղագրի։*

Հայկական այբուբենն ստեղծելու աշխատանքն ավարտելուց հետո, Մաշտոցն իր երկու աշակերտների՝ Հովսեփ Պաղնացու և Հովհան Եկեղեցացու օգնությամբ նորաստեղծ նշանագրերով հայերեն է թարգմանում Սողոմոնի առակները, որոնք մանր խրատական ասացվածքներ են պարունակում և հարմար էին նորակիրթ երեխաներին դաստիարակելու համար[22], ու վերադառնում Հայաստան։

Կորյունի տեղեկություններից երևում է, որ գրերի ստեղծմանը բացառիկ մեծ նշանակություն են տվել Հայաստանում. Վաղարշապատ վերադառնալիս Մեսրոպին դիմավորելու են դուրս գալիս թագավորն ու կաթողիկոսը՝ իրենց հետ վերցրած «...զամենայն նախարարգունդ աւագանւոյն ամբոխ»։ Գրի ստեղծումը այնքան կարևոր իրադարձություն է համարվել հայ իրականության մեջ, որ այդ առթիվ, ինչպես վկայում է Կորյունը, հատուկ տոնախմբություն է տեղի ունեցել։

---

[20] *Կորյունը փորձնական այդ ժամանակը սահմանում է «իբրև ամս երկու», Խորենացին՝ «զամս սակաւս», Սամուել Անեցին՝ մեկ տարի («յետ միոյ ամի»)։ Հայագիտության մեջ եղել են զանազան կարծիքներ ու սրբագրության առաջարկներ (հմմ. Հ. Աճառյան, Երկու ուղղում Կորյունի մեջ. «Տեղեկագիր ԱրմՖանի», 1941 թ., № 1 (6), էջ 170)։ Սակայն Խորենացու Պատմության համապատասխան մասի երկաթագիր պատառիկի վերծանությունը ցույց տվեց, որ նախապես և՛ Կորյունի, և՛ Խորենացու երկերում եղել է միանգամայն այլ ընթերցում. «առեալ ...տղայս զոմանս սակաւս», ինչպես պատառիկում (տե՛ս Ս. Քոլանջյան. Մովսես Խորենացու նորահայտ երկաթագիր պատառիկն ու դանիելյան նշանագրերի օգտագործման ժամանակի հարցը, «Բանբեր Մատենադարանի», № 4, 1958 թ., էջ 163—182)։*

[21] *Միջագետքն այդ ժամանակ փայլում էր իր բարձրագույն դպրոցներով։ Այնտեղ էին գտնըվում ականավոր մի շարք գիտնականներ. Եդեսիայում այդ ժամանակ գործում էր պարսկական նշանավոր դպրոցը Իբասի գլխավորությամբ, Ամիդի դպրոցը՝ Ակակիոսի գլխավորությամբ և այլն (Հ. Աճառյան. Մեսրոպ Մաշտոց, «Էջմիածին», 1954 թ., № 1, էջ 25)։*

[22] *Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 54։ Պատճառների քննությունը տե՛ս Ա. Ղանալանյան. Թե ինչո՞ւ Մաշտոցը թարգմանեց Սողոմոնի առակները («Բանբեր Մատենադարանի», № 7, 1964 թ., էջ 113—122)։*

Հայկական նշանագրերը Միջագետքից բերելուց հետո Մաշտոցը և Սահակը բաց են անում դպրոցներ և զբաղվում դաստիարակությամբ։

Մաշտոցը նախ կարգավորում է մայրաքաղաքում՝ Վաղարշապատում, վարդապետարան հիմնելու գործերը և ապա մեկնում է Գողթն, «յառաջին դաստակերտին իւր»։ Այստեղ նա, տեղի իշխան Շաբաթի աջակցությամբ, հավաքում է երեխաներ և կրթարաններ հիմնում։ Ապա մեկնում է Սյունիք, նույնը կատարում նաև այնտեղ՝ Վասակ Սյունեցու աջակցությամբ։ Այնուհետև նա շրջում է Արևելյան Հայաստանի մյուս շրջանները և ամենուրեք նոր դպրոցներ բաց անում։

Արևելյան Հայաստանում նորաստեղծ գիրը գործածության մեջ դնելուց հետո անհրաժեշտ էր այն գործածության մեջ դնել նաև Արևմտյան Հայաստանում՝ մյուս «...կէս ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հոռոմոց»[23], Մաշտոցի այդ ուղղությամբ կատարած առաջին փորձն անհաջողությամբ է վերջանում. տեղական իշխանության ներկայացուցիչները թույլ չեն տալիս նրան դպրոցներ բաց անել։ Մաշտոցը հարկադրված է լինում իր հետ տարած աշակերտներին թողնել Մելիտինեի Ակակիոս եպիսկոպոսի մոտ և մեկնել Բյուզանդիոն՝ Թեոդոս Բ կայսեր (408—450 թթ.) թույլտվությունը ստանալու։

Բյուզանդական կայսրության քաղաքական վիճակն այդ ժամանակ այնպիսին էր, որ նա հայերի նկատմամբ որդեգրել էր սիրաշահելու քաղաքականություն, ուստի կայսրն ընդառաջում է Մաշտոցի խնդրանքին և անգամ հանձն է առնում դպրոցների ծախսերը վերցնել արքունիքի վրա։ Մաշտոցն իր աշակերտներով շրջում է Արևմտյան Հայաստանում և մի շարք վայրերում դպրոցներ բացում։

Մաշտոցի այս առաքելությունն ու դպրոցներ բացելու փաստը տեղի պետք է ունեցած լինի ոչ շուտ, քան 419/420 թվականներին (որովհետև Ակակիոսը Մելիտինեի եպիսկոպոս է կարգվել այդ թվականներին) և ոչ ուշ քան 425 թվականին (որովհետև Մաշտոցը Կոստանդնուպոլսում հանդիպում է ունեցել Ատտիկոս պատրիարքի հետ, իսկ վերջինս մահացել է 425 թվականի հոկտեմբերի 10-ին)։

Սակայն Մաշտոցը միայն կրթարաններ բաց անելով չէ, որ զբաղվում է։ Նա Սահակ Պարթևի և իր աշակերտների հետ միասին ձեռնարկում է թարգմանական խոշոր աշխատանք. թարգմանում են ինչպես ասորերենից, այնպես էլ հունարենից։ Թարգմանիչների շարքում են գտնվել հայ երկու ականավոր մատենագիրներ՝ Եզնիկ Կողբացին և Կորյունը։

Ե՞րբ է տեղի ունեցել հայկական գրերի ստեղծումը։ Այս հարցի մասին հայագիտության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել։

Բանասեր Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միաբան), ուսումնասիրելով սկզբնաղբյուրները[24], եկել է այն եզրակացության, որ դանիելյան գրերի ստեղծումը տեղի է ունեցել 405 թվականին, իսկ «Թուն տառերի գյուտի և կատարելագործության ժամանակ» համարել է 412—416 թվականները[25]։

---

[23] Նույն տեղում, էջ 64։

Պրոֆ. Ն. Ադոնցը հիմնվելով այն փաստի վրա, որ Թեոդորոս Մոպսուեստացին աշխատություն է գրել Մաստուբիոս—Մաշտոցի համար և վերջինս քահանա է եղել 383—392 թվականներին, ենթադրում է, որ Մաշտոցը հայկական այբուբենը ստեղծած պետք է լինի Թեոդորոս Մոպսուեստացու օգնությամբ Եդեսիայում։ Միաժամանակ նա դիտում է, թե «Հայ գրերի ծագումը մութ է և ոչ ոք հանկարծակի չպիտի գա մեր ենթադրության համար»[26]։

Ակադ. Հ. Մանանդյանը անվերապահ ընդունում է պրոֆ. Ն. Ադոնցի այս կարծիքը՝ փոքրիկ ուղղումով, կոնկրետ թվական ընդունելով Թեոդորոս Մոպսուեստացու կյանքի վերջին տարին՝ 391/392 թվականը[27]։

Ն. Ակինյանը հայկական գրերի ստեղծման ժամանակ համարում է 406—407 թվականները և գտնում, որ հայերեն նոր գրերը Միջագետքից Հայաստան են բերվել 407—408 թվականներին[28]։ Մասնակի սրբագրումով՝ 405/6 այդ կարծիքն ընդունում է և Ե. Տեր-Մինասյանը[29]։

Մեր կարծիքով, ամենից հավանական տեսակետը վերջինն է, և այս էլ պետք է ընդունել հետևյալ նկատառումով[30]։

1. Կորյունի աշխատության վերջաբանում ասված է, որ հայկական գրերը ստեղծվել են Մաշտոցի մահվանից 35 տարի առաջ՝ «Ի դպրութենէն Հայոց մինչև ցվախճան Սրբոյն (այսինքն՝ Մաշտոցի—Ա. Ա.)՝ ամք երեսուն և հինգ»։ Տոմարական անվիճելի հաշիվներով պարզված է, որ Մաշտոցը մահացել է 440 թվականի փետրվարի 17-ին. եթե գրերը ստեղծվել են Մաշտոցի մահվանից 35 տարի առաջ, ապա հայկական գրերի ստեղծումը տեղի պետք է ունեցած լինի 405/406 թվականներին։

2. Կորյունը, նույն վերջաբանում, գրերի ստեղծման թվականը հիշում է նաև Հազկերտ Առաջինի թագավորության ութերորդ տարին։ Հազկերտը գահ է

---

[24] Գ. Տեր-Մկրտչյան, Հայ գրերի 1500-ամյակի առթիվ («Արարատ», 1912, էջ 499—514։ Վերահրատարակությունը տե՛ս «Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու ՀՍՍՀ ԳԱ-ի, էջ 181—198)։

[25] Գ. Տեր-Մկրտչյանի տեսակետը ժամանակին պաշտոնապես ընդունելություն է գտել հայագիտության մեջ, և 1912 թվականին (հոկտեմբերի 12—13-ին) էջմիածնում և Օշականում նշվել է հայկական գրերի ստեղծման 1500-ամյա հոբելյանը։

[26] Ն. Ադոնց. Անծանոթ էջեր Մաշտոցի և նրա աշակերտների կյանքից («Հանդէս ամսօրեայ», 1925, էջ 439)։

[27] Տե՛ս Я. А. Манандян, Месроп Маштоц и борьба армянского народа за культурную самобытность. Ереван, 1941, № 26։ Նաև «Հայ գրերի գյուտի տարեթվի հարցի շուրջը», «Տեղեկագիր», 1952 թ., № 7, № 41—57։ Վերահրատարակությունը տե՛ս «Մեսրոպ Մաշտոց» ժողովածու, էջ 25—116։

[28] Տե՛ս Ն. Ակինյան, Ս. Մաշտոց վարդապետ, էջ 108։

[29] Տե՛ս Ե. Տեր-Մինասյան, նշված աշխատությունը, էջ 45։

[30] Մեր կարծիքը գրի ստեղծման թվականի վերաբերյալ հանգամանորեն շարադրված է «Հայ գրի ստեղծման թվականը» հոդվածում (տե՛ս «Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու Երևանի համալսարանի, էջ 101—132)։

բարձրացել 399 թվականին. նրա ութերորդ տարին դարձյալ համապատասխանում է 406/7 թվականին։

3. Կորյունի աշխատությունից հայտնի է, որ Մաշտոցը Միջագետքում գտնված ժամանակ հանդիպում է Ակակիոս և Բաբիլաս եպիսկոպոսներին։ Ակակիոսը Ամիդում եպիսկոպոսական աթոռին է գտնվել 400—409 թվականներին, իսկ Բաբիլաս անունը ենթադրվում է, որ աղավաղված է և պետք է եղած լինի Պակիդաս[31], ինչպես առաջարկել է Ն. Ակինյանը, իսկ Պակիդասը (նույնն է՝ Բաքիդաս) Եդեսիայի եպիսկոպոս է եղել 398—409 թվականներին։

Ահա այս փաստերը մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ հայկական գրերի ստեղծման հավանական թվականը պետք է համարել 406—407 թվականները։

Մաշտոցը մահացել է 440 թվականի մեհեկան ամսի 13-ին, շաբաթ օրը, որը ներկա ամսաթվով (հաշվելով շարժական օրերի քանակը) փետրվարի 17-ն է, և թաղվել է Օշական գյուղում։ Մահվանից երեք տարի հետո Վահան Ամատունին նրա շիրիմի վրա կանգնեցրել է «խորան տաշածոյ վիմօք»[32]։

Հայոց գրերի պատմության հետ կապված մյուս կարևոր հարցը՝ նրանց սկզբնաղբյուրի խնդիրն է, այսինքն՝ այն այբուբենի հարցը, որի տառաձևերը և սիստեմը օգտագործվել են հայկական գրության ստեղծման ժամանակ։ Խնդրիս մասին հայագիտության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել։ Կանգ առնենք նրանցից կարևորների վրա։

Մ. Չամչյանի կարծիքով Մաշտոցը ոչ մի այբուբենից չի օգտվել և բոլոր տառանիշերն էլ ինքն է ստեղծել։ Նա գտնում է, որ մի մարդ, որը կարող էր հարևան վրացիների և աղվանների համար ինքնուրույն գիր ստեղծել, դժվար չէր իր ժողովրդի համար տառանիշեր ստեղծել՝ առանց ուրիշից օգտվելու[33]։

Հ. Հյուբշմանը ենթադրում է, որ Մաշտոցի՝ Դանիելից վերցրած գրերը, թվով 22, հունական են եղել, իսկ մնացած 14 նշանագրերը ինքն է ստեղծել[34]։

Ի. Հարությունյանի կարծիքով, հայկական այբուբենի 22 տառանիշեր փյունիկեցիներից է վերցված, 2 տառանիշ՝ հունարենից, իսկ մնացած 12 տառանիշերն ինքն է ստեղծել[35]։

Թ. Սարգիսյանը ենթադրում է, որ հայկական այբուբենը երեք տարբեր այբուբենների խառնուրդ է՝ ասորերենի, պարսկերենի և հունարենի. ասորերենից վերցրել է 2 տառանիշ, պարսկերենից՝ 12 տառանիշ և հունարենից՝ 22 տառանիշ[36]։

Հայագետ Մյուլլերը, որը հայկական գրի ատաղձի մասին խոսել է իր երեք հոդվածներում, գտնում է, որ դանիելյան 22 տառերը, որոնք օգտագործել է Մաշտոցը, ասորական ծագում են ունեցել (վերցվել են պալմիրականից, և 7 ձայնավոր ու 7 բաղաձայն տառեր վերցվել են զենդական այբուբենից[37]։

---

[31] Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի («Հանդէս ամսօրեայ», 1935, էջ 512)։

[32] Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 94։

[33] Տե՛ս Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1784, հ. Ա, էջ 760—761։

[34] Տե՛ս H. Hübschman, Uber Aussprache und Umschreibung der Altarmenische (ZDMG, 1876, էջ 63)։

[35] Տե՛ս Ի. Հարությունյան, Հայոց գիրը, էջ 309—314։

[36] Տե՛ս «Բազմավէպ», 1899, էջ 34—35։

[37] Մյուլլերի հոդվածների թարգմանությունները տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1889, էջ 86—87, 1891, էջ 68—70, 1894, էջ 244—246։

Պրոֆ. Հ. Աճառյանը, որ ամենից հանգամանորեն քննել է հայ գրերի սկզբնավորության հարցը, եկել է այն եզրակացության, որ հայկական այբուբենի 20 տառերը հունարենից են վերցված, 4—6-ը՝ հայկական են, իսկ մնացածը իրանական կամ ասորական ծագում ունեն[38]։

Ն. Ակինյանը ենթադրում է, որ հայկական 36 տառերից 33-ը հունարենից են վերցված, իսկ երեքը՝ ասորերենից։ Ասորերենից, նրա կարծիքով, Մաշտոցը վերցրել է «Հ», «Ծ» և «Խ» տառաձևերը[39]։

Կ. Բասմաջյանը հայկական այբուբենի տառանիշեր է փնտրում պարսկական սեպագրության մեջ։ Նա սեպերն ուղիղ գծերի վրա ածելով և անջատ սեպերն իրար միացնելով, նրանք բռնաձիգ համեմատում է հայկականի հետ և մատնացույց է անում հայկական 19 տառանիշ, որոնք, իբրև թե, իրենց մայրերն ունեն սեպագրության մեջ[40]։

Հայկական գրի ատաղձի ուսումնասիրությամբ զբաղվել է հայագետ Հ. Մարկվարտը։ Հայկական այբուբենը համեմատության մեջ դնելով հունական, ասորական և պահլավական այբուբենների հետ, նա եկել է այն հետևության, որ հայկական 36 տառանիշերից 15-ը ծագել են պահլավերենից, 7-ը՝ հունարենից, երեքը ստեղծել է Մեսրոպը, իսկ հինգի մասին դժվարացել է կարծիք հայտնել[41]։

Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյա հոբելյանի առթիվ լույս տեսան հայ գրի ծագմանը նվիրված մի քանի աշխատություններ, որոնցից ուշագրավ է, մասնավորապես պրոֆ. Է. Աղայանի «Մեսրոպյան այբուբենը և ուղղագրությունը» հոդվածը, ուր նա հանգամանորեն քննության է առել Աճառյանի և տողերիս հեղինակի հայտնած կարծիքները հայկական տառանիշերի նախատիպերի մասին և աշխատել որոշ ճշտումներ կատարել։ Նա անդրադարձել է նաև տարիներ առաջ իր հայտնած կարծիքին և աշխատել հիմնավորել այն։ Նա գտնում է, որ «Հունարենում, պահլավերենում կամ ասորերենում չեղած տառերը Մեսրոպը հորինել է մյուս տառերի ձևափոխությամբ և զետեղել է մեր այբուբենի այն տառերից հետո, որոնց նմանությամբ հորինել է այդ չեղյալ տառերը»[42]։

Հայկական, վրացական և աղվանական գրերի ազգակցության և նրանց ծագումնաբանական հարցերին նվիրված ուշագրավ հոդվածով վերջերս հանդես եկավ Ա. Գ. Փերիխանյանը։ Նա մի շարք օրինակների հիման վրա աշխատեց ցույց տալ, որ հայկական, վրացական և աղվանական տառանիշերը սերտ առնչության մեջ են գտնվում հյուսիսմիջագետքյան արամեական գրերի հետ[43]։

Եվ վերջապես, հայկական գրի ատաղձին անդրադարձել է նաև տողերիս գրողը և պաշտպանել այն տեսակետը, որ Մաշտոցը հայկական այբուբենի համար ելակետ է ընդունել հիմնականում իր ժամանակի ամենից զարգացած գրատեսակը՝ հունարենը[44]։

---

[38] Տե՛ս **Հ. Աճառյան**. Հայոց գրերը, էջ 271։

[39] Տե՛ս **Ն. Ակինյան**, Ս. Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949, էջ 253—270։

[40] Տե՛ս «Բազմավէպ», 1898, էջ 534։

[41] **Հ. Մարկվարտ**, Հայոց այբուբենի ծագումը և Ս. Մաշտոցի կենսագրությունը (տե՛ս «Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու ՀՍՍՀ ԳԱ-ի, էջ 165—176)։

[42] «Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու Համալսարանի, էջ 76։

[43] **А. Г. Периханян**, К вопросу о происхождении армянской письменности (տե՛ս «Переднеазиатский сборник», II, М., 1966, էջ 103—133)։

Հայկական գրի ծագումը պարզելու համար անհրաժեշտ է նախ անդրադառնալ հայկական այբուբենի հորինվածքային առանձնահատկություններին և տառակերտման սկզբունքներին։

Այդ տեսանկյունից, առաջին հարցը, որ ծառանում է մեր առջև, այդ հայկական գրի ինքնատիպության խնդիրն է. Մաշտոցն արդյոք օգտվե՞լ է որևէ գրատեսակից, թե՞ հայկական այբուբենը կազմել է յուրովի, այսինքն՝ հայոց լեզվին հատուկ հնչյունների համար նշանագրեր է ստեղծել առանց ուրիշի դիմելու, ինչպես կարծել է Մ. Ջամչյանը։

Գրի պատմությունից հայտնի է, որ այբուբենները մտացածին ձևով, անջույական չեն ստեղծվում. Նրանք մեծ կամ փոքր փոփոխություններով կապվում են իրար հետ, մեկը՝ սկիզբ է առնում մյուսից[45]։ Այսպես, հայտնի է, որ փյունիկյան գրից սկիզբ է առել հունականը, հունականից՝ լատինականը, լատինականից՝ եվրոպական ժողովուրդներինը և այլն։ Մաշտոցն արդյոք ծանո՞թ է եղել գրաստեղծման այս սկզբունքին։

Հնագրական ուսումնասիրություններն անվիճելի պարզել են, որ Մաշտոցը ծանոթ է եղել և առաջնորդվել է հենց այդ սկզբունքով։ Այս հարցն այլևս վիճարկության խնդիր չէ, ուստի չենք ուզում ծանրանալ նրա վրա։

Հայագիտության մեջ տարակարծությունների տեղիք է տվել հայկական այբուբենի տառանիշերի թվաքանակը։ Չնայած պատմիչները այդ մասին որոշակի տեղեկություններ են հաղորդում, որ մաշտոցյան այբուբենն ունեցել է 36 տառանիշ, սակայն գտնվել են ուսումնասիրողներ, որոնք կասկածանքի տակ են առել այդ տեղեկությունները և պնդել, որ որոշ տառանիշեր հայկական այբուբենի վրա ավելացվել են ուշ դարերում։ (Խոսքը 13-րդ դարում ավելացված հանրահայտ «և», «օ», «ֆ» տառերի մասին չէ)։ Այսպես, Ղ. Աղայանի կարծիքով, հայկական այբուբենի վրա հետագա դարերում են ավելացված է, վ, ի, յ տառերը[46]։

Պետք է ասել, որ այս կարծիքը միանգամայն անհիմն է, քանի որ 7-րդ դարից մեզ հասած Դավթակ Քերթողի աղվանից Ջիվանշիր թագավորի մահվան առթիվ գրած ողբի և Կոմիտաս կաթողիկոսի Հռիփսիմյանց շարականի տնագլուխները շարադրված են հայկական այբուբենի տառանիշերով՝ հաջորդականությամբ, իսկ այնտեղ կան բոլոր 36 տառերը։

Դժվարանում ենք նաև համաձայնվել Լ. Մելիքսեթ-Բեկի հայտնած այն կարծիքի հետ, որ հայկական այբուբենի Է տառը ստեղծվել է 7-րդ դարում[46]։ Հայկական տառանիշերից թվանշանների տասնորդական սիստեմ կազմելու սկզբունքը (չորս ինյակներով) բացառում է Է-ի բացակայությունը այբուբենում։

Հայկական այբուբենի ատաղձի հարցն ուսումնասիրող գիտնականների ուշադրությունն առաջին հերթին դարձվել է դանիելյան կոչվող գրերի վրա։ Կորյունի, Խորենացու և այլ պատմիչների տեղեկություններից մեզ հայտնի է, որ Վռամշապուհ թագավորի խորհուրդով Դանիելի մոտից բերվել են նրա գրերը և որոշ ժամանակ փորձել օգտագործել, բայց հետո, երբ համոզվել են, որ այդ այբուբենի տառանիշերը չեն համապատասխանում հայոց լեզվի հնչյուններին, Մաշտոցը ձեռնամուխ է եղել սեփական գիր ստեղծելու գործին։ Հարց է առաջանում, Մաշտոցն օգտագործե՞լ է դանիելյան գրերը, թե ոչ։ Պատմիչները, դժբախտաբար, մեզ հստակ տեղեկություններ չեն հաղորդում, ուստի ուսումնասիրողները հարկադրված են լինում խնդրի լուծմանը մոտենալ տրամաբանության հիման վրա։ Այս հարցում տարբեր հայագետների հայտնած կարծիքները հանգամանորեն շարադրված են Աճառյանի նշված աշխատության մեջ, ուստի չենք ուզում կրկնել։ Մենք պաշտպանում ենք այն կարծիքը, որ Մաշտոցն օգտագործել է դանիելյան գրերը[47]։

---

[44] Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, էջ 56—65 (այդ մասին խոսել ենք նաև մեր մի շարք հոդվածներում)։

[45] Տե՛ս В. А. Истрин, Развитие письма, М., 1961, էջ 223։

[45] Տե՛ս «Մուրճ», ամսագիր, 1890 թ., էջ 1587—1589։

[46] Л. М. Меликсет-Бек, О генезисе армянского, грузинского и албанского алфавитов (տե՛ս «Материалы по истории Азербайджана» ժողովածու, հ. II, էջ 45—46)։

Հայկական գրի ատաղձի ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականների մեծ մասը հայկական տառանիշերի մայրեր են տեսնում հունական այբուբենում (Գարդհաուզեն, Ակինյան, Աճառյան և ուրիշներ)։ Հնագրական մեր ուսումնասիրությունները ևս մեզ բերել են այն կարծիքի, որ հայկական 36 տառերից քսանի մայրերը վերցված են հունականից (տե՛ս կից աղյուսակը)։ Ըստ որում, հայկական 18 տառանիշերը նմանվում են հունականին իրենց և՛ ձևով, և՛ հնչյուններով, իսկ երկուսը՝ միայն ձևով։

Պարզվում է, որ հունականից բացի Մաշտոցը երեք տառի մայրեր է վերցրել հյուսիսմիջագետքյան արամեական գրությունից՝ «լ», «կ» և «ն» (տե՛ս կից տախտակը)։ Բացի այդ, նա մեկ տառ՝ «ծ»-ն, վերցրել է ասորականից։

Անհրաժեշտ է սակայն նշել, որ հունական, արամեական և ասորական տառանիշերը Մաշտոցը տառացի չի պատճենահանել, այլ դրանք ենթարկել է հիմնական ձևափոխությունների։ Այդ ձևափոխությունն այնքան մեծ է, որ որոշ տառերի մայրերը մինչև այժմ դժվար է լինում դյուրությամբ որոշել։ Մաշտոցը որոշակի սկզբունք է ունեցել. չվերցնել այլ այբուբենից ոչ մի տառ, եթե այն չի ենթարկվում ձևափոխությունների։ Այդ նպատակին հասնելու համար նա կատարել է հետևյալ ձևափոխությունները. ա) բաց է արել նախատիպ տառերի շրջագծերը, բ) տառերի մեծ մասի աջ կողմից վայրահակ թևեր է ստեղծել, գ) ոճական նմանություն ունեցող տառերի վրա կլորներ է ստեղծել, դ) շեղ և կիսաբոլոր գծերին ուղղորդ և հորիզոնական ձևեր է տվել, ե) սյունագծերն իրար և իրենց թևիկներին է միացրել կոր գծիկներով։

Մաշտոցն այդպես է վարվել, սակայն, միայն այն տառանիշերի հետ, որոնց հնչյունները կային այլ այբուբեններում և կարելի էր օգտագործել նրանց գծագրական ձևերը, բայց միանգամայն այլ մոտեցում է ունեցել այն տառանիշերի նկատմամբ, որոնք հայոց լեզվին հատուկ հնչյունների տառանիշերն են. դրանց համար նա տառանիշեր է ստեղծել հայկական առկա տառերի հիման վրա և մեծ մասամբ դրել այն տառի կողքին[48], որից նա ստեղծել է։ Նշված աղյուսակում կարելի է տեսնել՝ Գ-ն դրված է Դ-ի մոտ, Թ-ն՝ Ժ-ի, Է-ն՝ Ը-ի, Ն-ն՝ Շ-ի, Ո-ն՝ Չ-ի, Ս-ն՝ Վ-ի։ Բացառություն են կազմում Ի-ից առաջա-

---

[47] Ա. Գ. Աբրահամյան, Նախամաշտոցյան հայ մատենագրությունը և դանիելյան գրերը. տե՛ս ՊԲՀ, 1968, № 4, էջ 131—144։

[48] Տե՛ս այս մասին Հ. Աճառյանի հոդվածը՝ «Երեք հարց մեսրոպյան այբուբենի շուրջը» («Էջմիածին», 1946 թ., № 1, էջ 48—50)։

Հայկական	Հունական	Արամեական	Հայկական	
Ա		𐡀		ἄλφα-ի բոլորակը բաց է արված և կամ արամեականի α-ն աջ թեքված։
Բ	Β			βῆτα-ի բոլորակները բաց է արված և վայրահակ թև ստեղծված։
Գ	Γ			γάμμα-ի սյունագծի վրա օղ է ավելացված։
			ԳԴ	Հայկական Գ-ից։
Դ	Δ			Հունական տառը δέλτα-ից ստեղծված է Δ-ն։
Ե	Є			ἒ ψιλόν-ի վերին կտուցը կտրված է։
Զ	Ζ			ζῆτα-ի վրա օղ է ավելացված։
Է			ԷԸ	ἦτα-ից՝ հայկական Ե-ի ազդեցության տակ։
Ը				Հայկական Է-ից։
Թ	Θ		Թc	θῆτα-ից բաց անելով բոլորը։
Ժ				Հայկական Թ-ից։
Ի		𐡉		ἰῶτα-ից՝ աջից վայրահակ թև ավելացնելով և կամ արամեականից՝ շուռ տալով։
Լ	λ	𐡋		λάμβδα-ից՝ շուռ է տված և կամ արամեականից՝ անփոփոխ։
Խ			ԻԽ	Հայկական Ի-ից։
Ծ		𐡑		Ասորականից՝ աննշան փոփոխությամբ։
Կ		𐡒		Արամեականից՝ կտրելով ներքին պոչիկը։
Հ			ՀԿ	Հայկական Կ-ից։

Ձ			ՋՁ	Հայկական Ջ-ից՝ բաց անելով գլխիկը և ներքևում ոլորելով։
Ղ			ԼՂ	Հայկական Լ-ից՝ վրան կտուց ավելացնելով։
Ճ	Δ			δέλτα-ից՝ վերևից վայրահակ թևիկ ստեղծելով։
Մ	Ɯ			μῦ-ից՝ շուռ տալով և աջ թևը փոխադրելով ձախ՝ վերևից։
Յ	ω			ῶ μέγα-ն նստեցվել է։
Ն		Ն		Արամեականից՝ ներքին գծիկը վեր բարձրացնելով։
Շ			ՆՇ	Հայկական Ն-ից։
Ո	O			ὂ μικρόν-ի ներքևից կտրել է։
Չ			ՈՉ	Հայկական Ո-ից՝ ձախ սյունագիծը կարճացնելու և աջից թեք գիծ ավելացնելով։
Պ	Π			πῖ-ի ձախից վայրահակ նոր թև է ավելացվել։
Ջ	Ϙ			Օգտագործված է հունական κόππα տառանիշը՝ 900-ի համար օգտագործվող։
Ռ			ՐՐ	Կրկնակի Ր տառն իրար միացված։
Ս	C			σίγμα-ն նստեցվել է։
Վ			ՍՎ	Հայկական Ս-ից՝ պոչ ավելացնելով։
Տ	T			ταῦ-ի վերին ձախ թևը կտրվել և միացվել է աջից։
Ր	P			ῥῶ-ի գլխիկը բաց է արվել։
Ց			ՅՑ	Հայկական Յ-ից՝ վերին կիսաբոլորը միացնելով կլոր ստեղծելով։
Ւ	V			ὖψιλόν-ից աջ թևը կախ է արվել։
Փ	Φ			φῖ-ի տափակ գլխիկը կտրվել է։
Ք	X			χῖ-ի սյունագիծը կանգնեցվել է և թևերը կախվել։

ցած Խ-ն, Լ-ից առաջացած Ղ-ն և Ր-ից առաջացած Ռ-ն, որոնք հեռացվել են իրարից՝ նույնահնչյուն տառանիշերը չշփոթելու համար։

Մաշտոցի ստեղծած գրերի սկզբունքը ճիշտ պատկերացնելու և արժեքավորելու համար անհրաժեշտ է փոքր-ինչ ծանոթանալ նրա գրակերտման և դասակարգման սկզբունքի հետ։ Դրա համար անհրաժեշտ է մեզ հայկական այբուբենը համեմատության մեջ դնել իր ժամանակի գործածական մյուս այբուբենների հետ։

Մաշտոցի ժամանակ գործածվող այբուբենները գրվում էին երեք ուղղություններով՝ աջից դեպի ձախ (ինչպես սեմական այբուբենները), ձախից դեպի աջ (ինչպես հունական և նրան հետևող այբուբենները) և վերից վար (ինչպես չինական և նրան հետևող այբուբենները)։ Այս այբուբեններից ամենից զարգացածը, գրության համար դյուրինը համարվում է ձախից աջ գրվող այբուբենը, որին և հետևել է Մաշտոցը։

Մաշտոցի ժամանակ գործածվող այբուբենների տառանիշերն ունեին անջատական ձև՝ ինչպես հունականն է ու նրան հետևող գրատեսակները, և կցական ձև՝ ինչպես սեմական այբուբենները։ Գրության վերջին ձևի ժամանակ հաճախ միևնույն տառանիշը տարբեր տառերի կապակցությունների մեջ մի քանի ձևափոխություններ է ստանում։ Կցողական նման համակարգում որոշ դժվարություններ են ստեղծվում և հաճախ աղավաղումների տեղիք տալիս։ Մաշտոցը հրաժարվել է կցողական այբուբենի սկզբունքից և հետևել անջատականին։

Մաշտոցի ժամանակ գործածական որոշ այբուբեններում (օրինակ՝ ասորականում) հաճախ չէին գրվում ձայնավորները, որը և տեղիք կարող էր տալ բազմատեսակ աղճատումների. ձայնավորի բացակայությունը հնարավորություն էր տալիս բառերի տարատեսակ վերծանությունների։ Մաշտոցը որոշակի սկզբունք է ունեցել՝ լիարժեք արտացոլել ձայնավոր տառերը։

Մաշտոցի ժամանակ գործածական այբուբենների մեջ որոշ տառանիշեր տարբեր պայմաններում տարբեր հնչույթ ունեին և կամ միևնույն հնչյունի համար գործ էր ածվում տարբեր տառանիշեր։ Այդ պակասությունից ազատ չէր նաև հունականը։ Մաշտոցը որոշակի սկզբունք է ունեցել՝ մի հնչյունի համար ստեղծել միայն մի տառ (բացառություն է կազմում միայն ՈՒ տառը, որը գրվում է երկու տառանիշով)։

Մաշտոցը հրաժարվել է տառանիշերի վերից կամ ներքևից գծանշաններ դնելուց, որը փոխում է տվյալ տառանիշի հնչույթը։ Այդ թերությունից ազատ չէր նաև հունականը։ Մաշտոցը հայոց այբուբենում տեղ չի տվել գծանշաններին։

Միանգամայն ինքնատիպ է Մաշտոցի ստեղծած այբուբենի նպատակահարմարությունը տառերի ունեցած թվական նշանակության տեսանկյունից։ Հունական այբուբենը, որը բաղկացած էր 24 տառանիշներից, երեք այլ նշանների հավելումով, հնարավորություն էր տալիս հասնել մինչև հարյուրավոր թվի հաշվարկման (կարելի էր գրել միավորներ, տասնավորներ և հարյուրավորներ), իսկ Մաշտոցը հայկական այբուբենի տառանիշերի թիվը հասցնելով 36-ի, հնարավորություն է ստացել հայկական թվանշանային մեծությունը հասցնել մինչև տասը հազարի (միավորների, տասնավորների, հարյուրավորների և հազարավորների)։



Ահա այս ամենն է, որ Մաշտոցի ստեղծած այբուբենը բարձրացնում է իր ժամանակ գոյություն ունեցող լավագույն այբուբենների մակարդակին և ինքնատիպություն տալիս նրան։

Վերջապես, մի հարց ևս. ո՞րն է հայոց գրի ստեղծման նշանակությունը։

Չորրորդ դարում, ինչպես հայտնի է, Հայաստանում վերջնականապես հաստատվում էին ֆեոդալական սոցիալ-տնտեսական հարաբերությունները։ Քրիստոնեական եկեղեցին, որը գործուն մասնակցություն ունեցավ ավատական գաղափարախոսության ստեղծմանը, չորրորդ դարում եռանդուն ջանքեր էր գործ դնում նոր գաղափարախոսության տարածման և ամրացման ուղղությամբ։ Փավստոսի տեղեկություններից, օրինակ, մենք գիտենք, որ Ներսես Մեծը, ի թիվս այլ հաստատությունների, բաց է անում դպրոցներ և զբաղվում նոր վարդապետության արմատավորմամբ։ Ուստի պատահական չէ, որ հայոց գրի ստեղծման հարցով զբաղվում են քաղաքական և հոգևոր երկու խոշոր դեմքերը՝ Վռամշապուհ թագավորը և Սահակ Պարթևը։

Գրի ստեղծման անհրաժեշտությունն ավելի կենսական հարց դարձավ չորրորդ դարի վերջերին և հինգերորդ դարի սկզբներին, երբ մեր ժողովուրդը կանգնեց ձուլման սպառնալիքի առջև։ Ակադ. Հ. Մանանդյանը իրավացիորեն գտնում է, որ մեր թվականության IV դարի վերջը և V դարը հայ ժողովրդի կյանքի ամենածանր և բախտորոշող շրջաններից մեկն է հանդիսացել[49]։

Հայաստանը 387 թվականին, ինչպես հայտնի է, բաժանվեց մրցակից Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության միջև։ Այդ բաժանումից հետո նա ընկավ քաղաքական ու տնտեսական կախվածության մեջ։ Նվաճողներն աշխատում էին վերջ դնել Հայաստանի ներքին անկախությանը և ձուլման ենթարկել ժողովրդին։ Ընդ որում, այդ քաղաքականությունը պատահական բնույթ չուներ, այլ բխում էր Հայաստանում նրանց ամրանալու դարավոր ձգտումից։ Արևելքի և Արևմուտքի մրցակցության հանգույցում գտնվող Հայաստանի ստրատեգիական կարևորությունը գիտակցում էին և՛ պարսկական թագավորները, և՛ բյուզանդական կայսրերը։ Միաժամանակ մրցակից կողմերից ոչ մեկի համար ցանկալի չէր Հայաստանում ունենալ թշնամաբար տրամադրված մի հատված, որը պատեհության դեպքում կարող էր վտանգ սպառնալ։ Ահա թե ինչու Հայաստանի բաժանումից հետո Պարսկաստանը և Բյուզանդիան բացահայտ կամ գաղտնի, բռնությամբ, թե խաղաղ ճանապարհով, բայց հաստատ հետևողականությամբ շարունակում էին ձուլման իրենց ծրագրված քաղաքականությունը։ Մորիկ կայսեր խոսքերով ասած. «Ազգ մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն։ Բայց եկ՝ ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել։ Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն, և մեք կեցցուք խաղաղությամբ»[50]։

Հայաստանի բաժանումից հետո, ճիշտ է, ժամանակավորապես դադարեցին Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև սկսված արյունոտ պատերազմները, որից առաջին հերթին, ոտնակոխ էր լինում, ավերվում Հայաստանը։ Սակայն այժմ նախկին մրցակից երկրները Հայաստանի նկատմամբ կիրառեցին ավելի վտանգավոր՝ հայ ժողովրդին ձուլելու քաղաքականությունը։

---

[49] Տե՛ս Я. А. Манандян, Месроп Маштоц, էջ 5։

[50] Սեբեոս, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 75։

Բյուզանդիան և Պարսկաստանը սկսեցին եռանդուն ջանքեր գործադրել՝ վերջ գնելու նաև հայ ժողովրդի մշակութային ինքնուրույնությանը։ Պարսկաստանն այդ քաղաքականությունը Հայաստանում արդյունավորելու համար շեշտը դնում էր զրադաշտական կրոնի վրա։

Մի այլ վտանգ հայ ժողովրդին սպառնում էր հարավից և արևմուտքից։ Քրիստոնեությունը պետական կրոն ճանաչելուց հետո Հայաստանը ողողվել էր ասորի և հույն քարոզիչներով, որոնք իրենց հետ բերում էին ո՛չ միայն քրիստոնեության գաղափարներ, այլև իրենց մայրենի լեզուն, իրենց մշակույթը, որը պակաս վտանգավոր չէր Հայաստանի համար։

Ազգային գիրն ու գրչությունը մի զենք էր՝ կռվելու պարսկական և բյուզանդական ձուլողական քաղաքականության դեմ և երաշխավոր միջոց՝ քաղաքականապես ջլատված, թուլացած Հայաստանի երկու մասերն իրար կապելու։ Ահա թե ինչու հայրենասեր և հեռատես մտավորականները, Մաշտոցի գլխավորությամբ, այնքան հետևողականորեն նախանձախնդիր էին հայոց ինքնուրույն գրի ու գրականության ստեղծմանը։

Սակայն արդարացի չէր լինի անտեսել մի կարևոր պարագա ևս. շուրջ մեկ հարյուրամյակ պաշտոնական կրոն ճանաչված քրիստոնեությունը տակավին երերուն էր, որովհետև մայրենի գրի ու գրչության բացակայության հետևանքով դժվար էր համակողմանի քարոզչություն ծավալել։ Անհրաժեշտ էր նոր վարդապետության հիմնական ձեռնարկը, գոնե Նոր կտակարանը հայերենի թարգմանել և դրանով իսկ զինել հայ քարոզիչներին։ Ի տարբերություն հեթանոսության, քրիստոնեությունը գրավոր վարդապետություն էր և հրամայաբար պահանջում էր գրի և գրականության ստեղծում։ Իզուր չէ, որ Աբրահամ Աղբաթանեցու երրորդ թղթում, այս շարժառիթներին անդրադառնալիս, վկայակոչվում է, թե «... և զգրոց ծանաւթութիւն ի պնդութիւն հաւատոց»[51]։

Հայոց գրերի ստեղծման հարցը առաջադրել է կյանքը, իսկ Մաշտոցը, նրա գործակիցներն ու աշակերտները մեծ հմտությամբ իրագործել են այն։

Բացառիկ մեծ է Մաշտոցի և իր աշակերտների ջանքերով ստեղծված գրի նշանակությունը հայ ժողովրդի պատմության մեջ։ Նոր հորինված ինքնուրույն գրերով և մայրենի լեզվով ստեղծվեց հսկայական մի մատենագրություն, որն իր պատվավոր տեղը գրավեց համամարդկային մշակույթի պատմության մեջ։

Սակայն ավելի խոշոր է գրերի ստեղծման քաղաքական նշանակությունը։ Նա անչափ մեծ դեր կատարեց հայ ժողովրդի ինքնագիտակցության բարձրացման գործում և պաշտպանող վահան դարձավ՝ օտարերկրացիների կործանարար քաղաքականության հանդեպ։

Գերմանացի հայագետ Հ. Մարկվարտը, խոսելով Մաշտոցի և նրա զինակիցների հայ մատենագրության ասպարեզում ունեցած դերի մասին, Մաշտոցին և իր աշակերտներին համեմատում է Պեպինի և Վինֆրիդի հետ և գտնում, որ եթե մենք նկատի ունենանք քաղաքական այն ծանր իրադրությունը, որի մեջ Մաշտոցը կարողացավ զարթեցնել ազգային գիտակցությունը, ապա «Պիպինը և նրա զինակից Վինֆրիդը ողորմելի թզուկներ են երևում մտքի այդ երկու հսկաների հանդեպ»[52]։

---

[51] «Գիրք թղթոց», էջ 180, հմմ. **П. М. Мурадян,** К критике текста III послания католикоса **Авраама**. „Вестник общ. наук", 1968, № 11, стр. 41—49.

[52] Հ. **Մարկվարտ,** Հայոց այբուբենի ծագումը և Ս. Մաշտոցի կենսագրությունը, Հայկ. ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի «Մեսրոպ Մաշտոց», ժողովածու, Ե., 1962, էջ 125։

IV. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄՈՏԱՎՈՐ ԺԱՄԱՆԱԿԸ

Ա. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄԸ

Տասնհինգ երկարաձիգ դարերի ընթացքում հայոց գրերը ենթարկվել են զգալի փոփոխությունների։ Չկա մի տառ, որ հինգերորդ դարի համեմատությամբ ենթարկված չլինի որևէ ձևափոխության։ Տառեր կան, որոնք փոփոխության են ենթարկվել մի քանի անգամ։ Աղբյուրագետ մասնագետները, տառերի տարբեր ժամանակներում կատարված ահա այս փոփոխությունները նկատի ունենալով, հայոց գրերը խմբավորում են ըստ առանձին գրատեսակների և որոշում նրանց գործածության մոտավոր ժամանակը։ Համեմատական այս մեթոդը ժամանակագրական կարևոր բանալի է. եթե մեզ հայտնի է առանձին գրատեսակների գործածության կոնկրետ դարաշրջանը, ապա դժվար չէ որոշել թվական չունեցող գրությունների մոտավոր ժամանակը։

Հայկական տառատեսակները խմբավորել և նրանց անուններ են տվել միջին դարերում։ Ձեռագրերում հանդիպում են հետևյալ գրատեսակների անունները՝ **Երկաթագիր, տախտակագիր, աղիւսակ գիր** *(ուղղագիծ երկաթագիր նշանակությամբ),* **բոլորգիր** *(բոլորագիր, բոլորակ գիր, ձեռով),* **լեճագիր** *և* **բասմագիր** *(տպագիր նշանակությամբ)*[1]*։*

Հայոց գրերի խմբավորման առաջին փորձը հայ գիտական հնագրության մեջ կատարել է Ղ. Ինճիճյանը և կազմել առանձին գրատեսակների գործածության հետևյալ ժամանակագրությունը՝ համարաշարք մտցնելով նաև ժամանակի գործածության մեջ գրված գրերի մյուս տեսակները.

1. Երկաթագիր—Մաշտոցի ձևավորած գրերը՝ 5—9 դդ.։

2. Միջակագիր—բոլորգրին անցնող երկաթգրի մանր տեսակը՝ 10—11-րդ դդ.

3. Բոլորգիր՝ 11—13 դդ.։

4. Նոտրգիր—նոտարների գիր՝ 14—15-րդ դդ.։

5. Դրամագիր—Ռուբինյանց գործածած դրամների վրա դրոշմված գրերը։

6. Կոնդակագիր—կոնդակների համար գործածվող գրերը։

7. Փառագիր—ծաղկագրերը, թռչնագրերը և մյուս զարդագրերը։

8. Փակագիր—կապգիրը՝ գլխավորապես վիմագրության մեջ։

9. Վարազագիր—մատանու և կնիքների վրա փորագրված գրերը։

---

[1] *«Ցուցակ ձեռագրաց Վիեննայի», էջ 46։ «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. Գ, է* **230—231։**

10. Նշանագիր—գաղափարագրերը, Ագաթանգեղոսի ժամանակից[2]։

Հայկական գրերի տեսակավորման հարցով զբաղվել է նաև Ն. Քարամյանցը։ Նա իր ցուցակի մեջ նշում է հայկական յոթ տեսակ գրեր և տալիս նրանց գրչության հիտևյալ ժամանակը.

1. Մեսրոպյան երկաթագիր—5—12-րդ դդ.։
2. Միջակ գիր—8—10-րդ դդ.։
3. Փոքր երկաթագիր—9—12-րդ դդ.։
4. Բոլորգիր (Rundschrift)—12—14-րդ դդ.։ (Եկեղեցական ձեռագրերը մինչև 13-րդ դդ.)
5. Նոտրգիր—13—18-րդ դդ.։
6. Շղագիր—18—19-րդ դդ.։
7. Նոր շղագիր—19-րդ դարից հետո[3]։

Հայկական գրերի տեսակավորման նոր փորձ է արել Հ. Տաշյանն իր «Ակնարկ մը հայ հնագրության վրա» աշխատության մեջ, որը և անփոփոխ ընդունել է Հ. Աճառյանը։ Հ. Տաշյանը, բացի գրերի հիմնական տեսակներից, ընդունում է նաև անցման գրեր։ Հայոց գրերը նա տեսակավորում է յոթ խմբի մեջ.

1. Գլխագիր երկաթագիր։
2. Միջին մեսրոպյան երկաթագիր։
3. Փոքր երկաթագիր։
4. Անցման գիր։
5. Բոլորգիր։
6. Նոտրգիր։
7. Շղագիր։

Նրա կարծիքով, երկաթագիրը գործածվող գրի հիմնական տեսակ է հանդիսացել 5-րդից մինչև 11-րդ դարը, բոլորգիրն իշխող գրի տեսակ է դարձել 12-րդ դարից, իսկ նոտրգիրը գործածվել է սկսել 13—14-րդ դարերից[4]։

Հ. Տաշյանը, ի տարբերություն մյուս ուսումնասիրողների, առաջին անգամ առաջ քաշեց այն վարկածը, որ միջին մեսրոպյան կոչվող գրերը ոչ թե առաջացել են բոլորգիծ երկաթագրից ուշ դարերում, այլ վաղ ծագում ունեն Նրանք ստեղծվել են Մաշտոցի կողմից ոչ կանոնավոր գրականության մեջ օգտագործելու համար։ Այդ ենթադրության համար հիմք են ծառայել 5-րդ դարում գործածվող ասորական գրի երկու տեսակը՝ եստրանգելան և հակոբիկը

Գարեգին վարդապետ Հովսեփյանի կարծիքով. «Հայ գրի տեսակները չորսի կարելի է բաժանել. երկաթագիր, բոլորգիր, նոտրգիր և շղագիր՝ յուրաքանչյուրն իր ստորաբաժանումներով և անցման շրջաններով»[5]։

Ավելի նոր ժամանակներում Գ. Հովսեփյանը նորից է անդրադարձել հայկական գրատեսակների խմբավորմանը՝ Անձևացոց Ատոմ իշխանի 837—892 թթ. հիշատակարանի հրատարակության կապակցությամբ։ Նա գտնում է որ ճիշտ չէ քաղաքացիություն ստացած այն կարծիքը, որ հայ գրի ծագումն ու զարգացումը իբրև թե ընթացել է հետևյալ աստիճանակարգությամբ՝ մեսրոպյան գրեր, բոլորգիր և նոտրգիր։ Մի շարք օրինակներով նա ցույց է տալիս, որ երկաթագրի բոլոր տեսակները՝ մեծ, միջակ և փոքր, գծագրական նրանց ձևերով՝ բոլորձև, ուղղագիծ և թեք, միաժամանակ օգտագործված են հին ձեռագրերում, հետևապես նրանք բոլորը հին ծագում ունեն։ Խոսելով բոլորգրի մասին նա այն կարծիքն է հայտնում, որ «Բոլորգիրը ըստ ձեռագրերի նույնքան հին է, որչափ երկաթագիրը»։ Ըստ որում, բոլորգիրը բաժանում է երկու խմբի՝ «արևելյան» և «կիլիկյան»[6]։ Ուշ դարերում կիլիկյան բոլորգիրն անցնում է արևելք և իշխող դառնում այնտեղ, իսկ հետագայում հիմք է ծառայում հին հայկական տպագրությանը։ Նա գրի բոլոր տեսակներն էլ հին է համարում, բացի նոտրգրից։

---

[2] Տե՛ս Ղ. Ինճիճյան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Հ. Գ, էջ 77—79։

[3] Տե՛ս N. Karamianz, Verzeichniss armenischen Handschriften der Koniglichen Bibliothek zu Berlin, Berlin, 1886, էջ 88։

[4] Տե՛ս Հ. Տաշյան, Ակնարկ մը հայ հնագրության վրա, էջ 34—39։

[5] Գարեգին վրդ. Հովսեփյան, Հայոց գրի գլխավոր տեսակները («Տարազ», 1912 թ., № 10, էջ 168—172)։

Գրերի գիտական տեսակավորման փորձ է արել նաև պրոֆ. Կ. Ղաֆադարյանը։ Խմբավորման հիմք համարելով գծագրական առանձնահատկությունները, նա գրերի հետևյալ հինգ տեսակներն է ընդունում.

1. Բոլորաձև երկաթագիր։
2. Ուղղագիծ երկաթագիր։
3. Բոլորգիր։
4. Շղագիր։
5. Նոտրգիր։

Կ. Ղաֆադարյանը գրերի տեսակներից ոչ մեկը ժամանակի մեջ չի սահմանագծում։ Նա գտնում է, որ գրերի գրեթե բոլոր տեսակները (բացի շղագրից) ստեղծվել են Մեսրոպի ձեռքով և գործ են ածվել բոլոր ժամանակներում[7]։

Ճիշտ համարելով Կ. Ղաֆադարյանի կատարած գրերի տեսակավորման սկզբունքը՝ ըստ գրերի գծագրական առանձնահատկությունների, ինչպես ընդունված է նաև այլալեզու հնագրությունների մեջ, չի կարելի համաձայնել նրա հայտնած այն կարծիքի հետ, թե հայկական գրերի բոլոր տեսակները 5-րդ դարում են ստեղծվել։ Այդ կարծիքը չի հաստատվում մեզ հասած գրության հնագույն նմուշներով։ Գրերի որոշ տեսակներ կարող են ավելի հին լինել, քան ենթադրվում է, բայց որ հայկական բոլոր գրատեսակները, ինչպես մյուս ժողովուրդների գրերն են, մեկեն չեն ստեղծվել և ունեցել են իրենց զարգացումն ու փոփոխությունը՝ կասկածից դուրս է։

Կ. Ղաֆադարյանի վարկածի համար հիմք է ծառայել Կորյունի այն տեղեկությունը, որ Հռոփանոսը «զնրբագոյնն, զկարճն և զերկայնն, զառանձինն ու զկրկնաւորն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ...»։ Նրա կարծիքով. «Կորյունի հիշյալ հինգ բառերը ցույց են տալիս ոչ թե միևնույն այբուբենի ներքին շարքերը (գրերի բարձրության աստիճանները), այլ այդ բառերից յուրաքանչյուրը գրչության մի նոր տեսակի անուն է»[8]։ Ըստ այդմ էլ՝ «կրկնաւոր»-ը՝ փակագիրն է, «նրբագոյն»-ը՝ նոտրգիրը, «կարճ»-ը՝ ուղղագիծ երկաթագիրը, «երկայն»-ը՝ բոլորաձև երկաթագիրը։

Իրականում, Կորյունն այստեղ խոսում է ոչ թե տառերի ներքին շարքի կամ գրչության տեսակների, այլ տառերի հնչական առանձնահատկությունների մասին։ Այդ պարզ կարելի է տեսնել Դիոնիսիոս Թրակացու «Քերականության» մեջ և նրա հայ մեկնիչների մոտ, ուր այդ նույն բառերը բերված են իրենց բացատրություններով։

---

[6] Գ. Հովսեփյան, Իններորդ դարի ձեռագրական մի հատակոտոր և Աշոտ Անձևացյաց իշխան (տե՛ս «Էջմիածին», 1946 թ., № 8—10, էջ 53—54)։

[7] Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հայկական գրերի սկզբնական տեսակները, Ե., 1939, էջ 25—36։

[8] Կ. Ղաֆադարյան, Նշված աշխատությունը, էջ 35։

Թրակացին **երկայն** ասելով նկատի ունի երկար հնչվող երկու տառերը՝ «η»-ն և «ω»-ն («Եւ ձայնաւորացն երկայնք են երկու՝ է, ω») (վերջինս գրվել է «աւ» ձևով) „Τῶν δὲ φωνηέντων μακρὰ μὲν ἐστι δύο, η καὶ ω"[9]։

Կարճ-ը՝ կարճ հնչվող «ե», «ո», «ւ» տառերն են. («Եւ սուղք» (**«կարճ»**, ըստ Ստեփանոս Սյունեցու քերականության) «<**են> երեք ե, ո, ւ**» „Βραχέα δύο ε καὶ ο")[10]։

Կրկնավորն այն տառերն են, որոնք երկու տառի հնչյուն ունեն («Եւ կրկնակք են ի սոցանէ ութ. գ, լ, խ, շ, չ, ջ, ռ, ց»)[11]։

Առանձինք չկրկնվող յոթը բաղաձայններն են՝ բ, գ, դ, ձ, ղ, ճ, ժ։

Նուրբ-ը հետևյալ տասը տառերն են՝ «պ», «կ», «տ», «զ», «ն», «ծ», «չ», «մ», «ս», «ր»։ «Եւ զերկ տասն», գրում է հեղինակը և թվարկում է վերև բերված տասը տառերը[12]։

Եվ վերջապես, հայկական գրատեսակների խմբավորման հարցը վերջերս քննության է առել պատմական գիտությունների թեկնածու Ս. Քոլանջյանը՝ Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկի Մատենադարանի պատառիկների հրատարակության կապակցությամբ։ Համաձայնվելով Հովսեփյանի հետ, որ ճիշտ չէ, թե միջին մեսրոպյան ուղղագիծ և փոքր երկաթագիր տառատեսակները ծագել են բոլորգիծ երկաթագրից ուշ դարերում, նա գտնում է, որ երկաթագիր բոլոր տեսակի տառերը ստեղծվել են միաժամանակ Մաշտոցի կողմից և գործածության մեջ դրվել, նրանցից խոշոր բոլորձև գրերը օգտագործվել են կանոնական գրականության մեջ, իսկ մյուսները պատմա-գրական և մյուս տեսակի բնագրերում։

Ապացուցված համարելով երկաթագրի բոլոր տեսակների ժամանակակից լինելու հարցը, Քոլանջյանն այնուհետև անդրադառնում է գրի տարբեր տեսակների անվանումներին։ Սխալ համարելով «բուն մեսրոպյան երկաթագիր» կամ «բոլորգիծ երկաթագիր» և «միջին մեսրոպյան երկաթագիր» կամ «ուղղագիծ երկաթագիր» անվանումները, առաջարկում է նրանք փոխել՝ առաջինն անվանել մեսրոպյան բոլորգիծ երկաթագիր, իսկ երկրորդը՝ մեսրոպյան ուղղագիծ երկաթագիր[13]։

Հայոց գրերը, մեր կարծիքով, պետք է բաժանել վեց հիմնական տեսակների. **մեսրոպյան բոլորգիծ երկաթագիր, միջին և մանր մեսրոպյան երկաթագիր, ուղղագիծ երկաթագիր, բոլորգիր, նոտրգիր և շղագիր**։ Գոյություն ունեն նաև անցման շրջանի երկու տեսակ գրեր՝ երկաթագրից բոլորգրին անցնող (անցման երկաթագիր), բոլորգրից նոտրգրին (անցման բոլորգիր)։

---

[9] Տե՛ս Н. Адонц. Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 5։

[10] Տե՛ս նույն տեղում, էջ 5։

[11] Նույն տեղում, էջ 8։

[12] Նույն տեղում, էջ 6։

[13] Ս. Քոլանջյան, Նորահայտ պատառիկներ Կյուրեղ Երուսաղեմացու Ե դարի մի գրչագրից (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 5, 1960 թ., էջ 231—236)։

Բոլորգիծ երկաթագիրը հայոց գրերի մյուս տեսակների համեմատությամբ ունի հետևյալ առանձնահատկությունները.

Ա. Բոլորգիծ երկաթագրի տառանիշերը համեմատաբար ավելի խոշոր են։

Բ. Բոլորգիծ երկաթագրով գրված բնագրերը բառանջատում չունեն. երեք, չորս և երբեմն ավելի բառեր գրվում են միացած։ Բառանջատում կատարվում է նոր պարբերության դեպքում, գլխավորապես կետերից հետո։

Գ. Երկաթագիր բնագրերում դեռ չի գործածվում միացյալ «և», կլոր «օ» և «ֆ» տառերը. «և»-ը գրվում է բաժան «ԵՒ» ձևով, կլոր «օ»-ն՝ «ԱՒ» ձևով, իսկ հետագայի «ֆ»-ի փոխարեն օգտագործվում է «Փ»-ն։

Դ. Բոլորգիծ երկաթագրի բնագրերը նոր տողից սկսելիս սկզբի առաջին տառը, իր մեծության կեսի չափով, առաջին գծից դուրս է գրվում, փոխանակ փոքր-ինչ ներսից սկսելու, ինչպես վարվում ենք այժմ։

Ե. Բոլորգիծ երկաթագիրն ունի մասամբ կլոր ձև. տառաստեղները միացնող գծերը կամարաձև են։

Զ. Բոլորգիծ երկաթագրով գրված բնագրերը միջակետից բացի ուրիշ կետադրական նշաններ չունեն։ Ըստ որում, միջակետը քառակուսի ձև է ունենում և այն դրվում է տողի վերին և կամ միջին մասում։

Է. Բոլորգիծ բնագրերում համեմատաբար քիչ են պատահում հապավումները. Հապավվում են գլխավորապես տերունական բառերը։

Ը. Բոլորգիծ երկաթագրի տառանիշերը տարբերվում են մեր ներկայումս գործածած տառանիշերից։

Թ. Բոլորգիծ երկաթագիր բնագրերը չունեն մեծատառի և փոքրատառի տարբերություն. գրվում են բոլորն էլ մի տառատեսակով՝ ներկայիս մեր ճանաչած մեծատառերով։

Ժ. Ի տարբերություն մյուս տառատեսակների, բոլորգիծ երկաթագրի տառերն ունեն հավասար բարձրություն. Նրանց մեջ չկան վերնական և ստորնական տառանիշեր։ Պատահում է միայն, երբ գլխակարգության սկզբի առաջին տառը խոշոր է գրվում կամ զարդագիր։ (Բոլորգիծ երկաթագրի այդ առանձնահատկություններից մի քանիսը հատուկ է նաև վաղ շրջանի այլ գրատեսակներին)։

Նախքան առանձին գրատեսակների մասին խոսելը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ կենտրոնացած պետականության բացակայության պայմաններում որևէ գրատեսակի գործածություն համատարած միասնական ձևով մեզանում գրեթե չի եղել։ Գրերի այս կամ այն տեսակի ընտրությունը կախված է եղել գլխավորապես գրչության առանձին դպրոցների նախասիրությունից։ Ավելին. հաճախ տարբեր գրաձևերով են գրված ոչ միայն իրար մոտիկ գտնված գրչության առանձին դպրոցների գրչագրեր, այլև նույն գրչության դպրոցում գրված ձեռագիր ժողովածուների առանձին մասեր։

Քննության առնենք հայոց գրատեսակներն առանձին-առանձին և փորձենք որոշել նրանց յուրաքանչյուրի գործածության մոտավոր ժամանակը։

Բ. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԲՈԼՈՐԳԻՐ. ՄԻՋԻՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՎ ՈՒՂՂԱԳԻՐ ԵՐԿԱԹԱԳՐԵՐԸ

Հայկական գրատեսակներից հները երկուսն են՝ բոլորգիծ երկաթգիրը և միջին մեսրոպյան երկաթգիրը։ Փաստ է, որ մինչև 10-րդ դարը մեզ հասած ձեռագրերը և վիմական արձանագրությունները հիմնականում գրված են այդ գրերով, թեև կան բացառություններ։ Ուղղագիծ երկաթագրով գրվել են մեծ մասամբ պաշտամունքային, կանոնական բովանդակությամբ աշխատություն-



Մեսրոպյան բոլորգիր Սանասարյան ձեռագրից (ՄԱՄ. ձեռ. № 7735)։

ները և վիմագիր արձանագրությունները, իսկ մեսրոպյան մանր և միջին երկաթագրով՝ պատմական, մեկնողական, աստվածաբանական բնույթի աշխատությունները։ Ավետարանները գրվել են բոլորգիծ երկաթագրով, իսկ նրանց տակ զետեղված համաբարբառը՝ մանր երկաթագրով։ Այդպես է, օրինակ՝ Լազարյան ավետարանի գրչությունը։

Ենթադրվում է, որ նրանք երկաթագիր են կոչվել այն պատճառով, որ գրվել են երկաթե ձողագրիչներով։ Կան նաև բանասերներ, որոնք երկաթագիր անունը կապում են երկաթի ժանգից (երկաթ-օքսիդից) պատրաստված թանաք գործածելու հետ։

Բուն մեսրոպյան բոլորգիծ և միջին մեսրոպյան բոլորգիծ գրերը չունեն մեծատառի և փոքրատառի տարբերություն։

Հայկական գրչության հնագույն ամբողջական օրինակում՝ Լազարյան ավետարանում 887 թ., նկատվում են ուղղագրական կարգի հետևյալ տարբերությունները, որոնց մի մասը բնորոշ են հնագույն հայկական մյուս բնագրերին[11].

Ավելագրություն յ տառի—դարձո՛յ, մատո՛յ, հատո՛յ, գործեա՛յ, կոչեա՛յ, նմայ, սմայ և այլն։

Հապավում ը տառի—յնթրիս, զնկեր, զնտրեալ, յնչից, յնծայսն և այլն։

Հապավում յ տառի բառի մեջ—զգոշ, վկաից, հայհոութիւն. բառի վերջում՝ ողորմեցա, հաճեցա, բանա, քաղցեա, պիտո, գո, սատանա, միո, արտաքո, յորդւո, թզենո և այլն։

Գրվում է ե փոխանակ է-ի—թե, եթե, թեպետ, ե, եին, եիր, խնդրեին. հարցանեին, ուտեին, որպես, տեսանեաք, այնպես, եղեց, ապաքեն, պատուեր, զքեն, ի Նազարեթե և այլն։

Գրվում է է փոխանակ ե-ի—արէգակն, փէսա, ցէրեկ, էղաւ, էհան, էթող, էհար և այլն։

Գրվում է գ փոխանակ կ-ի—մանգունք, յանգողին, անգեալ, ցանգացան և այլն։

Գրվում է ով փոխանակ աւ-ի—ամովթ, նոքովք, արտասուովք, համբովել, ղենջակովն և այլն։

Գրվում է աւ փոխանակ ո, ով. ոյ և ու տառերի ու երկբարբառների—աւսաւխ, պարանաւց, Յաւհաննէս, Նազաւրացի, անաւշ, նշաւղ, տանաւտէր։

Գրվում է ո և ու փոխանակ աւ-ի—ոգուտ, յուժար, յուժարել, ծնողք։

Գրվում է ի. փոխանակ ե-ի և հակառակը—շիղ, սփիռս, ուղիղ, Փիղատոս։

Գրվում է ու փոխանակ ե-ի—ումուք, ուրումն (որումն)։

Հապավվում է բառի նախավերջին և վերջին բ տառը—արքեամք, մատամն, քարամք, եղեգամ, տեսլեամ, իշխանութեամ, ճշմարտութեամ։

Գրվում է որոշ բառերում լ տառը ղ-ով—այղ—այլ, Թոյղ—Թոյլ, այղակերպել—այլակերպել։

Գրվում է իւ երկբարբառը եւ-ով—աղբիւր, եղջիւր, առիւծ և այլն։

Նշված խրողությունների մեջ, հարկավ, կարող են լինել գրչական սխալներ, սակայն նրանց մեծ մասը հատուկ է մեզ հասած հնագույն ձեռագրերին։

---

[14] Այս մասին խոսել է պրոֆ. Գ. Խալաթյանը՝ Լազարյան ավետարանի լուսատիպ հրատարակության առաջաբանում (էջ Թ—Ժ), որտեղից օգտվում ենք։

Ուշագրավ է, որ մատնացույց արած ուղղագրության մի շարք օրինակներ ունենք նաև Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» աշխատության պատառիկների բնագրի մեջ[15]։

Հնագրության համար կարևոր է պարզել, թե 5-րդ դարից մինչև 10-րդ դարը ի՞նչ փոփոխությունների են ենթարկվել մեսրոպյան երկաթագիր տառերը, ի՞նչ օրինաչափություն կարելի է մատնացույց անել նրանց ձևերի միջև։



Տիմոթեոս Կուզի աշխատության պատառիկը։

Այս հարցը լուսաբանելու դժվարությունը կայանում է նրանում, որ վաղ շրջանի հեղինակների աշխատությունները մեզ չեն հասել իրենց ինքնագրերով, այլ ընդօրինակված են ուշ շրջանի արտագրողների կողմից։ Մեզ չի հասել ո՛չ Խորենացու, ո՛չ Եղիշեի, ո՛չ Շիրակացու, ո՛չ Ղևոնդի և ո՛չ էլ հին հայ մատենագիրներից որևէ մեկի աշխատության ինքնագիրը։ Ինքնագիր ունեցող հայ մատենագիրներին մատների վրա կարելի է հաշվել։ Ըստ որում, այսպիսիները XIII դարից հետո եկող հեղինակներ են՝ Եսայի Նչեցի, Ամիրդովլաթ, Գրիգոր Տաթևացի և այլք։ Իսկ առկա հնագույն գրչագրերը, սակավ բացառությամբ, պարունակում են կրոնական արարողական-դավանաբանական կանոնական բովանդակություն ունեցող տեքստեր։

---

[15] Տե՛ս Ս. Քոլանջյան, Նորահայտ պատառիկներ Կյուրեղ Երուսաղեմացու Թ դարի մի գրչագրից («Բանբեր Մատենադարանի», 1960 թ., № 5, էջ 230—231)։

Մեզ են հասել առանց թվականի բազմաթիվ հին ձեռագիր պատառիկներ և պահպանակներ, որոնց գրերը հաճախ շատ ավելի հին են, քան թվագիր տեքստերը, բայց որովհետև թվական չունեն՝ որոշ վերապահությամբ ենք մոտենում նրանց։

Հաստատուն ժամանակի հետ կապված հին հայկական բնագրեր գլխավորապես վիմագրերն են և, բնական է, որ նրանք պիտի օժանդակեն հարյուրավոր անթվագիր գրությունների ժամանակը որոշելուն։ Սակայն, երբ ուշադիր համեմատում ենք նույն շրջանի վիմագիր գրերը գրչագրերի հետ, ապա տարբերությունները ակնբախ են դառնում. ընդօրինակողները ավելի ազատ են շարժել իրենց գրիչը, քան այդ կարողացել են անել կարծր քարի վրա փորագրող քանդակագործները։

Մեսրոպյան բոլորգիծ երկաթագրի նմուշներից երևում է, որ հայկական գրչությունը 5—10-րդ դարերի ընթացքում քիչ է փոփոխվել։ Սակայն հաշվի առնելով մի շարք հանգամանքներ՝ տառերի գծագրական ձևերը, գրանյութի հնությունը, ուղղագրությունը, կետադրությունը և այլն, կարելի է մոտավոր ճշտությամբ որոշել հին բնագրերի ժամանակը դարերով։

Պրոֆ. Հ. Աճառյանը մեսրոպյան բոլորգիծ գրերից հնագույնն է համարում այն գրերը, որոնք չեն ենթարկված վայրահակության օրենքին, այսինքն՝ տառերի պոչերը, թևերը և գլուխները չեն թեքվում ներքև, այլ ուղիղ ձև ունեն[16]։ Իրոք, եթե նայելու լինենք 5—7-րդ դարերի արձանագրությունների գրերին, ապա նրանք գրվում են առանց վայրահակության։ Սակայն այդ անխախտ օրենք չէ, մեկ-մեկ պատահում են հին տեքստեր, որոնք ենթարկվել են վայրահակության։ Այսպես է, օրինակ, Հ. Աճառյանի մատնացույց արած Սանասարյանի վարժարանի ձեռագրում որոշ տառեր վայր են հակված։ Նման տառեր կան նաև Հռիփսիմեի արձանագրության մեջ և հին այլ բնագրերում։

Ձեռագրի հնության խնդրում կարևոր է տառերի համեմատական խոշորությունը. որքան տառերը մեծ են, մեծ մասամբ այնքան ավելի հին են նրանք[17]։

Հայագետներից ոմանք ձեռագրի գրության հնությունը որոշելու կարևոր ցուցանիշ են համարում մագաղաթի խունացած լինելը. եթե մագաղաթը դեղնած է, հնության կնիք ունի, հետևապես վաղ շրջանում է գրված, իսկ եթե մագաղաթը սպիտակ է՝ գրությունը նոր է։ Որոշ չափով այս ճիշտ է, բայց նորից որոշիչ համարել չի կարելի, որովհետև գրանյութի խունացումը կապված է գլխավորապես պահպանության հետ, եթե ձեռագիրը չի ընկել ջրի մեջ կամ կաթիլքի տակ, պահվել է չոր տեղում, սակավ է խունանում։ Պատահում է նաև հակառակը. շատ ավելի նոր ձեռագիր, եթե պահպանությունը լավ չի եղել, արագ խունացել է։ Կան այնպիսի պահպանակներ, որոնց մի երեսը

---

[16] Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց գիրը, էջ 352։

[17] Մենք նկատի ունենք կանոնական բովանդակություն ունեցող ձեռագրերի գրությունները։ Սակայն այդ ևս անվիճելի պայման չէ. պատահում է, որ ուշ շրջանում ևս ձեռագրերը գրում են պահպանելով նախկին բնագրի տառերի խոշորությունը։

խունացել է՝ տառերն անճանաչելի դառնալու աստիճան, իսկ մյուս երեսը սպիտակ ու մաքուր է։

Գրչության հնությունը որոշելու հիմնական միջոցը տառերի գծագրական առանձնահատկությունն է։ Անհրաժեշտ ենք համարում քննության առնել երկաթագիր տառերն առանձին-առանձին։

Ա—Երկու սյունագծերը միանում են ներքևի կամարավոր գծիկով։ Աջ կողմից տառի ներսից սկսում է բարակ մի գիծ, որը մահիկի ձևով իջնում է մինչև սյան ծայրը, ճեղքում, դուրս է գալիս և հունական ալֆայի նման վեր բարձրանում։ Հետագա դարերում այդ գծիկը, վայրահակության օրենքով, սկսում է թեքվել ներքև։ Ուղղագիծ երկաթագրում երկրորդ սյունագիծը բաժանվում է երկու մասի և միանում մազագծով։



Միջին երկաթագիր XI դ. (ՄԱՄ ձեռ. № 974)։

Բ—Գլխիկը բոլոր ձև ունի։ Տառանիշը որքան հին է, այնքան թևը գլխիկի համեմատությամբ փոքր է, իսկ հետագայում երկարում է և կախ ընկնում ներքև։ Ուղղագիծ երկաթագրում կլոր գլուխը անկյունավոր ձև է ստանում։

Գ—Գլխիկը փոքր է և կլոր, մեծությունը հավասար է տառի մեկ երրորդին։ Աջ թևը սկսում է ներքևի աղեղի ուղղությունից քիչ վերև։ Յոթերորդ դարից թևը սկսում է ներքև կախվել։ Ուղղագիծ երկաթագրի ժամանակ կլոր գլխիկը քառանկյուն ձև է ստանում։

Դ—Միշտ «Գ»-ի նմանություն ունի, միայն գլխիկը բացված է։ Տառի հետագա զարգացումը ընթանում է նախորդ տառի ձևով։

Ե—Սյունագիծն ուղիղ իջնում է մինչև տողը և կեռվելով կազմում գլխիկը։ Հին տառանիշերում դեպի աջ երկարող թևը համեմատաբար կարճ է և ուղիղ, իսկ հետագայում երկարում է և ներքև կախվում։ Պատահում են հին տառանիշեր, երբ թևն սկսում է ոչ թե սյունագծի կեսից, այլ վերին ծայրից։ Ուղղագիծ երկաթագրում կլոր գլխիկը անկյունների է փոխվում։

Զ—Հին տեքստերում ձվաձև մեծ կլոր է, իսկ ներքևից միանում է հորիզոնական մի գիծ, կլոր օղակը նստում է անմիջապես գծի վրա՝ առանց վզիկի։ Հետագա դարերում կլոր օղն սկսում է փոքրանալ, և առաջանում է վզիկը, որը գնալով երկարում և հորիզոնական գծի երկու ծայրերում ելուններ է ստեղծում։ Ուշ դարերում աջ ելունը ջնջվում է, և թև է գոյանում։

Է—Հնագույն տառանիշը պարզ ձև ունի. սյունագծին միանում են երկու թևեր՝ մեկը սյունագծի ներքևից, իսկ մյուսը՝ միջին մասից, որոնք սկզբում քիչ թեքություն ունեն, իսկ հետագայում զարգանում և կախվում են ներքև։

Ը—Հնագույն ձևը պարզ է. վերին գլխիկը հավասար կիսակլոր է, իսկ ներքևի հորիզոնական գիծը՝ ուղիղ։ Հետագա դարերում հորիզոնական այդ գիծը վահանաձև թեքվում է ներքև, և ներքևից վայր իջնող փոքրիկ գծիկ ավելացվում։

Թ—Բավականին տարբերվում է ներկա տառաձևից. աջ կողմի ոլորքը հավասար է սյունագծին։ Հին տառաձևերում ոլորքից դուրս եկող գծիկը հորիզոնական ձև ունի, իսկ հետագա դարերում նա, վայրահակության օրենքով, ներքև է կախվում։ Մոտավորապես 10-րդ դարից ոլորքը ուղղագիծ երկաթագրում սկսում է բարձրանալ, իսկ հետագա դարերում վերին կլորը բացվում և անկյուններ է կազմում։

Ժ—Հին ձևը փաստորեն «Թ» տառի ոլորքն է՝ գրեթե առանց փոփոխության։ Հին տառաձևի հորիզոնական դուրս ելնող գծիկը ուղիղ է, իսկ հետագա դարերում սկսում է ներքև կախվել։ Սյունագծի վերին ծայրում հին տառաձևերը պահել են «Թ»-ի ոլորքը սյունագծի հետ միացնող վերին կոր գիծը։ Ուղղագիծ երկաթագրում տառի բոլորակը քառանկյունի ձև է ստանում։

Ի—Հին տառաձևերում սյունագծին միացող աջ թևը վահանաձև կորություն ունի, իսկ հետագա դարերում նա սկսում է ներքև կախվել և անկյուն տալ։

Լ—Հին տառաձևերում տողաշարքի բարձրությունն ունի, իսկ ներքևի թևը՝ ուղիղ, հորիզոնական։ Հետագա դարերում նա սկսում է տողաշարքից ներքև իջնել՝ վահանաձև կորությամբ։

Խ—Նման է «Ի» տառի հնագույն ձևին, միայն նրա աջ թևի վրա դեպի վերև թեքված մի ելուն է ավելանում։ Հին տառաձևերում թևերը տարբեր բարձրությամբ են միանում սյունագծին, ոմանք՝ միջից, իսկ ոմանք՝ փոքրինչ վերևից կամ ներքևից։ Հետագա դարերում ուղղագիծ երկաթագրում ծռվող թևը անկյուններ է տալիս։

Ծ—Հին ձևը պարզ է, կլոր գծիկը բոլորվում է և միանում մյուս ծայրի հետ և, խաչաձևվելով, մի ծայրը թեք գնում է աջ, իսկ մյուս ծայրը՝ ձախ։ Հետագա դարերում ձախ ծայրը թեքվում է դեպի ներքև, իսկ աջը՝ վերև։ Ըստ որում, փոքրանում է նաև կլորը։



Միջին ուղղանկյուն երկաթագիր 973 թ. (ՄԱՄ ձեռ. № 2684, թ. 245ա)։

Կ—Հին տառաձևերում առաջին սյունագիծը երկարում է մինչև տողը, իսկ մյուս սյունագիծը ստորակետի նմանություն ունի։ Երկու սյունագծերը միանում են իրար բոլոր գծիկով։ Հետագա դարերում ձախ սյունագիծն սկսում է վերև բարձրանալ, իսկ աջը՝ ներքև կախվել։ Ուղղագիծ երկաթագրում սյունագծերը միացնող գծիկն անկյուններ է տալիս։

Հ—Տառի ամենից հնագույն ձևը մեր ներկա տպագրության մեջ օգտագործվող «Հ» տառի նման է, բայց առանց վերևի պոչիկի. ձախից աջ թեքվող գծիկը պարզ վերջավորություն ունի։ Յոթերորդ դարից սկսած այդ թեք գծիկի վրա փոքրիկ ելուն է ավելանում, որը հետագա դարերում, զարգանալով, բավականին թեքվածք է ստանում, իսկ տառի եռանկյունին ավելի է սրվում։

Ձ—Հին տառաձևերում ձախ թեքված աղեղը մեծ է, և վերին գծիկը շատ քիչ է թեքված դեպի ներքև, իսկ յոթերորդ դարից սկսած այդ գծիկը հետզհետե սկսում է կեռվել, մինչև որ բոլորովին մոտենում է ներքևի գծին։ Ուղղագիծ երկաթագրում 2 թվանշանի ձև ունի։

Ղ—Հին տառաձևը շատ նման է ներկայումս գործածվող փոքրատառ «չ»-ին և գրվում է տառաշարքի հավասար բարձրությամբ, իսկ յոթերորդ դարից սկսած սյունագիծը տողաշարքից ներքև է կախվում։ Ուղղագիծ երկաթագրի մեջ վերին գլխիկի բոլոր գիծը անկյունների է վերածվում։

Ճ—Հին ձևը հունական դելթային է նման, միայն աջ և ձախ գծերն իրար հետ միանալուց հետո թեք ուղղություններով շարունակում են բարձրանալ։ Տառի հորիզոնական գիծը դեռ ուղիղ է։ Ուշ դարերի բոլորգիծ երկաթագրերում խաչաձև երկարող գծիկներից առաջինն սկսում է ներքև ճկվել, իսկ երկ-

բորդը ելուն է ընդունում, որ առաջներում գոյություն չուներ։ Ուղղագիծ տառաձևերում ներքևի հորիզոնական ուղիղ գիծը մեջտեղից վահանաձև կորությամբ վեր է բարձրանում։

Մ—Երկու սյունագծերը իջնում են մինչև տողը և միանում կլոր բոլորով։ Վերևում աջ սյունագծի վերին ծայրում միանում է փոքրիկ ելուն, որը սկզբում ուղիղ է, իսկ հետագայում սկսում է կեռվել։ Ուղղագիծ երկաթագրում տառի ներքին բոլորը ուղղագիծ ձև է ընդունում։

Յ—Տառի ձևը շատ է նմանվում ներկայումս գործածվող 3 թվանշանին. երկու կիսաբոլորակներ դեպի ձախ ուղղված բացվածքներով նստած են իրար վրա։ Որոշ բոլորգիծ երկաթագրերում միջին ձախ թեքված գիծը երկարում է, քառանկյունի կետ է ընդունում իր վրա և, մոտենալով վերին և ներքևի գծերին, աքցանի ձև է ստանում։

Ն—Տառի հին ձևի մեջ վերին կեռ կտուցը թույլ է, իսկ հետագայում, գնալով զարգանում է. մասամբ նմանվում է շուռ տված «շ» տառին։ Ուղղագիծ երկաթագրում տողի վրա նստած աղեղը անկյունների է վերածվում, իսկ վերին կտուցը տողաշարքից դուրս է գալիս դեպի վերև։

Շ—Հին ձևը կիսաբոլոր աջ բացվածքով տառ է՝ վերին վերջավորության վրա բութ ընդունած ձևով։ Տառի բացված գիծը վերջանում է պարզ ձևով, առանց որևէ բարդության։ Հետագա դարերում տառի պոչը երկարում է դեպի աջ, և վայրահակության օրենքով ներքև թեքվող ելուն ավելանում։ Ժամանակի ընթացքում այդ ձևափոխվում է այնքան, որ դրանից առաջանում է բոլորգիր «շ»-ն։

Ո—Հին տառաձևը բոլոր է և սյունագծերը փոքր-ինչ թեքություն ունեն։ Ուղղագիծ երկաթագրում վերին բոլորակը անկյունների է վերածվում։

Չ—Հին ձևը խոշոր կիսաբոլոր է, թեքվում է դեպի ձախ և ներքևից բթաձև ելուն է ընդունում իր վրա։ Կլորի վերին ծայրը պարզ է, առանց բարդացումների։ 7—8-րդ դարերից հետո ներքին բութ գիծը երկարում և վերին կորի վրա կտուց է ընդունում։

Պ—Ներքև իջնող երեք գծիկներից առաջինը բավականին կարճ է և քիչ բացված, երկրորդը տառաշարքի միջին երկարությունն ունի, իսկ երրորդը իջնում է մինչև տողը։ Վերին միացող գիծը վահանաձև կիսաբոլոր է։ 7—8-րդ դարերից հետո կոտրվում է երկու մասի և դառնում երկու փոքրիկ աղեղ, որոնցից առաջինն ավելի է ներքև հակվում։ Ուղղագիծ երկաթագրում վերին բոլոր գծերը անկյունների են վերածվում։

Ջ—Հին տառաձևի գլուխը փոքր է, նեղ, թեք և երկար։ Նրա գլխիկից երկարող բարակ ծայրը հատվում է քառակուսի մի կետով, որից սկիզբ է առնում ներքև իջնող մի գիծ, որը հետագա դարերում ալիքաձև կորություն է ընդունում։

Ռ—Տառի հիմնական կմախքի բոլորաձև երկարագիր «Ո» տառից է կազմվում, որի աջ սյունագծին միանում է մի փոքրիկ ելուն։ Որոշ տառերում այդ ելունը հորիզոնական դիրքով փոքրիկ գիծ է, իսկ երբեմն վեր է ածվում ներքև թեքվող թևի։ Ուղղագիծ երկաթագրում տառի վերին բոլորը անկյունների է վերածվում։

Ս—Ներքևի սյունագծերը միացնող գիծը բոլոր է, աղեղնաձև, իսկ ուղղագիծ երկաթագրում ուղիղ ձև է ընդունում և անկյուններ տալիս։

Վ—Տառի նախնական ձևը մեծատառ բոլորգիծ «Ա»-ին է նմանվում, մի-

այն աջ ելունը ներքևից ուղիղ երկարում է դեպի աջ։ Տառը հազիվ նկատելի վզիկ ունի։ Տառի հաջորդ զարգացումը տեղի է ունենում հետևյալ կերպ. նախ պոչիկը հորիզոնական դիրքից ներքև է կախվում, հետագայում տառի վրա փոքրիկ կորությամբ վզիկ է սկսում ավելանալ և ներքին պոչը տողաշարքից ցած իջնում։ Հետագայում տառի առաջին սյունը սկսում է կարճանալ։

Տ—Նման է ներկայիս «մ» տառին։ Հանդիպում է երկու ձևով. մի դեպքում վերին գլխիկը ներքև կախված, իսկ մյուս դեպքում՝ հորիզոնական ուղիղ գծիկի ձև առած։ Տառի հին ձևերում երկու կորություններն էլ բոլոր են, իսկ ուղղագիծ երկաթագրերում անկյունների են վերածվում։

Ր—Տառի սկզբնական ձևը շատ նման է հունական «P» (ռո) տառին. Գլուխը կլոր է և փոքրիկ շերտով է միայն բաժանվում սյունագծիկից։ Հետագա դարերում վերին գիծը սկսում է թեքվել դեպի ներքև, վերևում ստեղծելով անկյուն։

Ց—Հին ձևը իրար վրա ձախ դարձվածքով նստած կիսաբոլորներ են, որոնցից վերինը փոքր է, իսկ ներքևինը՝ մեծ։ Ուշ բոլորգիծ և ուղղագիծ երկաթագրերում վերին բոլորակի բացված գծերը մոտենում են իրար և միանում, իսկ երկրորդը՝ մնում է անփոփոխ։

Ւ—Սկզբում տառն ունի շատ պարզ ձև. տառաշարքի բարձրությամբ մի սյունագիծ է աջ ելնող թևով։ Տառի հին ձևերում այդ թևը հորիզոնական դիրքով կարճ գծիկ է, իսկ հետագայում վեր է ածվում ներքև թեքվող թևի։

Փ—Հին տառաձևը պարզ է. մի սյունագիծ իջնում է վերից վար և ներքևում սուր ձև ընդունում։ Սյունագիծը բավականին տարածությամբ անցնում է սովորական տառաշարքից դեպի ներքև և պարող մարդու կանթված թևերի նման թևեր ընդունում իր վրա։

Ք—Իր ձևով շատ նման է նախորդ տառին և կազմված է նրա սկզբունքով. վերից վար իջնում է մի սյունագիծ, կտրում, անցնում է տառաշարքի սահմանը և սուր ծայրով ներքև կախվում։ Վերևում, սյունագծի աջ կողմում, միանում է մի փոքրիկ գլուխ, իսկ սյունագծի միջին մասից թեք խաչաձևումով անցնում է հորիզոնական ուղղություն ունեցող մի այլ գիծ, որը, 7—8-րդ դարերից հետո, ելուններ է ընդունում իր վրա։

Դատելով մեզ հասած հնագույն գրչագրերի բովանդակության ու գրչության տվյալներից, կարելի է այսպիսի օրինաչափություն սահմանել. մեսրոպյան և միջին մեսրոպյան երկաթագրերը եկեղեցական կանոնական գրականության մեջ հայկական գրի հիմնական տեսակներն են հանդիսացել հինգից մինչև տասներորդ դարերում, իսկ ուղղագիծ երկաթագիրը պատմագիտական գրականության մեջ և ավետարանների համաբարբառներում գործածության մեջ է գտնվել 5-ից մինչև 12-րդ դարերը։

Ուղղագիծ երկաթագիր գրություններ հանդիպում ենք 8—9-րդ դարերից, բայց գործածական գրի տեսակ են դառնում 10—11-րդ դարերում. նրանք իրենց գծագրական առանձնահատկություններով շատ նման են բուն մեսրոպյան բոլորգիծ երկաթագրին, միայն թե տառաձևերի նախկին կորությունը փոխվում է ուղղագիծ անկյունների, և տառերի մեծությունը քիչ փոքր է։

Ուղղագիծ երկաթագրերից կարելի է մատնացույց անել Մովսես Խորենացու Պատմության գլխացանկի տառերը (ՄԱՄ № 1411 հատակոտորը), Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն»-ը (ՄԱՄ ձեռ. № 1958)՝ 10-րդ դարից, Էջմիածնի ճաշոցը (ՄԱՄ ձեռ. № 832)՝ 1154 թվականից, Հայրապետ գրչի ձե-

ռագիրը (ՄԱՄ ձեռ. № 987)՝ 1211 թվականից, Իգնատիոս գրչի ձեռագիրը (ՄԱՄ ձեռ. № 1519)՝ 1232 թվականից և ուրիշներ։

Ուղղագիծ երկաթագիր հին տեքստերում ես բառանջատում չի կատարվում, այդպիսին երևան է գալիս 11-րդ դարից սկսած։ Նույն շրջանում էլ սկսում են երևալ բոլորովին նոր տառաձևեր։ Մատենադարանի № 283 ձեռագրի հիշատակարանում, որը գրված է 1033 թվականին, մեզ հանդիպում են միացյալ «եւ», եռատամ «ա», կեռվող գծասյունով «յ» և փակված գլխով «ց» տառերը[18]։

Ինչ վերաբերում է անցման գրին, ապա նրա մի քանի տեսակներ կան[19]։ Բոլորգիծ երկաթագրից կամ ուղղագիծ երկաթագրից բոլորգրին անցումը մեկեն տեղի չի ունեցել, այլ կատարվել է աստիճանաբար, դարերի ընթացքում։ Կան անցման գրի այնպիսի տեսակներ, որ քիչ են տարբերվում իրենց նախորդ մյուս գրատեսակների մայրերից և կան այնպիսինները, որոնք քիչ են տարբերվում սովորական արևելյան բոլորգրից։ Հ. Տաշյանն իր կազմած ձեռագրաց ցուցակում հրատարակել է երկու տեսակի անցման գիր ունեցող ձեռագրի նմուշ[20]։ Մաշտոցի անվան մատենադարանում նրանց թիվը շատ է։

Անցման գրի հնագույն նմուշներից մեկն է «Գահնամակի» գրությունը, որը հրատարակել է Ղ. Ալիշանը[21]։ Այստեղ տառանիշերի մեծ մասը ուղղագիծ երկաթագրով է, բայց նրանց մեջ արդեն մուտք է գործել երեք ճյուղ ունեցող այրը. ուղիղ սյունագիծ ընդունած յին, տառաշարքից սկսել է դուրս գալ «մ» տառի գլխիկը, «ղ»-ի պոչը տառաշարքից ներքև է կախվել և այլն։ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերից անցման գրի բնագրերից կարելի է մատնացույց անել 981 թ. ընդօրինակությամբ Ղուկաս գրչի թղթյա հնագույն ձեռագիրը (№ 2679), Սկևռայում գրված Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության»-ը, 1173 թ. գրված ձեռագրերը (№ 1568), Գոշավանքում Դավիթ գրչի 1172 թ. ընդօրինակած Եղիշեի Պատմության ձեռագիրը (№ 1890) և այլն։

Անցման շրջանի հետաքրքիր գրություն ունի ակադ. Ն. Մառի ուսումնասիրած Պիշպեկի գերեզմանատան մի տապանաքարի 1323 թ. հայկական արձանագրությունը[22]։ Այստեղ գլխագիր «Ա» տառը սկսել է փոխվել երեք ճյուղ ունեցող «ա»-ի, բայց դեռ ամբողջապես չի ձևակերպվել և չի կորցրել երկաթագրի որոշ ձևերը։

Գ. ԲՈԼՈՐԳԻՐ

Տառաձևերի փոփոխությունը առանձնապես նկատելի է դառնում 12-րդ դարում. մեզ հասած ձեռագրերի մեջ բավականին թիվ են կազմում ուղղագիծ երկաթագրից բոլորգրին անցնող տեսակները։ Ըստ որում, այստեղ ես ձեռագրերը որքան հին են, այնքան նրանց տառաձևերը խոշոր են։ Հանդիպում

---

[18] Տե՛ս Գ. Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 218։

[19] Տե՛ս Հ. Տաշյան, Ակնարկ մը հայ հնագրության վրա, էջ 27։

[20] Տե՛ս տախտակ Ա, 6՝ վերցված 12-րդ դարի ձեռագրից և տախտակ Բ, 7՝ վերցված 3 ձեռագրից։

[21] Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ (լուսատիպ նմանահանությունը զետեղված է 430—431 էջերի միջև)։

[22] **Н. Я. Марр**, Надгробный камень из Семиречья с армянско-сирийской надписью 1323 г. (տե՛ս «Записки Вост. отд. Имп. арм. об-ва» VIII, էջ 344—349).



Բոլորգիր 1118 թ. (ՄԱՄ ձեռ. № 1214)։

են բոլորգրի այնպիսի տեսակներ, որոնք կրկնակի անգամ մեծ են սովորականից։

12-րդ դարում առաջանում է բոլորգրի երկու տեսակ—կիլիկյան բոլորգիր և արևելյան բոլորգիր: Բոլորգրի այս երկու տեսակների զանազանությունը նկատել է Գ. Հովսեփյանը։ Նա գրում է. «Կիլիկյան շրջանի հնագույն



Բոլորգիր 1269 թ. (ՄԱՄ ձեռ. № 382)։

ձեռագիրներն էլ երկաթագիր են. հետո միայն մշակվում և տիրապետող է դառնում կիլիկյան բոլորգիրը, որը տարբեր է արևելյան բոլորգրից, որին ուրիշներն անցման երկաթագիր են կոչել»[23]։

Կիլիկյան բոլորգիրն ունի ճիշտ «կորպուս» կոչվող գրի ձևը, ինչ որ ներկայումս գործ է ածվում մեր տպագրության մեջ, իսկ արևելյան բոլորգիրը՝ նրանից քիչ տարբերվում է տառերի խոշորությամբ և մի քանի տառաձևերով՝ «չ», «շ», «ձ», «ջ», «ք» և այլն։

Արևելյան բոլորգրի լավագույն նմուշներից են՝ Կոստանդնուպոլսի Ազգային մատենադարանի № 68 ավետարանի գրությունը՝ 1253 թվականից, Մարտիրոս գրչի ընդօրինակած Նարեկը՝ 1283 թվականից (ՄԱՄ ձեռ. № 6764), Խոսրով Անձևացու Ժամագրոց մեկնությունը՝ 1278 թվականից (ՄԱՄ ձեռ. № 1328), Թոմա գրչի ընդօրինակած ավետարանը՝ 1315 թվականից (ՄԱՄ ձեռ. № 2930) և ուրիշներ։

11—12-րդ դարերում հայ գրի պատմության մեջ նկատվում է մի նոր երևույթ. հանդես է գալիս շղագրությունը, որը տեղ խնայող և արագագիր գրության տեսակ է։ Շղագրով են գրված ՄԱՄ-ի № 2877 և № 2684 ձեռագրերի հիշատակարանները, որոնցից առաջինը գրված է 11-րդ դարում Գրիգոր գրչի կողմից, իսկ երկրորդը՝ կազմարար Հովնանի կողմից, 1159 թվականին։ Այս հիշատակարաններից առաջինի մասին խոսել է Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը իր կազմած «Հիշատակարանք ձեռագրաց»-ի մեջ. ձեռագրի գրչության առթիվ տվել է հետևյալ ծանոթագրությունը. «Այս փոքրիկ հիշատակարանը գրված է շղագրով, որով և շատ հետաքրքրական է հնագրության համար։ Սակայն շղագրությունը, ինչպես և 11—12-րդ դարերի մշակույթի առաջընթա մի շարք այլ երևույթներ, իրենց բնականոն զարգացումը չունեցան, որովհետև հայ ժողովրդի գլխին պայթեց աննախընթաց նոր փոթորիկ, երկիրը տակնուվրա եղավ։ Այնուհետև հարկավոր եղավ սպասել մոտ վեց դար, որպեսզի նորից հանդես գա շղագրությունը և իշխող գրի տեսակ դառնա։

---

[23] Գ. Հովսեփյան, Կոստանդին Ա. կաթողիկոս (տե՛ս «Նյութեր և ուսումնասիրություններ», Նյու-Յորք, 1943, պրակ Բ, էջ 16)։



Արևելյան բոլորգիր 1291 թ. (Ալիշան, Հայապատում, էջ 525)։

Բոլորգիրը հայ մատենագրության մեջ իշխող գրի տեսակ դարձավ սկսա 13-րդ դարից։ Մեր խոսքն, իհարկե, համատարած գործածության մասին այլապես այս գրի հին տեսակները մենք ունենք դեռ 10-րդ դարից։ Նրա ն օրինակը Պողոսի Թղթերի մեկնությունն է՝ 999 թվականից[25]։ Այնուհետև, ա գրի հին օրինակներից է Մատենադարանի № 283 ձեռագիր ավետարանը՝ 10 թվականից, և այլ ձեռագրեր։

---

[24] Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 378։

[25] Նմանահանությունը հրատարակված է Ալիշանի «Հայապատում»-ում, էջ 498։



Կիլիկյան բոլորգիր 1319 (ՄԱՄ ձեռ. № 3589)։

Մեզ հայտնի չէ, թե ինչից է առաջացել գրի «բոլորգիր» անունը։ Նայելով նրա անվանը, թվում է, թե գրի այս տեսակն, իրոք, կլոր պիտի լիներ, բայց իրապես նա բոլորովին էլ կլոր չէ, այլ՝ անկյունավոր և հավասար նստում է տողի վրա։ Գուցե նա այդ անունը ժառանգել է նախկին բոլորգիծ երկաթագրից, որից նա առաջացել է։ Համենայն դեպս, այժմ նրա անվան մասին որոշակի ոչինչ ասել չենք կարող[26]։

Բոլորգիրը զգալիորեն ավելի փոքր է, քան բոլորգիծ երկաթագիրը և, ի տարբերություն նրա, ոչ թե նկարվում է, այլ գրվում։ Գրչի մեկ-երկու գծումով ավարտվում է տվյալ տառը։ Արագագրության հետևանքով գրերը փոքր-ինչ թեք ձև են ընդունում։ Հեշտ գրելու պատճառով, որոշ գրեր պարզեցվում են և փոխվում նախկինի համեմատությամբ (տե՛ս բերված նմանահանությունները)։ Գրեթե բոլորովին փոխվում են ա, գ, թ, ճ, ձ, մ, յ, շ, չ, ջ, ռ, ս, ց, ւ, փ, ք տառերը։

Այս գրության մեջ հայկական այբուբենի վրա ավելանում են «և», «օ», «ֆ» տառերը, որոնք առաջ չկային։ Սակայն երբեմն հին գրչագրերին ընդօրինակելիս, գրիչները հետևում են ավանդական սովորությանը՝ «և»-ը գրում են անջատ «եւ» ձևով, «օ»-ն՝ «աւ» ձևով, իսկ «ֆ»-ի փոխարեն գործ են ածում «փ»։

Բոլորգիրը ոճական կատարելության է հասնում առանձնապես Կիլիկիայի և Ղրիմի գրչության դպրոցներում (Հռոմկլա, Ակներ, Կաֆա, Սուրխաթ և այլն)։ Երբեմն բոլորգրով գրված այնքան գեղեցիկ համաչափ տեքստեր են պատահում, որ ամենևին չի կարելի տարբերել տպագրից։ Կիլիկիայի գրչության դպրոցից հայտնի են առանձին գեղագիր գրիչներ, որոնց մասին մեծ գովեստով են խոսում նրանց աշակերտները կամ լծակից ընկերները։

Բոլորգիր տեքստերում հիմնականում կատարվում է բառանջատում, թեև պատահում է, որ «և»-ը շարունակում են միացնել նախորդ բառի հետ։ Սկսում են գործածել բազմաթիվ կետադրական նշաններ, ինչպես նաև կարճ և երկար վանկի, տողադարձի նշաններ և այլն։ Բոլորգիր տեքստում սկսում է առաջանալ մեծատառի և փոքրատառի տարբերությունը։ Մեծատառով կամ գլխագրով սկսում են գրել տեքստի սկզբի տառերը, երբեմն էլ՝ առանձին հատվածների սկզբնատառերը և այլն։ Ուշադրության արժանի է այն, որ այդ ժամանակ ևս հատուկ անունները որոշ տեքստերում շարունակում են գրվել փոքրատառով։ Վերնագրերը ընդգծելու համար գրում են կարմիր թանաքով կամ զարդանկարում։

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ Գրիգոր Տաթևացին Գևորգ Սկևռացու գրչության արվեստի իր մեկնության մեջ երեք տեսակ գլխագիր է նշում՝ «ծաղկի», «երկաթի» և «հասարակ». «Երեք են գլխագիրք նախ ծաղկի, երկրորդ՝ երկաթի, երրորդ՝ հասարակ» (ՄԱՄ ձեռ. № 3587, էջ 238)։

Արագ գրելու և տեղի խնայողության պահանջը հարկադրում է մարդկանց տառերը գրելու նոր և պարզ ձև մշակել։ Սակայն այժմ ևս հատուկ ուշադրություն է դարձվում գեղագրությանը։ Մեզ է հասել կիլիկյան շրջանից մի հետաքրքիր տեղեկություն, որը ցույց է տալիս այն ժամանակվա գեղագրության բարձր պահանջը։ Այդ տեղեկությունը բերում է Ալիշանը. Տարսոնցի մի հայ օրիորդ, Ալիծ անունով, որը հմուտ է եղել հայկական գրչությանը, գեղեցիկ ձևով գրում է հայերեն մի այբուբեն և հայտարարում, որ ով կարողանա իր նման գեղեցիկ գրել՝ նա իրավունք կունենա իր ձեռքը խնդրել։ Երկու երի-

---

[26] Այլ ժողովուրդների մատենագրության մեջ ևս կան այդպիսի չմեկնաբանվող տերմիններ,



Խորհրդիր 1278 թ. (ՄԱՄ ձեռ. № 1328)։

տասարդներ փորձում են իրենց բախտը, գրում, բերում են, բայց օրիորդը չի հավանում, հայտարարելով, որ նրանց գիրը «Չի նմանիր զգիրն Ալիծինն»։ Ալիծը նորից հայտարարում է, որ ով կարողանա բերել այնպիսի գիր, որ նման լինի իր գրին «նա կու լինի փեսայ Ալիծինն»։ Շնորհալի մի երիտասարդ շատ գեղեցիկ գրում է հայկական տառերը և բերում Ալիծին։ Օրիորդը նայում է երիտասարդի գրին և հավանում՝ հայտարարելով «...կու նմանի գիրն Ալիծին»[27]։

Բոլորգիրն իշխող գրի տեսակ է մնում մինչև 16-րդ դարը ներառյալ, որից հետո աստիճանաբար ասպարեզը զիջում է նոտրգրին, չնայած 16—17-րդ դարերում ևս պատահում են բոլորգիր ձեռագրեր։

Դ. ՆՈՏՐԳԻՐ ԵՎ ՇՂԱԳԻՐ

Նոտար բառը ծագում է հունական νοτάριος կամ լատինական notarius բառից, որ ունեն «գրագիր», «դպիր» իմաստը, իսկ նոտրգիր՝ «գրագիրների», «դպիրների» գիր։ Այն համարվում է արագագիր գրություն և ըստ բառի իմաստի համապատասխան է ռուսական «скоропись»-ին։ Գրի այս տեսակը նպատակ էր դնում, որքան կարելի է արագ գրել և քիչ տարածության վրա շատ տառեր տեղավորել։

Նոտր բառը մեզ հայտնի է դեռ 15-րդ դարից։ Հակոբ Ղրիմեցին իր հիշատակարաններից մեկում այդ բառը գործ է ածել հետևյալ նախադասության մեջ. «Ընթերցեալ տեսաք և փափաքմամբ նոտրեցաք» (Հայկազ. բառ., II, էջ 456)։ Սակայն նոտրգիրը որպես գրության իշխող տեսակ հանդես է գալիս միայն 17—18-րդ դարերում։ 1666 թվականին գրված մի հիշատակարանում նոտրգիրը հիշված է նոտրգիծ ձևով, ինչպես որ բոլորգիրը՝ բոլորգիծ։

Նոտրգիրը գրի իշխող տեսակ դառնալուց հետո ևս, ինչպես նկատեցինք, բոլորգիրը շարունակում է գործածվել։ Այդ տեսակետից ուշագրավ է 18-րդ դարի մի գրչի հիշատակարան, որ մատնացույց է արել Հ. Տաշյանը։ Ղազար անունով մի գրիչ ընդօրինակած ձեռագրի առաջին մասը գրել է բոլորգիր, իսկ երկրորդը՝ նոտրգիր և թողել հետևյալ հիշատակությունը. «Ես Ղազար աբեղայս բոլորգրեցի մինչև ի հոս, նոտր ուսայ՝ նոտրգրեցի»[28]։

Նոտրգիրը հայկական գրի բոլոր տեսակների մեջ ամենից մանրն է, այնքան մանր, որ որոշ տառեր կարծես կազմված լինեն միջակետերից՝ «ս»-ն, «ռ»-ն, թվում է երկու կետից են, «ա»-ն և «տ»-ն՝ երեք, «ը»-ն այնքան է փոքրանում, որ կորցնում է իր փաթերը և սովորական «ր»-ի ձև առնում՝ փոքրիկ ելունով, «ւ» տառը կորցնում է հորիզոնական կարճ սյունագիծը և պարզ գծիկ դառնում, «ք» տառը գրվում է ծուռ խաչի նման՝ «×», գլխիկների փոքրացման հետևանքով գրեթե աննկատելի են դառնում «դ», «գ», «շ» և «ղ», «չ» և «շ» տառերի տարբերությունները և այլն։

Նոտրգիրը ուղղագրության, կետադրության, հապավումների, գաղափարագրի և այլ հարցերում հետևում է բոլորգրին։ Այստեղ փոքր-ինչ ավելի են հանդիպում հապավումները, և մեկ-մեկ թվականները սկսում են գրվել արաբական նշաններով։

Գեղագրության տեսակետից նոտրգիրը, երկաթագրի և բոլորգրի համեմատությամբ, բավականին փոխվում է, տառերը կորցնում են իրենց համաչափությունը, վերև ու ներքև բարձրացող և իջնող սյունագծերը սկսում են թեքությամբ երկարել, անհամաչափ երկարում են նաև «ւ»-ի, «հ»-ի, «շ»-ի, «չ»-ի պոչիկները, տողերը վերջանում են անհավասար ձևով և այլն։

---

[27] Ղ. **Ալիշան**, *Սիսուան*, էջ 520։

[28] Հ. **Տաշյան**, **Ակնարկ մը հայ հնագրութեան վրա**, էջ 32։



Նոտրգիր XVII դ. (ՄԱՄ ձեռ. № 2762)։

Զարդագրեր շարունակվում են գործածվել՝ ներառյալ նրանց բոլոր տեսակները ըստ նախասիրության։ Սակայն մեծատառերը բավականին ձևափոխվում են։



Նոտրգիր «Աղվանից պատմութեան» ձեռագրից. XVII դ.։

Նոտրգիրը շատ երկար կյանք չի ունենում։ 19-րդ դարում նա իր դիրքը սկսում է զիջել շղագրին[29]։

---

[29] Մենք «շղագիր» ասելով նկատի չունենք տպագրության մեջ ներկայումս գործածական և հայտնի նույնանուն տառը, այլ՝ շեղ գրված տառերը։

Շղագիրը հայ գրչության մեջ հանդես է գալիս, ինչպես ասել ենք, շատ վաղուց, դեռևս 10—11-րդ դարերում։ Մատենադարանի № 2877 ձեռագրի փոքրիկ հիշատակարանը գրված է շղագրով 1034 թ.։ Սակայն հետագա դարերում այդ գիրը չկարողացավ ճանապարհ հարթել, ուստի որոշ ժամանակ մոռացության տրվեց, մինչև 19-րդ դարը, և ապա մեկեն գրի ուրույն տեսակ դարձավ։

Գրչագրերում հաճախ են պատահում զարդագրեր։ Միջին դարերում սովորություն է եղել զարդանկարել ձեռագրերը՝ նրանց մեջ զգալի տեղ հատկացնելով զարդագրությանը։ Զարդագրվում են բնագրերի վերնագրերը և կարևոր պարբերությունների գլխատառերը։ Մանրանկարիչները ջանք և եռանդ չեն խնայում տառերը զարդանկարելու՝ տալով նրանց թռչունների, ծաղիկների, գազանների և այլ ձևեր։

Վաղ շրջանի զարդագրերը սովորաբար կազմված են լինում երկրաչափական և հյուսվածքային գեղեցիկ դրվագներից։ Ուղիղ գծում են սյունագծերը և նրանց փաթաթում ճյուղազարդեր՝ մի քանի տեղ խաչաձև հանգույցներ ստեղծելով։ Ընդ որում, սյունագծերի գույնը տարբերվում է փաթաթվող զարդաճյուղերից։ Հնագույն ձեռագրերում սյունագծերը սովորաբար նկարում են տարբեր գույներով, իսկ 12—13-րդ դարերի ձեռագրերում ներկը հաճախ փոխարինում են ոսկով։ Զարդագրերի գրվածքները կազմված են լինում պարզ և հաստ հյուսվածքներից։ Նրանց պարզությունը և գույների երանգավորումը բացառիկ գրավչություն են տալիս։ Հաճախ տառաձևերը որոշ չափով երկարում են։ Պատահում են անգամ, երբ տիտղոսաթերթում զարդագրված առաջին տառը երկարում է էջի ամբողջ երկարությամբ՝ վերից վար։ Տառի սյունագծի ներքևի ծայրը, ինչպես և աջ թեքվող թևը հաճախ վերջանում են մի կողմը սուր ծայր տվող եռաչերտ տերևաձև զարդերով։

Զարդագրությունն ամենից շատ զարգացավ և մեծ չափով սկսվեց կիրառվել Կիլիկյան և Սյունյաց գրչության դպրոցներում։ Եթե նախկին հյուսվածքային զարդագրերը մի ձեռագրում պատահում են մի քանի հատ, ապա այժմ նրանց թիվը տասնյակների է հասնում։ Զարդագրության մեջ հաճախ են գործածում թռչնագրեր, ծաղկագրեր, կենդանագրեր, ձկնագրեր, փառագրեր, մարդկային պատկեր ներկայացնող գրեր և այլն։

Ե. ՀԱՅ ԳՐՉՈՒԹՅԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՆՄՈՒՇՆԵՐԸ

Մեզ հասած հնագույն հայերեն բնագիրը հինգերորդ դարից է։ Այն մնացել է Տեկորի տաճարի ավագ դռան բարավորի վրա՝ իբրև շինարարական արձանագրություն։ Արձանագրությունը հրատարակված է մի շարք գիտնականների կողմից։ Անհրաժեշտ ենք համարում բերել այդ արձանագրությունը՝ ըստ Կ. Ղաֆադարյանի վերջերս հրատարակած ճշգրտված վերծանության.

«ՍԱՀԱԿ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ՇԻՆԵԱՑ ԶԱՅՍ ՎԿԱՅԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՍԱՐԳՍԻ ՅԻՐ ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՈԼՈՐ ԱԶԳԻՍ, ԵՒ ԱՄՈՒՍՆԻ, ԵՒ ՈՐԴԵԿԱՑ, ԵՒ ՍԻՐԵԼԵԱՑ ԵՒ ...ԵՒ ՀԻՄՆԱՐԿԵՑԱՒ ՏԵՂԻՍ Ի ՁԵՌՆ ՅՈՀԱՆՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԵՒ ՅՈՀԱՆՈՒ ԱՐՇԱՐՈՒՆԵԱՑ ... ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒ ԵՒ ՏԱՅՐՈՆԻ՝ ՏԵԿՈՐՈՅ ՎԱՆԱՑ ԵՐԻՑՈՒ, ԵՒ ՄԱՆԱՆԱՅ ՀԱԶԱՐԱՊԵՏԻ ՈՒՐԱՆԱՑ ՀՈՌՈՄԻ, ՈՐ Շ...» ։

---

[30] Կ. Ղաֆադարյան, *Տեկորի տաճարի V դ. արձանագրությունը* (տե՛ս ՊԲՀ, 1962, № 2, էջ 48)։

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԲՈԼՈՐԳԻԾ ԳՐՉՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԸ

ՏԵԿՈՐ	ՊԱՀՊԱՆԱԿ	ՀՌԻՓՍԻՄԵ	ԲԱԳԱՎԱՆ	ԱՐՈՒԾ	ՄՐԵՆ	ԼԱԶԱՐՅԱՆ	ԿՅՈՒՐԵՂ
Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
Բ		Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ
Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ
Դ	Դ		Դ		Դ	Դ	Դ
Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
Զ	Զ	Զ	Զ	Զ		Զ	Զ
Է	Է	Է	Է	Է		Է	Է
Ը	Ը	Ը		Ը		Ը	Ը
Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ
Ժ				Ժ		Ժ	Ժ
Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի
Լ			Լ			Լ	Լ

ՏԵԿՈՐ	ՊԱՀՊԱՆԱԿ	ՀՌԻՓՍԻՄԵ	ԲԱԳԱՎԱՆ	ԱՐՈՒԾ	ՄՐԵՆ	ԼԱԶԱՐՅԱՆ	ԿՅՈՒՐԵՂ
Խ				Խ		Խ	Խ
Ծ	Ծ	Ծ	Ծ			Ծ	Ծ
Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Հ	Հ	Հ	Հ	Հ	Հ	Հ	Հ
Ձ	Ձ			Ձ		Ձ	Ձ
Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ
Ճ		Ճ	Ճ			Ճ	Ճ
Մ	Մ	Մ	Մ	Մ	Մ	Մ	Մ
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ		Շ		Շ	Շ	Շ	Շ
Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո

ՏԵԿՈՐ	ՊԱՀՊԱՆԱԿ	ՀՌԻՓՍԻՄԵ	ԲԱԳԱՎԱՆ	ԱՐՈՒՃ	ՄՐԵՆ	ԼԱԶԱՐՅԱՆ	ԿՅՈՒՐԵՂ
Ձ	Ձ	Ձ				Ձ	Ձ
Պ	Պ	Պ	Պ		Պ	Պ	Պ
Ջ	Ջ					Ջ	Ջ
Ռ	Ռ	Ռ		Ռ	Ռ	Ռ	Ռ
Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
Վ		Վ	Վ			Վ	Վ
Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ	Տ
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Ց	Ց	Ց	Ց	Ց	Ց	Ց	Ց
Ւ	Ւ	Ւ	Ւ	Ւ	Ւ	Ւ	Ւ
Փ	Փ	Փ				Փ	Փ
Ք	Ք	Ք	Ք			Ք	Ք

Արձանագրության մեջ հիշված Հովհան կաթողիկոսը՝ Հովհան Մանդակունին է (478—490), իսկ տաճարի կառուցող Սահակ Կամսարականը՝ այն անձնավորությունը, որին Վահան Մամիկոնյանը 484 թ. պատգամավոր ուղարկեց՝ բանակցելու Միհր-Վշտնասպի հետ[31]։

Կասկածանքներ են եղել արձանագրության ժամանակի նկատմամբ[32], վերջերս Կ. Ղաֆադարյանը հանգամանորեն անդրադարձավ արձանագրության ժամանակին և գտավ, որ այն V դարի արձանագրություն է[33]։

Պրոֆ. Հ. Աճառյանը V դարի գրություն է համարում Սանասարյան վարժարանի № 1 մագաղաթի ձեռագրի պահպանակի կրկնագիրը և նույն ձեռագրում օգտագործված հին գրչագրի մի թերթ, որը գտնվում է 328 և 329 ահամարի տակ[34]։ Ձեռագրի բուն տեքստը գրված է 986 թվականին՝ «Ի ՆԼԵ համարիս Հայոց»։ Նախկին ձեռագրի թերթերը, ներկա ձեռագիրը գրելիս, 86 թ. վերցրել և օգտագործել են. Նրա վրա գրել են ավետարանի համաբարբառը, նկարել են տերունական նկարներ, իսկ մի էջ անփոփոխ տեղավորել ձեռագրի մեջ։ 986 թվականին գրված կրկնագիր տառերի տակից պարզ երևում են հին տառերը։ Հ. Աճառյանի կարծիքով, հին քայքայված ձեռագիրը եթե անցած լիներ թեկուզ 4 դարի հնություն, ապա նա գրված պետք է լիներ 5-րդ դարում[35]։

Պրոֆ. Կ. Ղաֆադարյանը ևս, Հ. Աճառյանի հանձնարարությամբ, ուսումնասիրել է նշված կրկնագիրը և եկել հետևյալ եզրակացության. «Եթե իրոք -րդ դարում մագաղաթյա մի ձեռագիր-մատյան արդեն այնքան էր հնացել, որ նրա թերթերը պոկոտում էին փոքրացնելու և այլ մատյանի մեջ իբրև պահպանակ օգտագործելու նպատակով, ապա այդ հին ձեռագիրը պատկանելու էր հայոց գրերի գրեթե սկզբնական շրջանին, հավանաբար 5-րդ դարին»[36]։

Հայոց գրչության հնագույն նմուշներից են Մատենադարանի № 1577 ձեռագրի մագաղաթյա պահպանակները։ Այն ձեռագիրը, որին կցված են նշված պահպանակները, գրվել և կազմվել է 1238 թվականին, իսկ պահպանակները, որպես քայքայված ձեռագրի պատառիկներ, վերցրել և օգտագործել են ձեռագրի ներսում։ Նշված պահպանակների գրության հնագրական ուսումնասիրությունը մեզ բերել է այն համոզման, որ այս գրերը, իրենց գծագրական ձևերով, նման են Երուսաղեմի խճանկար հայկական հին արձանագրությունների գրերին, իսկ որոշ տառաձևերով նույնիսկ ավելի հին են։ Պահ-

---

[31] Տե՛ս Ղազար Փարպեցի, Պատմություն Հայոց, էջ 162։

[32] Տե՛ս Н. Я. Марр, К датировке ктиторской надписи Текорского храма, «Христианский Восток», т. III, вып. I, 1914, Петроград, էջ 56—71։

[33] Կ. Ղաֆադարյան, Նշված հոդվածը (ՊԲՀ, 1962, № 2, 38—54)։ Հմմ. А. А. Манучарян, Строительные надписи Ширака, автореферат, Ереван, 1967, էջ 8—9։

[34] Սանասարյան վարժարանի այդ ձեռագիրն այժմ Մատենադարանի սեփականությունն է, գրանցված է № 7735-ի տակ։

[35] Աճառյանն անվերապահ ընդունելով Սանասարյան վարժարանի ձեռագրի պահպանակների գրությունը 5-րդ դարից, մեր երիտասարդ գիտնականներին հրավիրում է գիտական միջոցներով վերականգնել սրբված կրկնագրի նախկին տառերը՝ «Մեր հինգերորդ դարի այդ ամենահին ձեռագիրը, որպեսզի տեսնենք, թե ինչ հնագրական արժեք է ներկայացնում» (տե՛ս Հ. Աճառյան, Հինգերորդ դարից հայերեն ձեռագիր, «Տեղեկագիր», ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), 1952 թ., № 11, էջ 70)։

[36] Հ. Աճառյանի հիշված հոդվածի հավելվածում, էջ 71։

պանակների գրության մեջ մենք առաջին անգամ հանդիպում ենք հայկական գրաձևերի հետաքրքիր նորություններին։ Այսպես, «Ր»-ի վերին բոլորող գիծը հունարեն «Р»-ի նման այնքան է կորացած, որ գրեթե կպչում է սյունագծին։ «Ք»-ի և «Փ»-ի սյունագծերը սովորական գրերից անհամեմատ երկար են և սեպի նման իջնում ու անցնում են անգամ հաջորդ տողից։ «Ա»-ի աջ թեքվող ելունը ոչ թե ներքև է իջնում, ինչպես այդ Լազարյան ավետարանի գրության մեջ է կամ 9—10-րդ դարերի հայկական մյուս բնագրերում, այլ հունականի նման կեռվում է դեպի վերև։ «Թ»-ի ներքև իջնող աջ թևը հունականի նման գրեթե մոտենում է ձախ սյունագծին և այլն[37]*։*

5—6-րդ դարերից մեզ հասած հայկական բնագրերից մեծ արժեք են ներկայացնում Երուսաղեմի խճանկար արձանագրությունները, որոնցից կարևորը Ձիթենյաց լեռան վրա, ռուսաց եկեղեցու հիմքում բացված խճանկարն է։ Արձանագրության ժամանակը համարվում է վեցերորդ դարը, ուր հիշատակվում է Եսվաղանը և ունի հետևյալ բովանդակությունը.

«ԲԱՐԵԽԱՒՍ ՈՒՆԵԼՈՎ
ԱՌ ԱԾ̅ ՍՈՒՐԲ Է-
ՍԱՅԻ ԵՒ ՋԵՐԱՆԵԼԻ

ՀԱՐՍՍ ԵՍՎԱՂԱՆ Ա-
ՐԱՐԻ ՎԱՍՆ ԹՈՂՈՒ-
ԹԵԱՆ ՄԵՂԱՑ ՋՅԻ-
ՇԱՏԱԿԱՐԱՆՍ ՋԱՅՍ»[38]։



Երուսաղեմի խճանկար արձանագրություն։

---

[37] *Ուշադրության արժանի է, որ պատճենների տեքստը հատված է Ավետարանից և դեռ չունի համաբարբառ։ Պատճենի հնության մասին է խոսում նաև տառերի խոշորությունը։*

[38] Գ. Հովսեփյան, *Գրչության արվեստը հին հայոց մեջ,* էջ 5։

Մոզաիկ այս արձանագրության հնությամբ Երուսաղեմում հայտնաբերված է երեք այլ արձանագրություն ևս, որոնցից մեկը նվիրված է այն հերոսների հիշատակին, որոնք ընկել են պատերազմում և անուններով հայտնի չեն։ Ենթադրվում է, որ ակնարկված այդ անհիշատակ հերոսները կարող են լինել 5-րդ դարի ազատագրական պատերազմում ընկած մարտիկները։

Մեզ հասած հայ գրչության հնագույն օրինակների շարքին են պատկանում Դվինի Կաթողիկե եկեղեցու մոտ գտնված երկու երկթեք տապանաքարերի արձանագրությունները, որոնցից մեկի վրա կարդացվում է.

«ԱՅՍ ԴԻՐ ՅՈՀԱՆԱՅ Է ԳՐԻԳՈՐՈ ՈՐ[ԴԻՈՅ]...»։

Իսկ մյուսում՝

«ԱՅՍ ԴԻՐՍ ԳԷՈՐԳԱ ՔԱՀԱՆԱՅԻ Է»։


+ԱՅՍԴԻՐՍԳԷՈՐԳԱՔԱՀԱՆԱՅԻԷ

Կ. Ղաֆադարյանը, որ հրատարակել է սույն արձանագրությունները, հետևյալ կարծիքն է հայտնել. «Հնագրական բոլոր տվյալների հիման վրա կարելի է Դվինի տապանաքարերը վերագրել 6-րդ դարին, որովհետև 7-րդ դարին պատկանող մեզ հայտնի բոլոր արձանագրություններից էլ նրանք հին են իրենց գրչության ձևերով»[39]։

Յոթերորդ դարի է Հռիփսիմեի տաճարի արևմտյան պատին փորագրված 618 թ. արձանագրությունը, որը պարունակում է հետևյալ տեքստը[40]։

««ԵՍ ԿՈՄԻՏԱՍ ԵԿԵՂԵՑԱՊԱՆ ՍԸՐԲՈՅ ՀՌԻՓՍԻՄԷԻ
ԿՈՉԵՑԱՅ ՅԱԹՈՌ ՍՐԲՈՅՆ ԳՐԷԳՈՐԻ ՇԻՆԵՑԻ
ՋՏԱՃԱՐ ՍՐԲՈՑ ՎԿԱՅԻՑՍ ՔԻ»[41]։


ԵՍԿՈՄԻՏԱՍԵԿԵՂԵՑԱՊԱՆՍԸ
ԲՈՅՀՌԻՓՍԻՄԷԻԿՈՉԵՑԱՅՅԱ
ԹՈՌՍՐԲՈՅՆԳՐԷԳՈՐԻՇԻՆԵՑԻ
ՋՐԱՃԱՐՍՐԲՈՑՎԿԱՅԻՑՍՔԻ

Յոթերորդ դարի հայկական գրչության նմուշներից է Բագարանի արձանագրությունը, որը փորագրված է եկեղեցու չորս բոլորը մի տող գոտիով[42]։

---

[39] Կ. Ղաֆադարյան. *Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 245։*

[40] *Սեբեոսը իր «Պատմության» «Շինումն տաճարին Հռիփսիմեայ» գլխում հայտնում է, որ նախկին տաճարը ցածրաշեն շենք էր, ուստի Կոմիտաս կաթողիկոսը, Խոսրով Փարվեզ թագավորի 28-րդ տարում, քանդեց և նրա տեղը քառակուսի տաճար կառուցեց։ Հայտնի է, որ Խոսրով Փարվեզը գահակալել է 590 թ., նրա 28-րդ տարին կլինի 618 թ. (Սեբեոս, Պատմութիւն Հայոց, էջ 89)։*

[41] *Տե՛ս* **И. А. Орбели,** Избранные труды, Ереван, 1963, էջ 405—409 (հմմ. **А. Б. Еремян,** Храм Рипсимэ, Е., 1955, էջ 26)։

[42] *Բագարանը գտնվում է Ախուրյան գետի աջ ափին, այն երբեմնի Բագրատունյաց թագավորության մայրաքաղաքն է հանդիսացել։*

(Վերջում միայն դառնում է երկու տող՝ ըստ երևույթին տարածությունը չբավարարելու պատճառով)։ Բագարանի եկեղեցին կառուցվել է ի հիշատակ Բուտ Սահառունու։ Արձանագրության թվականը կասկած չի հարուցում. այն գրված է 631 թ.։

Արձանագրությունը վերծանվում է.

«ՆՐԵՍՈՒՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ԱՄԻ ԽՈՍՐՈՎԱՅ[43] ԱՐՔԱԻ ԵՐԱՆԵԼԻ ՏԷՐ ԲՈՒՏ ԱՌՈՒԵՂԵԱՆ ԶԴԵԱՑ ՀԻՄՈՒՆՍ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՆՐԵՍՈՒՆ ԵՒ ՈՒԹ ԱՄՈՑՆ ԳՈԲԹԻ ԵՒ ԽՈՒՄԱԹ ԿՈՐՈՒՍԻՆ ԶԲՈՒՏՆ ԵՒ ՅԵՏ ԵՐԻՑ ԱՄԱՑ ՄԱՀՈՒԱՆ ԲՏԻՆ ԿԱՏԱՐԵԱՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ ԱՆՆԱԳ ԲՏԻՆ ԱՄՈՒՍԻՆ ՏՐԷ ԱՄՍԵԱՆ Ի ՔՍԱՆ ...Ի ՄԱՐԶՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՐԱԶ ՏԻՐՈՑԻ ՀԱՅՈՑ ԱՍՊԵՏԻ ՅԱՌՈՒԵՂԵԱՆ ԳԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՀԱՆԱՅ Ի ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ... ՅՐԿԱՆ ՈՐԴՒՈՅ ԵՒՍԵՐԿԱՅ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ ԱՇԱՆՈՒՇԱՅ ԱՌՆ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆԱՆԴԱՑՈՑ ԴՍՏԵՐՔ ԱՆՆԱՅ ԵՒ ՈՐԴԵԱԿՔ ԴՈՒԱՃԱՆ ՀՐԱՃԱՏ ԵՒ ՏԻԱՐԻԱՆԴ ԴԺԽՈՅ ՍԱՀԱԿԻ ՌԱՀԱՍԻ ՇՈՒՇԱՆ ՅԻՇԵՑԻ ԱԾ ԵՒ ՈՂՈՐՄԵՑԻ»[44]։

7-րդ դարի հայոց գրչության ընտիր նմուշներից է Բագավանի տաճարի արձանագրությունը[45], որը փորագրված է 639 թվականին։ Արձանագրությունը տեղավորված է տաճարի հարավային պատի արևելյան կողմում։ Արձանագրությունից երևում է, որ տաճարի կառուցումը ձեռնարկվել է Հերակլ կայսեր 21-րդ տարում և ավարտվել ութ տարուց հետո՝ 639 թվականին։ Արձանագրության գիտական վերծանությունը հրատարակել է ակադ. Հ. Օրբելին։ Արձանագրության տեքստը հետևյալն է.

«ՔՍԱՆ ԵՒ ՄԻ ԱՄԻՈՅՆ ԱԾԱՊԱՀ ԵՐԱԿՂԻ ԹԱԳԱՒՈՐԻ,
ՀՐՈՏԻՑ ԱՄՍՈՅՆ ՈՐ ԱՒՐ ԵՐԵՍՈՒՆ ԷՐ, ԵՍ ՏՐ ԵԶՐԱՍ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ՍԲ ՎԱՆԱՑ ԵՐԷՑ ՀԱՃՈՅԻՔՆ ԱՅ
ՀԻՄՆ ԱՐԿԻ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ Ի ՔՍԱՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ԱՄԻ
ՆՈՅՆ ԵՐԱԿՂԻ ԹԱԳԱՒՈՐԻ, ՅԱՄՍԵԱՆ ՆԱՒԱՍԱՐԴԻ, ՈՐ ԱՒՐ ՔՍԱՆ
ԷՐ ՅԱՒՈՒՐՆ ՈՒՐԲԱԹ, ԵՂԵՒ ԿԱՏԱՐՈՒՄՆ ՆՈՅՆ ԳՈՐԾՈՅՍ ՏԵՂՒՈՅՍ
ՎՃԵՆԱԿԱՒ ԱՄԵՆԱՅՆ ԻՐԱՒՔ, ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ ԻՍՐԱՅԷԼԻ ԳՈՌԱՂՃԵՑԻՈՅ»[46]։

Վիմագիր գրություններից է հին Անիի միջնաբերդի Կամսարականների թագիլիկ եկեղեցու վրա եղած արձանագրությունը, որի վերջը թերի է։ Ակադ. Ն. Մառի կարծիքով այն գրված պիտի լինի 622 թվականին[47]։ Արձանագրությունը կարդացվում է.

«ԵՍ ԱԲՐԱՀԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ [ՇԻՆ]ԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ [ԶԱՅՍ]Ի ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱ...»։

Նորագույն ուսումնասիրությունները պարզել են, սակայն, որ բերված արձանագրության վերջին տառերը ՀԱ թվական չէ, այլ ՀԱ(ՅՈՑ) բառի սկզբի երկու տառերը, ինչպես նկատել է Հ. Ա. Օրբելին[48], Կ. Ղաֆադարյանը և ուրիշ-

---

[43] *Խոսրով Փարվեզը, ինչպես ասացինք, գահակալել է 590 թ., հետևապես նրա 34-րդ տարին կլինի 623 թ., որին ավելացնելով շինարարության երեք տարիները, արձանագրության գրելու թվականն է լինում 626 թ.։*

[44] **И. А. Орбели, Надпись 631** года о построении **Багаранской церкви** (*տե՛ս* «Избранные труды», էջ 393)։

[45] *Բագավանը գտնվում է Բագրևանդ գավառում, Նպատ լեռան հյուսիս-արևմտյան ստորոտում, Արածանիի ափին։*

[46] И. А. Орбели, **Багаванская** надпись 639 **года** (*տե՛ս* «Избранные труды», էջ 372—390 և 419—420)։

[47] **Н. Я. Марр,** Новые **археологические** данные о **постройках** типа **Ерерyйской** базилики (*տե՛ս* ЗВО, XIX, էջ 141)։

[48] **И. А. Орбели,** Две **надписи** дворцовой **церкви в Ани** (*տե՛ս* «Избранные труды», էջ 413—415)։

ներ։ Արձանագրության ժամանակը, ըստ հնագրական տվյալների, կարելի է համարել X—XI դարերը։

Հայկական հնագրության թանկարժեք մի նմուշ մնացել է հայ ճարտարապետության գլուխգործոց Զվարթնոց տաճարի արեգակի ժամացույցի վրա։ Տաճարը, ինչպես հայտնի է, կառուցվել է 641—661 թվականներին, այդ ժամանակին էլ վերաբերում է արեգակի ժամացույցի պարունակած բնագիրը։ Ժամացույցի վրա բերված է հետևյալ գրությունը.

«ԱՂԱՒԹԵՍՑԵՆ ԱՌ ՏՐ ԱՄԵՆԱՅՆ ՍՈՒՐԲ
Ի ԺԱՄ ԸՆԴՈՒՆԵԼԻ»[49]։



Արեգակի ժամացույցը Զվարթնոցում։

Ժամացույցի ներքին մասում բերված են ժամերի թվանշանները հայկական տառանիշերով՝ Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, ԺԱ, ԺԲ։

Յոթերորդ դարի բավականաչափ հստակ մի արձանագրություն մնացել է Ալամանի եկեղեցու հարավային պատի վրա։ Արձանագրությունն ամբողջական է. այն գրված է 637 թ.։ Բերում ենք Հ. Օրբելու վերծանությամբ.

«ՔՍԱՆԵՒԵՒԹՆԱՄԻՈՅ ՀԵՐԱԿՂԻ ԲԱՐԵՊԱՇՏ ԹԱԳԱՒՈՐԻ[50] ՆԵՐՍԵՀԻ ՇԻՐԱԿԱՅ ԵՒ ԱՐՇԱՐՈՒՆԵԱՑ ՏԵԱՌՆ ԵՒ ԹԵՈՓԻՂՈՍ ԱՐՇԱՐՈՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՍ ԳՐԻԳՈՐ ԻՂՈՒՍՏՐ ԵՒ ՄԱՐԻԱՄ ԻՄ ԿԻՆ ՇԻՆԵՑԱՔ ԶՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ ՎԱՍՆ ՄԵՐ ՀՈԳՒՈՅ»[51]։

---

[49] Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետություն, Երևան, 1942, էջ 254։

[50] Հերակլը գահակալել է 610 թ., նրա 27-րդ տարին կլինի 637 թ.։

[51] И. А. Орбели, Надпись 637 года о построении Аламанской церкви (տե՛ս «Избранные труды», էջ 395)։

Յոթերորդ դարի յոթանասնական թվականների է իշխան Գրիգոր Մամիկոնյանի կառուցած Արուճի Սուրբ Գրիգոր եկեղեցու արևելյան պատի շինարարական բովանդակությամբ արձանագրությունը[52], որը վերծանվում է.

«Ի ԵՒ Թ ԱՄԻ ԿՈՍՏԱՆՏՆԻ[53] ՄԱՐԵՐԻ ԱՄՍՈՅ ՈՐ ԱՒ[Ր]Ժ ԵՒ Ե ՀԻՄՆԱՐԿԵՑԱՒ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԷՍ Ի ՁԵՌՆ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՄԻԿՈՆԵՆԻ ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆԻ ԵՒ ՀԵՂԻՆԷԻ ՆՈՐԻՆ ԶՈՒԳԱԿՑԻ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ ՇԻՆԱՒՂԱՑ ԶՍԱ»[54]։



ԻԵԻԹԱՄԻԿՈՍՏԱՆՏՆԻՄԱՐԵ
ՐԻԱՄՍՈՅՈՐԱՒ ԺԵԻԵՀԻՄՆ
ԱՐԿԵՑԱՒՍՈՒՐԲԿԱԹՈՂԻԿԷՍ
ԻՁԵՌՆԳՐԻԳՈՐԻՄԱՄԻԿՈՆԵՆԻ
ՀԱՅՈՑԻՇԽԱՆԻԵԻՀԵՂԻՆԷ
ԻՆՈՐԻՆՁՈՒԳԱԿՑԻ
ԻԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆՇԻՆԱՒ
ՂԱՑ ԶՍԱ

Յոթերորդ դարի գրչության լավագույն նմուշներից են Մաստարայի եկեղեցու հինգ արձանագրությունները՝ 7-րդ դարի կեսերից։ Բերում ենք նրանցից մեկը.

«ՅԱՄՍ ՏՆ ԹԵՈԴՈՐՈՍ ԳՆՈՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՇԻՆԵՑԱՒ ԱԾԱՅԻՆ ՏՈՒՆՍ ՔԱՒԵԼ ԶԳՐԻԳՈՐԱՍ ԱՆԱՐԺԱՆ... ԱԾ ՏԹԱ Ի ԳՐԻԳՈՐԱՍ ՄԵՂԱՒՈՐ ԵՒ ԻՆՁ ԿԵՓ...»[55]։

Այստեղ հիշված է Թեոդորոս եպիսկոպոսը, որը 7-րդ դարի անձնավորություն է, 648 թվականին մասնակցել է Դվինում գումարված ժողովին։

7-րդ դարի արժեքավոր հիշատակարաններից է Թալինի մատուռի արևմտյան պատի գեղեցիկ արձանագրությունը, որ թողել է Ներսեհ Կամսարականը 7-րդ դարի առաջին կեսում։ Արձանագրությունը վերծանվում է.

«ԵՍ ՆԵՐՍԵՀ ԱՊՈՀ[Ի]ՒՊԱՏ ՊԱ[ՏՐԻԿ ՇԻՐ]ԱԿԱՅ ԵՒ ԱՐՇԱՐՈՒՆԵԱՑ ՏԷՐ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՆՈՒՆ ՍՐԲ[Ո]ՅՆ ԱԾԱԾՆԻՆ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ ԻՆՁ ԵՒ ՇՈՒՇԱՆԱՅ ԱՄՈՒՍՆՈՅ ԻՄՈՅ ԵՒ ՀՐԱՀԱՏԱՅ ՈՐԴՒՈՅ ՄԵՐՈՅ»[56]։

Հին տապանաքարերի վրա մնացած գրություններից առանձնապես ուշադրության արժանի է Արտավազդ Կամսարականի տապանագիրը, որ գտնվում է Նախճավանում։ Արտավազդ Կամսարականը, ինչպես պարզել է Գ. Հովսեփյանը, Ներսեհ Կամսարականի թոռն է և մահացել է 8-րդ դարի առաջին քառորդում։ Տապանի վերին մասը բութ օրորոցաձև է, որը հատուկ է արաբական շրջանի գերեզմաններին։ Արձանագրությունը հետևյալն է.

---

[52] **И. А. Орбели**, Дополнения и поправки к статье «Багаванская надпись 639 года» (տե՛ս «Избранные труды», էջ 422)։

[53] Կոստանդին III կայսրը գահակալել է 641 թ., նրա 28-րդ տարին կլինի 668 թ.։

[54] Նույն տեղում, էջ 422։

[55] **Գ. Հովսեփյան**, Գրչության արվեստը հին հայոց մեջ, էջ 175։

[56] **И. А. Орбели**, Надпись о построении Талинской церкви (տե՛ս «Избранные труды», էջ 434)։

«ԱԾԱՀՐԱՄԱՆ ԵԼՒՔ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԱԿՈՉ ՀՐԱԺԱՐ[ՄԱՄ]Բ Ի ՍՄԱ Է ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԸՆԴ ՀԱՐՍ ԻՒՐ ԵՐԱՆԵԼԻ ՏԷՐ ԱՐՏԱՒԱԶԴ ԿԱՄ[Ս]ԱՐԱԿԱՆ ԱԳԱՒՀԻՒԳԱՏ ԳԱՏՐԻԿ ԵՒ ԻՇԽԱՆ ՀԱՅՈՑ ՈՐԴԻ ՀՐԱՀԱՏԱ ԳԱՏՐԿԻ ՇԻՐԱԿԱՅ ԵՒ ԱՐՇԱՐՈՒՆԵԱՅՆ ՏԵԱՌՆ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ՇՈՒՇԱՆԱՅ ՄԱՄԻԿՈՆԵՆԻ»[57]:

Հայկական թվականով մեզ հասած ամենահին գրությունը Ուխտատուր վանականի արձանագրությունն է Թալինի մայր եկեղեցու ձախակողմյան սյան արևմտյան երեսին՝ 783 թվականից (Գ. Հովսեփյանը սխալմամբ հայկական թվականով հնագույն գրությունը Անիի միջնաբերդի արձանագրությունն է համարում)[58]։

Ուխտատուրի արձանագրությունը հետևյալ բովանդակությունն ունի.

«ՄԼԲ ԹՈՒԱԿ[Ա]ՆՈՒԹԵԱՆ ՀԱՅ
ՈՑ ԵՍ ՈՒԽՏԱՅՏՈՒՐ ՎԱՆԱ
Կ[Ա]ՆՍ ԵՒ ՏՈՒՑԻ ԵՂԲԱՅՐ ԻՄ ԲՆՐ
ԱՔ [Զ]ԱՂԲԻՒՐԱՆԻՍ Ի ՔԱՐԱԿԱԳ
ՆՈՒ(?) ԱՏԵՆ Ի ԹԱԼԻՆ. ԹԵ ՅԻՇԽ[Ա]
ՆԱՑ ՈՔ ԽԼԵ ԻՄ ՄԵՂԱՅՍ (ԳԱ
ՐՏ)ԱԿԱՆ ԵՂ[Ի]ՑԻ»[59],

Ուշագրավ է, որ 7-րդ դարի հայերեն արձանագրություններ պահպանվել են նաև Վրաստանում Աթենի տաճարի պատի վրա, որը կարդացվում է.

«ԵՍ ԹՈԴՈՍԱԿ ՇԻՆՈՂ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵՑՈՅՍ»:

Արձանագրությունը 7-րդ դարի քառասնական թվականներից է։ Նույն շրջանի է նաև Ջվարիի հայերեն արձանագրությունը[60]։

Հայերեն լեզվով մեզ հասած ամենահին ձեռագիրն աշխարհում[60ա], *որը թվական ունի, Լազարյան կոչվող նշանավոր ավետարանն է՝ գրված 887 թվականին Աշոտ իշխանաց իշխանի ժամանակ։ Ձեռագիրը Լազարյան է կոչվում այն պատճառով, որ նա երկար ժամանակ Մոսկվայի Լազարյան ճեմարանի սեփականությունն է եղել։ Ձեռագրի լուսատիպ նմանահանությունը հրատարակել է պրոֆ. Գ. Խալաթյանը (Մոսկվա, 1889 թ.)։ Ձեռագիրն ունի թվական պարունակող գրչի հետևյալ հիշատակարանը.*

«ԳՐԵՑԱՒ ՍՈՒՐԲ ԵՒ ԿԵՆՍԱԲԵՐ ԱՒԵՏԱՐԱՆՍ ԱՅՍ ՅԼԶ
(887) ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՆ ԳԵՈՐԳԱՅ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ՅԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՆ ԱՇՈՏԻ ԻՇԽԱՆԱՑ
ԻՇԽԱՆԻ ԵՒ Ի ՏԵՐՈՒԹԵԱՆՆ Ս[Մ]ԲԱՏԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՅ. ԵՍ
ՍԱՀԱԿ ՎԱՆԱՆԴԱՑԻ ՈՐԴԻ ՎԱՐԴԱ ՎԱՆԱՆԴԱՑՒՈՑ ՈՐՈՒՄ ԿՐԿԻՆ
ՄԼԵՀ ԿՈՉԷԻ[Ն] :

Գրչական կարևոր ունիկում է մատենադարանի սեփականությունը հանդիսացող 989 թվականի «Փղոսկրյա» կոչվող ավետարանը, որի լուսատիպ հրատարակությունը պատկանում է Մակլերին։ Ձեռագրի գրչության մասին հիշատակարանում կարդում ենք.

---

[57] **И. А. Орбели**, Надгробие Артавазда Камсаракана (*տե՛ս* «Избранные труды», *էջ* 412):

[58] *Տե՛ս* **Գ. Հովսեփյան**, *Գրչության արվեստը հին հայոց մեջ, էջ 172—173։*

[59] *Նույնը, էջ 176։*

[60] *Տե՛ս* **П. М. Мурадян**, Армянская надпись храма Джвари *(«Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), 1968 թ., № 2, էջ 55—76)։*

[60ա] *Չհաշված Մլքե թագուհու ավետարանն (862) ու Կյուրեղի պատառիկները։*

[61] *ՄԱՄ ձեռ. № 6200, թ. 229ա։*

«ԵՒ ԳՐԵՑԱՒ ՅԱՄԻ ԹՈՒՈՑ ՀԱՅԱԶԱՆՑ ՆԼԸ ԵՒ ԸՍՏ ԹՈՒՈՑ ՀՌՈՄՈՑ ՋՒԲ ՅԻՍՄԱՅԵՂԱԿԱՆ ԲՌՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՑՀԹ»[62]։

«Փղոսկրյա» կամ «էջմիածնի» ավետարանը բացառիկ արժեք ունի միաժամանակ իբրև արվեստի հնագույն նմուշ՝ իր փղոսկրյա կազմով և պարունակած գեղեցիկ մանրանկարչությամբ։ Հայ մանրանկարչության ականավոր մասնագետ Լ. Ա. Դուռնովոն գտնում է, որ «Փղոսկրյա ավետարանը» «իր բացառիկ գեղարվեստական որակով կանգնած է համաշխարհային կուլտուրայի հուշարձանների շարքում»[63]*։ Ձեռագիրը գրված է Վայոց Ձորի Նորավանքի գրչության դպրոցում Հովհաննես գրչի կողմից։*

Հայոց գրչության և մանրանկարչության պատմության համար առանձնապես ուշագրավ է Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի մի ձեռագիր, որը պատվիրատուի անունով հայտնի է Մլքեի ավետարան անունով։ Մլքեն Գագիկ Արծրունի թագավորի կինն էր։ Ձեռագիրը գրել է տվել 862 թվականին և նվիրել Վարագա վանքին։ Ձեռագրի մանրանկարները 1902 թվականին, նրա գրչության հազարամյակի լրացման կապակցությամբ, գունատիպ նմանահանությամբ հրատարակել են Վենետիկի Մխիթարյանները[64]*։*

Հայոց գրչության պատմության համար բացառիկ արժեք ունի Մատենադարանի № 2679 ձեռագիրը, որն անցյալում հայտնի էր 102 համարով։ Այս ձեռագիրը թղթի վրա գրված հայկական հնագույն գրչագիրն է աշխարհում։ Այն ընդօրինակել է Ղուկաս գրիչն իր հոր՝ Դավիթ քահանայի, պատվերով 981 թվականին։ Ձեռագիրը գրվելուց տասը տարի հետո նորոգվել է, և նորոգողը թողել է հետևյալ հիշատակությունը. «Եւ է նորոգումն սորա ի ՆԽ թուականութեանս Հայոց»[65]*։ Այս ձեռագիրը հայ դպրության մեջ կարևոր է նաև իր բովանդակությամբ. այն պատմա-գիտական բովանդակությամբ մեզ հասած հնագույն ժողովածուներից է։*

---

[62] *ՄԱՄ ձեռ. № 2374, թ. 231ա։ (Այս ձեռագրի մասին տե՛ս Ստրժիգովսկի, Էջմիածնի ավետարանը, Վիեննա, 1892)։*

[63] **Л. А. Дурново,** Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, էջ 18։

[64] Գոտուրյան, *Զարդանկարք աւետարանի Մլքէ թագուհւոյ, Վենետիկ, 1902։*

[65] *ՄԱՄ ձեռ. № 2679 (№ 102), թ. 52ա։*

V. ԹՎԱՆՇԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայումս օգտագործվող արաբական թվանշանների գործածությունը Հայոց մեջ XVII—XVIII դարերից այն կողմ չի անցնում[1]*։ XVII դարում և նրանից առաջ, հայ մատենագրության մեջ թվանշաններն արտահայտվել են հայկական տառանիշերով, ինչպես իր ժամանակին տառանիշերը գործ են ածվել հունական, ռուսական և այլ ժողովուրդների մատենագրության մեջ։*

Համարական կարգով հայկական այբուբենը բաժանվում է չորս մասի. «Ա»-ից մինչև «Թ» տառը համարվում է **միավոր**, *«Ժ»-ից մինչև «Ղ»-ն՝* **տասնավոր**, *«Ճ»-ից մինչև «Ջ»-ն՝* **հարյուրավոր** *և «Ռ»-ից մինչև «Ք»-ն ներառյալ՝* **հազարավոր**: *Այբուբենի տառերն ունեն հետևյալ թվական նշանակությունը.*

Ա—1	*Ժ—10*	*Ճ—100*	*Ռ—1000*
Բ—2	*Ի—20*	*Մ—200*	*Ս—2000*
Գ—3	*Լ—30*	*Յ—300*	*Վ—3000*
Դ—4	*Խ—40*	*Ն—400*	*Տ—4000*
Ե—5	*Ծ—50*	*Շ—500*	*Ր—5000*
Զ—6	*Կ—60*	*Ո—600*	*Ց—6000*
Է—7	*Հ—70*	*Չ—700*	*Ւ—7000*
Ը—8	*Ձ—80*	*Պ—800*	*Փ—8000*
Թ—9	*Ղ—90*	*Ջ—900*	*Ք—9000*

Այբբենագիր թվանշաններն ունեն ներկայումս արաբական հորջորջվողների հաջորդականությունը. աջ կողմում միավոր թիվն է գրվում, իսկ նրանից դեպի ձախ, ըստ հաջորդականության, հետևում են՝ տասնավոր, հարյուրավոր, հազարավոր և ավելի մեծ թվեր։

Մատենադարանի № 1869 ձեռագրում Անդրեաս Եվդոկացին (1589 թ.) իր այբբենարանի հավելվածում նշում է հայկական թվանշանները գործածելու հետևյալ կանոնը.

---

[1] *Բացառված չէ, որ 10—11-րդ դարերում արաբական թվանշանները մեզանում ևս կարող էին գործածված լինել։ Վրաստանում, օրինակ, հայտնի է այդպիսի գործածության երկու դեպք (Բագրատի տաճար և ձեռ.* А—38, *էջ* 246б)։ *Հմմ.* **А. Г. Шанидзе, Новооткрытый** алфавит кавказских **албанцев** и его значение **для науки** („Известия НЯИМК", IV, 1938, *էջ* 23)։

«Պատուով այբն (Ա) մէկ է, բենն (Բ) երկուք է, գիմն (Գ)՝ երեք է, դան (Դ) չորս է, եչն (Ե) հինկ է, զան (Զ)՝ վեց է, էն (Է)՝ եաւթն է, եթն (Ը)՝ ութն է, թաւն (Թ)՝ ինն է, ժէն (Ժ)՝ տասն է, ինին (Ի)՝ քսան է, լիւնն (Լ)՝ երեսուն է, խէն (Խ)՝ քառասուն է, ծան (Ծ)՝ յիսուն է, կենն (Կ)՝ վաթսուն է, հաւն (Հ)՝ եօթանասուն է, ձան (Ձ)՝ ութսուն է, ղատն (Ղ)՝ ընըսուն է, ճէն (Ճ)՝ հարիւր է, մենն (Մ)՝ երկու հարիւր է, յին (Յ)՝ երեք հարիւր է, նուն (Ն)՝ չորս հարիւր է, շան (Շ)՝ հինկ հարիւր է, ոն (Ո)՝ վեց հարիւր է, չան (Չ)՝ եաւթն հարիւր է, պէն (Պ)՝ ութն հարիւր է, ջէն (Ջ)՝ ինն հարիւր է, ռան (Ռ)՝ հազար է, սէն (Ս)՝ երկու հազար է, վեւն (Վ)՝ երեք հազար է, տուն (Տ)՝ չորս հազար է, րրէն (Ր)՝ հինգ հազար է, ցաւն (Ց)՝ վեց հազար է, հիւնն (Ւ)՝ եաւթն հազար է, փիւրն (Փ)՝ ութն հազար է, քէն (Ք)՝ ինն հազար է, ժէն և ռան (ԺՌ)՝ տասն հազար է, ինին և ռան (ԻՌ)՝ քսան հազար է, լիւն և ռան (ԼՌ)՝ երեսուն հազար է, խէն և ռան (ԽՌ)՝ քառասուն հազար է, ծան և ռան (ԾՌ)՝ յիսուն հազար է, կենն և ռան (ԿՌ)՝ վաթսուն հազար է, հաւն և ռան (ՀՌ)՝ եաւթնասուն հազար է, ձան և ռան (ՁՌ)՝ ութսուն հազար է, ղատն և ռան (ՂՌ)՝ ըննըսուն հազար է, ճէն և ռան (ՃՌ)՝ հարիւր հազար է»[2]։

Ի տարբերություն արաբական թվանշանների, հայկական գրության մեջ զրոյի համար առանձին նշան չի գործածվել, ուստի և թվերի միջև ու վերջում գրվելիք զրոն հասկացվել է բնական ձևով՝ նախորդ տառի թվական նշանակության հետ միասին։ Այսպես, 1080 թվանշանը գրվում է ՌՁ տառերով, 8002-ը՝ ՓԲ, 1608-ը՝ ՌՈԸ, 1002-ը՝ ՌԲ, 8200-ը՝ ՓՄ և այլն։

Թվական նշանակությամբ գործածված տառերը սովորական տառերից տարբերելու համար ձեռագրերում, ինչպես և վիմական արձանագրություններում, սկզբից և վերջից միջակետների կամ վերջակետների մեջ են առնվում։ Պատահում է՝ առջևում վերջակետ, իսկ վերջում միջակետ և հակառակը։ Բացի այդ, թվական նշանակությամբ գործածված տառերի վրա դրվում է պատվի նշան, օրինակ, «Յամի ։ՌՅՁԹ։ արեգ ամսոյ ։ԻԲ։ Լուսինն խաւարեցաւ», «Ի թուականին հայոց ։ՅՁԹ։ եղեւ մահտարաժամ», «Արշակ թագաւորեաց ։ԽԲ։ ամ և .Է. ամիս» և այլն։

Թվականի վրա դրվող պատվի նշանը տարբեր է լինում։ Մեծ մասամբ ամբողջ թիվը առնվում է մի ամբողջական պատվի տակ, բայց երբեմն միավորը, տասնավորը և մյուսները առանձին-առանձին պատիվների տակ են առնվում։ Բերենք մի քանի նման օրինակ՝

5450—.Ր.Ն.Ծ. 219—.Մ.ԺԹ. 4119—.ՏՃ.ԺԹ. և այլն։

Առանձին կետերի մեջ են առնվում կրկնվող թվականները. օրինակ՝ «Երբ .Կ.Կ» (այսինքն՝ վաթսուն-վաթսուն), «Սովորէին ։ԻԵ. ԻԶ։ աշակերտք» (Սովորում էին 25—26 աշակերտ), «Կանգնեալ էին .Է.Է.» (Յոթ-յոթ էին կանգնած) և այլն։

XVIII դարի որոշ վավերագրերում պատահում է, որ հայկական տառերի կողքին, զուգընթացաբար, գործածության մեջ է դրվում զրոն։ Գրում են հայկական տասնավոր, հարյուրավոր և մեծ թվերը և կողքին զրո դնում, օրինակ՝ Ո00 (600), Տ000 (4000), Մ00 (200) և այլն։ Այս ձևով են, օրինակ, գրված առևտրական Եղիաս Մուշեղի (XVIII դարի առաջին կես) հաշվեմատյանների թվանշանները։ XVII—XVIII դարերում գրված նոտրգիր ձեռագրերում ևս մեկ-մեկ հանդիպում ենք թվերի նման գործածության փաստերի։ Այսպես, Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրության մեջ 1080-ը գրվել է ։ՌՕՁՕ։ ձևով, 1025-ը՝ ։ՌՕԻԵ։ և այլն։

---

[2] ՄԱՄ ձեռ. № 1869, թ. 389բ—390ա։

Հազարավորներից բացի թվերը հաշվել են բյուրերով[3]։ Բյուր է համարվել 10.000-ը (հունական μύριοι ռուսական тьма)։ Հաշվումները հեշտացնելու համար բյուրը հաճախ գործ են ածել Λ նշանով։ Դա հնարավորություն է ստեղծել առանց դժվարության միլիոնների, տասնյակ միլիոնների հաշիվներ կատարել։ Բյուրի (չորս գրոյի) այդ նշանը բազմիցս գործ է ածված Անանիա Շիրակացու թվաբանության դասագրքում։ Բյուրի նշանի հանդիպում ենք նաև Հովհաննես Իմաստասերի, Հովհաննես Երզնկացու և այլ հեղինակների աշխատություններում[4]։

Հայկական այբուբենը բյուրի նշանով ստանում է հետևյալ նոր նշանակությունը[5].

Ա̂—10.000 Ժ̂—100.000 Ճ̂—1 միլ. Ռ̂—10 միլ.
Բ̂—20.000 Ի̂—200.000 Մ̂—2 » Ս̂—20 »
Գ̂—30.000 Լ̂—300.000 Յ̂—3 » Վ̂—30 »
Դ̂—40.000 Խ̂—400.000 Ն̂—4 » Տ̂—40 »
Ե̂—50.000 Ծ̂—500.000 Շ̂—5 » Ր̂—50 »
Զ̂—60.000 Կ̂—600.000 Ո̂—6 » Ց̂—60 »
Է̂—70.000 Հ̂—700.000 Չ̂—7 » Ւ̂—70 »
Ը̂—80.000 Ձ̂—800.000 Պ̂—8 » Փ̂—80 »
Թ̂—90.000 Ղ̂—900.000 Ջ̂—9 » Ք̂—90 »

Հայկական որոշ ձեռագրերում, հատկապես նոտրգիր ձեռագրերում, պատահում է, որ խախտվում են թվական գործածելու ներկա կանոնները։ Այսպես, երբեմն հազարավոր կամ հարյուրավոր թվերի համար գործ է ածվում ոչ թե տվյալ թվանշանի համապատասխան տառանիշը, այլ թվական մի ամբողջ խմբակցություն. օրինակ՝ 25.000 գրվում է ոչ թե սովորականի նման .Բ.Ր., այլ ։ԻԵՌ։, կամ 92.400՝ ոչ թե Թ̂.ՍՆ, այլ ։ՂԲՌՆ։ և այլն։

Կան հազվագյուտ դեպքեր, երբ «Ժ»-ից հետո եղած տառերը դառնում են ոչ թե տասնավորներ, այլ մնում են միավոր։ Այդ դեպքում «Ի»-ն հավա-

---

[3] Հայերենում պետք է ունենայինք բևր, որ փոխառյալ է պահլավերենից՝ bēvār։ Հայերենի միջնորդությամբ բառս անցել է և վրացերենին՝ ბევრი, պահպանելով հայերենի վաղ արտասանությունը։

[4] Հունարենում բյուրի ցուցիչ տառանիշի վրա գրվող երկու կետն է՝ ä—10000։

[5] Այդ նշանը հայկական տառի վրա դնելիս նրա թվական նշանակությունը չորս գրոյով մեծանում է։ Այդ հաշվով, հայկական այբուբենի տառերը ստանում են թվական նոր նշանակություն. օրինակ՝ 6.874.528 թվանշանը հայկական տառանշաններով գրվել են Ո̂Ձ̂Է̂ՏՇԻԸ, 80.024-ը՝ Ը̂.ԻԴ, 1.001.000-ը, Ռ̂.Ռ. և այլն։

սար է ոչ թե 20-ի, այլ՝ 11-ի, «Լ»-ն՝ ոչ թե 30-ի, այլ՝ 12-ի, «Խ»-ն՝ ոչ թե 40-ի, այլ՝ 13-ի, «Ծ»-ն՝ 14-ի, «Կ»-ն՝ 16-ի, «Հ»-ն՝ 17-ի, «Ձ»-ն՝ 18-ի, «Ղ»-ն՝ 19-ի և այլն։ Այսպիսի օրինակ ունենք վերևում հիշված Մլքե թագուհու ձեռագրում։

Դասական թվանշանները կազմվում են սովորական պատվագրված թվանշանների վրա «րորդ» կամ հապավված «րրդ» վերջավորության ավելացումով. օրինակ՝ .Ա.ր̅ր̅դ̅, .Բ.ր̅ր̅դ̅, .Գ.ր̅ր̅դ̅. .Դ.ր̅ր̅դ̅, .Ե.ր̅ր̅դ̅, .Զ.ր̅ր̅դ̅, Է.ր̅ր̅դ̅. .Ը.ր̅ր̅դ̅, .Ժ.ր̅ր̅դ̅ և այլն։ Շիրակացու խնդրագրքում «հասարակ» բառը գործ է ածվել կեսի համար, «երևորը»՝ մեկ երրորդի, «չորևորը»՝ մեկ քառորդի և «ամենայնը»՝ գումարի։

Համարական և ոչ համարական թվերում, 11-ից մինչև 19-ը, հակառակ գոյություն ունեցող օրենքի, միավորները տասնավորներից առաջ են գրվում, որ պայմանավորված է գրաբարյան արտասանությամբ՝ մեկտասաներորդ, երկտասաներորդ և այլն. Ա̅Ժ̅-ան (11), Բ̅Ժ̅-ան (12), Գ̅Ժ̅-ան (13), Դ̅Ժ̅-ան (14), Ե̅Ժ̅-ան (15), Զ̅Ժ̅-ան (16), Է̅Ժ̅-ան (17), Ը̅Ժ̅-ան (18), Թ̅Ժ̅-ան (19)։ Այդ սկզբունքով Բ̅Ժ̅.աներրդ, Գ̅Ժ̅.աներրդ, Դ̅Ժ̅.աներրդ, Ե̅Ժ̅.աներրդ, Զ̅Ժ̅.աներրդ, Է̅Ժ̅.աներրդ. Ը̅Ժ̅. աներրդ, Թ̅Ժ̅.աներրդ։ Սակայն կան տեքստեր, ուր նախ տասնավորն է գրվում, ապա՝ միավորը։

Հայկական գրչագրերում հանդիպում է նաև մի համարիչ ունեցող պարզ կոտորակների գործածություն։ Նման կոտորակներ կան Շիրակացու թվաբանության դասագրքում և «Աշխարհացոյց»-ի մեջ։ Կոտորակի նշանակությամբ գործածված թվանշանի վրա դրվում է թավի նման մի նշան (շատ նման բույրի ցուցչին, միայն այն տարբերությամբ, որ այդ նշանը դրվում է ոչ թե տառի վերին աջ կողմից, այլ՝ ձախից)։ Շիրակացու թվաբանության խնդրագրքի 2Հ-րդ խնդրի պատասխանը՝ $7\frac{3}{11}$, *գրվել է հետևյալ ձևով. Է̅, ˄Ե, ˄Ի, ˄ԽԴ, այսինքն՝ 7 գումարած մեկ հինգերորդ, գումարած մեկ քսաներորդ, գումարած մեկ քառասունչորսերորդ, հավասար է 7 ամբողջ երեք տասնմեկերորդի* ($7+{}^1/_5+{}^1/_{20}+{}^1/_{44}=7{}^3/_{11}$)[6]։

Կա մի ուրիշը. $9\frac{1}{11}$*-ը գրվել է Թ̅, ˄ԺԱ։*

«Աշխարհացոյց»-ում հանդիպում ենք այսպիսի մի հատվածի. «Բայց աղաչափութեամբ երկրաչափութեան մասն՝ հինգ հարիւր ասպարէզ՝ ի լայնն եւ նոյնչափ երկայնն չորեքկուսի, որպէսզի լինել մասինն եւթանասուն եւ մի մղոն, չորեք, եւթն, քսան եւ ութ»[7]։ Այստեղ տրված 71, ${}^1/_4$, ${}^1/_7$, ${}^1/_{28}$ *մի համարիչավոր կոտորակով, որը հավասար կլինի* $71{}^3/_7$*-ի։ Մատենադարանի ձեռագրերից մեկում ընդօրինակված է կեսի նշանակությամբ Ը-ի գործածության մի աղյուսակ։*

---

[6] Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 231։

[7] Նույն տեղում, էջ 338։

«Ժ	(C) Ե	(իմա՛ 10 : 2=5-ի)
ԺԱ	(C) ԵC	(11 : 2=5 $^1/_2$-ի)
ԺԲ	(C) Զ	(12 : 2=6-ի)
ԺԳ	(C) ԶC	(13 : 2=6 $^1/_2$-ի)
ԺԴ	(C) Է	(14 : 2=7-ի)
ԺԵ	(C) ԷC	(15 : 2=7 $^1/_2$-ի)»[1]։

Միավոր թիվը հայ մատենագրության մեջ գրվում է մի քանի ձևով— «մէջ», «մէնձ», «եզ», «մուս»։

Գումարման, հանման, բազմապատկման և բաժանման գործողությունների նշաններ հայկական մատենագրության մեջ չեն գործածվում։ Շիրակացու թվաբանության դասագրքից բերենք չորս գործողություններից մեկական օրինակ։

Գումարումը կամ ինչպես հնում կոչվել է՝ «ընդունելություն»-ը («ընդունել» է կոչվել մի թիվը մյուսի վրա ընդունելու, գումարելու իմաստով), կատարվել է հետևյալ ձևով.

Ա Ա Բ	1+1= 2	Բ Բ Դ	2+ 2= 4
Ա Բ Գ	1+2= 3	Բ Գ Ե	2+ 3= 5
Ա Գ Դ	1+3= 4	Բ Դ Զ	2+ 4= 6
Ա Դ Ե	1+4= 5	Բ Ե Է	2+ 5= 7
Ա Ե Զ	1+5= 6	Բ Զ Ը	2+ 6= 8
Ա Զ Է	1+6= 7	Բ Է Թ	2+ 7= 9
Ա Է Ը	1+7= 8	Բ Ը Ժ	2+ 8=10
Ա Ը Թ	1+8= 9	Բ Թ ԺԱ	2+ 9=11
Ա Թ Ժ	1+9=10	Բ Ժ ԺԲ	2+10=12, և այլն։

Հանումը կամ ինչպես հնում կոչվել է՝ «բացատրություն»-ը կամ «բացերթություն»-ը, կատարվել է հետևյալ ձևով.

Ա Բ Ա 1-ը հանած 2-ից=1-ի
Ա Գ Բ 1-ը հանած 3-ից=2-ի
Ա Դ Գ 1-ը հանած 4-ից=3-ի
Ա Ե Դ 1-ը հանած 5-ից=4-ի
Ա Զ Ե 1-ը հանած 6-ից=5-ի
Ա Է Զ 1-ը հանած 7-ից=6-ի
Ա Ը Է 1-ը հանած 8-ից=7-ի
Ա Թ Ը 1-ը հանած 9-ից=8-ի
Ա Ժ Թ 1-ը հանած 10-ից=9-ի

Բազմապատկումը կատարվել է հետևյալ ձևով.

Ա Բ Բ	1×2= 2	Ժ Բ Ի	10×2= 20
Բ Բ Դ	2×2= 4	Ի Բ Խ	20×2= 40
Գ Բ Զ	3×2= 6	Լ Բ Կ	30×2= 60
Դ Բ Ը	4×2= 8	Խ Բ Ձ	40×2= 80
Ե Բ Ժ	5×2=10	Ծ Բ Ճ	50×2=100
Զ Բ ԺԲ	6×2=12	Կ Բ ՃԻ	60×2=120
Է Բ ԺԴ	7×2=14	Հ Բ ՃԽ	70×2=140
Ը Բ ԺԶ	8×2=16	Ձ Բ ՃԿ	80×2=160
Թ Բ ԺԸ	9×2=18	Ղ Բ ՃՁ	90×2=180

---

[1] ՄԱՄ ձեռ. № 1973, թ. 108բ։

Հայկական ձեռագրերում պատահում են և բազմապատկման աղյուսակներ, որոնցից մեկը բերել ենք Շիրակացու մատենագրությունից[9]։

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
Բ	Դ	Զ	Ը	Ժ	ԺԲ	ԺԴ	ԺԶ	ԺԸ
Գ	Զ	Թ	ԺԲ	ԺԵ	ԺԸ	ԻԱ	ԻԴ	ԻԷ
Դ	Ը	ԺԲ	ԺԶ	Ի	ԻԴ	ԻԸ	ԼԲ	ԼԶ
Ե	Ժ	ԺԵ	Ի	ԻԵ	Լ	ԼԵ	Խ	ԽԵ
Զ	ԺԲ	ԺԸ	ԻԴ	Լ	ԼԶ	ԽԲ	ԽԸ	ԾԴ
Է	ԺԴ	ԻԱ	ԻԸ	ԼԵ	ԽԲ	ԽԹ	ԾԶ	ԿԳ
Ը	ԺԶ	ԻԴ	ԼԲ	Խ	ԽԸ	ԾԶ	ԿԴ	ՀԲ
Թ	ԺԸ	ԻԷ	ԼԶ	ԽԵ	ԾԴ	ԿԳ	ՀԲ	ՁԱ

Բաժանումը կատարվել է հետևյալ ձևով.

Ա Ց Ց—1-ը՝ 6000 անգամ պարունակվում է 6000-ի մեջ.

Բ Վ Ց—2-ը՝ 3000 անգամ պարունակվում է 6000-ի մեջ.

Գ Ս Ց—3-ը՝ 2000 անգամ պարունակվում է 6000-ի մեջ.

Ե ՌՄ Ց—5-ը՝ 1200 անգամ պարունակվում է 6000-ի մեջ.

Զ Ռ Ց—6-ը՝ 1000 անգամ պարունակվում է 6000-ի մեջ.

Է ՊԾԷ Ց—7-ը՝ 857 անգամ (կլոր թվով) պարունակվում է 6000-ի մեջ.

Ը ՉԾ Ց—8-ը՝ 750 անգամ պարունակվում է 6000-ի մեջ.

Թ ՈԿԵ Ց—9-ը՝ 665 անգամ (կլոր թվով) պարունակում է 6000-ի մեջ։

Հայոց մոտ թվահաշիվը բյուրով չի վերջացել։ Գոյություն են ունեցել բյուրից շատ ավելի մեծ թվեր և նրանց համապատասխան անուններ։ Տասը հազար բյուրը կոչվել է գունդ, *տասը հազար գունդը՝* ավագ գունդ, *տասը հազար ավագ գունդը՝* արքա գունդ *և տասը հազար արքա գունդը՝* կայսր գունդ։ *Այդ թվանշանները, մեր ներկա հաշվով, կարելի է արտահայտել հետևյալ ձևով.*

10.000—բյուր
100.000.000—գունդ
1.000.000.000—ավագ գունդ
10.000.000.000.000.000—արքա գունդ
100.000.000.000.000.000.000—կայսր գունդ։

Պահվել է Մարտիրոս Ղրիմեցու մի հետաքրքիր բանաստեղծությունը՝ նվիրված թվերի վերոբերյալ հաշվին։ Ինչպես երևում է, Մարտիրոս Ղրիմեցին թվերի մեծության մասին վեճ է ունեցել Պետրոս Ագուլիսեցու հետ և այդ կապակցությամբ անհրաժեշտ է համարել գրել մի բանաստեղծություն, որը մաթեմատիկայի պատմության մեջ որոշ հետաքրքրություն է ներկայացնում։

---

[9] Ա. Աբրահամյան, *Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 221։*

«Իմաստնալի յուշիմ եղբայր,
Զգերեալս ընկաւ խոհեմաբար։
Անցեալ աւուրք բանք վիճաբար,
Զոր առարկաւ քննողաբար։
Զբիւրն որ ասաք, տասըն հազար,
Է՛ ստուգի ծերունեաց շար։
Քառորդ կրկնեալ նոյնքան հազար,
Նա բոլորի մին գունդ ճարտար։
Նոյնագունակ իսկ և յարմար,
Ըզգունդն աւագ տեսցուք ի շար։
Զի սա ունի զերկրորդըն դար,
Երկոտասան կէտից համար։
Իսկ գունտն արքայ դիմեաց ի սար,
Որոյ շաւղի ելքն է դժուար։
Գահաւանդակ յերրորդըն դար,
Վեշտասան կետ սորայն ի շար։
Յետ այսորիկ զօրեղաբար,
Կայսրըն խմբիւք բազմահամար։
Հզօրօք դիմեալ ելնէ ի ծայր,
Քսան համար կէտն որ ի շար։
Ներհունք ոգեն մինչև ցայս վայր.
Թիւ համարոյ դասիլ ի շար։
Քան զայս ասելն է բռնաբար,
Առ որս հասումն ասեն դժուար[10].
Քան զայս աւելին է բռնաբար,
Առ որս հասումն ասեն դժուար»[11]։

Հնատիպ գրականության մեջ մեկ-մեկ պատահում են և հռոմեական թվանշաններ։ Հռոմում, Վենետիկում, Վիեննայում և, ընդհանրապես, Արևմտյան Եվրոպայի գաղթավայրերում հրատարակված գրքերի հրատարակության թվականները, սովորաբար, նշվում են հռոմեական թվանշաններով։ Վերջիններս արաբականի հետ հարաբերվում են հետևյալ ձևով.

I	1	L	50
II	2	LX	60
III	3	LXX	70
IV	4	LXXX	80
V	5	XC	90
VI	6	C	100
VII	7	CC	200
VIII	8	CCC	300
IX	9	CD	400
X	10	D	500
XX	20	DC	600
XXX	30	DCC	700
XL	40	DCCC	800
CM	900	LM	50.000
M	1.000	LXM	60.000
IIM	2.000	LXXM	70.000
IIIM	3.000	LXXXM	80.000
IVM	4.000	XCM	90.000
VM	5.000	CM	100.000
VIM	6.000	CCM	200.000
VIIM	7.000	CCCM	300.000
VIIIM	8.000	CCCCM	400.000
IXM	9.000	DM	500.000
XM	10.000	DCM	600.000
XXM	20.000	DCCM	700.000
XXXM	30.000	DCCCM	800.000
XLM	40.000	DCCCCM	900.000
		MM	1.000.000

---

[10] ՄԱՄ ձեռ. 1495, թ. 138ա։

[11] ՄԱՄ ձեռ. 1495, թ. 138ա։ Նույն ձեռագրում ուշ շրջանի մեկնիչներից մեկն անհրաժեշտ է համարել ավելի կոնկրետ նշել թվերից յուրաքանչյուրի մեծությունը «Ծանի՛ք, ո՛վ սիրեցեալք

VI. ՏՈՄԱՐ

Որևէ դեպքի մասին խոսելիս անհրաժեշտ է լինում պարզել ոչ միայն տվյալ իրադարձության վայրը, այլև՝ ժամանակը։ Այն գիտությունը, որը խնդիր է դնում իր առջև զբաղվելու ժամանակի հետ կապված հարցերի լուսաբանությամբ, հայ մատենագրության մեջ հայտնի է «տոմար» կամ «տումար» անունով[1]*։*

Ժամանակի չափումների նախնական հասկացողությունը մարդկանց մոտ առաջացել է այն ժամանակներում, երբ նրանք առաջին անգամ ոտք են դրել իրենց զարգացման գիտակցական շրջանը, հիմք դրել տնտեսությանը և զբաղվել անասնապահությամբ ու հողագործությամբ։

Իր պատմության արշալույսին հանդես եկող մարդու առաջին ժամանակի չափանիշը ցերեկն ու գիշերն է հանդիսացել. իրար հաջորդող աշխատանքային ցերեկը և հանգստի գիշերը, փաստորեն, նախնադարյան մարդու առաջին օրացույցն է եղել։

Զարգացման համեմատաբար բարձր աստիճանում մարդիկ սկսել են ժամանակը չափել լուսնի պարբերաշրջաններով. տեսնելով լուսնի նորելու և կլորելու հաջորդականությունը՝ լուսինն են վերցրել հիմք և նրանով չափել ժամանակը։ Անհավանական չէ, որ հնագույն շրջանում լուսնական տոմարով առաջնորդված լինեն և Հայաստանում։ Հօգուտ դրա է խոսում Շիրակացու մի ակնարկը լուսնի պարբերաշրջանների մասին. «Տեսանելով առաջնոցն զլուսինն լցեալ և մաշեալ, իմացան զանցաւորութիւն կենաց իւրեանց և ասացին թէ՝ է մեզ պատկեր»[2]*։ Այդ ենթադրությունն ավելի քան հավանական է,*

մեր ի տէր,—գրում է մեկնիչը,—զի ԺՌ-ն մէկ բիւր է, և տասն հազար բիւրն մէկ գունտ է, և տասն հազար գունտն մէկ տասգ գունտ է։ Տասն հազար տասգ գունտն մէկ արքայ գունտ է։ Եւ տասն հազար արքայ գունտն մէկ կայսր գունտ է։ Ամենայն համարողութիւն մինչև ցայս վայր երթայ։ Ով ուսումնասէր եղբայր, թէ կամենաս յայս նրբահայեաց և խորիմաստ արհեստի ձեռն արկանել, որ է մայր ամենայն թուոց, մի ամաչեր, գնա ի մօտ վարդապետաց և ուսիր։ (թ. 138ա)։

[1] *Մեզանում երբեմն շփոթում են «տոմար»՝ ժամանակագրություն, և «տումար»՝ թուղթ, ուղերձ հասկացությունները։*

[2] Անանիա Շիրակացի, *Տիեզերագիտություն և տոմար, Երևան, 1940, էջ 76։*

եթե նկատի ունենանք, որ հայկական քանդակներում, արեգակի հետ միասին փորագրված է լինում լուսնի պատկերը, որը, հավանաբար, հեթանոսական հին ավանդույթի վերապատկերումն է քրիստոնեական քանդակներում։ Ենթադրություններ են եղել, որ լուսնային ամիսները որոշ ժամանակաշրջանում գործ են ածվել տարեթվի նշանակությամբ[3]*։*

Ժամանակի ընթացքում լուսնական տարիները մարդիկ սկսել են կապել տարվա եղանակների հետ՝ տարեմուտ ընդունելով գարնանամուտը և թվարկելով լուսիններն ըստ հաջորդականության՝ առանց ամիսներին անուններ տալու։ Այս մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Շիրակացին. «...ամսոց անուանք ոչ գոյր, բայց միայն զառաջին լուսինն զգարնան առաջին լուսին անուանէին, և զկնի՝ երկրորդ լուսին, և երրորդ, չորրորդ՝ մինչև ցերկոտասաներորդն, և զողջոյն ամն այսպիսի անուամբ վարէին մինչև ի մուտն գարնանային»[4]*։ Հետագայում, սակայն, սկսում են լուսնական ամիսներին անուններ տալ և նրա հիման վրա կազմել լուսնային կոչվող տոմարը։ Միջին դարերում այդ տոմարով են առաջնորդվել մի շարք ժողովուրդներ։ Ներկայումս Մերձավոր Արևելքի մի շարք ժողովուրդներ ևս առաջնորդվում են լուսնական այդ տոմարով*[5]*։*

Լուսնական տասներկու ամիսների վրա ստեղծված տարին արեգակնային աստղաբաշխական ճիշտ տարուց պակաս է մոտ 11 օր. ճշգրիտ հաշվումներով լուսնական տարին ունի 354 օր, 8 ժամ, 48 րոպե, 34 վայրկյան, իսկ արեգակնային տարին՝ 365 օր, 5 ժամ, 498 րոպե և 46 վայրկյան տևողություն։

Տոմարի պատմության մեջ խոշոր բարեփոխություններից մեկը կապված է Հուլիոս Կեսարի անվան հետ, որի հանձնարարությամբ եգիպտացի տոմարագետ Սոզիգենեսը 46 մ. թ. ա. կազմել է արեգակնային կոչվող անշարժ տոմարը։ Սոզիգենեսը տարվա տևողությունն ընդունել է կլոր 365 և մեկ քառորդ օր։ Քանի որ հնարավոր չէր ամեն տարվա համար հաշվի առնել մեկ քառորդ օրերը, ուստի չորս տարվա ընթացքում մեկ քառորդ օրերը հավաքելով դրվել է փետրվար ամսվա վրա՝ 28 օրը դարձնելով 29։ Ընդունված է փետրվարը 29 օրից բաղկացած այդ տարին կոչել «նահանջ», իսկ մյուս երեք տարիները՝ «հասարակ»։ Հուլյան տոմարով տարվա ամանորը սահմանվել է հունվարի մեկը։

---

[3] *Այդ մասին Լ. Սեմյոնովը գրում է. «...Հնում լուսնի ամիս ասած գաղափարը համարժեք էր համարվում մեկ տարվա գաղափարին, և մարդկանց տարիքը հաշվում էին լուսնի ամիսներով։ Դրանով պիտի բացատրել Ս. Գրքում բերված տվյալներն այն մասին, որ այսինչ նահապետն ապրել է 969 տարի, այլ կերպ ասած՝ 969 լուսնային ամիս կամ մեր այժմյան հաշվով՝ մոտ 70—72 տարի։ Ինչպես տեսնում ենք, 70—72 տարին այնքան էլ մեծ տարիք չէ և շատ ու շատ սխալ է այն կարծիքը, որ հնում մարդիկ եղել են «երկարակյաց»։* **Լ. Սեմյոնով.** *Ամանոր (տե՛ս «Էջմիածին», 1953 թ., հունվար, էջ 26)։*

[4] **Անանիա Շիրակացի**, *Տիեզերագիտություն և տոմար, էջ 76:*

[5] *Նրանց համահավաք հրատարակությունն ու համեմատության տախտակները տե՛ս* **В. В. Цыбульский**, Современные календари стран Ближнего и Среднего Востока, М., 1964:

[6] *Արեգակնային և լուսնական տարիների այս տարբերություններն առաջին անգամ նկատել են եգիպտական աստղաբաշխները, որոնք խնդիր ունեին պարզելու Նեղոսի վարարման ժամանակը, որը տեղի է ունենում Սիրուս փայլուն աստղի երկնակամարում երևալու հետ (լինում է ամառնամուտին՝ հուլիսի 21-ի գիշերը)։ Այդ գիշերը եգիպտացիները համարում էին «արցունքի գիշեր»։ Ըստ հին եգիպտական ավանդության, Իզիդա աստվածուհին իբրև թե այդ գիշեր լաց է լինում իր եղբոր Օզիրիսի կորուստը, որին արկղի մեջ էր դրել և ջուրը նետել չարամիտ Սեթ աստվածը։ Լաց եղած ժամանակ Իզիդայի արցունքն ընկնում է Նեղոս գետի մեջ, գետը վարարում է և Եգիպտոսին բերում արգավանդ տիղմ։*

Թե ե՞րբ է սկիզբ առել հայկական տոմարը, դժվար է ասել։ Հին աղբյուրները լռում են այդ մասին։ Խորենացու մի տեղեկությունից գիտենք միայն, որ հայոց Արտաշես թագավորը (189—160 մ. թ. ա.) հատուկ ուշադրություն է դարձրել մի շարք գիտությունների զարգացմանը, այդ թվում նաև՝ տոմարագիտության։ Մինչև Արտաշես թագավորը, գրում է Խորենացին, «...մեծամեծ ստրուկտից և ի գիտութեանց ունայնացեալք էին, որպէս հինից և ապատակաց պարապեալք, և այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք, և կամ ոչ հասեալք. զշաբաթուց ասեմ, և զամսոց, և զտարեաց բոլորմանց... Եւ այս ամենայն յօրինի յաւուրս Արտաշիսի»[7]։

Ավանդությունը հայկական տոմարի սկիզբը կապում է Հայկ նահապետի Բելի դեմ տարած հաղթանակի հետ։ Ըստ մի այլ ավանդության, որը գրի է առել Անանիա Շիրակացին, «Նաւասարդի, Հոռի, Սահմի և Մահեկի, Արեգի և Մարերի՝ դըստերք էին Հայկին, Տրէ, Քաղոց, Արաց և Հրոտից՝ որդիք էին Հայկին»[8]։ Այդ ավանդությունը կրկնում է նաև Հովհաննես Իմաստասերը. «Հայկն՝ առաջին Նահապետն Հայոց, զամիսքդ կարգեաց և զանուանս ուստերաց և դստերաց իւրոց ամսոցդ կոչեաց»[9]։

Ալիշանը փորձել է պարզել այդ իրադարձության թվականը՝ համարելով այն 2492 մ. թ. ա.։ Իր հաշվումների համար նա հիմք է վերցրել «սոթիսի» կամ «հայկական» կոչվող երկու պարբերաշրջանների խառդարձ հաշվումը[10]. վերցնելով 428 թ.՝ այն տարեթիվը, երբ հայկական շարժական ամանորը եղել է օգոստոսի 11-ը, նրանից դուրս է հանել առաջին պարբերաշրջանը (1460-ը), ստացել է 1033 մ. թ. ա., ապա հանել է երկրորդ պարբերաշրջանը, ստացել է 2492, որը և համարել է հայկական տոմարի թվականության սկիզբը՝ կապված Հայկի՝ Բելի դեմ տարած հաղթանակի հետ։

Իր հաշվարկումը համոզեցուցիչ դարձնելու նպատակով, Ալիշանը վկայակոչել է Ափրիկանոսին և Եվսեբիոս Կեսարացուն, որոնց հաշիվներով Բելի սպանությունը իբրև թե տեղի է ունեցել 2492 մ. թ. ա.[11]։ Ահա այս երկու փաստերի հիման վրա նա եկել է հետևյալ եզրակացության. «Ափրիկանոս և Եւ-

---

[7] **Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*, էջ 188։

[8] **Անանիա Շիրակացի**, *Տիեզերագիտություն և տոմար*, էջ 76—77։

[9] **Ա. Գ. Աբրահամյան**, *Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը*, Երևան, 1956, էջ 224։

[10] Հին եգիպտացիները տարին ընդունում էին 365 օրից՝ բաց թողնելով հուլյան տոմարի հավելյալ ¼ օրերը, որի պատճառով սոթիսի հելիոտիկ ծագումը չորս տարվա ընթացքում մեկ օրով առաջ էր շարժվում։ Բաց թողված այդ օրերից 1460 տարիների ընթացքում առաջանում էր մի նահանջ տարի, որը և դուրս էին թողնում հաշվումից։ Տարվա նահանջ քառորդներից ստեղծված այդ տարին աստղագիտության մեջ կոչվում է «ապոկատաստազայինի» տարի։

[11] Հայկի՝ Բելին սպանելու այս ավանդական թվականը միջին դարերում հիմք է ծառայել մի նոր թվականի, որը հայ մատենագրության մեջ հայտնի է «**Թուին բնական Հայոց**» կամ ուղղակի «**Հայկեան թուականն**» անունով։ Այդ թվականի օգտագործման ժամանակ վերցվում են 2492—2493 թվականները (նկատի է առնվում, որ հայկական թվականը տեղադրված է եղել երկու տարիների մեջ) և վրան ավելացվում քրիստոնեական այն թվականը, որը թվագրվում էր։ Այդ հաշվումով, 1971 թ., օրինակ, Հայկյան թվականով կլինի 4463—4464 թթ. (2492—2493+ +1971=4463—4464)։

սերիոս իրենց մանրամասն թիւերովը Բելայ թագաւորութեան վերջը կը նշանակեն վերոյիշեալ 2492 տարին Քրիստոսէ առաջ։ Այս համաձայնութիւնքս Հայկական թուականին և օտար ժամանակագրաց տուած թուականին հետ, և վկայութիւնք մեր տոմարագրաց և յայսմաւուրաց, կարծեմ բաւականապէս իրաւունք կու տան մեզի առանց տարակուսի ընդունելու Հայկայ շրջանին և մեր ազգութեան սկիզբը՝ Քրիստոսէ առաջ 2492 տարին»[12]։

Հայկական տոմարի սկզբնավորության մասին հին ավանդությունների գիտական հիմնավորում տալու Ալիշանի այս փորձը համոզեցուցիչ չէ թեկուզ այն պատճառով, որ հին հայկական թվականի սկիզբը, ինչպես կտեսնենք հետո, ոչ թե 428-ն է եղել, որ ելման կետ է ծառայել Ալիշանի համար, այլ 353 թվականը։ Բացի այդ, հայկական մեծ թվականի առաջին տարին շարժական տոմարով եղել է ո՛չ թե օգոստոսի 11-ը, այլ՝ օգոստոսի 29-ը։ Չենք խոսում դեռ այն մասին, որ երրորդ հազարամյակում մ. թ. ա. հայ ժողովուրդը դեռ էթնիկապես չէր կազմավորվել, իսկ ՇԼԹ պարբերաշրջանը կազմվել և առաջին անգամ գործածության մեջ է դրվել 561 թվականին՝ Աղեքսանդրիայում գումարված աստղագետների ժողովի սահմանումից հետո։

Մեզ հասած տոմարական պատառիկների ուսումնասիրությունից երևում է, որ հին հայկական հեթանոսական տարվա ամանորը եղել է գարնան գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ին։ Այդ օրը նվիրված է եղել հայր աստծուն՝ Արամազդին։ Ժողովուրդը մեծ շուքով, փողերի ու թմբուկների նվագակցությամբ է տոնել հայր աստծու տոնը[13]*։ Ամանորի տոնը կոչվելիս է եղել «Ամենաբեր պտղոց»*[14]*։*

Որ իրոք հին հայկական ամանորը եղել է մարտի 21-ին, այդ մասին է վկայում թանկարժեք տոմարական մի պատառիկ, որը մնացել է Մատենադարանի № 1999 ձեռագրում։ Այնտեղ հին հայկական ամիսները զուգավորության մեջ են դրված հռոմեական ամիսների հետ։ Այդ զուգադիր բնագրի վերնագիրն է «Ամիսք Հայոց և Հռոմի հանդէպ միմեանց»։ Համադրությունը սկսում է նավասարդից. **«Նաւասարդի, որ է մարտի, Հռոմի՝ ապրիլի...»:** *Վեր-*

---

[12] **Ղ. Ալիշան,** *Հայկայ շրջան. հին հայոց տոմար և թուական Հայադիր (տե՛ս «Յուշիկք հայրենեաց Հայոց», հ. Ա, էջ 95—96)։*

Ալիշանի այս տեսակետը պաշտպանել է նաև պրոֆ. Լ. Լ. Սեմյոնովը իր «Հայկյան տոմարի մի քանի հարցերի մասին» հոդվածում (տե՛ս Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու», հ. Ա, էջ 19—30)։

[13] *Այս կապակցությամբ ուշագրավ է Ն. Ակինյանի «Հայոց եկեղեցական տարին յոթներորդ դարու սկիզբը» վերնագրով հոդվածը, որը տպագրվել է «Հանդէս ամսօրեայ»-ի 1947 թվականի համարում, էջ 65—77, 171—179, 230—236, 358—394։*

[14] *Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 1272 ձեռագիրը (1290 թ. գրչությամբ) պահպանել է մի տեղեկություն հայկական հեթանոս մի քանի տոների ժամանակի մասին. «Ի Նաւասարդի Ա. ն (մեկին) տօնէին Արամազդա և ի ԺԵ-ն (15)՝ Անահտա, և ի սահմի. յեւթն տօնէին Վահեան և Վահագնի, եւ յամառնային ժամանակս տօնէին Ափրոդիտէ ...»։ Այնուհետև բերվում է մի ավանդություն, թե ինչպես է առաջացել վարդավառ անունը։ Արամազդի հայրն էր հանդիսանում Կրոնոսը, ասվում է այդ ավանդության մեջ։ Արամազդը կասկածել է, թե հայրը կարող է ունենալ երկրորդ որդի, որը մեծանալով մրցակից կարող է լինել իրեն, ուստի նա սպանում է իր երկվորյակին և գցում ծովը։ Թափված արյունից ծովը փրփրում է։ Սպիտակ ծովից ծնվում է Ափրոդիտեն։ Սա ծովից դուրս գալուց հետո «..առէին, թէ ընդ որ անցանէր և ընթանայր, յընթացիցն արիւն բղխանէր յոտից նորա, և վարդ ու մուրտ բուսանէր... հեթանոսական սովորութիւնն զատանն նոր Վարդավառ անուանէին, և զվարդ նմա ընձայ մատուցանէին» (տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. 4-րդ, էջ 452)։*

չանում է. «Հրոտից՝ փեպրուարի»[15]։ Ամանորի՝ մարտ ամսին զուգադիպելը երևում է նաև հայկական ամսանուններից, որոնք կապված են կամ տարվա եղանակների և կամ գյուղատնտեսական աշխատանքների հետ։ Ըստ որում, քաղոց ամիսը, որը հայկական հինգերորդ ամիսն է, համընկնում է հուլիս ամսվա հետ, երբ իրոք տեղի է ունենում քաղը[16]։

Ենթադրվում է, որ հայերը հեթանոսական շրջանում, հույների և հռոմայեցիների նման, շաբաթվա յոթ օրերը անվանում էին արեգակի, լուսնի և հինգ մոլորակների անուններով.

Արեգակի օր—կիրակի,
Լուսնի օր—երկուշաբթի,
Հրատի օր—երեքշաբթի,
Փայլածուի օր—չորեքշաբթի,
Լուսնթագի օր—հինգշաբթի,
Արուսյակի օր—ուրբաթ,
Երևակի օր—շաբաթ[17]։

Հարց է առաջանում, Հին Արևելքում և անտիկ աշխարհում քաղաքացիություն ստացած արեգակնային տոմարն ինչ ձևափոխություններով է գործածության մեջ գտնվել հեթանոսական Հայաստանում։ Այս հարցին դժվար է այժմ անվերապահ պատասխանել, որովհետև հնում տոմարը գտնվել է քրմական դասի ձեռքին, իսկ քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնական կրոն ճանաչվելուց հետո ասպարեզից դուրս եկան ո՛չ միայն քրմական դասը, այլև՝ նրանց գործածած տոմարը։

Մեզ հասած կցկտուր տեղեկություններից երևում է, որ հեթանոս հայերը, պարսիկների և եգիպտացիների նման, ունեցել են ոչ թե 12 ամիս, այլ՝ 13, որից 12-ը կլոր երեսնական օրով, իսկ մեկը՝ հինգ օրով։ Հայկական ամիսներն ունեցել են հետևյալ անունները.

1. Նավասարդի—30 օր
2. Հոռի—30 օր
3. Սահմի—30 օր
4. Տրե—30 օր
5. Քաղոց—30 օր
6. Արաց—30 օր
7. Մեհեկի—30 օր
8. Արեգի—30 օր
9. Ահեկի—30 օր
10. Մարերի—30 օր
11. Մարգաց—30 օր
12. Հրոտից—30 օր
13. Ավելյաց—5 օր

Ուշադրության արժանի է, որ հայկական տոմարում անուններ են ունեցել ոչ միայն ամիսները, այլև ամսվա բոլոր օրերը։ Ստորև բերում ենք նրանց անունները.

---

[15] ՄԱՄ ձեռ. № 1999, թ. 26ա։

[16] Հին հայկական ամանորի մասին ուշագրավ է պատմական գիտությունների թեկնածու Ա. Օղաբաշյանի «Նոր տարվա տոնակատարության ժամանակի հարցի շուրջը» հոդվածը (տե՛ս ՊԲՀ 1963 թ., № 2, էջ 275—280)։

[17] **Գ. Ազանյանց.** Տոմար և տոնացոյց Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ Հայոց թեմական դպրոցների և Հայ եկեղեցւոյ պաշտօնեաների համար, Վաղարշապատ, 1890, էջ 19։

1. Արեգ
2. Հրանդ
3. Արամ
4. Մարգար
5. Ահրանք

6. Մազդեղ
7. Աստղիկ
8. Միհր
9. Ձոպաբեր
10. Մուրց
11. Երեզկան
12. Անի
13. Պարխար
14. Վանատ
15. Արամազդ

16. Մանի
17. Ասակ
18. Մասիս
19. Անահիտ
20. Արագած
21. Գրգոռ
22. Կորդուիք
23. Ծմակ
24. Լուսնակ
25. Ցրոն

26. Նպատ
27. Վահագն
28. Սէին
29. Վարագ
30. Գիշերավար[18]

Հայկական ամսօրերից ամեն մեկը նվիրված է եղել հայկական պանթեոնի աստվածներին՝ Արեգ, Աստղիկ, Միհր, Անահիտ և կամ սրբազան համարված վայրերին՝ Անի, Պարխար, Մասիս, Արագած և այլն[19]։

Հին հայկական տոմարում իրենց առանձին անուններն են ունեցել օրվա 24 ժամերը[20]։

Գիշերային ժամեր

1. Խաւարականն
2. Աղջամուղջն
3. Մթացեալն
4. Շաղաւոտն
5. Կամաւոտն
6. Բաւականն
7. Հաւթափեալն
8. Գիզակն
9. Լուսաճեմն
10. Առաւօտն
11. Լուսափայլն
12. Փայլածումն

Ցերեկային ժամեր

1. Այգն
2. Ծայգն
3. Զօրացեալն
4. Ճառագայթեալն
5. Շառաւիղեալն
6. Երկրատեսն
7. Շանթակալն
8. Հրակաթն
9. Հուրթափեալն
10. Թաղանթեալն
11. Առաւարն
12. Արփողն[21]։

Միջին դարերում Հայաստանում սովորություն է եղել ժամը բաժանել 30 մասի, իսկ լուսնային մասը բաժանել հինգ մասի։ Այդ երևում է Շիրակացու՝

---

[18] Տե՛ս Ղ. Ալիշան, Հին հաւատք Հայոց, 1910, էջ 157—158։

[19] Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերում մեզ չհաջողվեց հայտնաբերել այս բնագրի որևէ ընդօրինակություն։ Մենք չկարողացանք նաև պարզել՝ թե ի՞նչ ձեռագրից է հրատարակված այս բնագիրը և ի՞նչ հնություն է ունեցել այն։

[20] Օրվա սկզբնավորության ժամանակի վերաբերյալ մեծ բանավեճեր են եղել միջին դարերում՝ եկեղեցական տոների կապակցությամբ (տե՛ս Հ. Անասյան. Զեյ և ուրբաթագեյ «Լրաբեր», 1969, № 8, էջ 78—81)։ Շիրակացու ժամանակ օրվա սկիզբը համարվել է լուսաբացը, այդպես էլ դասակարգված են նրա ցերեկային և գիշերային ժամերը։ Սակայն կան հայկական տոմարական բնագրեր, ուր օրվա սկիզբն է համարվել գիշերվա սկիզբը։

[21] **Ա. Գ. Աբրահամյան,** Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 113։

լուսնի պարբերաշրջաններում կատարած հաշվումներից։ Նա որոշակի այդ մասին գրել է. «Աւր արեգական ԻԴ (24) ժամ է ընդ տիւ և գիշերն, ...ժամ արեգական՝ Լ(30) մասն, իսկ լուսնին՝ Ե (5) մասն։ Բայց մասն լուսնի մեծ է, քան արեգականն»[22]։

Հեթանոսական հայկական տոմարը գործածությունից դուրս է հանվել, անշուշտ, քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնական ճանաչում գտնելուց հետո։ Բայց ի՞նչ նկատի ունի Հովհաննես Իմաստասերը, երբ գրում է. «Հաւաստապէս ի ՃԻԲ (122) ամ Քրիստոսի աւարտ առ թուականն Հայկայ»[23]։ Նրա ակնարկը կարող է վերաբերել հայ հեթանոսական տոմարի և թվականի ինչ-որ փոփոխության և ոչ նրա դադարեցմանը։

Վաղ քրիստոնեական շրջանում եկեղեցին դեռ չուներ իր սեփական տոմարը. նա առաջնորդվում էր հրեական տոմարով։ Այս դրությունը շարունակվեց մինչև 325 թվականը Նիկիայի տիեզերական ժողովը, ուր, Կոստանդիանոս կայսեր հանձնարարությամբ, ժողովը որոշեց կազմել «քրիստոնեական» տոմար։

Նիկիայի ժողովից առաջ և հետո, առօրյա գործունեության համար քրիստոնեական տարբեր երկրներում նախ կազմվել էին 19-ամյա, իսկ հետո՝ 95-ամյա տոմարական զատկացանկեր։ Այսպես շարունակվեց մինչև 353 թվականը, երբ տոմարագետ Անդրեաս Բյուզանդացին կազմեց երկու հարյուր տարիների զատկական ցանկ՝ հիմք ընդունելով հուլյան անշարժ կոչվող տոմարը և դարագլուխը վերցնելով Դիոկղետիանոսի թվականը, որի սկիզբն էր 284 թ. օգոստոսի 29-ը՝ Դիոկղետիանոսի գահակալության օրը։

Մատենադարանի № 1999 ձեռագրում վերջերս հայտնի դարձավ Անդրեաս Բյուզանդացու 200-ամյա զատկացանկի հայերեն թարգմանության փոքրիկ մի պատառիկ, որը բացառիկ արժեք ունեցող թարգմանական հնագույն բնագրերից մեկն է։

Այդ բնագրից որոշակի երևաց, որ Անդրեասի երկուհարյուրամյա զատկացանկը սկսվել է 353 թվականից և վերջացել 552 թվականին[24]։

---

[22] «Անանիա Շիրակացու լուսնի պարբերաշրջանները», Երևան, 1962, էջ 100։

[23] Օգտվել ենք Ալիշանի «Հայկայ շրջան» հոդվածի հղումից (տե՛ս «Յուշիկք հայրենեաց», Ա, էջ 90)։

[24] Անդրեասի աշխատության պատառիկում այդ մասին ասված է. «ՅԾԳ ամն գալստեան տ[եառն]ն մերո[յ] Յ[իսուս]ի Ք[րիստոս]ի, և ՆԱ.երորդ ամն շինածոյ Անդիոք քաղաքի, և ի Դիոկղետիանոսի ԿԹ ամ, և Կիպրոս քաղաքի ՈԿԴ ամ, և ի [Ժ]Զ. երորդ Հիմաստոյ Կոստանդնի Օգոստին, որդոյ Կոստանդինի։ Եւ ի ԱԺ.ին դիքտիոնին յետ գնահանչսն կարգելո[յ] յորս գիպեր ԺԴ.երորդն լուսնի սուրբ զատկին ապր[իլի] Դ»։ Վերծանենք այս թվականները։

«ՅԾԳ ամն գալստեան Քրիստոսի»—մեր ներկայումս գործածական թվականն է հայկական հաշվումով է, որից պետք է հանել մեկ կամ երկու ավելորդ տարիները, որով կստանանք 352—353 թթ.։

«ՆԱ շինուածոյ Անդիոք քաղաքի»—այս անտիոքացոց թվականն է, որից պետք է հանել 48, կստանանք 353 թ. (401—48=353)։

«Դիոկղետիանոսի ԿԹ ամին»—Դիոկղետիանոսը գահակալել է 284 թվականին, ուստի նրա 69-րդ տարին կլինի 353-ը (68+284=353)։

«Ի[Ժ]Զ.երորդ Հիմաստոյ Կոստանդնի Օգոստոսին»—Կոստանդինը գահակալել է 337 թ., նրա 16-րդ տարին կլինի 353-ը (337+16=353)։

«Կիպրոս քաղաքի ՈԿԴ ամին»—խոսքը սելևկյան թվականի մասին է, որը ներկա թվականի վերածելու համար պետք է տրված թվականից հանել 311, կստանանք 353 (664—311=353)։

«ԱԺ.ին դիքտիոնին»—353 թվականին իրոք ինդիկտիոնի 11-ն է եղել։

Անդրեասի տոմարական այս պատառիկը եկավ հիմնովին փոխելու մեր պատկերացումները հայկական տոմարի սկզբնավորության և հայկական ամանորի վերաբերյալ։ Պարզվեց, որ հայկական քրիստոնեական տոմարը սկիզբ է առել ո՛չ թե 428 թվականին, ինչպես կարծում էին Աբրիշանը և ուրիշներ, այլ՝ 353 թվականին։ Պարզվեց նաև, որ հայկական քրիստոնեական տոմարի սկզբնավորության առաջին տարում հայկական շարժական ամանորը՝ Նավասարդի մեկը, զուգադրվել է ո՛չ թե օգոստոսի 11-ի հետ, այլ՝ օգոստոսի 29-ի։

Աստղագետը ուսումնասիրության ժամանակ։

Փավստոս Բուզանդի հաղորդած տեղեկություններից մենք գիտենք, որ Ներսես կաթողիկոսի ջանքերով 356 թ. Աշտիշատում գումարված ժողովում սահմանվել են մի շարք նոր կարգեր, այդ թվում նաև՝ «Կարգեցան կարգ կաթողիկէ եկեղեցւոյ... և բազմացան կարգք սրբութեան պաշտամանցն...»[25]*։ Մեր կարծիքով, Փավստոսի այս ակնարկը կարող է վերաբերվել նաև տոմարական խնդիրներին՝ տոների ժամանակը սահմանելուն։ Քրիստոնյա Հայաստանի համար այդ անհրաժեշտ էր, եթե նկատի ունենանք, որ քրիստոնեություն ընդունած ժողովուրդը տոներ պիտի նշեր։ Անդրեասի տոմարն ընդունված էր քրիստոնյա աշխարհում, դրա հետ, անշուշտ, ծանոթ էր Ներսես կաթողիկոսը, որը եղել էր Բյուզանդիայում և, ըստ Խորենացու վկայության, «զբարե-*

«ԺԴ.երրորդ լուսնի սուրբ զատկի ապրիլի Դ»—նկատի ունի զատկական լուսնի լրումը, որը տոմարագիտության մեջ հայտնի է «Մեծ լրում» անունով. 353 թ. զատկական լրումը եղել է իրոք ապրիլի 4-ը, իսկ զատիկը՝ ապրիլի 11-ին (ՄԱՄ ձեռ. № 1973, թ. 251ա)։

[25] Փավստոս **Բուզանդ**, *Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, էջ 86։*

կարգութիւնն զոր ետես և Յունաց աշխարհին, մանաւանդ ի թագաւորեալ քաղաքին»[26], ցանկանում էր այն քաղաքացիություն տալ Հայաստանում։

Ուշագրավ է այն, որ Անդրեաս Բյուզանդացու բնագրում բերվում է գարնանային գիշերահավասարի ամսաթիվը հայկական շարժական և եգիպտական ու անտիոքացոց անշարժ տոմարներով։ Այնտեղ ասվում է. «Արդ՝ սկիզբն հասարակելոյ տուընջեան և գիշերոյ ըստ Թուոց եգիպտացոցն ի ԻԴ չորրորդ ամսոյն լինի, որ անուանեալ կոչի պեմենովթ, որ գայ կշիռ ըստ Թուոյն անդիոքացոց ի ԻԵ. երրորդումն դիւստրոս ամսոյն, այսինքն՝ մեհեկանի»[27]։

Գարնանային գիշերահավասարը՝ մարտի 20-ը, անշարժ տոմարով իրոք համապատասխանում է եգիպտական պեմենովթ ամսի 24-ին, իսկ հայկական շարժական տոմարով՝ մեհեկան ամիսը մարտի 21-ի հետ, կարող էր զուգակցվել 264 թվականից ոչ շուտ և 283-ից ոչ ուշ։ Դժբախտաբար, բնագրում չի ասվում, թե մեհեկանի քանի՞սն է եղել, որ կարելի լիներ չորս տարվա տարբերությամբ պարզել՝ թե ո՞ր թվականին է այդ տեղի ունեցել։ Բոլոր դեպքերում, քանի որ խոսքը Անդրեասի զատկացանկի մասին է, ապա այն հնարավոր է տեղադրել 353—383 թվականների միջև։ Դժվարանում ենք ասել, թե Անդրեասի հայկական այդ բնագիրը ինչ գրով է գրված եղել, բայց կասկած լինել չի կարող, որ այն կազմված է եղել հայ իրականության մեջ օգտագործելու համար։

Անդրեասի այս զատկացանկով առաջնորդվող բոլոր ժողովուրդները, այդ թվում նաև հարևան վրացի և աղվան ժողովուրդները[28], հետևեցին հուլյան անշարժ տոմարին, բացի հայերից, որոնք շարունակեցին շարժականը։ Հետևանքը եղավ այն, որ հայկական տոմարական հաշվումները դուրս եկան անշարժ տոմարի հաշվումների զուգավորությունից։

Շարժական տոմարով առաջնորդվելու հետևանքով հայկական ամանորն, անշարժ տոմարի համեմատությամբ, ամեն չորս տարին մեկ օրով ետ էր ընկնում։ Եթե սկզբում հայկական ամանորը օգոստոսի 29-ին էր, ապա չորս տարի հետո իջնում էր օգոստոսի 28-ը և այլն։ Այսպես, չորս տարին մեկ օրով ետ մնալով, 19 օրերի նահանջումից հետո, երբ տարին հասավ 428—431 թվականները, հայկական ամանորը օգոստոսի 28-ից իջել էր օգոստոսի 11-ը։ Այդ, ի դեպ, այն տարիներն էին, երբ մաշտոցյան դպրոցը գտնվում էր իր ծաղկման շրջանում. կատարում էին թարգմանություններ, գրում էին ինքնուրույն աշխատություններ։

Անդրեաս Բյուզանդացու տոմարը վերջացավ 552 թվականին։ Պատրաստի տոմարական տոնացանկ չլինելու հետևանքով, սկսեցին «շփոթել տօնք և ամենայն արհեստք տոմարականք»[29], ինչպես գրում է Հակոբ Ղրիմեցին։ Այս շփոթությունը, սակայն, միայն հայերի մոտ չէր, այլ բոլոր քրիստոնյա ժողովուրդների։ Շփոթը կարգավորելու համար 561 թվականին Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքում հրավիրվեց 36 հայտնի տոմարագետների ժողով՝ էաս Աղեքսանդրացու գլխավորությամբ։ Ժողովը կազմեց 532 տարիների տոմարական մի աղյուսակ՝ նրա մեջ ամփոփելով արեգակնային 28 և լուսնային 19 պարբերաշրջանները, երկու պարբերաշրջանների բազմապատիկը։ Անդրեասի տոմարական այս աղյուսակի առաջին տարին սկսում էր 552 թվականի հուլիսի 11-ին։ Հայ մատենագրության մեջ այն հայտնի է ՇԼԲ կամ ուղղակի «հինգհարյուրեակ» անունով։ Այդ աղյուսակներով առաջնորդվեցին քրիստոնյա բոլոր ժողովուրդները՝ բացառությամբ բյուզանդացիներից, որոնց համար առանձին տոմար կազմեց Իրիոն անունով մի այլ տոմարագետ[30]։

---

[26] **Մովսես Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*, էջ 279։

[27] **Ա. Գ. Աբրահամյան**, *Անդրեասի տոմարագիտական աշխատությունները* (տե՛ս «Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում», հ. VI, Երևան, 1967, էջ 72)։

[28] Տե՛ս **Ա. Գ. Աբրահամյան**, *Աղվանական տոմարը* (տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1969 թ., № 1, էջ 174—175)։

[29] **Ա. Գ. Աբրահամյան**, *Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը*, էջ 295։

Էաս Աղեքսանդրացու կազմած տոմարական ՇԼԲ աղյուսակները Հայաստանում պաշտոնական ընդունելություն են գտել 584 թվականին Դվինում հրավիրված ժողովում։ Ժողովի հանձնարարությամբ հայ տոմարագետները, Աթանաս Տարոնացու ղեկավարությամբ, համաձայնեցրել են Էաս Աղեքսանդրացու աղյուսակները հայկական շարժական տոմարի հետ[31]։

Հետագայում, սակայն, հայկական տոմարում բարդություններ են առաջացել։ Այն կարգավորելու նպատակով Անաստաս կաթողիկոսը (661—667) հանձնարարել է Անանիա Շիրակացուն կազմել անշարժ տոմար։ Շիրակացին կատարել է կաթողիկոսի հանձնարարությունը, կազմել է իր տոմարը, սակայն մինչ այն կներկայացներ ազգային եկեղեցական ժողովի հաստատության, կաթողիկոսը մահացել է, և Շիրակացու կազմած տոմարը պաշտոնապես չի հաստատվել։ Այդ մասին պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին գրում է. «Իսկ Անաստասայ Հայրապետին հոգացեալ վասն հայկականս տոմարի, զի թերևս անշարժ զնա ըստ այլոց ազգաց մարթասցէ յօրինել. զի միշտ անշարժք լինիցին տօնք տարեկանաց կամ յեղափոխ յեղանակք ժամանակաց։ Վասն որոյ և առ ինքն զԱնանիայ Անեցի կոչեալ, որ բանիբուն այնմ արուեստի էր հմուտ, հրամայէ նմա ստեղծագործել զխնդրելին իւր։ Իսկ նորա ջան ի վերայ եդեալ և ըստ բոլոր ազգաց պայմանի՝ անշուշտ յօրինեալ զկարգ Հայկական տոմարի. զի բարեձևագունից ոմանց և զմերս կշռադատեալ՝ մի՛ կարօտասցուք գալ ի զուգաւորութիւն Հռովմայեցւոց։ Եւ մինչդեռ խորհէր մեծն Անաստաս ժողովք եպիսկոպոսաց զեղեալսն հաստատել՝ վախճան կենաց նմա ժամանէր»[32]։

532 տարիների այս զատկացանկի կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ տոմարական մի կարևոր հարցի՝ հայկական մեծ թվականի սկզբնավորությանը։ Թվականների սկզբնավորությունը սովորաբար կապում են պատմական կարևոր իրադարձությունների կամ անձնավորությունների հետ։ Այսպես, քրիստոնեական թվականը՝ Քրիստոսի ծննդյան, մահմեդականը՝ Մուհամեդի, հռոմեականը՝ Հռոմի հիմնադրման և այլն։ Ի՞նչ կարևոր իրադարձություն է տեղի ունեցել Հայաստանում 552 թվականին, որ անհրաժեշտ են համարել դարագլուխ կազմել։ Հայագիտության մեջ այս մասին

---

[30] Իրիոնի և Էասի 532 տարիների աղյուսակների միջև չորս տարիներում զատկի տոների տարբերության գոյություն ուներ։ Այդ տարբերությունը տեղիք է տվել քաղկեդոնական և հակաքաղկեդոնական դավանանք ունեցող ժողովուրդների միջև մեծ վեճերի։ Իրիոնի զատկացանկի զատկական այդ չորս օրերը հայ մատենագրության մեջ կոչվել են «ծռազատիկ»։

[31] Տե՛ս **Մ. Օրմանյան**, Ազգապատում, հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 572։

[32] **Յովհաննէս Դրասխանակերտցի**, Պատմութիւն Հայոց, էջ 92։

տարբեր կարծիքներ են հայտնվել[33]։ 532 տարիների այս աղյուսակների հայտնաբերությունից հետո պարզվեց, որ հայկական մեծ կոչվող թվականի սկզբնավորությունը կապված է ՇԼԲ աղյուսակների հետ. նրա առաջին տարին սկիզբ է հայկական մեծ թվականի։

Շիրակացու կազմած տոմարի մի մասը հասել է մեզ և որոշ պատկերացում տալիս է, թե նա տոմարական ինչ սկզբունքով է առաջնորդվել։ Այդ տոմարը, պետք է ասել, կազմված է գիտական մեծ բարեխղճությամբ։ Փաստորեն նա է հիմք ծառայել հետագայում միջնադարյան հայ տոմարական մատենագրության համար։ Շիրակացու կազմած ՇԼԲ աղյուսակում հայկական շարժական տոմարը համաձայնեցված է եղել հռոմեական անշարժի հետ. մի էջի վրա տրված է եղել հայկական շարժական տոմարական թվահաշվումները, իսկ հաջորդ էջի վրա՝ հռոմեական անշարժը՝ ՇԼԲ-ի բոլոր տարիների համար[34]։ ՇԼԲ աղյուսակում, սակայն, Շիրակացին հաշվի չէր առել մի կարևոր նրբություն, թե ի՞նչ պետք էր անել, երբ չորս տարին մեկ օրով առաջ շարժվելով, հայկական տարին հասներ մինչև այն կետը, երբ գարնանամուտը, որի հետ կապված էին զատկի հաշվումները, կրկնվեր։

Շիրակացու այս աղյուսակներով հայկական տոմարը հարթ ընթացավ մինչև 1003 թվականը, իսկ 1004 թվականին չորսական տարիների օրերի հաշիվը հասավ այն կետին, որ գարնանամուտը կրկնվեց։ 1001—1004 թվականներին, փաստորեն, ամեն մի տարում երկու գարնանամուտ եղավ, մեկը՝ դեկտեմբերի վերջին, իսկ մյուսը՝ հունվարի մեկին։ 1005 թվականից սկսած այլևս անհնար էր տառացի առաջնորդվել Շիրակացու աղյուսակով։ Խառնվել էին թվականները, վերադիրները, յոթներյակները, լուսնի լրումները, նահանջ տարիները, հարականները և այլն։ Միջնադարյան տոմարագետ Հակոբ Ղրիմեցին պատասխանելով այս առթիվ իրեն տրված հարցին, գրել է. «Ծանի՛ր որդի, զի այս ի պատճառէ հասարակածին եղև, զի հասարակածն յորժամ ի նաւասարդ եմուտ, զանխլաբար թիւ աւելի ի ներքս եմոյծ և ոչ գիտացեալ բազմաց, շփոթեաց զամենայն կանոնեալսն առաջնոց հարցն և յայնմհետէ ոչ բերէ ուղիղ զթուականսն, զեթներեակս, զվերադիրս և զլրմունս միով թուով յառաջացեալ գտանի ըստ Հայումն, այսպես և զնահանջն ոչ ցուցանէ յորում ամի և լինի, զի յորժամ չորեքպատկես, զթուականն տարոյ մի յառաջ ցուցանէ զնահանջն՝ վասն յաւելեալ թուոյ և չէ ամն նահանջի»[35]։

Ահա այս փոփոխություններից հետո տոմարական հաշիվները խառնվեցին։ Միակ հնարավոր ելքն այն էր, որ հաշվի չառնվեր ՇԼԲ աղյուսակում հայկական ավելամուտ մեկ տարին։ Այս խառնակ դրությունը շարունակվեց մինչև նոր ՇԼԲ-ի կազմումը։ Հայկական տոմարը հետագայում հիմնական բարեփոխության ենթարկեց Հովհաննես Իմաստասերը (Սարկավագը)։

Տոմարական բարեփոխությունը Իմաստասերը կատարել է 1116 թ., սակայն տոմարական իր հաշվումների սկիզբը սկսել է 1084 թ.՝ շարունակելով նախկին ՇԼԲ աղյուսակները։

---

[33] Այս մասին տե՛ս Ն. **Ակինյան**, Հայոց թվականի հաստատության ժամանակը («Հանդէս ամսօրեայ», 1904, էջ 97—102), Գ. **Խալաթյան**, Հայոց թվականի հաստատության ժամանակի առթիվ («Հանդէս ամսօրեայ», 1904, էջ 156—157), Ն. **Ակինյան**, Հայոց թվականի հաստատության ժամանակը հոդվածիս քննությանց պատասխանս («Հանդէս ամսօրեայ», 1904, էջ 218—224)։

[34] Տե՛ս Ա. Գ. **Աբրահամյան**, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 263—282։

[35] Ա. Գ. **Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 295—298։

Իմաստասերը, ամենից առաջ, հայկական շարժական տոմարը դարձրել է անշարժ. տարին ընդունել է 365 և մեկ քառորդ օր։ Չորս տարիների ընթացքում ավելացած մեկ օրը նա սահմանել է դնել ավելյաց ամսի վրա՝ նահանջ տարիներին ավելյաց 5 օրերը դարձնելով 6։

Հայկական ամանորն այդ թվականին հայկական շարժական տոմարով հասած է եղել փետրվարի 29-ին։ Թվում էր, թե Իմաստասերը հայկական ամանորի համար կամ հիմք պիտի վերցներ հռոմեական ամանորը՝ հունվարի մեկը և կամ արարչության ամանորը՝ սեպտեմբերի մեկը, սակայն նա շրջանցել է այդ և մյուս բոլոր ամանորները և հայկական անշարժ տարվա ամանոր կարգել օգոստոսի 11-ը։

Հայոց տոմարի պատմության ուսումնասիրությամբ զբաղվող շատերին է զարմանք պատճառել Իմաստասերի այդ վարմունքը. ինչո՞ւ է նա խախտել բոլոր տեսակի կանոնականությունը և այդ ամսաթիվն է վերցրել հիմք։ Օրմանյանը, չգտնելով այդ հարցի պատասխանը, գրել է. «...չենք գիտեր թե ի՞նչ ձևով նավասարդի 1-ը փետրվարի 29-էն օգոստոսի 11 տարին»[36]։

Այդ անորոշությունը կարելի եղավ պարզել վերջին տարիներս։ Մատենադարանի ձեռագրերում հայտնաբերվեց Հովհաննես Իմաստասերի մի աշխատությունը, ուր նա հանգամանորեն շարադրել է իր բարեփոխության սկզբունքները և պատասխանել այն հարցին, թե ինչու է նա օգոստոսը սահմանում հայկական Նոր տարվա սկիզբ[37]։ Նա մատնացույց է անում հին հայկական մի շարք բնագրեր, ուր գարնանային գիշերահավասարը՝ մարտի 21-ը, բերվում է հայկական շարժական ու հռոմեական, ասորական, եբրայական անշարժ տոմարներով և գտնում, որ հին հայկական ամանորը եղել է օգոստոսի 11-ին, ուստի և ինքը հայկական ամանորը սահմանում է օգոստոսի 11-ը։ (Իրականում, հայկական շարժական տոմարով հայկական ամանորը եղել է 428—431 թվականներին, այլապես դրանից առաջ և հետո տարիները օգոստոսի 11-ին զուգահեռ ընթանալ չեն կարող)։

Հայկական ամանորը փետրվարի 29-ից օգոստոսի 11-ը փոխադրելու համար երկու հնարավոր միջոց կար. կամ Իմաստասերը կարող էր կարգելի ամանորը փետրվարի 29-ից ետ տանել մինչև նախորդ տարվա՝ 1083 թվականի օգոստոսը՝ հաշվից դուրս թողնելով 202 օր և կամ փետրվարի 29-ից առաջ անցնել նույն տարվա օգոստոսի 11-ը՝ ավելացնելով 164 օր։ Առաջին դեպքում նա ետ էր դառնում դեպի նախորդ թվականը, իսկ երկրորդ դեպքում մնում էր նույն թվականի մեջ։ Պարզվում է, որ Իմաստասերը դիմել է երկրորդ միջոցին՝ փետրվարի 29-ին ավելացրել է 528 օր և ամանորը հասցրել 1084 թ. օգոստոսի 11-ը։

Իմաստասերի 1084 թ. կազմած 532 տարիների աղյուսակները վերջացան 1616 թվականին, անհրաժեշտ էր կազմել 532 տարիների տոմարական նոր աղյուսակներ։ Այդ գործի նախաձեռնությունն իր վրա վերցրեց Նոր Ջուղայի տոմարագետներից մեկը՝ Ազարիա Ջուղայեցին[38]։

---

[36] **Մ. Օրմանյան**, *Ազգապատում*, հ. I, էջ 1808։

[37] Տե՛ս **Ա. Գ. Աբրահամյան**, *Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը*, էջ 240—241։

[38] Վերջերս Հ. Անասյանը «Հայկական մատենագրության» հավելվածում հրատարակեց Ազարիա Ջուղայեցու անվան հետ կապված տոմարական մի պատառիկ, ըստ որի Ազարիա Ջուղայեցին իր տոմարը կազմած է եղել ո՛չ թե 1616 թվականին, այլ դրանից 65 տարի առաջ՝ 1551 թ. (էջ 1178—1180)։ Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ նրա հեղինակը տոմարական հաշ-

Ի տարբերություն Իմաստասերի տոմարի, երբ հայկական տարվա ամանորը սահմանված էր օգոստոսի 11-ին, նա տարեգլուխ սահմանեց մարտի 21-ը՝ գարնանային արևադարձի օրը, որով պաշտոնապես առաջնորդվում էին Պարսկաստանում։

Հին հայկական ամիսների այս փոփոխությունը, ինչպես երևում է, խորթ է եղել հայ իրականության համար, ընդունելություն չի գտել, ուստի Ջուղայեցին հարկադրված է եղել կազմել հայկական ամիսների նոր անուններ՝ կապված տարվա եղանակի, բնական պայմանների և բերքի հետ։ Ազարիայի կազմած նոր ամիսները պարսկականի հետ հետևյալ զուգահեռությունն ունեն.

1. **Ցողաբեր**—*մարտի 21-ից մինչև ապրիլի 19-ը,*
2. **Ծաղկավետ**—*ապրիլի 20-ից մինչև մայիսի 19-ը,*
3. **Դետանեօս**—*մայիսի 20-ից մինչև հունիսի 18-ը,*
4. **Պտղաբեր**—*հունիսի 19-ից մինչև հուլիսի 18-ը,*
5. **Առատաեռս**—*հուլիսի 19-ից մինչև օգոստոսի 17-ը,*
6. **Գոեություն**—*օգոստոսի 18-ից մինչև սեպտեմբերի 16-ը,*
7. **Պտղակիր**—*սեպտեմբերի 17-ից մինչև հոկտեմբերի 16-ը,*
8. **Տերևաթափ**—*հոկտեմբերի 17-ից մինչև նոյեմբերի 15-ը,*
9. **Ձյունաբեր**—*նոյեմբերի 16-ից մինչև դեկտեմբերի 15-ը,*
10. **Սառուցյալ**—*դեկտեմբերի 16-ից մինչև հունվարի 14-ը,*
11. **Հողմաշունչ**—*հունվարի 15-ից մինչև փետրվարի 15-ը,*
12. **Ձյունաեալ**—*փետրվարի 14-ից մինչև մարտի 15-ը,*
13. **Մանիշակ**—*մարտի 16-ից մինչև մարտի 20-ը*[39]։

Ազարիա Ջուղայեցին ևս հետևել է անշարժ տոմարի սկզբունքին. նա չի փոխել հին հայկական ամիսների 30-ական օրերի թիվը, ուստի պահպանելով հավելյալ 13-րդ ամիսը, այն դրել է Նիհրան ամսի վերջը։ Սովորական տարիներին հավելյալ ամիսն ունենում էր 5 օր, իսկ նահանջ տարիներին՝ վեց օր։

Ազարիա Ջուղայեցու կազմած տոմարական աղյուսակները սկիզբ հանդիսացան հայկական մի այլ թվականի, որը հայտնի է «Ազարիա Ջուղայեցու թվական» անունով, որի մասին խոսք կլինի իր տեղում։

Ազարիա Ջուղայեցու տոմարը և թվականը լայն օգտագործման մեջ չգտնվեցին Հայաստանում. այն գործածվել է միայն Պարսկաստանի և Հնդկաստանի հայկական գաղթօջախներում։

վամների գիտակ մեկը չէ։ Այդ փոքրիկ բնագրում նկատելի են տոմարական մի շարք անախրոնիզմներ։ Նշենք նրանցից մի քանիսը։ Հայկական 1551 թվականին հռոմեական տարեթիվը եղել է ոչ թե ՑԳ-ն (6003-ը), այլ ՌՅԳ-ն (1303-ը)։ Նոյեմբերի Լ-ին (30-ին) հայկական ամսաթիվ եղել է ոչ թե հրոտից Բ-ն (2-ը), այլ տրեի 22-ը։ 1551 թվականի տարվա գիրը եղել է ոչ թե «Յոյ»-ն, այլ «ԸԹ»-ը։ 1551 թ. կենդանակերպը եղել է ոչ թե «Ագեղնաւոր»-ը, այլ «Ջրհոսը»։ Մարտի 20-ին գիշերահավասարը եղել է հայկական ավելյաց ամսի ոչ թե «Ե»-ն, այլ «Դ»-ն և այլն։ Այդ բնագիրը, մեր կարծիքով, գրված պետք է լինի 1616 թվականից հետո։ Նրա գործածած «այս տարին» արտահայտությունը պետք է հասկանալ ո՛չ թե իր գրելու տարին, այլ հայկական 1000 թվականը, որի հիման վրա նա ցանկացել է տոմարական վարժություններ կատարել։ Ժամանակակից մարդը, մանավանդ տոմարագետը, պարզ է, տոմարական նման կոպիտ սխալներ չէր կարող թույլ տալ։

[39] Ազարիայի տոմարը տե՛ս ՄԱՄ ձեռ. № 7098, թ. 150բ—169ա, ՄԱՄ ձեռ. № 754, թ. 378—386։

VII. ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԵՐԾԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ա. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արեգակնային և լուսնական տարիների գաղափարն առաջանալուց հետո, բնական է, պիտի առաջանար ժամանակի սիստեմատիկ հաշվումը՝ ժամանակագրությունը։ Առանց թվերի և թվականների հնարավոր չէր ժամանակը չափել և անցյալի իրադարձությունները վերհիշել։ Արդարացի է պատմահայր Խորենացու այն դիտողությունը, թե՝ «Ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան»[1]։

Անհրաժեշտ է նկատել, որ հնում թվականների հաշվումները կատարվել են ոչ թե միալար հաջորդականությամբ, ինչպես այժմ, այլ թագավորների, փարավոնների և այլ քաղաքական աչքի ընկնող անձնավորությունների գահակալության տարիներով։ Այդ սկզբունքով են առաջնորդվել նաև հին հայկական մեր պատմիչները։ Օրինակ, ըստ Խորենացու՝ Հայոց Խոսրով թագավորը գահ է բարձրացել պարսկական Որմիզդ թագավորի երկրորդ տարին և Կոստանդին կայսեր ութերորդ տարին։ Ըստ Կորյունի՝ Սահակ Պարթևը մահացել է Հազկերտ թագավորի հինգերորդ տարում։ Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ Աղվանից Վաչագան թագավորը պարսկական բռնապետության դեմ ապստամբել է Խոսրով թագավորի քսանչորսերորդ և Հուստինիանոս կայսեր տասնչորսերորդ տարում և այլն։

Մեր ներկայումս գործածական թվականի սկզբնավորությունը, ինչպես հայտնի է, կապված է Քրիստոսի ավանդական ծննդյան հետ։ Քանի որ ծննդյան ժամանակի մասին վաղ շրջանից հավաստի տեղեկություններ չեն պահպանվել, ուստի միջնադարյան քրիստոնյա տոմարագետներն աշխատել են յուրովի հաշվել այն։ Դրա հետևանքով միջին դարերում առաջացել և գործածության մեջ են դրվել քրիստոնեական մի շարք թվականներ՝ հռոմեական, հունական, ասորական, հայկական և այլն, որոնք մի քանի տարով (առաջ ու ետ) տարբերվում են իրարից։

Թվականների մեջ եղած այս տարբերությանը ժամանակին անդրադարձել է Հովհաննես Իմաստասերը և հետևյալ բացատրությունը տվել. «Եւ քանզի բազումք յառաջնոց վարդապետաց անտի գրեցին ըստ իւրաքանչիւր դիպման քննութեամբ ի կիր առեալ վասն ստուգելոյ ամացն անցելոց, սակայն անմիաբան հանդիպին միմեանց... Զի որպէս արուեստ բժշկութեան ոչ ի սկզբանցն ճդիւ ամենայն գիտացեալ եղև, այլ առ սակաւ սակաւ, նոյնպէս և շրջաբերութիւն արեգական և լուսնի առ սակաւ սակաւ գիտացել եղև...»[2]։

---

[1] Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 224։

Ներկա թվականը հայ մատենագրության մեջ գործ է ածվել տարբեր անուններով՝ «Թիւ մարմնացելոյ բանին», «Թուական մարդեղութեան բանին», «Ամ ծննդեան կենարարի», «Ամ գալստեան փրկչի», «Թիւ կնարարի յայտնութեան», «Թուական Յիսուսի Քրիստոսի» և այլն[3]։

Պարզվում է, որ հայ տոմարագետները սահմանել են Քրիստոսի ծննդյան «սեփական» թվական, որը սկիզբ է առնում ներկա թվականից երկու տարի առաջ, այլ խոսքով ասած՝ ըստ հայ տոմարագետների հաշվումների, Քրիստոսը երկու տարի շուտ է ծնվել, քան այդ սահմանել է Դիոնիսիոսը։ Այդ հաշվումով, օրինակ՝ 1971-ին հայկական թվահաշվով եղել է 1973-ը[4]։ Մատենագրության մեջ պահպանվել են որոշակի վկայություններ՝ քրիստոնեական հայկական թվականի առկայության և գործածության մասին։

Մաշտոցի անվան մատենադարանի № 7447 ձեռագիրը, որը «Ճաշոց գիրք» է, ունի հիշատակարան, ուր գրչության թվականի մասին հետևյալ տեղեկությունն է տրվում. «Գրեցաւ յիշատակարանս ի թվաբերութիւն ի ծննդենէն Քրիստոսի ըստ Հայոց հաշուի (ընդգծումը մերն է—Ա. Ա.) ՌՅՂ (1390), և ըստ Յունաց՝ ՌՅՂԶ (1396), և ըստ Ֆռանգաց՝ ՌՅՁԸ (1388), և ըստ Ասորոց ՌՅՀԺԱ (1381) և Հաբեթական տոմարիս Հայոց՝ ՊԼԷ (837) ի փետրուարի ամսոյ ԻԹ (29) նահանջի ամի...»[5]։

Այս հիշատակարանում, ինչպես տեսնում ենք, զուգահեռ բերվում է քրիստոնեական թվականը չորս տարբեր տոմարական հաշվումներով՝ հռոմեական, հունական, ասորական և հայկական։ Ըստ որում, որոշակի նշվում է «ըստ Հայոց հաշուի», այսինքն՝ ըստ հայկական տոմարական հաշվումների։ Հիշատակարանում վկայակոչված քրիստոնեական թվականներից ներկայումս գործածվողը «ֆռանգացն» է, որը եղել է 1388-ը։ Այդ նույն տարին հայկական քրիստոնեական հաշվով եղել է 1390-ը՝ ավելի երկու տարի, հունական քրիստոնեական հաշվով եղել է 1396-ը՝ ավելի ութը տարի, ասորական քրիստոնեական հաշվով եղել է 1381-ը՝ պակաս յոթ տարի։

---

[2] Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 223—224։

[3] Մեր ներկայումս գործածած թվականը՝ քրիստոնեական հռոմեական թվականն է, որը կազմել է Դիոնիսիոս Կրտսերը 525 թ.։ Միջին դարերում քրիստոնեական ոչ բոլոր տոմարագետներն են, որ ընդունել են Դիոնիսիոսի սահմանած այս թվականը։ Այն ընդունելություն չի գտել նաև Հայաստանում։

[4] Մանրամասն տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Ներկա թվականի սկզբնավորությունը ըստ հայ տոմարագետների հաշվումների (տե՛ս ՊԲՀ, 1970, № 3, էջ 95—108)։

[5] «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Երևան, 1950, էջ 575։ (Այսուհետև մատնացույց է արվելու «ԺԴ դարի հիշատակարաններ» ձևով)։

Հայկական մեծ թվականի և քրիստոնեականի զուգահեռությունը գտնելու համար, ինչպես կտեսնենք հետո, անհրաժեշտ է գումարել 553, իսկ քրիստոնեական հռոմեականի դեպքում՝ 551։ Այդ հաշվով, 837 հայկական մեծ թվականին 553 գումարելիս, ստանում ենք 1390 ըստ «Հայոց հաշուի», իսկ 551 գումարելիս, ստանում ենք 1388, ըստ «Փռանգաց հաշուի»։ Ի՞նչ հիմք ունենք «Փռանգաց»-ը համարելու ներկայումս գործածվող թվականը։ Դրանում դժվար չէ համոզվել, եթե նկատի ունենանք, որ ըստ հիշատակարանի տեղեկության, տվյալ տարին եղել է նահանջ, իսկ տոմարագիտական հաշիվներից ստույգ հայտնի է, որ 1388 թվականին իրոք եղել է նահանջ տարի, հետևապես հիշատակարանում հիշված «Փռանգաց»-ը մեր ներկայումս գործածած թվականն է։

*Մեզ է հասել Ղրիմում 1401 թվականին ընդօրինակված մի ուշագրավ ձեռագիր, որն այժմ Մատենադարանի սեփականությունն է և գրանցված է 1925 թվահամարի տակ։ Ընդօրինակող գրիչն իր հիշատակարանում գրչության թվականի վերաբերյալ հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Կատարեցաւ երկրորդ Կլիմաքս, այսինքն որ է Սանդուխտ գիրք, ձեռամբ մեղապարտ անձին Մարկոս գրչի... Ի ծննդենէն Քրիստոսի՝ հազարերորդի չորեքհարիւրերորդի երրորդի (1403) **Հայոց ճաշուի** (ընդգծումը մերն է—Ա. Ա.)... և ըստ պատճէն Յաբեթական տումարիս Հայոց ՊԾ (850), տանուտէր տարոյն՝ Առևծն, ի մայիս ամսոյ ԻԱ (21)»[6]։*

Հիշատակարանից երևում է, որ ներկա թվականի 1401-ին հայկական քրիստոնեական թվականով եղել է 1403-ը՝ ավելի երկու տարի։ Ինչ վերաբերում է հիշատակարանում հիշված «Պատճէն տումարիս Հայոց»-ին, ապա այդ հայկական մեծ թվականն է, որին 553 գումարելիս ստանում ենք քրիստոնեական հայկական թվականը, իսկ 551 գումարելիս՝ մեր ներկայումս գործածական թվականը[7]։

Քրիստոնեական թվականն առանձին հանդիպելիս պետք է հաշվի առնել մի նրբություն. միջնադարյան հայ մատենագրության մեջ մեկ-մեկ պատահում են դեպքեր, երբ իրադարձությունները հայ ունիթոռ հեղինակների կամ գրիչների կողմից թվագրված են լինում քրիստոնեական հռոմեական տոմարական հաշվումներով, այսինքն՝ ներկայումս մեր գործածած թվականով։ Այդ դեպքում հայկական և քրիստոնեական թվականների տարբերությունը լինում է 551։ Այդ հիմնականում լինում է այն դեպքում, երբ թվագրող հեղինակները հայ ունիթոռներ են։ Բերենք այդպիսի երկու օրինակ։ Իսրայել գրիչն իր ընդօրինակած «Ոսկեփորիկ»-ի հիշատակարանում հայտնում է, որ այն գրել է «Ի թուականիս ՉՀԶ (776), ի Քրիստոսէ ՌԳՃԻԷ (1327), ի Դոմինիկոսէն և ի Ֆրանցիսկոսէ ՃԻԵ (125) տարի է»[8]։ Այստեղ հայկական մեծ թվականի և քրիստոնեականի միջև տարբերությունը 553 չէ, այլ՝ 551. հայկական մեծ թվականին՝ 776, գումարելով 551, ստանում ենք 1327, որը ճիշտ համապատասխանում է մատնացույց արված քրիստոնեական թվականին։

---

[6] «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 19։

[7] Արարչության թվականն այստեղ աղեքսանդրյան թվահաշվով է, որը, ինչպես կտեսնենք քիչ հետո, համապատասխանում է հայկական մեծ և հայկական քրիստոնեական թվականներին։

[8] «Ցուցակ ձեռագրաց Վենետիկի», հ. Բ, էջ 698։

Ստեփանոս գրիչը Սեբաստիայում ձեռագիր է ընդօրինակել «Ի Թուիս յաւիտենից, որ է Ադամա ՑՊԻԱ (6821), և ըստ Հայկական թուականի ՉԿԲ (762), յամսեանն յուլիս ԺԸ (18), յաւուր չորեքշաբթի, և տանուտէր՝ Խոյն»[9]։

Արարչության թվականն այստեղ բյուզանդական թվահաշվով է, որից անհրաժեշտ է լինում հանել ոչ թե 5510, այլ՝ 5508, իսկ վերջինս համապատասխանում է հռոմեականին՝ 1313-ին (6821—5508=1313)։ Հայկական 762 թվականին գումարելով 551, ստանում ենք 1313։ Որ այստեղ գործ է ածված քրիստոնեական հռոմեական թվականը, այդ երևում է նաև տարվա տանուտերից, որը հանդիսացել է «Խոյը»։ Տոմարական անվիճելի հաշվումներով «Խոյը»-ը տանուտեր է եղել 1313 թվականին։

Բ. ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական մեծ թվականը մատենագրության մեջ սկսել է գործածվել 8-րդ դարից[10]։

Մեզ հասած ամենահին արձանագրությունը, որի մեջ գործ է ածված հայկական թվականը, Թալինի Մայր եկեղեցու ձախակողմյան սյան վրայի արձանագրությունն է՝ 783 թվականից, որ թողել է Ուխտատուրը։ Այդ մասին խոսք եղել է առջևում։

Հայկական մեծ թվականը մատենագրության մեջ հիշվում է տարբեր անուններով՝ «**Թուականութիւն Ասֆանազեան**», «**Թուականութիւն Թորգոմեան**», «**Թուաբերութիւն Արամեան**», «**Թուաբերութիւն Հայոց տոմարիս**», «**Թուաբերութիւն, որ Յաբեթեան կոչի**», «**Թուական Խոսրովային**» և այլն։ Այս թվականը՝ «Հայկական մեծ թուական» է կոչվում տարբերելու համար հետագայում գործածվող «Հայկական փոքր» թվականից։

Հայկական թվականի սկիզբն է հանդիսացել 552 թ. հուլիսի 11-ը, որը սակայն փոխանցվել է հաջորդ տարին և վերջացել 553 թվականի հուլիսի 10-ին։ Ուստի հայկական մեծ թվականով թվագրված տարեթիվը տեղադրվում է ներկայիս երկու տարիների մեջ, այդ պատճառով էլ վերծանելիս անհրաժեշտ է գումարել ինչպես 551, այնպես էլ՝ 552։ Եթե իրադարձությունը տեղի է ունեցել հայկական շարժական նավասարդ ամսից առաջ, անհրաժեշտ է գումարել 552, իսկ եթե նավասարդ ամսից հետո է՝ պետք է գումարել 551։ (Մեր խոսքը վերաբերվում է Հովհաննես Իմաստասերից առաջ գործածվող թվականներին)։ Դժբախտաբար, հայկական թվականները մատենագրության մեջ մեծ մասամբ հիշվում են առանց ամսաթվերի, ուստի ճիշտ կլինի տրված տարեթիվը վերծանել երկու թվականով՝ 551 և 552 տարբերությամբ[11]։ Հայկական

---

[9] Բ. Գուշակեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1923, էջ 70)։

[10] Դրանից առաջ հայկական թվականի գործածությունը մատենագրության մեջ հայտնի չէ, եթե չհաշվենք մի քանի կեղծված թվականներ ունեցող հիշատակարաններ։

[11] Այն դեպքում, երբ թվականի հետ միասին հիշված է նաև հայկական ամսաթիվը, անհրաժեշտ է պարզել՝ թե տվյալ տարվա հայկական ամանորը՝ նավասարդի մեկը, ներկայումս գոր-

և ներկայումս գործածվող ամիսների ու ամսաթվերի զուգավորությունը պարզելու համար նպատակահարմար է դիմել հրապարակված զուգացանկերի[12], բերենք մի քանի օրինակ։

Հովհաննես Ավագերեցի ժամանակագրության մեջ արեգակի խավարում է հիշվում հայկական 388 թվականի տրե ամսի 15-ին. «Եղև խաւար արեգականն ի տրէ ԺԵ (15) է Հայոց ՅՁԸ (388) թվականն»[13]։ Հայոց 388 թվականի տրե ամսի 15-ը անշարժ տոմարով հավասար է 939 թվականի հուլիսի 19-ին, իսկ այդ օրը աստղագիտական ճիշտ հաշվումներով իրապես եղել է խավարում[14]։ Դեպքը տեղի է ունեցել նավասարդի մեկից հետո, իսկ վերջինս այդ տարում զուգադիպում էր ապրիլի վեցին, ուստի անհրաժեշտ է լինում գումարել ոչ թե 552, այլ՝ 551։

Հովհաննես Ոսկեբերանի «Գործ առաքելոց»-ի մեկնությունը հունարենից հայերեն է թարգմանվել «Յամի վեցհազարերորդի հինգհարիւրորդի առաջներորդի արարածոց աշխարհի (6501), և ի հազարերորդի եւթանասուներորդի եւթներորդի կենարարին մերոյ գալստեանն (1077), և Խոսրովային թուոյ Հայկազանցս հինգհարիւրորդի քսաներորդի հինգերորդի (525), ի թագաւորութեանն Միքայելի Դուկի»[15]։ Զուգահեռ բերված հայկական և քրիստոնեական թվականների համեմատությունից երևում է, որ տվյալ թարգմանությունը կատարվել է նավասարդի մեկից *առաջ (համապատասխանել է փետրվարի 3-ին), ուստի անհրաժեշտ է լինում գումարել ոչ թե 551, այլ՝ 552։*

Տոմարական նյութերի ուսումնասիրությունից պարզվում է, որ հայկական մեծ թվականը սահմանելիս համապատասխանության մեջ է դրվել ո՛չ թե հռոմեական մեր ներկայումս գործածած քրիստոնեական թվականի հետ, այլ քրիստոնեական հայկականի։

Մեր մատենագրության մեջ տարեթվերի մեծ մասը թվագրված է լինում հայկական մեծ թվականով, որը ներկա գործածական թվականին համապատասխանեցնելու համար սովորաբար գումարում ենք 551։ Սակայն այդ հաշիվը խախտվում է, երբ բնագրերում հայկական թվականին զուգահեռ գործ է ածված լինում նաև հայկական քրիստոնեական թվականը. այդ դեպքում երկու թվականների տարբերությունը լինում է ոչ թե 551, այլ՝ 553։

Ստեփանոս Ասողիկը հայկական թվականի սկզբնավորությունն է համարում 553 թ. «Ժողովի ամենայն ժամանակն ի ծննդենէ Փրկչին մինչև ցժողովն Դունայ և թուական Հայոց ամք ՇԾԳ (553)»[16]։

ծածական ամսաթվի քանակն է զուգադիպել, որպեսզի կարելի լինի վերծանել որոշակի թվականով և ամսաթվով։

[12] *Վերջերս տոմարագիտական մի քանի աշխատությունների հավելվածներում հրատարակվեցին հայկական թվականների և ամսաթվերի ցանկեր՝ զուգակցության մեջ դրված հռոմեականի հետ։ Այդ զուգացանկերից ընդարձակը մաթեմատիկական գիտությունների թեկնածու Հ. Բադալյանի կազմածն է, որի մեջ հաշվի է առնված ո՛չ միայն թվականների զուգակցությունը, այլև ամսաթվերի (տե՛ս «Օրացույցի պատմություն», Երևան, 1970, էջ 314—484)։*

[13] *«Հովհաննես Ավագերեցի ժամանակագրությունը» (տե՛ս «Մանր ժամանակագրություններ», կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. Բ, Երևան, 1956, էջ 25)։*

[14] *Տե՛ս* **Հ. Ս. Բադալյան**, *Օրացույցի պատմություն, էջ 487։*

[15] **Գ. Հովսեփյան**, *Յիշատակարանք ձեռագրաց, էջ 255։*

[16] *«Ստեփաննոսի Տարօնեցւոյ Պատմութիւն տիեզերական», ՍՊբ., 1885, էջ 83։*

Հովհաննես Իմաստասերն իր «Պատճէն տումարի» աշխատության մեջ նշում է, որ Քրիստոսի ծննդից մինչև «Ի հայ թուականին գիր՝ ամք ՇԾԳ (553)»[17]*։ Նույն հեղինակը, խոսելով 1113 թվականի մարտի 19-ին տեղի ունեցած արեգակի խավարման մասին և այդ առթիվ բերելով մի շարք թվական զուգահեռներ, այն թվագրել է. «Ի գալստենէ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՃԺԵ (1115)»*[18]*։ Հ. Բադալյանը Օպպոլցերի աղյուսակների հիման վրա պարզել է, որ արեգակի հիշյալ խավարումը տեղի է ունեցել 1113 թվականի մարտի 10-ին*[19]*։ Հովհաննես Իմաստասերի մոտ այդ խավարումը հիշված 1115 թվականի տակ, հասկանալի է, որ հայկական մեծ թվականի սկզբնավորությունը հայկական* **քրիստոնեականի** *553-ից է հաշված։*

Քանի որ մենք ներկայումս առաջնորդվում ենք ոչ թե քրիստոնեական հայկական թվականով, այլ՝ քրիստոնեական հռոմեականով, ուստի հայկական մեծ թվականը հայկական քրիստոնեական թվականի հետ համապատասխանության մեջ դնելու համար հայկական քրիստոնեական թվականից անհրաժեշտ է հանել երկու ավելի տարին։ Անհրաժեշտ է միաժամանակ նկատի ունենալ, որ հայկական քրիստոնեական և հռոմեական քրիստոնեական թվականների միջև գոյություն ունեցող երկու տարվա այս տարբերությունը հետագա դարերում աստիճանաբար հարթվում է. մեզանում սկսում են գործածել հռոմեականը, թեև մինչև 17-րդ դարը մեկ-մեկ պատահում են քրիստոնեական հայկական թվականի գործածության փաստեր։

Գ. ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՔՐ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եթե հայկական մեծ թվականի սկզբնավորությունը կապված է եղել ՇԼԲ առաջին աղյուսակի հետ, ապա հայկական փոքր թվականի սկզբնավորությունը կապված է Հովհաննես Իմաստասերի կազմած երկրորդ ՇԼԲ աղյուսակների սկզբնավորության հետ։ Մատենագրության մեջ այն հանդիպում է տարբեր անուններով՝ **«Փոքր թուական», «Սարկաւագադիր թուական», «Մտրուկ թուական», «Թուական նորոյ շրջանի»** *և այլ։*

Առաջին ՇԼԲ աղյուսակները, որ սկսվել էին 552 թվականի հուլիսի 11-ին. 532 տարիների շրջան կատարելով, վերջացել են 1083 թվականի փետրվարի 29-ին (նահանջ տարի)[20]*։ Հովհաննես Իմաստասերը հայկական ամանորը փետրվարի 29-ից տեղափոխել է օգոստոսի 11-ը՝ իր կազմած ՇԼԲ-ն սկսելով 1084 թվականից։ Իմաստասերի տոմարով ներկա տարեթիվը, ինչպես կարելի է նկատել, չէր ամփոփվում մի տարվա մեջ, այլ սկսելով օգոստոսի 11-ից. անցնում էր այդ տարվա դեկտեմբերը և շարունակվում մինչև հաջորդ տարվա օգոստոսի 10-ը։ Ահա այս նկատառումով նա իր ՇԼԲ-ի առաջին տարին սկսել է ոչ թե 1084 թվականից, այլ՝ 1083-ից։ Ուստի Հովհաննես Իմաստասերի* **փոքր** *կոչվող թվականը վերծանելիս պետք է նկատի ունենալ հետևյալը. եթե դեպքը տեղի է ունեցել օգոստոսի 11-ից առաջ, անհրաժեշտ է տրված թվա-*

---

[17] Ա. Գ. Աբրահամյան. *Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը*. էջ 217։

[18] *Նույն տեղում, էջ 278։*

[19] Հ. Ս. Բադալյան, *Օրացույցի պատմություն, էջ 78—79։*

[20] *Աղյուսակի վերջին տարին սկսվում էր 1083 թ. մարտի 1-ին և վերջանում փետրվարի 29-ին։*

կանին գումարել 1084, իսկ եթե օգոստոսի 11-ից հետո՝ անհրաժեշտ է գումարել 1083։

Բերենք հայկական փոքր թվականով թվագրված մի քանի տարեթվեր և վերծանենք։

Եղիշեի պատմությունը Կոշավանքում ընդօրինակվել է «Ի Հայկազեան թուականիս վեցհարիւրերրորդի և երկուց տասանց՝ եզակաւ միով առաւելեալ, եւ ըստ նորում շրջանիս միոյ յոբելենի և երից տասանց և քառից երկուց, և ըստ ծննդեան կենարարին և մերոյ ազատութեան ի մահուանէ անմահութիւն... ՌՃՀԴ (1174)»[21]։ Հայկական մեծ թվականը հավասար է՝ 621+551=1172-ի։ Քրիստոնեական հայկական թվականը հավասար է՝ 1174—2=1172։ Հայկական փոքր թվականը հավասար է 88+1084=1172։ Ձեռագիրն, ուրեմն, գրված է 1172 թվականի առաջին կեսում, ուստի գումարում ենք ոչ թե 1083, այլ՝ 1084։

Ստեփանոս գրիչն իր ընդօրինակած ձեռագիրն ավարտել է «...ի թուաբերութեանս Ասքանազեան և Աբեթական տոմարի ՊԱ (801), և ըստ Նորումս շրջանի ՄԿԹ (269) և ի գալստենէ կենարարին ՌՅԾԴ (1354)»[22]։ Հայկական մեծ թվականը հավասար է՝ 801+551=1352-ի։ Հայկական քրիստոնեական թվականը՝ 269+1083=1352-ի։ Այսպիսով, երեք թվականներն էլ համապատասխանում են իրար։ Ձեռագիրը գրված է տարվա երկրորդ կեսում, օգոստոսի 11-ից հետո, այդ պատճառով ավելացնում ենք 1083։

Մաշտոցի անվան մատենադարանի № 7547 ձեռագրի ընդօրինակությունն ավարտված է «Յաբեթական տաւմարի ի ՊԻԴ (824), և ըստ նորում շրջանի ի ՄՂԱ (291), և ի գալստենէ կենարարին ՌՅՀԷ (1377), և յելից Ադամայ ի դրախտէն ՑՊ (6800)»[23]։ Հայկական մեծ թվականով ձեռագիրը գրված է՝ 824+551=1375-ին, քրիստոնեական հայկական թվականով՝ 1377—2=1375-ին։ Արարչության թվականը Աղեքսանդրյանն է, ուստի պետք է հանել 5425՝ կլինի դարձյալ 1375 (6800—5425=1375)։ Հայկական փոքր թվականը հավասար է՝ 291+1084=1375։ Ձեռագիրը գրված է օգոստոսի 11-ից առաջ, ուստի անհրաժեշտ է լինում գումարել ոչ թե 1083, այլ՝ 1084։

Ղազար գրիչը Գողթնի Սինեական անապատում «Կարգաւորութիւն հասարակաց աղօթից» աշխատությունն ընդօրինակել է «... ի թուաբերութեան Յաբեթական տոմարիս ՊԼԴ (834) և ի փոքր թուականութեան ՅԲ (302), ի Հռոմայեցւոց ՌՃ[ԼԸ] (1138)»[24]։ 834-ին գումարելով 551, ստանում ենք 1385։ Հռոմեական 1148-ին գումարելով 247, ստանում ենք 1385։ Քանի որ հայկական մեծ թվականից երևում է, որ հավասարություն ստանալու համար փոքր թվականին անհրաժեշտ է գումարել 1083, հետևապես ձեռագիրը գրվել է 1083 թ. օգոստոսի 11-ից հետո (302+1083=1385)։

Դ. ԱԶԱՐԻԱ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1616 թվականին ինչպես նշել ենք, վերջացավ Հովհաննես Իմաստասերի կազմած 532 տարիների տոմարական աղյուսակը, և անհրաժեշտություն աառաջացավ կազմելու երրորդ 532 տարիների համար նոր աղյուսակ։ Այդ գործը ձեռնարկեց Ազարիա Ջուղայեցին. նա կազմեց ՇԼԲ նոր աղյուսակ այն տարբերությամբ, որ ամանորը ընդունեց ոչ թե Իմաստասերի հաստատած օգոստոսի 11-ը, այլ գարնանային գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ը[25]։ Ազարիա Ջուղայեցու մշակած տոմարը և նրա աղյուսակները սկիզբ հանդիսացան մի նոր թվականության, որը հայ մատենագիտության մեջ հայտնի է «Ազարիայի թվական» կամ «Թուական Նորում շրջանի» անուններով։

---

[21] Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 410—411։

[22] «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 399։

[23] Նույն տեղում, էջ 518։

[24] ՄԱՄ ձեռ. № 592, թ. 232ա։

Ազարիայի թվականը մեր ներկային վերածելու համար, եթե մարտի 21-ից հետո է, անհրաժեշտ է տրված թվականին գումարել 1615, իսկ նրանից առաջ՝ գումարել 1616։ Վերծանենք Ազարիայի դարագլխով թվագրված մի քանի տարեթվեր։

Նոր Ջուղայի Ս. Լուսավորիչ եկեղեցու գավթի մի տապանաքարի վրա կարդում ենք.

«Այս է տապան Փանոսի,
Անմեղ մանկան նահատակի,
Կրտսեր որդի Խոջամալի,
Խելօք տղայ քաղցր և բարի,
Կսկիծ եթող եղբարց սրտի,
Փոքր թուին ՃԷ-ի (107-ի),
Նախայ ամսին մինն»[26]։

Ազարիայի թվականի ՃԷ-ն (107) հավասար է 1723-ի (107+1616=1723), իսկ նախա ամսի մեկը՝ հունիսի 19-ին, ուստի գումարում ենք 1616։

Մեսրոպ Սեթը (Սեթյանը) իր «Հայերը Հնդկաստանում» անգլերեն գրված աշխատության մեջ բերում է Հնդկաստանի Ագրա քաղաքի գերեզմանատանը գտնվող տապանաքարի հետևյալ արձանագրությունը (թարգմանում ենք անգլերենից). «Այս է տապան Սամուէլի, որդւոյ Ջոհրաբ Բեկի։ Վախճանեալ ի 159 թուականին Ազարիայի»[27]։ Մեսրոպ Սեթը Ազարիայի թվականին գումարել է 1615, նկատի ունենալով, անշուշտ, Սամուելի մահը մարտի 21-ից առաջ տեղի ունենալու փաստը։

Փիրղալեմյանի հավաքած ձեռագրերի հիշատակարանների անտիպ ժողովածուի մեջ բերված է Ազարիա Ջուղայեցու թվականը պարունակող հետևյալ հիշատակարանը. «Աւարտեցաւ ընդօրինակութիւնն ձեռագրիս ի թուաբերական տումարի ՌԾԵ (1105) և ըստ նորում շրջանի ԽԱ (41), և ի գալստեան կենարարին՝ ՌՈԾԶ (1656), և ելիցն Ադամայ ՒՋԱ (7081) ի հայրապետութեանն Յակոբայ»։

Հայկական մեծ թվականով ՌԾԵ-ն հավասար է 1656-ի (1105+551=1656), արարչության թվականը հիշված է աղեքսանդրյան հաշվով, ուստի 7081-ից պետք է հանենք 5425, կմնա՝ 1656։ Ջուղայեցու ԽԱ թվականը հավասար է 41+1615=1656։ Այսպիսով, ձեռագիրը գրված է, անվիճելի, 1656 թվականի մարտի 21-ից հետո։

---

[25] Ազարիայի թվականը լայն չափով չի օգտագործվել Հայաստանում։

[26] Հ. Տէր-Յովհանեանց, Պատմութիւն Նոր Ջուղայու, հ. Ա, էջ 231։

[27] Mesrop Seth. Armenians in India, Calcutta, 1935, p. 127.

Նոր Ջուղան վերակառուցելու նպատակով քաղաքի աչքի ընկնող 26 հայ խոջաներ համատեղ մի պայմանագիր են կնքել Ազարիայի 154 թվականին. «Գրվեցաւ թվին 154 նախայ 15»[27] — կարդում ենք պայմանագրի վերջում։ Ազարիայի 154 թվականը հավասար է մեր ներկա թվականի 1770-ին (1616+154=1770), իսկ նախայ 15-ը՝ հուլիսի 3-ին։

1798 թվականին Կալկաթայում տպված էֆիմերտեի մեջ բերված է հռոմեական, հայկական մեծ, արարչության, հիջրայի և Ազարիայի թվականների զուգահեռ մի ցանկ, ուր առաջին սյունակում ներկա թվականի 1752-ը համաձայնեցված է Ազարայի 136-ին, հիջրայի 1165-ին, հայկական մեծ թվականի 1201-ին և հրեից թվականի 5512-ին[28]։ Ազարիայի 136 թվականը հավասար է 136+1616=1752։ Հայկական մեծ թվականը հավասար է՝ 1201+551=1752։ Հիջրայի 1165 թվականը հավասար է դարձյալ 1752-ի։

Նոր Ջուղայի ձեռագրերից մեկում հանդիպում ենք այսպիսի մի հիշատակագրության. «Թիւն մեծ ՌՃՀԱ (1722), փոքր թիւն ՃԷ (107) նիրհան ԺԸ (18) աղւանն եկն Ասպահան, պատերազմեցաւ մինչի վեց ամիս և կէս, որ ի քառակերպեան հարցի կիւրակէին եմուտ ի քաղաքն և թախտ նստաւ, այսինքն՝ շահ Մահմուդն»[29]։ Ըստ այս հիշատակագրության, շահ Մահմուդը գահակալել է հայկական մեծ թվականի 1171-ին, որը ներկա թվականով կլինի 1722-ին, Ազարիայի թվականով կլինի 107-ին, որը ներկա թվականով կլինի դարձյալ 1722՝ 1615 գումարումով։ Նիրհան ամսի 18-ը հավասար է մարտի 25-ին, դարնանամուտից հետո, ուստի 1616 գումարելու փոխարեն գումարվում է 1615։

Նոր Ջուղայի հայկական ձեռագրական ժողովածուի մեջ գտնվող № 216 ձեռագրում Հարություն երեցի թողած հիշատակարանից երևում է, որ նա ձեռագրի ընդօրինակությունը ավարտել է. «Ի թուականին Հայոց ՌԿԱ (1061), փոքր թվականին ՂԷ (97) դամայ ամսի ԺԷ. ումն (17)՝ նոյեմբերի Ա (1)» (թ. 450ա)[30]։

Հայկական մեծ թվականի 1161-ը ներկա թվականով հավասար է 1712-ի (1161+551=1712)։ Ազարիայի թվականով 97-ը դարձյալ հավասար է 1712-ի՝ 1615-ի գումարումով (97+1615=1712)։ Ինչ վերաբերում է ամսաթվին, ապա նոյեմբերի 17-ին, իրոք եղել է դամա ամսի մեկը։

Մաշտոցի անվան մատենադարանի № 4515 ձեռագիրը գրված է. «Ի թուաբերական տումարի ՌՃԵ (1105) և ըստ նորում շրջանի՝ ԽԱ(41) և ի գալստեան կենարարին ՌՈԾԶ (1656) և յելիցն Ադամայ ԻՁԱ (7081), ի հայրապետութեանն տեառն Յակոբայ» (թ. 466)։ «Կենարարի» թվականը՝ ներկա թվականն է՝ 1656։ Հայկական թվականը մեծն է, որին գումարելով 551, ունենում ենք 1656 (1105+551=1656)։ Արարչության թվականը՝ աղեքսանդրյանն է, որից անհրաժեշտ է հանել 5425. 7081-ից հանելով 5425, ստանում ենք 1656։ Հիշատակարանի Հակոբ կաթողիկոսը՝ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսն է, որը գահակալել է 1655—1680 թվականներին։ «Նորում շրջան»[31] ասելով հիշատակագիրը նկատի է ունեցել Ազարիայի թվականը. 41-ին գումարելով 1615 (և ոչ

---

[27] Հ. Տեր-Հովհանյանց, Պատմություն Նոր Ջուղայու, հ. Ա, էջ 314։

[28] «Գրքույկ, որ կոչի էֆիմերտէ», Կալկաթա, 1798։

[29] Ս. Վ. Տեր-Ավետիսյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի ամենափրկիչ վանքի. Վիեննա, 1970, էջ 748։

[30] Օգտվել ենք Տեր-Ավետիսյանի ձեռագիր ցուցակից։

[31] Արտ. Սիւրմէեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու. հ. Ա, էջ 33։

1616, նկատի ունենալով, որ մարտի 21-ից հետո է), ունենում ենք 1656 (1615+41=1656)։

Սյուրմեյանի «Եվրոպայի մասնավորներում առաջին հատորում նկարագրված № 20 ձեռագրի մեջ Հակոբ քահանան թողել է հետևյալ հիշատակագրությունը. «Գրվեցաւ գիրս թվ[ի]ն ՌՃԼԲ (1132), փոքր թվ[ի]ն ԿԸ (68 դամայ ամսոյն Ա(1)»։ Հայկական թվականը հավասար է 1683-ի (1132+551=1683։ Փոքր թվականը հավասար է 68+1615=1683-ի (1615 է գումարվում, որովհետև մարտի 21-ից հետո է)։

Հովհաննես գրիչ Շարստանյանի թողած մի հիշատակագրությունից երևում է, որ նա ծնվել է. «Թվին փրկչի ՌՉԺ (1710) թ. օգոստոսի 25-ին, թվին Հայոց ՌՃԾԹ (1159), փոքր թվին ՂԵ (95), նադար Ը (8), որ գիր տարուն էր Ճ... պատկեր օրն ուրբաթ լուս շաբաթ»[32]։ Հայկական մեծ թվականին գումարելով 551, ստանում ենք 1710 (1159+551=1710), որը համապատասխանում է հիշված «փրկչական» թվականին։ «Փոքր թվականը»՝ Ազարիայի թվականն է, որին անհրաժեշտ է գումարել 1615, ստանում ենք 1710 (95+1615=1710)։ 1710 թվականին տարեգիրը, իրոք, եղել է «Ճ» տառը։ Օգոստոսի 25-ը համապատասխանում է նադար ամսի 8-ին։ Այդ օրը սակայն եղել է ո՛չ թե ուրբաթ լուս շաբաթ, այլ՝ հինգշաբթի լուս ուրբաթ։

Ազարիայի ամսաթվերի վերծանության գործը դյուրացնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում բերել հայկական մեծ, Ազարիայի և ներկայումս գործածական թվականների համեմատական տախտակ։

Համեմատական տախտակ հայոց մեծ. հռոմեական և Ազարիայի ամսաթվերի

նավասարդ	օգոստոս	դամար	հոռի	սեպտեմբեր	նադար	սահմի	հոկտեմբեր	թիրա	տրե	նոյեմբեր	քամա	քաղոց	դեկտեմբեր	համիրա	արաց	հունվար	արամ
1			2			3			4			5			6		
1	11	24	1	10	24	1	10	24	1	9	24	1	9	24	1	8	24
2	12	25	2	11	25	2	11	25	2	10	25	2	10	25	2	9	25
3	13	26	3	12	26	3	12	26	3	11	26	3	11	26	3	10	26
4	14	27	4	13	27	4	13	27	4	12	27	4	12	27	4	11	27
5	15	28	5	14	28	5	14	28	5	13	28	5	13	28	5	12	28
6	16	29	6	15	29	6	15	29	6	14	29	6	14	29	6	13	29
7	17	30	7	16	30	7	16	30	7	15	30	7	15	30	7	14	30
		նադար			թիրա			քամա			համիրա			արամ			օվդան
8	18	1	8	17	1	8	17	1	8	16	1	8	16	1	8	15	1
9	19	2	9	18	2	9	18	2	9	17	2	9	17	2	9	16	2
10	20	3	10	19	3	10	19	3	10	18	3	10	18	3	10	17	3
11	21	4	11	20	4	11	20	4	11	19	4	11	19	4	11	18	4
12	22	5	12	21	5	12	21	5	12	20	5	12	20	5	12	19	5
13	23	6	13	22	6	13	22	6	13	21	6	13	21	6	13	20	6
14	24	7	14	23	7	14	23	7	14	22	7	14	22	7	14	21	7
15	25	8	15	24	8	15	24	8	15	23	8	15	23	8	15	22	8
16	26	9	16	25	9	16	25	9	16	24	9	16	24	9	16	23	9
17	27	10	17	26	10	17	26	10	17	25	10	17	25	10	17	24	10

---

[32] ՄԱՄ ձեռ. № 3555 թ. 262 բ։

1			2			3			4			5			6		
18	28	11	18	27	11	18	27	11	18	26	11	18	26	11	18	25	11
19	29	12	19	28	12	19	28	12	19	27	12	19	27	12	19	26	12
20	30	13	20	29	13	20	29	13	20	28	13	20	28	13	20	27	13
21	31	14	21	30	14	21	30	14	21	29	14	21	29	14	21	28	14
						22	31	15	22	30	15	22	30	15	22	29	15
												23	31	16	23	30	16
															24	31	17
	սեպտեմբեր			հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր			հունվար			փետրվար	
22	1	15	22	1	15												
23	2	16	23	2	16	23	1	16	23	1	16						
24	3	17	24	3	17	24	2	17	24	2	17	24	1	17			
25	4	18	25	4	18	25	3	18	25	3	18	25	2	18	25	1	18
26	5	19	26	5	19	26	4	19	26	4	19	26	3	19	26	2	19
27	6	20	27	6	20	27	5	20	27	5	20	27	4	20	27	3	20
28	7	21	28	7	21	28	6	21	28	6	21	28	5	21	28	4	21
29	8	22	29	8	22	29	7	22	29	7	22	29	6	22	29	5	22
30	9	23	30	9	23	30	8	23	30	8	23	30	7	23	30	6	23

մեհեկի	փետրվար	օվգան	արեգի	մարտ	նիրհան	ահեկի	ապրիլ	շեմս	մարերի	մայիս	ադամ	մարգաց	հունիս	շբաթ	հրոտից	հուլիս	նախս
1			2			3			4			5			6		
1	7	24	1	9	24	1	8	19	1	8	19	1	7	19	1	7	19
2	8	25	2	10	25	2	9	20	2	9	20	2	8	20	2	8	20
3	9	26	3	11	26	3	10	21	3	10	21	3	9	21	3	9	21
4	10	27	4	12	27	4	11	22	4	11	22	4	10	22	4	10	22
5	11	28	5	13	28	5	12	23	5	12	23	5	11	23	5	11	23
6	12	29	6	14	29	6	13	24	6	13	24	6	12	24	6	12	24
7	13	30	7	15	30	7	14	25	7	14	25	7	13	25	7	13	25
		նիրհան			ավելյաց												
8	14	1	8	16	1	8	15	26	8	15	26	8	14	26	8	14	26
9	15	2	9	17	2	9	16	27	9	16	27	9	15	27	9	15	27
10	16	3	10	18	3	10	17	28	10	17	28	10	16	28	10	16	28
11	17	4	11	19	4	11	18	29	11	18	29	11	17	29	11	17	29
12	18	5	12	20	5	12	19	30	12	19	30	12	18	30	12	18	30
					շեմս			ադամ			շբաթ			նախս			գամար
13	19	6	13	21	1	13	20	1	13	20	1	13	19	1	13	19	1
14	20	7	14	22	2	14	21	2	14	21	2	14	20	2	14	20	2
15	21	8	15	23	3	15	22	3	15	22	3	15	21	3	15	21	3
16	22	9	16	24	4	16	23	4	16	23	4	16	22	4	16	22	4
17	23	10	17	25	5	17	24	5	17	24	5	17	23	5	17	23	5
18	24	11	18	26	6	18	25	6	18	25	6	18	24	6	18	24	6
19	25	12	19	27	7	19	26	7	19	26	7	19	25	7	19	25	7

1			2			3			4			5			6					
20	26	13	20	28	8	20	27	8	20	27	8	20	26	8	20	26	8			
21	27	14	21	29	9	21	28	9	21	28	9	21	27	9	21	27	9			
22	28	15	22	30	10	22	29	10	22	29	10	22	28	10	22	28	10			
			23	31	11	23	30	11	23	30	11	23	29	11	23	29	11			
									24	31	12	24	30	12	24	30	12			
															25	31	13			
	մարտ			ապրիլ			մայիս			հունիս			հուլիս			օգոստոս		Ավելյաց 1ն	Օգոստոսի [illegible]	համար
23	1	16																		
24	2	17	24	1	12	24	1	12												
25	3	18	25	2	13	25	2	13	25	1	13	25	1	13						
26	4	19	26	3	14	26	3	14	26	2	14	26	2	14	26	1	14	1	6	19
27	5	20	27	4	15	27	4	15	27	3	15	27	3	15	27	2	15	2	7	20
28	6	21	28	5	16	28	5	16	28	4	16	28	4	16	28	3	16	3	8	21
29	7	22	29	6	17	29	6	17	29	5	17	29	5	17	29	4	17	4	9	22
30	8	23	30	7	18	30	7	18	30	6	18	30	6	18	30	5	18	5	10	23

Ե. ԾՌԱԶԱՏԻԿԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՃՇՏՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Անդրեաս Բյուզանդացու կազմած երկուհարյուրամյա տոնական ցանկը վերջանալուց հետո, ինչպես ասել ենք, Աղեքսանդրիա քաղաքում 36 գիտնականներ, Էաս Աղեքսանդրացու գլխավորությամբ, կազմեցին 532 տարիների տոնացանկ։ Այդ նույն ժամանակ Կոստանդնուպոլսում Իրիոն Բյուզանդացի անունով մեկը կազմեց 532 տարիների մի այլ տոնացանկ, որը նման լինելով Աղեքսանդրիայում կազմածին, ուներ նաև մի փոքրիկ տարբերություն. 532 տարվա ընթացքում կար չորս տարի, երբ զատիկը սահմանված էր տարբեր օրերում. այդ տարիներին Իրիոն Բյուզանդացու տոնացանկում զատիկը սահմանված էր ապրիլի 6-ին, իսկ Էաս Աղեքսանդրացու տոնացանկում՝ ապրիլի 13-ին, այսինքն՝ մեկ շաբաթ հետո։ Տարբերությունը առաջացել էր այն պատճառով, որ Իրիոն Աղեքսանդրացու մոտ նախազատկական լուսնի լրումը փոխանակ կիրակի առավոտյան հաշվելու, ընկնում էր շաբաթ երեկոյան։ Քանի որ հայերը, որպես միաբնակ դավանության քրիստոնյաներ, հետևում էին Էաս Աղեքսանդրացու տոնացանկին, ուստի, նրանց համոզմամբ, Իրիոն Բյուզանդացու զատկի ժամանակի որոշումը սխալ էր։ Այդ էր պատճառը, որ նրանք այդ զատիկն անվանել են «ծռազատիկ», այսինքն՝ ծուռ զատիկ»։ Խոսքը, իհարկե, 532 տարիների ընթացքում չորս անգամ պատահող զատկական օրերի վրիպումների մասին է։

Որոշակի հայտնի է, որ ծռազատիկներ եղել են հետևյալ թվականներին. ***665, 750, 1007, 1102, 1197, 1292, 1539, 1634, 1729, 1824։*** *(Մենք այստեղ վերցրել ենք 532 տարիների ոչ թե մեկ, այլ երկու և կես պարբերաշրջանները)։ Ծռազատիկները լինում են պարբերաշրջանի առաջին մասում՝ 95 տարիների իրարից հեռու տևողության մեջ, որից հետո 247 տարիների ընթացքում ծռազատիկներ չեն լինում։*

Տոմարական այդ աննշան տարբերությունը միջին դարերում մեծ կրքեր է բորբոքել և բուռն վեճերի տեղիք տվել։ Քանի որ հայերը, որպես աղեքսանդրյան տոնացանկին հետևողներ, գործուն մասնակցություն են ունեցել վեճերին, ուստի հայ մատենագիրներն իրենց պատմությունների և ժամանակագրությունների մեջ հաճախ են անդրադառնում ծռազատիկներին։ Ծռազատիկները մեծ մասամբ հիշվում են ժամանակագրական ընդհանուր ֆոնի վրա՝ զուգահեռ տրվող պատմական իրադարձությունների կապակցությամբ, ուստի նրանք մեծ չափով օգնում են պարզելու այս կամ այն հեղինակի որդեգրած ժամանակագրական սկզբունքը՝ մեկ կամ երկու տարի առաջ ու ետ հաշվումով։ Այդ նկատի ունենալով, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել ծռազատիկի հիշատակությունների մի քանի փաստերի վրա և ուղղել որոշ անախրոնիզմներ[33]։

Ջմմառի ձեռագրաց ցուցակում հրատարակված է 17-րդ դարի մի հեղինակի կազմած ծռազատիկների ցանկ, որի մեջ կան մի քանի սխալներ։ Բերենք այդ ցանկը.

«Հայոց թվականին Ժ (561) էր՝ պատառեաց Իրիոն զատիկն։
Եւ ժամանակ էանց եղև ՃԶ (667)՝ պատառումն զատկի։
ՄԱ (752)՝ պատառումն զատկի։
ՆԽԱ (992)՝ մոլորեցան Յույնք զզատիկն։
ՇԼԱ (1082)՝ մոլորեցան Յույնք զզատիկն։
ՇԾ (1101)՝ լոյս Երուսաղէմ ոչ վառեցաւ յաւուր շաբաթու, այլ՝ կիրակէի Թ (9) ժամն ծռազատիկ արարին ամենայն ազգ, հայք և ասորիք ուղիղ կան։
ՈԽԶ (1197)՝ խանգարումն զատկի։
ՈԾԹ (1210)՝ պատառումն զատկի։
ՉԺԷ (1268)՝ տաս ազգ մոլորեցան զզատիկն։
ՉԼԸ (1289)՝ մոլորեցան Յոյնք զզատիկն։
ՊԽԶ (1397)՝ մոլորեցան Յոյնք զզատիկն։
ՋՁԸ (1539)՝ մոլորեցան Յոյնք զզատիկն։
ՌՁԳ (1634)՝ մոլորեցան Յոյնք զզատիկն»[34]։

Ցանկում սխալներ են թույլ տրված հետևյալ թվականներում. ծռազատիկը եղել է ո՛չ թե 752-ին, այլ՝ 750-ին, ո՛չ թե 992-ին, այլ՝ 1007-ին, ո՛չ թե 1082-ին, այլ՝ 1097-ին, ո՛չ թե 1101-ին, այլ՝ 1102-ին, ո՛չ թե 1268-ին, այլ՝ 1292-ին, ո՛չ թե 1289-ին, այլ՝ 1292-ին։ Ինչ վերաբերում է 1210 և 1397 թվականների տակ հիշված ծռազատիկներին, ապա այդ բացահայտ թյուրիմացություն է, որովհետև հիշյալ թվականներին և նրանց մոտիկ տարիներին ծռազատիկներ չեն եղել։

Հ. Տաշյանի կազմած Վիեննայի Մխիթարյանների ձեռագրաց ցուցակում հրատարակված է № 417 ձեռագրի պարունակած մի ժամանակագրություն, որի մեջ ծռազատիկ է հիշված 1291 թվականին. «Թվին ՉԽ (1291) մոլորեցան Յոյնք և արարին ծռազատիկ, և յանըմ ժամանակին ի Կիլիկէ երկիրն թագաւոր Հայոց են լեալ մեր Հայոց ազգս երկու են բաժաներ՝ կէսք ընդ Յունաց են հետևեր և կէսք ուղիղ են կացեր»[35]։ Այդ ծռազատիկը, սակայն, եղել է ո՛չ թե 1291 թվականին, այլ 1292-ին։

---

[33] Վերջերս ծռազատիկներին նվիրված երկու հոդված լույս տեսավ. Մ. Գրիգորյան, Ճշտում Մաշտոցի անվան մատենադարանի № 8550 ձեռագրի պահպանակի թվականի (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1967, էջ 323—326). Ա. Կ. Սանջյան „Crazatik, Erroneous easter—a source of greco-armenian religious controversy" „Studia Caucasica" պարբերականի 1966 թ., № 2-ում։

[34] «Ցուցակ ձեռագրաց Ջմմառի», էջ 172—178։

Թ. Գուշակյանի կազմած Սեբաստիայի ձեռագրերի ցուցակում հրապարակված մի հիշատակարանում ծռազատկի մասին հետևյալ տեղեկությունն է հաղորդվում. «Ծռազատիկ որ կասէին՝ չաք տեսեր, հանես տեսաք Թ. ՋՀԸ (1529)... ապրիլի Զ (6) հոռոմն զատիկ արաւ, թէ լուս կլնէ, չէր եղեր... ապրիլի ԺԳ (13) եղաւ Հայոց ազգին»[36]։

Իրականում այդ ծռազատիկը եղել է ո՛չ թե 1529 թ., այլ՝ 1539 թ.։ Գուշակյանն, անշուշտ, շփոթել է հիշատակարանում գործ ածած «Ձ» տառը «Հ»-ի հետ։

Վ. Հակոբյանի հրատարակած «Մանր ժամանակագրությունների» երկրորդ հատորում «Այս է թվական տաճկաց» վերնագրով ժամանակագրության մեջ ծռազատիկ է հիշված 1281 թ. «Թվին ՉԺԷ (1268) շարժ եղև յԵրզնկան, ի յօր կիրակէին՝ ԺԵՌ (15 000) մարդ մեռաւ։ Եւ ի սոյն ամի մոլորեցան Ժ (10) ազգք քրիստոնեա զատիկն»[37]։

Իրականում այդ ծռազատիկը եղել է ո՛չ թե 1268 թվականին, այլ՝ 1289 թվականին։

Հակոբյանի հրատարակած «Մանր ժամանակագրությունների» նույն հատորում «Ժամանակագիր է» խորագիր ունեցող տարեգրության մեջ ծռազատիկ է հիշված 1291 թ.։ Այնտեղ ասված է. «Ի թվին Չխ (1291) Ժ (10) ազգ քրիստոնէքն ծռեցան ի սուրբ զատկէն, բայց Հայք և Ասորիք ուղեղ կացին։ Եւ կաթողիկոսն տէր Ստեփանոս և թագաւոր Հայոց Հեթում ընդ Յոյնք արարին զատիկ յապրիլի Զ (6). և պատճառն էր այս, զի բազում հնարիւք ջանային զի միաբանութիւն լիցի ընդ Յոյնք և ոչ կարացին։ Բայց ի Կեսարիոյ մինչև յարևելք ուղեղ արարին զզատիկն յապրիլի ԺԳ (13)»[38]։

Իրականում, ինչպես ասել ենք վերևում, ծռազատիկը եղել է 1292 թվականին։

Սամուել Անեցու, Մատթեոս Ուռհայեցու և միջնադարյան այլ հեղինակների մոտ կան թվագրված ծռազատիկների մի շարք սխալներ, որոնց վրա կանգ են առել Մ. Օրմանյանը, Մ. Գրիգորյանը, Ա. Կ. Սանջյանը, որոնց անհրաժեշտ չենք համարում անդրադառնալ։ Ձեռագրական ցուցակներում ևս նկատվում են նման անախրոնիզմներ։ Թվականների նկատվող որոշ շեղումների պատճառը հաճախ առաջանում է հայկական թվականի՝ ներկա թվականի հետ ունեցած զուգավորության անհամապատասխան լինելուց, ոչ բոլոր դեպքում էր, ինչպես ասել ենք, անհրաժեշտ է լինում գումարել 551, երբեմն պետք է լինում գումարել 550, երբեմն՝ 552, նույնիսկ՝ 553։

Գ. ԱՐԱՐՉՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Արարչության» թվական ասելով նկատի է առնվում մեր երկրի սկզբնավորությունը՝ միջնադարյան տոմարագետների հաշվումներով։ Սահմանվել է արարչության քսանից ավելի իրարից տարբերվող և ժամանակավրեպ թվականներ։ Բերենք նրանցից մի քանիսը՝ հաշվելով մինչև մեր թվականության սկիզբը[39]։

---

[35] «Ցուցակ ձեռագրաց Վիեննայի», էջ 871։

[36] «Ցուցակ ձեռագրաց Սեբաստիայի», էջ 35։

[37] «Մանր ժամանակագրություններ», հ. Բ, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 284։

[38] Նույն տեղում, էջ 149։

3760—Հիլել Ռաբբու (Հրեական)
4103—Հովսեփ Փլաբիոսի
5026—Ասորական
5091—Եննանիոսի
5198—Յոթանասնից և Եվսեբիոս Կեսարացու
5208—Կայսերական
5276—5277—Մովսես Սյունեցու
5281—Շիրակացու
5280—Աթանասի
5287—Գրիգոր Ասորու
5423—Աղեքսանդրյան
5492—5493—Անտիոքի
5500—Աֆրիկանոսի և Անանիոս Աղեքսանդրացու
5508—5509—Հռոմեական
5515—Հիպպողիտեսի
5624—Կղեմես Աղեքսանդրացու
5680—Իրոն Բյուզանդացու
5967—5969—Հյուսիքիոսի։

Այս թվականներից հայ մատենագրության մեջ գործ են ածվել հիմնականում չորսը՝ յոթանասնից, կայսերականը, աղեքսանդրյանը, Շիրակացունը։

1. Արարչության յոթանասնից թվականի վերծանությունը

Այս թվականը յոթանասնից է կոչվում այն պատճառով, որ այն սահմանել են Աստվածաշնչի յոթանասնից կոչվող խմբագրության թարգմանիչ տոմարագետները։ Այս թվականն օգտագործող հայ տոմարագետները Ադամից մինչև Քրիստոս հաշվում են 5198 տարի։ Հակոբ Ղրիմեցին, Թովմա Մեծոփեցու հանձնարարությամբ կազմած «Մեկնութիւն տոմարի» աշխատության մեջ, քննարկելով մի շարք դարաշրջանների սկզբնավորությունն ու տևողությունը, գալիս է այն եզրակացության, որ արարչությունից մինչև Քրիստոս տևել է ՐՃՂԸ (5198) տարի[40]։ Պետք է սակայն նկատի ունենալ, որ հայ տոմարագետների հաշվումները հիմնված են քրիստոնեական հայկական թվականի հիման վրա, ուստի տրված արարչության թվականը ներկայումս գործածական թվականին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է 5198-ից բացի, նրանից հանել ավելի երկու տարին։ Եթե դեպքը տեղի է ունեցել տվյալ թվականի սեպտեմբերից հետո[41], անհրաժեշտ է լինում հանել երեք տարի։

Վենետիկի Մխիթարյան մատենադարանի № 129 ձեռագիրն ընդօրինակված է. «...յելիցն Ադամայ ի դրախտէն մինչև առ մեզ հազարաց վեցից և

---

[39] Ներկա ժամանակագրությունը վերցրված է Մ. Չամչյանի «Պատմութիւն Հայոցի» երրորդ գրքի հավելվածից («Ժամանակագրութիւն», էջ 3—4)։

[40] ՄԱՄ. ձեռ. № 2180, թ. 342բ։

[41] Արարչության թվականի ամանորը հաշվվում է սեպտեմբերի մեկից։

չորից հարիւրից, երեսուն յաւելեալ ամաց (6430)։ Իսկ ի ծագմանէ բանին աստուծոյ՝ հազարի միոյ և երկուց հարիւրից, երեսուն և երկուս (1232) յաւելեալ ամօք։ Եւ հայկազեան տումարիս վեց հարիւրից եւթանասուն և ինն (679) ամացս»[42]։ Ձեռագիրը գրված է արարչության 6430-ին, որից հանելով 5198, ստանում ենք 1232, որից հանելով ավելի 2 տարին, ստանում ենք 1230։ Վերջինս համապատասխանում է հայկական թվականին՝ 679+551=1230։ Հիշատակարանի քրիստոնեական թվականը հայկական թվահաշվով է, նրանից հանելով 2 թիվը, դարձյալ ստանում են 1230։

Աստվածատուր վարդապետի թողած նամակից երևում է, որ նա Երուսաղեմ առաջնորդ է հրավիրվել «...յամի Զ Ռ. երորդի, ութ Ճ. երորդի քառասներորդի և վեցերորդ (6846) արարածոց ի սկզբանէ աշխարհի և Ռ.երորդ ԶՃ. որդ և Խ.երորդ Է.երորդի (1647) մարդանալոյն Աստուծոյ և փրկութեան աշխարհի, և Ռ. որդ Ղ.որդ չորորդի (1094) աքեթական տոմարի և հայկազեան թուականի բազմեցաք ի գահոյս աստուածազարդ և առաքելաշնորհ սուրբ աթոռոյս...»[43]։ 6946-ից հանելով 5198, ստանում ենք 1648, որից հանելով ավելորդ երեք տարի (քանի որ սեպտեմբերի 1-ից առաջ է), ունենում ենք 1645 թվականը։ Եվ այդ համապատասխանում է հայկական թվականին (1094+551=1645)։ Քրիստոնեական թվականը հայկական հաշվումով է, ուստի նրանից հանելով ավելորդ երկուսը, ունենում ենք 1645 (1647—2=1645)։ Այս հաշվով, Աստվածատուրը գահակալել է 1645 թ.։

Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի մի ձեռագրում «Պատճառ Սահմանաց գրոց» աշխատության թարգմանության թվականն է հիշված. «Յելանելոյն Ադամայ ի դրախտէն մինչ ի յաւարտումն գրոցս էր թիւ ժամանակի ՑՇԴ (6504), զի յելանելոյն Ադամայ մինչ ի Քրիստոս էր ՐՃՂԸ (5198) և ի ծննդենէն Քրիստոսի ՌՅԺԶ (1316) ամ. իսկ թվ. մեծ Հայոց էր ՉԿԳ (763)»[44]։ Եթե այստեղ ուղղելու լինենք գրչական մի սխալ՝ ՑՇԴ-ն՝ ՑՇԺԴ ձևով, ապա բոլոր թվականները կհամապատասխանեն իրար. արարչության թվականը հավասար է 1314-ի (6514—5198=1316), որից հանելով ավելի 2-ը, կունենանք 1314։ Այս համապատասխանում է հայկական մեծ թվականին՝ ՉԿԳ-ին (763+551=1314)։ Նկատի ունենալով, որ հիշված քրիստոնեական թվականը հայկական հաշվով է և պիտի հանենք 2 միավոր, այն ևս կհամապատասխանի արարչության յոթանասնից թվականին (1316—2=1314)։

Օհաննես Թմոքվեցի գրիչը Արարատյան նահանգի Սերկևիլ գյուղում ընդօրինակած «Տոնականի» ավարտման թվականն է համարում «...ի թուաբերութեանս Հայկազեան տաւմարի ՊՂԱ (891) և կենարարին փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՆԽԴ (1444), և յելանելոյն Ադամայ ի դրախտէն ՑՈԽԲ (6642)»[45]։ Ձեռագրի գրության թվականն է 1444 (6642—5198=1444), որից հանելով ավելի 2-ը, կստանանք 1442։ Այս համապատասխանում է հայկական թվականին (891+551=1442)։ Հիշատակարանում զուգահեռ հիշվածը քրիստոնեական հայկական թվականն է, ուստի նրանից պետք է հանել 2 միավոր (1444—2=1442)։

---

[42] «Վենետիկի ձեռագրաց ցուցակ», հ. Ա, էջ 572։

[43] «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. Բ, էջ 151։

[44] Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 525։

[45] «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 531։

2. Արարչության կայսերական (բյուզանդական) թվականի վերծանությունը

Արարչության այս թվականը կայսերական է կոչվում, որովհետև գործածվել է Բյուզանդիայի կայսրության մեջ և նրա հարևան մի քանի երկրներում։ Այն հիշվում է նաև Արարչության Կոստանդնուպոլսի թվական։ Տարեմուտն սկսում է սեպտեմբերի 1-ից։ Այս դարագլխով թվագրված տարեթվերը մեր ներկա թվականին վերածելու համար անհրաժեշտ է տրված թվականից հանել 5508։ Այս թվականը 9-րդ դարից գործածական էր Բյուզանդիայում, իսկ ապա օգտագործվել է Ռուսաստանում[46]։

Սոկրատի եկեղեցական պատմությունը և Սեղբեստրոսի վարքը Փիլոն Տիրակացին թարգմանել է. «Յամի վեցհազարերորդի երկերերորդի չորրորդի կենցաղում անցաւորի որպէս ունի ժամանակագրութիւն սուրբ Սոփի աստ եկեղեցի տիեզերական մայրաքաղաքին Կոստանդնուպաւլսի»[47]։ Ըստ վերը բերված հաշվի, 6204 թվականից հանելով 5508, ստանում ենք 696 թվականը։

Դիոնիսիոս Արիոպագացու «Յաղագս եկեղեցական և երկնային քահանայութեան» աշխատությունը Ստեփանոս Սյունեցին թարգմանել է. «Ի վեցհազարերորդի երկերիւրերորդի քսաներորդի ամի արարածոց աշխարհիս... յերկերորդ ամի թագաւորութեանն Փիլիպպոսի»[48]։ Արարչության 6220 թվականից հանելով 5508, ստանում ենք 712։ Փիլիպոսի երկրորդ տարին սակայն եղել է 711 թվականը։

Սեբաստիայի Ս. Նշան վանքի № 2 ձեռագիրն ընդօրինակված է.

«...Ի թուիս յաւիտենիս, որ է Ադամա ՑՊԻԱ (6821). և ըստ հայկազան թուականի ՉԿԲ (762) յամսեանն յուլիս ԺԸ (18) յաւուր չորեքշաբաթի և տանուտէրն խոյն»[49]։ Հայկական 762 թվականին գումարելով 551, ստանում ենք 1313 (762+551=1313)։ Արարչության թվականը՝ կայսերական թվականն է, որից հանելով 5508, ստանում ենք 1313 (6821—5508=1313)։ 1313 թվականին տանուտերն իրապես «խոյ»-ն է եղել։ Իսկ 1313 թ. հուլիսի 18-ին եղել է չորեքշաբթի։

3. Արարչության աղեքսանդրյան թվականի վերծանությունը

Այս թվականն աղեքսանդրյան է կոչվում այնտեղ սահմանված լինելու պատճառով. այն կոչվում է նաև «Հինգհարյուրյակի» և կամ «էասյան» թվական, նկատի ունենալով, որ նրա կազմողներից մեկն է հանդիսացել հնգհարյուրյակ տոմարական աղյուսակը նախաձեռնող Էաս Աղեքսանդրացին։ Արարչության աղեքսանդրյան դարագլխով թվագրված տարեթվերը մեր ներկա թվականին վերածելու համար **անհրաժեշտ է տրված թվականից հանել 5423, իսկ քրիստոնեական հայկականը գտնելու համար՝ 5425։**

---

[46] Գործածությունից դուրս հանվեց 1700 թ. Պետրոս Մեծի հրովարտակով և նրա փոխարեն օգտագործվեց ներկա թվականը (տե՛ս Л. В. Черепнин, Русская палеография, М. 1937, էջ 23—24)։

[47] Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 50։

[48] Նույն տեղում, էջ 54։

[49] Թ. Գուշակեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա, էջ 5։

Վենետիկի Մխիթարյանների № 207 «Ճառընտիր»-ը գրված է «...յելանելոյն Ադամայ ի փառակենցաղ դրախտէն ամք ԶՌԷՃԿԶ (6766)։ Եւ ծնընդեանն կենարարին մերոյ ամք ՌԳՃԽԳ (1343)»[50]։ 6766 թվականից հանելով 5425, ունենում ենք 1341 թվականը։ Քրիստոնեական թվականը հայկական թվահաշվով է, նրանից հանելով երկու տարիները, դարձյալ ունենում ենք 1341 (1343—2=1341)։ Երկու թվականներն էլ իրար համապատասխանում են. ձեռագիրը գրված է 1341 թվականին։

Բրիտանական թանգարանի հայկական բաժնի № 19 ձեռագիրը գրված է. «...յԱդամայ մինչև ցայսր ամք ՑՋԿԷ (6967), իսկ հայկազեան թվականիս ՋՂԱ (991) և հռոմայեցոց մեծ թվականին ՌՄՂԴ (1294), և շրջանն, որ է փոքր թվական՝ ՄԼ (230) ի յերկիրս Բզնունեաց, որ այժմ Խլաթ ասի»[51]։ Այս հիշատակարանն անգլերեն թարգմանությամբ հրատարակել է հայագետ Ֆ. Քոնիբերը, որը, սակայն, թվականները չի վերծանել, կարծելով, թե աղավաղված են։ Իրականում, այստեղ ոչ մի աղավաղում գոյություն չունի։ Արարչության թվականը՝ աղեքսանդրյան է, որից հանելով 5425, կունենանք 1542 (6967—5425=1542)։ Հայկական մեծ թվականը հավասար է 1542-ի (991+551=1542)։ Հռոմեական մեծ թվականը հավասար է 1542-ի (1294+248=1542)։ Հռոմեական փոքր թվականով ևս հավասար է 1542 (230+532+532+248=1542)։ Բոլոր թվականներն էլ, ինչպես տեսնում ենք, համապատասխանում են իրար. ձեռագիրը, անվիճելի, գրված է 1542 թվականին։

4. Արարչության Շիրակացու թվականի վերծանությունը

Շիրակացու հաշվումներով Արարչության սկզբից մինչև Քրիստոսի ծնունդը եղել է 5281, իսկ քրիստոնեական հայկական թվականով՝ 5279 տարի։ Արարչության Շիրակացու թվականը ներկա թվականին վերածելու համար նրանից պետք է հանել 5281։

Թադեոս գրիչը Կաֆայում «Հարանց վարքի» ընդօրինակությունն ավարտել է՝ «...յԱդամայ ՑՉԺԱ (6711) ամի ըստ Անանիա վարդապետին Շիրակայնու, և ի ծննդենէ կենարարի փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՆԼԲ (1432)... և թվին Հայոց ըստ արեթական տօմարի ՊՀԹ (879)»[52]։ Հայկական մեծ թվականով ձեռագիրն ընդօրինակված է 879-ին, որին գումարելով 551. ստանում ենք 1430 թվականը։ Հիշված քրիստոնեական 1432 թվականը հայկական թվահաշվով է, որից հանելով ավելի երկու տարի՝ ստանում ենք 1430։ Արարչության Շիրակացու 6711-ից հանելով 5281, ստանում ենք դարձյալ 1430 (6711—5281=1430)։ Այսպիսով, երեք թվականներն իրար համաձայն են. ձեռագիրը գրված է 1430 թ.։

---

[50] «Ցուցակ ձեռագրաց Վենետիկի», հ. Բ, էջ 174։

[51] F. C. Conybeare, A Catalogue of the armenian manuscripts in the British Museum, London, 1913, p. 34.

[52] «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. Գ, էջ 110։

է. ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ողիմպիական թվականը հունական է և կապված է խաղերի հետ. Հին հույները սովորություն ունեին չորս տարին մեկ հավաքվել Ողիմպիա լեռան ստորոտը մրցության, այդ անունով էլ կոչվել է թվականը։ Առաջին ողիմպիադը տեղի է ունեցել 776 թվականի հուլիսի մեկին մ. թ. ա.։ Ողիմպիադի թվականով թվագրելիս տարեթվից բացի նշվում է նաև՝ թե նրա չորս տարիներից որի ժամանակ է տեղի ունեցել տվյալ իրադարձությունը։

Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրության» մեջ, որը մեզ է հասել հայերեն թարգմանությամբ, սելևկյանների դեմ պարթևների տարած հաղթանակի թվական է հիշատակված 132 ողիմպիադի երրորդ տարին մ. թ. ա.[53]*։ 131-ը բազմապատկելով չորսով, ստանում ենք 524, որին գումարելով երեք տարիները ստանում ենք 527, 776-ից հանելով 527-ը, ստանում ենք 249։ Քանի որ ընդունված է, թե այդ իրադարձությունը տեղի է ունեցել հուլիսի 1-ից առաջ, ուստի այն պետք է հաշվել 250-ին մ. թ. ա.։*

Հովհաննես Իմաստասերն իր ժամանակ տեղի ունեցած արեգակի խավարման թվական է հիշել «ՆՀԳ (473) ողիմպիադի առաջին տարին»։ 472-ը բազմապատկում ենք չորսով, ստանում ենք 1888, նրան գումարում ենք մեկ տարին, ստանում ենք 1889, որից հանելով 776, ստանում ենք 1113։ Ըստ Հովհաննես Իմաստասերի տեղեկության, այդ խավարումը տեղի է ունեցել նավասարդի 27-ին, որը շարժական տոմարով հավասար է մարտի 19-ին։ Աստղագիտական անվիճելի տվյալներով հայտնի է, որ 1113 թվականի մարտի 19-ին իրոք տեղի է ունեցել արեգակի խավարում[54]*։*

Հայ մատենագրության մեջ պատահում է, որ ողիմպիադան ընդունում են ընդհանրապես իբրև չորս թվանշան՝ առանց կապելու ողիմպիական թվականի հետ։ Այսպես, օրինակ, Ստեփանոս Օրբելյանն իր «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության ավարտման թվական է հիշում «ՃՁԶ (186) ողոմպիադին և յերկրորդ ամին», որը եղել է 1297 թ.։ Այստեղ «ողոմպիադը»[55] *պատմիչը գործ է ածել ուղղակի չորսի նշանակությամբ, որին անհրաժեշտ է գումարել հայկական 551 թվականը, կունենանք 1297 (186×4+2+551=1297)։*

Ը. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ մատենագրության մեջ գործ են ածվել նաև հռոմեական մեծ ու փոքր թվականները։ Այս թվականները **հռոմեական** *են կոչվում, որովհետև նրանց սկզբնավորությունը կապում են Հռոմ քաղաքի ավանդական հիմնադրման հետ։ Հիշատակարաններում այս թվականը երբեմն կոչվում է նաև «Հունական թվական» անունով, անշուշտ, հռոմեական հասկանալու իմաստով։ Ըստ որոշ տոմարագետների հաշվումների, Հռոմը հիմնադրվել է 753 թվականին մ. թ. ա.։ Մեր թվականության 247-ին լրացավ առաջին հազարամյակը և 248 թվականին նոր հազարամյակի սկիզբը դրվեց։*

---

[53] *Տե՛ս «Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ Ժամանականք երկմասնեայ», հրատ. Մ. Աւգերեանց, Վենետիկ, 1818, էջ 232։*

[54] *Տե՛ս Հ. Ա.* **Բադալյան**, *Օրացույցի պատմություն, էջ 492։*

[55] **Ստեփաննոս Օրբէլեան**, *Պատմութիւն նահանգին Սիսական,* **Թիֆլիս**, *1910, էջ 507։*

Հռոմեական թվականը մեր ներկա թվականին վերածելու համար, եթե նավասարդից առաջ է, անհրաժեշտ է ավելացնել 247, իսկ եթե նավասարդից հետո է, պետք է գումարել 248։

Ստեփանոս Ասողիկի պատմության շարադրանքը վերջացել է. «...ըստ Յունաց թուականին ի Փիլիպպոս կայսերէ՝ ամք ՉԾԷ (757), և ըստ հայերէն չափոյ թուականիս մերոյ՝ ամք ՆԾԳ (453)»[56]։ Հայկական 453-ին գումարելով 551, ստանում ենք 1004 թվականը։ Հռոմեական 757-ին գումարելով 247, ստանում ենք դարձյալ 1004 թվականը։ Այսպիսով, Ասողիկն իր պատմությունըն ավարտել է 1004 թվականին։

Ներսես Շնորհալու դավանաբանական մի երկում գրված է.

«Ի թիւ եօթանց տանց հարիւրոց,
Կատարեցաւ բանս հաստատոց։
Ի վեց հարիւր թուական Հայոց,
Ցինըն հարեւր չորք Հոռոմոց»[57]։

Աշխատությունը գրված է հայկական թվականի 600-ին (600+551=
=1151)։ Հռոմեական 904-ը հավասար է 1151-ի (904+247=1151)։ Երկու թվականներն էլ համապատասխանում են իրար։

Հռոմեական փոքր թվականը կազմված է մեծ թվականից՝ վրան ավելացրած 532 բոլորակ շրջանը, այսինքն՝ 780։ Վերծանության ժամանակ պետք է նկատի ունենալ, որ եթե իրադարձությունը տեղի է ունեցել նավասարդի մեկից առաջ, պետք է գումարել 779, իսկ եթե հետո է՝ 780։

Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» գրվել է «...ի թուականութեանն Հայոց ՈԼԳ (633) և շրջանին երթալոյ ի բաց ՃԱ (101) որ կոչի փոքր, իսկ Հոռոմին ՆԵ (405)»[58]։ Ձեռագրի գրության հայկական 633 թվականը հավասար է 1184-ի (633+551=1184)։ Հայկական փոքր թվականով 101-ը հավասար է դարձյալ 1184-ի (101+1083=1184)։ Հռոմեական թվականներից այստեղ հիշված է փոքրը՝ 405+779=1184-ի, փոքր թվականը հավասար կլինի 1184-ի։

Մատենադարանի № 5602 ձեռագիրը պարունակում է Օրբելյանների ապըստամբության մասին անչափ արժեքավոր Քոբայրեցու հիշատակարանը, որ գրված է «..յամի Ռ.որդի եւթան առ քսանիւ (627) թուաբերութեան Հայկազեան քրոնիկոնիս, իսկ նորոյ շրջանի իննսնի և չորսից և (94) ի կենարարին մերոյ ծննդենէ հազար և հարիւր եւթանասուն և ինն (1179) ամացն շըրջագայութիւնք։ Իսկ Հռովմին շրջանի երեք հարիւր իննսուն և ութ (398) լին բովանդակութիւն ամացն»[59]։ Ձեռագիրը գրված է հայկական մեծ թվականի

---

[56] «Ստեփանոսի Ասողկան Պատմութիւն տիեզերական», ՍՊբ., 1885, էջ 285։

[57] Ներսէս Շնորհալի, Բանք չափու, Վենետիկ, 1830, էջ 223—224։

[58] ՄԱՄ ձեռ. № 5602, թ. 270բ (հմմտ. «Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց», հրատ. Վ. Բաստամեանցի, Վաղարշապատ, 1880, էջ 70)։

[59] ՄԱՄ ձեռ. № 5602, թ. 268 բ։ Այս արժեքավոր հիշատակարանը առաջին անգամ հրատարակել է Գ. Հովսեփյանը «Յիշատակարանք ձեռագրաց» մեջ 1951 թ.։ Հաջորդ տարին այն հրատարակել է Վ. Հակոբյանը՝ ծանոթ չլինելով Հովսեփյանի հրատարակության հետ (տե՛ս Վ. Հակոբյան, Դավիթ Քոբայրեցու հիշատակարանը՝ տպագրված «Հայկ. ՍՍՀ ԳԱ Տեղեկագրի» 1952 թ., № 8-ում, էջ 118—121)։ Այդ հիշատակարանին անդրադարձել ենք նաև մենք «Հայ գրի և գրչության պատմության» մեջ, էջ 256։

627+551=1178, հայկական փոքր թվականի՝ 94+1084=1178, հռոմեական փոքր թվականի՝ 398+780=1178։ Ինչ վերաբերում է քրիստոնեական 1179 թվականին, ապա այն 552 գումարելու հաշվով է։ Պետք է նկատի ունենալ, որ մինչև 1320 թ. հայկական և քրիստոնեական թվականի տարբերությունը կարող էր լինել ինչպես 551, այնպես և՝ 552. վերջինս, երբ դեպքը տեղի է ունեցել հայկական ամանորից առաջ, իսկ 551, երբ՝ ամանորից հետո է։

Ակադ. Հ. Օրբելու «Դիւան հայ վիմագրութեան» I հատորում Անիի Մայր տաճարի արձանագրության մեջ կառուցման ժամանակի մասին ասված է.

«Ի : ՆԾ : Թ[ՈՒԻՆ] ՀԱՅՈՑ ՄԺԹ Թ[ՈՒԻՆ] ՀՌՈՄՈՑ Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԱԾԱՊԱՏԻՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ Տ[Ն ՍԱՐԳ]ՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ Ի ՄԵԾԱՓԱՌ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ԳԱԳԿԱ ՀԱՅՈՑ ԵՒ ՎՐԱՑ ՇԱՀՆՇԱՀԻ ԵՍ ԿԱՏԱՐԱՆԻԴԷ ՀԱՅՈՑ ԹԱԳՈՒՀԻ, ԴՈՒՍՏՐ ՎԱՍԱԿԱ ՍԻՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐԻ ՅՈՂՈՐՄՈՒԹԻՒՆՆ ԱՅ... ՇԻՆԵՑԻ ԶՍՈՒՐ ԿԱԹՈՂԻԿԷՍ... Ի ՎԵՑ:ՌՆԼ: ԵՒ :Գ: ԱՄԱՑՆ ԱԴԱՄԱ :ՌԲԺ: ԱՄԻ ՄԱՐՄՆԱՆԱԼՈ ԱԾԱԻՆ ԲԱՆԻ :ՉԼԺ: ԱՄԻ ՀԱՒԱՏԱԼՈ Ի ՔՐԻՍՏՈՍ ՀԱՅՈՑ...»[60]։

Հրապարակված այս բնագրում նկատվում է թվանշանների երեք սխալ. «Ի ՆԾ։ Թ[ՈՒԻՆ]» պետք է ուղղել «ՆԾԹ». վերջին «Թ»-ն թուական բառի առաջին տառը չէ, այլ թվականի վերջին միավոր թվանշանը (ճիշտ վերծանել է Ալիշանը, Շիր. 67)։ Հռոմեական թվականը՝ «ՄԺԹ» արձանագրության մեջ սխալ է, պետք է լինի «ՄԻԹ»։ Եվ վերջում Լուսավորչի թվականը «ՉԼԺ» պետք է լինի ՉԱԺ (ճիշտ վերծանել է Ալիշանը, Շիր. 67)։ Այս ուղղումները կատարելուց հետո արձանագրության թվականները վերծանվում են։

Արարչության թվականը աղեքսանդրյան դարահաշվով է, որից անհրաժեշտ է հանել 5423. 6433-ից հանելով 5423, ստանում ենք 1010, սրանից պետք չէ դուրս հանել ավելորդ երկու տարիները։

Հայկական թվականն ուղղված ձևով 459 է, որին գումարելով 551, ստանում ենք 1010 (459+551=1010)։

Քրիստոնեական թվականը՝ ՌԲԺ (1012), հռոմեական հաշվով է, որից հանելով ավելորդ 2 տարին, ստանում ենք 1010։

Հռոմեական թվականն ուղղված ձևով ՄԻԹ (229), գումարում ենք 781 (մեկ տարի ավելումով՝ կապված ամանորի հետ), ունենում ենք դարձյալ 1010 (781+229=1010)։

Եվ վերջապես, Լուսավորչի թվականը 299 հաշվով է, որին գումարելով 711-ը, ունենում ենք 1010 թվականը։

Այսպիսով, անվիճելի պարզվում է, որ Անիի Մայր տաճարը կառուցված է 1010 թվականին[61]։

Թ. ՎՐԱՑ ՔՐՈՆԻԿՈՆԸ

Հայերեն թարգմանական գրականության մեջ մեկ-մեկ հանդիպում է վրացական մեծ ու փոքր քրոնիկոն թվականների գործածությունը։

Վրաց քրոնիկոնի մեծ թվականը (այսպես կոչված 13-րդ շրջանը) ներկա թվականի վերածելու համար անհրաժեշտ է գումարել 780[62]։ Այսպես, քրոնիկոնի 343 թվականին Դավիթ Վերաշինող թագավորը օգնեց հայերին ազատագրելու Անի քաղաքը և կոտորեց Ալփ-Ասլանի զորամասերին[63]։ Դեպքը տեղի է ունեցել 1123 թվականին. քրոնիկոնի 343-ին գումարելով 780, ստանում ենք 1123։

---

[60] «Դիվան հայ վիմագրության», Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 35։

[61] Այս հիշատակարանի մասին տե՛ս Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 505։

[62] Քրոնիկոնի ծագման, աղբյուրների ու գործածության հանգամանալից քննությունը տե՛ս კ. კეკელიძე, წელთაღრიცხვა ძველ საქართველოში („ენიმკის მოამბე“, ტომი II, 325—335):

Գեորգին վերցրեց Անին քրոնիկոնի 380 թվականին և ձերբակալեց Սալդուխին։ Դեպքը ներկա թվականով տեղի է ունեցել 1160-ին (380+780=1160)։

Վրաց քրոնիկոնի փոքր թվականը (14-րդ շրջանը) ներկա թվականի վերածելու համար անհրաժեշտ է գումարել 1312։ Այն կազմված է նախկին 780 թվականի վրա գումարած 532 պարբերաշրջանը։

Շահ Իսմայիլի որդի շահ Թահմազը թագավորեց քրոնիկոնի 190-ին[64]։ Քրոնիկոնի փոքր թվականով 190-ը հավասար է 1502-ի (190+1312=1502)։

Սուլթան Մուրադը Երևանը գրավեց քրոնիկոնի փոքր թվականի 325-ին[65]։ Քրոնիկոնի փոքր թվականը գտնելու համար տրված թվականին գումարելով 1312, ստանում ենք 1637։

Ժ. ՀՈԲԵԼՅԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոբելյանն ընդգրկում է հիսուն տարվա մի շրջան և հայ մատենագրության մեջ գործ է ածվել գլխավորապես տոմարական աշխատություններում ու ծածկագիր հիշատակարաններում։

Ստեփանոս գրիչը Տիգրանակերտում իր ընդօրինակած ձեռագրի թվականը հաղորդել է հիշատակարանի հետևյալ քառյակում.

«Գծագրեցաւ գիրս սորա
Ի թվականիս մեր Հայկազնեայ,
Քսան և մեկ յոբելեննեայ
Եւ ութ թիւ յաւել վերայ»[66]։

Հոբելյանն ընդունելով հիսուն տարվա շրջան, ձեռագիրը գրված կլինի 1609 թվականին (21×50+8+551=1609)։

Թորոս գրիչը Կարինում ընդօրինակած ձեռագրի թվականի մասին հետևյալ տեղեկությունն է հաղորդում.

«Այս հրաշազան մեծի տառիս,
Քեզ երանի թէ հանդիպիս...
Հազար, հարիւր, յոբելենիս,
Տասն և հինգ թիւ այլ ի նոյն յեռիս»[67]։

վերծանվում է. 1000+100+50+15+551=1716։

Փարիզի Ազգային մատենադարանի հայկական բաժնի № 61 ձեռագիրը գրված է Խասպեկ Կաֆայեցու կողմից.

«Ի թուականութէանս հայկազուն սեռի
և յաբեթական տումարի,
քսան և երկու յոբելենի

---

[63] Տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1946, էջ 37։

[64] Տե՛ս նույն տեղում, էջ 110։

[65] Տե՛ս նույն տեղում, էջ 113—114։

[66] ՄԱՄ ձեռ. № 9041, թ. 125ա։

[67] ՄԱՄ ձեռ. № 8159, թ. 157բ։

Եւ միակ եւթն և տասանեկի»[68]։

Քսաներկու հոբելյանը հավասար է 1100-ի, նրան գումարելով 17 և հայկական թվականը, կունենանք 1668 թվականը ($50\times22+17+551=1668$)։

Անթիլիասի կաթողիկոսարանի № 10 ձեռագրի թվականն է՝

«Ի թուականիս Հայոց քսան յոբելենի,
Եւ հարիւրորդի, հնգեակ հնգի,
Թիւ Արամեան բովանդակի»[69]։

Քսան հոբելյանը հավասար է 1000-ի, նրա վրա ավելացրած 100 և «հընգեակ հնգի» ու հայկական թվականը՝ 551, ընդհանուրը կլինի 1676։

ԺԱ. ԻՆԴԻԿՏԻՈՆԻ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինդիկտիոն է կոչվել 15 տարվա շրջանը։ Այն սկսել է գործածվել 313 թվականից. առաջին ինդիկտիոնը եղել է 313—328 թվականներին, երկրորդը՝ 328—342 և այսպես 15 տարի հաջորդաբար շարունակվել։ Ինդիկտիոնը մեր մատենագրության մեջ օգտագործելիս հիշվում է նաև, թե քանիերորդ ինդիկտիոնն է՝ սկսած 313 թվականից, և ինդիկտիոնի քանիերորդ տարին է։

Մատենադարանի № 906 ձեռագրի ընդօրինակման ժամանակի մասին հիշատակարանում ասված է. «Գրեցաւ աստուածագիծ պատգամս այս ի թուականիս Հայոց, յորում ՆՂԵ էր, ի[ն]դիկտոնին Հոռոմոց յերեքտասաներորդ ամին, ի թագաւորութեանն Մոնոմախա կայսեր, իսկ մեր լուսաւորութեանս եւթն հարիւր և քառասուն և չորս»[70]։ Ձեռագիրը գրվել է 1046 թվականին, հայկական թվականով $495+551=1046$-ին։ 1046 թվականին իրոք եղել է ինդիկտիոնի 13-րդ տարին ($1046-313=733:15$, մնացորդը կլինի 13)։ Այդ թվականը համընկել է Կոստանդին Մոնոմախի գահակալության տարիներին (նա գահակալել է 1042—1053 թթ.)։ Լուսավորչի թվականն էլ այստեղ ճիշտ կարող է լինել, եթե հաշվելու լինենք 302 թվականից։

Ինդիկտիոնը տասնհինգ տարիների շրջանի համար շատ է օգտագործվել, ինչպես նշեցինք, հայկական հիշատակարաններում և ժամկագիր թվականների մեջ։

ԺԲ. ԴԻՈԿՂԵՏԻԱՆՈՍԻ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դիոկղետիանոսի էրան կամ թվականությունը կապված է հռոմեական կայսեր գահակալության առաջին տարվա հետ, որը տեղի է ունեցել 284 թվականի օգոստոսի 29-ին։ Եթե թվագրված իրադրությունը տեղի է ունեցել օգոստոսի 29-ից առաջ, տրված թվականին գումարում ենք 283, իսկ եթե տեղի է ունեցել օգոստոսի 29-ից հետո՝ 284։

Հովհաննես Իմաստասերը վերևում առկոչված 1113 թվականի մարտի 19-ի խավարման զուգահեռ թվականների մեջ հիշել է. «Դիոկղետիանոսէ՝ ՊՂ (830) ամ»։ Տրված 830 թվականին գումարելով 283, ստանում ենք 1113, որը և լիովին համապատասխանում է արեգակի խավարման համար կատարված մյուս բոլոր հաշվումներին։

---

[68] F. Macler, Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothègue Nationale, Paris, 1908, p. 30.

[69] Անթիլիասի ձեռ. № 10, թ. 172ա։

[70] Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 230։

ԺԳ. ՍԵԼԵՎԿՅԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ մատենագրության մեջ սակավադեպ օգտագործված է սելևկյան թվականությունը, որի սկզբնավորությունը կապում են Սելևկիա քաղաքի հիմնադրման հետ (312 թվականի հոկտեմբերի 1)։ Եթե թվականը թվագրված է հոկտեմբերի 1-ից առաջ, տրվածից հանում ենք 312, իսկ եթե հոկտեմբերի 1-ից հետո է՝ 311։

Վերևում հիշված արեգակի խավարումը տեղի է ունեցել սելևկյան 1425 թվականին. 1425 թվականից հանելով 312, ստանում ենք 1113 թվականը, որը դարձյալ համապատասխանում է կատարած մյուս հաշվումներին։

ԺԴ. ԲԵՍԵՔԻՍՏՈՆԻ, ԻԴՈՍԻ, ՏԳՈՆԻ ԵՎ ՆՈՆՈՍ ԿՈՉՎՈՂ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ տոմարական գրականության մեջ և հիշատակարանների ծածկագրերում բեսեքիստոնն օգտագործվում է 5 տարվա շրջանի համար, տգոնը՝ 10-ի, իդոսը՝ 8-ի և նոնոսը՝ 5-ի։

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 1119 ձեռագրի գրիչ Արթունը Լեոպոլսում Ավագ Գաղատացու համար ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում գրչության թվականի մասին հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Յամի երեսներորդի, առաջներորդի յոբելեանի և ընդիկտիոնի երկրորդի [բ][71] բեսեքիստոնի և միոյ ողիմպիաթի թուաբերութեան ժամանակի մարդեղութեան փրկչի։ Նաև ըստ համարոյ յաբեթազին տումարի հարիւր քսան և հինգ ինդոսի ութներորդ նոնոսի, երեք յարաբարդեալ ամի եղև սկիզբն և աւարտումն գրիս»[72]։

Փրկչի մարդեղության, այսինքն՝ ներկա թվականը վերծանվում է. 31 հոբելյանը հավասար է 1550-ի ($31\times50=1550$), նրան գումարած երկու ինդիկտիոն՝ 30 ($15\times2=30$), գումարած դարձյալ 2 բեսեքիստոն, այսինքն՝ 10 ($5\times2=10$) և գումարած մեկ ողիմպիադ՝ 4։ Գումարը ստանում ենք 1594 ($1550+30+10+4=1594$)։

Հայկական թվականը վերծանվում է. 125 իդոսը հավասար է 1000-ի ($125\times8=1000$), նրան գումարած 8 նոնոս, այսինքն՝ 40 ($8\times5=40$), գումարած ևս 3 («յերեք յարաբարդեալ») և հայկական թվականի տարբերությունը՝ 551, ստանում ենք դարձյալ 1594 ($1000+40+3+551=1594$)։

Այսպիսով, պարզվում է, որ Արթուն գրիչն իր ձեռագիրը գրել և վերջացրել է 1594 թ.։

Ն. Ադոնցը իր «Дионисий Фракийский»-ում հրատարակել է Վենետիկի Մխիթարյանների № 990 ձեռագիր քերականության հիշատակարանը, ուր գրչության թվականի մասին հետևյալն է ասված. «Յամի երեսներորդի երկրորդ երրորդի յոբելեանի միոյ բեսեքիստոնի մին ղիմպիադի թուաբերութեան ժամանակի մարդեղութենէ փրկչի. նայ և ըստ համարոյ յաբեթացին տումարի հարիւր քսան և ութ (исправлено сверху) երեսուն և երկու) ինդոսի երկրորդին ամի եղև սկիզբն և յաւարտումն գրի, որ է տումար և քերական հետ երկոքին ի մի տեղ և մի կապ, յամսեան հայոց ահկի, տգոնի միոյ նոնոսի, յեբրայեցոց յամսին թամուզի, ինդոսի, միոյ ողոմպիադի հռոմայեցոց յամսեանն յուլին առաջնումն աւուր շբթ ի ժամ Ի (20)»[73]։

---

[71] Գազարյանի հրատարակության մեջ «Բ» բաց է թողված, որն, անշուշտ, գրչական և կամ տպագրական սխալ է։

[72] «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», Հ. Գ, էջ 182։

Ադոնցը դժվարացել է վերծանել թվականը և թողել է հետևյալ ծանոթագրությունը. «Ձեռագրում կա Հակոբ գրչի հիշատակարանը՝ թվականի ցուցումով, բայց, դժբախտաբար, այդ ցուցումն այնքան անհարիր է և անհասկանալի, որ թվականի հարցը մնում է մեծ կասկածանքի տակ»[74]։

Մեզ հայտնի տոմարական հաշվումների հիման վրա փորձենք վերծանել այս հիշատակարանի թվականները։ Ձեռագրի գրչության տարեթիվը ներկա թվականով 32 հոբելյան է, մեկ բեսեքիստոն և մեկ ողիմպիադ։ 32 հոբելյանը հավասար է 1600-ի ($32 \times 50 = 1600$), նրան գումարած մեկ բեսեքիստոն, որը հավասար է 5-ի, և մեկ ողիմպիադ, որը հավասար է 4-ի, գումարը հավասար է 1609-ի ($1600 + 4 + 5 = 1609$)։ Հայկական թվականով 132 ինդոս է (ճիշտն ուղղվածն է), նրան գումարած երկրորդ տարին։ Ինդոսը 8 է, 132 ինդոսը հավասար է 1056-ի ($132 \times 8 = 1056$), նրան գումարած հայկական թվականի տարբերությունը՝ 551, և երկու տարիները («Երկրորդ ամին»), դարձյալ ունենում ենք 1609 ($1056 + 551 + 2 = 1609$)։

Կարևոր է այստեղ ամսաթվերի և շաբաթվա օրվա հիշատակությունները, որոնք հնարավորություն են տալիս ստուգելու մեր վերծանության ճշտությունը։ Հիշված է երեք ժողովրդի ամսաթվով՝ հայկական, եբրայական և հռոմեական։ Հայկական ահկի ամսի մեկ տգոնին է և մեկ նոնոսին. տգոնը՝ 10 թվանշան է, իսկ նոնոսը՝ 5, ուրեմն եղել է ահեկի 15-ին։ Եբրայական թամուզ ամսի մեկ ինդոսին է, այսինքն՝ 8-ին և մեկ ողիմպիադին՝ 4-ին, ուրեմն՝ եբրայական թամուզ ամսի 12-ին է եղել[75]։ Հռոմեականը պարզ է ասված՝ «յուլի առաջնումն», այսինքն՝ յուլիսի մեկին։ Անշարժ տոմարով հուլիսի մեկը համապատասխանում է թամուզ ամսի 12-ին։ Հայկական ահեկի ամսի 15-ը շարժական տոմարով դարձյալ համապատասխանում է հուլիսի 1-ին։ Տոմարական անվիճելի հաշվումով 1609 թվականի հուլիսի մեկին իրոք եղել է շաբաթ օր։ Այսպիսով, պարզվում է, որ Վենետիկի № 990 ձեռագիրը գրված է 1609 թ. հուլիսի ամսի 1-ին, երեկոյան ժամի 8-ին։

Հակոբ գրիչը իր ընդօրինակած ձեռագրի գրչության տարեթիվ հայտնել է հիշատակարանում հետևյալ հաշվումով. «Յամի երեսներորդի և երկրորդի յոբելեանի, երկու նոնոսի և միոյ ղիմպիաթի թուաբերութեան ժամանակի մարդեղութենէ Փրկչի, նայև ըստ համարո յաբեթազին տոմարի, հարիւր քսան և հինգ ինդոսի, երեք ընդիքտիոնի և չորս նահանջի եղև սկիզբն և յաւարտումն գրի։ Յանգ ելաւ Հայոց ամսոյն արաց ի մէկ ինդոսի, հռոմայեցոց յամսոյն մարտի հինգ նոնոսի, եբրայեցոց յամսոյն նիսանի միայ ողիմպիաթիւ»[76]։

---

[73] **Н. Адонц,** Дионисий Фракийский и армянские толкователи, стр XXIV.

[74] Նույն տեղում, էջ XXIV։

[75] Տե՛ս Հովհաննես Իմաստասերի «Խառնախորանը» («Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», էջ 170)։

Բ. Կյուլեսերյանը հրատարակել է գրչի այս հիշատակարանը և չկարողանալով վերծանել, ձեռագրի գրչության թվականը թողել է անորոշ։

Ձեռագիրը ներկա թվականով գրված է. 32 հոբելյանը հավասար է 1600-ի (32×50=1600), նրան գումարած 2 նոնոս՝ (2×5=10), մեկ «ոլիմպիաթ», այսինքն՝ 4, գումարը ստացվում է 1614 (1600+10+4=1614)։

Հայկական մեծ թվականով ձեռագիրը գրված է. 125 ինդոսը հավասար է 1000-ի (125×8=1000), նրան գումարած երեք ինդիկտիոն՝ 45 (15×3=45) և չորս նահանջ 16 (նահանջը 4 տարի է, 4×4=16) և հայկական թվականի տարբերությունը՝ 551, ստանում ենք 1612 (1000+45+16+551=1612)։ Հիշատակարանում քրիստոնեական թվականը հայկական հաշվումով է, որից անհրաժեշտ է հանել ավելի երկու տարիները, կունենանք դարձյալ 1612։ Այսպիսով, Անկյուրիայի № 121 ձեռագրի գրչության թվականն է 1612։

Ինչ վերաբերում է ամսաթվերին, ապա նրանք համապատասխանում են իրար. հայոց արաց ամսի ինդոսը՝ 8-ը, շարժական տոմարով համապատասխանում է հռոմեական մարտ ամսի հինգ նոնոսին, այսինքն՝ 25-ին, որը համապատասխանում է եբրայական նիսան ամսի մեկ ողիմպիադին, այսինքն՝ 4-ին։

ԺԵ. ՀԻՋՐԱՅԻ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հիջրայի թվականը մահմեդական թվականն է։ Նրա սկզբնակետ համարվում է 622 թվականի հուլիսի 16-ը՝ հուլյան տոմարով, երբ տեղի է ունեցել Մուհամմեդի փախուստը Մեքքայից դեպի Մեդինա։ Հիջրայի թվականը հիմնված է լուսնական տարվա վրա. այն բաղկացած է 12 ամիսներից՝ հաջորդական 29 և 30 օրերով. լի տարին ունենում է 354 օր, իսկ նահանջը՝ 355։ Լուսնական տարին արեգակնային տարուց պակաս է մոտ 11 1/4 օր, ուստի մոտ 33 տարիների ընթացքում մի տարով նա առաջ է անցնում արեգակնային տարուց։ Հիջրայի թվականը մեր ներկա թվականին վերածելու համար գոյություն ունի երկու եղանակ՝ պարզ և բարդ։ Պարզ եղանակով վերծանության ժամանակ հնարավոր է մեկ տարվա շեղում՝ կապված տարեմուտի հետ։

Պարզ եղանակով վերծանության ժամանակ տրված թվականը բաժանում ենք 33-ի՝ իմանալու համար, թե քանի նահանջ տարիներ են կուտակվել տրված թվականի մեջ։ Ստացած նահանջ տարիների թիվը հանում ենք տրված թվականից և այն վերածում արեգակնային տարու։ Այնուհետև ստացած թվականին գումարում ենք 622, որովհետև այդ թվականից է սկիզբ առնում հիջրայի թվականը։

Փորձենք վերծանել հիջրայի 1201 թվականը՝ պարզելու համար, թե այն մեր ներկա թվականի քանիսին է եղել։

1. 1201:33=36+1=37 (մնացորդի դեպքում անհրաժեշտ է լինում մեկ միավոր ավելացնել)։

2. 1201—37=1164։

3. 1164+622=1786։

---

[76] Բ. Կյուլեսերյան. Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայից, էջ 604—

Հիջրայի բարդ, բայց ավելի ճիշտ թվականը որոշելու համար կազմված է վեց աղյուսակ[77]։ Առաջինում տրվում է լուսնական օրերի թիվը՝ հաջորդական երեսուն տարիների համար։ Երկրորդ սյունակում տրվում է տարիների օրերի թիվը՝ մեկ տարուց մինչև 30 տարի։ Երրորդ սյունակում տրվում է ամիսների օրերի թիվը՝ առաջին ամսից մինչև 12-րդ ամիսը։ Չորրորդ սյունակում տրվում է արեգակնային տարվա օրերը դարերով՝ 600 թվականից սկսած մինչև 2000 թվականը։ Հինգերորդ սյունակում տրվում է արեգակնային օրերի թիվը տարիներով՝ սկսած 4 տարուց մինչև 96 տարին։ Եվ վերջապես, վեցերորդ սյունակում տրվում է ամիսների օրերը չորս տարիների համար։

Ա. Լուսնային երեսնամյա ցիկլերի օրերի թիվը

(Սկսած 6-րդ դարի վերջին օրից)

0—8232
30—18863
60—29494
90—40125
120—50756
150—61387
180—72018
210—82649
240—93280
270—103911
300—114542
330—125173
360—135804
390—146435
420—157066
450—167697
480—178328
510—188959
540—199590
570—210221
600—220852
630—231483
660—242114
690—252745
720—263376
750—274007
780—284638
810—295269
840—305900
870—316531
900—327162
930—337793
960—348424
990—359055
1020—369686
1050—380317
1080—390948
1110—401579
1140—412210
1170—422841
1200—433472
1230—444103
1260—454734
1290—465365
1320—475996
1350—486627
1380—497258
1410—507889
1440—518520
1470—529151
1500—539782

Բ. Լուսնային օրերի թիվը 30 ցիկլի յուրաքանչյուր տարվա սկզբում

1— 0	8—2481	15—4961	22—7442	29— 9922
2— 354	9—2835	16—5315	23—7796	30—10277
3— 709	10—3189	17—5670	24—8150	
4—1063	11—3544	18—6024	25—8505	
5—1417	12—3898	19—6379	26—8859	
6—1772	13—4252	20—6733	27—9214	
7—2126	14—4607	21—7087	28—9568	

---

[77] *Տե՛ս* **В. В. Цыбульский**, Современные **календари** стран **Ближнего** и **Среднего** Востока, М., **1964 г.,** *էջ* 119—120։

Գ. Ամիսների առաջին օրերի թիվը ըստ լուսնային տոմարի

Մոհարամ 0	Սաֆար 30	Ռաբի I 59	Ռաբի II 89	Ջումադա I 118	Ջումադա II 148
Ռաջաբ 177	Շաբան 207	Ռամազան 236	Շավալ 2 6	Ջուլկադա 295	Ջուլխիջա 325

Դ. Օրերի թիվը դարերով

(6-րդ դարից մինչև 22-րդ դարի սկիզբը)

600— 0	1400—292200
700— 36525	1500—328725
800— 73050	1600—365240
900—109575	1700—401764
1000—146100	1800—438288
1100—182625	1900—474812
1200—219150	2000—511337
1300—255675	

Ե. Օրերի թիվը ըստ քառամյակների սկզբնավորության

4— 1461	36—13149	68—24837
8— 2922	40—14610	72—26298
12— 4383	44—16071	76—27759
16— 5844	48—17532	80—29220
20— 7305	52—18993	84—30681
24— 8766	56—20454	88—32142
28—10227	60—21915	92—33603
32—11688	64—23376	96—35064

Զ. Օրերի թիվը ըստ յուրաքանչյուր ամսվա սկզբնավորության

0	0	31	60	91	121	152	182	213	244	274	305	335
1	366	397	425	456	486	517	547	578	609	639	670	700
2	731	762	790	821	851	882	912	943	974	1004	1035	1065
3	1096	1127	1155	1186	1216	1247	1277	1308	1339	1369	1400	1430

Փորձենք վերծանել Հիջրայի 782 թվականի ռամազան ամսի 19-ը, երբ Բաղդադում տեղի է ունեցել երկրաշարժ։

Առաջին աղյուսակից վերցնում ենք մեր թվականին մոտիկ տարեթիվը՝ 780-ը, որն ունի 284638 օր։

Երկրորդ սյունակով պարզում ենք, որ մնացած երկու տարին հաշված է 354 օր։

Երրորդ սյունակով պարզում ենք, որ տարին մինչև ռամազան ամիսն ունեցել է 236 օր։ Երեքը միասին գումարելով՝ 284638+354+236+19 ստանում ենք 285 247։ Ուրեմն՝ Հիջրայի 782 թվականի ռամազան ամսի 19-ը թաղկացած է այդքան օրերից։ Այդ հաշվումը կատարելուց հետո ստացած օրերը բաշխում ենք արեգակնային տարիների վրա։

Չորրորդ աղյուսակով 1300 տարին ունի 255 675 օր։ Այդ թիվը հանելով Հիջրայի թվականի օրերից, ստանում ենք 29 572 (2843638—255 675 = =29 572)։ Մնացած 80 տարին հավասար կլինի 29 220 օրվան, մնացորդը կտա 352 օր։ Հետևապես 782 թվականի ռամազան ամսի 19-ը եղել է 1380 թվականի դեկտեմբերի 17-ը։

Մատենադարանի փղոսկրյա կոչվող նշանավոր ձեռագիրը գրված է. «Յամի թուոյ Հայկազանց ՆԼԸ (438) և ըստ թուոյ Հոռոմի ՉԽԲ (742), յիսմայելական բռնակալութեան ՅՀԹ (379)»։ Հայկական 438-ին գումարելով 551, ստանում ենք 989, Հռոմեական 742-ին գումարելով 247, ստանում ենք 989։ Հիջրայի թվականով 379-ը վերծանվում է. Հիջրայի 379 թվականից կվերցնենք 360 տարին առաջին աղյուսակով, որը հավասար է 135 804 օրերի, մնացած 19 տարին հավասար է երկրորդ սյունակով 6 379 օրերի, երկուսը միասին կանի 142 183 օր։ Արեգակնային տարվա 900 տարին ունի 109 575 օր, որը հանելով 142 183-ից, ունենում ենք մնացորդ 32 608 օր։ 88 տարին հինգերորդ աղյուսակով հավասար է 32142 օրերի, մնացորդը կլինի 466 օր, որը հավասար կլինի մեկ տարի չորս ամսի։ Այսպիսով, փղոսկրյա ավետարանը գրված է 900+88+1=989։ Հիջրայի այդ թվականը համապատասխանում է զուգահեռ բերված հայկական և հռոմեական թվականներին։ Այսպիսով, հիշված երեք զուգահեռ թվականների համեմատական ստուգումներից պարզվում է, որ փղոսկրյա ավետարանը գրված է 989 թ.։

Առաջին հայ տպագրիչներից մեկի՝ Հովհաննես Տերզնցու Երուսաղեմի պատրիարքին ուղարկած նամակի թվական է նշված «Հայոց մեծաց ՌԼԲ (1032)... և մահմեդական ՋՂ (990) թվականն»։

Հիջրայի 990 թվականը հավասար է 359055 օրվա։
Արեգակնային 1500 տարիները հանած՝ 328 725 օր
կմնա՝ 30 330 օր։
Արեգակնային 80 տարիների համար՝ 29 220 օր
3 տարվա համար՝ 1 096 օր
կմնա՝ 14 օր։

Հետևապես, 1500+80+3=1583 թվականին։ Այդ համապատասխանում է «Հայոց մեծացին»՝ 1583 (1032+551=1583)։

Սելիմի քարավանատան կառուցման առթիվ մեզ է հասել երկու շինարարական արձանագրություն, որոնցից մեկը արաբերեն է, իսկ մյուսը՝ հայերեն։ Արաբական արձանագրության մեջ կառուցման թվական է հիշված Հիջրայի 727 թվականը, իսկ հայկականում՝ մեծ թվականով 781-ը[78]։ Հիջրայի 727 թվականը հավասար է 1326—1327 թթ. (Հիջրայի տվյալ տարին սկսվել է Նոյեմբերի 27-ին, ավարտվել 1327 թ. նոյեմբերի 17-ին), իսկ հայկական ներկա թվականով կլինի 1331—1332 թթ. (հայկական տարին սկսվել է 1331 թ. դեկտեմբերի 29-ին և վերջացել 1332 թ. դեկտեմբերի 27-ին)։ Երկու թվականների մեջ հինգ տարիների տարբերություն կա։ Դժվար է ասել, թե նշված թվա-

---

[78] Ալիշան, Սիսական, էջ 164։

կաններից մեկնումեկը սխալ է, մնում է կարծել, որ արաբերեն արձանագրությունը հինգ տարի առաջ է գրված, քան հայկականը։

ԺԶ. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՏՈՄԱՐԸ

Հայ մատենագրության մեջ հուլյան և գրիգորյան տոմարները հաճախ անվանում են հին ու նոր տոմար։ Հուլյան տոմարը, ինչպես ասել ենք, կապված է եղել Հուլիոս Կեսարի անվան հետ։ Այդ տոմարով արեգակնային տարվա տևողությունն ընդունված էր կլոր թվով 365 1/4 օր։ Արեգակնային տարվա այդ տևողությունը, սակայն, այնքան էլ ճիշտ չէ. աստղագիտական ճիշտ հաշվումներով այն պակաս է 11 րոպե 14 վայրկյան, որը 128 տարիների ընթացքում կլոր թվով մի օր է կազմում։ Ահա այդ պատճառով քրիստոնեական թվականության սկզբից մինչև 16-րդ դարի ութսունական թվականները հուլյան տարին փաստորեն արեգակնային տարուց ետ էր մնացել մոտ 10 օրով[79]։

Ստեղծված տոմարական խառնաշփոթությունը կարգավորելու նպատակով, Գրիգորիոս 13-րդ պապը (1502—1585) տոմարի մեջ կատարեց բարեփոխություն՝ ետ մնացած օրերի վրա ավելացրեց 10 օր։ Նա 1582 թվականի հոկտեմբերի 5-ը հաշվելով հոկտեմբերի 15, գարնանամուտը մարտի 11-ից վերադարձրեց մարտի 21-ը։

1582—1700՝ 10 օր
1700—1800՝ 11 օր
1800—1900՝ 12 օր
1900—2100՝ 13 օր։

Գրիգորիոսի տոմարական այս բարեփոխությունն ընդունվեց և գործադրվեց Ֆրանսիայում, Իտալիայում, Իսպանիայում, Փորթուգալիայում և կաթոլիկ այլ երկրներում։

Հայ մատենագրության մեջ առաջնորդվում են հուլյան տոմարով։ Բայց մեկ-մեկ պատահում է, երբ հայ կաթոլիկներն սկսած XVII դարից գործ են ածում գրիգորյան տոմար[80]։

* * *

Ցանկանալով դյուրացնել ուսումնասիրողների գործը՝ հայ մատենագրության մեջ հանդիպած տոմարական հաշվումները կատարելիս, անհրաժեշտ համարեցինք կազմել տոմարական ստորև բերված տախտակը։ Առաջին շարքը ներկայիս թվականն է, երկրորդը՝ հայկական ամանորը, երրորդը՝ «Տարեգիր»-ը, չորրորդը՝ «Վերադիր»-ը, հինգերորդը՝ «Յոթներեակ»-ը, վեցերորդը՝ «Ոսկեգիրը», յոթերորդը՝ «Տանուտեր»-ը, ութերորդը՝ «Զատիկը»։

---

[79] *Նման շեղումը քրիստոնեական եկեղեցու համար անթույլատրելի էր, քանի որ Նիկիայի տիեզերական ժողովում սահմանված էր, որ զատիկը չի կարելի տոնել մարտ ամսի 21-ից առաջ, իսկ այս խախտվելու հետևանքով զատիկը տեղափոխվել էր սահմանված ժամանակից 10 օր առաջ։ Հիմնովին փոխվել էր Նիկիայի ժողովի սահմանած կարգը, իսկ դրա հետ նաև՝ տոմարական մյուս բոլոր հաշվումները՝ վերադիրը, յոթներեակը, ոսկեգիրը և այլն։ «Ոսկեգիրը», ինչպես ծաղրանքով ասելիս են եղել, վեր է առված եղել սարճիճի գրից»։*

[80] *Գրիգորյան տոմարը հայերեն է թարգմանվել և հրատարակվել Հռոմում 1584 թ.,* **«Տօմար Գրիգորեան յաւիտենական, որ եղև իշխանութեամբ ժգօր սրբոյ փափայ և այլ բազմաւորացն»** *վերնագրով։*

Ներկա թվականը	Հայկական ամանորը	Տարե-գիրը	Վերադիրը (խառն.)	Եոթներե-ակը	Ոսկեգիրը	Տանուտերը	Զատիկը
1	2	3	4	5	6	7	8
1084	փետր. 29	իժ	11	աբ	2	ձուկ	31/III
1085	փետր. 28	վ	22	գ	3	խոյ	20/IV
1086	—	կ	3	դ	4	ցուլ	5/IV
1087	—	է	14	ե	5	եկավ	28/III
1088	—	ջպ	25	զէ	6	խեցգ	16/IV
1089	փետր. 27	ի	6	ա	7	առյծ	1/IV
1090	—	ա	17	բ	8	կոյս	21/IV
1091	—	շ	28	գ	9	կշեռ	13/IV
1092	—	ըէ	9	դե	10	կրին	28/III
1093	փետր. 26	ջ	20	զ	11	աղեղ	17/IV
1094	—	ճ	1	է	12	այծ	9/IV
1095	—	գ	12	ա	13	ջրհս	25/III
1096	—	ոշ	23	բգ	14	ձուկ	13/IV
1097	փետր. 25	կ	4	դ	15	խոյ	5/IV
1098	—	է	15	ե	16	ցուլ	28/III
1099	-	մ	26	զ	17	եկավ	10/IV
1100	—	լի	7	էա	18	խեցգ	1/IV
1101	փետր. 24	ա	18	բ	19	առյծ	21/IV
1102	—	դ	0	գ	1	կոյս	13/IV
1103	—	ը	11	դ	2	կշեռ	29/III
1104	—	ջռ	22	եզ	3	կրին	17/IV
1105	փետր. 23	ճ	3	է	4	աղեղ	9/IV
1106	—	գ	14	ա	5	այծ	25/III
1107	—	ո	25	բ	6	ջրհս	14/IV
1108	—	ճկ	6	գդ	7	ձուկ	5/IV
1109	փետր. 22	փ	17	ե	8	խոյ	25/IV
1110	—	մ	28	զ	9	ցուլ	10/IV
1111	—	լ	9	է	10	եկավ	2/IV
1112	—	բա	20	աբ	11	խեցգ	21/IV
1113	փետր. 21	ճ	1	գ	12	առյծ	6/IV

1	2	3	4	5	6	7	8
1114	—	ը	12	դ	13	կոյս	29/III
1115	—	ո	23	ե	14	կշեռ	18/IV
1116	—	խլ	4	զէ	15	կրիճ	2/IV
1117	փետր. 20	գ	15	ա	16	աղեղ	25/III
1118	—	ո	26	բ	17	այծ	14/IV
1119	—	թ	7	գ	18	ջրհս	30/III
1120	—	սա	18	դե	19	ձուկ	18/IV
1121	փետր. 19	մ	0	զ	1	խոյ	10/IV
1122	—	ե	11	է	2	ցուլ	26/III
1123	—	չ	22	ա	3	եկավ	15/IV
1124	—	ձհ	3	բգ	4	խեցգ	6/IV
1125	փետր. 18	ը	14	դ	5	առյծ	29/III
1126	—	յ	25	ե	6	կոյս	11/IV
1127	—	խ	6	զ	7	կշեռ	3/IV
1128	—	ցր	17	էա	8	կրիճ	22/IV
1129	փետր. 17	ո	28	բ	9	աղեղ	14/IV
1130	—	թ	9	գ	10	այծ	30/III
1131	—	ս	20	դ	11	ջրհս	19/IV
1132	—	յճ	1	եզ	12	ձուկ	10/IV
1133	փետր. 16	ե	12	է	13	խոյ	26/III
1134	—	չ	23	ա	14	ցուլ	15/IV
1135	—	ձ	4	բ	15	եկավ	7/IV
1136	—	րա	15	գդ	16	խեցգ	22/III
1137	փետր. 15	յ	26	ե	17	առյծ	11/IV
1138	—	խ	7	զ	18	կոյս	3/IV
1139	—	ց	18	է	19	կշեռ	23/IV
1140	—	գձ	0	աբ	1	կրիճ	7/IV
1141	փետր. 14	թ	11	գ	2	աղեղ	30/III
1142	—	ա	22	դ	3	այծ	19/IV
1143	—	ծ	3	ե	4	ջրհս	4/IV
1144	—	գե	14	զէ	5	ձուկ	26/III
1145	փետր. 13	չ	25	ա	6	խոյ	15/IV
1146	—	ժ	6	բ	7	ցուլ	31/III

1	2	3	4	5	6	7	8
1147	—	վ	17	գ	8	եկավ	20/IV
1148	—	նյ	28	դե	9	խեցգ	11/IV
1149	փետր. 12	խ	9	զ	10	առյծ	3/IV
1150	—	պ	20	է	11	կոյս	16/IV
1151	—	դ	1	ա	12	կշեռ	8/IV
1152	—	ժթ	12	բգ	13	կրիճ	30/III
1153	փետր. 11	ա	23	դ	14	աղեղ	19/IV
1154	—	ծ	4	ե	15	այծ	4/IV
1155	—	գ	15	զ	16	ջրհս	27/III
1156	—	պշ	26	էա	17	ձուկ	15/IV
1157	փետր. 10	ժ	7	բ	18	խոյ	31/III
1158	—	վ	18	գ	19	ցուլ	20/IV
1159	—	ն	0	դ	1	եկավ	12/IV
1160	—	լգ	11	եզ	2	խեցգ	27/III
1161	փետր. 9	պ	22	է	3	առյծ	16/IV
1162	—	դ	3	ա	4	կոյս	8/IV
1163	—	գ	14	բ	5	կշեռ	24/III
1164	—	շն	25	գդ	6	կրիճ	12/IV
1165	փետր. 8	ծ	6	ե	7	աղեղ	4/IV
1166	—	ւ	17	զ	8	այծ	24/IV
1167	—	ճ	28	է	9	ջրհս	9/IV
1168	—	իժ	9	աբ	10	ձուկ	31/III
1169	փետր. 7	վ	20	գ	11	խոյ	20/IV
1170	—	կ	1	դ	12	ցուլ	5/IV
1171	—	է	12	ե	13	եկավ	28/III
1172	—	ջպ	23	զէ	14	խեցգ	16/IV
1173	փետր. 6	դ	4	ա	15	առյծ	8/IV
1174	—	գ	15	բ	16	կոյս	24/III
1175	—	շ	26	գ	17	կշեռ	13/IV
1176	—	կծ	7	դե	18	կրիճ	4/IV
1177	փետր. 5	ւ	18	զ	19	աղեղ	24/IV
1178	—	ճ	0	է	1	այծ	9/IV
1179	—	ի	11	ա	2	ջրհս	1/IV

1	2	3	4	5	6	7	8
1180	—	ավ	22	բգ	3	ձուկ	20/IV
1181	փետր. 4	կ	3	գ	4	խոյ	5/IV
1182	—	է	14	ե	5	ցուլ	28/III
1183	—	ղ	25	գ	6	եկավ	17/IV
1184	—	լի	6	էա	7	խեցգ	1/IV
1185	փետր. 3	ա	17	բ	8	առյծ	21/IV
1186	—	դ	28	դ	9	կոյս	13/IV
1187	—	ը	9	գ	10	կշեռ	29/III
1188	—	ող	20	եգ	11	կրիճ	17/IV
1189	փետր. 2	ճ	1	է	12	աղեղ	9/IV
1190	—	գ	12	ա	13	այծ	25/III
1191	—	ո	23	բ	14	ջրհս	14/IV
1192	—	հկ	4	գգ	15	ձուկ	5/IV
1193	փետր. 1	է	15	ե	16	խոյ	28/III
1194	—	մ	26	գ	17	ցուլ	10/IV
1195	—	լ	7	է	18	եկավ	2/IV
1196	—	բա	18	աբ	19	խեցգ	21/IV
1197	հունվ. 31	շ	0	դ	1	առյծ	13/IV
1198	—	ը	11	գ	2	կոյս	29/III
1199	—	ս	22	ե	3	կշեռ	18/IV
1200	—	մճ	3	գէ	4	կրիճ	9/IV
1201	հունվ. 30	գ	14	ա	5	աղեղ	25/III
1202	—	ո	25	բ	6	այծ	14/IV
1203	—	հ	6	դ	7	ջրհս	6/IV
1204	—	թփ	17	գե	8	ձուկ	25/IV
1205	հունվ. 29	մ	28	գ	9	խոյ	10/IV
1206	—	լ	9	ե	10	ցուլ	2/IV
1207	—	բ	20	ա	11	եկավ	22/IV
1208	—	ձհ	1	բգ	12	խեցգ	6/IV
1209	հունվ. 28	ը	12	գ	13	առյծ	29/III
1210	—	ս	23	ե	14	կոյս	18/IV
1211	—	ի	4	գ	15	կշեռ	3/IV
1212	—	եգ	15	էա	16	կրիճ	25/III

1	2	3	4	5	6	7	8
1213	հունվ. 27	ո	26	բ	17	աղեղ	14/IV
1214	—	թ	7	գ	18	այծ	30/III
1215	—	ա	18	դ	19	ջրհս	19/IV
1216	—	յմ	0	եզ	1	ձուկ	10/IV
1217	հունվ. 26	ե	11	է	2	խոյ	26/III
1218	—	չ	22	ա	3	ցուլ	15/IV
1219	—	ձ	3	բ	4	եկավ	7/IV
1220	—	թը	14	գդ	5	խեցգ	29/III
1221	հունվ. 25	յ	25	ե	6	առյծ	11/IV
1222	—	խ	6	զ	7	կոյս	3/IV
1223	—	ց	17	է	8	կշեռ	23/IV
1224	—	չո	28	աբ	9	կրիճ	14/IV
1225	հունվ. 24	թ	9	գ	10	աղեղ	30/III
1226	—	ս	20	դ	11	այծ	19/IV
1227	—	յ	1	ե	12	ջրհս	11/IV
1228	—	դե	12	զէ	13	ձուկ	26/III
1229	հունվ. 23	չ	23	ա	14	խոյ	15/IV
1230	—	ձ	4	բ	15	ցուլ	7/IV
1231	—	բ	15	գ	16	եկավ	23/III
1232	—	նյ	26	դե	17	խեցգ	11/IV
1233	հունվ. 22	խ	7	զ	18	առյծ	3/IV
1234	—	ց	18	է	19	կոյս	23/IV
1235	—	դ	0	ա	1	կշեռ	8/IV
1236	—	մթ	11	բգ	2	կրիճ	30/III
1237	հունվ. 21	ա	22	դ	3	աղեղ	19/IV
1238	—	ծ	3	ե	4	այծ	4/IV
1239	—	դ	14	զ	5	ջրհս	27/III
1240	—	պչ	25	էա	6	ձուկ	15/IV
1241	հունվ. 20	մ	6	բ	7	խոյ	31/III
1242	—	վ	17	գ	8	ցուլ	20/IV
1243	—	ն	28	դ	9	եկավ	12/IV
1244	—	ծխ	9	եզ	10	խեցգ	3/IV
1245	հունվ. 19	պ	20	է	11	առյծ	16/IV

1	2	3	4	5	6	7	8
1246	—	գ	1	ա	12	կոյս	8/IV
1247	—	ժ	12	բ	13	կշեռ	31/III
1248	—	վա	23	գդ	14	կրիճ	19/IV
1249	հունվ. 18	ծ	4	ե	15	աղեղ	4/IV
1250	—	գ	15	զ	16	այծ	27/III
1251	—	պ	26	է	17	ջրհս	16/IV
1252	—	իժ	7	աբ	18	ձուկ	31/III
1253	հունվ. 17	վ	18	գ	19	խոյ	20/IV
1254	—	ն	0	դ	1	ցուլ	12/IV
1255	—	է	11	ե	2	եկավ	28/III
1256	—	ջպ	22	զէ	3	խեցգ	16/IV
1257	հունվ. 16	գ	3	ա	4	առյծ	8/IV
1258	—	գ	14	բ	5	կոյս	24/III
1259	—	շ	25	գ	6	կշեռ	13/IV
1260	—	կծ	6	դե	7	կրիճ	4/IV
1261	հունվ. 15	ւ	17	զ	8	աղեղ	24/IV
1262	—	ճ	28	է	9	այծ	9/IV
1263	—	ի	9	ա	10	ջրհս	1/IV
1264	—	ավ	20	բգ	11	ձուկ	20/IV
1265	հունվ. 14	կ	1	դ	12	խոյ	5/IV
1266	—	է	12	ե	13	ցուլ	28/III
1267	—	չ	23	զ	14	եկավ	17/IV
1268	—	ճգ	4	էա	15	խեցգ	8/IV
1269	հունվ. 13	գ	15	բ	16	առյծ	24/III
1270	—	շ	26	գ	17	կոյս	13/IV
1271	—	կ	7	դ	18	կշեռ	5/IV
1272	—	փւ	18	եզ	19	կրիճ	24/IV
1273	հունվ. 12	ճ	0	է	1	աղեղ	9/IV
1274	—	ի	11	ա	2	այծ	1/IV
1275	—	ո	22	բ	3	ջրհս	14/IV
1276	—	հկ	3	գդ	4	ձուկ	5/IV
1277	հունվ. 11	է	14	ե	5	խոյ	28/III
1278	—	փ	25	զ	6	ցուլ	17/IV

1	2	3	4	5	6	7	8
1279	—	լ	6	է	7	երկվ	2/IV
1280	—	բա	17	աբ	8	խեցգ	21/IV
1281	հունվ. 10	շ	28	գ	9	առյծ	13/IV
1282	—	ը	9	դ	10	կոյս	29/III
1283	—	ա	20	ե	11	կշեռ	18/IV
1284	—	մճ	1	զէ	12	կրիճ	9/IV
1285	հունվ. 9	գ	12	ա	13	աղեղ	25/III
1286	—	ո	23	բ	14	այծ	14/IV
1287	—	հ	4	գ	15	ջրհս	6/IV
1288	—	ըէ	15	դե	16	ձուկ	28/III
1289	հունվ. 8	մ	26	զ	17	խոյ	10/IV
1290	—	լ	7	է	18	ցուլ	2/IV
1291	—	բ	18	ա	19	երկվ	22/IV
1292	—	ոշ	0	բգ	1	խեցգ	13/IV
1293	հունվ. 7	ը	11	դ	2	առյծ	29/III
1294	—	ռ	22	ե	3	կոյս	18/IV
1295	—	խ	3	զ	4	կշեռ	3/IV
1296	—	եդ	14	էա	5	կրիճ	25/III
1297	հունվ. 6	ո	25	բ	6	աղեղ	14/IV
1298	—	հ	6	գ	7	այծ	6/IV
1299	—	ո	17	դ	8	ջրհս	19/IV
1300	—	յմ	28	եզ	9	ձուկ	10/IV
1301	հունվ. 5	լ	9	է	10	խոյ	2/IV
1302	—	բ	20	ա	11	ցուլ	22/IV
1303	—	ձ	1	բ	12	երկվ	7/IV
1304	—	թը	12	գդ	13	խեցգ	29/III
1305	հունվ. 4	ռ	23	ե	14	առյծ	18/IV
1306	—	խ	4	զ	15	կոյս	3/IV
1307	—	ե	15	է	16	կշեռ	26/III
1308	—	չո	26	աբ	17	կրիճ	14/IV
1309	հունվ. 3	թ	7	գ	18	աղեղ	30/III
1310	—	ս	18	դ	19	այծ	19 IV
1311	—	յ	0	ե	1	ջրհս	11/IV

1	2	3	4	5	6	7	8
1312	—	զե	11	զէ	2	ձուկ	26/III
1313	հունվ. 2	չ	22	ա	3	խոյ	15/IV
1314	—	ձ	3	բ	4	ցուլ	7/IV
1315	—	բ	14	գ	5	եկավ	23/III
1316	—	նյ	25	դե	6	խեցգ	11/IV
1317	հունվ. 1	խ	6	զ	7	առյծ	3/IV
1318	—	ց	17	է	8	կոյս	23/IV
1319	—	ղ	28	ա	9	կշեռ	8/IV
1320	—	ժթ	9	բգ	10	կրիճ	30/III
1320	դեկտ. 31	—	—	—	—	—	—
1321	—	ս	20	դ	11	աղեղ	19/IV
1322	—	յ	1	ե	12	այծ	11/IV
1323	—	զ	12	զ	13	ջրհս	27/III
1324	դեկտ. 30	պչ	23	էա	14	ձուկ	15/IV
1325	—	ձ	4	բ	15	խոյ	7/IV
1326	—	բ	15	գ	16	ցուլ	23/III
1327	—	ն	26	դ	17	եկավ	12/IV
1328	դեկտ. 29	ծխ	7	եզ	18	խեցգ	3/IV
1329	—	ց	18	է	19	առյծ	23/IV
1330	—	ղ	0	ա	1	կոյս	8/IV
1331	—	ժ	11	բ	2	կշեռ	31/III
1332	դեկտ. 28	վս	22	գդ	3	կրիճ	19/IV
1333	—	ծ	3	ե	4	աղեղ	4/IV
1334	—	զ	14	զ	5	այծ	27/III
1335	—	պ	25	է	6	ջրհս	16/IV
1336	դեկտ. 27	իժ	6	աբ	7	ձուկ	31/III
1337	—	վ	17	գ	8	խոյ	20/IV
1338	—	ն	28	դ	9	ցուլ	12/IV
1339	—	է	9	ե	10	եկավ	28/III
1340	դեկտ. 26	ջպ	20	զէ	11	խեցգ	16/IV
1341	—	ղ	1	ա	12	առյծ	8/IV
1342	—	ժ	12	բ	13	կոյս	31/III
1343	—	շ	23	գ	14	կշեռ	13/IV

1	2	3	4	5	6	7	8
1344	դեկտ. 25	կծ	4	դե	15	կրիճ	4/IV
1345	—	զ	15	զ	16	աղեղ	27/III
1346	—	ղ	26	է	17	այծ	16/IV
1347	—	ի	7	ա	18	ջրհս	1/IV
1348	դեկտ. 24	ավ	18	բգ	19	ձուկ	20/IV
1349	—	ն	0	դ	1	խոյ	12/IV
1350	—	է	11	ե	2	ցուլ	28/III
1351	—	ջ	22	զ	3	երկվ	17/IV
1352	դեկտ. 23	ճզ	3	էա	4	խեցգ	8/IV
1353	—	զ	14	բ	5	առյծ	24/III
1354	—	շ	25	գ	6	կոյս	13/IV
1355	—	կ	6	դ	7	կշեռ	5/IV
1356	դեկտ. 22	փւ	17	եզ	8	կրիճ	24/IV
1357	—	ճ	28	է	9	աղեղ	9/IV
1358	—	ի	9	ա	10	այծ	1/IV
1359	—	ա	20	բ	11	ջրհս	21/IV
1360	դեկտ. 21	հկ	1	գդ	12	ձուկ	5/IV
1361	—	է	12	ե	13	խոյ	28/III
1362	—	ջ	23	զ	14	ցուլ	17/IV
1363	—	լ	4	է	15	երկվ	2/IV
1364	դեկտ. 20	զզ	15	աբ	16	խեցգ	24/III
1365	—	շ	26	գ	17	առյծ	13/IV
1366	—	կ	7	դ	18	կոյս	5/IV
1367	—	ո	18	ե	19	կշեռ	18/IV
1368	դեկտ. 19	մճ	0	զէ	1	կրիճ	9/IV
1369	—	ի	11	ա	2	աղեղ	1/IV
1370	—	ո	22	բ	3	այծ	14/IV
1371	—	հ	3	գ	4	ջրհս	6/IV
1372	դեկտ. 18	էզ	14	դե	5	ձուկ	28/III
1373	—	ջ	25	զ	6	խոյ	17/IV
1374	—	լ	6	է	7	ցուլ	2/IV
1375	—	բ	17	ա	8	երկվ	22/IV
1376	դեկտ. 17	ոշ	28	բգ	9	խեցգ	13/IV

1	2	2	4	5	6	7	8
1377	—	ը	9	դ	10	առյծ	29/III
1378	—	ո	20	ե	11	կոյս	18/IV
1379	—	մ	1	զ	12	կշեռ	10/IV
1380	դեկա. 16	եզ	12	էա	13	կրիճ	25/III
1381	—	ս	23	բ	14	աղեղ	14/IV
1382	—	հ	4	գ	15	այծ	6/IV
1383	—	ա	15	դ	16	ջրհս	22/III
1384	դեկա. 15	յմ	26	եզ	17	ձուկ	10/IV
1385	—	լ	7	է	18	խոյ	2/IV
1386	—	ր	18	ա	19	ցուլ	22/IV
1387	—	ձ	0	բ	1	եկավ	7/IV
1388	դեկա. 14	թը	11	գդ	2	խեցգ	29/III
1389	—	ո	22	ե	3	առյծ	18/IV
1390	—	խ	3	զ	4	կոյս	3/IV
1391	—	ե	14	է	5	կշեռ	26/III
1392	դեկա. 13	շո	25	աբ	6	կրիճ	14/IV
1393	—	հ	6	գ	7	աղեղ	6/IV
1394	—	ս	17	դ	8	այծ	19/IV
1395	—	յ	28	ե	9	ջրհս	11/IV
1396	դեկա. 12	խլ	9	զէ	10	ձուկ	2/IV
1397	—	ր	20	ա	11	խոյ	22/IV
1398	—	ձ	1	բ	12	ցուլ	7/IV
1399	—	թ	12	գ	13	եկավ	30/III
1400	դեկա. 11	աո	23	դե	14	խեցգ	18/IV
1401	—	խ	4	զ	15	առյծ	3/IV
1402	—	ե	15	է	16	կոյս	26/III
1403	—	շ	26	ա	17	կշեռ	15/IV
1404	դեկա. 10	մթ	7	բգ	18	կրիճ	30/III
1405	—	ս	18	դ	19	աղեղ	19/IV
1406	—	յ	0	ե	1	այծ	11/IV
1407	—	գ	11	զ	2	ջրհս	27/III
1408	դեկա. 9	պշ	22	էա	3	ձուկ	15/IV
1409	—	ձ	3	բ	4	խոյ	7/IV

1	2	3	4	5	6	7	8
1410	—	բ	14	գ	5	ցուլ	23/III
1411	—	ն	25	դ	6	եկավ	12/IV
1412	գեկա. 8	ծխ	6	եզ	7	խեցգ	3/IV
1413	—	ց	17	է	8	առյծ	23/IV
1414	—	ղ	28	ա	9	կոյս	8/IV
1415	—	ժ	9	բ	10	կշեռ	31/III
1416	գեկա. 7	վս	20	գդ	11	կրիճ	19/IV
1417	—	յ	1	ե	12	աղեղ	11/IV
1418	—	զ	12	զ	13	այծ	27/III
1419	—	պ	23	է	14	ջրհս	16/IV
1420	գեկա. 6	ղձ	4	աբ	15	ձուկ	7/IV
1421	—	բ	15	գ	16	խոյ	23/III
1422	—	ն	26	դ	17	ցուլ	12/IV
1423	—	ծ	7	ե	18	եկավ	4/IV
1424	գեկա. 5	ւց	18	զէ	19	խեցգ	23/IV
1425	—	ղ	0	ա	1	առյծ	8/IV
1426	—	ժ	11	բ	2	կոյս	31/III
1427	—	վ	22	գ	3	կշեռ	20/IV
1428	գեկա. 4	կծ	3	դե	4	կրիճ	4/IV
1429	—	զ	14	զ	5	աղեղ	27/III
1430	—	պ	25	է	6	այծ	16/IV
1431	—	ի	6	ա	7	ջրհս	1/IV
1432	գեկա. 3	տվ	17	բգ	8	ձուկ	20/IV
1433	—	ն	28	դ	9	խոյ	12/IV
1434	—	է	9	ե	10	ցուլ	28/III
1435	—	ջ	20	զ	11	եկավ	17/IV
1436	գեկա. 2	ճղ	1	էա	12	խեցգ	8/IV
1437	—	ժ	12	բ	13	առյծ	31/III
1438	—	շ	23	գ	14	կոյս	13/IV
1439	—	կ	4	դ	15	կշեռ	5/IV
1440	գեկա. 1	էզ	15	եզ	16	կրիճ	27/III
1441	—	պ	26	է	17	աղեղ	16/IV
1442	—	ի	7	ա	18	այծ	1/IV

1	2	3	4	5	6	7	8
1443	—	ա	18	բ	19	Ջրհս	21/IV
1444	Նոյեմ. 30	շն	0	գդ	1	Ձուկ	12/IV
1445	—	է	11	ե	2	Խոյ	28/III
1446	—	ջ	22	զ	3	Ցուլ	17/IV
1447	—	ճ	3	է	4	Երկաւ	9/IV
1448	Նոյեմ. 29	դդ	14	աբ	5	Խեցգ	24/III
1449	—	շ	25	գ	6	Առյծ	13/IV
1450	—	կ	6	դ	7	Կոյս	5/IV
1451	—	փ	17	ե	8	Կշեռ	25/IV
1452	Նոյեմ. 28	մճ	28	զէ	9	Կրիճ	9/IV
1453	—	ի	9	ա	10	Աղեղ	1/IV
1454	—	ա	20	բ	11	Այծ	21/IV
1455	—	հ	1	գ	12	Ջրհս	6/IV
1456	Նոյեմ. 27	ըէ	12	դե	13	Ձուկ	28/III
1457	—	ջ	23	զ	14	Խոյ	17/IV
1458	—	լ	4	է	15	Ցուլ	2/IV
1459	—	դ	15	ա	16	Երկաւ	25/III
1460	Նոյեմ. 26	ոշ	26	բգ	17	Խեցգ	13/IV
1461	—	կ	7	դ	18	Առյծ	5/IV
1462	—	ո	18	ե	19	Կոյս	18/IV
1463	—	մ	0	զ	1	Կշեռ	10/IV
1464	Նոյեմ. 25	լի	11	էա	2	Կրիճ	1/IV
1465	—	ո	22	բ	3	Աղեղ	14/IV
1466	—	հ	3	գ	4	Այծ	6/IV
1467	—	ը	14	դ	5	Ջրհս	29/III
1468	Նոյեմ. 24	ոջ	25	եզ	6	Ձուկ	17/IV
1469	—	լ	6	է	7	Խոյ	2/IV
1470	—	բ	17	ա	8	Ցուլ	22/IV
1471	—	ս	28	բ	9	Երկաւ	14/IV
1472	Նոյեմ. 23	թը	9	գդ	10	Խեցգ	29/III
1473		ս	20	ե	11	Առյծ	18/IV
1474	—	մ	1	զ	12	Կոյս	10/IV
1475	—	ե	12	է	13	Կշեռ	26/III

1	2	3	4	5	6	7	8
1476	Նոյեմ. 22	չո	23	աբ	14	կրիճ	14/IV
1477	—	հ	4	գ	15	աղեղ	6/IV
1478	—	ա	15	դ	16	այծ	22/III
1479	—	յ	26	ե	17	ջրհս	11/IV
1480	Նոյեմ. 21	խլ	7	զէ	18	ձուկ	2/IV
1481	—	ր	18	ա	19	խոյ	22/IV
1482	—	ձ	0	բ	1	ցուլ	7/IV
1483	—	թ	11	գ	2	եկավ	30/III
1484	Նոյեմ. 20	սռ	22	դե	3	խեցգ	18/IV
1485	—	խ	3	զ	4	առյծ	3/IV
1486	—	ե	14	է	5	կոյս	26/III
1487	—	չ	25	ա	6	կշեռ	15/IV
1488	Նոյեմ. 19	ձհ	6	բգ	7	կրիճ	6/IV
1489	—	ս	17	դ	8	աղեղ	19/IV
1490	—	յ	28	ե	9	այծ	11/IV
1491	—	խ	9	զ	10	ջրհս	3/IV
1492	Նոյեմ. 18	ցր	20	էա	11	ձուկ	22/IV
1493	—	ձ	1	բ	12	խոյ	7/IV
1494	—	թ	12	գ	13	ցուլ	30/III
1495	—	ս	23	դ	14	եկավ	19/IV
1496	Նոյեմ. 17	ծխ	4	եզ	15	խեցգ	3/IV
1497	—	ե	15	է	16	առյծ	26/III
1498	—	չ	26	ա	17	կոյս	15/IV
1499	—	ժ	7	բ	18	կշեռ	31/III
1500	Նոյեմ. 16	վս	18	գդ	19	կրիճ	19/IV
1501	—	յ	0	ե	1	աղեղ	11/IV
1502	—	զ	11	զ	2	այծ	27/III
1503	—	պ	22	է	3	ջրհս	16/IV
1504	Նոյեմ. 15	ղձ	3	աբ	4	ձուկ	7/IV
1505	—	բ	14	գ	5	խոյ	23/III
1506	—	ն	25	դ	6	ցուլ	12/IV
1507	—	ծ	6	ե	7	եկավ	4/IV
1508	Նոյեմ. 14	ւց	17	զէ	8	խեցգ	23/IV

1	2	3	4	5	6	7	8
1509	—	ղ	28	ա	9	առյծ	8/IV
1510	—	ժ	9	բ	10	կոյս	31/III
1511	—	վ	20	գ	11	կշեռ	20/IV
1512	Նոյեմ. 13	նյ	1	դե	12	կրիճ	11/IV
1513	—	զ	12	զ	13	աղեղ	27/III
1514	—	պ	23	է	14	այծ	16/IV
1515	—	ղ	4	ա	15	ջրհս	8/IV
1516	Նոյեմ. 12	գբ	15	բգ	16	ձուկ	23/III
1517	—	ն	26	դ	17	խոյ	12/IV
1518	—	ծ	7	ե	18	ցուլ	4/IV
1519	—	ւ	18	զ	19	եկավ	24/IV
1520	Նոյեմ. 11	ճղ	0	էա	1	խեցգ	8/IV
1521	—	ժ	11	բ	2	առյծ	31/III
1522	—	վ	22	գ	3	կոյս	20/IV
1523	—	կ	3	դ	4	կշեռ	5/IV
1524	Նոյեմ. 10	էզ	14	եզ	5	կրիճ	27/III
1525	—	պ	25	է	6	աղեղ	16/IV
1526	—	ի	6	ա	7	այծ	1/IV
1527	—	տ	17	բ	8	ջրհս	21/IV
1528	Նոյեմ. 9	շն	28	գդ	9	ձուկ	12/IV
1529	—	է	9	ե	10	խոյ	28/III
1530	—	ջ	20	զ	11	ցուլ	17/IV
1531	—	ճ	1	է	12	եկավ	9/IV
1532	Նոյեմ. 8	իժ	12	աբ	13	խեցգ	31/III
1533	—	շ	23	գ	14	առյծ	13/IV
1534	—	կ	4	դ	15	կոյս	5/IV
1535	—	է	15	ե	16	կշեռ	28/III
1536	Նոյեմ. 7	ջպ	26	զէ	17	կրիճ	16/IV
1537	—	ի	7	ա	18	աղեղ	1/IV
1538	—	տ	18	բ	19	այծ	21/IV
1539	—	շ	0	գ	1	ջրհս	13/IV
1540	Նոյեմ. 6	ըէ	11	դե	2	ձուկ	28/III
1541	—	ջ	22	զ	3	խոյ	17/IV

1	2	3	4	5	6	7	8
1542	—	ճ	3	է	4	ցուլ	9/IV
1543	—	գ	14	ա	5	եկավ	25/III
1544	Նոյեմ. 5	աշ	25	բգ	6	խեցգ	13/IV
1545	—	կ	6	դ	7	առյծ	5/IV
1546	—	փ	17	ե	8	կոյս	25/IV
1547	—	մ	28	զ	9	կշեռ	10/IV
1548	Նոյեմ. 4	լի	9	էա	10	կրիճ	1/IV
1549	—	ա	20	բ	11	աղեղ	21/IV
1550	—	հ	1	գ	12	այծ	6/IV
1551	—	ը	12	դ	13	ջրհս	29/III
1552	Նոյեմ. 3	աջ	23	եզ	14	ձուկ	17/IV
1553	—	լ	4	է	15	խոյ	2/IV
1554	—	գ	15	ա	16	ցուլ	25/III
1555	—	ս	26	բ	17	եկավ	14/IV
1556	Նոյեմ. 2	հկ	7	գդ	18	խեցգ	5/IV
1557	—	ո	18	ե	19	առյծ	18/IV
1558	—	մ	0	զ	1	կոյս	10/IV
1559	—	ե	11	է	2	կշեռ	26/III
1560	Նոյեմ. 1	չա	22	աբ	3	կրիճ	14/IV
1561	—	հ	3	գ	4	աղեղ	6/IV
1562	—	ը	14	դ	5	այծ	29/III
1563	—	յ	25	ե	6	ջրհս	11/IV
1564	Հոկտ. 31	խլ	6	զէ	7	ձուկ	2/IV
1565	—	ր	17	ա	8	խոյ	22/IV
1566	—	ս	28	բ	9	ցուլ	14/IV
1567	—	թ	9	գ	10	եկավ	30/III
1568	Հոկտ. 30	աո	20	դե	11	խեցգ	18/IV
1569	—	մ	1	զ	12	առյծ	10/IV
1570	—	ե	12	է	13	կոյս	26/III
1571	—	չ	23	ա	14	կշեռ	15/IV
1572	Հոկտ. 29	հձ	4	բգ	15	կրիճ	6/IV
1573	—	ա	15	դ	16	աղեղ	22/III
1574	—	յ	26	ե	17	այծ	11/IV

1	2	3	4	5	6	7	8
1575	—	խ	7	զ	18	ջրհս	3/IV
1576	հոկտ. 28	ցր	18	էա	19	ձուկ	22/IV
1577	—	ձ	0	բ	1	խոյ	7/IV
1578	—	թ	11	գ	2	ցուլ	30/III
1579	—	ս	22	դ	3	եկավ	19/IV
1580	հոկտ. 27	ծխ	3	եզ	4	խեցգ	3/IV
1581	—	ե	14	է	5	առյծ	26/III
1582	—	շ	25	ա	6	կոյս	15/IV
1583	—	ժ	6	բ	7	կշեռ	31/III
1584	հոկտ. 26	վս	17	գդ	8	կրիճ	19/IV
1585	—	յ	28	ե	9	աղեղ	11/IV
1586	—	խ	9	զ	10	այծ	3/IV
1587	—	պ	20	է	11	ջրհս	16/IV
1588	հոկտ. 25	դձ	1	աբ	12	ձուկ	7/IV
1589	—	թ	12	գ	13	խոյ	30/III
1590	—	ս	23	դ	14	ցուլ	19/IV
1591	—	ծ	4	ե	15	եկավ	4/IV
1592	հոկտ. 24	դե	15	զէ	16	խեցգ	26/III
1593	—	շ	26	ա	17	առյծ	15/IV
1594	—	ժ	7	բ	18	կոյս	31/III
1595	—	վ	18	գ	19	կշեռ	20/IV
1596	հոկտ. 23	նյ	0	դե	1	կրիճ	11/IV
1597	—	դ	11	զ	2	աղեղ	27/III
1598	—	պ	22	է	3	այծ	16/IV
1599	—	դ	3	ա	4	ջրհս	8/IV
1600	հոկտ. 22	դր	14	բգ	5	ձուկ	23/III
1601	—	ն	25	դ	6	խոյ	12/IV
1602	—	ծ	6	ե	7	ցուլ	4/IV
1603	—	ւ	17	զ	8	եկավ	24/IV
1604	հոկտ. 21	ճդ	28	էա	9	խեցգ	8/IV
1605	—	ժ	9	բ	10	առյծ	31/III
1606	—	վ	20	գ	11	կոյս	20/IV
1607	—	կ	1	դ	12	կշեռ	5/IV

1	2	3	4	5	6	7	8
1608	հոկտ. 20	էգ	12	եգ	13	կրիճ	27/III
1609	—	ղ	23	է	14	աղեղ	16/IV
1610	—	գ	4	ա	15	այծ	8/IV
1611	—	դ	15	բ	16	ջրհոս	24/III
1612	հոկտ. 19	շն	26	գգ	17	ձուկ	12/IV
1613	—	ծ	7	ե	18	խոյ	4/IV
1614	—	ւ	18	գ	19	ցուլ	24/IV
1615	—	ճ	0	է	1	երկավ	9/V
1616	հոկտ. 18	իժ	11	ար	2	խեցգ	31/III

VIII. ԱՌԵՂԾՎԱԾԱԳԻՐ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միջնադարյան հայ գրիչները, իրենց ձեռագրերը գալիք ժամանակներում հնարավոր խաթարումներից և գրագողությունից ազատ պահելու նկատառումով, ինչպես և՝ որպես «խրախճանականք», հիշատակարաններում գաղտնագրում են ոչ միայն իրենց անունները, այլ գրչության թվականները և ամսաթվերը։ Հաճախ նրանք գրչախաղով գաղտնագրում են նաև իրենց ժամանակ տեղի ունեցող քաղաքական կարևոր իրադարձությունները։

Հայ աղբյուրագիտության համար ծածկագիր այդ թվականների վերծանությունն ունի կարևոր նշանակություն։ Այն կարևոր է ինչպես ուսումնասիրվող ձեռագրի գրչության տարին որոշելու, այնպես էլ պատմական այս կամ այն իրադարձության ժամանակը ճիշտ թվագրելու համար։

Դժբախտաբար, մինչև այժմ հայագետներից ոչ մեկն ի մասնավորի չի զբաղվել հայկական ծածկագիր թվականների վերծանությամբ։ Ուստի չպետք է զարմանալ, որ մինչև այսօր այդպիսիք չեն խմբավորված և նրանց ընդհանուր սկզբունքները չեն բացահայտված։ Ստորև մենք նպատակ ունենք գիտական խմբավորման ենթարկել մեզ հայտնի ծածկագիր թվականները, բերել նրանցից որոշ նմուշներ և հրատարակել մեզ հայտնի բանալիները։

Ծածկագիր թվականների ճնշող մեծամասնությունը, որպես ընդհանուր կանոն, գաղտնագրված են լինում ոչ թե քրիստոնեական թվականով, այլ հայկականով։ Շատ քիչ պատահում են նաև սարկավագագիր, մորուկ, արարչության, հռոմեական, քրոնիկոնի և հիջրայի թվականները։

Ուշագրավ է, որ ծածկագիր թվականների մեծ մասը ձեռագրերում հանդիպում է չափածո հիշատակարանների մեջ։ Արձակ գրված հիշատակարաններում նրանց թիվը, համեմատաբար, քիչ է։ Ընդ որում, ծածկագիր թվականների մեծ մասը կազմված է մաթեմատիկային և տոմարագիտությանը քաջածանոթ անձնավորությունների կողմից։ Նրանց մեջ կան բացառիկ հնարամտությամբ կազմված այնպիսի ծածկագրեր, որոնք կարելի էր օգտագործել ժամանակակից մաթեմատիկայի խնդրագրքերում։

Հայ մատենագրության մեջ գործածվող ծածկագիր թվականները իրենց կառուցվածքով և բանալիներով տարբեր խմբեր են կազմում։

1. **Թվախառը ծածկագրեր**: Ի տարբերություն թվական արժեք ունեցողների, տառերը բերվում են ո՛չ թե թվական սովորական կարգով, այլ խառն.

այդ պատճառով էլ ծածկագիր թվականների այս խումբը մենք անվանում ենք «թվախառը ծածկագրեր»։

Այս խմբի թվականների վերծանությունն առանձին դժվարություն չի ներկայացնում։ Բերենք նրանցից մի քանի նմուշ։ Եղիա գրիչն իր չափածո հիշատակարանում ձեռագրի գրչության թվականի մասին հայտնում է.

«Տրամաբանութիւնս աւարտեցի
Վատ ձեռամբս Եղիա դպրի,
Ի թվին Նոճլե, *ամսոյն տրէի,*
Ձեր ոտից՝ հող և փոշի»[1]։

*Այստեղ որոշակի ասված է, որ գրչության թվականը «*Նոճլե*»-ն է, որը կվերծանվի Ն(400)+Ո(600+ Ճ(100)+Լ(30)+Ե(5)+հայկական թվականի տարբերությունը՝ 551=1686։ Տրամաբանության գիրքը, ուրեմն, Եղիա գրիչը գրել է 1686 թվականին։*

Մեսրոպ գրիչն իր ընդօրինակած «Քառագրքի» թվականը հայտնել է ծածկագիր մի քանի ձևի գաղտնագրությամբ, որոնցից թվախառն ծածկագիրը հետևյալն է.

«Մի՛ բարկանար, իմ սիրելի,
Ըզդժվարալուր բան թուականիս.
Պատրաստ սեղան քեզ սիրելույդ՝
ի ճառիզա»[2]։

*Այստեղ թվականը «*ի ճառիզա*»-ն է, որ վերծանվում է այսպես. Ի(20)+Ճ(100)+Ա(1)+Ռ(1000)+Ի(20)+Զ(6)+Ա(1)+551=1699։ Ձեռագիրը գըրված է 1699 թվականին։*

Եվրոպայի մասնավոր անձանց սեփականությունը կազմող մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք.

«Ո՞վ ընթերցողք քաղցրաբարբառ,
Եւ նըւագողք մըտօք պայծառ,
Թիւն Հայոց է յոյժ պատկառ,
Որ ի ստորև գըրի երկբառ.
Լաւ համարեա և ի միտ ա՛ռ,
Զներքոյ գըրեալ յետին գիր քառ,
Մուտ ի յայգիս ո՛վ գերափառ,
Կըթեա սիրով դու Ճ. ծառ»[3]։

---

[1] **ՄԱՄ ձեռ. № 2811**, *թ. 175բ։ (Այստեղ և այլուր ընդգծումները մերն են)։*

[2] *ՄԱՄ ձեռ. № 545, թ. 174ա։*

[3] **Արտ. Սիւրմէեան**, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու, հ. Ա, Փարիզ, 1950, էջ 72։*

Հիշատակագրության թվականն է «Ճ. ծառ»-ը, որ վերծանվում է՝ Ճ(100)+Ծ(50)+Ա(1)+Ռ(1000)+551=1702 թ.։

Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի № 321 ձեռագրում Իգնատիոս գրիչը գրության ժամանակը հայտնում է հետևյալ ծածկագրությամբ.

«...եա ինձ հիքոյս մասն ինչ չիթի,
Աւարտ ածել զճառս խորհրդի,
Սուրբ և յանմահ պատարագի.
Ի ձմերային ամանակի,
Եւ դըժընդակ օդոյ ցըրտի,
Զոր թիւ[4] եկեալ էր Ն'այսմ յամի.
Քառեակ, կաճառ յանչատելի,
Գարնանային յամսոց նախկի,
Կալուածըն կայր հընգից երրի
Ներ շաբաթու վեցերորդի,
Ցաւուրս տօնի սրբոյ խաչի,
Քառասնորդաց մեծ պասեքի
Զրաւեցաւ ճառս Տեառն Ներսիսի»[5]։

Գրության տարին «Քառեակ, կաճառ»-ն է, որ վերածնվում է քառեակ (4)+Կ(60)+Ա(1)+Ճ(100)+Ա(1)+Ռ(1000)+551=1717։ Տաշյանը սխալմամբ հաշվել է երկու թվով՝ 1727 կամ 1725։ Երկուսն էլ սխալ են։ Որ 1717-ն է ճիշտ, այդ ստուգվում է ամսաթվով ու շաբաթվա օրով։ Ձեռագրի ավարտման ամսաթիվն է եղել մարտի 15-ը («Գարնանային ամսոց նախկի», այսինքն՝ գարնան առաջին ամսվա 15-ին՝ «Հընգից երրի»)։ Այդ օրը եղել է շաբաթվա վեցերորդ օրը, այսինքն՝ շաբաթ։ 1717 թ. մարտի 15-ին, իրոք, եղել է շաբաթ և քառասնորդաց պահքի ժամանակը։

Արտ. Սյուրմեյանի Հալեպի ձեռագրերի ցուցակում հրատարակված է Գրիգոր Տաթևացու «Հարցման գրքի» մի ձեռագիր ընդօրինակության հիշատակարանը, ուր թվականը գաղտնագրված է հետևյալ հատվածում.

«Ներբելովն ա[ստծո]յ աւարտեցի,
Տխեղծ մատամբ շարադրեցի,
Ի թվականի Հայոց քանակի,
Քառից կրկին հարիւր չափի,
Քառիւ մի պարզ երկ ւ՛ եսնեկի
Ու ընդ նմին երկ հարիւրի»[6]։

Սյուրմենյանը փորձել է վերծանել. Նրա հաշվումներով ձեռագիրը գրված պիտի լինի 1607 թվականին։ Մինչդեռ գրված է ավելի ուշ։ Հիմնավորենք մեր ասածը։ Ձեռագիրը, ըստ այդ հիշատակարանի, գրված է. «Քառից կրկին հարիւր չափի», այսինքն՝ չորսը բազմապատկած երկուսով, ապա բազմապատկած հարյուրով, որ կլինի 800 (4×2×100=800)։ Ստացված այս գումարին պետք է ավելացնել մեկ չորս և երկու հիսնյակ (բնագրում «ւ՛եսնեկի» աղավաղված է, ուղղվում է «յիսնեկի»), որը հավասար կլինի 4+(2×50)=104, սրան էլ գումարելով 200-ը՝ «Եւ ընդ նմին երկ հարիւրիւ» և հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1655 (800+104+551+200=1655)։

---

[4] Բոլոր ընդգծումները հրատարակչինն է։

[5] Հ. Տաշեան, Ցուցակ ձեռագրաց, էջ 765։

[6] Արտ. Սիւրմէնեան. Ցուցակ ձեռագրաց Հալեպի, հ. Բ, էջ 57։

Նման մի ծածկագիր թվական պարունակող հիշատակարան պահել է Ղալաթիայի ձեռագրերից մեկը, որը բերված է Բ. Կյուլեսերյանի ձեռագիր ցուցակում, որից օգտվել ենք ժամանակին, բայց ձեռագրաց տպագիր ցուցակում, դժբախտաբար, այդ հատվածը չկարողացանք գտնել. հավանական է հրատարակիչներն այդ հատվածի վերծանությունը չկարողանալով տալ, բաց են թողել[7]։

«Ջափ չափելեաց միջին վայրից ստորին կենի,
Որպէս ի հայս բաղչան եղեղեալ մէք էղ պաճի,
. . . .
Ի հայկազեան Պ. եակ, վեց յոբելեան ընդ երիւք վեցեակ,
Եթէ առցես համաքատակ հայկեանս վեցեակ թուոյ լինի ճանակ:
Ըստ քանակի աւուրց հաշւոյ հայոց թվական
Մու ճազարեակ Բ յոբելիւք, երիւք վեցեան։
Ջայսքան հաշւեա իմաստնական Ի յոբելեան տասնիւք տասան.
Ընդիփտոնն ճամարական, երիւք լինի մեծ թվական...»[8]։

Ծածկագրված առաջին թվականը «մէք էղ պաճի»-ն է Մ(200+Է(7)+Թ(9)+Է(7)+Դ(4)+Պ(800)+Ա(1)+Հ(70)+Ի(20)+551=1669։

Ծածկագրված երկրորդ թվականն է՝ «Պ.եակ»՝ 800։ Դրան գումարած վեց հոբելյան՝ 800+(6×50)=1100։ Վրան ավելացրած «երեք վեցեակ»՝ 1100+(3×6)+551=1669։

Երրորդ ծածկագրված թվականն է՝ «մու հազարեակ»՝ 1000, վրան ավելացրած «Բ յոբելիւք»՝ 1000+(2×50)=1100 և երիւք վեցեանկ՝ 1100+(3×6)+551=1669։

Չորրորդ ծածկագրված թվականն է «Ի յոբելեան»՝ 20×50=1000, գումարած «տասնիւք տասան»՝ 100+1000+1100, ավելացրած մի ինդիկտիոն և երեք 1100+15+3+551=1669։

Չորս տեսակ տարբեր ծածկագրով գաղտնագրված է 1669 թվականը։

Ձեռագրերում երբեմն պատահում են ավելի պարզ թվագումար ծածկագրեր։ Այսպես, Մաշտոցի անվան մատենադարանի № 8636 ձեռագրի հիշատակարանում ասված է՝ «Ի թուիս Ն. Ն. Ճ. Ճ. Ծ. Ծ. Ժ. Ժ. Ե. Ե. Գ. Գ. գրեցաւ ձեռամբ յոգնամեղ Գրիգորի Երևանցւոյ»[9]։ Վերծանվում է Ն(400)+Ն(400)+Ճ(100)+Ճ(100)+Ծ(50)+Ծ(50)+Ժ(10)+Ժ(10)+Ե(5)+Ե(5)+Գ(3)+Գ(3)+551=1687 թ.։ Ձեռագիրը գրված է 1687 թվականին։

2. Հասարակաճում ծածկագրեր: Հայկական ծածկագիր թվականների երկրորդ և ամենից մեծ խումբը կազմում են հասարակ անուններով գաղտնագրված ծածկագրերը, որոնք հաճախ ընդգծված են լինում և կամ գրված կարմիր մելանով։ Այս խմբի ծածկագրերի մեջ պատահում են այնպիսիները, որոնք պարունակում են ոչ թե մեկ բառ, այլ՝ երկու և ավելի։ Ծածկագրերի այս խումբը մենք անվանում ենք «Հասարականուն ծածկագրեր»։

---

[7] Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ», ձեռ. № 18, թ. 268։

[8] Անթիլիասի մատենադարանի ձեռ. № 18 (օգտվել ենք ձեռագիր ցուցակից)։

[9] ՄԱՄ ձեռ. № 8636, թ. 108ր։

Սարգիս Եվդոկացի գրիչն իր ընդօրինակած ձեռագրի ժամանակը թվագրել է հետևյալ քառյակում.

«Ի թվականիս Հայոց մեծի,
Շաղ բառըս նշան քեզ յայտնեցի.
Կենըն պատուով ի բաց դիցի,
Այբն ընդ նմին բարձեալ լիցի»[10]։

Այստեղ թվականը ծածկագրված է «շաղ» բառի տակ, որից սակայն հանձնարարվում է հանել «կենըն պատուով», այսինքն՝ «կ» տառը իր թվական նշանակությամբ (60)։ Ծածկագրությունը վերծանվում է՝ Շ(500)+Ո(600)+Ղ(90)=1190-ի, որից պետք է հանել 60-ը («կենըն պատուով») և մեկը (այբն ընդ նմին բարձեալ լիցի»), կստանանք 1129, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1680։ Սարգիս Եվդոկեցու ձեռագիրը գրված է 1680 թվականին։

Մաշտոցի անվան մատենադարանի № 84 ձեռագրի սկզբի պահպանակի չորրորդ էջի վերջում գրչության թվականը ծածկագրված է հետևյալ քառյակում.

«Հայկազան թվին լաչին վեցոյ,
Դեկտեմբեր ամսի քսանումն գոյ.
Թարաշ ասեմ հայոց լեզ(ու)ով,
Եղև աւարտ կարճ ի կարճոյ»[11]։

Այստեղ թվականը ծածկագրված է «լաչին վեցոյ» բառերի մեջ։ Բարդացման նպատակով «շարաթ» բառը գրված է հակառակ ծայրից՝ «թարաշ» ձևով։ Վերծանության համար վերցնում ենք «լաչին» բառի տառերի թվանշանների գումարը և նրան ավելացվող վեցը. Լ(30)+Ա(1)+Չ(700)+Ի(20)+Ն(400)+6, ստանում ենք 1157։ Ներկա թվականին վերածելու համար գումարում ենք հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1708 թվականը։ Ուրեմն՝ տվյալ քառյակը գրված է 1708 թվականին։

Ակադ. Ն. Մառի կազմած Սևանի ձեռագրերի ցուցակում բերված է № 11 ձեռագրի գրչության թվականը պարունակող հետևյալ ծածկագիրը.

«Ի թվահաշուութեան Թորգոմական,
Որ է նշան ժամանակեան,
Ոհան անուն կալ քեզ նշան
Եւ Բ տառս այլ մակադրական»[12]։

Մառի կարծիքով ծածկագրված է «Ոհան» բառը և երկու այլ բառեր՝ «Բ տառս այլ մակադրական»-ը, հասկանալով երկու տառերի թվանշանների միացումը։ Այդ տառերը նա համարել է «ԱԿ»-ն՝ վերցնելով «Թորգոմական», «ժամանակեան», «կալ» և «մակադրական» բառերից։

Այստեղ ծածկագրված է իրոք «Ոհան» բառը, որի տառերի թվագումարը կլինի 1071՝ Ո(600)+Հ(70)+Ա(1)+Ն(400)=1071։ Եվ սրան պետք է գումարել ոչ թե երկու ինչ որ տառերի թվանշաններ, այլ ուղղակի երկուսը՝ Բ-ն իր թվական նշանակությամբ։ 1071-ին գումարելով երկուս, ստանում ենք 1073, իսկ սրան ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1624։

---

[10] ՄԱՄ ձեռ. №3567, թ. 18ա։

[11] ՄԱՄ ձեռ. №84 պահպանակ։

[12] Ն. Մառ, Ցուցակ համառօտ ձեռագրաց Վանուց Սևանայ, էջ 29։

Այսպիսով, պարզվում է, որ Սևանի № 11 ձեռագիրը գրված է ոչ թե 1683-ին, ինչպես վերծանել է Մառը, այլ՝ 1624-ին։

Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի № 92 ձեռագրի հիշատակարանը պարունակում է ձեռագրի գրչության հետևյալ ծածկագիր թվականը.

«...սէր իմ մինչ դու մերձիս ի յոյս հանդէս,
բաժանելով յերկուս մասունս զբառդ հանդէս,
Զկէսն հաշուեալ ընդ գալ բառին զթիւն յայտնես՝
Հայոց տոհմիս և երբ գծման գրքոյս ի տես»[13]։

Հակոբոս Տաշյանը, որ հրատարակել է այս հիշատակարանը, կարծել է, թե ծածկագրված «հանդէս» բառի առաջին երեք տառերը և հաջորդ «գալ» բառն են ծածկագրված. «Եթե հան և գալ՝ գրչին ըսածին պես՝ թվական համարինք (Հ, Ա, Ն, Գ, Ա, Լ),—գրել է նա,—կունենանք ՇԾ թվականը»։ Տաշյանը, սակայն, վստահ չի եղել իր վերծանության մեջ, ուստի անհրաժեշտ է համարել զգուշացնել ընթերցողին, որ իր վերծանությունը «դժվարավ կհամարի թարգմանության ժամանակին»։

Տվյալ ծածկագրության մեջ գաղտնագրված թվականը իրապես «հանդէս»-ն է, որը կվերծանվի՝ Հ(70)+Ա(1)+Ն(400)+Դ(4)+Է(7)+Ս(2000)=2482։ Այս գումարը պետք է կիսել («բաժանեալ յերկուս մասունս»), կստանանք 1241, որին անհրաժեշտ է գումարել «գալ» բառի թվանշանները. 1241+Գ(3)+Ա(1)+Լ(30)+551=1826։ Այսպիսով, Վիեննայի մատենադարանի № 92 ձեռագիրը գրված է ո՛չ թե հայկական ՇԾ թվականին, այսինքն՝ 1056-ին, այլ շատ ավելի ուշ՝ 1826-ին։

Մաշտոցի անվան մատենադարանի № 545 ձեռագիրը պարունակում է գրչության մասին ծածկագիր մի թվական, որը բերված է չափածո հիշատակարանում։ Այնտեղ ասված է.

«Ի քննութիւն սորա դու մուտ.
Ո՛վ ճոխաբան ներկուռ հմուտ,
Մատնեա ի ձեռս ծածկող լեզուայդ,
Եթէ իցես ճարտար բրուտ։
Եզն այս անուն միայն յատուկ,
Կրկնապատկեա զքանիքն ստոյգ։
Սիրեա եղբայր այս արուեստուկ,
Զի է զբօսան մտավարժոյդ։
Բամեա զբոլորըն խրատոյդ,
Ցաւել ի դա եռ հարիւրակ,
Ուստի գտցես Հայկեան թվուկ՝
Ունեալով պակաս քսան և հի[ն]գ»[14]:

Այս բնագրում ծածկագրված առաջին բառը «եզն» է, որը վերծանվում է՝ Ե(5)+Զ(6)+Ն(400)=411։ Այս թիվն անհրաժեշտ է կրկնապատկել («կրկնապատկեա զքանիքն ստոյգ»), կլինի 822։ Ստացածին պետք է գումարել «եռ հարիւրակ», այսինքն՝ 300, որով կստանա 1122։ Իսկ սրան էլ գումարենք «պակաս քսան և հինգն»-ը, կստանանք 1147։ Ուրեմն՝ ձեռագիրը գրված է հայկական 1147 թվականին, որին գումարելով 551, կստանանք 1698 թվականը։

---

[13] «Ցուցակ ձեռագրաց Վիեննայի», էջ 862։

[14] ՄԱՄ ձեռ. № 545, թ. 174բ։

Որ մեր այս վերծանությունը ճիշտ է, այդ ստուգվում է նույն հիշատակարանի ծածկագիր թվականի մի այլ օրինակից, որ բերել է ծածկագրողը՝ վերծանության գործը դյուրացնելու նպատակով։ Այստեղ ասված է.

«Ի յայս հանդէս դու յառաջեա՛.
Իմաստութեամբ դու ոգորեա՛,
Մարտիկ ընտիր զքեզ կազմեա՛.
Խրախուսմամբ զձիդ մտրակեա՛։
Երասանակն ուղիղ պնդեա՛.
Իբրև զքաջ զմահ ընկճեա՛,
Սաստիկ գանիւ զնա ծեծեա՛,
Ջանուն առեալ շարադասեա՛։
Րաբունօրէն զա[յ]ն կրկնեա՛,
Վեց հարիւրի վերջայանգեա՛,
Երկու կրկին և ընդ մուիւ
Ընդ նայն յարեալ միաւորեա՛.
Պահակ թվոյ մեծին Հայկայ,
Նա անպակաս իսկ բաղկանայ։
Է հաւաստի ի ՃԱՌԻԶԻ իմա,
Քեզ իմաստնոյդ վարդ հոտոտեա»[15]։

Այստեղ ծածկագրված բառը «մահ»-ն է, որը հավասար կլինի՝ Մ(200)+ +Ա(1)+Հ(70)=271։ Այս թիվը պետք է կրկնապատկել («զայն կրկնեա»), կստանանք 542։ Ստացած թվին պետք է գումարել 600 («վեց հարիւրի վերջայանգեա»). կլինի՝ 1142։ Այս գումարին պետք է ավելացնել 5 («երկու կրկին և ընդ մուիւ»), կլինի 1147, նրան էլ գումարենք հայկական թվականի տարբերությունը, կստանանք 1698, այսինքն՝ այն թվականը, որը մենք ստացել էինք նախորդ ծածկագրության վերծանման ժամանակ։ Մեր այս հաշվումը համապատասխանում է վերջին երկտողում հիշված «ՃԱՌԻԶԻ»-ն. Ճ(100)+Ա(1)+Ռ(1000)+Ի(20)+Զ(6)+Ի(20)+551=1698։

Ականավոր բժշկապետ Ամիրդովլաթն իր «Անգիտաց անպէտ»-ի մեջ գաղտնագրել է բժշկարանը գրել սկսելու և ավարտելու թվականները։ Բժշկարանի ներածության մեջ նա հայտնել է, որ ինքը սկսում է գրել «Շինէ» թվականին։

«Գրենք զդեղերուն անուանքն, սկսանք ի յաքուբենէ,
Որ է բժշկաց արուեստ և բառեր ի օգտութենէ,
Աւարտի սա հինգ լեզուաւ զՀայոց թուականն Շինէ»։

«Շինէ»-ն վերծանվում է՝ Շ(500)+Ի(20)+Ն(400)+Է(7)=927. որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1478։ Հիշատակարանում նա հայտնում է, որ գիրքն ավարտել է «ԼՄՆայ» թվականին։

«Չորս տարի տիւ և գիշեր աշխատեցայ,
Ի բազում օրինակաց արարի սա...
Ես բժիշկ Ամիրդովլաթս, հայրս Եղիայ,

---

[15] ՄՄ ձեռ. № 545, թ. 174ա։

Որ ծնեալ եմ ի քաղաքն Ամասիայ...
Հայոց թուականին ԼՄՆայ»[16]:

«ԼՄՆայ» թվականը վերածնվում է՝ Լ(30)+Մ(200)+Ն(400)+Ա(1)+Յ(300)+551=1482։

Մատենադարանի № 1864 ձեռագրի հիշատակագիրը իր ընդօրինակած ձեռագրի թվականն է համարում «նայէ զի եկայ»[17], այսինքն՝ Ն(400)+Ա(1)+Յ(300)+Է(7)+Զ(6)+Ի(20)+Ե(5)+Կ(60)+Ա(1)+Յ(300)+551=1651 թ.։ Ձեռագրի գրչության ժամանակն է, ուրեմն, 1651 թվականը։

Ալեքսան երեցն իր ձեռագրի թվականը հիշում է հետևյալ ծածկագրով. «Ի թվականիս մեր Հայկազնեայ, որ պատահեցաւ անուն Աննայ...»[18]: Թվականը ծածկագրված է «Աննայ» բառի տակ, որը վերծանվում է Ա(1)+Ն(400)+Ն(400)+Ա(1)+Յ(300)+551=1653 թ.։

Երուսաղեմի մատենադարանի № 145 ձեռագրի մի հիշատակագրության մեջ թվականը հիշված է հետևյալ քառյակում.

«Յանգ սպասելով տեառն գալստեան,
Եղբարքք և հարքք աղօթական,
Իւսելով ի թիւն ճգնական,
Զուարթնոց երկնից գոլով նման...»[19]։

Այս քառյակում թվականը գաղտնագրված է «ճգնական» բառում, որը գումարգիր ծածկագրով վերծանելիս ստանում ենք. Ճ(100)+Գ(3)+Ն(400)+Ա(1)+Կ(60)+Ա(1)+Ն(400)+551=1516, որին գումարելով «զուարթնոցը», որը հավասար է 6-ի, ունենում ենք 1522 թվականը։

Գրիգորը Պոնտոսի իր մեծավորին ուղարկած գրությունը թվագրել է.

«Թէ զերբըն գրոյս՝ ասիցես խնդրեմ,
Արդ՝ յորում ամի գրեցաւն՝ ասեմ,
Ըզմունն[20] հաշիւ պինդ կալ զետ ըզվէմ,
Թուեա ընդ նմա որ ասէ լռեմ»[21]:

Այստեղ թվականը ծածկագրված է «Լռեմ»-ում, որը գումարգիր ծածկագրով վերծանվում է. Լ(30)+Ռ(1000)+Ե(5)+Մ(200)=1235, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1786 (1235+551=1786)։

3. Տոմարաքիվ ծածկագրեր: Կան թվականների ծածկագրություններ, որոնցում գործ են ածվում տոմարական գիտության մեջ ընդունված և քաղաքացիություն ստացած պարբերաշրջանների տարեթվեր։ Հայտնի է, օրինակ, որ արեգակի պարբերաշրջանը հավասար է 28-ի, լուսնինը՝ 19-ի, տոմարական մեծ շրջանը՝ 532-ի, հոբելյանը՝ 50-ի, ինդիկտիոնը՝ 15-ի, բեսեքիստոնը՝ 7-ի, նոնոսը՝ 5-ի և այլն։ Գաղտնագրված թվականներում սովորաբար նշվում են տոմարական նշանակություն ունեցող տարեթվի անունները և

---

[16] Տե՛ս «Ամիրդովլաթի Ամասացւոյ Անգիտաց անպէտ», Վիեննա, 1927, հրատ. Կ. Բասմաջյանի, էջ 1 և 624։

[17] ՄԱՄ ձեռ. № 1864, թ. 425ա։

[18] Բ. Սարգիսյան, Ցուցակ ձեռագրաց Վենետիկի, հ. Ա, էջ 302։

[19] «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. I, էջ 415։

[20] Ընդգծումը Տաշյանինն է։

[21] «Ցուցակ ձեռագրաց Վիեննայի» (Հ. Տաշյանը չի վերծանել և «ըզմունն» ընդգծելով, հավանական է, կարծել, թե այդ բառն է ծածկագրված թվականը), էջ 911։

Նրանց միավորները։ Թվական ծածկագրությունների այս խումբը մենք անվանում ենք «տոմարաթիվ ծածկագրություն»։

Տոմարաթիվ ծածկագրության մեջ ամենից շատ գործածականը Հոբելյանն է, որը երբեմն գործածվում է առանձին, իսկ մեծ մասամբ՝ տոմարական մյուս տարեթվերի հետ խառնված։ Մաշտոցի անվան մատենադարանի № 4253 ձեռագրի գրչության թվականը գաղտնագրված է հետևյալ երկու տողի մեջ.

«Ծռաչափեալ ըստ շաբաթու թիւ յոբելեան,
Եդեալ ընդ նոյնս թիւ կատարեալ եօթնառական»[22]։

Ըստ այս հիշատակագրության, պետք է վերցնել շաբաթվա յոթ օրերը եռապատկված, այսինքն՝ 21-ը, և բազմապատկել Հոբելյանով (50-ով), որով կստանանք 1050, նրան գումարենք նույն թիվը՝ մեկ Հոբելյանը, և հանենք յոթը («եոթնառական»), կստանանք 1050+50—7=1093, որին գումարելով Հայկական թվականի տարբերությունը, ստացվում է 1644։

Նույն ձեռագրում ծածկագրված է մի այլ թվական ևս, միայն մեկ տարով պակաս.

«Ի թիւ Հայկեան ներեզերեալ բարդեալ շրջան,
Երկ ընդիկտիոն, յորմէ երկեակ ի բաց առման»[23]։

Այստեղ «Շրջան» ասելով, նկատի ունի 532 պարբերաշրջանը, որը բարդելու, այսինքն՝ գումարելու դեպքում, կստանանք 1064։ Այս թվին պետք է գումարել երկու «Ընդիկտիոն»․ մի «Ընդիկտիոն»-ը հավասար է 15-ի, երկու «Ընդիկտիոն»-ը կլինի 30, որը գումարելով նախորդ թվին, կստանանք 1094։ Սրանից պետք է հանել 2-ը («Երկեակ ի բաց առման»), կլինի՝ 1092, իսկ սրան էլ գումարելով 551՝ հայկական թվականի տարբերությունը, կստանանք 1643։

Մաշտոցի անվան մատենադարանի № 9646 ձեռագրում հանդիպում ենք այսպիսի մի ծածկագիր թվականի.

«Գիշերատիւ միոյ աւուր ըղթիւ ժամուցըն վեր առեալ։
Զիւրաքանչիւրն որոշակի յոբելեան իմն համարեալ,
Ի վերայ այսր ամենայնի ըղծայ գիրըն վերայբերեալ,
Եւ իբրու հարկաւոր գոլով զեկտի քառեակս զուգակցեալ,
Որքանութիւն թվականիս ապա կարծիք լինի յայտնեալ,
Եւ ի նամսեանըն նոյեմբերի երկեակ հնգեակին պատահեալ։
Ի Պէազիտ քաղաքիս մեր եղև խոկ այս գրչագրեցեալ
Ձեռամբ Մինասօ իբր երիցու ձախու Լեղեշտայ յորչորջեալ»[24]։

Այս ծածկագրությունը վերծանում ենք հետևյալ կերպ։ Վերցնում ենք օրվա 24 ժամերի թիվը և բազմապատկում Հոբելյանով (50-ով), ստանում ենք 1200 (24×50=1200), ավելացնում ենք «ծայր»-ն, այսինքն՝ 50-ը, լինում է 1250։ Սրան գումարում ենք «եկտի» քառակուսին, այսինքն՝ 8-ը (2×4=8)։ Այս թիվը գումարելով նախորդ թվին, ստանում ենք 1258։ Ստացած գումարին ավելացնելով հայկական թվականի տարբերությունը՝ 551, լինում է 1809։ Ուրեմն՝ Մինաս գրիչը ծածկագրությունը գրել է Բայազետում 1809 թվականի նոյեմբերի 10-ին («երկեակ հնգեակին»)։

---

[22] ՄԱՄ ձեռ. № 4253, թ. 157։

[23] Նույն տեղում։

[24] ՄԱՄ ձեռ. № 9646, թ. 363բ։

Մաշտոցի անվան մատենադարանի № 2381 ձեռագիրը, որը քերականական նյութերի ժողովածու է, գաղտնագրված հայկական մի թվական ունի հետևյալ չափածո հիշատակարանում.

«Եթէ կամիս ըզթուականն,
Կալ և հաշուեա զքսան յոբելեան,
Երկեռակի տասն բեր յայն,
Իդոսն թիւ ընդ երկոտասան»[25]։

Պրոֆ. Ն. Ադոնցը հրատարակել է այս ծածկագիր թվականը և փորձել է վերծանել։ Դժբախտաբար, նա սխալ է հասկացել «Իդոս» բառի նշանակությունը՝ կարծելով, թե այդ աղավաղված է «Բ. Դսին», այսինքն՝ երկուսը բազմապատկած չորսով[26]։ Իրականում «Իդոս» բառն աղավաղված չէ. այն հաճախ է պատահում տոմարական բնագրերում։ Անանիա Շիրակացու «Տիեզերագիտութեան» մեջ մենք ունենք որոշակի ցուցմունք, որ «Իդոսն Ը(8) ամ է»։ Ահա, «Իդոս»-ն իր ճիշտ նշանակությամբ հասկանալու և վերծանելու պարագային մենք ծածկագրության մեջ կունենանք՝ քսան հոբելյան, որը հավասար կլինի մեկ հազարի, նրան գումարած երկու եռյակ, այսինքն՝ վեց, բազմապատկած տասով, որը հավասար է 60-ի։ Սրան էլ գումարելով 8+12, կլինի 20։ Այս բոլորի գումարը կլինի՝ 1000+60+20=1080։ Ներկա թվականին վերածելու համար անհրաժեշտ է գումարել 551, որով ստացվում է 1631։

Մեր մատենադարանի № 5613 ձեռագրում ծածկագրված թվական պարունակող հիշատակարանում նշված է, որ ձեռագիրը գրված է «Յամի Երեսներորդի առաջներորդի յոբելենի, և ընդիկտոնի երրորդի, բեսեքիստոնի և միոյն իդոսի թուաբերութեան ժամանակի մարդեղութեան Փրկչին»[27]։

«Հոբելեան»-ը, ինչպես ասել ենք, հավասար է հիսունի, 31 հոբելյանը կանի 1550։ Սրան պետք է գումարել երեք ինդիկտիոն։ Ինդիկտիոնը հավասար է 15-ի, երեք ընդիկտիոնը կլինի 45։ Վերջում անհրաժեշտ է գումարել մեկ բեսեքիստոն (7) և մեկ իդոս (8)։ Բոլորը միասին գումարելով կստանանք 1610։ Ծածկագրված թվականը հայկական չէ, այլ ներկա մեր գործածական թվականը։

Ֆ. Քոնիբերի հրատարակած Բրիտանական թանգարանի հայկական ձեռագրերի ցուցակում հանդիպում ենք տոմարական ծածկագրության մի նմուշի, որը չի վերծանված հրատարակչի կողմից։ Այնտեղ ասված է.

«Թիւ գրգուկիս աւարտեցման՝
Զոյգ շրջանիկ. եզ յոբելեան,
Եվ մակ եռակ քառապատկեան,
Քառիկ դարձեալ և մու քսան»[28]։

Այս ծածկագրության մեջ գործածված «շըրջանիկ»-ը 532 տարիների պարբերաշրջանն է, որը զույգ վերցնելու պարագային կստացվի 1064։ Նրան պետք է գումարել մեկ հոբելյան՝ 50։ Այստեղ «եզ»-ն ունի միակի իմաստ։ Մի եռյակը քառապատկելով, կստանանք 12։ Դրան ավելացրած 24 («քառիկ դարձեալ և մու քըսան»)։ Տրված բոլոր թվերը գումարելով, լինում է 1150, դրան ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1701։ Ուրեմն ձեռագիրը գրվել է այդ թվականին։

---

[25] ՄԱՄ ձեռ. № 2381, թ. 247բ։

[26] Տե՛ս Н. Адонц, Дионисий Фракийский..., էջ X։

[27] ՄԱՄ ձեռ. № 5613, թ. 161բ։

[28] F. C. Conybeare, A Catalogue of the armenian manuscripts..., p. 310.

Մաշտոցի անվան մատենադարանի № 5613 ձեռագիրը, որ պատմական նյութերի ժողովածու է, ունի հետևյալ հիշատակարանը՝ զուգահեռ վկայված երկու թվականով, որոնցից առաջինը բերվել է նախորդ էջում. «Յամի երեսներրորդի առաջերորդի յոբէլենի և ընդիկտոնին երրորդի, բեսեքիստոնի և միոյն ինդոսի թուաբերութեան ժամանակի մարդեղութենէ Փրկչի։ Նայև ըստ համարոյ յաբեթազէն տոմարի հարուր և երեսուն ինդոսի, բեսեքիստոնի և միոյ տգոնի եղև յաւարտումն մեկնիչ տոմարի յամսեանն Հայոց Նաւասարդի Է(7) օրն գիշերի ժամն ԻԲ(22)»[29]։

Այստեղ մենք ունենք գաղտնագրված երկու թվական՝ քրիստոնեական և հայկական, որոնք և հնարավորություն են տալիս ստուգել իրար։ Քրիստոնեական թվականը, ըստ հիշատակարանի, բաղկացած է 31 հոբելյանից, երեք ինդիկտիոնից, մեկ բեսեքիստոնից և մեկ իդոսից, որոնց գումարը հավասար է $(31\times50)+(3\times15)+8+7=1610$-ի։ Հայկական թվականը բաղկացած է 130 իդոսից, մեկ բեսեքիստոնից և մեկ տգոնից (տգոնը հավասար է տասի), որոնց գումարը կլինի $(130\times8)+7+10=1057$։ Եթե այդ գումարին ավելացնենք հայկական թվականի տարբերությունը, կստանանք 1608, այսինքն՝ երկուսով պակաս նախորդից։ Քրիստոնեական թվականը, ինչպես երևում է, ներկայումս մեր գործածական քրիստոնեական հռոմեական թվականը չէ, այլ քրիստոնեական հայկականը, որին պետք է ավելացնել ոչ թե 551, այլ՝ 553։ Այդպիսի հաշվումով, զուգահեռ բերված երկու թվականներն էլ կհամապատասխանեն իրար։

Արթուն գրիչը Լվով քաղաքում Աստվածատուր քահանայի համար մի ձեռագիր է ընդօրինակել և գրչության թվականի մասին թողել հետևյալ հիշատակագրությունը. «...յամի երեսներրորդի առաջներրորդի յոբելանի և ընդիկտիոնին երկերորդի, բեսեքիստոնի և միոյ ղիմպիաթի, այլ և առաջներրորդի ամին թուվաբերութեան ժամանակի մարդեղութենէ փրկչի, նա և ըստ համարոյ յաբեթազին տումարի հարիւր քսան և հինգ իդոսի և ութներորդ նոնոսի և միոյ ոլիմպիաթի եղև սկիզբն և աւարտումն տրամաբանութեան գրի...»[30]։

Սկսենք վերծանել նախ հայկական թվականը («Յաբեթազին տումարը»), որը կազմված է 125 իդոսից, 8 նոնոսից, 1 ոլիմպիադից։ Իդոսը՝ 8 տարվա շրջան է, 125 իդոսը հավասար կլինի մեկ հազարի $(125\times8=1000)$, նոնոսը՝ 5 տարվա շրջան է, ութ նոնոսը հավասար կլինի 40-ի $(5\times8=40)$, ոլիմպիադը կամ ղիմպիադը՝ 4 տարվա շրջան է։ Այս բոլորը ի մի հավաքելով և նրան գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում են 1595 $(1000+40+4+551=1595)$։ Ուրեմն՝ ձեռագիրը գրված է 1595 թվականին։

Ըստ հիշատակարանի ձեռագրի գրչության «փրկչական» թվականը գտնելու համար պետք է հաշվի առնել 31 հոբելյան, երկու ինդիկտիոն, մեկ բեսեքիստոն, մեկ ոլիմպիադ մեկ («առաջնորդի»)։ Հոբելյանը 50 տարվա շրջան է, 31 հոբելյանը հավասար է 1550-ի $(50\times31=1550)$, ինդիկտիոնը 15 տարվա շրջան է, երկու ինդիկտիոնը հավասար է 30-ի $(15\times2+30)$, բեսեքիստոնը 7 տարվա շրջան է, ողիմպիադը՝ 4 տարվա և այդ բոլորի վրա ավելացրած մեկ։ Բոլոր թվականները ի մի գումարելով, ստանում ենք 1592 (1550+30+7+4+1=1592)։ Հայկական թվականի համեմատությամբ 3 տարվա տարբերություն է նկատվում։ Հիշատակարանում, մեր կարծիքով, աղավաղում կա։ Թերևս «սեռ» (3) պետք է լինի։

---

[29] ՄԱՄ ձեռ. № 5613, թ. 161ա—161բ։

[30] ՄԱՄ ձեռ. № 570, թ. 193ա—195բ։

Ջմմառի մատենադարանի մի ձեռագրի գրչության թվականը հայտնված է գրչի չափածո հետևյալ տոմարաթիվ հիշատակարանում.

«Յամի փրկչին իսկ մեր ազնի.
Որ առ միմեանս շարահիւսի,
Վայելչապէս է[31] շրջանի,
Արդ հոբելեան, Ե ընդ նմին.
Նաեւ եռեակ սուն ներ նմին.
Է և թուոյն երկից կուսին,
Սարսիմ ասել վասն միոյն,
Ի լրանալ լինել թուոյն
Փառս տացուք միշտ անհնոյն»[32]։

Հրատարակիչը չի կարողացել վերծանել և ձեռագիրը դրել է XVII—XVIII դարերի տակ։

Այստեղ հիշվում է մեկ հոբելյան՝ 50, նրան գումարած 5 (Ե ընդ նման), գումարած «եռեակ» բառի թվագումարը՝ 1071 («Նաեւ եռեակ սուն ներ նմին»), նրան գումարած երկու «կոյս» թիվ («կույս» թիվը հավասար է 7-ի, երկու 7-ը հավասար կլինի 14-ի) և գումարած 1 («սարսիմ ասել վասն միոյն»)։ Այս բոլոր թվերն ի մի գումարելով ստանում ենք 1141, որին ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1692։ Այսպիսով, Ջմմառի ձեռագիրը գրված է 1692 թվականին։

Հայրապետ գրչի թողած հիշատակագրությունը գրված է. «...էր թուական մերոյս ազեան (այսինքն մեր ազգի՝ հայկական—Ա. Ա.) երկշրջան, մու յոբելիան, քառեակ հնգեակ և մի տասնեակ և երկ լծակ, ձեռամբ մեղսամած և մրրգուզ Հայրապետի պիտակ աբեղայի...»[33]։

Այստեղ «երկ շրջան» ասելով նկատի ունի ՇԼԲ շրջանները. մեկ շրջանը հավասար է 552-ի, երկու շրջանը՝ 1064-ի, նրան գումարած մեկ հոբելյան՝ 50 տարի, գումարած չորս հնգյակ՝ 20 («քառեակ հնգեակ»), գումարած մեկ տասնյակ և երկու լծակ («լծակ»-ը մեկ միավոր է, երկու լծակը հավասար կլինի երկուսի)։ Առաջարկած թվերի վրա գումարելով նաև հայկական մեծ թվականի տարբերությունը ստանում ենք՝ 1697 (1064+50+20+10+2+551=1697)։

Անկյուրիայի մատենադարանի № 97 ձեռագրի Ամիր Սարգիս գրիչը իր ձեռագիրը գրել է.

«Ի թուականիս Հայկազեան սեռի,
Զոր այս սոքօք յայտնի լիցի.

---

[31] Բնագրում սխալ է սպրդել. «օժանդակ բայ «է»-ն դարձել է թվական նշանակությամբ Ե(5)։ Ուղղել ենք։

[32] Մ. Քեչիչեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Ջմմառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 529։

[33] ՄԱՄ ձեռ. № 268, թ. 315։

Հնգիւք քառեակ յոբելինի,
Քառորդ տասնեակ յարաբարդի,
Երկեակ քառիւք երկք աւելի,
Ի յամսեանն մայիսի՝
Եռեակ, երկիւք մա՛կ աւելի»[34]։

Ճիշտ է վերծանել Կյուլեսերյանը։ Ըստ ձեռագրի հիշատակարանի, գրչությունն ավարտվել է հայկական թվականի «Հնգիւք քառեակ յոբելինի» ($5\times4\times50=1000$), «քառորդ տասնեակ յարաբարդի» ($4\times10=40$), «երկեակ քառիւք երկք աւելի» ($2\times4+2=10$)։ Իրար գումարելով առաջարկվող այս թվանշանները, ստանում ենք՝ $1000+40+10+551=1601$ թ.։ Ամսաթիվը՝ «եռեակ, երկիւք մա՛կ աւելի», հավասար է՝ $3\times2+1=7$։ Անկյուրիայի մատենադարանի № 98 ձեռագիրը, ուրեմն, գրված է 1601 թ. մայիսի 7-ին։

Անկյուրիայի մատենադարանի № 15 ձեռագրում Թադեոս գրիչը ձեռագրի գրչության տարեթիվը թվագրել է հիշատակարանի հետևյալ քառյակում.

«Թիւ երրորդի կրկնապատկի
Մեռեալ *բառիւ շարագուգի,*
Ի նոյն ամի հայկեան թուի
Գտցես գրեալ տառս մատենի»[35]։

*Այստեղ ծածկագրված է «***մեռեալ***» բառը, որի թվագումարը հավասար կլինի՝ Մ(200)+Ե(5)+Ռ(1000)+Ե(5)+Ա(1)+Լ(30)=1241, որին գումարելով «Թիւ երրորդի կրկնապատկի», այսինքն՝ $3\times2=6$ և հայկական մեծ թվականի տարբերությունը ստանում ենք 1798 ($1241+6+551=1798$)։*

Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 188 ձեռագրի մասին հիշատակարանում ասվում է, որ այն գրվել է «Ի թուին Հայոց երկշրջանակի, երր յոբելենի և մետասան յարաբարդի, ի յունիս ամսոյ, ձեռամբ յոգնամեղ և բազմասխալ Պօղոս անարհեստ գրչի»[36]։

Հիշատակարանի հրատարակիչ Բ. Սարգիսյանը չի փորձել վերծանել այն։ «Երկ շրջանակ» ասելով ծածկագրողը հասկանում է տոմարական մեծ պարբերաշրջանը, որը հավասար է 532-ի, իսկ երկու պարբերաշրջանը («երկշրջանը») կլինի 1064։ Այդ թվին պետք է գումարել երեք հոբելյան («երր յոբելենի»), այսինքն՝ 150, կլինի 1214։ Ստացած գումարին անհրաժեշտ է ավելացնել նաև 11 («մետասան յարաբարդի»), կստանանք 1225, սրան էլ գումարելով հայկական թվականի տարբերությունը՝ 551, կունենանք 1776 թվականը։ Վենետիկի № 188 ձեռագիրն, ուրեմն, գրված է ոչ թե 1814 թվականին, ինչպես կարծում է Սարգիսյանը, այլ՝ 1776-ին։

Հայտնի տաղերգու Խաչատուրի (Խասպեկի) ընդօրինակած մի ձեռագիրը, որը գրվել է Ղրիմի գրչության դպրոցում և այժմ գտնվում է Փարիզի ազգային մատենադարանում, ունի հիշատակարան, ուր ասվում է, որ այն գրվել է։

«Ի թուականութեանս Հայոց սեռի
Եւ յաբեթական տումարի
Քսան և երկու յոբելենի
Եւ միակ եւթն և տասնեկի»[37]։

---

[34] «Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ», էջ 496։

[35] Նույն ցուցակում, էջ 90։

[36] «Ցուցակ ձեռագրաց Վենետիկի», Հ. Ա, էջ 786։

[37] **F. Macler,** Catalogue des manuscrits arméniens et géorgiens..., p. 30.

Քսան և երկու հոբելյանը հավասար է 1100-ի, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը և ակնարկվող 17-ը, կստանանք 1668։ Ուրեմն՝ խասպեկի այս ձեռագիրը գրված է 1668 թվականին։

4. Գաղտնածածուկ ծածկագրեր: Հասարականուն ծածկագրերի այս շարքում հաճախ հանդիպում են գաղտնագրված թվականներ, որոնք դժվարությամբ են ճանաչվում։ Այդպիսիները մենք անվանում ենք «գաղտնածածուկ ծածկագրեր»։

Երեմիա Քյոմուրճյանը «Ստամպօլոյ պատմութեան» գրության ժամանակը հայտնում է հետևյալ քառյակում.

«Թաւ է գիտնոց իմաստնոց՝
Զվերոյգրեալս որ թէ իմանան.
Հայ թուականն դա զինչ է
Երեմիաս յանգեալ գիր ընծայն»[38]։

Ծածկագրված թվականը գտնվում է երրորդ տողում, որը մեծ վարպետությամբ շարադրված է երկիմաստ. մեկ՝ կարելի է հասկանալ, թե հեղինակը հարցնում է ուղղակի՝ հայկական թուականը ի՞նչ թվական է, իսկ մյուսը՝ թե հայկական թվականը գաղտնագրված է «զինչ է» բառերի թվական գումարի մեջ։ Իրականում՝ երկրորդ իմաստով է գործածված։

«Զինչ է» ծածկագիր թվականը վերծանվում է. զ(6)+ի(20)+ն(400)+չ(700)+է(7), որը հավասար է 1133-ի։ Սրան գումարելով 551, ստանում ենք 1684։

Անկյուրիայի № 165 ձեռագրի հիշատակագիրներից մեկը թվականը հայտնում է իր թողած հետևյալ քառյակում.

«Էին հանուրց փառք և պատիւ յաւիտեան,
Յայժմ և յաւէտ և անզրաւ յաւիտեան։
Արդ թիւն Հայոց ի յերկ տողիցս սկզբան,
Երկ բառքն յայտնեն **թարց կոյս թուոց կիրառման**»[39]:

Տվյալ հիշատակագրության թվականը, ինչպես ճիշտ նկատել է Կյուլեսերյանը, գաղտնագրված է սկզբի երկու տողի առաջին բառերի մեջ («ի յերկ տողիցս սկզբան»)՝ «էին» և «յայժմ»։ Գումարգիր ծածկագրով վերծանվում են. է(7)+Ի(20)+Ն(400)+Յ(300)+Ա(1)+Յ(300)+Ժ(10)+Մ(200) = 1238։ Այդ թվից պետք է հանել 7-ը («**թարց կոյս թուոց կիրառման**»), ստանում ենք 1231, որին գումարելով հայկական մեծ թվականի տարբերությունը, ստանում ենք 1782 (1231+551=1782)։

Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի № 298 ձեռագրի (որը պարունակում է Հովհաննես Դրասխանակերտցու պատմությունը) Մանվել գրիչը գրչության թվականը հայտնում է հետևյալ առեղծվածագիր հիշատակարանում.

«**Զողկոյզն** որթոյն հեղ ի հնձան,
Խաղող նորին առեալ կոխան,
Զմետասանն եռապատկեալ՝
Յողկոյզն արկեալ՝ **թիւ** շինես զայն,
Մեր տոմարին թորգոմական,
Որ է երբն գրքոյս գրման»[40]։

---

[38] Երեմիա Չելեպի Քէօմիւրճեան, Ստամպօլոյ պատմութիւն, Վիեննա, 1913, էջ 120։

[39] «Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ», էջ 832։

[40] «Ցուցակ ձեռագրաց Վիեննայի», էջ 727։

Այստեղ ծածկագրված է «զողկոյզ» բառը, որը գումարգիր վերծանվում է. Զ(6)+Ո(600)+Ղ(90)+Կ(60)+Ո(600)+Յ(300)+Զ(6)=1662, որին գումարելով 11×3=33 («զմետասանն եռապատկեալ»), ստանում են 1695 (1662+33=1695)։ Ստացված տարեթիվը ներկայիս թվահաշվով է, ուստի «Թորգոմականս»-ի հիշատակումը թյուրիմացություն է։ Սխալվում է նաև Տաշյանը, երբ ձեռագրի գրության թվականն է համարում 1725-ը։

Անկյուրիայի № 78 ձեռագրի հիշատակարանում (պարունակում է Հովհաննես Դամասկացու աշխատությունը) ընդօրինակության ժամանակի մասին ասված է.

«Յորժամ հասի սորա վերջին,
Թուն Հայոց էր սուրբ խաչին։
Գիրքս այս ասի Դամասկացւոյն,
Սու[ր]բ Յոհաննու ընտրեալ դասուն»[41]։

Այստեղ թվականը գաղտնագրված է «խաչին» բառի մեջ, որը գումարգիր ծածկագրով վերծանվում է. Խ(40)+Ա(1)+Չ(700)+Ի(20)+Ն(400)=1161, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1712։

Բ. Կյուլեսերյանը հրատարակել է մի հիշատակագրություն, որի մեջ գրչության ժամանակի մասին հետևյալն է ասված.

«Մանգաղ սրեալ է հնձելոյ,
Լե՛ր աշակերտ ուսանելոյ,
Հնձեալ ցորէնն կալսելոյ,
Պապակեցա՛ տապ ծարաւոյ։
Ձայն[ն][42] ախորժակ ի լսելոյ,
Պակասեցո՛յ գիմն ի թըւոյ»[43]։

Գրչության թվականն այստեղ գաղտնագրված է «ձայնն»-ի մեջ, որը գումարգիր ծածկագրով վերծանելով ստանում ենք. ձ(80)+ա(1)+յ(300)+ն(400)+ն(400)=1181, գումարած հայկական մեծ թվականի տարբերությունը, ստանում ենք 1732 (1181+551=1732), այդ թվից էլ հանելով երեքը («պակասեցո՛յ գիմն ի թըւոյ»), ստանում ենք 1729 (1732—3=1729)[44]։

5. Խառնանուն ծածկագրեր։ Հայկական ձեռագրերում մեկ-մեկ հանդիպում են հասարակ և հատուկ անուններով գաղտնագրված թվականներ, որոնց մենք անվանում ենք «խառնանուն ծածկագրեր»։ Այս խմբի ծածկագիր թվականներում հանդիպում ենք հետևյալ անուններին. «Եկտիս»՝ գործ է ածվում 2 նշանակությամբ, «Արիստոտէլ»՝ 10-ի, «Պորփիւր»՝ 5-ի, «Մակ»՝ երկսի, «Զուարթնոց»՝ 6-ի, «Զգայութիւնք»՝ 10-ի, «Կոյս թիւ»՝ 7-ի, «Հազիկ»՝ 1000-ի, «Հարիկ»՝ 100-ի, «Հող»՝ 7-ի, «Սեռ»՝ 3-ի, «Լծորդ տառեր»՝ 4-ի, «Լողական»՝ 500-ի և այլն։

Բերենք այս խմբի ծածկագրերից մի քանի օրինակ՝ վերցնելով Մաշտոցի անվան մատենադարանի № 9646 ձեռագրից, ուր այս կարգի մի շարք ծածկագրեր են գրված և լուսանցքներում վերծանված։ Վերծանումները, ինչպես երևում է, կատարված են այլ անձնավորության կողմից, որովհետև թույլ են տըրված որոշ սխալներ։

---

[41] Բ. Կյուլեսերյան, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ..., էջ 525։

[42] «Ձայն [ն]» բառի վերջին «ն» տառը, թվական հաշվումից ելնելով, մենք ենք ավելացրել։

[43] Բ. Կյուլեսերյան, Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ..., էջ 549։

[44] Անկյուրիայի ձեռագրաց ցուցակի հրատարակիչների տողատակ ծանոթագրություններից երևում է, որ Կյուլեսերյանը սխալմամբ ծածկագրված թվական է ուզել գտնել վերև բերված վեց տողերի առաջին տառերը՝ Մ, Լ, Հ, Պ, Ձ՝ հաշվումից բաց թողնելով վեցերորդ տողի առաջին «Պ» տառը։

Շատ սրամիտ է կազմված այսպիսի մի ծածկագիր թվական.

«Զթին Արամեան թէ հարցանես՝ գիտեմ ոչ,
Մու յոբելեան ի բաց բառնալն՝ գիտեմ ոչ,
Երկեակ Պորփիւր և մու քառեակ համարոչ.
Սնանին որպէս հորդան վայրի գալարոչ»[45]։

Առաջարկվող ծածկագրության մեջ «ոչ»-ը գործ է ածվել ոչ թե ժխտական նշանակությամբ, այլ՝ թվանշանի։ «Ոչ»-ը հավասար է Ո(600)+Չ(700)=1300-ի, Նրանից պետք է «բառնանք», այսինքն՝ դուրս գանք մեկ հոբելյան՝ 50, կմնա 1250, դրան գումարենք («համար առնենք») երկու «Պորփիւր» (2×5) և մեկ քառյակ, այսինքն՝ 14, կլինի 1264։ Սրան գումարելով հայկական թվականի տարբերությունը, ներկա թվականով ստանում ենք 1815։ Ուրեմն, ծածկագրությունը կազմված է այդ թվականին։

Նույն ձեռագրի մի այլ ծածկագրության մեջ, ուր գործածված են ինչպես տոմարական, այնպես էլ պայմանական նշանակությամբ անուններ, գաղտնագըրված է հետևյալ թվականը.

«Գրիլ սորա ի մերս թվի,
Յեկտի Նէնոս, Հար[իւր]որդի,
Արիստոտէլն ընդ Պորփիւրի.
Վէշեակ թվովք հաշիւ լիցի։
Յարմար գոլով երկ յոբելի,
Թիւն հայկական յանկ ելանի,
Անխօս գոլով միշտ յերգարկի
Քառիցս եռեակ, մու երկակի»[46]։

«Նէնոսը» 480 է, երկու «Նէնոսը»՝ 960, որին պիտի գումարել հարյուր, կլինի՝ 1060, ավելացնելով «Արիստոտէլ»-ը և «Պորփիւր»-ը, իրար գումարելով և վեցով բազմապատկելով, ստանում ենք 90[(10+5).6=90]։ Երկու հոբելյանը հավասար է 100-ի, «քառիցս եռեակ»-ը՝ 12-ի, իսկ «մու երկակ»-ը՝ 2-ի։ Առաջարկած բոլոր թվերը գումարելով իրար ստանում ենք 1264 (960+100+90+100+12+2=1264)։ Սրան գումարելով հայկական թվականը՝ 1815։

Նույն ձեռագրի բավական ընդարձակ մի ծածկագրության մեջ թվականը գաղտնագրված է հետևյալ կերպ.

«Արամազնեան Թուականին,
Իւթ սորա կէս Թըրիթակին,
Եւ յիսն յօնսայք յոյժ յարմարին,
Տասն ի բննեքտիկոնք շարին,
Ի Ժ և վեշ ընտիկտօնին,
Սեռ յոբելեան և Պորփիւր մին։
Ի Ժ և Ե ամք խզելին.
Արիստոտէլն ընդ Պորփիւրին,

---

[45] ՄԱՄ ձեռ. № 9646, թ. 225բ։

[46] Նույն տեղում, թ. 225բ։

Յադոնք առ այս յարմար շարին,
Սոքիմբ գայ յաշխարհս յըզգալին,
Երկու ամօք պակաս ասին,
Երկ յօնսայիւ յանկ ելանին»[47]։

Թրթակը հազար է, որի կեսը կլինի 500։ «Յօնսան» երեք է, «յիսն» (50) «յօնսայք» կլինի 150։ Բննեքտիկոնը 7 է, 10 բննեքտիկոնը հավասար կլինի 70-ի։ Ինդիկտիոնը՝ 15 է, 16 ինդիկտիոնը հավասար կլինի 240-ի։ Սեռը երեք է. երեք «յոբելեան»-ը կանի 150։ Սրան պետք է գումարենք մեկ «Պորփիւր», այսինքն՝ 5, որով կլինի 155։ «Խզելի», այսինքն՝ հանելի թիվը 15 է։ «Արիստոտէլը» (10-ը) գումարած «Պորփիւրին» (5-ին) և բազմապատկած «Ադոն»-ով (10-ով), կլինի 150։ Սրան անհրաժեշտ է գումարել «յըզգալին», որը հավասար է 10-ի։ Գումարից պետք է պակասեցնել երկու տարի և երկու «յօնսա», այսինքն 8։ Այսպիսով, դրական թվերի գումարը հավասար կլինի 500 + 150 + 70 + 240 + −155 + 150 + 10 = 1275։ Հանելի թվերը կլինեն 15-ը և 8-ը։ 1275-ից հանելով 23-ը, կստանանք 1252։ Գործածական ներկա թվականի վերածելու համար գումարելով 551, ստանում ենք 1803։

Բերենք մեկ օրինակ ևս Մատենադարանի №9646 ձեռագրից.

«Տառք ձայնաւորք չորս լծորդաց,
Ուշիւ հաշուեա զնոսա կրկնած,
ԶԱրիստոտէլն, յերկ Պորփիւր,
Ս՛ծ՝ Զաքարիայն՝ Պէազիտ եկած»[48]։

№ 9646 ձեռագրի ծածկագրերի մեծ մասի հեղինակը Զաքարիան է, ուստի մեզ անհրաժեշտ է պարզել, թե ո՞ր ժամանակի մարդ է, ե՞րբ է նա եկել Բայազետ։ Չորս ձայնավոր տառեր հեղինակը համարել է՝ ա, ե, ի, ո, որոնց թվական նշանակությունը գումարելով, ստանում ենք 626 (1 + 5 + 20 + 600 = 626)։ կրկնապատկելով ստանում ենք 1252։ Ստացած թվին գումարում ենք մեկ «Արիստոտէլ» և երկու «Պորփիւր», որը անում է 20 (10 + 5 + 5 = 20), ողջ գումարը հավասար է 1272-ի։ Ստացած թվին գումարելով հայկական թվականի տարբերությունը՝ դառնում է 1823։

Ուրեմն, Զաքարիան Բայազետ է գնացել 1823 թվականին։

Նույն ձեռագիրը պարունակում է արեգակի, լուսնի և նրանց բազմապատիկը կազմող տոմարական պարբերաշրջանների հիման վրա կազմած ստորև բերված ծածկագիր թվականը.

«Նայսըմ կցեալ մեծ շրջանին,
Արեգ ընդ լուսին փոքր շրջանին,
Յարիստոտէլիւ կրկնաւ խզին
Ի Պորփիւրիւ յետս ընկրկին»[49]։

Այստեղ «Նայսըմ» բառի մեջ կցված են «ն», «յ» և «ր» տառերը և «մ» տառը, որ պետք է առանձնացնել։ Առաջին երեքը՝ Ն, յ, ր տառերը գրված են թվանշանի իմաստով, իսկ վերջին «մ»-ն չունի թվական արժեք։ Թվանշանի համար գործածվող տառերը հավասար են՝ Ն(400) + յ(300) + ր(8) = 708։ Դրան անհրաժեշտ է գումարել «մեծ շրջանը», որը 532 է, 28 և «լուսնինը»՝ 19, իսկ այս ամենը գումարելով առաջինին, ստանում ենք 1287 (708+532+28+19=1287)։ Դրանից պահանջվում է հանել կրկնակի «Արիստոտելը» և մեկ «Պորփիւրը» (2×10+5), այսինքն՝ հանենք 25, կլինի 1287—25=1262։ Վերծանված թվականը հայկականով է, որին գումարելով 551, ստանում ենք 1813։

---

[47] Նույն տեղում, թ. 356ա։

[48] Նույն տեղում, թ. 84բ։

[49] Նույն տեղում, թ. 356ա։

Սիմեոն Ջուղայեցու Քերականության մեկնության մի ընդօրինակություն, որ գրված է Պետրոս գրչի կողմից, ունի այսպիսի ծածկագիր հիշատակարան.

«Թիւս այս շայիւ սկզբնաւորի,
Հինգ հարիւրեակ սա անուանի,
Եւ նոյն տառըս կրկնապատկի,
Հազար թիւն լըման բերի,
Երկ յօբելեան, առ այս լըծի,
Դասք թագուհեացն ի ներս ածի.
Թիւք Հռիփսիմեանցն որքան մտածի,
Ընդ այսու թուով շարաբարդի։
Յորմէ կոյս թիւն արտաքս ձգի,
Յայնժամ թիւն մատենիս գըտցի...»[60]։

Այստեղ ՇԼԲ-ն (532-ը) ծածկագրված է առանց կողքի երկու թվերի՝ 32-ի։ Վերցված է կլոր 500-ը, որի կրկնապատիկը, ինչպես ասում է և ծածկագրողը, կլինի մեկ հազար։ Սրան պետք է գումարել երկու հոբելյան, այսինքն՝ 100 (2×50=100)։ Թագուհիների թիվը 60 է, իսկ Հռիփսիմյանցը՝ 70։ Բոլորը միասին գումարելով ստանում ենք 1230։ Սրանից պետք է հանել «կոյս թիւը», իսկ «կոյս թիւ» ասելով ծածկագրողը հասկացել է 532 թվանշանի կողքի 32-ը, որը բաց էր թողել առջևում։ 1230-ից եթե հանենք 32, կստանանք 1198, սրան գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1749։ Ուրեմն՝ տվյալ ձեռագիրը գրվել է 1749 թվականին։

Որ մեր կատարած վերծանությունը ճիշտ է՝ այդ երևում է նույն ձեռագրում գրված ծածկագիր մի այլ թվականից, ուր ասված է.

«Վերոյգրեալ թիւ հազար զուտ,
Այլ և հարիւր իննսնեակ և ութ,
Բամեա ի մի տես ժողովոյդ՝
Դոյաքան թուումն է Հայկազնոյդ»[51]։

Ըստ այս հիշատակարանի, ձեռագիրը գրված է, ուրեմն, 1198-ին (1000+100+98=1198), որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1749։

Մատենադարանի № 6540 ձեռագիրը, որը բովանդակում է «Անտառ Նորագոյն մտածմանց... » բնագիրը, ունի այսպիսի մի ծածկագիր թվական.

«Ջամս կապման չար գազանին.
Թիւ ոչխարցն կալ կրկնակին,

---

[60] ՄԱՄ ձեռ. № 2849, թ. 5ա։ Թյուրիմացության արդյունք է Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրաց ցուցակում տվյալ ձեռագրի գրչության տարեթիվը 1881 համարելը (Հ. Ա, էջ 783)։

[51] Նույն տեղում։

Յոբելին մի ընդ անց Հաշւին,
Վեշտասանիւ գում լրակին»[52]։

Չար գազանի կապման թվականն է համարվում 666-ը։ Ոչխարների թիվն ընդունված է ասել մեկ հարյուր։ Հոբելյանը, ինչպես գիտենք՝ 50 է։ Առաջարկված է ավելացնել նաև 16։ Նշված բոլոր թվերը գումարելով, ստանում ենք 932 (666+200+50+16=932), որին ավելացնելով 551, կստանանք 1483։

Ստացած մեր այս թվականը չի համապատասխանում տվյալ գրչագրի ժամանակին, որը 17-րդ դարից ավելի հին լինել չի կարող. արդյո՞ք մենք ենք մեր հաշվումների մեջ սխալվում, թե ձեռագրում ընդօրինակված այս ծածկագիր թվականը ավելի հին գրչագրից է։

Մատենադարանի № 545 ձեռագրում թվականը ծածկագրված է.

«Զթուականս այսպէս արա՛յ.
Անուն նախնուն կրկնապատկեա՛.
Ըստ նոյն չափոյ առ նա դասեա.
Քառ յոբելեան ընդ մու հարիւրեա.
Վերաբերեալ ի նոյն յարեա՛։
Ի ծայրալիր գլխոյ նորա,
Ութն կրկին ի բաց ձգեա՛,
Զբոլորն առեալ քեզ հոտոտեա՛,
Իսկ նա իսկոյն թիւ բաղկանայ»[53]։

Ծածկագրողի ակնարկը նախնիքի մասին վերաբերում է «Հայկ»-ին, որի տառաթվերի գումարը հավասար կլինի՝ Հ(70)+Ա(1)+Յ(300)+Կ(60)=431-ի։ Այդ թիվը պետք է կրկնապատկենք («ըստ նոյն չափոյ առ նա դասեա՛»), կստանանք 862։ Ստացված գումարին պետք է ավելացնենք «քառ յոբելեան». այսինքն՝ 200 (4×50=200) և «մու հարիւրեակ», կլինի՝ 1162։ Այս թվից պիտի դուրս հանենք 16 («Ութն կրկին ի բաց ձգեա՛») կստանանք 1146։ Սրան գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1697։

6. Ակրոստիքոսակապ ծածկագրեր։ Ձեռագրերում քիչ, բայց հանդիպում են «ակրոստիքոսակապ թվականներ», այսինքն՝ այնպիսի գաղտնագրված թվականներ, որոնց գումարը ստեղծվում է չափածո հիշատակարանների տողերի առաջին տառերից։ Բերենք այդպիսի ծածկագիր թվականներից մի նմուշ միայն։

Կյուլեսերյանի՝ Ղալաթիայի ձեռագրերի ցուցակում հրատարակված է այսպիսի մի հիշատակարան, ուր և ծածկագրված է ձեռագրի գրչության թվականը։

«Նայմ թուոյս եղև ծրեալ,
Գրել գրքոյս աւարտ հասեալ.
Որ ենթ տողիցըս կա [յ] դասեալ.
Ներ երկ քառից տողից շարեալ.
Յանձնէղ ի բաց մու մի մերժեա՛.
Մեկին մտօք մէն մի քեցեա՛.
Զերկէ մէնին յանձնդ պահեա՛.
Ըզմայր դասին ընդ մէջ կտրեա՛,
Զմիջակոտորն միաւորեա՛
Եւ ի յանձին քում ծրարեա՛,

---

[52] ՄԱՄ ձեռ. № 6540, թ. 2ա։

[53] ՄԱՄ ձեռ. № 545, թ. 173բ։

Զմիւս հատորն անհետ արա՛,
Թիւ մատենիս անխոտոր գա (յ)[54]։

Կյուլեսերյանը չի փորձել վերծանել։ Թվականն այստեղ ծածկագրված է առաջին երկու տան տողերի առաջին տառերի մեջ («Որ ենթ տողիցըս կայ դասեալ, Ներ երկ քարից տողից շարեալ»)։ Մատնացույց արված տառերի թվական արժեքը գումարելով իրար, ստանում ենք. Ն(400)+Գ(3)+Ո(600)+Ն(400)+Յ(300)+Մ(200)+Զ(6)+Ը(8)=1917։ Սրան պետք է գումարենք 1 («Մու մի մերժեալ»), կստանանք 1918։ Ստացած թվականը պետք է բաժանենք երկուսի՝ «միջակոտոր» անենք և մի մասը հաշվից դուրս հանենք («Զմիւս հատորն անհետ արա՛»), կստանանք 959։ Սրան էլ գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք ծածկագրված թվականը՝ 1500։ Սա բարդացված ակրոստիքոսածածկ թվական է։

Անհրաժեշտ ենք համարում բերել ծածկագրերում թվականների նշանակությամբ գործածված հատուկ և հասարակ անունների բանալիները։

Աղոն—10
Անդամք մարմնի—9
Արեգական շրջան—28
Արիստոտել—10
Բեսեքիստոն—7
Դասք թագուհեաց—60
Երանութիւնք—9
Եկտի—2
Զգայութիւնք—10
Զուարթնոց—6
Թրթակ—1000
Ինդոս—8
Ինդիկտիոն—15
Լծորդ—4
Լողական—500
Լուսնի շրջան—19
Կիւոս—10
Կոյս թիւ—7
Հազիկ—1000
Հարիկ—100
Հոբելեան—50
Հող—7
Հոնսա—3
Հոփսիմեանք—70
Մակ—2
Մասք քերթողաց—8
Մեծ շրջան—532
Մեծ թաւալ—500
Մու—1
Մինաս—5
Նենոս—480
Նոնոս—5
Ոլիմպիադ—4
Սեռ—3
Ս͞ր երրորդութիւն—12
Պենտեկոստէ—50
Պորփիւր—5
Տգոն—10
Փոքր թաւալ—360

7. **Անունների ծածկագրություն:** *Հիշատակարաններում երբեմն պատահում են նաև գրիչների կամ պատվիրատուների անունների ծածկագրումներ, որոնք հիմնված են լինում անվան տառերի թվական գումարի վրա. միաժամանակ տրվում է անվան տառերի թիվը, ինչպես և առաջին ու վերջին տառերը։ Նման ծածկագրության վերծանության ժամանակ անհրաժեշտ է ընտրել այնպիսի մի անուն, որի տառերի թիվը, թվական գումարը և առաջին ու վերջին մատնացույց արած տառերը համապատասխանեն ծածկագրի պահանջին, և ապա վերծանության ճշտությունը ստուգելու համար անվան տառանիշերը գումարել իրար։*

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 371 ձեռագրի ստացողն իր անունը գաղտնագրել է ստորև բերված չափածո վեցտողյակում.

«Ըզյետնեալ ըստացօղ սօրին,
Որ եօթն տառիւ բաղագրին,

---

[54] «Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ», էջ 703։

Գիմն նախկին, նաև լիւնն վերջին,
Շարազուգուեալ անուն կոչին,
Հինգ հազար թուով յորջորջին,
Բարդեալ ընդ վաթսուն երեքին»[55]։

Ծածկագրված է այստեղ «Գաբրիէլ» անունը, որը բաղկացած է իրոք յոթը տառից, սկզբնատառը «Գ»-ն է, վերջինը՝ «լ»-ն և տառերի թվական գումարը հավասար է 5063-ի (Գ(3)+Ա(1)+Բ(2)+Ր(5000)+Ի(20)+Է(7)+Լ(30)= =5063)։

Մաշտոցի անվան մատենադարանի № 4163 ձեռագրի գրիչը 1435 թ. գրած հիշատակարանում իր անունը հայտնում է հետևյալ ութ տող ոտանավորում.

«Ես զանպիտան գծող սորին,
Վեց տառիւ անունս կոչին
Գիմն առաջին և րէն վերջին,
Որ համարով վերաբերին,
Տասըն հազար բոլորովին,
Եւ վեց հարիւր քսան ու վեցին,
Որք միտս ունին նա հաւանին,
Եւ որք չունին՝ նա չիւարին»[56]։

Գրչի անունը «Գրիգոր» է. «Գ»-ն՝ անվան առաջին տառն է, իսկ «ր»-ն՝ վերջին, անունը բաղկացած է վեց տառից, իսկ անվան տառերի թվական գումարը հավասար է 10626-ի (Գ(3)+Ր(5000)+Ի(20)+Գ(3)+Ո(600)+Ր(5000)= =10626)։

Երբեմնի Վարագի ձեռագրական ժողովածուի սեփականություն կազմող մի ձեռագրի հիշատակագիր իր անունը գաղտնագրել է չորս տողի մեջ՝ առանց հայտնելու անվան տառերի թվական գումարը։

«Որ դեռաբուս և անուանի,
Որ Զ տառի անուն կոչի.
Մեն առաջին և յին յետին,
Եւ այլ համարով վերբերին»[57]։

Հիշատակագիրն ինքը հաջորդ տողում հայտնում է, որ իր անունը «Միրզայ» է։ Այդ անունն իրապես բաղկացած է վեց տառից, «Մ»-ն անվան առաջին տառն է «յ»-ն՝ վերջին։

Մայր աթոռի ձեռագրական ժողովածուի № 39 գրչագրում մի հիշատակագիր իր անունը հայտնել է հետևյալ գաղտնագրությամբ.

«...Ողորմեա անիմաստ մեղաւոր և փծուն գրչին,
Որ ինն տառիւ անուն գոչին,
Սէն առաջին և սէն յետին.
Որ համարով վերաբերին,
Տասն և հաւթըն հազար բոլորովին
Եւ չորս հարիւր և վեցին»[58]։

---

[55] «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. Բ, էջ 289։

[56] ՄԱՄ ձեռ. № 4163, թ. 183ա։

[57] Ե. Լալայեան, Ցուցակ ձեռագրաց Վասպուրականի, էջ 245։

[58] «Էջմիածին», 1951 թ., № I—III, էջ 83։

Հիշատակագրի անունը «Ստեփաննոս» է։ Անվան տառերը ութ են, սկզբի և վերջին տառերը «ս» է և տառերի թվական գումարը հավասար է 17406 (Ս(2000)+Տ(4000)+Ե(5)+Փ(8000)+Ա(1)+Ն(400)+Ն(400)+Ո(600)+Ս(2000)=17406)։

Մաշտոցի անվան մատենադարանի № 2190 ձեռագիրն ընդօրինակող Աստվածատուր գրիչն իր ուսուցչի անունը հայտնում է հետևյալ չափածո ութ տողերի մեջ.

«Այլ և ստացող այս սուղ գրրի,
Որ վեց տառիւք անուն կոչի,
Նուն առաջին և սէն է վերջին,
Որ համարով վերաբերին,
Յինն հազար թվով ի լի,
Այլ և նու ժե բեն աւելի.
Այսքան թիւս որ շարաբարթի՝
Լինի անուն վարդապետի»[59]։

Ծածկագրված է «Ներսէս» անունը, որը բաղկացած է վեց տառից, «Ն»-ն առջևում է, «ս»-ն վերջում, իսկ անվան թվական գումարը հավասար է 9412 (Ն(400)+Ե(5)+Ր(5000)+Ս(2000)+Է(7)+Ս(2000)=9412)։

Նույն հավաքածուի № 4163 ձեռագրում «Գրիգոր» անունը ծածկագրվել է հետևյալ ձևով.

«Ծաղիկ մի տեսի նա վարդագույն էր,
Բայց տերևըն վեց՝ որ գույնզգույն էր.
Տեսլեամբ գեղեցիկ որպէս նունուֆէր,
Հոտով քաղցր և սուրբ, ռոգիրգ նման էր։
Արդ՝ հաշիւն ասեմ որ և քաջ գիտես,
Խնդրողաց ըզսա ըստուգիւ յայտնես,
Վասն այն որոնեցի՝ Ժ-ն հազար ես,
Առեալ ՈՆ, յինին, զայիւն ինձ ասես»[60]։

«Ծաղիկ մի տեսի» ասելով գրիչը նկատի ունի ծածկագրվող մարդու երիտասարդ լինելը, «բայց տերևըն վեց», այսինքն՝ անվան տառերը վեց են, «որ գույնզգույն էր»՝ այսինքն անվան տառերը իրար նման չեն, «ռոգիրգ նման էր»՝ առաջին բառը «Գրիգոր» անվան շրջված ձևն է որպես ծածկագրություն։ Ինչ վերաբերում է երկրորդ քառյակին, ապա այնտեղ հայտնված է ծածկագրված անվան թվական գումարը՝ «տասը հազար»՝ վրան ավելացրած «ոն, յինին, զայիւն», այսինքն 10.000+600+20+6=10.626, որը և համապատասխանում է Գրիգոր անվան թվագումարին՝ Գ(3)+Ր(5000)+Ի(20)+Գ(3)+Ո(600)+Ր(5000)=10.626։

---

[59] ՄԱՄ ձեռ. 2190, թ. 13ա։

[60] Անդ։

IX. ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Կետադրությունը, տառաձևերի նման, ժամանակի ընթացքում շատ է փոփոխվել։ Փոփոխությունն այնքան է զգալի, որ կարելի է ասել, թե յուրաքանչյուր դարաշրջան ունեցել է իր կետադրությունը՝ իր ուրույն կարգով և գործածության կանոններով։ Համենայն դեպս, հին հայկական կետադրությունը նմանության ավելի քիչ եզրեր ունի ներկայիս գործածական կետադրության հետ, քան թե հին հայկական տառերը՝ ներկայիս տառերի։

Կետադրության գործածության սկզբունքը և նրա տեսակները հաշվի առնելով, կարելի է այն խմբավորել ժամանակագրական երեք շրջանների մեջ՝ 1) հնագույն շրջան (մինչև 10-րդ դարը), միջին շրջան (11-րդ դարից մինչև 18-րդ դարը) և նոր շրջան (18-րդ դարից հետո)։

Հին շրջանի կետադրության մասին մեր ունեցած տեղեկությունը շատ կցկտուր է։

Որոշ վկայություններ գտնում ենք քերականների՝ Ստեփանոս Սյունեցու, Համամ Արևելցու, Հովհաննես Երզնկացու և մյուսների մոտ։ Մեզ ծանոթ նշաններից հայ քերականները հիշել են երեքը՝ ստորակետ, միջակետ և վերջակետ, իսկ առոգանության նշաններից տասը՝ շեշտը, բութը, պարույկը, երկարը, սուղը, թավը, սոսկը, ապաթարցը, ենթամնան և ստորատը։

Հայ քերականներն ընդհանրապես մեծ նշանակություն են տալիս կետադրությանը՝ համարելով այն գրավոր խոսքի իմաստավորման գլխավոր որոշիչը։ Դավիթ Քերականի «Քերականութեան մեկնութեան» մեջ կարդում ենք. «Իսկ ի տրոհութենէն զպարունակ միտսն տեսանեմք, այսինքն, յորոշելոյ զբանսն և զատանելոյ։ Իսկ ոչ ուղիղ տրոհելն ըստ չար խոհակերի զանդամսն ոչ ուղիղ յաւշել, որ է զմիտսն ի մտաց և զբանն ի բանէ ոչ զատուցանել. և պարունակեալն ի նմա անյայտացաւ միտք, զի ի լսողէն զանխլացոյց և ինքն անարուեստ ցուցաւ»[1]։

Չնայած հայ քերականների՝ կետադրության մասին ունեցած այս պարզ ցուցումին և տարբեր կետերի մասին եղած հիշատակություններին, մինչև 10-րդ դարը մեզ հասած վիմագիր արձանագրությունների և ձեռագրերի մեջ գործ է ածվել հիմնականում մի նշան՝ միջակետը, որն ունեցել է երկարող քառանկյունի ձև և դրվել է ոչ թե տողի վրա, այլ քիչ վերև, ներկայիս վերջակետի վերին կետի տեղը։ Որոշ ձեռագրերում այն ունի երկարող բարակ պոչիկ։ Բոլոր հին բնագրերում միջակետը փոխարինել է նաև ստորակետին և վերջակետին։ Բերենք հնում գործածվող մի նախադասություն.

---

[1] **Н. Адонц,** Дионисий Фракийский и армянские толкователи, стр. 88.

ՈՎԻԾՈՎՍԵՐՄԱՆԷ· ԶՁԿՈՒՆՍԿԵՐԱԿՐԷ·

վերծանվում է. «Ով ի ծով սերմանէ՝ զձկունս կերակրէ»։

Տվյալ նախադասության մեջ առաջին միջակետը գրվում է բութի տեղ, իսկ երկրորդը՝ վերջակետի։

Տասներորդ դարից սկսում են երևալ տրոհության մյուս կետերը ևս՝ վերջակետը, ստորակետը, իսկ 11—12-րդ դարերում արդեն նրանք լայն գործածության մեջ են դրվում[2]*։*

Կետադրության և առոգանության կարգավորումը կապված է Գևորգ Սկևռացու անվան հետ (13-րդ դարի կեսերը)։ Գ. Ջահուկյանը, որ զբաղվել է այդ հարցի ուսումնասիրությամբ, հետևյալն է գրում. «Եթե Արիստակեսը կարևոր դեր կատարեց ուղղագրության կայունացման մեջ, ապա կետադրության և տողադարձի կայունացման պատիվը պատկանում է Գևորգ Սկևռացուն»[3]*։*

Հին հայկական գրությունների մեջ երբեմն գործ է ածվել մեջբերումների նշանը, որ ունենում է հունական սիգմայի ձև և դրվում մեջբերված հատվածի բոլոր տողերի առջևում.

Եւ կրկնեալ անդրէն ասեն պատգամաւորք
σ թշնամւոյն, թէ՝ Արա զայդ և ապրեսցես դու
(: և տուն քո և ամենայն մնացորդք երկրի քո.
σ ապա թէ ոչ հրամայեցաւ յինէն ունել ածել
Ͻ զքեզ առ իս ակամայ կամաւք (Կաղանկատվացի)։

Ըստ որում, չի նշվում, թե մեջբերման նշանն ունեցող տողի որ բառից է սկսում ուրիշի խոսքը և որ տողի, որ բառով է վերջանում։ Այդ պետք է հասկանալ ըստ իմաստի։ Վերևում բերված նախադասության մեջ, օրինակ, մեջբերումն սկսում է «Արա» բառից։

Դրությունը հիմնովին փոխվում է 11-րդ դարից, երբ գրչագրերում սկսում են գործածել մեզ ծանոթ բոլոր կետերը և առոգանության նշանները։ Այժմ խնդիր է առաջանում ոչ միայն ճիշտ սահմանագծել խոսքի առանձին մասեր, այլև հանգով առոգանել դրանք։ Սահմանվում է կետերի և առոգանության նշանների հաստատուն մի կարգ, որը շուտով քաղաքացիություն է ստանում։ 12—14-րդ դարերի հայ գրիչները ոչ միայն իրենց ընթացիկ աշխատությունների մեջ առաջնորդվում են կետադրության այս նոր սկզբունքով, այլև սկսում են ուղղել իրենց ընդօրինակած հին ձեռագրերի կետադրությունը։

Մեկ-մեկ պատահում է, որ հին ձեռագրերի կետադրությունն ուղղող գրիչները, քննասեր ընթերցողի հանդիմանությանը չարժանանալու համար, անհրաժեշտ են համարում կատարած փոփոխությունների մասին հիշել իրենց հիշատակարաններում և ընթերցողի ներողամտությունը խնդրել՝ «անմեղադիր լերուք»։

Հակոբ գրիչը, 1311 թվականին ընդօրինակելով Հովհան Մանդակունուն վերագրվող ճառերը պարունակող մի հին ձեռագիր, իր հիշատակարանում գանգատվում է, որ նախագաղափար ձեռագրի բնագիրը «խառնափնթոր շփոթեալ էր», որովհետև չուներ «աւարտակէտ կամ ստորակէտ կամ միջակէտ», չէին գործածված առոգանության նշանները, ուստի անհարմար համարելով, շտկում է նախագաղափար օրինակի ընդօրինակությունը և վերացնում «թերությունները»[4]։

---

[2] *Համենայն դեպս, 981 թվականի նշանավոր Թղթի ձեռագիրն ունի բոլոր կետադրական նշանները։*

[3] *Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 240։*

Հակոբ Կրակցի գրիչը խնդրում է հիշել իրեն, որովհետև ինքը մեծ ջանք է թափել ուղղելու Փիլոն Եբրայեցու աշխատության հայերեն բնագրի կետերը, ստորակետերը, շեշտերը, բութերը և առոգանության նշանները[5]։

Երբեմն գրիչները, իրենց ընդօրինակած նախագաղափար ձեռագիրն արժեքավորելու համար, նշում են նրա կետադրության անթերի լինելը։ Թորոս գրիչն Ամիդ քաղաքում 1373 թ. ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում գրում է. «...Այլ գրեցաւ սայ յազնիւ աւրինակէ և յամէնընտիր նաև յարուեստս բանի ոչ աննշան գրէ, այլ լի և կատարեալ արուեստիւ ի բանս, ի բառս, ի լծորդըս, ի բացատս, և ի տրոհմունս առոգանութեանց, ի ստուգութիւն կիտից և ոլորակաց»[6]։

Վենետիկի մատենադարանի սեփականությունը հանդիսացող ձեռագրի գրիչը նշում է, որ իր ձեռագրերի նախագաղափարի հեղինակն է հանդիսացել «Քաջ հռետոր» Գրիգոր Տաթևացին, որը «...ձեռամբ բազկի իւրոյ գրեալ ունէր զօրինակ սուրբ աւետարանիս... կէտօք, և ստորակէտօք, վանկօք և շեշտօք և պարոյկաւ և դարձագրօք»[7]։

Այսպիսով, գրիչները կետադրության հին կարգը փոխում են իրենց ժամանակ քաղաքացիություն ունեցող նոր կարգով՝ «արդիականացնում» են այն։

Մեզ ծանոթ երեք կետերը՝ ստորակետը, միջակետը և վերջակետը գործ են ածվում ճիշտ այն նշանակությամբ, ինչ ներկայումս[8]։

Կետերի նշանակության և նրանց գործածման եղանակի վրա կանգ են առել 12—17-րդ դարերի բոլոր հայ քերականները։ Դավիթ Ջեյթունցին իր «Մեկնութիւն քերականութեան» աշխատության մեջ, խոսելով երեք կետերի մասին, հետևյալ պատկերավոր օրինակն է բերում. «Օրինակ, վերցնենք լեռը, ուր բարձրանալ է կամենում մեկը, երբ ճանապարհորդը հասնում է լեռան ստորոտը, մի անգամ փոքր ինչ հանգստանում է։ Շարունակելով իր ճանապարհը դեպի վեր, նա լեռան կիսում կրկին անգամ հանգստանում է։ Այնուհետև շարունակում և բարձրանում է լեռան գագաթը»։ Դավիթ Ջեյթունցին առաջին հանգիստը համեմատում է նախադասության մեջ գործածվող ստորակետի հետ, զառիվեր լեռը բարձրանալիս ճանապարհի կեսում կանգ առնելը՝ միջակետի, և լեռան գագաթը հասնելը, որը նրա ճանապարհորդության նպատակակետն է՝ վերջակետի, կամ, ինչպես ինքն է ասում՝ «կէտ աւարտեալ»[9]-ի։

Հայ քերականները, հիմնականում, ուղեցույց են ընդունում կետերի մասին Դիոնիսիոս Թրակացու տված հետևյալ ցուցումը. «Կէտ է (խոսքը վերջակետի մասին է—Ա. Ա.) տրամախոհութեան յանգեցելոյ նշան», այսինքն՝ մտքի ավարտման նշան, «և միջակ՝ նշան յոգի սակս ընդունելոյ», այսինքն՝ նշան հանգըստի՝ որպես օժանդակ կետ և «...ստորակէտ է տրամախոհութեան չև ևս յանգեցելոյ. այլ ևս կարաւտացելոյ նշան»[10], այսինքն՝ մի նշան, որի գործածությամբ միտքը դեռ չի ավարտվում և կարիք ունի ավարտվելու։

---

[4] ՄԱՄ ձեռ. № 5677, թ. 288ա։

[5] ՄԱՄ ձեռ. № 2057, թ. 180բ։

[6] Բ. Սարգիսյան, Ցուցակ ձեռագրաց Վենետիկի, հ. I, էջ 618։

[7] «Ցուցակ ձեռագրաց Վենետիկի», հ. Ա, էջ 734։

[8] Հայկական կետադրության մասին ուշագրավ է Ա. Մ. Մխիթարյանի «Առոգանություն» վերնագրով հոդվածը, որը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի 1958 թ. № 9-ի մեջ (էջ 54—61)։

[9] ՄԱՄ ձեռ. № 2330, թ. 110բ։

Այդ նույն միտքը Գևորգ Սկևռացին իր գրչության խրատի մեջ ձևակերպել է ավելի հակիրճ «Արդ՝ ստորակէտն, որ է ըստ կարգի առաջին, որպէս նախերգան է, և միջակն՝ պատճառ, և աւարտեալն՝ վճիռ...»[11]։

Տասնհինգերորդ դարի գրիչներից մեկը, խոսելով ընդօրինակած ձեռագրի մեջ իր կատարած կետադրական փոփոխությունների մասին, հիշում է վերև բերված երեք կետերը փոքր-ինչ այլ անուններով՝ ստորակետը—«կիսակէտ», միջակետը—«միջնակէտ» և վերջակետը «յետին կէտ»[12]։

Վաղ շրջանի պատառիկներում երբեմն հանդիպում են պարբերության ավարտը խորհրդանշող որոշ երկրաչափական նշաններ, իսկ ուշ դարերում, պարբերությունների վերջում սովորական երկու կետից բացի, գործ են ածվում հետևյալ ձևի նշաններ ևս.

:— := :. :: :~~:~~~ :~~~~

Տասնմեկերորդ դարից սկսած միջակետը կորցնում է նախկին իր քառակուսի ձևը, վերից իջնում, նստում է տողի վրա։ Ստորակետը աննշան փոփոխությամբ պահել է իր նախկին ձևը մինչև այսօր։

Այս երեք կետերի գործածության սկզբունքը պարզ է, և ավելորդ ենք համարում օրինակներ բերել։

Միջին դարերում հայկական տեքստերը, հունականի նման, շեշտադրվել են երկար, կարճ կամ բութ նշաններով՝ ընթերցանությունը ճիշտ հանգով կատարելու համար։ Հնում սովորություն է եղել ոչ միայն խոսքը կետադրության բաժանման ընդհատումներով կարդալ, այլ նաև՝ հանգերով, երաժշտական յուրահատուկ արտասանությամբ։ 15—16-րդ դարերում այդ սովորությունն սկսում է կամաց-կամաց մոռացվել, և բառերը կորցնում են առոգանության նշանները։

Կանգ առնենք առոգանության այդ նշաններից մի քանիսի վրա։

Շեշտը (´) համապատասխանում է acutus-ին և դրվում է բառավերջի երեք վանկերից մեկն ու մեկի վրա՝ ավելի սուր և բարակ հնչելու համար։ «Զի թէ ուժով վերացուցանել կամիս զձայնն, նա կշեշտն ի դէպ է դնել».—գրում է Վարդան Արևելցին Հեթում թագավորի համար գրած իր քերականության մեջ[13]։ Շեշտը, սովորաբար, դրվում է՝ ա, ե, ի, ո ձայնավոր տառերի վրա, ունի հետևյալ երեք անունները՝ «շեշտոլոր» (oxytonon), երբ դրվում է վերջին վանկի վրա, «յարաշեշտ» (paroxytonon), երբ դրվում է նախավերջին վանկի վրա և «նախաշեշտոլոր» (proparoxytonon), երբ դրվում է վերջից երրորդ վանդակի վրա[14]։

Բութը (`) համապատասխանում է gravis-ին և դրվում է բառի վրա վայրընթաց հնչման դեպքում. «Բութն՝ վարիա, որ է ծանր, որպէս ոք որ ծանր բեռն յուսն ունի, կորացեալ գնայ»,—կարդում ենք Թրակացու քերականության մեկ-

---

[10] Տե՛ս Н. Адонц, Дионисий Фракийский, էջ 3։

[11] Լ. Գ. Խաչերյան, Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 306։

[12] ՄԱՄ ձեռ. № 6484, թ. 530ա։

[13] ՄԱՄ ձեռ. № 2871, թ. 10բ։

[14] Հայերենի շեշտի կայուն տեղի պատճառով այս տարատեսակները գործածություն չեն գտել։

նության մեջ։ Հովհաննես Երզնկացին բութի գործածության մասին գրում է «Որպէս շեշտն ի վեր հանելով սրէ (զձայնն), նոյնպէս և բութն ի խոնարհ իջուցանելով՝ հարթէ...»[15]։

Գևորգ Սկևռացին, ավելի մանրամասնելով բութի գործածության դեպքերը, գրում է. «...բութք... այսինքն՝ կարճ կամ ծանր, զի վասն նեղելոյ շրթանցն ի փողելն, ձայնքն սոցա նեղք և տկարք լինին, վասն որոյ և բութ ասին, այսինքըն՝ գուլ, ընդդէմ շեշտին. որ է սուր»[16]։

Բութը դրվում է ը-*ի,* ռ-*ի և* ւ-*ի վրա։*

Պարույկը (˜) համապատասխանում է հունական circumflexus-*ին և դրվում է վանկը երկարացնելու համար։ Նա կոչվում է նաև շուրջառ։*

Պարույկը համարվում է շեշտի և բութի խառնուրդը։ «...Ապա ի շեշտէն և բթէն պարոյկն գոյանայ...—գրում է Վարդան Արևելցին,—որպէս ի սեաւ բրդէ և ի սպիտակէ գոյանայ գոշն»[17]։ Պարույկը դրվում է ե-*ի,* ով-*ի և երկբարբառների՝* աւ-*ի,* եւ-*ի,* ու-*ի,* այ-*ի և* ոյ-*ի վրա։ Պարույկի այս նշանը ուշ միջնադարում գործ է ածվում հարցականի համար, սակայն հնում նա բոլորովին այլ նպատակի է ծառայել և ոչ մի կապ չի ունեցել հարցականի հետ։*

Պարույկը դրվում է բառի վերջին երկու վանկի վրա միայն. վերջին վանկի վրա դրվելիս նա կոչվում է «պարոյկ», իսկ նախավերջին վանկի վրա դրվելիս՝ «յարապարոյկ»։

Թավը (Ղ.)—ուշ շրջանում ունենում է նաև ⌊_ և ՚. ձևերը։ Այն տարբեր ժամանակներում տարբեր նշանակությամբ է գործածվել։ Հնագույն շրջանում նա դրվել է ձայնավորի վրա՝ նրա հնչեղությունն ավելի թանձրացնելու, հաստացնելու նպատակով. «Թաւն [դրուի] ի վերայ ձայնաւոր գրոց թաւացելոյ», կարդում ենք Թրակացու քերականության մեկնության մեջ[18]։

12—13-րդ դարերում «թաւ»-ի դերը փոխվում է. այն դրվում է ոչ թե ձայնավորի, այլ բաղաձայն տառերի վրա՝ նրանց հնչեղությունը դարձյալ հաստացնելու, թավացնելու նպատակով։ Թ-*ի վրա նա դրվում է* տ *չկարդալու համար,* փ-*ի վրա՝* պ *չկարդալու համար,* Ք-*ի վրա՝* կ *չկարդալու համար և այլն (օրինակները տե՛ս սոսկ-ի բաժնում)։ Ավելի ուշ դարերում թավը դրվում է* աւ-*ի վրա իր իսկական նշանակությամբ՝* աւ *և ոչ թե* օ *կարդալու համար. «Անիրաւն իբրև արժանի արդարացաւ, և իրաւն իբրև ախոյեան ստեցաւ» (Կլիմ.). «Ախտ ամբարտաւանութեան միշտ գանձն արդար համարի» (Լամբրոնացի). «Առաւելս ինչ յաւելուլ և վաստակել» (Փարպեցի). «Ոմն մարդ՝ մի և նոյն ելով, է զի սպիտակ և է զի սեաւ լինի» (Արիստոտել). «Հաւ ձայնաւոր» (Վանական). «Իբրև զարծուի յերամ կաքաւուց խոյանալ» (Խորենացի) և այլն։*

Թավը դրվում է իւ-*ի վրա՝* իվ *և ոչ* յու *կարդալու համար. «Իւ իւիք առաւել՝ քան զայն» (Եզնիկ). «Որք ոչ զպատիւն յինքեանս ձգէին, այլ պատիւն զհետ նոցա ընթացաւ» (Խորենացի). «Թիւ համարոյ ես առնէր (Եղիշե). «Ի յի-*

---

[15] *ՄԱՄ Ձեռ. № 2326, թ. 28բ։*

[16] Լ. Խաչերյան, նշվ. աշխ., էջ 300։

[17] *ՄԱՄ Ձեռ. № 2371, թ. 12ա։*

[18] *Տե՛ս Ն. Адонц, նշվ. աշխ., էջ 11։*

շատակաց դիւանագիր մատենիցն յունաց»։ «Բանիւ և գործով» (Ագաթանգեղոս) և այլն։

Սուղը (°) կոչվում է նաև կարճ։ Գործ է ածվել 12-րդ դարից, թեպետև հիշված է Թրակացու քերականության մեջ։ Դրվում է մեծ մասամբ կարճ ձայնավորով վանկերի վրա՝ ե, ո, ւ. և ա-ի, երբ նրանք կարճ են։ Սուղի նպատակը վանկը կարճացնելն է։ Օրինակ՝ «առ որ ասեմք, ո̊րպէս որ ասես, թէպէտ եղանէ, որպէս յոյնք, ուրանաւր, ապա թէ ոչ, յորժամ զայդ»[19] և այլն։

Հետագայում սուղը դրվում է **ու**-ի վրա՝ այն վ հնչելու նկատառումով. «Զտասն թիւն պատուեն թուական արուեստաւորք» (Տօնական). «Աշխարհս ի յաւաղուածոց և ի պէսպէս բնութեանց և ի խառնու̊ածոց հաստատեալ է» (Վեցօրեակ). «Համարիմ զպատուաւղս կոցն՝ թշուառագոյնս քան զպարտու̊եալսն» (Փիլոն). «Ոչ ըստ թուոյ յառաջ քան ածէ զնուազն» (Նյուսացի) և այլն։

17—18-րդ դարերում սուղ են դնում բառավերջի **ու**-ի վրա՝ **ով** կարդալու համար. օրինակ՝ մերու (պիտի վերծանել մերով), ձերու (ձերով), լալու (լալով) և այլն։ Սուղը դրվում է նաև տողադարձի ժամանակ, երբ վանկաբաժանման ժամանակ հնչվող, բայց չգրվող ը-ն անհրաժեշտ է լինում գրել։ Օրինակ՝ բընու-թիւն, գը-րու-թիւն, նը-մա-նու-թիւն, թօ-թա-փե-լըն, են-թա-մը-նայ և այլն։

Ենթամնա (‿)—հայկական ձեռագրերում երևան է գալիս 12-րդ դարից և շարունակվում հետագա երկու-երեք դարերում և ապա մոռացության տրվում։ Այն դրվում է բարդ բառերի տակից, երկու բառերը միացնելու տեղում, այդ պատճառով կոչվում է նաև **ներսադրական**. «Է և ենթամնայդ նշան ներքոյ եդեալ գրոյն,—կարդում ենք քերականություններից մեկի մեջ,—և պիտոյ է յայն տեղիսն, ուր յերկու աւարտեցելոց բառից կապի մի բառ»[20]։

Օրինակներ շատ կարելի է բերել. օրէնուսոյց, տիրասպան, պատմագիր, կատակերգակ, երկանուն, ձեռնարկել, ենթամնայ, աւրագիտ, կառավարել, Ւրաշափք, քահանայապետ, մակդիր, համանուն, տարբերութիւն, Տէրկուէ և այլն։

Ավելի ուշ ենթամնան սկսում են գործածել նաև տողադարձի համար և դրվում է տողադարձվող բառի վերջացող վանկի տակից՝ ժա-մա-նակ, գա-ւառա-պետ, գա-ղա-փար և այլն։ Ըստ որում տողադարձի ենթամնայի նշանը ավելի փոքր է գրվում։

Սոսկը (‘) կոչվում է նաև **ողորկ** կամ **լեարկ**։ Հիշված է Թրակացու քերականության և նրա հայ մեկնիչների մոտ։ Սկսում է գործածվել 12-րդ դարից։ Դրվում է տառի վրա՝ նուրբ, բարակ հնչելու համար, հակառակ թավի։ Հնում այդ նշանը դրվել է ձայնավորների վրա, իսկ 12—13-րդ դարերից՝ բաղաձայնի։ Գևորգ Սկևռացին սոսկը հակադրելով թավին գրում է. «Եւ հազագն առոգանութիւն սեռ գոլով, բաժանի ի թաւ և ի սոսկ։ Եւ պիտոյ են սոքա ոչ ի ձայնաւորսն։ այդ յանձայնսն։ Եւ զի ի բաղաձայնս, որ են անձայնք, են որ խոշորք և թաւք են, որպէս՝ թո, փիւր, քէ, և են, որ լեարկ են, որպէս՝ պ, կ, տ»[21]։ Եվ նա զգուշացնում է գրչության արվեստի մարդկանց, որ չլինի թե մեկը չփոթի և «արասցէ զքարն կար»։

---

[19] ՄՄՄ ձեռ. № 2371, թ. 146ա—բ։

[20] ՄՄՄ ձեռ. № 2871, թ. 146ա—բ։

Ապաթարցը (՚) կոչվել է նաև Ներսաճատ: Ըստ Թրակացու քերականության հայ մեկնիչների այդ նշանը հնում գործ է ածվել այն դեպքում, երբ բառի բարդման ժամանակ երկու միահնչուն կամ մոտավոր հնչուն տառեր կողք-կողքի են գալիս և բառի բարեհնչման համար նրանցից մեկը սղվում է, իսկ նրա տեղը դրվում ապաթարց։ Օրինակ՝ երկ՚երիւր (կրճատված է հ-ն), վերա՝ նստել (կրճատված է յ), վեր՚բերող (կրճատված է ա-ն) և այլն։

Մեծ մասամբ կրճատվում է բարդ բառերի բաղադրիչ մասերը միացնող «ա» հոդակապը։ «Ապաթարց» բառն այդ իմաստով էլ ստուգաբանվում է՝ «այր թարց» (առանց «ա»-ի)։ Ուշ շրջանում ապաթարցը գործ էր ածվում նաև բառանջատման նպատակով։ Այսպես, ի շաղկապից առաջ ապաթարց է դրվում նախորդ բառից անջատելու համար, ՚ի նոսա, ՚ի նմա, ՚ի մէնջ և այլն։ Օժանդակ է-ից առաջ ապաթարց է դրվում նախորդ բառից դարձյալ բաժանելու համար՝ երկար է (երկար է, և ոչ թե երկարէ իմաստով), պատճառ՚է (պատճառ է, և ոչ թե պատճառէ իմաստով), և ՚է (և ոչ եւէ) և այլն։

Հնում, ինչպես ասել ենք, օ-ի փոխարեն դրվել է աւ։ Սակայն կան բառեր, որոնց մեջ աւ-ն ունի հենց իր բուն նշանակությունը՝ ավ։ Այս երկուսը իրարից տարբերելու համար, եթե առաջինի վրա թավ է գրվել, ապա երկրորդի համար գործ է ածվել պառկեցրած ութի նման մի նշան՝ ∞, որն իր ձևը վերցրել է, հավանական է, հունական օմեգայից՝ ω։ Օրինակ՝ աւր, աւգուտ, աւդ. համառաւտ, Պաւղոս, մաւտ, խաւսող, առաւաւտ, աւրինակ և այլն։ Սակայն այս նշանը երկար կյանք չի ունենում. Նրա փոխարեն մտնում է կլոր օ-ն և սրան դուրս մղում ասպարեզից։

13—14-րդ դարերում, երբ նախկին աւ-ին համատարած փոխարինելու է գալիս «օ»-ն, որոշ գրիչներ սկսում են շփոթել և «օ» նշանակել ոչ միայն իր իսկական նպատակով, այլև «աւ»-ի փոխարեն ևս։ Մաշտոցի անվան մատենադարանի № 4824 ձեռագրի գրիչը 1588 թ. գրած հիշատակարանում օրհնում է Նուշիկին այն բանի համար, որ նա «...մէկ լօ (լաւ) ճաշ եբեր» (թ. 103 բ)։ Երևում է, որ միջին դարերում կլոր օ-ի համար աւ-ի վրա դրված նշանը շփոթվել է սուղի նշանի հետ, և այդ առթիվ Գևորգ Սկևռացին զգուշացնում է. «Արդ, սխալ են, որք զնշանս զայս ի յավի նշանակութեան տեղի դնեն ի վերայ, ուր այբ և հիւն լինի աւ, որպէս յաւրհնելդ կամ ի զգաւնդ»[21ա]։

Արիստակես գրիչը հայ գրչության մեջ մտցնում է երեք նշան ևս։ Այդ նշանների և նրանց գործածության մասին «Վերծանութիւն» աշխատության մեջ գրում է հետևյալը. «Գիտասցէ և զայս եղբայրութիւնդ քո, զի երիս նշանախեցիւ զսա պարապնդեալ եմ։ Մի նշանն որպէս ծակուկ՝ է սրածայր ꝺ, յայն տեղիսն դրոշմ ած է, որ ցուցանէ թէ՝ չիք այլ գիր յայս տեղիս պիտոյ այլ ինչ գրոյ։ Եւ միւս նշանն որպէս տարկիկ է յայն տեղիսն դրոշմած է, որ ցուցանէ, թէ յայս տեղիս ա՛յս է ստուգիւ գիրն՝ թէ չի հանդիպի և թէ այլ գիր։ Եւ միւս նշանն որպէս փշիկ է (՛) և է ի վերայ այնց գրից, որոց գլուխն որպէս ղ̌ատի է, և չէ ղատ, և ոչ՝ լիւն, որ ի համարողականսն զերեսներորդ թիւն ունի, այդ ղ̌իւն է ւ.ա, որ ի ղ̌ատինացի անունս, և յէղ̌ի, էղ̌իս, և ի ղ̌ամա, և յաղէղ̌ուիայս, և ի Նաթանայէղս, և յիէղ̌ս, և որ այլ սոցին նմանս ուղղակի և նուրբ բերէ, զի որք որպէս գղատ նա խաւսեցնեն, այն աւեր է և շաղփաղփ։ Եւ որք որպէս գլիւն խաւսեցնեն՝ այն թանձր է և անյարմար։ Իսկ այս ղիւն է սրուկ և նուրբ, քան գլիւնն, որպէս զաւրինակդ ցուցի, և ոչ ղատին պէս, որ բնաւին անկեալ է և անհեթեթ»[22],

---

[21] ՄԱՄ ձեռ. № 2371, թ. 147ա (հմմ. Լ. Խաչերյան, նշվ. աշխ., էջ 303)։

[21ա] Լ. Խաչերյան. նշվ. աշխ., էջ 302։

Արիստակես գրչի վերջին փշիկ նշանը կոչվել է վանկ (v)։ Ղ-ի վրա դրրվող այդ նշանը, որի նպատակը հնչունական նրբություն տալն է, մի քանի դար շարունակ քաղաքացիություն է ունեցել հայ գրչության արվեստի մեջ։ Նման բառերից կարելի է մատնացույց անել՝ այղ̌, փիղ̌խոփայ, ծուղ̌անալ։

Փշիկ կամ վանկ նշանը 12—13-րդ դարերում գործ է ածվել նաև շեշտադրության նպատակով։ Օրինակ՝ «ո̌չ ոք ել յերկինս», «յա̌յն տեղիսն դրոշմու ածէ», «պարտ̌ է երթալ» և այլն։

Գծանշաններն անհամեմատ շատ են տաղարաններում, գանձարաններում և շարականոցներում, մանավանդ՝ խազգրքերում։ Նրանցից յուրաքանչյուրն ունեցել է իր անունը։ Ժամանակին առանձին հեղինակներ կազմել են այդ գծանշանների ցանկերը, որոնցից մի նմուշ բերում ենք ստորև։



Յարաշեշտ
Քաշ
Ստորադիր
Վանկ
Կառ
Չրեհիկ
Խաղ
Դող



Հարուկ
Ձայնադարձ
Հանգոյց
Խունջ
Քմազարդ
Առանձնատրուպ
Քմատրուպ
Ծանրատրուպ



Խածբեկ
Խածլէ
Կորճա
Բեր
Բազմեղանակ
Ողոմոմանակ

---

[22] Նույն տեղում, էջ 239—240։ Վկայակոչում ենք վերադրական ու տրոհման նշումներով։

Ընդամենը 23 խազ է, բայց նրանցից կարևորներն են համարվում հետևյալ յոթը՝



իսկ մյուսները սրանց խառնուրդներն են համարվում՝ նմանեցնելով անուշահոտ համեմունքների հետ՝ դրված համադամ կերակուրների վրա[23]*։*

Պետք է նկատի ունենալ, որ տվյալ նշանները գործ են ածվել իբրև նոտաներ և դրվել են հոգևոր և աշխարհիկ բովանդակություն ունեցող բնագրերի վրա՝ երգելու նպատակով։ Մինչև վերջին ժամանակներս քաղաքացիություն ուներ այն կարծիքը, որ նոտաների համար գործածված այդ նշանագրերը հայ մատենագրության մեջ սկսել են կիրառվել 12-րդ դարից, բայց այժմ Մաշտոցի անվան մատենադարանում հայտնաբերվել է 9-րդ դարի գրչություն ունեցող մի պատառիկ (№ 6200 ձեռագրում), որի մեջ արդեն գործ են ածված այդ նշանագրերը։ Այդ հիմք է տալիս ասելու, որ նոտաների համար նախատեսվող նշանագրերի գործածությունը Հայաստանում եղել է ավելի վաղ, քան ցայժմ կարծվում էր[24]*։ Դժբախտաբար, այդ խազերը դեռ չեն վերծանված։*

Մյուս նշաններից անհրաժեշտ է նշել երկուսը՝ տողադարձի և սխալագրության։ Տողադարձի նշանը սկսվել է կիրառվել 11-րդ դարից։ Նա, ինչպես երևում է մի հիշատակարանից, կոչվել է «դարձագիր»։ Ինչ վերաբերում է սխալագրին, *ապա նրան կարելի է հանդիպել 11-րդ դարից հետո գրված բոլոր ձեռագրերում։*

Գրիչները սովորություն չունեին սխալ գրված բառի վրա գիծ քաշել, ջնջել, կեղտոտել, այլ նրա մոտ դնում էին պայմանական մի նշան և լուսանցքում, այդ պայմանական նշանը կրկնելով, գրում էին ճիշտը, ինչպես այժմյան սրբագրության ժամանակ ենք անում։ Սխալագրության այդ նշանները շատ են, նրանցից որպես նմուշ մատնացույց կանենք միայն չորսը.



Անհրաժեշտ չենք համարում խոսել ավելի նոր շրջանի կետադրության մասին, որովհետև գրչագրերում և հնատիպ գրականության մեջ հեղինակներից ամեն մեկը առաջնորդվում է իր նախասիրած կետադրությամբ։ Իրավացի է հանդուցյալ ակադ. Ստ. Մալխասյանցի հետևյալ նկատողությունը. «Հին ձեռագրերում կետադրությունը շատ անկանոն է։ Նոցանից եղած տպագրությունների մեջ հրատարակողները կետադրությունն արել են ամեն մեկն յուր հասկացողությամբ, հետևելով որևէ եվրոպական լեզվի»[25]*։*

---

[23] *ՄԱՄ ձեռ. № 2068, թ. 356բ՝ 15-րդ դ. գրչությամբ։ ՄԱՄ ձեռ. № 605, թ. 47բ՝ 1701 թվականի գրչությամբ։*

[24] Ռ. Աթայան. *Խազերի սիստեմի ծագման ու զարգացման մասին տե՛ս «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», II, 1949, էջ 37—51։*

[25] Ստ. Մալխասյանց. *Գրաբարի համաձայնությունը, Թիֆլիս, 1892, էջ 157։*

X. ԿԱՊԳՐՈՒԹՅՈՒՆ

Կապգիր է կոչվել գրության այն տեսակը, որը կազմվել է մեկ կամ ավելի տառերի միակցումից։ Գրի այդ տեսակը հայտնի է նաև կցագիր անունով։ Տեղ տնտեսելու նպատակով աշխատել են, որքան կարելի է, շատ տառեր զետեղել միևնույն տարածության վրա։ Դրա անհրաժեշտությունը մեծ է եղել մասնավորապես վիմագրության մեջ և կնիքների վրա։

Երկաթագիր գրչության մեջ գրեթե չեն հանդիպում կապգրեր։ Պատահում է, սակայն, երբ տողը վերջանում է, և վերջին բառի մեկ կամ երկու տառերի համար տեղ չի մնում· տողադարձ չեն անում, այլ այդ տառերը դնում են վերջին տառի վրա և կամ կցում նրան։ Նման կապգրություն նկատելի է Լազարյան ավետարանի բնագրում։

Կապգրությունն առանձնապես սակավ է ուղղագիծ երկաթագիր գրչության մեջ։ Դրությունը սակայն հիմնովին փոխվում է բոլոր և նոտր գրչության ժամանակ. արագագրությունը ստիպում է մարդկանց հաճախ դիմել կապգրության։ Նրանց մի խմբի մասին մենք խոսել ենք հապավումների գլխում։ Այստեղ կարելի է, որպես հաճախակի գործածվող կապգրերի նմուշներ, մատնացույց անել միայն մի քանիսը.



Կապգրությունը մեծ չափերով գործ է ածվում վիմագրության մեջ, որպիսիք հանդիպում են դեռևս VII դարից։ Կոմիտաս կաթողիկոսի 618 թվականի Հռիփսիմեի տաճարի վրա թողած արձանագրության մեջ առկա է երեք կապգիր՝ ՄԻ, ՄԵ, ԾԻ։ Բագավանի 639 թվականի արձանագրության մեջ հանդիպում է երկու կապգիր՝ ԻԱ, ՌԱ։ Ջվարի հայերեն արձանագրության մեջ 7-րդ դարի 30—40-ական թվականներից ունենք ԿԻ մեկ կապգիր։ Մաստարայի արձանագրություններում կա չորս կապգիր՝ ՈՍ, ՈԻ, ՊԻ, ԱԻ։ Հետագայում վիմագիր արձանագրություններում կապգրության գործածությունը հաճախակի է դառնում։

Կապգրության մեջ ամենից հաճախ գործածվողներն այն տառանիշերն են, որոնք սյունագծեր ունեն։ Այդ տառերից կարելի է մատնացույց անել՝ Ա, Կ, Մ, Ո, Ռ, Ս, Ր։ Այս տառերի սյունագծերն իրար են կցվում և կամ՝ նրանց հետ գալիս են կցվելու մյուս տառերը։ Կապգրության մեջ օժանդակ դերում են հանդես գալիս հետևյալ տառանիշերը՝ Դ ,Ե, Թ, Ի, Խ, Ղ, Ն, Պ, Ի, Փ, Ք։ Համեմատաբար քիչ են գործածվում Զ, Ը, Ժ, Լ, Ծ, Ձ, Ճ, Յ, Շ, Չ. Ջ. Վ տառանիշերը։

Կապգրության մի քանի տեսակներ կան։ Ամենից շատ այն կապգրերն են, որոնց նախորդ տառի աջ սյունագիծը միանում է հաջորդ տառի ձախ սյունագծին։ Այդ սկզբունքով միանում է նաև մի տառի սյունագիծը մյուս տառի թևի հետ։ Բերենք այդ կարգի կապգրության մի քանի նմուշ.



Կապգրության մի այլ խմբում տառերն իրար են կցվում ոչ թե սյունագծերով կամ թևերով, այլ մի տառ նստում է մյուսի ուսին։ Այդպիսի դեպքում նստող գրի համար հիմք են ծառայում գլխավորապես Ա կամ Ս տառերը։ Ըստ որում, կցվող տառերը կարող են կապգրվել ինչպես աջ, այնպես և ձախ սյունագծից։ Կցվող տառերը, սյունագիծ ունեցող տառերի համեմատությամբ, ավելի փոքր են. Նրանց բարձրությունը սյունագծեր ունեցող տառերի մեկ երրորդից ավելի չի լինում։ Նման փակագրերից որպես նմուշ կարելի է բերել հետևյալները.



Կան երեք տառեր՝ Ջ, Շ և Չ, որոնք տառեր են ընդունում իրենց բոլորակի մեջ.



Բավական մեծ թիվ են կազմում այն կապգրերը, որոնք կազմված են երեք և ավելի տառերից։ Այս դեպքում ևս կապգրվող տառերի համար կմախք են ծառայում սյունագիծ ունեցող տառանիշերը, գլխավորապես՝ Ա կամ Ս տառերը։ Այս խմբի կապգրերից կարելի է որպես նմուշ բերել հետևյալները.



Կապգրության մասին որոշ պատկերացում տալու նպատակով անհրաժեշտ ենք համարում բերել ՄԱՄ-ի № 2961 ձեռագրում կապգրված հետևյալ նախադասությունը։



«Մխիթար մեղապարտի [է] գիրս այս»:

Կապգրության ժամանակ վերևից երբեք պատվի նշան չի դրվում, բացառությամբ այն դեպքերից, երբ տերունական բառեր են։

Կապգրերը սովորաբար ընթերցվում են ձախից աջ, վերից վար հերթականությամբ։ Սակայն պատահում է, որ կապգրված տառախմբում պետք է կարդալ և վերծանել ոչ թե ձախից աջ, այլ աջից ձախ։ Այսպես.



Կան որոշ բառեր, որոնք միատեսակ ավանդական ձևով են կապգրվում։ Դրանցից կարելի է մատնացույց անել հետևյալները.

«Ամէն»	
«Որդի»	
«Եսս»	
«Ժամ»	
«Պատարագս»	
«Ինձ»	
«Մեր»	
«Թուականս»	

Կապգրության մեջ շփոթության տեղիք կարող են տալ «ՈՒ» և «ԵՒ» տառերը։ Քիչ է պատահում, որ նրանք գրվեն իրարից անջատ. ՈՒ-ի համար գործ է ածվում կապգրություն, ԵՒ-ի համար՝ ։

Կապգրության մեջ շփոթության տեղիք կարող են տալ «ՈՒ» և «ԵՒ» տա-հանդես են գալիս գլխավորապես հնատիպ տպագրության մեջ. Մ· Հ, Վ տառերի աջ թևերի՝ հաջորդ տառին մոտեցնելու և որոշ բաց տարածություն մնալու պատճառով անհրաժեշտ են համարել միացնել հաջորդ տառերի հետ։ Որպես նմուշ կարելի է բերել.



Հնատիպ գրականության մեջ այլ ձևով են վարվել պոչավոր տառերից հետո եկող տառերի հետ. եթե նրանք ևս կցեին դեպի աջ հակված պոչիկներին, ապա միացյալ այդ տառերը տգեղ ձև կունենային և կաղավաղվեին, ուստի նրանք իրար հետ ձուլել են այնպես, որ երկրորդ տառը գրվել է պոչիկներից վերև, նրա ծոցում։ Գրերի այս տեսակը հայ մատենագրության մեջ կոչվել է **ծոցագիր**։ Նման ծոցագրերից են.



և այլն։

Հայկական մյուս բնագրերի համեմատությամբ ամենից շատ կապգրեր կան կնիքների վրա գրված անունների և բառերի մեջ։ Արխիվներում պահվում են հազարավոր վավերագրեր, որոնք կնքված են կապգրված կնիքներով։ Ընդ որում, ժամանակի ընթացքում այդ կապգրերը այնքան են բարդանում, որ տառապատկերի առումով անճանաչելի են դառնում և վերածվում այսպես կոչված «մոնոգրամաների», երկրաչափական պատկերների։





—աբ
—ագ
—ագր
—աթ
—աի
—ախ
—ակ
—աղ
—ամ
—ամաւն
—ամբ
—ամէն
—ամեն
—ամս
—ան
—ան
—անի
—անխափան

—անք
—անն
—առ
—առա
—աս
—աս
—ատ
—ար
—ար
—արգ
—արդ
—արի
—աւ
—աւր
—աւր
—ափ
—աք
—բա

—բարե
—գա
—գագ
—գե
—գէ
—դէ
—գս
—գոր
—գր
—դա
—դե
—դէ
—դաի
—դամ
—դո
—եւ
—դի
—եկ

—ես
—ես
—եր
—եւան
—զի
—էի
—թա
—թբ
—թն
—թբ
—թւ
—թվ
—թվ
—ժամ
—ժամի
—իմ
—ին
—ին

—պե
—պի
—պլ
—պան
—պռ
—պար
—ռա
—սա
—սթ
—սի
—սն
—փա
—ցի

—սխնէ
—սխ
—սկ
—սն
—սռ
—սբ
—վա
—վր
—վն
—վար
—ւռ
—փար
—ցո

—տա
—տար
—մե
—տիրա
—տն
—տռ
—տվ
—ցր
—քս
—րն

Կապգրություն

	—Աբիսողոմոն		--Աղասի
	—Ալեքսան		—Ասատուր
	— Արմէն		—Ավագ
	—Աւետիք		—Գաբրիէլ
	—Աբրահամ		—Գէորգ
	—Առաքել		--Գէորք
	—Աստուածատուր		—Գէորգ
	—Գալուստ		—Եսայի
	--Դանիէլ		—Երեմիա
	—Դաւիթ		—Թադէոս
	—Խաչատուր		—Կարապետ
	—Կիրակոս		—Կարապետ
	—Կարապետ		—Ղազար
			—Խաչատուր

	—Մահտեսի		— Համբարձում
	—Մովսէս		—Մինաս
	—Մկրտիչ		—Միքայէլ
	—Յակոբ		— Մատթէոս
	—Յարութիւն		—Մարգար
	—Յօհաննէս		—Նահապետ
	—Յովսէփ		--Պետրոս
	—Պետրոս		—Սարգիս

	—Ռաֆայէլ		—Սահակ
	—Սիմէօն		—Պողոս
	—Ստեփան		—Սուքիաս
	—վարդապետ		—Ստեփան
	—Սահակ		—Փիլիպոս

XI. ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ձեռագրերում և հնատիպ գրականության մեջ սովորություն է եղել սղել մեկ կամ ավելի տառ, որը և մատենագրության մեջ կոչվում է ճամառոտագրություն կամ պատվագրություն։

Հնագույն երկաթագիր բնագրերում հանդիպում է միայն յոթ բառի համառոտագրություն՝ Աստուած, Յիսուս, Քրիստոս, Տէր, Սուրբ, Իսրաէլ, Երուսաղէմ։ Տերունական կոչվող այս բառերի սղումը փաստորեն համառոտագրություն չէ, այլ պատվագրություն։ Բառերի վրա դրված գծանշանը հնում կոչվել է պատվի նշան։ Հետագա դարերում այն կորցրել է իր սկզբնական նշանակությունը, բայց անունը պահել է մինչև նոր ժամանակները, թեև դրվել է ոչ միայն տերունական բառերի, այլև թվանշան տառերի և սովորական համառոտագրված բոլոր բառերի վրա։

Տերունական հիշյալ բառերը համառոտագրված են լինում հետևյալ ձևերով.

Ա͠Ծ—Աստուած, Ա͠Յ—աստուծոյ, Ա͠Վ—աստուծով,
Յ͠Ս—Յիսուս, Յ͠Ի—Յիսուսի,
Ք͠Ս—Քրիստոս, Ք͠Ի—Քրիստոսի,
Ս͠Բ—Սուրբ, Ս͠ԲՅ կամ Ս͠Յ—սրբոյ,
Տ͠Ր—Տէր, Տ͠Ն—տեառն, Տ͠Բ—տերամբ,
Ի͠ԷՂ—Իսրաէղ, Ի͠ՂԻ, Իսրաէղի,
Ե͠ՂՄ—Երուսաղէմ, Ե͠ՂԻ կամ Ե͠ՂՄԻ— Երուսաղէմի։

Համառոտագրության չափն ու նպատակը հիմնովին փոխվում է բոլորգիր և նոտրգիր բնագրերում և հնատիպ գրականության մեջ։ Այստեղ նրանց թիվը տասնյակների է հասնում։ Երբեմն հանդիպում են այնպիսի բնագրեր, ուր բառերի նշանակալի մասը համառոտագրված է։ Գրանյութի թանկությունը, երբեմն էլ սղությունը հարկադրում է մարդկանց քիչ տարածության վրա շատ բան գրել և ահա այդ նպատակով անհրաժեշտ են համարում դիմել համառոտագրության։

Համառոտագրության հարցին ժամանակին անդրադարձել են միջնադարյան քերականները (Վարդան Արևելցին և ուրիշներ)։ Նրանք կազմել են համառոտագրության ցանկեր, որոնք կոչվում են «Նշանագիրք իմաստնոց» կամ «Նշանագիրք անուանց կարճաբանութեան», ուր զետեղված են մոտ հազարի հասնող սղագրության նշաններ և գաղափարագրեր։

Հայագիտության մեջ, դժբախտաբար, համառոտագրությունների վրա պատշաճ ուշադրություն չի դարձված. փորձեր չեն արվել բոլոր գործածական *հապավված բառերն ի մի հավաքելու, խմբավորելու, պարզելու նրանց գործածության օրինաչափությունները, եթե հաշվելու չլինենք Գ. Հովսեփյանի հրատարակած մի քանի նմանահանությունները ըստ էջմիածնի №662/750 ձեռագրի*[1] *և դ-ր Բ. Ֆրանչյանի*[2] *մի փորձը և տողերիս հեղինակի հնագրության ձեռնարկներում համառոտագրությանը նվիրված գլուխները։*

Մաշտոցի անվան մատենադարանի № 9646 ձեռագիրը պարունակում է մի շատ ուշագրավ հանրագիտարան՝ կազմված 18-րդ դարի մեջ անհայտ անձնավորության կողմից, ուր «Գիր» գլխաբառի տակ խոսվում է նաև ողագրության մասին և խմբավորում չորս համակարգի մեջ՝ չորս տարբեր անունների տակ՝ «Դուր»· «Երկորեակ», «Սիւն» *և* «Նշանագիր»: *Ըստ անանուն հեղինակի «Դուր»-ը՝ ողագրության հիմնական տեսակն է, որի ժամանակ «Բառն ի բանից տառք բազումք՝ թէ ձայնաւորք և թէ բաղաձայնք»։ «Երկորեակ» համառոտագրությունների ժամանակ բառի վրա դրված երկու կետերի տակ ողագրվում է ձայնավոր մեկական տառ։ «Սիւն» է համարված ողագրության այն տեսակը, երբ եռանկյուն «ա»-ին փոխարինում է նրա մի ճյուղը՝ մի սյունը։ Եվ, վերջապես, չորրորդ տեսակ համարում է գաղափարանշաններով գրված համառոտագրությունները*[3]*։*

Համառոտագրությունները մենք խմբավորում ենք այլ կերպ՝ հաշվի առնելով հապավված տառերի քանակը և նմանաձև բառերի համակարգը, կազմելով վեց խումբ՝

Ա. միատառ հապավումներ,
Բ. երկտառ հապավումներ,
Գ. բազմատառ հապավումներ,
Դ. «թիւն» վերջավորությունների հապավումներ,
Ե. շաբաթվա անունների հապավումներ,
Զ. երաժշտական ձայների հապավումներ։

Ամենից մեծ դժվարություն ստեղծում է միատառ բառերի վերծանությունը, երբ մի տառի միջոցով արտահայտվում է մի բառ։ Այդպիսիք հաճախ շփոթվում են թվանշանների համար գործածված տառանիշերի հետ, որովհետև երկուսն էլ միատեսակ պատվի նշաններ են կրում։ Մեկ տառով հապավված բառերից մեզ հայտնի է միայն չորսը՝ «պէս», «քան», «ընդ» և «կամ»։

պ̅-պէս: *Այս սկզբունքով համառոտագրվում են նրան ազգակից մյուս բառերը ևս.*

պ̅ պ̅—պէս պէս
այսպ̅—այսպէս
այնպ̅—այնպէս
նոյնպ̅—նոյնպէս
որպ̅—որպէս
իսկապ̅-իսկապէս
ընդհանրապ̅—ընդհանրապէս
յայտնապ̅—յայտնապէս և այլն։

---

[1] Գ. Հովսեփյան. *Քարտեզ հայ հնագրության, տե՛ս «Շողակաթ», էջմիածին, 1913, աղյուսակ ՁԸ—Ղ։*

[2] **B. Frandjan, Armenische Abbreviatione, Berlin, 1965.**

[3] *ՄԱՄ ձեռ. 9646, թ. 92ա—92բ։*

Ք—քան: *Այս ձևով համառոտագրվում են.*

որք—որքան
քգի—քանզի
այնք—այնքան
այսք—այսքան
քքար—քանքար
քիցս—քանիցս
քոր—քան որ
նոյնք—նոյնքան և այլն.

Ը—ընդ: *Այս ձևով համառոտագրվում են.*

Ըունայն—ընդունայն
Ըդէմ—ընդդէմ
Ըէ՞ր—ընդէ՞ր
Ըունելութիւն—ընդունելութիւն
Ըարձակ—ընդարձակ
Ըգրկել—ընդգրկել
Ըհանուր—ընդհանուր
Ըմիարան—ընդիմարան և այլն։

Կ—կամ: *Այս խմբի մեջ մտնում են.*

կակոր—կամակոր
կաւոր-կամաւոր
ակայ—ակամայ
կակից—կամակից
կապաշտ—կամապաշտ
կաւէր—կամաւէր
անկ—անկամ և այլն.

Կան նաև որոշ թվով հատուկ անուններ, որոնք համառոտագրվում են մ տառով՝ իրենց վրա ընդունելով սուղի նշանը։ Այս կարգի համառոտագրոթյունները թեև մտել են համառոտագրությունների ցանկի մեջ, սակայն սովրական գրության մեջ շատ քիչ են պատահում։ Նրանցից որպես օրինակ կարելի է բերել.

Գ—Գէորգ
Զ—Զաքարիա
Է—Էմմանուէլ
Թ—Թեոդորոս
Կ—Կոստանդնուպոլիս
Մ—Մխիթար
Յ—Յովհաննէս
Պ—Պետրոս
Տ—Տրդատ
Ղ—Ղուկաս և այլն.

Անհամեմատ շատ են երկտառ համառոտագրությունները. բառը պատվագրվում է երկու տառով՝ վերցնելով սովորաբար առաջին և վերջին տառերը. Պատահում է նաև, որ վերցնում են վերջին վանկի բաղաձայն տառերից նախավերջինը։ Երկտառ հապավումներից հաճախակի հանդիպում են հետևյալները

ամ—ամենայն
գլ—գլուխ
թվ—թվական
մդ—մարդ
թւ—թուական
խճ—խոճայ
կմ—կամ
հց—հարց
յղ—յաղագս

նխ—նախ
ոպ—որպէս
պտ—պատասխան
սս—սապէս կամ սոյնպէս
վր—վերայ
վս—վասն
քհ—քահանայ
և այլն։

Շատ ավելի հաճախ են գործածվում երեք և ավելի տառերով հապավումները, որոնք սովորաբար կազմված են լինում բառի առաջին տառից, միջին բաղաձայն տառերից մեկնումեկից և վերջին տառից։ Այս կարգի հապավումներից որպես նմուշ կարելի է բերել հետևյալները.

ամի—ամենայնի
ահլ—աւրհնեալ
բզմ—բազում
բլր—բոլոր
բրր—բարերար
երկդ—երկրորդ
եպսկ—եպիսկոպոս
երրդ—երրորդ
զւր—զինուոր
թգր—թագաւոր
ժմկ—ժամանակ
կթղ—կաթողիկոս
կմւ—կամաւ
ծռյ—ծառայ
հզր—հզօր
ճշտ—ճշմարիտ
մնւնդ—մանաւանդ
յրժմ—յորժամ
յռջ—յառաջ
նհչ—նահանջ
նստ—նուաստ
նհչ—նահանջ
շւղ—շաւիղ
չրչր—չարաչար
պտզմ—պատերազմ
պկս—պակաս
վրդ—վարդապետ
վսկ—վասն այսորիկ
վսյ—վասն այնորիկ
տրութիւ—տէրութիւն
քղք—քաղաք
փխկ—փոխանակ
և այլն։

Այդ նույն սկզբունքով համառոտագրվում են հատուկ անունները։ Բերենք մի քանի օրինակ.

Եգս—Եգիպտոս
Գրգր—Գրիգոր
Գգիկ—Գագիկ
Դւթ—Դաւիթ
Թրս—Թորոս
Սհկ—Սահակ
Կրկ—Կիրակոս
Մվս—Մովսէս
Յհս—Յովհաննէս
Շպհ-Շապուհ
Սրգս—Սարգիս
Ստփ—Ստեփանոս
Վրդ—Վարդան
և այլն։

Ամենից հաճախ համառոտագրվում են «թիւն» վերջավորություն ունեցող բառերը երեք տարբեր ձևով. մի դեպքում կրճատվում է երկու տառ, երկրորդ դեպքում՝ երեք տառ, իսկ երրորդ դեպքում՝ չորս։ Բերենք մի քանի օրինակ.

Գիտութիւն—գիտութի—գիտուի—գիտւի

Միջնորդութիւն—միջնորդութի—միջնորդուի—միջնորդւի

Բնութիւն—բնութի—բնուի—բնւի

Նմանութիւն—նմանութի—նմանուի—նմանւի

Տառերի հապավման գործում սահմանված հատուկ օրենք գոյություն չի ունեցել. ամեն մեկը առաջնորդվել է ըստ իր նախասիրության ու հնարավորության, թեև աստիճանաբար կանոնավոր տեսք է ստացել։

Եթե «թիւն» վերջավորության հապավման ժամանակ «ն» տառը պահպանվում է, ապա տվյալ բառը վերծանելիս պետք է բառի վերջում գրել ոչ թե մեկ, այլ՝ երկու «ն»։

Պատմութ՟ի—պատմութիւն, պատմութ՟ին=պատմութիւնն

Նախադասութ՟ի-նախադասութիւն, նախադասութ՟ին=նախադասութիւնն

Գրչութ՟ի—գրչութիւն, գրչութ՟ին=գրչութիւնն և այլն։

Նույն կարգով պետք է վերծանել «թիւն» վերջավորություն ունեցող բառերի հոլովական ձևերը.

Քաջութ՟ե—քաջու՟ե—քաջ՟ւե=քաջութեան

Քաջութ՟են—քաջու՟են-քաջ՟ւեն=քաջութեանն

Քաջութ՟եբ—քաջ՟ւթբ, քաջ՟ւեբ=քաջութեամբ։

Գրեթե միշտ հապավվում են «եալ»վերջավորություն ունեցող դերբայները.

տես՟ել—տեսեալ, բեր՟ել—բերեալ, գր՟ել—գրեալ, տար՟ել—տարեալ, աշխատ՟ել—աշխատեալ և այլն։

Տոմարական բովանդակության բնագրերում որպես օրենք միշտ հապավվում են շաբաթվա յոթ օրերի անունները։ Համառոտումը կատարվում է հետևյալ ձևով.

բ՟շ—երկուշաբթի
գ՟շ—երեքշաբթի
դ՟շ—չորեքշաբթի
ե՟շ—հինգշաբթի
զ՟շ կամ ուր՟բթ—ուրբաթ
շ՟բթ—շաբաթ
ա՟շ—միաշաբթի այսինքն՝ կիրակի։

Գանձարաններում, շարակնոցներում և տաղարաններում հաճախ են պատահում հայկական հոգևոր երաժշտության մեջ քաղաքացիություն ստացած ութ ձայների եղանակների հապավումները.

ա՟ձ—առաջին ձայն
ա՟կ—առաջին կողմ
բ՟ձ—երկրորդ ձայն
բ՟կ—երկրորդ կողմ
գ՟ձ—երրորդ ձայն
գ՟կ—երրորդ կողմ
դ՟ձ—չորրորդ ձայն
դ՟կ—չորրորդ կողմ։

Տեղի խնայողության և արագագրության պահանջը ստիպում է մարդկանց ոչ միայն համառոտագրել բառի առանձին մասեր, այլև տառի առանձին մասեր։ Այսպես, փորձեր են կատարում հապավել եռաճյուղ «ա»-ի երկու ճյուղը և թողնել մեկը, ուստի, օրինակ, «ճանապարհ» բառը հապավված գրվում է «ճ|ն|պ|ր՟|», «տաղարան» բառը հապավվում է «տ|ղ|ր|ն»։ Այս հապավումը հայ *մատենագրության մեջ չի ընդհանրացել և կարճ ժամանակ հետո դուրս է եկել գործածությունից։*

Հապավվող նման տառերից է հանդիսացել նաև «ու» երկհնչյունը, որի առաջին «ո»-ն հապավվում է և մնում է միայն «ւ»-ն։ Օրինակ՝ մ՟քւր (մաքուր), ցւ՟ցել (ցուցեալ) և այլն։

Սովորաբար հապավված են լինում անձնական դերանունները.

ս՟ց — սոցա
դ՟ց — դոցա
ն՟ց — նոցա
ս՟մ — սմա
դ՟մ — դմա
ն՟մ — նմա
ս՟ր — սորա
դ՟ր — դորա
ն՟ր — նորա
ս՟ք — սոքա
դ՟ք — դոքա
ն՟ք — նոքա

Հապավված բառի վրա դրվում է պատվի նշան, որը բազմաթիվ ձևեր է ունենում. երկաթագրում պատվագրված յոթը բառերի վրա այն ունեցել է ·—. ձևը, հետագայում բոլորգրի և նոտրգրի ժամանակ ընդունում է ւ ձևը, արագագրության ժամանակ վեր է ածվում սովորական հորիզոնական գծիկի՝ առանց գլխիկի։ Մեկ տառ բառամիջում հապավելիս գծիկին փոխարինում են երկու շեղ գծիկ կամ ուղղակի երկու կետ, որոնք դրվում են բառի վրա այն տեղում, ուր հապավված է տառը։

Ստորև (էջ 214—224) բերում ենք ձեռագրերում գործածված հապավումների այբբենական ցանկը՝ օգտագործելով նաև «Նշանագիր իմաստնոց» ցանկերում եղած հապավումները։ Տվյալ ցանկը՝ մենք կազմել ենք Մաշտոցի անվան մատենադարանի մի շարք ձեռագրերում եղած «Նշանագիր իմաստնոց»-ների հիման վրա, որոնց մասին խոսք կլինի ներկա աշխատության գաղափարագրությանը նվիրված գլխում։

XII. ՆՇԱՆԳԻՐՔ ԻՄԱՍՏՆՈՑ

Ձեռագիր ժողովածուներում, գլխավորապես քերականությունների հավելվածների մեջ, երբեմն հանդիպում են հայկական ներկա գրության անսովոր նշանագրերի ցանկեր, որոնք ունեն տարբեր կառուցվածք և կրում են տարբեր անուններ. «Նշանագիր», «Նշանագիր այբուբենից», «Նշանագիր անուանց», «Նշանագիր անուանց. կարճաբանութիւն», «Բացատրութիւն յառաջնոց գրոց և նշանագրաց», «Այս է նշանագիր հայոց ազգի», «Վասն պատուագրաց» *և այլն։*

Նշանագրերն այս ցանկերում ներկայացվում են հետևյալ կերպ. տրվում է նշանագիրը, իսկ նրա դիմաց՝ բացատրությունը։ Այսպես, օրինակ.

	Աբիսողոմոն
	Աբրահամ
	Ահարոն
	Աղանդ
	Աղբիւր և այլն։

Հայկական այս նշանագրությանն առաջին անգամ ուշադրություն է դարձրել Մ. Չամչյանը «Պատմութիւն Հայոց»-ի առաջին հատորում, խոսելով նախամաշտոցյան գրչության մասին և այդ կապակցությամբ բերելով Վարդան Արևելցու մի վկայությունը, որ ինքը աչքով տեսել է տեղական գրեր՝ հեթանոս հայ թագավորների դրամների վրա, նա հնարավոր է համարել, որ դրանք էին «...նշանագիրք ինչ, որ հնարեալ էին փոխանակ ամբողջ բառից, զոր կան և այժմ ի հին ձեռագիրս այդպիսիք աւելի քան զերկու հարիւր»[1]։

Հայկական նշանագրությամբ, ինչպես արդեն ասել ենք, հանգամանորեն զբաղվել է Մ. Էմինը և հանգել այն եզրակացության, որ «խստապահանջ մոտեցման պարագային, ինչպես կտեսնենք ստորև, մեր քննության առած 305 նշանագրերից շատ քչերն են, որոնց կարելի է վերագրել հայ հեթանոսական ժամանակաշրջանին։ Անկախ դրանից, փոքրաթիվ այդ բեկորները հարկադրում են մեզ մտածել, որ Հայաստանում, իրոք, երբեմնի գոյություն է ունեցել գաղափարագիր գրություն, որը զարգացման շատ բարձր աստիճանի է հասել և միաժամանակ տարածվել ամենուրեք»[2]։ Էմինը հրատարակել է այդ գաղափարանշաններից 84-ը՝ վերցնելով Լազարյան ճեմարանի № 141 ձեռագրից, որը 1620 թ. ընդօրինակություն է։

---

[1] Մ. Չամչյան, *Պատմութիւն* Հայոց, Հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 761։

Էմինից հետո հայկական նշանագրությամբ հետաքրքրվել է արևելագետ Abbé P. Martin-ը և 257 նշանագիր հրատարակել իր „Des signes hiéroglyphiques dans les manuscrits arméniens" աշխատության մեջ[3]։

Հայկական նշանագրության վրա ուշադրություն է դարձրել նաև ազգագրագետ Գ. Սրվանձտյանը։ Նա Տիգրանակերտի հայկական ձեռագրերից հավաքել է շուրջ 120 նշանագիր և հրատարակել «Թորոս աղբար»-ում[4]։

Հետագայում խնդրին անդրադարձել է Ի. Հարությունյանը և հանգել Էմինին հակընդդեմ եզրակացության՝ ժխտելով հայ նշանագրության առնչությունը մեհենական գաղափարագրության հետ։ Իր տեսակետը նա հիմնավորել է հետևյալ փաստերով. ա) հայկական նշանագրերի մի մասը հայկական ներկա տառերից կազմված համառոտագրություն և կապգրություն է, ուստի և ներկա գրությունից առաջ կազմվել չէր կարող, բ) նշանագրերի մեջ կան այնպիսինները, որոնք քրիստոնեական գաղափարներ են արտահայտում (Աբրահամ, Սողոմոն, խաչ, եկեղեցի և այլն), հետևապես հեթանոսական շրջանից սկիզբ առնել չէին կարող, գ) հայկական որոշ նշանագրեր ուշ շրջանի փոխառություններ են հարևան ժողովուրդներից[5]։

Տ. Պալյանը, 17-րդ դ. մի ձեռագրից քաղել և առանձին տետրակով հրատարակել է 511 նշանագիր՝ առանց, սակայն, անդրադառնալու նշանագրության հնությանն ու արժեքին[6]։

Հայկական նշանագրության երկու ցուցակ, առանց մեկնաբանության, հրատարակել են Ի. Սրապյանը և Ֆրեդրիկ Մուրատը։ Առաջինը հրատարակել է 25 նշանագիր՝ հիմք ունենալով Անտոնյան միաբանության Օրթագյուղի մատենադարանի № 112 ձեռագիրը[7], իսկ երկրորդը՝ 505 նշանագիր՝ վերցնելով Բեռլինի արքունական մատենադարանի № 805 հայկական ձեռագիր ժողովածուից[8]։

Նշված բոլոր ուսումնասիրությունների սկզբնաղբյուրը նշանագրերի ա-

---

[2] Էմինի ուսումնասիրությունը հրատարակվել է նախ 1858 թ.՝ իբրև չորրորդ հավելված Մովսես Խորենացու ռուսերեն թարգմանության, հետո 1865 թ.՝ ֆրանսերեն «Revue d'Orient» հանդեսում։ 1870 թ. տպագրվել է նրա հայերեն թարգմանությունը «Հայկական աշխարհ» պարբերականի փետրվարի համարում։ Ռուսերենը վերահրատարակվել է 1896 թ. նրա „Исследования и статьи" ժողովածուում։

[3] „Congrès international des orientalistes", 1873, էջ 430 (հմմ. Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 29)։

[4] Գ. Սրվանձտյան, Թորոս աղբար, 1879, էջ 337—340։

[5] Ի. Հարությունյան, Հայոց գրերը, Թիֆլիս, 1892, էջ 107։

[6] Տե՛ս Տ. Պալյան, Նշանագիրք Հայոց, Վիեննա, 1898։

[7] Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1902, էջ 201—202։

[8] Տե՛ս նույն տեղում, 1903, էջ 144—146, 333—336։

առանձին պատահական ընդօրինակություններ են հանդիսացել. Նրանցից ոչ ոք իր առջև խնդիր չի դրել համեմատել մեզ հասած նշանագրերի ցանկերը, ճշտել նրանց արժանահավատությունը, ընտրել նախագաղափար օրինակը և նրանց ուսումնասիրության հիման վրա անել եզրակացություն։

Նշանագրության ուսումնասիրությանը միանգամայն այլ մոտեցում է ցուցաբերել Հ. Աճառյանը։ Նա, հրատարակված բնագրերից բացի, օգտագործելով Մատենադարանի ութ նորահայտ նշանագրերի ցանկեր, համադրել է իրար և ցույց տվել նրանց ամբողջական պատկերը։ Հանգամանալից ուսումնասիրությունը նրան բերել է հետևյալ եզրակացության. «...վերոհիշյալ ցուցակին մեջ գտնված բոլոր նշանագիրները, պատկերագիր թե համառոտագրություն, հետմեսրոպյան շրջանին հայերեն տառերու վրա ձևված կամ առարկային պատկերէն առնված նշաններ են, և բնավ կապ չունին մեհենադրոշմներու և հաթյան կամ դանիելյան նշանագրերու հետ»[9]։

Հայկական նշանագրությանը մենք անդրադարձել ենք մի քանի անգամ։ 1941 թ. «Նախամեսրոպյան հայկական գրականության հարցը» հոդվածում, քննության առնելով նշված ցանկերը, մենք հանգել ենք հետևյալ եզրակացության. «Մեզ թվում է, որ «Նշանագիրք իմաստնոցը» հին հայկական գիր համարելը գիտական փաստերով չի հիմնավորվում, բայց նրա որոշ սղագրության նշաններն այնքան հին են, որքան հին է ինքը հայկական գրչությունը։ Չէր կարող պատահել, որ Հռոմում և Բյուզանդիոնում կրթություն ստացած հայ աշակերտները, նրանց օրինակով, չստեղծեին հայերեն սեփական սղագրություն, մանավանդ եթե նկատի ունենանք, որ հայ մատենագիրները ծանոթ են սղագրության հետ»[10]։ 1955 թ. «Հայկական պալեոգրաֆիա»-ի մեջ հրատարակել ենք Մաշտոցի անվան մատենադարանի երկու ընտիր ձեռագրի պարունակած նշանագրությունը (№ 2371, գրված Սուրխաթում 1357 թ. և № 715՝ 13-րդ դարի), նպատակ ունենալով այդ բնագրերի նշանագրությունը ևս դնել գիտական շրջանառության մեջ[11]։

Նույն թվականին նորից ենք վերադարձել հայ նշանագրությանը՝ Անթիլիասում կարդացած մեր մի դասախոսության մեջ, և հնարավոր համարել որ հայ նշանագրության որոշ գաղափարանշաններ եկած լինեն հնից՝ հայ մեհենական դրությունից[12]։ Եվ, վերջապես, հայ նշանագրությանն ավելի հանգամանորեն անդրադարձել ենք մեր «Հայ գրի և գրչության պատմություն» գրքում, ուր ուսումնասիրել ենք Մատենադարանի ձեռագրերում պահված մեր նշանագրության ցանկերը, նրանք համեմատության մեջ դրել հրատարակված-

---

[9] Հ. Աճառյան. *Հայոց գրերը*. էջ 56 (Աշխատության հավելվածում նա հրատարակել է շուրջ 510 նշանագիր)։

[10] «Գիտական նյութերի ժողովածու», № 1, 1941 թ., էջ 47։

[11] Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան. *Հայկական պալեոգրաֆիա*. էջ 92—98։

[12] **Ա. Գ. Աբրահամյան.** *Յոթ դասախոսություններ*, Անթիլիաս-Լիբանան, 1955, էջ 34—37։

ների հետ և աշխատել խմբակարգել նրանք։ Այդ աշխատության մեջ հայկական նշանագրությունը բաժանել ենք երկու խոշոր խմբի՝ Կիլիկյան *և* Երզնկայի, *իսկ ցանկերի հիման վրա կազմել ենք նշանագրերի համահավաք տախտակ և հրատարակել «Գաղափարագրություն» գլխի հավելվածում*[13]*։*

Մինչև այժմ հայագիտության մեջ հայտնի էին հայկական նշանագրեր պարունակող 18 ձեռագիր, որոնցից 8-ը՝ արտասահմանյան մատենադարաններում, իսկ 10-ը՝ Մաշտոցի անվան մատենադարանում։ Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ միայն Մաշտոցի անվան մատենադարանում «Նշանագիրք իմաստնոցը» ընդօրինակված է շուրջ 70 ձեռագրում։ Այդ ձեռագրերից 49-ի համառոտագրությունները հրապարակված են «Հայ գրի և գրչության պատմության» մեջ (էջ 144—146)։ Մյուսները, որոնք մեզ հայտնի են եղել վերջին տարիներս, առանձին լուրջ նորություններ չեն բերում հայտնիների համեմատությամբ, ուստի ավելորդ ենք համարում նրանց վրա ծանրանալ։

«Նշանագիրք իմաստնոցի» ցանկերը, ըստ իրենց պարունակած նշանագրերի ձևի և դասակարգման, մենք բաժանում ենք երկու հիմնական խմբի՝ Կիլիկյան և Երզնկայի։ Այս խմբերն, իրենց հերթին, բաժանվում են ենթախմբերի։ Երևում է, որ տվյալ ցանկերն ընդօրինակողներն ազատ են զգացել իրենց և ըստ նախասիրության ցանկացած փոփոխություններ կատարել։

Երզնկայի խմբի հնագույն ցանկն ընդօրինակված է Մաշտոցի անվան մատենադարանի № 5118 ձեռագրում 1412 թ. Երզնկայում, Ռստակես Երզնկացու կողմից, ուստի մենք անվանում ենք Երզնկայի խումբ։ (Այդ անվանումը պայմանական է, որովհետև կարող է Երզնկայում գրված այդ ձեռագրի նախագաղափար օրինակը գրված լինել մեկ այլ վայրում)։

«Նշանագիրք իմաստնոցների» մյուս խումբը պայմանական ձևով մենք անվանում ենք Կիլիկյան խումբ այն պատճառով, որ այդ խմբի ցանկը, մեր ենթադրությամբ, կազմվել է Կիլիկիայում։

Նշանագրերի Կիլիկյան խմբի հնագույն ձեռագրերը 13-րդ դարի վերջից են (Հովհաննես գրչի օրինակը), իսկ 14-րդ դարից ունենք արդեն մի քանի ձեռագիր՝ Կարապետ երեցի ձեռագիրը 1304—1305 թվականներից, Ատոմ գրչի ձեռագիրը 1366 թվականից (Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում), Ստեփանոս Սուրխաթեցու օրինակը 1357 թվականից, Սիմեոն գրչի օրինակը 1365 թվականից, Սարգիս Կիլիկեցու, Հովհաննես եպիսկոպոսի, Ծառայի գրչի ձեռագրերը դարձյալ 14-րդ դարից և այլն[14]*։ Անհրաժեշտ է նշել, որ վերոհիշյալ ձեռագրերում հայկական նշանագրերի ցուցակները մեզ հասել են ո՛չ թե հատվածներով, այլ ամբողջական վիճակում։*

Անշուշտ, վերանայման կարիք ունի պրոֆ. Հ. Աճառյանի այն կարծիքը, որ իբր հայկական նշանագրերը փոքր քանակությամբ ստեղծվել են 14-րդ դարում, իսկ հետագայում, աստիճանաբար, լրացվել. «...կրնանք հետևցնել,—գրում է նա,—թե նշանագրերու առաջին գործածությունը ԺԴ դարեն մտած ըլլա, առաջին անգամ սակավ քանակությամբ, որմէ հետո քիչ-քիչ շատցած և ընդհանրացած է»[15]։ Անվիճելի է, որ հայկական նշանագրերի ցանկեր կազմելու ժամանակագրական վերջին սահմանը 13-րդ դարն է, դրանից ուշ կազմված լինելը բացառվում է, որովհետև արդեն այդ ցանկի մի օրինակը 13-րդ դարի վերջերից է։ Նշանագրերի ստեղծման ժամանակը որոշելու համար ունենք այլ կռվան ևս՝ հնագրության տվյալները։ Կիլիկյան խմբի նշանագրերի մեծ մասը կազմված է հայկական տառաձևերի ձևափոխություններից, իսկ ձևափոխված տառաձևերի հիմքը, դժվար չէ նկատել, որ ո՛չ թե բոլորգիծ կամ ուղղագիծ երկաթագրերն են, այլ՝ կիլիկյան շրջանի սովորական բոլորգիրը։ Քաջ հայտնի է, որ բոլորգիրը հայկական ձեռագրերում սկսում են գործ ածել հիմնականում 12-րդ դարից, ուստի և հայկական նշանագրերը 12-րդ դարից ավելի վաղ կազմված լինել չէին կարող։

---

[13] Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, *Հայ գրի և գրչության պատմություն*, էջ 168—173։

[14] Ձեռագրերի պարունակած նշանագրության մատենագիտությունը տե՛ս մեր «Հայ գրի և գրչության պատմության» մեջ, էջ 144—147։

Այսպիսով, նշանագրերի ընդօրինակությունների և նրանց հնագրության ուսումնասիրության հիման վրա մենք գալիս ենք այն եզրակացության, որ հայկական նշանագրերի ցուցակները 12-րդ դարից շուտ և 13-րդ դարից ուշ կազմված լինել չեն կարող։

Ժամանակի ճշտման խնդրում մեզ կարող է օգնել նշանագրեր կազմող հեղինակի ինքնության պարզաբանումը։ Եթե պարզվի, թե ով է եղել նշանագրեր կազմող հեղինակը, դժվար չէ մոտավոր ճշտությամբ որոշել նաև նշանագրերի կազմության ժամանակը։ Դժբախտաբար, «Նշանագիրք իմաստնոցների» ցանկերից ոչ մեկի խորագրում չի հիշվում կազմող հեղինակը։ Բացառություն է կազմում Մաշտոցի անվան մատենադարանի № 3318 ձեռագրի ընդօրինակությունը, որը վերնագրված է. «Բառ Նշանագրաց Եփեստոսի»[16]։ Եփեստոսը, ավելի ճիշտ՝ Հեփեստոսը, Աղեքսանդրիայի նշանավոր քերականներից է, ապրել է 4-րդ դարի կեսերին։ Նրա աշխատություններից հայտնի է „Ἐγχειρίδιον περὶ μέτρων"[17], որը չափական աշխատություն է և ո՛չ մի առնչություն չունի հայկական նշանագրության հետ։

Այդ դեպքում ինչպե՞ս բացատրել հայկական նշանագրերի ընդօրինակության վերնագրում Հեփեստոսի հիշատակությունը։ Մեզ թվում է, որ այդ թյուրիմացությունն առաջացել է այն պատճառով, որ հայկական Կիլիկյան նշանագրերի խումբը, հիմնականում, որպես սղագրություն, իր ձևով որոշ նմանություն ունի հունական սղագրությանը։ Այդ դժվար չէ տեսնել համեմատություններից։ Բերենք մի քանի օրինակ, վերցնելով հունական սղագրության ընդարձակ մի ցուցակից, որ հրատարակել է Վ. Գարդհաուզենը, և համեմատենք հայկական համապատասխան բառի նշանագրի հետ[18] (տե՛ս էջ 206)։

Կարելի է տասնյակ նման օրինակներ բերել, սակայն բերածները, կարծում ենք, բավական են նկատելու հայկական նշանագրության նմանությունը հունականին։ Նման է նրանց կառուցվածքը և նշանագրեր ստեղծելու սկզբունքը։ Այսպիսի նմանությունը, պարզ է, որ պատահաբար առաջանալ չէր կարող։

---

[15] Հ. **Աճառյան**, *Հայոց գիրը*, էջ 57։

[16] ՄԱՄ ձեռ. № 3318, թ. 72ա։

[17] **W. Christ**, Geschichte der Griechischen Literatur, München, 1905, էջ 799։

[18] Տե՛ս **V. Cardthausen**, Grichische Palaeographie, B. II. էջ 342–352։

Δİ	δόξα		փառք
ΔΔΔ	Δαυίδ		Դաւիթ
	ἔφορος		առաջնորդ
	Ἀνδρέου		Անդրէաս
	ἥλιος		արեգակ
	οὐρανός		երկինք
	ἀποστόλον]		առաքեալ
ΠΗΡ	πατήρ		հայր
	τάλαντον		հանճար
	ἄνθρωπος	8	մարդ
☾	σελήνη	☾	լուսին
	γῆ		երկիր և այլն։

Մենք գիտենք, որ Վարդան Արևելցին իր կազմած քերականության համար ուղեցույց է ընտրել Դիոնիսիոս Թրակացու քերականության հայկական թարգմանությունը։ Եվ քանի որ հունական քերականությունների հավելվածներում տեղավորում էին հապավումների և նշանագրերի ամբողջական ցանկեր, ուստի զարմանալի չէ, որ հայ հեղինակները, տվյալ դեպքում Վարդան Արևելցին, հետևելով հունական ավանդույթին, նույնը կարող էր անել և հայկականում՝ կազմել հապավումների և նշանագրերի ցանկ և զետեղել այն քերականության հավելվածում։ Ուշագրավ է, որ Մաշտոցի անվան մատենադարանի № 3318 ձեռագիրն ընդօրինակող Ղուկաս գրիչը, ելակետ ունենալով հայկական և հունական հապավագրության նմանությունը, որպես ցանկի հեղինակ է հիշում Հեփեստոսին և նրա անունն է գրել՝ իր ընդօրինական ցանկի վերնագրում՝ «Թարգ Նշանագրաց Եփեստոսի»։

Մեր կարծիքով, Կիլիկյան խմբի հայկական նշանագրերի ցանկի հավանական հեղինակն է Վարդան Արևելցին. Հեթում թագավորի հանձնարարությամբ գրելով իր քերականությունը[19], նա միաժամանակ կարող էր կազմել հայկական նշանագրերի մեզ ծանոթ ցանկը՝ որպես պատրաստի ուղեցույց հայկական համառոտագրության։ Մեր այս եզրակացության ճշտությունը հաստատող հիմնական կռվանն այն է, որ Կիլիկյան խմբի հայկական նշանագրերի ցուցակների հնագույն ձեռագրերի մեծ մասում նրանք ընդօրինակված են Վարդան Արևելցու քերականության և կամ նրա այլ աշխատության հավելվածի մեջ։ Այսպես, Սուրխաթում Ստեփանոս գրչի 1357 թվականի ձեռագրում (№ 2371)՝ ընդօրինակված Վարդանի քերականության հավելվածում, 1365 թվականի Սիմեոն գրչի ձեռագրում (№ 341)՝ ընդօրինակված է «Ժղլանք Վարդանայ Արևելցու ի խնդրոյ Հեթմոյ» աշխատությունից հետո, վենետիկյան Մխիթարյանների մատենադարանի սեփականություն կազմող № 423 ձեռագրերում նշանագրերս ընդօրինակված են Վարդանի «Յիշատակ բանի» աշխատություններից հետո, 14-րդ դարի Սարգիս գրիչ Կիլիկեցու ձեռագրում (№ 750) ընդօրինակված են Վարդան Արևելցու «Ժղլանք»-ից և քերականությունից հետո, 14-րդ դարի մի այլ ձեռագրում (№ 2544) նշանագրերի ցուցակն ընդօրինակված է «Վարդան վարդապետի հարցումն և պատասխանի» աշխատությունից հետո և այլն։ Պարզ է, որ սոսկ պատահականությամբ նշանագրերը չէին կարող ընդօրինակվել Վարդանի ժողովածուների մեջ և նրա քերականության շարունակության հավելվածում[20]։

---

[19] Վարդան Արևելցու քերականությունը վերնագրված է. «Յաղագս մեկնութեան քերականին, զոր արարեալ է մեծ վարդապետին Վարդանայ ի խնդրոյ Թագաւորին Հայոց Հեթմոյ» (տե՛ս ՄԱՄ ձեռ. № 2283, թ. 1ա)։

Այս կապակցությամբ անհրաժեշտ է պարզել մի հարց ևս. ի՞նչ նպատակով է կազմվել հայկական նշանագրությունը։ Այդ հարցը հեշտ է լուսաբանել, եթե նկատի ունենանք հայ նշանագրության ատաղձը։

Պարզվում է, որ Կիլիկյան նշանագրության ատաղձը, հիմնականում, հանդիսացել են հայկական տառաձևերը. նշանագրեր կազմող հեղինակը վերցրել է հայկական տառերը, և դրանց այս կամ ձևափոխումով, հապավումով կամ կապգրերով կազմել տվյալ նշանագիրը։ Համենայն դեպս, կիլիկյան խմբի նշանագրերի կազմության նպատակը համառոտագրությունն է հանդիսացել։ Այդ, ի դեպ, կազմող հեղինակի կողմից բարեխղճորեն նշված է խմբի նշանագրերի ցուցակի վերնագրում. **«Նշանագիրք անուանց. կարճաբանութիւն»**։ **«Կարճաբանություն»** բառն այստեղ գործ է ածվել համառոտագրություն իմաստով։ Այդ դժվար չէ նկատել ծանոթանալով նշանագրերի ստեղծման սկզբունքի հետ։ Կիլիկյան խմբի նշանագրերը կազմված են հետևյալ սկզբունքով.

ա) Վերցվում է տվյալ բառի սկզբնատառը և վրան կամ աջ կողքը ավելացվում o նշանը.

Բ̊ — Բարթողիմէոս
Գ̊ — Գէորգ
Զ̊ — Զաքարիա
Թ̊ — Թեոդորա
Պ̊ — Պետրոս
Յ̊ — Յովհաննէս
Տ̊ — Տրդատ
Դ̊ — Դահեկան

և այլն։

---

[20] Նշանագրերի՝ Վարդան Արևելցու հեղինակությանը վերագրելու և նրա քերականության հավելված համարելու պարագայում, լուծվում է մի կարևոր հարց ևս, թե ինչո՞ւ այդպիսի խորագրում չունեն կազմող հեղինակի անունը. Վարդանը քերականության վերնագրում հիշվում է որպես հեղինակ, իսկ քանի որ նշանագրերը շարադրված էին որպես քերականության հավելված, հասկանալի է, որ հարկ չկար հեղինակի անունը կրկնել հավելվածի վերնագրում ևս։

Հայկական նշանագրությունը Վարդան Արևելցու հեղինակությանը վերագրելու և նրա կազմության ժամանակը 13-րդ դարի կեսերը համարելու դեպքում, բնական է, անհիմն են բ) Որոշ դեպքում վերցվում է բառի ոչ թե առաջին տառը, այլ միջին տառերից մեկն ու մեկը կամ վերջինը.

հ — Աբրահամ
ր — Աղեքսանդր
Ոօ — Անտոն
չ — Երջանիկ

ա — Թագաւոր
զ — քարոզ
ք — զարմանք
ղ — Հերձուածող

և այլն։

գ) Պատվագրությամբ հապավվում են բառի առաջին և վերջին տառերը.

բթ — բարեգութ
Գտ — Գալուստ
գն — գարուն
Զլ — Զօրաբաբէլ

փգ — փափագ
քծ — քարկոծ
Ղտ — Ղովտ
պտ — պատրաստ

և այլն։

դ) Հապավման ժամանակ բառի առաջին և վերջին տառերին միանում է միջին տառերից.

բւր — բռնաւոր
գյն — գերագոյն
դւր — դատաւոր
զւր — զինւոր

հպզ — հանապազ
մհտ — մահապարտ
մդր — մարդասեր
յմն — յանդիման

և այլն։

ե) Հապավման ժամանակ որպես նշանագրի նախատառ է վերցվում ո՛չ թե բառի առաջին տառը, այլ միջին տառերից.

րն — Ահարոն
ղղ — աղաղակ
ւծ — առիւծ
պղ — ապաշխարող

ղի — աղաւնի
ղթ — աղօթք
մթ — ամօթ
նթ — անօթի

և այլն։

զ) Հապավվում է կապգրով.

բպշտ — բարեպաշտ
գթղ — գայթակղել
զր — զինուոր
կթղ — կաթողիկոս

Հնր — Հանճար
Հմ — Հմուտ
Հպ — Հպարտ
Նկ — Նահատակ

և այլն։

դառնում փոփոխություն ունեցող [illegible] կիլիկյան խմբի նշանագրերի կազմումը 13-րդ դարից առաջ ու հետո որոշելու համար։

է) Կապգրումով հապավվում են և այնպիսի բառեր, որոնք շատ հեռավոր նմանություն ունեն.

(Նն)—Նաթան

(քցր)—քաղցր

(մշր)—մշտնջենաւոր

(Յն)—Յովնան

(դդ)—անդունդ

(ծյ)—ծառայ

(վան)—վասն այսորիկ

(ջր)—ջուր

և այլն։

ը) Կիլիկյան խմբի հայկական նշանագրերի մեջ, մեր կարծիքով, գաղափարագրեր կարելի է համարել հետևյալ 15 նշանագրերը.

—աղանդ

—Անտիոք

—արեգակ

—աւետարան

—եկեղեցի

—հրեշտակ

—ղամբար

—քաղաք

—ճանապարհ

—մարդ

—յանդուգն

—յափշտակել

—պայծառ

—սատանայ

—փարաւոն[21]

Այսպիսով, եթե հաշվի չառնենք վերջին 15 գաղափարագրերը, Կիլիկյան խմբի մյուս նշանագրերի մասին հաստատապես կարող ենք ասել, որ նրանց բոլորի հիմքում հայկական տառաձևերն են ընկած։

Չի՞ կարող պատահել, որ Վարդան Արևելցուց առաջ գոյություն ունեցած լիներ հայկական նշանագրերի նախնական մի այլ ցուցակ՝ թարգմանված կամ փոխառված շատ հնում, անգամ Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանության ժամանակ և զետեղված նրա հավելվածում։ Անհավանական չէ, բայց այդ դեպքում մենք պիտի ընդունենք, որ հին ցուցակի նշանագրերը հիմնավորապես ձևափոխվել են 13-րդ դարում գործածական բոլորգիր տառերի հիման վրա, իսկ այդ՝ անկարելի է։

Հարց է առաջանում, եթե Կիլիկյան նշանագրերի խումբը կազմված է հայկական տառաձևերից և նրա նպատակը եղել է սղագրությունը, ապա կա՞ն փաստեր, որ այդ նշանագրերը երբևէ ձեռագրերում գործածված լինեն որպես սղագրություն։ Դրա անհերքելի ապացույց տալիս է Մատենադարանի № 644 ձեռագիրը, ուր ընդօրինակված տեքստերը գրված են այնպիսի հապավումնե-

---

[21] Պրոֆ. Հ. Աճառյանը ևս նշված գաղափարագրերից մի քանիսը հայկական տառաձևերից առաջացած նշանագրեր է համարում։

րով. որ ամենափորձված աղբյուրագետն անգամ, առանց ձեռքի տակ ունենալու հայկական նշանագրերի ցուցակը, կդժվարանա վերծանել։

Այսպիսով, Կիլիկյան խմբի հայկական նշանագրության ուսումնասիրությունից պարզվում է, որ այն առաջացել է 13-րդ դարում և նրա հավանական հեղինակն է Վարդան Արևելցին։ Նշանագրերի այս խմբի մեծամասնությունը կազմված է հայկական տառաձևերի ձևափոխություններից։ Նշանագրերի ստեղծման նպատակը որոշակի է եղել՝ սղագրությունը։

Մեր խոսքը վերաբերում է հայկական նշանագրերի Կիլիկյան խմբին։ Միանգամայն այլ բովանդակություն ունի նշանագրերի Երզնկայի խումբը, որը, ցավոք, դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից, թեև այն հայտնի է եղել հայ բանասիրությանը և հրատարակված Ֆրեդրիկ Մուրատի կողմից[22]։

Երզնկայի նշանագրերի ցուցակը[23], կիլիկյան խմբի համեմատությամբ, ունի հետևյալ բնորոշ առանձնահատկությունները. ա) նշանագրերը շարակարգված են ո՛չ թե ըստ հայերեն բառերի այբուբենական կարգի, այլ՝ խառը, բ) նշանագրերի ցուցակները չունեն վերնագրեր և գ) նշանագրերի մեծ մասը գաղափարագրեր են։

Ե՞րբ և ո՞ւմ կողմից է կազմվել Երզնկայի խումբը։

Հեղինակի մասին դժվարանում ենք որևէ բան ասել, որովհետև փաստական ո՛չ մի տվյալ չունենք ձեռքի տակ, իսկ կազմության ժամանակը, մեր կարծիքով, պիտի լինի 13—14-րդ դարերը։ Այդ դժվար չէ նկատել սույն խմբի այն նշանագրերից, որոնք հայկական տառանիշերի ձևափոխություններ են։ Արդ, քանի որ այս խմբի նշանագրերի հնագույն ձեռագիրը 1412 թվականից է, ուրեմն, նշանագրերի այս ցուցակի կազմության ժամանակ կարող ենք սահմանել 13—14-րդ դարերը։

Երզնկայի նշանագրերի խմբում բացառիկ արժեք են ներկայացնում գործածված ավելի քան 180 գաղափարագրերը, որոնք մի քանի տեսակների են բաժանվում։

Այս գաղափարագրերի մի մասն առարկայի պարզ պատկերն է։ Այսպես, օրինակ՝

	—լուսին		*—մատանի*
	—խորան		*—գաւազան*
	—տապանակ		*—վիշապ*
	—յոնք		*—նետ*
	—լեզու		*—պտուղ*
	—խաչ		*—աստիճան*

և այլն։

---

[22] Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1903, էջ 5—8։

[23] Նշանագրության Երզնկայի խմբի լավագույն ընդօրինակությունները պահել են Մատենադարանի № 5118 (գրված 1412 թ. Ոստակես Երզնկացու կողմից) և Բեռլինի Հայկական ֆոնդի № 805 (գրված 1561 թ. Հովասափ Սեբաստացու կողմից) ձեռագրերը։

Գաղափարագրերի մի մասը արտահայտում է տվյալ բառի բնորոշ իմաստը։ Այսպես, օրինակ՝

—**աղբիւր**—*կլոր մի կետ, որից սկիզբ է առնում և հոսում ջուրը.*

—**փառասէր**—*իրար վրա բարձրացող օղակներ.*

—**արծաթասէր**—*բերանը բաց արած մեծ քսակ.*

—**մեղաւոր**—*գլուխ՝ կարիճի ճանկերով.*

—**կեղծաւոր**—*լեզու, որ երկու մասի է բաժանված.*

—**քաղաք**—*պարիսպով շրջափակված տարածություն.*

—**գարուն**—*գարնան սիմվոլ հանդիսացող թռչուններ.*

—**առաւօտ**—*արեգակի և լուսնի միջին տարածությունը.*

—**անսպառ**—*կլոր գիծ.*

—**հեթանոս**—*տաճար, որի ճակատն ուղղված է արևմուտք։*

Եվ, վերջապես, կան գաղափարագրեր, որոնք դժվար է իմաստավորել.

—*պատճառ*

—*ահաւասիկ*

—*կռապաշտ*

—*արևելք*

Կարևոր է պարզել, թե ի՞նչ աղբյուրից են ծագում Երզնկայի խմբի մեջ մտնող ավելի քան 180 գաղափարագրերը։ Միջին դարերում, հայկական նշանագրերի կազմության ժամանակ, ո՛չ Հայաստանում և ո՛չ էլ հարևան որևէ երկրում, գաղափարագրով գրչություն գոյություն չուներ, որ կարելի լիներ մտածել, թե գրչության արվեստով զբաղվող մեկը սղագրություն ստեղծելու համար պատճենահանումներ է կատարել։ Կարելի էր նաև ենթադրել, որ մեկը երևի սղագրության նշաններ է ստեղծել ըստ իր նախասիրության՝ նշանագրերը ձևելով այնպես, ինչպես ուզում է, սակայն այդ ևս բացառվում է, քանի որ նշանագրության մեծ մասն իր համապատասխանությունն ունի այլ ժողովուրդների գործածական գաղափարագրության մեջ[24]։

Նշանագրերի ատաղձի մասին խոսել ենք մեր «Հայ գրի և գրչության պատմության» մեջ և եկել այն հետևության, որ հայկական նշանագրերը որոշ նմանություններ ունեն Հնդկաստանի Մոխենջո-Դարոյի գաղափարագրության հետ և անհավանական չէ, որ հայկական այդ նշանագրերի մի մասը հայկական ներկա գրության մեջ անցած լինի մեհենական գաղափարագրությունից։

Ի դեպ, եղել են ուսումնասիրողներ, որոնք խոսելով մեր այս եզրակացության մասին, գործն այնպես են ներկայացրել, որ մենք իբրև թե այդ հարցն ա-

---

[24] **Ա. Գ. Աբրահամյան,** *Հայ գրի և գրչության պատմություն,* էջ 164—167։

ռաջ ենք քաշել անվիճելի ձևով։ Իրականության մեջ, այդ հարցը մեր կողմից առաջ է քաշված մեծ զգուշությամբ։ Ավելորդ չենք համարում այստեղ կրկնել մեր նախորդ եզրակացությունը. «Գրության այս կամ այն սիստեմի համեմատությունը մի ուրիշի հետ միշտ էլ կարող է նմանություններ տալ, մանավանդ որ մեր ձեռքի տակ եղած ցանկի հայկական նշանագրերը 180-ից անցնում են, իսկ այդքան մեծ թվով նշանագրերի մեջ միշտ էլ կարելի է նմանվող նշանագրեր գտնել։ Սակայն այստեղ խոսքը իրար նմանվող առանձին նշանագրերի մասին չէ, այլ ողջ սիստեմի։

Մենք հեռու ենք այս նմանությունների հիման վրա հապճեպ եզրակացություններ անելուց՝ գրության մի սիստեմը բխեցնելու մյուսից, սակայն չենք կարող և աչք փակել այս նմանությունների վրա։ Եթե հայկական նշանագրերը ստեղծված լինեին առանձին անհատի կողմից և նրա մտացածին քմահաճույքով, կարծում ենք, այսպիսի տառացի նմանություններ քիչ հավանական են»[25]։

«Նշանագիրք իմաստնոց»-ի ներկա ցանկը, ինչպես և «Գաղափարագրեր» գլխի հավելվածում տրվածը, կազմված է Մաշտոցի անվան մատենադարանի շուրջ 50 ձեռագրերի հիման վրա։ Գրչագրերում գաղափարագրերը և սղագրության նշանները բերվում են իրար հետ խառը, իսկ մենք աշխատել ենք նրանք առանձնացնել իրարից և տալ սղագրության նշանները՝ «Նշանագիրք իմաստնոց» գլխի տակ, իսկ հիերոգլիֆները՝ «Գաղափարագրեր»-ում։ Դյուրին գործ չի եղել այդ առանձնացումը կատարելը, քանի որ նրանց մեջ պատահում են այնպիսի նշանագրեր, որոնք չնայած ստեղծված են հայկական տառանիշի հիմքի վրա, բայց տրված են այնքան մեծ փոփոխությամբ, որ հաճախ դժվար է նրանց մայրերը ճանաչելը։ Պատահում են նաև գաղափարագրեր, որոնք որոշ նմանություններ ունեն հայկական տառանիշերին և կարելի է շփոթել նրանք։ Այդ պայմաններում, հասկանալի է, մեր կատարած առանձնացումների մեջ հնարավոր են և վրիպումներ։

Անկարելի էր բերել Մատենադարանի ավելի քան հիսուն ձեռագրերի պարունակած բոլոր նշանագրերն իրենց տարբերակներով. դրա համար անհրաժեշտ կլիներ մի քանի հատորից բաղկացած բնագիր կազմել, որը դուրս էր ներկա աշխատության նպատակից։ Մենք հիմք ենք վերցրել տարբեր խմբեր կազմող ձեռագրերից հնագույնները և ընտրել ենք միայն նրանք, որոնք չեն հանդիպում մյուս ձեռագրերում։ Պատահել է նաև շատ քիչ դեպքեր, երբ անհրաժեշտ է եղել դիմելու տվյալ խմբի մեջ մտնող այլ տարբերակ ունեցող ձեռագրերի նշանագրերին։

Գաղափարագրերի և սղագրության նշանների ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականների գործը դյուրացնելու նպատակով, ցանկերում բերված յուրաքանչյուր սղագրության և գաղափարագիր նշանի մոտ դրել ենք լիտերներ, որոնք ցույց են տալիս, թե տվյալ նշանագիրը որ ձեռագրում է մեզ հանդիպում։

---

[25] Ա. Գ. Աբրահամյան. *Հայ գրի և գրչության պատմություն*, էջ 164։

Լիտերների տակ ներկայացված են հետևյալ ձեռագրերը։

A № 2371 ձեռագիր, թ. 74ա—76բ։ Վերնագրված է «Նշանագիրք»։ Գրված է Սուրխաթում, Ստեփանոս գրչի կողմից 1357 թվականին (այս խմբին են պատկանում՝ №№ 266, 7250, 267, 1719, 2370, 2381, 2291, 2331, 2526, 8537)[26]։

B № 4149 ձեռագիր, թ. 363—368 ա։ Վերնագրված է. «Նշանագիր այբուբենի»։ Ընդօրինակված է 1304—1305 թթ. Կարապետ երեցի կողմից։ Նախագաղափար ձեռագիրը 13-րդ դարից է (նույն խմբին են պատկանում №№ 8198, 8106, 3197, 538, 2190, 3318 և 2567 ձեռագրերը)։

Г № 750 ձեռագիր, թ. 126ա—129ա։ Վերնագրված է «Նշանագիր անուանց կարճաբանութիւն»։ Գրված է Կիլիկիայում, Սարգիս գրչի կողմից։ Ձեռագրի գրչությունը 14-րդ դարից է (այս խմբին են պատկանում №№ 341, 2544, 2619, 3119, 5809, 8198 ձեռագրերը)։

E № 7117 ձեռագիր, թ. 320բ—322բ։ Վերնագրված է «Նշանագիր»։ Ընդօրինակված է 1440 թ. Հովհաննես Արճիշեցու կողմից։ Այս խմբի ձեռագրերից է № 123 գրչագիրը և Բեռլինի Կայսերական գրադարանի հայկական ֆոնդի № 805 ձեռագրի երկրորդ մասը։

Z № 535 ձեռագիր, թ. 238բ—244ա։ Բնագիրը չունի վերնագիր։ Հայտնի չէ գրիչը և գրչության վայրը։

Ж № 5118 ձեռագիր, թ. 378բ—381բ։ Առանց վերնագրի։ Ձեռագիրն ընդօրինակված է Ռստակես Սեբաստացու կողմից Ավագ վանքի գրչության դպրոցում (այս խմբին են պատկանում №№ 2081, 8504, 3177 ձեռագրերը և Բեռլինի Կայսերական գրադարանի հայկական ֆոնդի № 805 ձեռագրի առաջին մասը)։

K № 3105 ձեռագիր, թ. 7բ։ Վերնագրված է «Նշանագիր»։ Ընդօրինակված է Թովմա գրչի կողմից։ Ձեռագրի գրչությունը 15-րդ դարից է (այս խմբին են պատկանում №№ 3119 և 3107 ձեռագրերը)։

У № 2000 ձեռագիր, թ. 187ա—195բ։ Վերնագրված է «Բացատրութիւն յառաջնոց գրոց և նշանագրաց»։ Ընդօրինակված է Գրիգոր գրչի կողմից 17-րդ դարում։

П № 2623 ձեռագիր, թ. 558բ—559ա։ Բնագիրը վերնագիր չունի։ Ընդօրինակված է 1662 թ. Բաղեշում, Թումա Բաղիշեցու կողմից. (այս խմբին է պատկանում № 449 ձեռագիրը)։

X № 715 ձեռագիր, թ. 150բ—152ա։ Առանց վերնագրի։ Ընդօրինակված է Պողոս անապատում Հովհաննես գրչի կողմից 13-րդ դարում։

T Քաղված է տոմարական և աստղագիտական բովանդակություն ունեցող ձեռագրերից։

---

[26] Այս և մյուս նշանագրություն պարունակող ձեռագրերի բիբլիոգրաֆիան հրատարակված է մեր «Հայ գրի և գրչության պատմություն» մեջ [illegible]

Սղագրության նշաններ

	Աբիսողոմ
	Աբրահամ
	Ահարոն
	աղաղակ
	աղանի
	Աղեքսանդր
	աղքատ
	աղաւթք
	Ամբակում
	ամբարիշտ
	ամբարտաւան
	ամենայն
	ամենեքեան
	ամենեցուն
	ամենեսին
	ամենեքեան
	ամենեքումբք
	ամաւթ
	այգոսիկ
	այգորիկ
	այգոցիկ
	այդոքիկ
	այդչափ
	այդպէս
	այնոսիկ
	այնորիկ
	այնոցիկ
	այնոքիկ
	այնուհետև
	այնչափ
	այնպէս
	այսոսիկ
	այնորիկ
	այսոցիկ
	այսոքիկ
	այսուհետև
	այսչափ
	այսպէս
	այսաւր
	անամաւթ
	անապական
	անասուն

 Ж	անառակ
 В	անբարիշտ
 Z	անգամ
 У	անգոսն
 Z	անդամ
 В	Անդոն
 Ж	անդորր
 В	անդունդ
 В	անդուստ
 В Z	անդրանիկ
 Г	Անդրէ
 С	Անդրէաս
 У	անկործան
 Г Z	անձն
 У	անձրև
 У	անճառ
 Ж	անողորմ
 У	անսաստ
 В	Անտոն
 В	անութ
 У	անուրէն
 В N	աշակերտ
 Г	աշխարհ
 В N	աշտանակ
 В Г	աշտարակ
 Z	ապաշխարհ
 Z	ապաստան
 В	առագաստ
 П Z	առաջնորդ
 Z	առաջ
 N Z	առաւաւտ
 У	առաքեալ
 Г Z	առիւծ
 В	առհաւատչեայ
 П	ասաց
 Ж	ասեմ
 Z	ասպարէզ
 Ж	աստուած
 Г Ж	աստուածածին
 У	արարած
 У	արարիչ
 В	արգանդ
 К	արդար
 В	արդեոք
 В	արհամարհել
 Г	Արտաւան

	Բաբելոն
	բազուկ
	բազում
	բամբասել
	բայց
	բանալի
	Բասիլ
	բարբառ
	բարբառել
	բարեբանել
	բարեգութ
	բարեխնամ
	բարեխաւս
	բարեկամ
	բարեպաշտ
	բարեբար
	Բարթուղիմէոս
	բարի
	բարձր
	Բարսեղ
	բարւոք
	բաւական
	Բենիամին

	բերան
	բժիշկ
	բժշկապետ
	բիւր
	բոլորովին
	բորբոքել
	բուրաստան
	բռնադատ
	բռնաւոր
	Գաբրիէլ
	Գայիոս
	գայթակղել
	գարշապար
	գարուն
	գաւազան
	գաւառ
	գաւառապետ
	գեղեցիկ
	գերագոյն
	գերազանց
	գերեզման
	գիշեր
	Գէորգ

	Գողգոթա
	գովել
	գործ
	գուշակ
	գրել
	Գրիգոր
	դահեկան
	Դանիէլ
	դատապարտել
	դատաստան
	դատաւոր
	դարձեալ
	դաւաճան
	Դաւիթ
	դժոխք
	դիմա
	դոյնպէս
	դորա
	դուռն
	դպիր
	դրախտ
	դրամ
	դրունք
	Եգիպտոս
	Եզեկիա
	եղբայր
	Եղիազար
	Եղիա
	Եղիսաբէթ
	Եղիսէ
	եղիցի
	եպիսկոպոս
	Եսայի
	երբեմն
	երբէք
	Երեմիա
	երիտասարդ
	երկայնամիտ
	երկաքանչիւր
	երկիւղ
	երկնաւոր
	երկպառակ
	երկրաւոր
	երջանիկ
	զայդ
	զանազան

	զարհուրել		Թադէոս
	զարմանք		թանաք
	զուակ		թեթև
	Զաքարիա		թևաւոր
	զգաստ		Թեոդորոս
	զգոյշ		թշնամի
	զիարդ		Թովմաս
	զինուոր		թռչուն
	զինչ		ժամանակ
	զոր օրինակ		ժառանգ
	զուարթ		ժառանգաւոր
	զուարճ		ժողովուրդ
	զուգաւոր		ժուժկալ
	Զաւրաբաբէլ		իբրև
	զաւրաւոր		իմաստուն
	զարմանք		իշխան
	Էմանուէլ		իսկ
	ընդ		իւրեանս
	ընդդէմ		իւրեանց
	ընթերցուած		լեառն
	ընկալ		լեզու
	ըստ		լուալ
	թագաւոր		լսել

	խնամել
	խնամի
	խնդիր
	խնդրուած
	խոնարհ
	խոստովան
	Խոսրովիդուխտ
	խռովարար
	խռովել
	խստերախ
	ծաղիկ
	ծաղր
	ծառայ
	ծեր
	ծնաւ
	կաթողիկոս
	կաթողիկէ
	կամ
	կարգ
	կեղծ
	կեղծաւոր
	կենդանի
	կերակուր

	կիւրակէ
	Կիրակոս
	կոյս
	Կոստանդին
	կռապաշտ
	կրկին
	կրաւն
	հազարապետ
	հակառակ
	համառաւտ
	համարձակ
	համբաւ
	համբերել
	համեմատ
	հայհոյել
	հայր
	հանապազ
	հանգիստ
	հանդարտ
	հանդէպ
	հանդուրժել
	հանճար
	հասարակ

	հարազատ
	հարուս
	հարկ
	հաւասար
	հաւատ
	հաւատամ
	հեթանոս
	հեռաւոր
	հերձուածող
	Հերովդէս
	հիւանդ
	հիւսիս
	հմուտ
	հնազանդ
	հոգևոր
	հոգով
	հոգոց
	հովանի
	հպարտ
	հրամայել
	հրաւիրել
	հրեշտակ
	ձայն

	ձեռն
	ձև
	ձիր
	ձմեռն
	ձուկ
	ղեկ
	Ղևոնդ
	Ղովտ
	Ղուկաս
	ճանաչել
	ճառագայթ
	ճարտար
	ճարտարապետ
	ճգնաւոր
	ճնճղուկ
	ճշմարիտ
	Մակեդոնիա
	մահապարտ
	Մանասէ
	մանաւանդ
	մասն
	մատակարար
	Մատթէոս

	մարգարէ
	մարդ
	մարգասէր
	Մարիամ
	Մարկոս
	մարմին
	մարմնաւոր
	Մարտիրոս
	Մելքիսեդեկ
	մեծամեծ
	մեղաւոր
	Մեսրոպ
	մերձեցում
	մինչ
	միջնորդ
	միտք
	միւս անգամ
	Մխիթար
	մշտնջենաւոր
	մոլորեալ
	մոռացեալ
	Մովսէս
	յաղագս

	Յակոբ
	յայնժամ
	յանդիման
	յառաջագոյն
	յաւիտեան
	յետ այսորիկ
	յաւժար
	Յովհաննէս
	Յորդանան
	յորդոր
	յորժամ
	Յուդա
	Յունան
	Յուստինիանոս
	Նաբուգոդոնոսոր
	նաժիշտ
	նահապետ
	Նահատակ
	Նմա
	նոյնպէս
	նոսա
	նորա
	նորոգել

	նոցա		ութիւն
	շաբաթ		ուխտաւոր
	շարական		ումեմն
	շաւիղ		ուրախ
	շնորհ		չարախաւս
	շունչ		չարաչար
	շուշան		չափաւոր
	շուրջ		պայծառ
	շուրջառ		պանդուխտ
	շտեմարան		պատարագ
	շաւշափել		պատգամ
	ողորմած		պատերազմ
	ողջակէզ		պատճառ
	ողջոյն		պատմուճան
	որդի		պատշաճ
	որդոց		պատուական
	որդւոյն		պատուհաս
	որդւովք		պատրաստ
	որովայն		պարարտ
	որշափ ես		պարգեւ
	որպէս		Պետրոս
	ութեան		պոռնիկ
	ութեանց		պսակ

	Պաւղոս		վասն այդորիկ
	ջնջել		վասն այսոցիկ
	ջուր		վասն այսորիկ
	ջրհեղեղ		վասն զի
	Ռոստակէս		վասն որոյ
	սակաւ		Վարդան
	սաղմոս		վարդապետ
	Սամուէլ		վերայ
	սանդարամետ		վերուստ
	Սարգիս		վերջ
	Սաւուղ		վիշապ
	Սերովբէ		վկայ
	սմա		Վրթանէս
	Սողոմոն		տաճար
	ստեղծել		տարապարտ
	Ստեփանոս		Տիմոթէոս
	սրտմտել		Տիտոս
	սրբովք		Տրդատ
	սրբոց		տրտմել
	սքանչ		տրտում
	վախճան		ցանկ
	վայելուչ		ցնծալ
	վասն		ցնորք

В	փայլատակ	В	քահանայ
В	փայտ	Ж	քահանայապետ
В	փառաւոր	У	քան
Д	փառք	В	քանզի
В	փափագ	В	քաջալերեաց
В	Փենեհէզ	В	քարկոծ
В	փիլիսոփայ	В	քարոզ
В	փոր	Ж	Քերովբէ
П	փորձութիւն	Ж	քոյր
Е	փոքր	Ж	աւձ
В	փրկիչ	В С	աւրհնութիւն
П	փրկութիւն	В	աւրինակ

XIII. ԳԱՂԱՓԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ձեռագրերում և հնատիպ գրականության մեջ մեկ-մեկ հանդիպում են նաև գաղափարանշաններ (հիերոգլիֆ նշաններ)։ Այդպիսիք մեծ մասամբ գործ են ածված տոմարական, տիեզերագիտական, ալքիմիական և ախտարական գրականության մեջ։ Այդ գաղափարանշանների մի մասի նշանակությունը պարզված է, հայտնի են նրանց վերծանությունները. իսկ մյուս մասի՝ գլխավորապես ախտարական գրականության մեջ գործածված նշանագրերի, իմաստը դեռ մնում է չբացահայտված։

Տոմարական և տիեզերագիտական բովանդակություն ունեցող հայկական բնագրերում գրեթե միշտ նշանագրերով են գրվում «արեգակի», «լուսնի», «աշխարհի», «երկրի», «երկնքի», «աստղի», հինգ մոլորակների (Հրատ, Փայլածու. Լուսաբեր, Լուսնթագ, Երևակ) և տասներկու համաստեղության անունները (Խոյ. Ցուլ, Երկվորյակ, Խեցգետին, Առյուծ, Կույս, Կշեռք, Կարիճ, Աղեղնավոր, Այծեղջյուր, Ջրհոս և Ձուկ)։ Քիչ կարելի է հանդիպել տիեզերագիտական և տոմարական ձեռագրի կամ հնատիպ բնագրերի, որոնց մեջ նշված անունները գրված չլինեն գաղափարանշաններով։ Տարվա չորս ժամանակները ցույց տվող գաղափարագրերը (գարուն, ամառ, աշուն և ձմեռ), աշխարհագրական չորս կողմերի գաղափարագրերը (արևելք, արևմուտք, հարավ, հյուսիս) և մի քանի ուրիշները բնագրերում, համեմատաբար քիչ են օգտագործված։

Դժվար է ասել, թե տիեզերագիտական ու տոմարագիտական այս գաղափարանշանները երբ են մուտք գործել հայ մատենագրություն։ Առկա մատենագրական տվյալները, դժբախտաբար, հնարավորություն չեն տալիս պատասխանելու այդ հարցին։ Սակայն պետք է ենթադրել, որ նրանց գործածությունն հայ իրականության մեջ վաղ ժամանակներից է սկսվում, հավանաբար՝ հեթանոսական ժամանակաշրջանից, իսկ հետագայում ավանդաբար անցել և մուտք է գործել մաշտոցյան մատենագրություն։

Ենթադրություններ են եղել, որ Հայաստանում հեթանոսական շրջանում քրմերի համար օրացույց են ծառայել բրոնզե գոտիները։ Նման մի գոտի հողային աշխատանքների ժամանակ գտնվել է 1946 թ. Սանահինում։ Գոտու վրա փորագրված են արևի, լուսնի, ձիու և թռչունների պատկերներ, եռանկյունիներ, ռոմբեր և այլ գծանկարներ։ Աստղագետ Բ. Թումանյանը և հնագետ Հ. Մնացականյանը հանդես են եկել հատուկ հաղորդումով և անվերապահ ընդունել այս գոտու օրացույց հանդիսանալը[1], թեև մեր անձնական կարծիքով· այդ գոտին օրացույց համարելը թեական է։

Հայաստանում աստղագիտական նշանագրության՝ վաղ շրջանում գործածության մասին դրական կարծիք են հայտնել աստղագետ մի շարք մասնագետներ (ֆրանսիացի հայտնի աստղագետ Կ. Ֆլամմիրոնը, անգլիացի տոմարագետ Ա. Բերրին, ռուս աստղագետ Վ. Ռոսովսկայան և ուրիշներ)։ Նրանցից ոմանք նույնիսկ ենթադրում են, որ աստղագիտական գաղափարանշանների, մասնավորապես համաստեղության գաղափարանշանների, նախնական հայրենիքը պետք է փնտրել պատմական Հայաստանում։

Այսպես, աստղագիտության լավագիտակ մասնագետ Վ. Տ. Օլկոտտը, խոսելով համաստեղության նշանագրերի գործածության մասին վաղ շրջանում, գրում է. «Աստղաբաշխության տվյալները համապատասխանում են պատմական ու հնագիտական ուսումնասիրություններին այն բանում, որ համաստեղությունների հնագույն ձևերը հորինող մարդիկ, հավանաբար, ապրել են Եփրատի հովտում, ինչպես նաև՝ Արարատ լեռան մոտիկ շրջաններում»։ Այնուհետև քննության առնելով համաստեղության նշաններն առանձին-առանձին, նա եկել է հետևյալ եզրակացության. «Նկատելի է, որ համաստեղությունները պատկերող ձևերի թվում բացակայում են հետևյալ կենդանիները՝ փղերը, ուղտը, գետաձին, կոկորդիլոսը և վագրը. դրա համար էլ մենք կարող ենք հաստատել, որ ոչ Հնդկաստանը, ոչ Արաբիան և ոչ էլ Եգիպտոսը չեն կարող լինել այն վայրը, ուր ծնվել է երկնային սֆերայի գաղափարը։ Հունաստանը, Իտալիան և Իսպանիան մենք կարող ենք դուրս հանել այդ ցանկից այն պատճառաբանությամբ, որ համաստեղությունների թվում գոյություն ունի առյուծի պատկերը։ Այսպիսով, հարցին զուտ տրամաբանորեն մոտենալով, մենք կարող ենք հաստատել, որ աստղային պատկերների հայրենիքը կարող էր լինել Փոքր Ասիան և Հայաստանը, այսինքն այն վայրը, որը սահմանափակված է Սև, Միջերկրական, Կասպից և էգեյան ծովերով»[2]։

Տոմարական և տիեզերական գաղափարանշանները մեզանում միատեսակ չեն. ժամանակի ընթացքում նրանք ենթարկվել են զգալի փոփոխությունների, թեև նրանց հիմնական կմախքը մնացել է անփոփոխ և քիչ է տարբերվում մյուս ժողովուրդների մատենագրության մեջ գործածված նույն գաղափարանիշերից։ Հայկական այդ գաղափարանիշերի նմանությունն առանձնապես մեծ է հունական նշանագրության հետ։

Հայ մատենագրության մեջ պահպանված տոմարական և տիեզերագիտական նշանագրությունը բազմիցս հրատարակված է և հայտնի մասնագետներին։ Վերջերս դրանց փոքրիկ մի ցանկ հրատարակեց աստղագիտության պատ-

---

[1] Տե՛ս Բ. Թումանյան, Հ. Մնացականյան, Բրոնզի դարի գոտի-օրացույց, Երևան, 1965, էջ 12—16։

[2] **В. Олькотт,** Легенды звездного мира, СПб., 1914, էջ 14—16։

մարան Թ. Թումանյանը։ «Նշանագիրք իմաստնոցների» մեջ ավանդված գաղափարագրերի մեծ մասը հրատարակվել է Հ. Աճառյանի և այլ հեղինակների կողմից։ Այդ մասին խոսք կլինի ստորև։

Այստեղ անհրաժեշտ ենք համարում բերել մոլորակների և կենդանակերպերի գաղափարագրերը։

Մոլորակների գաղափարագրեր


Փայլածու
Արուսյակ
Լուսին
Հրատ
Լուսնթագ
Երևակ
Արեգակ

Տասներկու կենդանիների գաղափարագրեր


Խոյ
Ցուլ
Երկվոր
Խեցգետին
Առյուծ
Կույս
Կշիռ
Կարիճ
Աղեղնավոր
Այծեղջյուր
Ջրհոս
Ձուկն

Ալքիմիական, քիմիական և արհեստագործական բովանդակություն ունեցող բնագրերում սովորաբար գաղափարագրված են լինում հետևյալ յոթը նյութերի անուններ.

	Ոսկի
	Արծաթ
	*Երկաթ*
	Անդիկ
	Պղինձ
	Անագ
	Արճիճ

Այս գաղափարանշանների գործածության հիմնական նպատակը գաղտնագրությունն է։ Հաճախ պատահում է, որ արհեստագործական որոշ բնագրեր գրի են առնվում նույնիսկ ծածկագիր նշաններով։ Մասնագետ վարպետը չի ցանկանում, որ իր արհեստի գաղտնիքները հայտնի դառնան բոլորին։ Ալքիմիական մի ձեռագրում գրիչը արվեստի գաղտնապահության մասին թողել է հետևյալ դիտողությունը. «Վարդապետք և երգողք արուեստիս այս մթին և տարակուսանօք խօսեալ են, զի եթէ յայտնի և պարզ խօսեալ էին՝ ամենեքեան իմանային և ուսանէին, և արուեստս այս անարժան լինէր։ Եւ կամ պատճառ մի այլ կա. զի մի ոք զկնի իմաստասիրացն ընթեռնոյր և իմանայր և ուսանէր, և վասն նախանձու այրէր կամ կորուսանէր և զինքն իմաստուն ցուցանէր»[3]։

Մի այլ հեղինակ անդրադառնալով արհեստագործությունը գաղափարանշաններով ու ծածկագրերով գրելու պատճառին, հետևյալ բացատրությունն է տալիս. «Եթէ զգաղտնիս բնութեան, որով ծածկեալ կայ ամենայն իմաստասիրութիւն աշխարհիս, ամէն ոք գիտէր՝ դադարէր զդպրութիւն, վարդապետութիւն, իմաստութիւն և անուն, վասն որոյ ամենայն ոք տանջի՛ և ջանայ, զի այսոքիկ ընկալցի և ստասցի։ Զնոյն և արհամար[հ]ելի լիննայր իմաստութիւն աշխարհիս, և իմաստունն և անիմաստն մի լինայր, և ոչ կամենայր ուսանիլ, և այսպէս կորրնչէր համբաւն, անուն, և փառք, և հարգիքն աշխարհիս և ամենայնքն հաւասար լինէին»[4]։

Ալքիմիական որոշ բնագրերում արհեստագործական նշված յոթը նյութերը գործ են ածված ո՛չ թե գաղափարանշաններով, այլ՝ Արեգակի, Լուսնի և յոթը մոլորակների փոխադարձված անուններով՝ հայերեն կամ արաբերեն։ Նրանք ունեն հետևյալ հոմանիշերը.

---

[3] Կ. Գ. Ղաֆադարյան, *Ալքիմիան պատմական Հայաստանում*, Երևան, 1940, էջ 15։

[4] Նույն տեղում։

Ոսկի	Արև	Շամս
Արծաթ	Լուսին	Ղամեր
Երկաթ	Հրատ	Մառեխ
Սնդիկ	Փայլածու	Օտարիտ
Պղինձ	Արուսեակ	Մուշտարի
Անագ	Լուսնթագ	Զոհրե
Արճիճ	Երևակ	Զոհալ

Գաղափարանշանների չորրորդ խումբը հանդիպում է ախտարական բնագրերում, մասնավորապես հմայիլների[5] մեջ։ Այստեղ նրանք հանդես չեն գալիս միայն առանձին նշանագրերով, այլ՝ ամբողջական բնագրերով, որոնց իմաստը դեռ չի բացահայտված։

Հայտնի է, որ վաղ քրիստոնեական մի շարք գործիչներ քիչ ջանք ու եռանդ չեն գործադրել հեթանոսական վերապրուկները արմատախիլ անելու ուղղությամբ, այդ թվում նաև արգելելու հմայագրությունը։ Հայ եկեղեցու մի քանի աչքի ընկնող գործիչներ հատուկ աշխատություններ են գրել ընդդեմ բախտագուշակների, կախարդությամբ ու մոգական բժշկությամբ զբաղվողների և հմայագրությամբ պարապող գրբացների։

Եղիշեն իր «Արարածոց մեկնության» մեջ սպանիչ քննադատության է ենթարկել հեթանոսական նշանագրերով «փիթթիկներ» գրող կախարդներին, որոնք «նշանագրեր են գծում», գուշակություններ անում և խաբեբայությամբ զբաղվում[6]։

Հովհան Մայրավանեցին (Մայրագոմեցին) իր մի ճառում, որն ունի «Թուղթ վասն Հմայից դիւթականաց և անօրէն յուռթողաց» վերնագիրը, դատապարտում է հմայիչներին, դյութերին, թովիչներին և բախտագուշակներին, որոնք գրում են «գիր պահարանաց» այսինքն՝ հմայիլներ, և բժշկություններ անում[7]։

Վարդան Այգեկցին «Վասն կռապաշտութեան» քարոզում անդրադառնալով հեթանոսական շրջանից եկած որոշ սովորությունների, նրանցից հատկապես նշում է «Ուսումն ծրարագործութեան և այլ փաթեթք սատանայական», որոնցով գրբացները խաբում են խավարամիտներին և զանազան չարագործություններ անում[8]։

Հմայիլների նշանագրությամբ ի մասնավորի զբաղվել է Լ. Խաչիկյանը։ Նա ուսումնասիրել է Մաշտոցի անվան մատենադարանի ութ հմայիլների պարունակած նշանագրերը և շուրջ 160 նշանագիր հրատարակել իր «Նախամեսրոպյան գրի հարցը և հմայագրեր» հոդվածում[9]։ Մատենացույց անելով վերոհիշյալ երբ մատենագիրների վկայությունները հմայագրերի մասին, նա հանգել է հետևյալ եզրակացության. «Դրանք (այսինքն՝ հմայագրերը) Եղիշեի, Հովհան Մայրավանեցու, Վարդան Այգեկցու և այլ հեղինակների մեջ արդեն ծանոթ վկայությունների լույսի տակ՝ դադարում են ախտարական անիմաստ ու մտացածին խզբզանքներ համարվելուց և ստանում որոշակի նշանակություն հայ ժողովրդի գրավոր մշակույթի սաղմնային վիճակի մասին շոշափելի տվյալներ պարունակելու առումով»[10]։

---

[5] Հմայիլները ժապավենաձև նեղ փաթեթներ են, երբեմն տաս և ավելի մետր երկարությամբ։ Իրենց տեսքով նրանք նմանվում են Հին Արևելքում գործածված սովորական պապիրուսների և մագաղաթի փաթեթներին։ Նրանք մեծ մասամբ պարունակում են ախտարական բովանդակությամբ նյութեր՝ գրված հայկական տառանիշերով։

[6] «Մատենագրութիւնք Եղիշէի», էջ 376։

[7] Տե՛ս «Ճառք տեառն Յովհաննու Մանդակունւոյ», Վենետիկ, 1896։

[8] ՄԱՄ ձեռ. № 8030, թ. 209ա։

[9] ՊԲՀ, 1963, № 4, էջ 145—157։

Հմայագրերի ուսումնասիրությունը Լ. Խաչիկյանին բերել է հավանական այն հետևության, որ այդ հմայագրերը նախամեսրոպյան հայկական նշանագրեր են. «Այդպիսի պրիմիտիվ մտքեր գրանցելու համար հեթանոսական ժամանակներում Հայաստանում կային, ուրեմն, ինչ-որ նշանագրեր (հավանաբար գաղափարագրեր), որոնց դեմ երկար դարեր պայքարում էին հայոց եկեղեցու գաղափարախոսները»[11]։

Մատենադարանի «Հմայիլ»-ները, դժբախտաբար, շատ հին չեն. հնագույնը՝ 1499 թվականից է[12], մյուսները՝ 17—18-րդ դարերից, ուստի եթե անգամ անվերապահ ընդունելու լինենք, որ նրանք նախամեսրոպյան գրության նմուշներից են, դարձյալ դժվար կլինի նրանց մասին ճիշտ պատկերացում կազմել, քանի որ այդ նույն «Հմայիլ» գրող անձինք ևս չեն հասկացել նշանագրերի նշանակությունը և դարերի ընթացքում ձեռքից ձեռք արտագրելու ժամանակ զգալի փոփոխությունների են ենթարկվել։ Ընդ որում, հմայագրության մեջ ուշ դարերում մուծվել են հայկական տառանիշեր։

Հրապարակելով հմայագրերը, Լ. Խաչիկյանը չի փորձել նրանք համեմատության մեջ դնել «Նշանագիրք իմաստնոցի» գաղափարագրերի հետ, որը կարևոր է նրանց ազգակցությունը և փոխազդեցությունը պարզաբանելու տեսանկյունից։ Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ հմայագրերի մեջ կան երեսուններեք նշանագրեր, որոնք իրենց նմանաձև երկվորյակներն ունեն «Նշանագիրք իմաստնոցներում»։ Այդ նմանությունների հիման վրա չի կարելի, իհարկե, հապճեպ և անվերապահ եզրակացություններ անել նրանց նույնության մասին, քանի որ որոշ նշանագրերի նմանությունը կարող է պատահական և խաբուսիկ լինել։ Տարբեր կարող է լինել նաև նրանց իմաստը։ Բացառված չէ, որ հմայագրերի և «Նշանագիրք իմաստնոցի» պարունակած գաղափարագրերի միջև գոյություն ունեցած լինի որոշ ազգակցություն։ Ստորև բերում ենք համեմատական մի ցանկ[13]։

---

[10] ՊԲՀ, 1963, № 4, էջ 156։

[11] Անդ։

[12] Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց ՄԱՄ»-ի, Հ. Ա, էջ 1243 (Հմայիլը գրված է Կարապետ երեցի կողմից Հաճընու երկրի Եղեռվիտ գյուղում)։

[13] Հմայագրերը վերցված են Լ. Խաչիկյանի հրատարակությունից (ՊԲՀ, 1963, № 4, էջ 154—155), իսկ «Նշանագիրք իմաստնոցի» գաղափարանշանները՝ ձեռագրերից։ Գաղափարանշանների կողքին գրված մենագրերը ցույց են տալիս այն ձեռագրերը, ուր գործ են ածված նրանք (մենագրերի վերծանությունը տրված է վերևում)։

Հմայագրեր	Գաղափարանշաններ	Իմաստը	Հմայագրեր	Գաղափարանշաններ	Իմաստը
	 В	աղանդ		 Ж	երկինք
	 Ж	աղբիւր		 Ж	երկիր
	 Ж	ամենակալ		 О	թռչուն
	 Ж	անարգ		 Ж	խորան
	 П	աշխարհ		 Ж	կախարդ
	 К	առաջնորդ		 У	հարուստ
	 Ж	առողջ		 О	հիւանդ
	 У	աստղ		 З	հրեշտակ
	 Ж	արեմուտք		 У	հոգի
	 Т	Արուսեակ		 К	ողորմել
	 Г	բաղում		 О	պատարագ
	 К	բժիշկ		 В	սանդուխք
	О	գործ		 А	սեղան
	 З	գաւազան		 О	լուսին
	 П	դրախտ		 С	որոգայթ

Հայոց գաղափարագրության համար ուշագրավ են «Նշանագիրք իմաստնոցի» նշանագրերը, որոնց ծագումը պարզելու համար անհրաժեշտ համարեցինք նրանք համեմատել Արևելքում գործածված գաղափարագիր գրությունների հետ։

Առաջին համեմատությունը կատարեցինք հեթիթականի հետ։ Ժամանակին համեմատության այդպիսի փորձ կատարել է պրոֆ. Հ. Աճառյանը։ Նա նմանություն է տեսել հետևյալ նշանագրերի մեջ[14] (տե՛ս էջ 233)։

Մեր ձեռքի տակ եղած հայկական նշանագրերի բնագիրը հնարավորություն է տալիս ընդարձակելու հնդկական և հայկական նմանվող նշանագրերի ցանկը։ Անկարելի էլ չէ, որ հեթանոս հայերը կարող էին իրենց նշանագրությունը վերցրած լինել տեղիս նախարնիկներից։ Սակայն ներկա դեպքում անկարելի է վճռական խոսք ասել, քանի որ համեմատության մեջ դրված նշանագրերը նմանվելով իրար, իմաստով բոլորովին տարբեր են։

Մենք փորձեցինք հայկական նշանագրերը համեմատել եգիպտական հիերոգլիֆների հետ։ Պարզվեց, որ նրանց մեջ կան ոչ քիչ թվով նշանագրեր, որոնք նմանվում են եգիպտականին. մի մասը նմանվում է ձևով և իմաստով, իսկ մյուս մասը՝ միայն ձևով։ Անհրաժեշտ ենք համարում զուգահեռաբար բերել հայկական և եգիպտական նմանվող նշանագրերը[15]։

---

[14] Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց գիրը, էջ 54—55։

[15] Եգիպտական հիերոգլիֆները տես՝ H. Brugsch, Hieroglyphisch-Demotisches Wörterbuch աշխատության մեջ, իսկ հայկական նշանագրերը վերցրել ենք մեր հրատարակած ցանկից։



Եգիպտական հիերոգլիֆներ	Հայկական նշանագրեր
pĕh	քաղաք
mà	տապանակ
basil men	երամիշտ
mĕh	կախարդ
nĕfĕr	մարտիրոս
nĕm	փառասէր
nas	ճանապարհ
su	աղեղնաւոր
star	աստղ
xĕr	քաղաք
bunch of flowers	բուրաստան
hétep	կշիռն
hĕm	լուսին
saltier	յիշատակ
to raise	ճանապարհ
sun	արեգակն
maritime countries	երկիր
hilly countries	լեռ
districts	քաղաք
man (squatting)	աղքատ
head	գլուխ
water	ջրհոս
dikes, mud	կերպարան
grains	պտուղ
tooth	
serpent	վիշապ
circle	անսպառ
trees of all kinds	անթառամ

Հեթիթերեն

	Աստուած
	Syennesis *աստուած*
	Թագաւոր
	Թագաւոր dsario
	dsarayi *(ծառայ)*
	որդի, ժառանգ
	hati
	կարկեմիշ
	ka, ak, k
	n, ni
	t'—
	m

Հայկական նշանագրեր

	z	*Արեգակ*
	ж	*դրախտ*
	ж	*Թագաւոր*
	ж	*յոնք*
	ж	*լեառն*
	o	*սէր*
	ж	*փարթամ*
	ж	*ճշմարիտ*
	п	*մարգարէ*
	o	*տես*
	o	*եղբայր*
	т	*լրումն*

Ավելի ապշեցուցիչ եղան Երզնկայի հայկական նշանագրերի համեմատության արդյունքները Հնդկաստանի Մոխենջո-Դարոյի պեղումներից հայտնաբերված նշանագրերի հետ. պարզվեց, որ այս սիստեմի նշանագրերի մեծ մասը հեռավոր կամ մոտավոր նմանություն ունի մեր նշանագրերի հետ։

Ծանոթության կարգով ասենք, որ արևելագետներից ոմանք փորձեր արել են կարդալու Մոխենջո-Դարոյում և Խարապպայում (իսկ հետագայում պեղված նաև Չանհու-Դարոյում և Ջուխուկարում) հայտնաբերված հին հնդկական գրերը։ Այսպես, Landon*-ը և* Hunter*-ը այս գրությունը փորձել են կարդալ բրահմական գրության հիման վրա,* Gadd*-ը փորձել է կարդալ սանսկրիտերենով, Լոուկոտկան՝ Պասխա կղզու գրությամբ և այլն։ Սակայն այդ փորձերը, ինչպես իրավացի նշել է նշանավոր չեխ արևելագետ Հրոզնին, ո՛չ մի դրական արդյունքի չեն հասցրել և «մինչև այժմ հայտնի չէ այդ նշանագրերից ոչ մեկի ընթերցանությունը»*[16]*։*

Նախահնդկական այդ գրության վերծանությամբ զբաղվել է նաև պրոֆ.

---

[16] *Հնդկաստանի հյուսիս-արևելքում, Հինդոս գետի հովտում, Մոխենջո-Դարո կոչվող վայրում, 1922—1927 թվականներին կատարված պեղումների ժամանակ, գետնի տակ բացվեց գիտության մեջ անհայտ հնագույն մի մշակույթ, որի ժամանակը սահմանվում է երրորդ հազարամյակի սկիզբը մեր էրայից առաջ, այսինքն՝ մոտ մեկ հազարամյակ ավելի առաջ, քան հնդիկների ենթադրվող գաղթը դեպի Հնդկաստան։ Բացվեց զարգացած մի ժողովրդի մշակույթի՝ ուղիղ փողոցներ, խոշոր առևտրական շենքեր, պահեստներ, քաղաքային բաղնիքներ, իր ժամանակի համար զարգացած ջրմուղ և այլն։ Տները կառուցված էին թրծաղյուսով։ Ավերակ շենքերում գտնվեցին մոտ 2500 կնիքներ, որոնց վրա կային գրեր։ Հայտնաբերված այս կուլտուրական արժեքների մասին ընդարձակ ուսումնասիրություն են գրել պեղումները գլխավորող հնագետներ Մարշալը և Մակկեյը։*

Հրոզնին[17]։ Նա գտել է, որ հին հնդկական այդ գրությունը հանդիսանում է վանկային, նրանց մեջ գտել է հեթիթական նշանագրերին նմանվող գրեր և փորձել վերծանել հեթիթական գրությամբ։ Հրոզնու հին հնդկական այդ գրության վերծանությունը ընդունված է արևելագիտության մեջ։ Այսպես, ռուսերեն թարգմանությամբ վերջերս լույս տեսած „Развитие письма“ *աշխատության մեջ հեղինակը՝ Լուկոտկան, գտնում է, որ Հրոզնու վերծանությունը անվիճելի է*[18]։

Մենք ծանոթ ենք Հրոզնու «նախահնդկական գրությունը և նրա վերծա-



---

[17] *Տե՛ս* **Грозный.** Противоиндийские **письмена и их шифровка.** «Вестник **древне** истории», **№** 2 за 1940 г., *էջ* 22:

[18] *Տե՛ս* **Ч. Лоукотка. Развитие** письма. **М., 1950:**

նությունը» խորագրով աշխատությանը, որ լույս է տեսել 1940 թվականին „Вестник древн. истории"-ի № 2-ում։ Նա այստեղ ցույց է տվել այն նմանությունը, որ գոյություն ունի հեթիթերենի, հնդկերենի մեջ։ Բայց, պետք է ասել, ավելի քան զարմանալի է հայկական նշանագրության նմանությունը Մոխենջո-Դարոյի գրությանը։

Անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել այդ երկու գրություններից նմանաձև նշանագրերը։ Առաջին շարքում տրված է հնդկական նշանագրերը, իսկ երկրորդում՝ հայկական (տե՛ս էջ 234)։

Պետք է նկատի ունենալ, որ հին ժամանակներում հայերը և հնդիկները տնտեսական և մշակութային սերտ փոխհարաբերությունների մեջ են գտնըվել։ Այդ մասին տեղեկություններ կան Քսենոփոնի, Պրոկոպիոս Կեսարացու, Զենոբ Գլակի և այլ հեղինակների մոտ։ Զենոբի տեղեկություններից հայտնի է, որ Հնդկաստանից Հայաստան էին գաղթել և Տարոնում բնակություն հաստատել ստվարաթիվ հնդիկ բնակչություն, որոնք կուռքեր էին կանգնեցրել և «...զոր ի հնդիկս պաշտեին»[19]։ Անհնար չէ, որ հնդկական գաղթականությունն իր հետ կարող էր բերել և քաղաքացիություն տալ իրենց գրությանը։ Չենք կասկածում, որ հայ-հնդկական մշակութային հարաբերությունների ուսումնասիրությունը գալու է լուծելու մեզ համար մութ շատ առեղծվածներ, գուցե նաև հայ նշանագրության սկզբնաղբյուրների առեղծվածը։

Կանգ առնենք մի հարցի վրա ևս. ի՞նչ գիտական արժեք ունի հայկական նշանագրությունը մեզ համար, ինչո՞ւ մեզ անհրաժեշտ է ծանոթանալ գրության այս սիստեմի հետ։

Հայկական նշանագրերի հետ ծանոթանալը, ամենից առաջ, կարևոր է հայկական ձեռագիր աղբյուրների վերծանության համար։ Տոմարական տեքստերում գրեթե բոլոր համաստեղությունները, աստղերը, երկինքը, երկիրը, աշխարհը և տիեզերական մյուս մարմինները ո՛չ թե գրվում են, այլ նշանագրըվում։ Ալքիմիական տեքստերում գրեթե բոլոր մետաղների և ալքիմիայի մեջ գործածվող մյուս կարևոր նյութերի անունները, ընթերցողների լայն շրջանից հեռու պահելու համար, գաղտնագրվում են նշանագրերով։ Եվ, վերջապես, պատահում են ձեռագրական տեքստեր, ուր հայկական ներկա գրության հետ խառը գործ է ածվում նշանագրությունը։ Մենք դեռ չենք խոսում այն նշանագրերի մասին, որոնք մտել են միջնադարյան գրեթե բոլոր ձեռագրեր և լայն քաղաքացիություն ստացել։ Պարզ է, որ հայկական նշանագրերը չճանաչող մասնագետը չի կարող ճիշտ վերծանել ձեռագիր տեքստերում հանդիպող գործածությունները։

Այդ նշանագրերն արժեքավոր են նաև հայ ժողովրդի և նրա հարևան ժողովուրդների մշակութային փոխհարաբերությունների պատմության համար։ Մենք նկատի ունենք հայկական նշանագրերի որոշ մասի նմանությունը արևելյան գաղափարագիր սիստեմ ունեցող նշանագրերին։

Բոլոր դեպքում, հայկական նշանագրերը անցյալի հայ մատենագրության արժեքավոր փշրանքներից են և անհերքելի ցուցանիշը հայ լուսամիտ մատենագրերի որոնող, ստեղծագործող մտքի։

---

[19] Հովհան Մամիկոնեան. Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 108։



Աբրահամ
ազգ
ազգական
աթոռ
ականջ
Ահարոն
ահաւասիկ
աղ
աղանդ
աղբիւր
աղեղնաւոր
աղքատ
ամառ
Ամբակում
ամբարիշտ
ամբարտաւան
ամենակալ
այծեղջիւր
այնպէս
այսուհետ
այսպէս



անապական
անապատ
անառակ
անասուն
անարգ
անդամ
անդաստան
Անդոն
անդունդ
անեղծ
անզգամ
անթառամ
անիրաւ
անճառ
անմահ
անպարծ
անսկիզբ
անսպառ
անվախճան
Անտիոք



անցաւոր
աշակերտ
աշխարհ
աշուն
աշտարակ
ապստամբ
առագաստ
առաջնորդ
»
առաւաւտ
առաւել
առաքեալ
»
առիւծ
առողջ
առու
ասպարէզ
աստիճան
աստրոլաբ
աստղ
արդար
արեգակ



ոսկի
արճիճ
զօհալ
արևելք
արևմուտք
արծաթ
արծաթասէր
արճիճ
արուեստ
արուսեակ
արուսեակ
արքայութիւն
աւգնական
աւետարան
աւձ
բազում
բանական
բանսարկու
բարեխաւս
բարեպաշտ
բարձր
բերան



բժիշկ
Բիւզանդիոն
բորբոքել
բուրաստան
բուրգ
գարուն
գաւազան
գերեզման
գթած
գինի
գլուխ
գործ
գուսան
դաստիարակ
դատաստան
դատաւոր
դժոխք
դուռն
դրունք
դրախտ
Եգիպտոս
եկաւոր
(գող.)
եկւորեակ
(ղող.)



Եկեղեցի
եղբայր
եղջիւր
եղջերու
եպիփան
Եռանկիւն
երաժիշտ
երևակ
երիկամ
երկաթ
երկայնամիտ
երկինք
»
Երկիր
»
երկիւղած
երկմիտ
երկպառակ
Երկուորեակներ
զուարակ
զուարթ
զաւրութիւն
թագաւոր



Ж	О			թարգման
В	Z			թէպէտ
В				թլպատ
А	Е	О	О	թռչուն
Е	Ж			ժառանգ
У	О			իբրև
С	О			իմաստուն
Ж	А			իշխան
О				Իսահակ
Z	П	А	Z	ի սկզբանէ
Ж	Z			իւրաքանչիւր
С				լանջ
Ж	Х	А		լեռ
А	С			լեզու
Т				լուծ
Т	Т	Т	Т	լուսաբեր
А	Ж			լուսին
Т	Т	Т	Т	լուսնթագ
Т	Т	Т		լրումն
Ж	Z			խաչ
Т	Т	Т		խեցգետին
С				խնամի



Т	Т			խոյն
Ж	О			խոնարհ
Ж	Ж	О	О	խոստովան
А	К	П		խոր
Ж				խորամանկ
П	Ж	А		խորան
В	А	Ж	О	խորհուրդ
У				ծաղիկ
Т				ծկրաւոր
Ж	Ж	О		ծանաւթ
Г	Ж			ծառայ
У				ծերակոյտ
Ж	С	О		կախարդ
С				կամ
Ж				կառք
Ж	О			կատարած
Т	Т	Т		կարիճ
Ж	С	С		կեղծաւոր
Т				կենդանակերպ
К	Ж	О		կենդանի
Ж				կերակուր
О	О			կերպարան

	կլայեկ
	Կիպրիանոս
	կշիռ
	կոյս
	կռապաշտ
	հալաւ
	հակադրութիւ
	հաղորդ
	համասփիւռ
	համեմատ
	հայրապետ
	հանգիստ
	հանդարտ
	հանդերձ
	հանճար
	հասարակ
	հաստատ
	հարուստ
	հաւասար
	հաւատ
	հեթանոս
	հեշտասէր
	հեռաւոր

	հերումն
	հիւանդ
	հոգի
	հրատ
	հրեշտակ
	ձիթենի
	ձմեռ
	ձուկն
	ղամբար
	ճակատ
	ճանապարհ
	ճշմարիտ
	Մանասէ
	մատանի
	մարգարէ
	մարդ
	մարդասէր
	Մարտիրոս
	Մելքիսեդեկ
	մեղաւոր
	մեղր
	միացում
	մեռեալ

	միտք
	մերձաւոր
	մերկուրի
	միջնորդ
	Յակոբ
	յանդուգն
	յաջող
	յառաջագոյն
	յարմար
	յաւիտեան
	յափշտակել
	յիշատակ
	յոնք
	Յունան
	նախանձ
	նահատակ
	նշանագիր իմաստնոց
	նշխար
	նոյնպէս
	շունչ
	շուշան
	շտեմարան

	ոխ
	ոխակալ
	ողորմել
	ոսկի
	որոգայթ
	որովայն
	որպէս
	պղինձ
	պայծառ
	պանդուխտ
	պատարագ
	պատգամ
	պատճառ
	պատմուճան
	պատշաճ
	պատուանդան
	պարգև
	պատրաստ
	պարկեշտ
	պարունակ
	պաւղոս
	պղերգ

	պղինձ
	պոռնիկ
	պտուղ
	ջրհոս
	Սահակ
	սահման
	Սամուէլ
	սանդուխք
	սատանայ
	սատուրն
	սարկաւագ
	սեղան
	Սերովբէ
	սէր
	սիրտ
	սկիզբն
	սնդիկ
	Սողոմոն
	սոյնպէս
	սպասաւոր
	վախճան
	վարագոյր
	վարդապետ
	վերակացու
	Վերին Երուսաղէմ
	վեցանկիւն
	վիշապ
	վիշապի գլուխ
	վիշապի տուտ
	տաճար
	տապանակ
	տես
	տնանակ
	տրտունջ
	ցանկ
	ցանկութիւն
	ցորեան
	ցուլ
	փայլածու
	փայլակ
	փառասէր
	փարաւոն
	փարթամ
	փիլիսոփայ



փոխանակ

քահանայ

քաղաք



քառանկյուն

քարոզ

Քերովբէ

XIV. ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հին և միջին դարերում սովորություն է եղել քաղաքական, ռազմական, առևտրական, արհեստագործական և կարևոր այլ տեղեկությունները գաղտնի պահելու նպատակով գործածել ծածկագրություն, որը գիտության մեջ հայտնի է «կրիպտոգրաֆիա» անունով (կազմված է հունարեն κρυπτός—գաղտնի և γράφω—գրություն բառերից)։ Ծածկագրությունը հայ մատենագրության մեջ գործ է ածվում «փակագրութիւն», «գրափակութիւն», «գրչափակութիւն», «գրածածկութիւն» և այլ անուններով։

Հայկական ծածկագրերի մի մասը պարունակում է քաղաքական տեղեկություններ, իսկ մյուս՝ ավելի մեծ մասը, գրչախաղ-ծածկագրեր են՝ կազմված անմեղ նպատակով։ Ձեռագրերի վրա տարիներ շարունակ տքնող մեղվաջան գրիչը երբեմն ընդմիջում է իր հոգնատանջ աշխատանքը և գրչախաղեր անում. ծածկագրում է ձեռագրի գրչության թվականը, գրչության վայրը, իր կամ պատվիրատուի անունը և այլն։ Տվյալ դեպքում գրիչների հիմնական նպատակըն է եղել թույլ չտալ, որ տգետ մարդիկ հիշատակարաններում ջնջեն իրենց անունները, իսկ գիտուն մարդկանց կատարելապես վստահում են և հավատացած են, որ վերջիններս չեն ջնջի գրչի մշակների անունները և չեն յուրացնի նրանց «ողորմիսը»։

Ծածկագրության երկու տեսակն էլ պատմա-աղբյուրագիտական առումով մեծ արժեք է ներկայացնում, քանի որ գաղտնագրված բնագրերը իր ժամանակի համար մեծ կարևորություն ունեցող տեղեկություններ են պարունակում։ Ինչ վերաբերում է ծածկագիր-գրչախաղերին, ապա նրանք ևս կարևոր են, որովհետև նրանց վերծանությունը հաճախ օգնում է պարզելու ձեռագիրը գրող գրչի անունը, գրչության ժամանակը և այլն, իսկ առանց այդ տեղեկությունների դժվար է ճիշտ արժեքավորել ձեռագրի պարունակած բնագրերը։

Ծածկագրող գրիչներն իրենց ծածկագրերի սկզբում կամ վերջում թողել են ընթերցողի ուշադրությունը գրավող հետաքրքրաշարժ էպիգրամներ՝ «Այս է փակագիր, իմաստունն իմանայ և անիմաստն զարմանայ»[1], «Ով եղբայր, զայս փակագիրս դու կարդա, թէ ոչ՝ փքիտ տուր (այսինքն՝ փուքս փչիր—Ա. Ա.)

---

[1] *ՄԱՄ ձեռ. № 7709, էջ* **395**։

և հազար»[2], «Թէ գպիր ես՝ ընթերցիր, թէ տգէտ՝ յիմարացիր»[3]. «Ով որ գիտնայ՝ [նա] կարդա, ով չգիտնա՝ նա յանկորտա (այսինքն՝ կլալկվի—Ա. Ա.)»[4] և այլն։

Հայկական ծածկագրության ուսումնասիրությամբ, եթե չհաշվենք առանձին հայագետների պատահական և միջանկյալ հիշատակումները, զբաղվել են միայն երկու հոգի՝ ակադեմիկոսներ Մ. Բրոսեն և Հ. Աճառյանը։ Առաջինը հայ ծածկագրության մասին ֆրանսերեն լեզվով գրել է առանձին հոդված «Variétés arméniennes» *վերնագրով[5], իսկ Աճառյանը ձեռագրերից և տպագիր գրականությունից հավաքել է հայկական որոշ ծածկագրեր և աշխատել ընդհանուր համակարգի բերել նրանք[6]։*

Ինչ վերաբերում է ծածկագիր բնագրերին, ապա նրանց զգալի մասը հրատարակված է ձեռագրաց ցուցակներում՝ հիշատակարանների հետ միասին։ Ծածկագրություններ կան Հ. Տաշյանի, Բ. Սարգիսյանի, Ե. Լալայանի, Հր. Աճառյանի, Արտ. Սյուրմեյանի, Հ. Ոսկյանի Ն. Պողարյանի և այլ հեղինակների կազմած ձեռագրաց ցուցակներում։ Մի քանի ծածկագրեր հրատարակվեցին Գ. Հովսեփյանի և Լ. Խաչիկյանի հիշատակարանների ժողովածուներում։ Ծածկագրության առանձին բանալիներ հրատարակել են Գ. Տեր-Մկրտչյանը, Գ. Աղանյանցը, Ժիրայր հիսուսյան քահանան, Կ. Ղաֆադարյանը և այլք։ Ծածկագիր բնագրերի հավաքման, նրանց վերծանության և հրատարակության ուղղությամբ աշխատել է նաև տողերիս հեղինակը։

Հայկական ծածկագրությունը, ըստ ձևի ու բովանդակության, բաժանվում է մի քանի խմբերի, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթախմբերի։ Ծանոթանանք նրանց հետ առանձին-առանձին։

1. **Սյունակետագիր ծածկագիր**:—*Այսպես է կոչվում այն պատճառով, որ կազմվում է սյուներից և նրա կողքը դրված կետերից։ Որոշ բանասերներ այս ծածկագրությունը անվանում են «սյունագիր» կամ «կետագիր»։ Ծածկագրության այս տեսակը հայ մատենագրության մեջ ամենից շատ գործածվող գաղտնագրությունն է։*

Հայագետ Ֆր. Մյուլլերը որոշ նմանություն է տեսնում հայկական սյունակետագիր ծածկագրության և կելտական ogham *կոչվող գրության մեջ, որը կազմված է հինգ գծիկների զանազան ձևափոխություններից և, կարծում է, որ սյունակետագիրը վերցված է նրանից[7]։*

---

[2] «Ցուցակ ձեռագրաց Վեննետիկի», հ. Ա, էջ 823։

[3] «Երուսաղեմի մատենադարանի ձեռ.», № 1279, էջ 455։

[4] «Ցուցակ ձեռագրաց Վասպուրականի», էջ 250։

[5] Տե՛ս Bul. de l Acad., VII 1864, էջ 90—99, նաև „Mélanges Asiatiques“, հ. V. 1868, էջ 65—77։

[6] Իր ուսումնասիրության արդյունքները նա հրատարակել է «Հայոց գրերը» աշխատության մեջ՝ «Հայերեն ծածկագրեր» գլխի տակ (էջ 460—482)։

[7] Տե՛ս **Fr. Müller,** Nicht-Mesropische Schriftzeichen bei den Armeniern WVKM, № 10, էջ 130—132 (օգտվել ենք Հր. Աճառյանից)։

Ծածկագրությունը կազմելու սկզբունքը պարզ է. վերցնում են ուղղահայաց սյունագծեր և նրանց մոտ դրված կետերով ծածկագրում տառանիշը. միավոր թվանշան ունեցող տառանիշերի համար օգտագործում են մեկ սյունագիծ, տասնավորների համար՝ երկու, հարյուրավորների համար՝ երեք և հազարավոր թվերի համար՝ չորս սյունագիծ։ Ըստ որում, կետերը դրվում են սյունագծի աջ կողմից՝ մեկից մինչև ինը կետ ըստ տառանիշերի հաջորդականության։ Հաճախ, երբ չեն ցանկանում սյունագծերին և նրա կողքը դրված կետերին բարձրություն տալ, սյունագծերի մոտ դրված կետերը շարում են թեքված և կամ հորիզոնական ուղղություն են տալիս։

Սյունագիր ծածկագրի մի քանի բանալիներ են հասել մեզ։

Բերում ենք Անդրեաս Եվդոկացու (XVI դար) այբբենարանի հավելվածում ընդօրինակված բանալին[8]։



Սյունագիր ծածկագրի հնագույն բնագիրը, որքան մեզ հայտնի է, 1408 թվականից է։ Այն գրված է Մաշտոցի անվան մատենադարանի № 763 ձեռագիր «Մանրուսմունքի» հիշատակարանում. ծածկագրված է գրչի անունը—«Ռեստակէսս»։ Ծածկագրությունը վերծանել և հրատարակել է Լ. Խաչիկյանը[9]։ Բերում ենք ծածկագիր տեքստը և նրա վերծանությունը։



Ուշ դարերում գաղտնագրված սյունակետագիր ծածկագրեր շատ կան։ Անհրաժեշտ ենք համարում բերել նրանցից միայն մի քանիսի վերծանությունը։

---

[8] ՄԱՄ ձեռ. № [illegible]69, թ. 391 ա։

[9] «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 89։

Զաքարիա գրիչը 1481 թ. Վայոց Ձորի Հերմոնի վանքում գրած ձեռագրի հիշատակարանում իր անունը ծածկագրել է[10].



Հովհաննես գրիչը Եղրդուտի վանքում 1485 թ. գրած ձեռագրում իր անունը ծածկագրել է[11].



Ղալաթիայի № 246 ձեռագիրը, որը բովանդակությամբ «պարզատումար» է՝ գրված 1603 թ., ունի սյունակետագիր ծածկագիր, որ իր կազմած ձեռագրաց ցուցակում բերել է Բ. Կյուլեսերյանը, բայց չի կարողացել վերծանել[12]։ Ստորև բերում ենք ծածկագիրը մեր վերծանությամբ՝ ուղղելով նկատվող սխալները։



Եղիշե Արևելցին 1532 թ. գրած ձեռագրում իր անունը գաղտնագրել է մի քանի տեղ՝ աղվանական կոչվող ծածկագրությամբ։ Նրա բարեկամներից մեկը՝ Աստվածատուր Կեղեցին, բացել է Եղիշե Արևելցու ծածկագրի գաղտնիքը և սյունակետագիր թողել է իր հետևյալ հիշատակագրությունը[13].

---

[10] ՄՄՄ ձեռ. № 6699, թ. 295ա, ծածկագրությունը ճիշտ վերծանել է Լ. Խաչիկյանը (տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Գ, էջ 16)։

[11] Ձեռագիրը Ջմմառի վանքի սեփականությունն է, Հիշատակարանը հրատարակել և ծածկագիրը վերծանել է Լ. Խաչիկյանը (տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Գ, էջ 467)։

[12] «Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ», էջ 1184։

[13] ՄՄՄ ձեռ. № 6644, թ. 132։



եա Յ ո վ տ է ս ս

Ղարաբերդցի, Աստուածատուր Կեղեցի։ Ըզքո անունն իմացաք ո՞վ եղբայր Եղիշէ խաչենցի աբեղա։



Ա ս տ ո ւ ա ծ ա տ ո ւ ր

եղբայր ողջոյն քեզ»։

Ե. Լալայանը Վասպուրականի ձեռագրաց ցուցակում հրատարակել է Շատախի Թաղ գյուղում երբեմնի գտնված 1339 թ. մի ձեռագրի պարունակած հետևյալ ծածկագրությունն[14] առանց վերծանության.

Վ Մ Է Թ Բ Ի. Ռ Է Ր Դ Ռ Ե Ռ Խ



Լ. Խաչիկյանը ԺԴ դարի հիշատակարանների մեջ վերահրատարակել է հիշյալ ծածկագիրը և փոխարինագիր ծածկագրով վերծանել միայն առաջին տողը, իսկ շարունակությունը համարել անհասկանալի[15]։

Նշված ծածկագրության տեքստում թույլ տված մի քանի կետերի սխալներն ուղղելուց հետո վերծանվում է (բերում ենք ուղղված տեքստը).

Վ Մ Է Թ Բ Ի Ռ Է Ր Դ Ռ Ե Ռ Խ.
գ ի ր ք ս է Ա ւ ե տ ա ր ա ն



ծ ա ռ[ա]յ ի Գ ր [ի] գ [որ] ա յ

Ձեռագրերում պատահում են սյունագիր այնպիսի բնագրեր, ուր սյունագծի վրա կամ նրա կողքին դրված կետերը, նախորդ սյունագրի համեմատությամբ, մի տառանշանով պակաս արժեք ունեն. այսպես, «ա»-ն գրվում է առանց կետի, «բ»-ն՝ մեկ գիծ, մեկ կետով, «գ»-ն՝ մեկ գիծ, երկու կետով և այդ հետևողականությամբ՝ մյուս բոլոր հայկական այբուբենի տառերը։

Մատենադարանի № 2939 ձեռագրում 1796 թ. (թ. 583բ) այս ծածկագրով գաղտնագրված է գրչի անունը և գրչության թվականը.

---

[14] «Ցուցակ ձեռագրաց Վասպուրականի», էջ 198։

[15] «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 322։



Գրվեցաւ թվին Հայոց ՌՄԽԵ (=1796) մայիս ԻԵ (25)։

Եվ վերջապես, պատահում են նաև սյունագիր ծածկագրի այնպիսի բնագրեր, որոնք վերծանելու համար բացի սյունագիր ծածկագրի բանալուց, պետք է գործածել նաև եղբայրագիր կամ փոխարինագիր ծածկագրի բանալիներ։ Այս մասին խոսք կլինի ստորև։

2. **Կետագիր ծածկագիր**:—Ծածկագրության այս տեսակը իր համակարգում շատ է նմանվում սյունակետագիր ծածկագրությունը՝ տարբերությունը միայն նրանում է, որ այստեղ սյուներին փոխարինում են հայկական տառանիշերը։

Այս խմբի հնագույն ծածկագիր պարունակում է Գրիգոր Տուտեորդու հիշատակարանը 1154 թվականից, որ հրատարակել է Ղ. Ալիշանը և վերծանել[16]։ Բերում ենք ծածկագրությունը և նրա վերծանությունը.

Գ Ր Ի Ա ... Ճ ...... Ռ.....   Վ Ա Ր Դ Ա Պ Ե Ռ .... Ճ ......
գ ր ի գ   ո   ր   վ ա ր դ ա պ ե տ   ո-

Ռ ..... Ա .... ԺԺ   ՍՍ   ՁՃ   ԷՌ   ՍՍ   Ա   Ց
ր   դ   ի   Տ   ո   ւ   տ   ա   յ

Երուսաղեմի մատենադարանի № 16 ձեռագրում («Ճաշոց») ուշ շրջանի մի հիշատակագիր իր անունը գաղտնագրել է կետագիր ծածկագրով (հրատարակել է Սյուրմեյանը սխալներով և չի վերծանել)։ Բերում ենք Պողարյանի ուղղված բնագիրը և նրա վերծանությունը.

Գ .. Տ . Բ ... Հ .... Ը ... Ա
Ե   ր   ե   մ   ի   ա

Ջ ... Ա Վ .. Ա ... Ա Ճ ... Բ ... Ռ ...
վ   ա   ր   դ   ա   պ   ե   տ

Աբրահամ գրիչը 1482 թ. Վայոց Ձորի Բոլորբերդում ընդօրինակած ձեռագրում իր անունը կետագիր և սյունակետագիր ծածկագրով գաղտնագրել է[17].

Ա . Ա .. Ռ..... Ա . Ժ .... |. ||..   Ա ||||⁝ Ի Ձ
Ա   բ   ր   ա   հ   ա   մ   գ   ր   ի   չ

---

[16] Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 167։ (Ալիշանի բերած լուսանկարից երևում է, որ Տուտեորդին իր ծածկագրության մեջ թույլ է տվել երկու սխալ. երկու «Ժ»-երի վրա գրել է երկու կետ և առաջին երկու «Ս»-երի վրա՝ չորս կետ։ Այդպիսի կետերի կարիքը չկար, որովհետև երկու «Ժ»-ն առանց կետերի հավասար է «Ի»-ի և երկու «Ս»-ն առանց կետերի հավասար է «Տ»-ի)։

[17] Ծածկագրությունը ճիշտ է վերծանել Լ. Խաչիկյանը (տե՛ս «Հիշատակարաններ», Հ. Գ.

Ծածկագրի այս խմբին է պատկանում ակադ. Մ. Բրոսեի հրատարակած տեքստի մի քանի բառ միայն՝ մեկ թվանշան պակաս արժեքով (բերում ենք տեքստը և վերծանությունը).

«Զաքարիայ պծոդս, մի բերան յիշեսյալ ա :: ռ ::: Ա͡ծ ա ::. ռ :::
ե ւ ա͡ծ գ ք
ա :: ա ::. յիշեայ ... »։
ե գ յիշեայ[18]։

Մատենադարանի № 193 ձեռագրում այս ծածկագրով գաղտնագրված է.
«ա :::: ա ::: ժ ::. ա ռ :: ա :: |ա| ռ. ժ. ճ.
Թ է կ ա ր դ ա ս ի մ—
ա ռ. ռ ... ճ ::. ռ ::: ճ ... ա :: ռ. (Թ. 174բ)»։
ա ս տ ո ւ ն ե ս

Մատենադարանի № 6644 ձեռագրում (էջ 132) վկայված է այս խմբի մի ծածկագիր, սակայն ծածկագրողը չի սահմանափակվել մի քանի տառով միայն, այլ օգտագործել է հայկական բոլոր տառանիշերը՝ վրաները դնելով համապատասխան (մեկից մինչև չորս) կետ (բերում ենք տեքստը և մեր վերծանությունը).

Չ .... ը ... ճ .... ։ բ ... վ ... ։ գ ....
Յ ի շ ե ց է—
ւ .. ։ ը ... ղ .. ա ւ .. վ ..
ք ի մ ա ք ր
ա ղ.... տ .... ա ղ ... թ ...։ ա
ա յ փ ա յ լ ա—
ծ.... ա ր .. գ ... ջ ..։ ծ...
ղ ա ւ թ ս ձ—
գ .. վ .. ։ ա վ .. ։ փ .. ։ դ.
ե ր Ա ր ն ե—
թ ... տ .. ։ թ .. ջ ..
լ ց ի ս

Վերծանվում է. «Յիշեցէք ի մաքրայփայլ աղաւթս ձեր Արնելցիս»[19]։

Այս խմբի մեջ պետք է հաշվել ծածկագրության նաև այն տեսակը, երբ հիմք են վերցվում «Ա»-ից մինչև «Ժ» տառերը և նրանց վրա դրվում մեկից չորս կետ. տառերը շարքի աստիճանականությունն են ցույց տալիս, իսկ կետերը՝ միավոր, տասնավոր, հարյուրավոր և հազարավոր թվերի շարքը։

Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 234 ձեռագրում ծածկագրված է. «Գրեցաւ գիրս ձեռամբ հոգնամեղ և տրուպ ԲԹԲԵՁԳԹ, ՌՌ. ԺԺ. ՃՃ. Բ.Գ. ՅՅ. ՄՄ. ԺԺ»։ Հրատարակող Բ. Սարգիսյանը այսպես է ծանոթագրել. «Յուրաքանչյուրին վրա կետեր դրված, որ անուն և մականուն կձևացնեն, բայց ինձ համար մնացին անլուծելի»[20]։

Ծածկագրության համակարգը մեզ հայտնի դառնալուց հետո, դժվար չէ այն վերծանել։ Բանասեր Բ. Սարգիսյանի հրատարակած ծածկագրի առա չին մասը, կետադրական անհրաժեշտ շտկումներ կատարելուց հետո, վերծանվում է.

---

[18] Brosset (տե՛ս նշվ. աշխ., „Melanges Asiatiques", հ. V, էջ 71)։

[19] ՄԱՄ ձեռ. № 6644, թ. 132։

[20] «Ցուցակ ձեռագրաց Վենետիկի», հ. Բ, էջ 580։

Բ: Բ: Բ Ե Զ Դ Բ
Ս ի մ ե ո ն ի

Ծածկագրության երկրորդ մասը սովորական գումարգիր է, որի մասին առանձին խոսք կլինի, և վերծանվում է նույն անունը.

ՌՌ. ԺԺ. ՃՃ. ԲԳ. ՑՑ. ՄՄ.
Ս ի մ ե ո ն

Այսպիսով, պարզվում է, որ Վենետիկի № 234 ձեռագրի գրիչը Սիմեոնն է։

Մաշտոցի անվան մատենադարանի № 5198 ձեռագիրը (թ. 170բ) պարունակում է ծածկագրության տվյալ խմբին պատկանող հետևյալ բնագիրը. «Արդ՝ գրեցաւ սուրբ տառս որ ասի Մաշթոց, ձեռամբ բազմամեղ և անիմաստ, սուտանուն Դ:. Զ:. Ե:: Դ:: Զ:. Է:: Դ:. Զ: Ջահրնկալիս, անուամբ Ջահրնկալ և գործովս մեղսամած և մեղսասէր։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ ձեզ արտասուաթոր աչաւք, որ հանդիպիք այս աստուածախաւս տառիս, ո՛վ սուրբ մանկունք եկեղեցւոյ, կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք մաքրափայլ յաղաւթս ձեր զանարժան գծող սորա և զուսուցիչն իմ ԱԱ. ՍՍ. ՇՇ. ԽԽ. ԵԷ. ԾԾ.»[21]։ Ծածկագիրը վերծանում ենք.

Դ:. Զ:. Ե:: Դ:: Զ:. Է:: Դ:. Զ:
Ն ո ր տ ո ւ ն կ

Պարզվում է, որ նշված ձեռագրի գրիչն է Նորտունկը։ Կարծյոք, հավանական է սա լինի Կիրակոսի որդի Նորտունկը, որը 1463 թվականին Արծկեում վաճառքի միջնորդ է հանդիսացել Հովհաննես գրչի և տանուտեր էդիլշահի միջև[22]։ Եթե մեր այս ենթադրությունը ճիշտ է, ապա ձեռագրի գրչության ժամանակը պիտի համարենք ոչ թե 16-րդ դարը, ինչպես նշված է ձեռագրաց ցուցակում, այլ 15-րդ դարը։ Բերված ծածկագիրը պարունակող պարբերության մեջ կա գումարգիր մի խառը ծածկագիր, որը վերծանվում է.

ԱԱ ՍՍ. ՇՇ. ԽԽ. ԵԵ. ԾԾ.
Բ [ա] ր ս [ե] ղ ի Ն[23]

Այսպիսով, պարզվում է, որ Մատենադարանի № 5198 ձեռագրի գրիչը Նորտունկն է, իսկ նրա ուսուցիչը՝ Բարսեղը։

3. **Օղակետագիր ծածկագիր:**—Այստեղ չի օգտագործվում ոչ մի տառանիշ. այբուբենը վեր է ածվում չորս խմբի՝ միավոր տառերի հիմքը դարձվում է մեկ օղ, տասնավորներինը՝ երկու, հարյուրավորներինը՝ երեք և հազարավորներինը՝ չորս, իսկ նրանց վրա, ըստ տառանիշի թվական արժեքի, կետեր են դրվում։ Ծածկագրության այդ տեսակը շատ գործածական է եղել սլավոնական մատենագրության մեջ[24]։

---

[21] Ձեռագրի քարտը լրացնող մասնագետը, չկարողանալով վերծանել ծածկագիրը, գրչի անվան տեղը բաց է թողել՝ նշելով. «Անունը ծածուկ է մնում»։ Հետագայում, մեր վերծանությունից հետո, գրչի անունը պարզված և նշված է հրապարակված ձեռագրերի ցուցակում։

[22] Տե՛ս Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, էջ 85։

[23] Ծածկագրության վերծանությունը բարդացնելու համար հաճախ է պատահում, երբ մի տառ թվանշանով պակաս է վերցվում. տվյալ դեպքում այդպես է վարված ա, չ, դ, ի և ն տառերի հետ։

[24] Հայկական օղակետագիր ծածկագրին մասամբ նմանվում է սլավոնական „Значковый

Մատենադարանի № 8716 ձեռագրի գրիչը այս ծածկագրի վերծանության մասին տվել է հետևյալ ուշագրավ տեղեկությունը. «Գիր համարոյ Դ տարբերաց է։ Այս է արհեստ սորա այսպէս. նախ գիտելի է, զի առաջին գիրն և թիւն այս է՝ ա ժ ճ ռ։ Նոյնպէս և սայ 0000, և թէ՝ 0.Ա 0: Բ 0:. Գ և այլն։ Այսպես. Եւ եթէ 00.Ժ, 00:Ի, 00Լ:., 00Խ:: և այլն այսպէս։ Եւ թէ 000.Ճ, 000: Մ, 000.Յ. 000::Ն։ Եւ թէ՝ 0000.Ռ, 0000:Ս, 0000:.Վ, 0000::Տ։ Եւ այլն այս մտօքս է, իմացիր, զի Դ տարբերաց է սայ։ Եւ սայ կոչի գիր տարերաց, *զի նողտանին բանայ զմիտ մարդոյն, որ կարէ իմանալ զբանն, զի բոլորն համարողական է և տարբերքն, բայց նողտանին վերծանող է։ Բաւ է իմաստնոց»*[25]։

0. 0: 0:. 0:: 0::. 0::: 0:::. 0:::: 0::::.
ա բ գ դ ե զ է ը թ
00. 00: 00:. 00:: 00::. 00::: 00:::. 00::::: 00::::.
ժ ի լ խ ծ կ հ ձ ղ
000. 000: 000:. 000:: 000::. 000::: 000:::. 000:::: 000:::.
ճ մ յ ն շ ո չ պ ջ
0000. 0000: 0000:. 0000:: 0000::. 0000::: 0000:::. 0000:::: 0000::::
ռ ս վ տ ր ց ւ փ ք

(Օղակետագիր ծածկագրի բանալին)

Ղալաթիայի մատենադարանի № 249 ձեռագրում ծածկագրված է.

«00(0)::: 0000:. 0. 00::: 0: 000: 0. 000:.»[26]։
Ո վ ա կ ի մ ա յ

Մաշտոցի անվան մատենադարանի № 193 ձեռագրում (թ. 174բ) ծածկագրված է.

000... 0. 00::: 0::: 0:
Յ ա կ ո ր

Այս խմբի մեջ կարելի է մտցնել նաև կոտորակագիր ծածկագիրը՝ *այն տարբերությամբ, որ գծից ներքև տրվում է այունագիծը՝ կետերի միջից չորս թվով, իսկ վերև՝ միավոր, տասնավոր հարյուրավոր և հազարավոր թվանշանով տառերի շարքը։ Այս ծածկագրի հետաքրքիր օրինակ հրապարակել է Գ. Սրվանձտյանը «Մանանա»-ի մեջ, որից և մենք բերում ենք օրինակ*[27]։



разряд" *կոչվող ծածկագրին (տե՛ս* Е. Ф. **Карский,** Славянская кирилловская палеография, *էջ 256)*։

[25] *ՄԱՄ ձեռ. № 8716, թ. 53ա*։

[26] *«Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ», էջ 192*։

[27] Գ. Սրվանձտյանց. *Մանանա, էջ 312*։

4. **Գավազանագիր ծածկագիր։**—Ծածկագրի այս տեսակը ոչ մի կապ չունի տառանիշների հետ։ Վերցված է հայոց այբուբենի չորս դասի ինը գրի համար իրարից տարբերվող գավազանաձև ինը նշան և չորս կետի համադրությամբ կազմված է ծածկագիրը։ Ըստ որում, մեկ կետը գործ է ածվում միավորների համար, երկուսը՝ տասնավորների, երեքը՝ հարյուրավորների և չորսը՝ հազարավորների։ Եվ այսպես, զուգակցելով ինը իրարից տարբերվող գավազանը չորս կետի հետ՝ կազմվում է ծածկագրությունը։

Այս ծածկագրության իրարից տարբերվող երկու բանալի է մեզ հայտնի, որոնցից մեկը ընդօրինակված է Մաշտոցի անվան մատենադարանի № 2001 ձեռագրում (թ. 233ա) 1373 թ. գրչությամբ և ունի հետևյալ տեսքը.



Գավազանագրի փոքր-ինչ տարբերվող մյուս բանալին ընդօրինակված է Մատենադարանի № 5975 ձեռագրում (թ. 34ա), 1467 թ., գրիչն է Ստեփանոսը։



Ակադ. Ն. Մառի նկարագրած Պետերբուրգի հայերեն ձեռագրերից մեկում կա այս կարգի ծածկագրություն, որ վերծանվում է «Խաչատուր»[28]։ Էջմիածնի ժողովածուի № 47 ձեռագրում գավազանագրով գաղտնագրված է «Զաքարայ ծառայ»[29]։

Ակադ. Մ. Բրոսեի օգտագործած ձեռագրում ծածկագրված է «Զաքարիա» անունը։ Այստեղ սակայն կետերի գործածությունը տարբերվում է նախորդներից. թվերը գրվում են առանց կետի, տասնավորները՝ մեկ կետով, հարյուրավորները՝ երկու և հազարավորները՝ երեք[30]։

Մաշտոցի անվան մատենադարանի № 4723 ձեռագրում, որն ընդօրինակված է 1654 թ. Վարդան գրչի կողմից, գավազանագիր ծածկագրով գաղտնագրված է երկու անուն։ Ստորև բերում ենք ծածկագրերը՝ մեր վերծանությամբ[31].



Գ ր ի գ ո ր   Վ ա ր դ ա ն

5. Փոխարինագիր ծածկագիր:—Հայ մատենագրության մեջ սյունագրից հետո հաճախադեպ գործածական ծածկագիրը փոխարինագիրն է։ Այդպես է կոչվում, որովհետև ծածկագրության մեջ այբուբենի մի տառը փոխարինում է մյուսին։ Այբուբենի 36 տառերը բաժանվում են չորս շարքի՝ միավորների, տասնավորների, հարյուրավորների և հազարավորների՝ յուրաքանչյուրն իննական տառից, և տառաշարքից ամեն մեկը, ըստ թվական հերթականության, փոխարինում է մյուսին[32]։

Փոխարինագիր ծածկագիրն ունի երեք տարբերակ և ծածկագրության մեջ օգտագործվում է երեքն էլ առանձին-առանձին։

Առաջին տարբերակի բանալին հետևյալն է.

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
ռ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք
Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ	ջ

Այս ծածկագրության մեջ միավոր թվերը փոխարինում են հազարավորներին, իսկ տասնավորները՝ հարյուրավորներին։

Փոխարինագիր ծածկագրի հնագույն օրինակը Ավանում գտնված Եզր կաթողիկոսի (630—641 թթ.) երկլեզվյան՝ հունարեն-հայերեն ծածկագիր արձանագրությունն է, որ հմտորեն վերծանել է Կ. Ղաֆադարյանը։ Ահա այդ արձանագրությունը.

---

[28] Ն. Մառ, Հայկական ձեռագիրք ճեմարանի արևելեան լեզուաց ի, Պետերբուրգ (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1892, էջ 82)։

[29] «Էջմիածին», 1951 թ., № IV—VI, էջ 82։

[30] M. Brosset, նշվ. աշխ. (տե՛ս „Mélanges Asiatiques", հ. V, էջ 68)։

[31] ՄԱՄ ձեռ. № 4723, թ. 258ա։

[32] Այս համակարգի ծածկագիր գործ է ածվել նաև սլավոնական մատենագրության մեջ, որը կոչվել է „тарабарская грамота", կամ ուղղակի՝ „литорея" (տե՛ս Е. Ф. Карский, Славянская кирилловская палеография, էջ 253—254)։ Հայկական այս ծածկագրությունը սլավոնականից տարբերվում է միայն դասավորությամբ. քանի որ մեր այբուբենը բաղկացած է 36 տառանիշից, ուստի այն հնարավորություն է տալիս իրար փոխարինող չորս շարք ստեղծել, իսկ որովհետև սլավոնական այբուբենը քիչ տառեր ունի, ուստի որոշ ձայնավոր և բաղաձայն տառեր թողնվում են նույնությամբ։



Արձանագրությունը վերծանվում է. «Տ(է)Ր ԵԶՐ ՋՌԼԿՋ ԿԱԻՌՈԴԻԿՈՍ ՃՐՇՄԱՐԻՏ ΔΩΛΟΕ ΤΩ ΘΕΩ ՍԱՄԷԴ ՇՌԱՌԼ»։ Այստեղ փոխարինագիր ծածկագրերով են արտահայտված ընդգծված բառերը՝ ՋՌԼԿՋ, որ վերծանվում է «Հայոց» և «ՇՌԱՌԼ», որ վերծանվում է «ծառայ»։ Հունարենը նշանակում է «ծառայ աստուծոյ», իսկ վերջին «Ք»-ն պատվագրված է՝ «Ք[րիստոսի]»։

Այսպիսով, ծածկագիրը կարդացվում է. «Տէր Եզր Հայոց կաթողիկոս, ճշմարիտ ծառայ աստուծոյ. Սամէզ ծառայ Ք[րիստոսի]»[33]։

Փոխարինագրի այս տարբերակի ծածկագրերից մի շարք բնագրեր են հասել, որոնցից ուշադրության արժանի են հետևյալները.

Վիեննայի Մխիթարյանների № 7 ձեռագիրը, որն ընդօրինակված է 1439 թվականին, ունի գրչի հետևյալ ծածկագրությունը (հրատարակել է Տաշյանը, բայց չի վերծանել) «...Կրկին աղաչեմ յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր Ց. Բ. Մ. Ի. Խ. Կ. Ի. Ո. Ե. Ռ. Է. Ի. Ռ. Է. Կ. Ե. Բ., որ շատ աշխատեցա...»[34]։ Ծածկագրության մեջ նկատվում է նմանաձև տառերի մի քանի աղավաղում. 5-րդ Խ տառը պիտի լինի Ի, յոթերորդ Ի տառը պիտի լինի Խ, 12-րդ Ի տառը պիտի լինի Խ։ Այս ուղղումները կատարելուց հետո վերծանվում է[35].

Ց.Բ.Մ.Ի.Ի.Կ.Խ. .Ո.Ե.Ռ.Է.Խ.Ռ.Է.Կ.Ե.Բ.

Զ Ս ի մ է ո ն   կ ր ա ւ ն ա ւ ո ր ս

Մաշտոցի անվան մատենադարանի № 1548 ձեռագրում (էջ 384բ) ծածկագրված է հետևյալ բնագիրը.

«ՃՄ. ՑՑ. ՌԾ ՌՈ. ԵԲ. ՏՏ.   Լ· Կ. Գ. Բ. Ւ Դ
Ց ո վ ս է փ.   Ց ո վ ս է փ
ԱԲ. ՎՍ. ԺԺ. ԱԲ. ՑՑ. ՏՌ։ |||· |||⁝ ||||: ||||· |⁝ ||||:
Գ ր ի գ ո ր   Ց ո վ ս է փ

Առաջին տողի առաջին «Ցովսէփ»-ը և երկրորդ տողի «Գրիգոր»-ը գաղտնագրված են գումարգիր ծածկագրով, առաջին տողի երկրորդ «Ցովսէփ»-ը՝ փոխանագրի առաջին տարբերակով է, իսկ երկրորդ տողի վերջինը՝ սյունակետագիր ծածկագրով։

Նոր Ջուղայի մատենադարանի № 38 ձեռագրում, որն ընդօրինակված է

---

[33] Կ. Ղաֆադարյան, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 7։

[34] «Վիեննայի ձեռագրաց ցուցակ», էջ 50։

[35] Առանց գրչական ուղղումները կատարելու վերծանել է Խաչիկյանը՝ ստանալով. «զՍիմէոն կրաւնաւորս» (տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Հ. Գ. էջ 496)։

1442 թ., փոխարինագիր ծածկագրով, գաղտնագրված է գրչի անունը «Ո. Է. Դ. Մ. Թ»։ Վերծանվում է «Աւ[ե]տիք»[36]։

Մատենադարանի № 8587 ձեռագրում (1373 թ.) փոխարինագիր ծածկագրով գաղտնագրված է (բերում ենք միայն մի մասը)[37].

«...որք կարդայք յիշեցէք։ Յ. Վ. Ե. Կ. Ջ. Բ. Կ. Ե. Մ. Խ. և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոս»։ Այստեղ ծածկագրված է «Ջգրող սարին»։

Նույն մատենադարանի № 1740 ձեռագիրը (1636 թ.), ունի գրչի հետևյալ փոխարինագիր ծածկագիրը.

«Եւ Ջ. Ր. Մ. Ռ. Լ. Բ. Ճ. Լ. Յեղկելի գծօղս յիշել աղաչեմ»[38]։

Ծածկագիրը վերծանվում է «Եւ զԵսայիայ»։

Փոխարինագրի երկրորդ տարբերակի ծածկագրությունների ժամանակ միավոր թվեր ունեցող տառանիշին փոխարինում են հարյուրավորները, իսկ տասնավորներին՝ հազարավորները։

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ	ջ
Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
ռ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք

Երուսաղեմի մատենադարանի № 283 ձեռագրում (1486 թ.) գրիչը թողել է հետևյալ ծածկագիր բնագիրը.

«[Զ]երջանիկ ռաբունապետին իմոյ, և սրբազան հաւրս բարերարի, որ Ամլորդուն անուամբն վերակոչի Գ. Ջ. Յ. Ճ. Դ. Չ. Մ և Նորին տրուպ աշկերտիս Ս. Ի. Ս. Ո.Ն. Ա. Փ. Ե. Տ. Ս»[39]։ Առաջինը փոխարինագրի երկրորդ բանալիով գաղտնագրված է «Յովանէս», իսկ մյուսն, աջից ձախ կարդալով՝ «Ստեփանոսիս» անունը։

Մատենադարանի № 763 ձեռագրի (1408 թ.) գրիչն իր անունը փոխարինագիր երրորդ բանալիով գաղտնագրել է (բերում ենք ամբողջ պարբերությունը).

«Այլ և աղաչեմ զիս յիշեսջիք, զամենայն երախտաւորս իմ՝ զհոգևորսն և զմարմնաւորսն, ընդ գրելոցս նաև զիս եւ՝ զանիմաստ Լ Շ Կ Զ Մ Կ Ճ Ջ Մ Ն Ժ Զ Հ Մ Մ, զհայր մեր որ յերկինս ասելով վասն ինձ՝ բա[զ]մամեղիս»[40]։ Վերծանվում է.

Լ Շ Կ Զ Մ   Կ Ճ Ջ Մ Ն Ժ Զ Հ Մ Մ
Գ ր ո ղ ս   զ Թ ը ս տ ա կ է ս ս։

Անկյուրիայի ձեռագրաց ցուցակում հրատարակված է № 164 ձեռագրի կազմարարի հետևյալ ծածկագիր հիշատակագրությունը. «Վերըստին նորոգեցաւ տարէգիրքս, որ կոչի Ճաշուց, ձեռամբ և անիմաստ ԽՉ, ԵՉ, ՈՔ, ԽՉ, ԺԱ, ԳՋ, ԼՔ, ԺՆ, ՍՔ, ՋՓ։ Ձեռամբ իմով կազմեցի զայս, յիշեցէ՛ք ի մաքրափայլ

---

[36] Ծածկագիրը վերծանել է Լ. Խաչիկյանը (տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Գ էջ 543)։

[37] ՄԱՄ ձեռ. № 8587, թ. 223բ։

[38] ՄԱՄ ձեռ. № 1740, թ. 419բ։

[39] Ծածկագիրը վերծանել և հրապարակել է Պողարյանը (տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Երուսաղեմի», հ. Գ, էջ 111)։

[40] ՄԱՄ ձեռ. № 763. Թ. 218ա։

աղաւթս ձեր զուսուցիչն իմ Տէր Մկրտիչն, որ բազում աշխատութեան ուսուց կազմութեամբ ա[ր]հեստս զայս ձեր։ Աստուած ողորմի ասացէք։ Թվին ՌՃԻԷ (1678) յունվար ամսոյ Ի (20)»[41]։

Կյուլեսերյանը ծածկագիրը չի վերծանել։ Ըստ երևույթին փորձել է, բայց չի հաջողվել և կազմողի անվան տեղը բաց է թողել։ Ծածկագրության մեջ նկատվում են մի քանի տառերի սխալներ։ Բացի այդ, ծածկագրողն օգտագործել է փոխարինագրի երկու բանալին էլ միաժամանակ։ Որոշ ուղղումներից հետո հնարավոր է լինում մեծ ձգվածությամբ վերծանել.

ԽՋ ԵՋ ՌՔ ԽՋ ՄՌ ՇՂ ԻՔ ՑՆ ՌԽ ՉԲ
Ա ս լ ա ն կ ո ւ լ ի

Եթե ճիշտ է մեր վերծանությունը, այն դեպքում Անկյուրիայի № 164 ձեռագրի կազմողն է «Ասլանկուլին»։

Մատենադարանի № 6644 ձեռագիրը ունի հետևյալ փոխարինագիր ծածկագիրը.

«Յիշատակ է գիրքս այս ՇՔ.ՍԵ. ՃԳ. ԾՄ.ՇՔ. ՍԴ. (թ. 78ա)։

Եղ իշ ոյ աբ եղ ին։

Վերծանվում է. «Եղիշոյ աբեղին»։

Փոխարինագիր ծածկագրի երկրորդ բանալիով գաղտնագրված մի բնագիր ընդօրինակված է № 1268 ձեռագրում, որը պարունակում է Ներսես Լամբրոնացու մեկնությունները՝ ընդօրինակված 1603 թ.։ Ծածկագիրը գրի է առնված ձեռագրի սկզբում զարդանկարված կիսախորանի տակ, մի բան, որը հայ ձեռագրական մշակույթի համար արտասովոր է։ Ստորև բերում ենք ծածկագիրը՝ մեր վերծանության հետ միասին[42]։

Ճ Ն Յ Ս Բ Տ Հ Լ Բ Շ Ջ Մ
Ա տ ո մ ի ն է գ ի ր ք ս

Ճ Ժ Ճ Ժ Ո Տ Ծ Շ Մ Բ Ս Բ
Ճ ա ռ ա ց Ն ե ր ս ի ս ի

Ն Ճ Շ Մ Ց Տ Բ
Տ ա ր ս ո ն ի

Փոխարինագիր ծածկագրի երրորդ տարբերակի ժամանակ, ինչպես ասացինք, միավոր թվանշան ունեցող տառերին փոխարինում են տասնավորները, իսկ հարյուրավորներին՝ հազարավորները։ Փոխարինագիր ծածկագրի երրորդ բանալին հետևյալն է.

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ
ռ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք

Մաշտոցի անվան մատենադարանի № 817 ձեռագրում (1414 թ.) ծածկագրված է երկու բառ, որից առաջինը՝ ծածկագրի երրորդ բանալիով, իսկ երկրորդը՝ եղծայրագրով[43].

---

[41] *«Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ», էջ 824։*

[42] *ՄԱՄ ձեռ. 1268, թ. 2ա։*

[43] *Նույն տեղում, թ. 441բ (Հմմ. «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 163)։*

«Լ. Շ. Բ. Լ. Ց. Շ. Դ. Տ. Լ. Գ.» (թ. 441 բ)։
Գ ր ի գ ո ր   գ ր ի չ

Մատենադարանի № 4107 ձեռագրում (1420 թ.) «ամէն» բառը ծածկագրված է երկու ձևով՝ փոխարինագրի երրորդ տարբերակով և եղբայրագրով։ Բերում ենք տեքստը և վերծանությունը.

«Ժ Ս Ս Դ։   Ք Բ Բ Հ Տ»[44]*։*
Ա մ մ [է]ն   ա մ մ է ն

6. Եղբայրագիր ծածկագիր։—*Եղբայրագիր է կոչվում, որովհետև հայկական այբուբենի տառերը, ըստ հաջորդականության, փոխարինում են իրար. «ա»-ն փոխարինում է «բ»-ին, «գ»-ն՝ «դ»-ին, «ե»-ն՝ «զ»-ին և այլն։ Պետք է նկատի ունենալ, որ եղբայրագիր ծածկագրության մեջ բնագրի գաղտնագրված տառը կարող է վերցված լինել ինչպես սկզբից, այնպես էլ վերջից։ Եղբայրագրի բանալին հետևյալն է.*

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ	ճ
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ	Ռ	Ս	Վ	Տ	Ր	Ց	Ւ	Փ	Ք
մ	յ	ն	շ	ո	չ	պ	ջ	ռ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք	ա

Այս տեսակի հնագույն ծածկագրությունը 1313 թվականից է և պահվել է Ղ. Փիրղալեմյանի անտիպ «Հիշատակարաններ»-ի ժողովածուում։ Ծածկագրված է մի բառ՝ «Ճ. Ս. Լ. Ժ. Բ. Տ. Բ. Ն»։ Փիրղալեմյանը թողել է հետևյալ ծանոթագրությունը. «Պատուագրեալ անունս մնա յինէն անբացատրելի»[45]*։ Այն բացատրելի է և եղբայրագիր ծածկագրի բանալիով վերծանել է Լ. Խաչիկյանը՝ «Մխիթարայ»*[46]*։*

Ղալաթիայի մատենադարանի № 265 ձեռագրում ծածկագրված է (բերում ենք մեր վերծանության հետ միասին)[47]*.*

«Դ. Ց. Ջ. Ւ. Բ. Փ.   Ղ. Ջ. Ս. Բ. Ց. Գ
Գ ր ե ց ա ւ   ձ ե ռ ա մ բ

Բ. Գ. Ց. Բ Ձ Բ Ց Լ Շ»։
Ա բ ր ա հ ա մ ի ն

Իսրայել երեցը 1581 թ. գրած ձեռագրի հիշատակարանում ծածկագրել է իր անունը[48]*.*

Ն. Լ. Վ. Տ. Բ. Ն. Ջ. Ւ.   Ը. Տ. Ը. Ւ
Վերծանվում է. Յ ի ս ր ա յ ե լ   է ր է ց

№ 6644 ձեռագրի գրիչը՝ Եղիշե աբեղան, 1527 թվականին ընդօրինակված ձեռագրի մեջ թողել է եղբայրագիր հետևյալ ծածկագրությունը։ Բերում ենք տեքստը մեր վերծանությամբ.

---

[44] *Նույն տեղում, № 4107, թ. 503ա (Հմմ. «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 245)։*

[45] Ղ. Փիրղալեմյան, *Հիշատակարան կամ նշխարք պատմության Հայոց, հ. Ա (ՄԱՄ ձեռ. № 6273, էջ 123)։*

[46] *Տե՛ս «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 93։*

[47] *Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ», էջ 366։*

[48] *ՄԱՄ ձեռ. № 4346, թ. 266ա։*

ԲՑ.	ԲԿ.	ՁԾ.	ՁՑ.	ՑՁ.	ԲՆ.	և	ԷԿ.	ԲՍ.	ԲՂ.	ԼՎ
Տր	Ած	ող	որ	մե	այ	և	գծ	առ	այ	իս
ՎՁ.	ՓՐ.	ԲՇ.	ՁՓՇ.	ՀՑ.	ԲՓՇ.	ԲՓ.	ՁՑ.	Լ.	ՁԾ.	
սո	ւտ	ան	ուն	կր	աւն	աւ	որ	ի	Եղ	
ԼՈ.	ԲԺ.	ԲԳ.	ՁԾ.	ԲՆ.	Լ.	Լ.	ՁՑ.	ՀՑ.	ԸՇ.	ԲՑԻ.
իշ	այ	աբ	եղ	այ	ի	ի	եր	կր	են	Արց
ԲՍ	ՁՓ	ՁՑ	ՀՁ	Պ	Լ	ՍԲՊ.	ԸՇ.[49]			
ախ	ու,	որ	կո	չ	ի	Խաչ	են			

Վերծանվում է. «Տր ած ողորմեա; և գծառայիս սուտանուն կրաւնաւորի Եղիշայ աբեղայի ի երկրեն Արցախու, որ կոչի Խաչէն»։

№ 8587 ձեռագրում, որն ընդօրինակված է 1373 թվականին Գեորգ դրչի կողմից, գրված է հետևյալ ծածկագիրը (այն հիշատակարանի հետ միասին նախ հրատարակել է պրոֆ. Հ. Աճառյանը՝ Սանասարյան վարժարանի ձեռագրաց ցուցակում[50], ապա՝ պրոֆ. Լ. Խաչիկյանն իր «ԺԴ դարի հիշատակարաններ»-ի մեջ)։

«Բ. Լ. Ց. Ֆ. Վ. Ը. Ն. Բ. Հ. Շ. Գ. Լ. Շ. Դ. Ց. Ջ. Բ. Խ. Ղ.
Ջ. Դ. Լ. Շ., որք կարդայք, յիշեցէք Յ. Վ. Ե. Կ. Ջ. Բ. Կ.
Ե. Մ. Խ. և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոս»։

Հ. Աճառյանը սույն ծածկագրությունը թողել է առանց վերծանության, իսկ Լ. Խաչիկյանը փոխարինագիր ծածկագիրը վերծանել է «զգրող սորին», իսկ եղբայրագիրը թողել առանց վերծանության՝ տալով տողատակ հետևյալ ծանոթագրությունը. «Ծածկագրի վերջին մասը «...յիշեցէք»-ից հետո փոխարինագիր պարզ ծածկագրով կարդացվում է «զգրող սորին», իսկ առաջին մասը մեզ չհաջողվեց վերծանել»[51]։

Պարզվեց, որ չվերծանված ծածկագիրը գաղտնագրված է եղբայրագրի առաջին տարբերակով։ Գրչական որոշ սխալներ և բացթողումներ ուղղելուց հետո ծածկագիրը վերծանվում է.

Բ	Լ	Ց	Ֆ	Վ	Ը	Ն	Բ	Հ	Շ	Գ	Լ	Շ	Դ	Ց	Ջ	Բ	Խ	Դ	Ջ	Շ	Ս	Դ	Լ	Շ
Գ	ի	ր	ք	ս	է	Յ	ա	կ	ո	բ	ի	Ն	գ	ր	և	ա	լ	Գ	է	ո	ր	գ	ի	Ն

Ամբողջ պարբերությունը, Խաչիկյանի վերծանածի հետ միասին, կկարդացվի. «Գիրքս է Յակոբին, գրեալ Գէորգին, որք կարդայք յիշեցէք զգրող սորին և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոս»[52]։

Եղբայրագիր ծածկագրով գաղտնագրված մի բառ իր ձեռագրաց ցուցակում բերել է Բ. Սարգիսյանը, բայց, ծանոթ չլինելով նրա բանալուն, թողել է առանց վերծանության[53]։ Ահա այդ բառը պարունակող նախադասությունը. «Արտակայեցաւ բանքս այս ձեռամբ Ս Բ Տ Գ [Բ]. Յ. Պոստագիրք ի թվաբերութեան Հայկազեան սեռի հազար հարիւր տասն և երկու։ Ծածկագրված է «Վարդան» անունը։

---

[49] ՄԱՄ ձեռ. № 6644, թ. 154բ։

[50] Տե՛ս Հ. Աճառյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի ի Կարին, Վիեննա, 1910, էջ 10։

[51] «ԺԴ դարի հայերեն ձեռ. հիշատակարաններ», էջ 512։

[52] Նույն տեղում։

[53] Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Վենետիկի», Հ. Բ, էջ 587։

Եղբայրագիր ծածկագրի ընտիր մի օրինակ պահել է Մաշտոցի անվան մատենադարանի № 4817 ձեռագիրը, որն ընդօրինակված է XIV դարի բան-երեսունական թվականներին «Ի յաշխարհակալութեանս Բուսայիդ ղանին (1318—1325)»[54]։ Ձեռագրի գրիչն է Հովհաննես «Մեղապարտը», իսկ գրչության վայրը՝ Վասպուրականի Ոստնկա անապատը։ Ձեռագիրը, ընդօրինակությունից շատ ժամանակ չանցած, «գերի» է տարվել և վաճառվել Ոստան քաղաքում. գնել է դերձակ Խունդուքեկը։ Ահա այս ձեռագրի 122ա էջում գրիչը թողել է ծածկագիր մի հիշատակարան։ Տվյալ ծածկագիրը եղբայրագրի բարդ տարատեսակ է. վերծանվում է փոխառության ետ և առաջ սկզբունքով։ Ծածկագրից առաջ հեղինակը, նրա նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու նպատակով, թողել է հետևյալ մակագրությունը. «Իմաստուն ումն ես՝ եթէ կարդաս»։ Ստորև բերում ենք ծածկագրությունը մեր վերծանությամբ.

«Ե Ն Վ Ս Բ Յ Ը Վ
Ջ Յ ո վ ա ն է ս
Ա Ծ ժ Բ Ճ Բ Տ Ի Լ
Ա խ թ ա մ ա ր ց ի
Դ Խ Շ Ջ Ն Լ Ո Ը
Կ ծ ո գ յ ի շ է»։

7. **Գումարգիր ծածկագիր**։—«Գումարգիր» է կոչվում այն պատճառով, որ գաղտնագրված ամեն մի տառի թվական արժեքը հավասար է նշանակված երկու, երեք կամ չորս տառերի գումարին կամ բազմապատիկին։ Այսպես, «ԲԲ»-ն (2+2) հավասար է «Դ»-ի (4), «ԻԻ»-ն (20+20) հավասար է «Խ»-ի (40), «ՆՆ»-ն հավասար է «Պ»-ի և այլն։ Սակայն, երբ ծածկագրողները հանդիպում են այնպիսի տառերի, որոնց թվական արժեքը հնարավոր չէ երկու նույնական տառ-թվանշանի միացումով ստանալ, ապա գործ են ածում չորս տառ։ Այդ պատահում է տասնավոր, հարյուրավոր և հազարավոր թվական արժեք ունեցող որոշ տառանիշերի ծածկագրության ժամանակ։ Թվագումար ստեղծելու համար դիմում են երկու միջոցի. գումարում են իրար մոտիկ թվական արժեք ունեցող տառանիշեր և կամ՝ երկու տառի փոխարեն գործածում չորսը։ Որպես օրինակ վերցնենք «Հ» տառը. տարբեր գաղտնագրողների մոտ այն ծածկագրվում է երկու միջոցով. վերցնում են իրար մոտիկ Լխ (30—40) տառերը և կամ 70-ը բաժանում են երկու մասի ու նշանակում երկու 35 կազմող տառանիշերը՝ ԼԵԼԵ: «Ա» տառը (միավորը) տրվում է լատինական C տառանիշով (երկու կեսով)։

Այս ծածկագրի իրարից փոքր-ինչ տարբերվող մի քանի բանալիներ են պահվել հայ մատենագրության մեջ[55]։ Անհրաժեշտ ենք համարում բերել այդ խմբի ծածկագրության բանալիներից մեկը։

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ
CC ԱԱ ԱԲ ԲԲ ԲԳ ԳԳ ԳԴ ԴԴ ԴԵ

---

[54] ՄԱՄ ձեռ. № 817, թ. 267ա։

[55] Տե՛ս ՄԱՄ ձեռ. № 1869, թ. 391բ, ՄԱՄ ձեռ. № 8716, թ. 53բ և ուրիշներ։

Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ
ԵԵ ԺԺ ԺԵԺԵ ԻԻ ԻԵԻԵ ԼԼ ԼԵԼԵ ԽԽ ԽԵԽԵ
Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ
ԾԾ ՃՃ ՃԾՃԾ ՄՄ ՄԾՄԾ ՅՅ ՅԾՅԾ ՆՆ ՆԾՆԾ
Ռ Ս Վ Տ Ր Ց Ւ Փ Ք
ՇՇ ՌՌ ՌՇՌՇ ՍՍ ՍՇՍՇ ՎՎ ՎՇՎՇ ՏՏ ՏՇՏՇ

Զմմառի մատենադարանի ձեռագրաց ցուցակում հրատարակվել է գրչի ստորև բերված ծածկագիրը. «Շնորհիւ տեառն սկսայ և ողորմութեամբ նորին աւարտեցի զԱրարածոց գիրքս ես անարժան և նուաստ ծառայդ Ա. ՌՏ. ԺԺ. ՌՌ. ՍՍ. Ա. ԼԼ. ԳԴ. ՌՌ. ԺԺ. ի թվ. ՌՃԻԳ»[56]*։*

Ձեռագրերի ցուցակ կազմողին չի հաջողվել վերծանել ծածկագրությունը և պարզել ձեռագրի գրիչը։ Ծածկագիրը գումարագիր է և վերծանվում է.

Ա. ՌՏ. ԺԺ. ՌՌ. ՍՍ. Ա. ԼԼ. ԳԴ. ՌՌ. ԺԺ.
Ա ր ի ս տ ա կ է ս ի
ի թվ[ականին] ՌՃԻԳ [=1674]։

Եվ այսպես, պարզվում է, որ Զմմառի տվյալ ձեռագրի գրիչն է Արիստակեսը։

Մինաս Թոխաթեցին 1572 թ. Լվովում ընդօրինակած իր ձեռագրում թողել է հետևյալ գումարգիր ծածկագրությունը.

«Ձեռամբ ՃՃ. ԺԺ. ՄՄ. ՕՕ. ՌՌ. ԺԺ. թերավարժ գրչի»[57]*։*

Ծածկագրությունը վերծանվում է. «Մինասի»։

Անթիլիասի № 36 ձեռագրում գումարգրով ծածկագրված է ստորև բերված բնագիրը «Գրափակ է իմաստնոց արարեալ» խորագրով.

ԲԳ ԴՕԴՕ ՁՕ—Օ ԳԳ ԺԺ ԲՌ ԼԵԼԵ Օ—Օ ԵՌ ՁՌ Օ—Օ ՄՄ ԲՕԲՕ
Ե թ է զ ի ս հ ա ր ց ա ն ե-
ԲՌ ԻԻ Օ—Օ ՄՄ Օ—Օ ՃՃ ԲՌ ՃՃ ԲՕԲՕ ԽԵԽԵ Օ—Օ ԳՃ ՆՆ Օ Օ
ս խ ա ն ա մ ս մ ե ղ ա յ պ ա
ԵՌ ԴՌ ԲՌ ԳՃ ԺԺ ԵՃ ԲՕԲՕ ՁՌ ԴՕԴՕ ԹՌ ԺԺ ԹՌ ԵՌ ԺԺ ԲՌ
ր տ ս յ ի շ ե ց է ք ի ք ր ի ս-
ԴՌ ՑՑ ԲՌ
տ ո ս

Ծածկագրությունը վերծանվում է. «Եթէ զիս հարցանես՝ խանամս մեղայպարտս յիշեցէք ի Քրիստոս»[58]*։*

Ծածկագրության այս տեսակը օգտագործված է հունական և սլավոնական մատենագրության մեջ՝ իրենց տառերի թվագումարով։ Գարդհաուզենն այս խմբի ծածկագրությունն անվանել է „Doppelstelligen Zählen Kryptographie“*։ Նա* Par. Suppl. Gr. *№ 482 հունարեն ձեռագրից բերել է «Ἀμήν» բառի ծածկագրության հետևյալ օրինակը. «*ϲϲ. χχ. δδ. χεχε*»*[59]*։ Ռուս պալեոգրաֆիստ Ե. Կարսկին այդ նույն բառի ռուսական* ծածկագրությունը բերել է Մոսկվայի Սինոդի գրադարանի № 70 ձեռագրից, ուր «АМИНЬ» բառը ծածկագրված է հետևյալ ձևով. «а КК ДД ЛКЧ»։ Սլավոնական մատենագրության մեջ այդ ծածկագրությունը կոչվում է «мудрая литорея»[60]։

---

[56] **Մ. Քեչիչեան**, *Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 276։*

[57] **Ն. Ակինեան, Մինաս Թոխաթեցի** *(տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», 1921, էջ 40)։*

[58] *Այս ծածկագիրը և նրա վերծանությունը, որքան մեզ հայտնի է, դեռ չի հրատարակված և վերծանված։*

[59] *Տե՛ս* **V. Gardthausen.** Griechische Paleographie *I, էջ 314—315.*

Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի № 525 ձեռագիրը, որը գրված է 1618 թ., ունի գումարգիր հետևյալ ծածկագիրը. «Յիշեա և Աստուած զձեզ յիշէ։ Ձ. ՁԱ. ՌՌՍ. ԽԽԺ. ԺԽԺԽ. ՄՄՃՃԲՃ. ԳՃՅ. ԼԻԺԺ. ՍՍ. Ա. ՄՃՃ. ԺԽԽ. ՄՄ. ԳՃՄՃ. ՍՍՌ. ԲԲ. ԺԺ. ԴՃ. ՃՃՃ. ԺԺ. ՄՃՄ. ԳԲ. Ա. ԻԽԺ ՌՍՌ. ՎՍ. ԴԱ. Ի. Ա. ԼԻ. ԳԳ. ԽԺԺԻ. ԲԲԱ. Ջ. ԳՃ. ԺԽԽ. Ի. ՍՌՍ. Ա. ՏԻ. ՏԲ. Ա. ՄՃ. ՋՃ. ՌՍՎՌ. ԴԽ. Խ. ՆՆ»։

Հ. Տաշյանին չի հաջողվել վերծանել, բայց նա ճիշտ նկատել է, որ «Այս հանելուկին մէջ ըլլալու է ձեռագրիս վերջին մասին գրչի անունը»[61]։ Ծածկագրությունն առանց էական դժվարության (միայն մի տառ ուղղելով՝ III շարքի երկրորդ տառը), վերծանվում է. «Զէտիլ Գողտանեին ողին յիշեա ի տ[է]ր և ա[ստուա]ծ զձեզ [յիշէ] յիւր արքայութե[ա]նն»:

Խաչատուր Կաֆայեցու «Ժամանակագրության» մեջ ծածկագրված է. «Ձ. ԻԻ. Ա. ԷՃ. Ա. ՍՍ. ՅՅ. ՎՇՎՇ[Ռ]. ՍՇՍՇ. Է. ՍՇՍՇ. Է. ՎՎ. ՍՍ. Է. ԽՌ. ԸՌ. ԺԺ. ԺԽԺԽ. ԺԺ. ՆՆ. ՅՅ. ՌՌ. կթղկս. ԼԼ. ԺԺ. ԽՌ. Ա. ԼԼ. ՅՅ. ՌՌ. ՌՇՌՇ. Ա. ԽՌ. ԲԲ. Ա. ՄՄ. ՄՄ. ԺԺ. ԸԼ. ՅՅ. ԽԽԽԽ. ՅՅ. ՌՌ. ՌՌ. ԺԺ. ՃՃ. Է. ՅՅ. ՄՄ» (տեքստում կատարվել է գրչական որոշ ուղղում)։ Վերծանվում է. «Զխաչատուր էրէց. Տէր Փիլիպոս կ[ա]թ[ո]ղ[ի]կ[ո]ս, Կիրակոս, Վարդան, Նիկողոս, Սիմէոն»[62]։

Երկու փոքրիկ ծածկագիր այս խմբից հրատարակել է Բ. Սարգիսյանը իր Ձեռագրաց ցուցակում[63]։ Առաջին ծածկագրում ասվում է.

«Ես Մարտիրոս նուաստ քահանայ եկի ի Հէլիօպալիս թվին ՇՇ. Ճ. Ի. ՃՃ. ՕՕ. ՎՍ. ՍՍ. ԺԺ. ՎՍ. ՅՅ. ՌՌ»։ Ծածկագրված է. «ՌՃԻ (=1671) Մարտիրոս»:

Մյուս ծածկագրությունը հետևյալն է. «Կազմեցաւ ձեռամբ յոգնամեղ գրչի ՃՃ. ԺԺ. ՄՄ. ՕՕ. ՌՌ. ԺԺ. դպրի ի քաղաքս Կամենից թվին ՋՂԳ (=1544)»։ Ծածկագիրը վերծանվում է՝ «Մինասի»:

Ֆ. Քոնիբերը Բրիտանական թանգարանի հայկական ձեռագրերի իր կազմած ցուցակում բերել է մի պատառիկի գումարգիր ծածկագիր, բայց չի կարողացել վերծանել։ Ծածկագիրը գրչական փոքրիկ ուղղումներից հետո, վերծանվում է (բերում ենք մեր կողմից ուղղված տեքստը և վերծանությունը).

«Յակովբոսն և ընտանիք իւր յիշեսջիք ի ՔՍ ՅՍ.
ՃՃ. Ա [ՍՎ ՍՍ] ԺԺ ՍՎ ՅՅ ՌՌ ԺԺ ԲՏ ՌՌ
Մարտիրոսի Քս (=Քրիստոս)։

---

[60] Տե՛ս Е. Ф. Карский, Славянская кирилловская палеография, էջ 255։

[61] «Ցուցակ ձեռագրաց Վիեննայի», էջ 997։

[62] ՄՄ ձեռ. № 7709, թ. 237ա։ Բնագրում «Խաչատուր» բառի մեջ «ւ» տառը մեկ հազարով պակաս է հաշված։ Սխալ է թվագրված նաև ՎՇՎՇ «Բ»-ի թվագրումը՝ ՍԾՍԾ փոխանակ ՍՎՍՎ և «Վ»-ի թվագրումը՝ ՎԾՎԾ փոխանակ ՎՇՎՇ, որոնք ուղղված են վերծանված բնագրում։

[63] «Ցուցակ ձեռագրաց Վենետիկի», Հ. I, էջ 823։

ՌՌ ՍՍ ԵԴ ՏՏ (Ա) ՄՄ ՑՑ ՌՌ ԺԺ ՐՏ ՌՌ
Ս տ ե փ ա ն ո ս ի Ք̑ ս (=Քրիստոս)
ՃՄՃՄ Ս։ Եւ ես Կարապետ գրիչս յիշեսջի(ք) ի Ք̑ս Յ̑ս ամէն»[64]։
Յ̑ ս(=Յիսուս)։

Ծածկագրի մեջ ուղղված է. բնագրի առաջին շարքի չորրորդ ՌՌ երկտառը ՍՍ ձևով, երկրորդ շարքի երրորդ երկտառի՝ ԵԴ-ից հետո եղած Դ-ն դուրս է նետված որպես ավելորդ տառ, երրորդ տողի առաջին տառախմբի ՃՄՃՄ-ից հետո Ե տառը փոխարինված է Ս-ով։

Ուշադրության արժանի է, որ ծածկագրության այս տեսակը գործ է ածվել աղթարական գրականության մեջ։ Մատենադարանի № 193 ձեռագրի հիշատակագրությունների մեջ ծածկագրված է. «ԼԼ. ԺԺ. ԵՌ. Ա. ԺՄ. ՋՃ. ՌՌ»[65]։ Վերծանվում է՝ «Կիրակոս»։

Գումարգիր ծածկագրով է գրված 1727 թվականին Ղարաբաղի Աբրահամ յուզբաշու Բաքվի ռուսական հրամանատարությանը՝ Պողոս յուզբաշու անունով ուղղված նամակի վերնագիրը և ստորագրությունը։ Նամակն ունի խիստ գաղտնի բովանդակություն։ Աբրահամ յուզբաշին ռուսական հրամանատարությանը խնդրում է, որ Ղարաբաղին շտապ զինական օգնություն ցույց տան, ուստի և նա չի ցանկացել, որ նամակը թշնամու ձեռքն անցնելիս իմացվի, թե ով է ուղարկողը և ում է հասցեագրված։ Հասցեն ծածկագրված է. «ՋՃ. ԷՌ. ԳԳ. ՆՆ. [00]. ԵՃ. Ի. Է. ԸՃ. ՋՃ. ԽԵԽԵ. ՋՃ. ԲՌ. ԻՆ»[66]։

Ստորագրությունը ծածկագրված է. «00. ԱԱ. ԵՌ. 00.. ԼԵԼԵ. 00. ՃՃ. ՋՃ. ԷՌ. ԳԳ. ԸՃ. 00. ԵՃ. ԺԺ. ԲԱ. ՋՃ. ԷՌ. ԺԵԺԵ. ԲՌ. ԴՌ. 00. ԴՃ. ԴԳ. ՋՌ. ԺԺ»։

Ծածկագիրը դյուրին վերծանելու համար նամակագիրը խորհուրդ է տվել թվահամարով վերծանել. «Համարով վաղ վաղ գտանես»։

Առաջինը վերծանվում է. **«Ուզպ[ա]շիէ Պողոսին»**։ Իսկ երկրորդը՝ **«Աբրահամ ուզպաշի Գուլստանէցի»**։

8. **Երկբանալի ծածկագիր**։—Հայկական ծածկագրերի մեծ մասը ընդհանրապես գաղտնագրված են լինում միայն մեկ բանալիով։ Սակայն մեկմեկ պատահում են և երկբանալի ծածկագրեր։ Դրանցից մեկի մասին մենք խոսել ենք վերևում՝ սյունագիր ծածկագրության հատվածում։

Երկբանալի ծածկագրության մի ընտիր նմուշ պահել է Մատենադարանի № 1424 ձեռագրի ծածկագրությունը՝ 1620 թվականից։ Ծածկագրված է գումարգիր և փոխարինագիր բանալիներով։ Երբ ծածկագրությունը գումարգրից վեր ենք ածում սովորականի, ոչինչ չի ստացվում։ Վերջնականապես բացվում է, երբ ստացված բնագրում գործ ենք ածում նաև երկրորդ փոխարինագիր բանալին։ Ըստ որում, փոխարինագրի մեջ գործ է ածված երեք տարբերակների բարդացումներն էլ։ Բացի այդ, առաջին շարքի 11-րդ երկ-

---

[64] **F. C. Conybeare**, Catalogue of the armenian manuscripts in the British Museum էջ 240։

[65] ՄԱՄ ձեռ. № 193 թ. 175ր։

[66] **Ա. Գ. Աբրահամյան**, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953, էջ 223։

տառի մեջ կատարված է մի վրիպում. այն պիտի լինի ոչ թե «ՇՄ», այլ «ՇՇ»։ Ծածկագրության տեքստը բերում ենք ուղղված ձևով.

ՑՑ.	ԱԱ.	ՑՄ.	ՐՏ.	ՇՇ.	ՆՆ.	ՇՇ.	ՑՄ.	ԲԲ.	ՎՍ.	ՇՄ.	ՕԱ.	ՇՇ.
Ո	Բ	Շ	Ք	Ռ	Գ	Ռ	Շ	Դ	Ր	Չ	Ա	Ռ
ջ	մ	ե	ղ	ա	պ	ա	ր	տ	ծ	ա	ռ	ա-

ՃՃ.	ԲԱ.	ՃՃ.	ԴԱ.	ՑՄ.	ՍՌ.	ՇՇ.	ՐՏ.	ՇՇ.	ՑՌ.	ԴԱ.	ՌՌ
Մ	Գ	Մ	Ե	Շ	Վ	Ռ	Ք	Ռ	Ի	Ե	Ս
ս	յ	ի	շ	ե	լ	ա	ղ	ա	չ	ե	մ։

Ձեռագրի գրիչն է Հովհաննեսը, որն իր թողած երկհարկ ծածկագրության մեջ, այսպիսով, խնդրում է. «Ջմեղապարտ ծառաս յիշել աղաչեմ»[67]։

Այս ծածկագրությունը տառացի նմանություն ունի Գլաձորի համալսարանի նշանավոր ուսուցչապետ Եսայի Նչեցու 1284 թ. գրած ձեռագրում գաղտնագրված երկու բանալիով (գումարգիր և փոխարինագիր) բացվող հետևյալ ծածկագրությանը.

ՑՑ. ԱԱ. ՑՄ. ՐՏ. ՇՇ. ՆՆ. ՇՇ. ՑՄ. ԲԲ.

ԱԱ. ՇՄ. ԱԱ. ՇՇ. ՃՃ. ԲԱ. ՃՃ. ԴԱ. ՑՄ.

ՍՌ. ՇՇ. ՐՏ. ՇՇ. ՑՌ. ԴԱ. ՌՌ.[68]։

Գումարգիրը վերծանվում է.

Ո. Բ. Շ. Ք. Ռ. Գ. Ռ. Շ. Դ. Բ. Ռ. Բ. Ռ.

Մ. Գ. Մ. Ե. Շ. Վ. Ռ. Ք. Ռ. Ի. Ե. Ս.։

Գումարգրից ստացված արդյունքը եղբայրագրով վերծանվում է.
«Ջմեղապարտս էսաի յիշել աղաչեմ»։

Բոլոր տեսակի ծածկագրեր վերծանելու ժամանակ պետք է անպայման նկատի ունենալ, որ ծածկագրող հեղինակները հաճախ շփոթում են. բավական է մի կետ կամ մի տառանիշ մոռացության տրվի, գաղտնագրված բնագիրը ստանում է այլ նշանակություն և չի վերծանվում։ Նման դժվարությունների հանդիպելիս անհրաժեշտ է փորձել սխալգիր այս կամ այն տառանիշը, տառը փոխարինել նրա նախորդ կամ հաջորդ տառերով և կամ՝ սյունագիծը փոխարինել նախորդ և կամ հաջորդ համապատասխան սյունագծով։

9. **Բացակա անդամ ծածկագիր:**—*Այս ծածկագիրը հայկական ամենաբարդ և միաժամանակ ամենահետաքրքիր ծածկագրերից է։ Մեզ հայտնի է առայժմ այս ծածկագրի միայն երեք բնագիր, որոնցից մեկը գտնվում է Մաշտոցի անվան մատենադարանում, մյուսը՝ Բոդլյանի գրադարանի հայկական բաժնի № 2 ձեռագրում։ Երրորդը՝ միայն մի տող, առանց աղբյուրը ցույց տալու, հրապարակել է ակադ. Հ. Աճառյանը իր «Հայոց գրերը» աշխատության մեջ։*

Մաշտոցի անվան մատենադարանի բացակա անդամ ծածկագրության բնագիրը հետևյալն է.

---

[67] *ՄԱՄ ձեռ. № 1424, թ. 145ա։*

[68] *ՄԱՄ ձեռ. № 1422, թ. 190ա—191բ։*

ՂՋՔ. ՀՉՒ. ԶՈՑ. ԺՃՌ. ԵԾՇ. ԽՆՏ. ԺՃՌ. ԲԻՄ. ԲՄՍ.
ԲԻՍ. ԺՃՌ. ԲԻՄ. ԴԽՆ. ԶԿՑ. ԷՀՉ. ԴԽՏ. ԶԿՑ. ԲԻՍ.
ԴԽՏ. ԾՇՐ. ԲԻՄ. «Թէ կարդաս իմաստուն ոմն ես»[69]։

Բոդլյան գրադարանի հայկական բաժնի № 2 ձեռագիրը, որը բովանդակությամբ «Գանձարան» է, ընդօրինակված է 1610 թ., պարունակում է բացակա անդամ ծածկագրության հետևյալ բնագիրը.

«Արդ գրեցաւ սուրբ գանձարանս ձեռամբ մեղսաներկ և անհմուտ, անարժան, անծան և անծող գրչի ԲԻՄ. ԲՄՍ. ԲԻՍ. ՀՉՒ. ԶԿՑ. ԴԽՏ. լոկ անուն երիցուիս, որդի Լուցքացի պարոն Նիկոլայովին»։

Ծածկագրության երկու տեքստն էլ, ինչպես տեսնում ենք, կազմված է հայկական երեք տառանիշից։ Առաջին իսկ հայացքից դժվար չէ նկատել, որ երեք տառի այս խումբը կազմված է որոշ համակարգով. այստեղ զուգակցված են համարական նույն կարգի տառերը՝ վերցնելով միավորների, տասնավորների, հարյուրավորների և հազարավորների շարքից։ Այսպես, առաջին երեք տառերի թվականների արժեքն է՝ 90, 900, 9000, երկրորդինը՝ 70, 700, 7000, երրորդինը՝ 6, 600, 6000 և այլն։

Եռագիր ծածկագրի բանալին, մեզ անհայտ աղբյուրների հիման վրա, հրապարակված է պրոֆ. Հ. Աճառյանի «Հայոց գրերը» աշխատության մեջ[70]։ Ստորև բերում ենք այդ բանալին։

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
ԺՃՌ	ԻՄՍ	ԼՅՎ	ԽՆՏ	ԾՇՐ	ԿՈՑ	ՀՉՒ	ՁՊՓ	ՂՋՔ
ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ
ԱՃՌ	ԲՄՍ	ԳՅՎ	ԴՆՏ	ԵՇՐ	ԶՈՑ	ԷՉՒ	ԸՊՓ	ԹՋՔ
ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ	ջ
ԱԺՌ	ԲԻՍ	ԳԼՎ	ԴԽՏ	ԵԾՐ	ԶԿՑ	ԷՀՒ	ԸՁՓ	ԹՂՔ
ռ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք
ԱԺՃ	ԲԻՄ	ԳԼՅ	ԴԽՆ	ԵԾՇ	ԶԿՈ	ԷՀՉ	ԸՁՊ	ԹՂՋ

Հ. Աճառյանը բերել է ստորև վկայակոչվող մեկ տող ծածկագիր տեքստը և վերծանությունը.

ԲԻՄ ԶԿՑ ԷՀՉ ԵԾՇ ԻՄՍ ԴԽՏ ԲԻՍ ԾՇՐ ԲԻՄ ԵԾՇ ԶԿՑ ԸՁՓ
Ս ո ւ ր բ Ն Մ ե ս ր ո պ

Սկզբում, ծանոթ չլինելով Հ. Աճառյանի հրատարակած բանալու հետ, փորձեցինք այս ծածկագիրը բաց անել մեզ ծանոթ հայկական ծածկագրերի բոլոր բանալիներով, բայց ոչինչ չստացվեց։ Մեծ աշխատանքից հետո միայն պարզվեց, որ ծածկագրված տեքստի տառանիշեր պիտի փնտրել ոչ թե ծածկագրի մեջ, այլ նրանից դուրս։ Այսպես, առաջին երեք տառերի մեջ կան 90-ը, 900-ը, 9000-ը, բացակա է 9-ը, այսինքն թ-ն և այս է, որ ծածկագրված է։ Երկրորդի մեջ կա՝ 70, 700, 7000, բացակայում է 7-ը՝ է-ն։ Եր-

---

[69] *Տիրայր արքեպիսկոպոսի կազմած ցուցակը՝* General catalogue of the armenian manuscripts in the Bodleian Library of Oxford *(անտիպ, պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնում։ Տվյալ ծածկագրությունը գրի է առնված 7-րդ տետրակում)։*

[70] *Տե՛ս Հ.* **Աճառյան,** *Հայոց գրերը, էջ 467—468։*

րորդի մեջ կա 6, 600, 6000, բացակայում է 60-ը, այսինքն՝ կ-ն և այլն։ Սկզբունքը ճշտելուց հետո, առանց դժվարությունների, վերծանեցինք բերված ծածկագրերը։

Մաշտոցի անվան մատենադարանի № 193 ձեռագրի ծածկագրությունը վերծանված է.

ԴՋՔ.	ՀՁԻ.	ՉՈՑ.	ԺՃՌ.	ԽԾՇ.	ԽՆՏ.	ԺՃՌ.	ԲԻՄ.
թ	է	կ	ա	ր	դ	ա	ս

ԲՄՍ.	ԲԻՍ.	ԺՃՌ.	ԲԻՄ.	ԴԽՆ.	ՉԿՑ.	ԷՀՁ.	ԴԽՏ.
ի	մ	ա	ս	տ	ո	ւ	ն

ՉԿՑ.	ԲԻՍ.	ԴԽՏ.	ԾՇՐ.	ԲԻՄ։
ո	մ	ն	ե	ս

Այս նույն վերծանությունը գրված է ծածկագրի կողքին։

Բոդլյան գրադարանի վերևում բերված ծածկագիրը վերծանված է.

ԲԻՄ.	ԲՄՍ.	ԲԻՍ.	ՀՁԻ.	ՉԿՑ.	ԴԽՏ.
Ս	ի	մ	է	ո	ն

Այսպիսով, Բոդլյան գրադարանի հիշատակարանը կամբողջանա հետևյալ ձևով. «Արդ՝ գրեցաւ սուրբ գանձարանս ձեռամբ մեղսաներկ և անհըմուտ, անարժան, անծան և անծող գրչի Սիմէոն լոկ անուն երիցուես, որդի Լուցքացի (խոսքը Լեհաստանի Լուցք քաղաքի մասին է) պարոն Նիկոլայովին»։

10. **Արաբական թվանշանագիր ծածկագիր**:—Այս ծածկագիրը թվանշանագիր ենք անվանում, որովհետև գավազանագիր նշանագրերին փոխարինում են արաբական մեկից մինչև ինը թվանշանները։ Միավորների թվական արժեք ունեցող տառանիշերը կետեր չեն վերցնում, տասնավորների տառանիշերը՝ մի կետ, հարյուրավորներինը՝ երկու, հազարավորներինը՝ երեք։ Այս ծածկագրության բանալին հետևյալ է.



Մաշտոցի անվան մատենադարանի 1684 թ. ընդօրինակած № 4723 ձեռագրի գրիչներից մեկը՝ Մովսեսը, արաբական թվանշաններ ծածկագրությամբ գաղտնագրել է իր անունը71, որը վերծանվում է.



Մ ո վ ս ե ս

Նույն մատենադարանի № 4693 ձեռագրում, որը գրված է 1648 թ. Լիմ անապատում, արաբաթվանշան ծածկագրով գաղտնագրված է երկու անուն, որոնցից մեկը վերծանվում է «Ջանշին», իսկ մյուսը՝ «Մարկոս»72։



Ջ ա ն շ ի ն Մ ա ր կ ո ս

Մատենադարանի ազթարական բովանդակություն ունեցող № 10200 ձեռագրի գրիչը բազմաթիվ ոտնցեպտներ է ծածկագրել։ Անհրաժեշտ ենք համարում բերել նրանցից միայն մեկը՝ մեր վերծանությամբ։



«կ ի ն ո ր փ ղ ա յ ձ բ ե ր ե



խմյուր, որ ինքն

վ չ ի ո ւ կ ա ր ն

չիմանայ, կզանայ ա͞մ»։

Որոշ ձեռագրերում հանդիպում են այս ծածկագրերի շատ պարզ տեսակներ. վերցնում են ներկայումս գործածական թվանշանները և նրանցով համարժեք տառանիշերը ծածկագրում։ Ահա, օրինակ, № 3464 ձեռագրում ծածկագրված է հետևյալ բնագիրը.

«9000 5000 20 2000 4000 600 2000 20 50 1 1000 1 300

ք ր ի ս տ ո ս ի ծ ա ռ ա յ

1 30 7 9000 2000 1 400

Ա լ է ք ս ա ն

3000 1 5000 4 1 800 5 4000

վ ա ր դ ա պ ե տ

300 20 500 5 30 20 4000 7 5000 1 90 1 700 5 200»։

յ ի շ ե լ ի տ է ր ա ղ ա չ ե մ։

Այս ծածկագրությունն, ի դեպ, գործ է ածվել նաև հունական մատենագրության մեջ։ Վ. Գարդհաուզենի հնագրության մեջ այն կոչվում է „Zahlenkriptographie“ (թվական ծածկագիր)74։

---

71 ՄԱՄ ձեռ. № 4723, թ. 284բ։

72 ՄԱՄ ձեռ. № 4693, թ. 354ա։

73 ՄԱՄ ձեռ. № 10200, թ. 331բ։

74 Տե՛ս V. Gardthausen, Griechische Palaeographie, էջ 316—317։

Մատենադարանի № 7104 ձեռագրում այս ծածկագրով գաղտնագրված է. («Գալուստ, գրերը Աբրահամին, Մուսէսին, Մանասարին, Գրիգորին, Մխիթարին է») (Թ. 1բ—2ա)։

11. Ճիրանավոր ծածկագիր։—*Գծակետային սկզբունքով է կազմված ճիրանավոր ծածկագիրը։ Այստեղ վերցվում է մի օղ, և նրա կողքից չորս ուղղությամբ ձգվում է մեկից չորս ճիրան. միավորի համար գրվում է մեկ ճիրան, տասնավորի համար՝ երկու, հարյուրավորի համար՝ երեք և հազարավորի համար՝ չորս։ Այնուհետև, ըստ տառանիշի թվական արժեքի, դրվում են կետեր։ Կետագրության համակարգը նման է գծակետային ծածկագրի վերջին տեսակին, այսինքն՝ մեկ թվանշանով պակաս, քան սովորաբար ծածկագրվում է։ Բերում ենք այս ծածկագրի բանալին.*



Ակադ. Բրոսեի հրատարակած տեքստերի մեջ այս ծածկագրով գաղտնագրված է «Գալուստն» անունը[75]։ Բերենք ծածկագրությունը և նրա վերծանությունը.



Մաշտոցի անվան մատենադարանի № 4676 ձեռագրում, որը «Ճառընտիր» է և XIV դ. ընդօրինակություն, հանդիպում է ճիրանավոր հետևյալ ծածկագիրը[76].



12. Շրջագիր ծածկագիր։—*Շրջագիր ծածկագիրը կազմված է սովորական հայկական գրերից, միայն թե տառերն այստեղ գրվում են շուռ տված ձևով։ Այս խմբի ծածկագրերը վերծանելու համար պետք է ծածկագրությունը պահել հայելու առջև, որի անդրադարձումը դյուրություն է ստեղծում կարդալու համար։ Կարելի է նաև ծածկագիրը հարազատորեն պաճենահանել թափանցիկ թղթի վրա և շուռ տված պահել լույսին։ Շրջագիր ծածկագրությունը, ինչպես երևում է, դասավանդվել է հայ գրչության դպրոցներում։ Այդ երևում է*

---

[75] **M. Brosset**, Նշվ. աշխ. (տե՛ս „Melanges Asiatiques", հ. V, էջ 76—77)։

[76] **ՄԱՄ ձեռ. № 4676, թ. 379ա։**

Անդրեաս Եվդոկացու 1585 թ. կազմած դասագրքից, որի մեջ ուսուցման նպատակով բերվում է շրջագիր ծածկագրի բանալին[77]։



Շրջագիր ծածկագրության նմուշներ պատահում են նաև վիմագիր արձանագրությունների մեջ։ Ծածկագրության այս խմբին է պատկանում բանասեր Գ. Տեր-Մկրտչյանի՝ Սևանի կղզում հայտնաբերած ու վերծանած վիմագիր մի արձանագրություն (գրված 1448 թ.)։ Շրջած կողմով այն կարդացվում է. «Սա է փրկիչ աշխարհի և յոյս հաւատացելոց, որք երկրպագէք զԿ[արա]պ[ե]տ ք[ա]հ[անա]յ [յ]ազաւթս յիշեցէք։ Ջ[ա]ք[ա]ր կազմող ՊՂԷ»[78]։

Հաղբատի մեծ գավթի տապանաքարերի մեջ Կ. Ղաֆադարյանը գտել է ու հրապարակել մի տապանագիր՝ գրված շրջագիր ծածկագրով, որը կարդացվում է.

«ԱՅՍ [Է] ՀԱ[Ն]ԳԻ[Ս]Տ Ղ[ՈՒ]Կ[ԱՍ] Վ[ԱՐ]Դ[Ա]Պ[ԵՏ]ԻՆ»[79]։

Կիրակոս գրիչը Կապոսի գրչության օջախում 1498 թ. գրված ձեռագրում թողել է աջից ձախ կարդացվող հետևյալ ծածկագրությունը.

Մ. Ա. Ն. Ի. Լ. Ի. Տ. Ջ. Ի. Թ. Ն. Ա. Ր. Ե. Բ. Ր. Ա. Ջ.
Ա. Հ. Յ. Ա. Վ. Ս. Ի. Ջ. Ր. Գ. Ս. Ո. Կ. Ա. Ր. [Ի. Կ.]։

Վերծանվում է. «[Կի]րակոս գրչիս վայ հազար բերան. Թ[է] ի[ն]չ տի լինամ»[80]։

13. Վանկագիր ծածկագիր։—Այս խմբի ծածկագրերը կազմում են երկու կամ երեք տառից բաղկացած վանկեր, որոնց մեջ միայն առաջին տառն ունի նշանակություն, իսկ մյուսները կցորդներ են և գրված ծածկագրության բարդացման համար։ Կցման սկզբունքը հետևյալն է. ծածկագրվող բաղաձայն տառին կցվում է **ատ**, իսկ ձայնավորին միայն **տ**: Առանց ծածկագրելու գրվում է ու երկհնչյունը։

Այս ծածկագրով գաղտնագրված են գրիչ Մխիթար Անեցու թվաբանական խնդիրները։ Բերենք նրանցից երկու օրինակ.

Իններորդ խնդիր. «Մարդ մի յորդին երետ Ճ (100) սպիտակ՝ թէ Ճ(100) հաւ գնէ։ Նա գնաց զղազն Ե(5) սպիտակ, հաւն մի սպիտակ, ճնճղուկն Ի(20)

---

[77] ՄՄ ձեռ. № 1869, թ. 344ա։

[78] Գ. Տեր-Մկրտչյան, Աջից ձախ հայ գրություն (տե՛ս «Շողակաթ», 1913, էջ 139)։

[79] Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 124 և 161 (Ափսոսանքով պետք է նշենք, որ վերծանության մեջ սխալմամբ անունը կարդացված է Մկրտիչ)։

[80] «ԺԵ դարի հիշատակարաններ», Հ. Գ, էջ 273։

մէկ սպիտակ։ Տես թէ քանի՞ եղև ղազն, և հաւն և ճնճղուկն»[81]*։*

Հարցումին ծածկագիր պատասխանված է. «Ղատ ատ զատ նատն՝ ԺԹ(19) հատ ւատ Նատն՝ Ա(1), ճատ Նատ ճատ ղատ ոտ ւուտ կատ Նատն Ձ (80)։ («=Ղազն՝ ԺԹ (19), հաւն՝ Ա(1), ճնճղուկն՝ Ձ(80)»։

Տասներորդ խնդիր. «Երամ մի հաւ կու գնայրին։ Հաւ մի ի դէմ ելաւ և ասաց։ «Բարի գալք Ճ(100) հաւ»։ Ասացին. «Մեք չեմք Ճ(100). մեք, 'ւ այնչաք մի այլ ըինչ զմեզ, ու մեր կէսս, ու կիսու կէսն ու դուք՝ Ճ(100) եմք։ Տես թէ քանի՞ եղև երամն»[82]*։*

Հարցումին պատասխանել է. «Ետ բատ սատ ոտ ւատ Նատ ու վատ ետ ցատ» («=Երեսուն ու վեց»)։

14. **Հունատառ ծածկագրեր**:—*Հունատառ հայերեն ծածկագրերի մեջ հայերեն բառերը, ինքնին հասկանալի է, գրվում են հունարեն տառերով, իսկ հունարեն այբուբենում չեղած տառերի համար գործ են ածվում հայերեն տառանիշեր կամ նոր նշանագրեր։*

Այս խմբի ծածկագիր պահել է Երուսաղեմի մատենադարանի № 1297 ձեռագիրը, որն ընդօրինակված է 1363 թվականին Հովսեփ գրչի կողմից՝ և ունի իմաստասիրական բովանդակություն։

Ծածկագրված է հետևյալ սկզբունքով.

ա) Հունարեն այբուբենից օգտագործված են՝ α, ε, ξ, θ, λ, χ, γ, ι, ν, υ, ς, π, σ, φ, δ։

բ) Հայկական այբուբենի այն տառերը, որոնց համարժեքը չկա հունարենում, լրացվել են հայերենից՝ Բ, Հ, Խ, Ծ, Ձ, Չ, Ջ, Ի, Ք։

գ) Ծածկագրությունը բարդացնելու նպատակով Դ, Գ, Վ, Յ տառերի համար ստեղծվել են նոր նշանագրեր։

Ծածկագրության վերջում հեղինակը թողել է հետևյալ էպիգրաման. «Թէ դպիր ես ընթերցիր, թէ տգետ՝ յիմարեցիր»[84]*։ (Ծածկագրությունը բերված է ներկա աշխատության երկրորդ գլխում)։*

Ջմմառի մատենադարանի № 2 ձեռագիրը պարունակում է հունատառ հայերեն ծածկագրեր, որոնց մեծ մասի կողքին տրված է նրանց վերծանությունը։ Բերում ենք մի նմուշ՝ իր վերծանության հետ միասին.

ϹΩՌΒΗΛ ՌЄՂΩΠ
Ս ա մ ու է լ մ ե ղ ա պ-
ΩΡΤ ΓΡΟՂ
ա ր տ գ ր ո ղ

---

[81] *ՄԱՄ ձեռ. № 2961, թ. 73բ։*

[82] *Նույն տեղում, թ. 78բ։*

[83] *Ձեռագիրը գրված է Տփխիսի Ամենափրկիչ վանքում։ Այդ երևում է հիշատակարանի հետևյալ խոսքերից. «Արդ՝ գրեցաւ ի թուաբերութեանս հայոց Պ և ԺԲ (1363) ի մայրաքաղաքս Տփխիս ընդ հովանեաւ սուրբ Ամենափրկչիսս։ Ձեռագրի պատվիրատուն է հանդիսացել Հովհաննես Որոտնեցին։ Հիշատակարանում այդ մասին ասված է. «Գրեցաւ ...ի խնդրոյ տիեզերալոյս Վարդապետին Յովհաննիսի, որոյ գաւառն և հայրենիքն Որոտն է...» (տե՛ս* Ա. Գ. Աբրահամյան, *Երուսաղեմի հունատառ հայերեն ծածկագրի վերծանությունը, Առանձնատիպ Երևանի համալսարանի «Գիտական աշխատությունների» 23-րդ հատորից, էջ 451—452)։*

[84] *Նույն տեղում, էջ 455։*

Այս ձեռագիրն արժեքավոր է ոչ միայն իր ծածկագրով, այլ որ նրա հեղինակն է հայ մատենագրության աչքի ընկնող դեմքերից մեկը՝ Սամուել Անեցին։ Ձեռագիրը նրա ինքնագիրն է, գրված 1178 թվականին։

15. **Ներսիսյան ծածկագիր**:—*Այս ծածկագիրը Ներսիսյան է կոչվում, որովհետև գործածվել է Ներսես Աշտարակեցու նամակագրության մեջ։ Ծածկագիր այդ նամակները վերծանել է բանասեր Գ. Տեր-Մկրտչյանը*[85]*։*

Ստորև բերում ենք այդ ծածկագրության բանալին.


ա բ գ դ ե զ է ը թ
ժ ի լ խ ծ կ հ ձ ղ
ճ մ յ ն շ ո չ պ ջ
ռ ս վ տ ր ց ւ փ ք և օ ֆ

Անհրաժեշտ ենք համարում ստորև բերել Նահապետ Արշակյանի 1813 թ. հունվարի 26-ին Ներսես Աշտարակեցուն ուղարկած ծածկագրի միայն վերծանությունը.

«Նոր լուր այս է. Պօնօպարթն ԲՃՌ (200 000) զորօք անցկայցաւ գնաց իւր հօղն։ Հաստատն այս է, զօր գրեմ, եթէ այլք ինչ ասիս գրեն կամ ասեն, ունայն է, կամ՝ քաղեաի գրութ։ Եւ տեղիս մալերնի կատարելն այլ իմն բան է, ոպ գիտէք ևն։ Մօսկօվիցն ԲՃ (200) արապա ոսկի և արծաթ տարել է հետն, և երևում է գարուՆն մեծ կռիւ պիտի լինի ևն»[86]*։*

16. **Ակրոստիքոս ծածկագիր**:—*Անչափ շատ են ակրոստիքոսով ծածկագրվող անունները. այսպես են ծածկագրված տաղերի և գանձերի զգալի մասի հեղինակների անունները։ Ըստ որում, պատահում են երեք տեսակի ակրոստիքոսներ՝ ա) ծածկագրվում է տողի առաջին բառի առաջին տառով, բ) տողի միջին բառի վերջին տառով և գ) տողի վերջին բառի վերջին տառով։ Որպես նմուշ այստեղ բերում ենք Մատենադարանի № 2370 ձեռագրի չափածո հիշատակարանը, ուր միաժամանակ գործ է ածվել չորս տեսակի ակրոստիքոս ծածկագիր.*

---

[85] **Գ. Տեր-Մկրտչյան** *(Միաբան), Ներսիսյան ծածկագիր (տե՛ս «Արարատ», 1888, էջ 35—49)։*

[86] *Վերծանությունը հրատարակել է Մատենադարանի գիտական աշխատող Ա. Աղամյանը Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագրում», 1964 թ., № 8, էջ 81։*

«Յանկամ գոլով նիւազ	Մասամբքս մանրախիտ
Աներբ և յարակա	որակիդ բնաւի
Սահանք ոյգոյս բաղձայ	Նրբողեալ ըղձիւ
Ապենիազդ գայցես	ունայնիս խնդիր
Նքթեալ լաբոսագերբ	զմիգացեալիս հոգի
Ըսփոփեալ պալարեա	որ բնաւիս ես գոյակ
Սալարեալս բալիստրէն	Նըշդեհեալս ի կենաց
Որոնեալ տացեսցես	տըրրոհեալս յերամս
Ղաբանոսք ներհունի	մատրւակք ողռ
Ի իւծելոյս՝ տուք երագ	առիթ կենաց ձիր
Աւթոց ոգոց ծրած	րախարար տառիդ
Պենտեգեծիւ ի ծարի	Թըւաբերն առածի»[87]։

Ակրոստիքոսը վերծանելու համար անհրաժեշտ է սկսել տողի առաջին բառերի սկզբնատառերից՝ բարձրանալով ներքևից վերև, շարունակել միջին բառերի վերջացող տառերից՝ իջնելով վերևից ներքև, ապա անցնել հաջորդ միջին բառերի սկզբնատառերին՝ վերևից ներքև։ Ակրոստիքոսը վերծանվում է. «Պաւղոսըն ասաց զայս բանս ի գծի մռնոզըն տմարթ Տիւրիկցո որդի»։

Բերված տեքստի վերջին բառը՝ «առածի», գումարգիր ծածկագիր է, որ վերծանվում է Ա(1)+Ռ(1000)+Ա(1)+Ծ(50)+Ի(20)+551=1623 թ.։

Ճիշտ այս խմբին է պատկանում Մատենադարանի № 3082 ձեռագրի ակրոստիքոսը, ուր Գրիգոր վարդապետին նվիրված Գևորգ պատանու բանաստեղծության տողերի առաջին և վերջին տառերը ծածկագիր հոդում են. «Գէորգ Պատանին է. գրեաց Գրիգոր վարդապետին» (թ. 474բ—475ա)։

Նմանօրինակ ծածկագրերը բազմաթիվ են մասնավորապես ուշ միջնադարյան չափածո գրականության մեջ։

Բժշկական ծածկագիր:—Այս ծածկագիրը թեև հայկական տառանիշերի վրա է կառուցված, սակայն կատարված փոփոխությունն այնքան մեծ է, որ առաջին հայացքից դժվար է այդ նկատել։ Եղել են հայագետներ, որոնք հիմնըվելով այս ծածկագրության բնագրերի մի մասի ունեցած «Աղուանից գիրն է» վերտառության վրա, կարծել են, թե այդ իրոք աղվան ժողովրդի գիրն է, որ նրանց համար ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը (վրացականի հետ միաժամանակ)։

1838 թվականի հոկտեմբերի 24-ին արևելագետ Եվ. Բորեն ֆրանսիական գիտությունների ակադեմիային ներկայացրած իր զեկուցագրի մեջ հաղորդել է, որ իրեն հաջողվել է Էջմիածնի մատենադարանի մի ձեռագրի «հին և ղեղնած պահպանակի վրա» հայտնաբերել աղվանական փնտրվող այբուբենը[88]։

Եվ. Բորեի մատնացույց արած այդ ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան մատենադարանում և գրանցված է № 2013 թվահամարի տակ։ Ձեռագրի գրչությունն այնքան էլ հին չէ. ընդօրինակված է 1754 թվականին Կարապետ գրչի կողմից։ Աղվանական համարվող այդ այբուբենը ընդօրինակված է հայկական, հնդկական, ասորական և լատինական այբուբենների շարքում՝ կարդագիր մի գրչախաղից հետո, որի մեջ ցրված ձևով զետեղված հայերեն գրությունը վերծանվում է. «Այս է գիր արարածոց, զոր գրեաց Մովսէս ի գիրս իւր»։ Գրչախաղից հետո բերվում է «աղվանական» կոչվող այբուբենը, որի վերջում նոտր գրով նշված է «աղւնց», (իմա՝ «Աղուանից»), այսինքն՝ տվյալ այբուբենն աղվանական է։ Բորեի վկայակոչած աղվանական այբուբենի տառանիշերին նայելով, դժվար չէ նկատել, որ այն ոչ թե աղվանական գիր է, այլ հայկական նոտր գրի վրա հորինված ծածկագիր նշանագրություն. տառանիշերն այստեղ ենթարկված են որոշ փոփոխությունների՝ առանց խախտելու հայկական այբուբենի տառաշարքը։ Այս մասին ժամանակին խոսել է բանասեր Խորեն Ստեփանեն՝ Խորենացու Պատմության իր կատարած թարգմանության ծանոթագրության մեջ և իրավացի նկատել, որ «Բորեի գտած իբր թե աղվաներեն այբուբենը ամենատգետ հայն կհասկանար, որ մեր հայկական նոտր գիրն էր»[89]։

---

[87] ՄՄ ձեռ. № 2370, թ. 308բ։

[88] Տե՛ս Eugène Boré, Correspondance et mémoires d'un voyageur en Orient, t. II, Paris, 1840, էջ 31–53 (հմմ. Ն. Ակինյան. Մ. Մաշտոց վարդապետ, էջ 321)։



Նկ. 1. Բորեի աղվանական այբուբենը ձեռագրից

Եվ. Բորեի անհաջող ուղիով է ընթացել նաև բանասեր Ն. Քարամյանցը։ Նա Մյունխենում գտնվող մի հայկական ձեռագրում (ընդօրինակված Հովասափ Սեբաստացու կողմից 1564 թ.) հայտնաբերել է անսովոր երկու տողից բաղկացած գրություն, որի կողքին գրված է. «Գիր Աղւանից»[90], Ն. Քարամյանցը կարծել է թե այն իրոք աղվանական է, ուստի 1886 թվականին հանդես է եկել «Քսան և մի տառանիշ կորած այբուբենից» խորագիրը կրող հոդվածով[91]։

Ն. Քարամյանցի հրատարակած աղվանական այս գրությանը հետագայում անդրադարձել է բանասեր Ձ. Մուրատը և անվիճելի ապացուցել, որ Քարամյանցը թյուրիմացության մեջ է. «Աներկբա է,—գրել է նա,—վերոգրյալ նշանագիրք բնավ չկարեն լինել մնացորդ ինչ կորուսյալ անհայտ գրոցն աղվանից, այլ մանավանդ, որպես ակնհայտնի երևի՝ ստուգիվ խորհրդով այլաձևյալ և հերհյուրյալ իսկական հայերեն նշանագիրք»[92]։ Ահա Քարամյանցի հրատարակած «Աղվանական գիրը».

---

[89] Մովսէս Խորենացի. Հայկական պատմութիւն, աշխարհաբար թարգմանեց և լուսաբանեց Խորեն Ստեփանէ, ՍՊբ., 1889, էջ 264։

[90] Այժմ այդ ձեռագիրը Բեռլինի պետական մատենադարանի սեփականությունն է։

[91] **N. Karamianz,** Einundzwanzig Buchstaben eines verlorenen Alphabets (տե՛ս „Zeitschrift der Deutschen Morgenländischen Geselschaft", bd. XL, 1886, էջ 315—319)։



Բանասեր Ֆ. Մուրատն այն վերծանել է.

«Գիր աղվանից.

ՅԻՇԵՑԵՔ ՁՄԵՂԱՊԱՐՏ ՅՈՎԱՍԱՓ ՍԱՐԿԱՒԱԳՆ»:

1938 թ. ակադ. Ա. Շանիձեն հրատարակեց Մաշտոցի անվան մատենադարանի № 3124 ձեռագրի պարունակած աղվանական հորջորջվող մի այբուբեն, վերնագրված՝ «Այս է Աղուանից այբուբենն»։ Այս ձեռագիրը շատ հին չէ. ընդօրինակված է 1767 թվականին Մեսրոպ անունով գրչի կողմից։ Ա. Շանիձեն, իրավամբ, նկատել է, որ նշված այբուբենի տառանիշերի մեծ մասը հայկական տառերի ձևափոխությունն է, և եկել այս հետևության. «Չի կարելի նշված այբուբենը համարել աղվանական, որովհետև այն պարունակում է փոքր-ինչ ձևափոխված հայկական փոքրատառեր՝ ստեղծված ծածկագիր կարիքների համար»[93]։

Պետք է ասել, որ այս այբուբենը, որպես հայկական ծածկագրություն, շատ էլ հին չէ, որովհետև այնտեղ հանդիպում են «և», «օ» և «ֆ» տառերը. որոնք ստեղծվել են 13-րդ դարից հետո։


Այս է աղուանից այբուբենն.

ՄԱՄ-ի № 3124 ձեռագրի ծածկագրի բանալին

Հանգուցյալ ակադ. Հ. Աճառյանը խոսելով աղվանական կոչվող այս ծածկագրության մասին, հետևյալ կարծիքն է հայտնել. «Աղավնագիր բառը (աղավնիի գիր), որ ըստ իս բուն «ծածկագիր» նշանակությունն ունի, ճիշտ այնպես, ինչպես ունինք ծածկալեզվի համար ճնճղկի լեզու. ագռավի լեզու կամ կռկեռուն: Այս աղավնագիր բառը հետո շփոթվելով, դիտմամբ կամ պա-

---

[92] **Ֆ. Մուրատ**, Նշանագիրք իմաստնոց (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1903, 333—335)։

[93] **А. Шанидзе**, Новооткрытый алфавит кавказских албанцев и его значение для науки (ИЯИМК им. акад. Марра Груз. филиала АН СССР, т. IV, էջ 48)։

տահմամբ, դարձել է Աղվանից գիր. *և այս անունով ալ հիշված են ծածկագրերը մեր ձեռագրերու մեջ տեղ-տեղ»*[94]։

Ա. Շանիձեի հրատարակած այս նույն խմբի աղվանական մի այբուբեն ընդօրինակված է Մաշտոցի անվան մատենադարանի № 771 ձեռագրում (թ. 202բ), որն ունի 17-րդ դարի գրչություն։ Այբուբենը վերնագրված է. «Գիր աղուանից ըստ այբուբենից»։ Այբուբենի առաջին շարքը կրկնվում է («ղ» տառի բաց թողնելու հետևանքով, ինչպես երևում է, շարքը չի շարունակվել և վերցվել է փակագծերի մեջ)։ Այբուբենի ուշադիր ուսումնասիրությունը բերել է մեզ հաստատուն այն համոզման, որ այս ևս աղվանական լինել չի կարող. այն ստեղծվել է հայկական տառանիշերի հաջորդականության և ձևափոխությունների հիման վրա ուշ դարերում և օգտագործվել իբրև հայկական ծածկագրության բանալի։


գիր աղուանից ըստ այբուբենից:

ՄԱՄ-ի № 771 ձեռագրի պարունակած աղվանական այբուբենը։

Աղվանական համարված այբուբենի վեց տարբերակ մի էջի վրա բերված է Մատենադարանի № 8952 ձեռագրում (թ. 26ա)։ Ընդ որում, չի նշված, թե նրանցից որևէ մեկը «աղվանական» է։ Ձեռագիրը նոր է՝ ունի 18-րդ դարի գրչություն։ Բոլոր այբուբենները երկու շարքից են, բացառությամբ երրորդի, որն ընդհատվում է «լ» տառով։ Նախորդի օրինակով այստեղ բերվում են այբուբենի տառանիշերը, հետո՝ նրանց վերծանությունը հայկական տառերով։ Չորրորդ այբուբենը շարադրված է հակառակ շարքով. նախ բերվում են հայկական տառանիշերը, ապա՝ նրանց ծածկագիր նշանագրերը։ Այս վեց այբուբեններից ոչ մեկը աղվանական լինել չի կարող. դժվարանում ենք նրանց և աղվանական արձանագրությունների տառանիշերի միջև նմանություններ գտնել[95]։

«Աղվանական» այս նույն խմբի մի այբուբեն, առանց վերնագրի, պարունակում է Մատենադարանի № 3185 ձեռագիրը (XVIII դ., թ. 1ա)։ Այստեղ երեք շարք բերվում են նշանագրերը և, ի տարբերություն նախորդ այբուբենների, տրվում նրանց յուրաքանչյուրի վերծանությունը հայկական տառանիշերով։ Աղվանական այս այբուբենը ուշագրավ է նրանով, որ նրա կազմող հե-

---

[94] Հ. Աճառյան. *Հայոց գրերը, էջ 478։ Հայագետներ* Հ. Անասյանը *և* Աս. Մնացականյանը *հակված են կարծելու, թե այնուամենայնիվ այդ այբուբենը ծածկագրության համար չի ստեղծված և բուն աղվանից հին գիրն է (*Հ. Անասյան. *Հայկական մատենագիտություն.* Հ. Ա, Երևան, 1959, էջ 615—616. Աս. Շ. Մնացականյան, *Աղուանից գրեր և ոչ թե «աղավնագրեր», «Լրաբեր», 1970 թ., № 10, էջ 66—78։*

[95] *Հմմ.* Ա. Գ. Աբրահամյան, *Աղվանական համարվող մի քանի բնագրերի շուրջը (տե՛ս «Լրաբեր» ՀՍՍՀ ԳԱ-ի, 1970 թ., № 3, էջ 59—60)։*

զինակը, ծածկագրելու սկզբունքը ցույց տալու համար, այբուբենի ներքևում բերում է ծածկագրի մի նախադասություն, որը վերծանվում է. **«Ետուն այսպէ՛ս** *ձգեաս. իմ եղբայր հարազատ», այսինքն՝ այս սկզբունքով պետք է առաջնորդվես գաղտնագրելիս։*

Վերջապես, այս նույն «աղվանական» խմբին պատկանող երկու այբուբեն պարունակում է № 7017 ձեռագիրը (թ. 1 ա, XVIII դ.)։ Յուրաքանչյուրը շարադրված է երեք շարք, ամենից ներքև բերված է «տ», «ր» և «ք» տառերի նշանագրերը և նրանց վերծանությունը։ Իրար հաջորդող այս երկու այբուբենների առանձին նշանագրեր զգալի չափով տարբերվում են իրարից, չնայած կազմված են նույն սկզբունքով։ Նրանց և բուն աղվանական արձանագրությունների տառատեսակի մեջ նմանություն փնտրելու ջանքերն անօգուտ են։ Սրանք ևս սովորական հայկական ծածկագրության բանալիներ են, որոնք կարող են օգտագործվել վերծանությունների ժամանակ։

*Գր. Գալեմքյարյանը ժամանակին ուշադրություն է հրավիրել Մյունխենի մեկ ուրիշ հայերեն ձեռագրի վրա (*K. Hof-und Staatsbibl. Cod. Arm. *№ 7, fol. 293r), ուր կա անընթեռնելի մի գրություն՝ 15 տող. «Մենք համեմատելով Ն. Քարամեանցի ...հրատարակած՝ Աղւանից գիր համարուած գրերուն հետ, քանի մի տեղ ճշտիւ նոյնութիւն գտանք»*[96]*։ Սակայն Ա. Շանիձեի վերծանությունից պարզվեց, որ այն ևս հայերեն ծածկագիր է՝ գրված 1674 թ.*[97]*։*

Այս ծածկագրությունը հայ մատենագրության մեջ հայտնի է «Բժշկական ծածկագիր» անունով։ Մինչև վերջին ժամանակներս հայտնի էր նրա միայն 6 նշանագրի իմաստը, իսկ մնացած 12-ն անհայտ էր մնում։

Ձեռագրերի ուսումնասիրության ընթացքում մեզ հայտնի դարձան բժշկական ծածկագրությամբ գաղտնագրված մի շարք ձեռագրեր, որոնց միջոցով դժվար չէր, նախադասության իմաստը մակաբերելով, լրացնել պակաս նշանագրերը և ամբողջացնել այն։ Բժշկական այդ ծածկագրերով գաղտնագրված հիշատակարաններ հայտնի դարձան Մատենադարանի № 6644 (թ. 144բ, 63ա, 165բ, 1527 թ.՝ Եղիշե գրչի), № 6731 (թ. 68ա 1652 թ.՝ Հովասափ Վանեցի գրչի), № 848 (Հովասափ Սեբաստացու՝ 16-րդ դարի), № 9758 (թ. 5ա—7բ, Ավետիք Բաղիշեցու՝ 1814 թ.), ինչպես նաև Անկյուրիայի № 92 (Սարգիս գրչի), նույն մատենադարանի № 138 (Եղիա դպրի), Անթիլիասի կաթողիկոսարանի № 16 (Հովասափ Սեբաստացու՝ XVI դ.)[98]*։*

Բժշկական ծածկագրերի բանալին հետևյալն է[99].

---

[96] Գր. Գալեմքեարեան, *Ցուցակ հայերէն ձեռագրաց Արքունի Մատենադարանին ի Միւնխէն*, Վիեննա, 1892, էջ 21։ Հմմ. **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 619։

[97] **А. Шанидзе**, Криптографическая запись в одной армянской рукописи из Мюнхенской коллекции *(տե՛ս «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ-ի (հաս. գիտ.) 1960, № 9, էջ 91—98)*։

[98] *Հ. Աճառյանը ժամանակին տեղեկացել է, որ այս ծածկագրության ամբողջական բանալին հայտնի է հայ ոսկերիչների նեղ շրջանակներում։ Նա անգամ փորձել է ոսկերիչներից ստանալ ծածկագրի բանալին, սակայն նրանք հրաժարվել են տալ, որովհետև «անոնք,—ինչպես գրում է Աճառյանը,—իրենց վարպետներուն երդում տված են եղեր, ուստի ծածկագրին գաղտնիքը երբեք չեն հաներ»։*

[99] *Հմմ.* **Ա. Աբրահամյան**, *Աղվանական համարվող մի քանի բնագրերի շուրջը («Էջմիածին», 1970 Ը., № 3, էջ 56)։*


ա բ գ դ ե զ է ը թ
ժ ի լ . խ ծ կ հ ձ ղ
ճ մ յ ն շ ո չ պ ջ
ռ ս վ տ ր ց ւ փ ք

Փորձենք վերծանել այս բանալիով մի քանի բժշկական ծածկագիր բնագրեր։

Մատենադարանի № 6644 ձեռագրի գրիչ Եղիշե կրոնավորը 1527 թ. ընդօրինակած ձեռագրի մեջ թողել է բժշկական երեք ծածկագիր բնագիր[100]*,*

Առաջին ծածկագիրը վերծանվում է. «Ջարենլցիս զԵղիշայ կրաւնաւոր զհայրն իմ Մալիք սուլտանն»։ Կողքին գրված է ծածկագրության վերծանությունը, միայն «զԵղիշայ» վերծանելու փոխարեն սխալմամբ վերծանվել Եղիեայ»։

Երկրորդ ծածկագրությունը վերծանվում է. «Թողութի արարէք ինձ Եղիշա կրաւնաւորի։ Եւ ես մոլորեցայ ի երկրէն իմ, որ յայժմ Խաչեն կոչի։ Ե[ւ]ս յ շեցէք զմեծ պապն իմ զՃալալդաւէն որ յայժմ Ջալալեցի կոչի յազն մեր»։ Ա վերծանությունը այլ ձեռագրով գրված է ծածկագրության ստորին լուսանցքում։

Երրորդ ծածկագրությունն ավելի ընդարձակ է. այն վերծանվում է.

«Գրեցաւ սակաւ աշխատանքս, որ կոչի գաւազանք ի սբ քաղաքս յԵղ Հռչակաւոր վանքս Հայոց ի սբ Յակոբ ձեռամբ մեղաւոր գրչի Հայրապե կրաւնաւորի Սեպաստեցոյ վասն որոյ երես անկեալ աղաչեմ զհանդիպողս

Թողութի մեղաց խնդրել յԱյ բազմայմեղ գրչիս և ծնողաց իմոց և եղբարց քերց և յամ զարմից՝ կենդանեաց և ննջեցելոց և Քս զձերն թողցի նախ. ապա՝ զմերն և նմայ փառք յաւիտեանս ամէն։ Յոյժ ձմեռն եղև Եղմ և 6 ան գամ ձիւն եկեկ, որ ոչ ոք յիշէր։ Թվկնին Հայոց ՋՀՋ»[101]*։*

Մատենադարանի № 848 ձեռագրում, որը XVI դ. գրչություն է, Հովասափ գրիչը թողել է հետևյալ ծածկագիրը[102] *(տե՛ս էջ 278).*

---

[100] ՄԱՄ ձեռ. № 6644, թ. 144բ։

[101] ՄԱՄ ձեռ. № 6644 թ. 165բ։

[102] ՄԱՄ ձեռ. № 848, թ. 803բ (տե՛ս ՍԲՀ 1965 թ., № 1, էջ 231—232)։



Տարիներ առաջ այս ծածկագրության հետ ծանոթ է եղել բանասեր Ն. Ակինյանը, որն իր կազմած անտիպ ձեռագրաց ցուցակում, տվյալ ձեռագրի նկարագրության թերթիկում, թողել է հետևյալ ծանոթությունը. «Ստորև կա հին ծածկագրություն, հունական նշանագրերու նկարագրով, զոր չեմ կարող լուծել»։ Ակինյանի ակնարկած «Հունարեն նկարագրով» գրությունն իրականում բժշկական ծածկագրություն է, որը վերծանվում է. «Զմեղապարտ Յովասափ սարկաւագս յիշէք»։

Կիպրոսի հայկական ձեռագրական ժողովածուի № 16 գրչագիրը, որն այժմ Անթիլիասի սեփականությունն է, ունի հետևյալ ծածկագիր հիշատակարանը[103].



Վերծանվում է. «Զմ(ե)ղապարտ Յովասափն յիշեցէք ի Տ(է)ր, զՄուրատն»։

17. **Թալիսմանագիր ծածկագիր**։—Հիմնականում գործ են ածվել ախտարական բովանդակությամբ ձեռագրերում և «Հմայիլ»-ների մեջ։ Չնայած այս ծածկագրով գաղտնագրված բնագրերը աղբյուրագիտական առանձին արժեք չեն ներկայացնում, բայց քանի որ նրանով կարող են զբաղվել հայ ազգագրության պատմությամբ զբաղվող մասնագետները, անհրաժեշտ ենք համարում ստորև բերել այդ ծածկագրության մեզ հայտնի երեք բանալի[104]։

Առաջին բանալին ընդօրինակված է Մատենադարանի № 8716 ձեռագրում (թ. 57ա)։ Բանալուց առաջ գրիչն անհրաժեշտ է համարել նշել հետևյալը. «Այս նշանագիր է, որ գրեն ի տլսմն։ Զայս վասն այն գրեմ, որ ի տեսանել ինչ գիր, նա համեմատելով լուծել զնոսայ»։

Թալիսմանագրի երկրորդ բանալին գրի է առնված Մատենադարանի № 2716 ձեռագրում (թ. 52ա)։

---

[103] Օգտվել ենք անձամբ՝ տվյալ ձեռագրից։

[104] Հմմ. Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ 457—458։

Ծածկագրի երկրորդ բանալին գտնում ենք № 8716 ձեռագրում, թ. 52ա, որի գրիչն է Աստվածատուր Հալաթճին (ձեռագիրը 17-րդ դարից է)։



XV. ԳՐԱՆՑՈՒԹԸ ԵՎ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԸ

Հայաստանի մի շարք շրջաններում (Սիսիան, Եղեգնաձոր, Ազիզբեկով, Սևան և այլն) վերջերս հայտնաբերվեցին բազմաթիվ ժայռապատկերներ։ Հին աշխարհի տեղաբնակ մարդը քարե այդ մատյանում պատկերել է իր առօրյա կյանքը և զբաղմունքը։ Հետագայում, սակայն, քարից բացի գրանյութ է ծառայում նաև կավը, որից պատրաստել են սալիկներ, թաց վիճակում գրել են նրա վրա և թրծել (օգտագործել են հեթիթները, մասամբ՝ ուրարտացիները։ Հնագիտական պեղումների ժամանակ հազարավոր թրծաղյուսի սալիկներ են հայտնաբերված Բողազ-Քյոյում, Թել-Ամարնայում և այլ վայրերում)։

Հին Եգիպտոսում գրանյութի համար օգտագործել են պապիրուսը, որ պատրաստում էին համանուն բույսից. հատուկ ասեղներով հանում էին այդ բույսի ծուծը, թրջում, ծեծում և համապատասխան հաստությամբ մամլում։ Պապիրուսը սովորաբար պատրաստում էին երկար շերտով՝ մոտ 18 մետր երկարությամբ, վրան գրում էին վրձինով, ոլորում և փաթեթ կազմում[1]*։*

Պապիրուսն իբրև գրանյութ մեզանում չի օգտագործվել, եթե չհաշվենք հայատառ հունարեն գրված այն պատառիկը, որ հայտնաբերվել է Եգիպտոսում և քննության առարկա դարձել Հ. Տաշյանի կողմից[2]*։*

Գրեթե պապիրուսի չափ հավասար հնություն ունի մագաղաթը (պերգամենտը), որի նախկին հայրենիքը Փոքր Ասիայի առևտրական և կուլտուրական խոշոր կենտրոն Պերգամ քաղաքն է համարվել[3]*։*

Մագաղաթը պապիրուսի համեմատությամբ մեծ առավելություններ ունի. այն շուտ չի փչանում, հնարավոր է գրել երկու երեսի վրա, ցանկացած ժամանակ կարելի է այն լվանալ և նորից գրել և, վերջապես, չի ջարդվում գիրք կազմելիս։ Հնում մագաղաթը պատրաստել են տնային և վայրի կենդանիների մորթիներից՝ գառան, ոչխարի, այծի, հորթի, նապաստակի և այլն[4]*։*

Հայաստանում, մաշտոցյան գրերը ստեղծելուց հետո, հիմնական գործածական գրանյութը մագաղաթն է հանդիսացել։ Ըստ որում, մագաղաթը հիմնականում պատրաստվել է տեղում։ Այդ մասին հավաստի տեղեկություններ կան ձեռագրերի հիշատակարաններում։ Այսպես, Հովհաննես Որոտնեցին 1354 թվականին իր ընդօրինակած ձեռագրի չափածո հիշատակարանում հայտնում է, որ ինքն է պատրաստել իր գրած ձեռագրի մագաղաթը.

---

[1] *Տե՛ս* Լոուկոտկա. *Գրի զարգացումը, Երևան, 1955, էջ 60։*

[2] *Տե՛ս* Հ. Տաշյան, *Ակնարկ մի հայ հնագրության վերա, էջ 96—98։*

[3] *Ըստ հունական մի ավանդության, Պերգամի Եվմենիոս Երկրորդ թագավորը (197—159 թթ.) ցանկացել է այնպիսի մատենադարան ստեղծել, որն ավելի հարուստ լինի, քան Աղեքսանդրիայի նշանավոր մատենադարանը։ Այդ բանը իմացել է Աղեքսանդրիայի Պտղոմեոս թագավորը, չի ցանկացել իր առաջնությունը զիջել նրան, ուստի արգելել է պապիրուսի արտահանությունը երկրից։ Պերգամի թագավորին այդ կացությունից դուրս է հանել Կրատես անունով մի գիտնական, որը հնարել է մագաղաթը։ Եվ ահա Պերգամում հայտնաբերված մագաղաթը շատ շուտով տարածվել է ամենուր և նրա անունով էլ կոչվել է պերգամենտ։*

[4] *Աշխարհում հայտնի է նաև մի ձեռագիր, որը գրված է մարդկանց մաշկից պատրաստած մագաղաթի վրա, այդ ձեռագիրն այժմ Լոնդոնի Բրիտանական թանգարանի սեփականությունն է։*

«Յո[վ]հան[ն]էս՝ աշխարհաւ Սիսակէից,
Գաւառաւ Արոտնէից,
Զմագաղաթս ձեռամբ իմո բազկից
Շինեցի նիւթ պիտոյից»[5]։

Որոտնեցին այս արհեստը սովորեցրել է և իր աշակերտներին։ Այդ առթիվ ուշագրավ է Գրիգոր Տաթևացու հաղորդած հետևյալ տեղեկությունը. «Զմագաղաթս նոյն ինքն մեծ վարդապետն (նկատի ունի Յովհաննէս Որոտնեցուն— Ա. Ա.) իւր ձեռօքն գործեաց (այսինքն՝ պատրաստեց—Ա. Ա.) և մեզ ուսոյց զայն արուեստ»[6]։

Գրչության խոշոր կենտրոններում գոյություն են ունեցել մագաղաթ պատրաստելու հատուկ արհեստանոցներ՝ Գլաձոր, Տաթև, Հռոմկլա և այլն.

Ձեռագրերում մագաղաթ պատրաստելու եղանակի մասին պահպանվել են հատուկ ցուցմունքներ։ Այսպես, Մատենադարանի № 1849 ձեռագրում հետևյալն է առաջարկվում մագաղաթ պատրաստելու համար (բերում ենք թարգմանաբար). «Վերցրու որևէ կենդանու մորթի՝ ուլի, վայրի ոչխարի, տնային ոչխարի, ձիու մտրուկի, նապաստակի, այծյամի, հորթի մորթին և այլն, նրա մազոտ երեսին քսիր լավ մաղած ու ջրի մեջ բացած կրի շաղախ։ Եթե մագաղաթը հաստ է, կրի շաղախը խիտ արա, իսկ եթե բարակ՝ ջրալի։ Երբ նա հասնի, այսինքն՝ աշ առնի, մազերը քերիր մորթու վրայից, մաքուր լվա և պարանով ձգված կապիր արևի տակ, որ չորանա։ Ապա վերցրու քերիչը և քերիր մսի կողմն այնքան, որ միսն ամբողջապես մաքրվի և հարթ երես դառնա։ Չորանալուց հետո քերիր նաև մազի կողմը։ Այնուհետև մագաղաթին քսելու համար վերցրու ձվի սպիտակուցը և սպիտակ կտավատը, խառնիր իրար, թող երեք օր մնա, մինչև որ կտավատը մեղրի նման ծոր տա, ապա քսիր մագաղաթին և քերիչով քերիր»[7]։

Մեծ ծավալ ունեցող ձեռագրերի համար օգտագործում էին և խոշոր եղջյուրավոր անասունների կաշի։ Հայտնի է, որ Մուշի մեծադիր Տոնականը՝ № 7729, որը գրվել է 1202 թվականին և իր ծավալով մեզ հասած ամենամեծ ձեռագիրն է Մատենադարանի հավաքածուի մեջ, մեծությունը՝ 70,5×55,3 սմ. պատրաստված է ավելի քան 600 հորթի կաշվից[8]։ Հաճախ պատահում են այնպիսի մեծածավալ ձեռագրեր, որոնց մագաղաթ հայթայթելու համար հարկավոր է եղել օգտագործել ոչխարի մի ամբողջ հոտ[9]։

---

[5] «Ցուցակ Մայր աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացած ձեռագրերի» («Էջմիածին», 1952 թ., № 2, էջ 53)։

[6] Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, հ. Բ, էջ 327։

[7] ՄԱՄ ձեռ. № 1849, թ. 156բ։

[8] Այս ձեռագրի մասին հանգամանորեն տե՛ս Ա. Մաթևոսյան. Ե՞րբ և որտե՞ղ է գրվել Մշո Տոնական ճառընտիրը («Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 137—162)։

[9] Չպետք է այնպես պատկերացնել, որ մագաղաթ պատրաստելու համար քշում բերում էին ոչխարի հոտը և մորթոտում. ժամանակի ընթացքում հավաքում էին մորթիները և մշակում։ Ի դեպ, հնում սովորություն է եղել, որ հավատացյալը ուխտի գալիս, երբ մատաղ է անում, մորթին պարտավոր է հանձնել վանքին։ Վանքերը հավաքում էին մորթիները ոչ թե վաճառքի

Շուտով, սակայն, մագաղաթին փոխարինելու է գալիս թուղթը, որի գործածությունը նույնպես հին է։ Հայտնի է, որ չինացիները մետաքսից և բամբուկից թուղթ էին պատրաստում դեռևս առաջին դարում մեր թվականությունից առաջ[10]։ Մերձավոր Արևելքում թղթի գործածությունը սկսում է 7—9-րդ դարերում։ Այստեղ թուղթը պատրաստում էին բամբուկից։ Ռուս գիտնական Ե. Կարսկու կարծիքով, թղթի գործածությունը Ռուսաստան է մուտք գործել արևելքից[11]։

Մեզ հասած հայկական հնագույն թղթի ձեռագիրը 981 թվականին է գրված (№ 2679)։ Ավելի ուշ՝ 12—13-րդ դարերում, Հայաստանում թուղթն սկսում է ասպարեզից դուրս մղել մագաղաթին։ Սակայն ուշ միջնադարում ևս մեկ-մեկ մագաղաթի վրա գրում են ձեռագրեր՝ մեծ մասամբ կրոնական-կանոնական բովանդակությամբ։

Հայաստանում օգտագործվող թուղթը երկար ժամանակ բերվում էր դրսից։ Արևելքում թղթի պատրաստման հայտնի կենտրոններն էին Թավրիզը և Դամասկոսը։ Ավելի ուշ թուղթն սկսեց ներմուծվել Եվրոպայից՝ որը կոչվում էր «փռանգի թուղթ»։

Գրիչներն իրենց հիշատակարաններում երբեմն հայտնում են, թե որտեղից են ձեռք բերել իրենց օգտագործած թուղթը։ Այսպես, Մատթեոս Մոնոզոն գրիչը 1417 թ. գրած հիշատակարանում հայտնում է, որ ձեռագրի պատվիրատու Մանվել քահանան Երուսաղեմից վերադառնալիս թուղթը գնել է Դամասկոսից[12]։ Տեղեկություններից երևում է, որ Դամասկոսի թուղթը, Թավրիզի կամ եվրոպական թղթի համեմատությամբ, ավելի որակով է եղել։ Օրինակ՝ Մարկոս գրիչը խնդրում է իր սխալների և գրի «խոշորոտ» լինելու համար անմեղադիր լինել, որովհետև «քարտէզս (իմա՛ թուղթը—Ա. Ա.) փառանգի էր»[13]։ Այստեղ «փառանգի» ասելով նկատի ունի եվրոպական թուղթը։ Հակոբ Ղրիմեցին իր հիշատակարաններից մեկում հայտնում է, որ ձմեռ է, չի կարողանում «Դմշխի», այսինքն՝ Դամասկոսի թուղթ ճարել, ուստի և հարկադրված է «Թավրիզի» թղթի վրա գրել, որը, սակայն, հաստ է և ծավալը փոքր։

Գնված թուղթը տեղափոխությունների ժամանակ ծալծլվում էր, ուստի և անհրաժեշտ էր ի նորո կոկել։ Պետք է ենթադրել, որ այդ բավական աշխատատար գործ է եղել, որովհետև գրիչները հաճախ են հիշում թուղթ կոկողներին։ Թովմա Մեծոփեցին 1410 թ. գրած ձեռագրում խնդրում է հիշել իր եղբորը՝ Հովհաննես քահանային, որը «բազում աշխատութեամբ, երթևեկութեամբ» ճարել է թուղթը և քրտնաջան «աշխատութեամբ կոկեաց զսա»[14]։ Հակոբ գրիչը 1386 թվականին գրած հիշատակարանում խնդրում է հիշել եր

հանելու համար, այլ՝ մագաղաթ պատրաստելու։ Հայտնի են դեպքեր, երբ հավատացյալներն իրենք էին հավաքում մորթիներ և նվիրում գրչության օջախներին։ Երուսաղեմի պատրիարքարանի մի ձեռագրից երևում է, որ հավատացյալ մեկը 124 մորթի է նվիրել վանքին՝ մագաղաթ պատրաստելու համար (տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. Դ, էջ 93)։

[10] «Թերթ մը թղթո պատմության» (տե՛ս «Բազմավէպ», 1874, էջ 292—298)։

[11] Տե՛ս Е. Ф. Карский, Словянская кириловская палеография, էջ 97։

[12] ՄԱՄ ձեռ. № 8689, թ. 88ա։

[13] ՄԱՄ ձեռ. № 1925, թ. 220բ։

[14] ՄԱՄ ձեռ. № 2065, թ. 390բ։

կու աշակերտներին՝ Կարապետին և Մկրտչին, որոնք թուղթը կոկելու և տողատելու վրա մեծ ջանք էին թափել[15]։

Թուղթ կոկելու համար գոյություն է ունեցել հատուկ գործիք, որը կոչվել է **թղթի կոկիչ**։ Սիմեոն գրիչը Ավագ վանքում, 1439 թվականին ընդօրինակած ձեռագիրն ընդմիջելով, գրանցել է փոքրիկ հիշատակագրություն այն մասին, որ կոկիչի սրության պատճառով թուղթը փչացրել է. «Ո՜վ եղբայր, անմեղադիր լեր, զի կաւկիչն սուր էր՝ զթուղթն աւերեաց»[16]։

Թղթի գործածությունը Հայաստանում տարածվելուց հետո, ըստ երևույթին, սկսել են այն նաև տեղում պատրաստել։ Հայտնի է, որ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը էջմիածնում 1776 թվականին թղթի հատուկ գործարան հիմնեց և իր արտադրած թուղթն օգտագործեց տպագրության մեջ[17]։

Գրչության ժամանակ օգտագործված գրենական պիտույքների ցանկը շատ մեծ չէ։ Նրանց մասին արժեքավոր նյութեր պարունակում են հայկական մանրանկարները։ Սովորություն է եղել ավետարաններում նկարել չորս ավետարանիչներին՝ գրենական պիտույքների հետ միասին։ Ուստի այդ նկարներում մեկ մեկ կարելի է տեսնել գրենական այն պիտույքները, որոնք գործ են ածվել գրչության ժամանակ։ Այս տեսակետից ուշագրավ է Մատենադարանի № 7643 ձեռագիրը՝ գրված Երզնկայում 1338 թ., ուր ծաղկող Հովհան-



ձևիչ



թղթի կոկիչ



մկրատ



սնդուկ

---

[15] ՄԱՄ ձեռ. № 5707, թ. 485բ։

[16] «Ցուցակ ձեռագրաց Վիեննայի», էջ 50։

[17] Տե՛ս Հ. Աբրահամյան, Թղթի գործարան Հայաստանում (տե՛ս «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», № 1, էջ 61—72)։

նեսը ավետարանիչների մոտ ոչ միայն նկարել է գրենական պիտույքները, այլև գրել է նրանց յուրաքանչյուրի անունը։ Նկարված և անուններով ներկայացված են **Խանոնը, կոկիչը, գրիչը, դանակը, կաղամարը,** *գրենական պիտույքների* **արկղը, նրա խուփը և մկրատը։** *Գրենական մյուս պիտույքներից այլ աղբյուրներից մեզ հայտնի են նաև* **կարկինը, տողաշարը և ներկերի ամանները։**

խուփ

Նախ քան հիշյալ պիտույքների և նրանց օգտագործման շուրջ առանձին-առանձին խոսելը, մի քանի խոսք ասենք թանաքի մասին։ Թանաքը հայ մատենագրության մեջ կոչվել է **մելան,** *որն, անշուշտ, փոխառություն է հունական* μέλαν *բառի՝ սևադեղ նշանակությամբ։ Մեզանում գործ են ածվել երկու տեսակի թանաք՝ բուսական ու քիմիական, և երկուսն էլ՝ բարձր որակի։ Նրանք երկար դարերի ընթացքում պահպանել են իրենց գույնը[18]։ Քիչ կարելի է հանդիպել այնպիսի ձեռագրերի, որոնք խունացած լինեն։*

Բոլոր գրիչները չէ, որ գիտեին թանաք պատրաստելու գաղտնիքը։ Շատ դեպքում նրանք դիմում էին թանաք պատրաստող մասնագետին։ Կարապետը խնդրում է հիշել երախտավոր Թումա Կաֆայեցուն այն բանի համար, որ «...զկարմիր և զսև թանաքն յամենայն ժամ պատրաստեաց»[19]։

Հայկական ձեռագրերում բացի սև մելանից, գործ են ածել կարմիր, կանաչ, կապույտ և այլ գույների բարձրորակ ներկեր, որոնք նույնպես չեն խունացել և հիացմունք են պատճառում դիտողին։ Կարմիր թանաքն օգտագործվել է գլխավորապես զարդագրության մեջ և խորագրերում[20]։ Առօրյա գրագրության մեջ կարմիր մելանով են գրել կաթողիկոսները և թագավորները։ «Թագաւորք կարմիր մելանով գրեն զգիր»—գրում է Ներսես Շնորհալին։

Թանաքը, ինչպես և մյուս բոլոր ներկերը, պատրաստվել են տեղում։ Այդ մասին բազմաթիվ հիշատակություններ կան ձեռագրերում[21]։

«Գիրք արհեստից» աշխատությունը և ալքիմիական բովանդակությամբ ժողովածուները պարունակում են զանազան տեսակի թանաքներ պատրաստելու ցնցատոմսեր։ Բերենք նրանցից մեկը, որը վերաբերում է սև թանաք պատրաստելուն և շատ հետաքրքրական է. «Առ գղթոր Լ (30) դրամ և եփէ Գ (3) լիտր ջրով մինչ կէս մնայ. ապա առ ի կրակէն ի վայր և թող որ պաղի կէս մի, և ապա խառնէ յինքն կարմիր արջասպ այնչափ, որ զջուրն աղէկ սևացնէ և ապա առ ամեն լիտր ջրի Ա (1) դրամ սամղ արապի, որ է տաճիկ

---

[18] *Կարմիր ներկերից համաշխարհային հռչակ է ունեցել որդան կարմիր ներկը, որը Հայաստանից արտահանվող կարևոր ապրանքներից մեկն է հանդիսացել և հայտնի է եղել «հայկական ներկ» անունով։*

[19] *ՄԱՄ ձեռ. № 8173, թ. 340ա։*

[20] *Մեր իրականության մեջ հայտնի է մի ձեռագիր, որ կարմիր գույնի համար օգտագործվել է մարդու արյունը։ Հ. Ոսկյանի կազմած ձեռագրաց ցուցակում, մի ձեռագրի նկարագրության մեջ, կարմիր գույնի մասին նշված է. «Կարմիր գրերը արյունով գրուած են» (տե՛ս Հ. Ոսկյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, էջ 76)։*

[21] *ՄԱՄ ձեռ. № 8173, թ. 340ա։*

կոլզ, խառնել, միաւորէ և դիր յաման և պահէ, երբ պիտենա ի բան տուր»[22]։

Նշված ժողովածուն պարունակում է այլ և այլ գույնի ու տեսակի թանաքներ պատրաստելու բազմաթիվ այլ խրատներ։

Մեզ է հասել 18-րդ դարի ականավոր հայ առևտրական գործիչներից մեկի՝ Եղիա Կարնեցու «Գիրք արհեստից» աշխատությունը՝ գրված 1720 թվականին։ Այստեղ կան ոսկու, արծաթի մշակման և զանազան տեսակի թանաքներ պատրաստելու և գործածելու մասին հատուկ ցուցումներ։ Գաղտնագրության համար պատրաստվող թանաքի մասին ասված է (բերում ենք թարգմանաբար). «Վերցրու նաշադիր և լցրու ջրի մեջ թող լուծվի. այդ ջրով գրի թղթի վրա։ Չորանալիս բռնիր մեղմ կրակի վրա. լավ տաքանալուց հետո գիրը կսևանա, և դու կկարդաս»[23]։ Մի այլ տեղում, որը վերնագրված է. «Վասն գաղտ գրելոյ՝ ոչ որ կարդայ», նա հանձնարարում է. «Վերցրու սառը լեղին և խառնիր ջրի հետ. այս գրով ինչ որ գրես թղթի վրա՝ անհետանում է։ Իսկ երբ ցանկանում ես կարդալ, այս գրված գրությունը, թրջիր ջրում, գիրը կերևա։ Բայց թուղթը ջրի մեջ ձգելիս երկար չպահես, այլ քիչ թող ջրի մեջ, և թրջվելուն պես անմիջապես հանիր»[24]։

Թանաքը պահվում էր հատուկ ամանի մեջ, որը կոչվում էր կաղամար. Կաղամարը լինում էր մետաղից, ապակուց, փայտից կամ թրծված կավից։ Հնում սակայն կաղամար է կոչվել ոչ միայն թանաքամանը, այլև այն տուփը, որի մեջ դնում էին թանաքամանը և գրիչները։ Միջին դարերում նոտարները այդ գրչատուփերը ամրացնում էին գոտիներին և այդպես շրջում։

Դվինում 1938 թ. հայտնաբերվել է մի կաղամար՝ արձանագրությամբ։ Այն ունի մելան լցնելու երեք փոսիկ, որոնցից երկուսի մեջ մնացել են կարմիր և կապույտ ներկերի հետքեր[25]։ Ենթադրում են, որ 7-րդ դարի սկզբի գործ է, թեև այդ ենթադրությունը մեզ անհավանական է թվում, որովհետև արձանագրության մեջ կան անցման շրջանի երկաթագրի ու վաղ բոլորգրի գործածություններ։



Դվինում գտնված կաղամարը՝ երեք գույնի թանաքի համար փոսիկներով։

---

[22] Ա. Խ. Չարուքյուձյան, Ներկերը և թանաքները հին հայկական ձեռագրերում, Երևան, 1941, էջ 18—19։

[23] ГАФКЭ, фонд сношения России с Арменией. 1724, գործ № 5, էջ 12։

[24] Նույն տեղում, էջ 313—315։

[25] Տե՛ս Ա. Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը 4—8-րդ դարերում, Երևան, 1970, էջ 24, 34։

Հակոբ անունով մի գրիչ Սպահանում 1654 թվականին գրենական պիտույքների մասին գրած շատ հետաքրքիր տաղում կաղամարին նվիրել է հետևյալ քառյակը.

«Ես արդ ասեմ անօթ գրիս,
Նախ և յառաջ կաղամարիս,
Որ յինքն ունի սև թանաքիս,
Նա կու գրէ որչափ կամիս»[26]։



Հնում ձեռագիր գրելու համար որպես գրիչ օգտագործում էին երկաթե ձողիկները։ Ոմանք ենթադրում են, որ այդ ձողիկներով գրելու պատճառով է, որ հին հայկական գրերը կոչվել են երկաթագիր։ Անհավանական չէ, որ հայերը գրչի այս տեսակը ժառանգած լինեն հեթիթներից, որոնք իրենց գրությունները մետաղյա գրչաձողերով էին փորագրում կավե աղյուսների վրա։ Հնում ոչ միայն հայերը, այլև Արևելքի շատ ժողովուրդներ երկաթե գրիչներ էին գործածում («Գրել գրչաւ երկաթեաւ»—Յոբ, ԺԹ, 24)։

Միջին դարերում երկաթե գրիչներին փոխարինում են եղեգնյա գրիչները, որոնք հունարեն կոչվում էին κάλαμος *այստեղից էլ՝* ղալամ *բառը։ Պրոկղի «Շաղկապք աստուածաբանականքի» մեջ հանդիպում ենք այսպիսի մի դարձվածքի. «Պատճառ գծի գրոյ՝ գրողն, իսկ պատճառակից գրչի՝ եղեգն»։ Ավելի ուշ գրչության ժամանակ սկսում են գործ ածել նաև սագի փետրի գրիչներ, որոնցով, ինչպես երևում է, շատ գրել չէր կարելի, որովհետև շուտ-շուտ նորոգում էին ծայրերը։ Հետագա դարերում սկսում են պատրաստել գրիչ-ինքնահոսներ, որոնք գրչակոթի վրա, ծայրից քիչ վերև, ունեցել են թանաքի համար ուռուցիկ գնդիկներ։ Այստեղից դանդաղ հոսել է թանաքը և հարկ չի եղել թաթախման։ Նման կառուցվածք ունեցող գրիչները ընդունված է կոչել «գնդիկավոր գրիչներ»*[27]*։ Գնդիկավոր գրչի հնագույն նկարը հանդիպում է 1166 թ Հռոմկլայում գրված ավետարանում. Մատթեոս ավետարանչի մոտ սեղանի վրա երևում է չորս գնդիկավոր գրիչ*[28]*։ Նույնը հանդիպում է Մատենադարանի № 1568 ձեռագրում (ընդօրինակված Սկևռայում 1173 թ.). ծաղկարարը նկարել է Գրիգոր Նարեկացուն՝ ձեռքին գնդիկավոր գրիչ։ Վայոց Ձորի Նորավանքում 1292 թվականին գրած մի ձեռագրում, որի մանրանկարիչն է նշանավոր Մոմիկը, նկարված է Պրոխորը՝ ձեռքին գնդիկավոր ինքնահոս*[29]*։*

Ուշագրավ է Հովհաննես գրչի 1435 թվականին գրած հիշատակարանում ինքնահոսին տված գովեստը. «Ջսուտ գծագրիկս զՅովհաննէս քաղաքացիս յիշման արժանի արարէք, ո՛վ սուրբ գրոց աշակերտեալ անձինք, որ յայս տետրակս Ջ (900) գիր ի Ա (1) անգամ թաթախելոյն գրեցի...»[30]*։ Նույն ձեռագրի մի այլ էջում թողած հիշատակագրության մեջ գրիչ Ստեփանոսը նշում է, որ ինքը մի անգամ թանաք վերցնելով 700 տառանիշ է գրել։ Վերջում թանաքը կաթել է, և գրիչը ափսոսում է. «Բայց կաթաւ թանաքն, թէ չէ այլ կու գրէի»*[31]*։*

---

[26] «Ցուցակ ձեռագրաց Էջմիածնի» (տե՛ս «Էջմիածին», 1950 թ., № 7—8-րդ, էջ 86)։

[27] Աստղիկ Գևորգյան. Գրենական գործիք՝ գնդիկավոր գրչի մասին («Բանբեր Մատենադարանի», № 5, էջ 313—315)։

[28] ՄՄ ձեռ. № 7347, թ. 7բ։

[29] Նույն տեղում, ձեռ. № 2848, թ. 245բ։

[30] ՄՄ ձեռ. № 1380, թ. 229բ (հմմ. Ա. Գևորգյան, նշվ. աշխ., էջ 315)։

[31] Նույն տեղում, թ. 229բ։

Հակոբ գրչի վկայակոչված տաղում գրչի մասին կարդում ենք.



«Երկրորդ՝ ասեմ վասն գրչիս,
Դու ժամէժամ է՞ր կու հանգչիս,
Մատունս իմ ոսկոր ե[ն] և միս,
Մինչ գրեցի՝ գայրացաւ հոգիս»[32]։

Գրիչները սովորաբար իրենց մոտ պահում էին սուր գմելիներ՝ գրչի ծայրերը սրելու համար։ Դրանք կոչվում էին **գրչատաշներ**։ Մատենադարանի № 2;2 ձեռագրում նկարված է ավետարանիչը՝ գրչի ծայրը սրելիս։ Գրչատաշն օգտագործվում էր նաև սխալները քերելու համար։ Այդ նկատի առնելով է, որ Հակոբ գրիչը նշված տաղում գրչատաշի անունից խնդրում է սուր պահել և այլ նպատակի համար չօգտագործել այն.

«Երրորդ՝ ասեմ գրչատաշիս,
Որ կու հանէ սխալ գրիս,
Ու գրչատաշն ասէ ի յիս՝
Թէ որ գիս սուր մնալ կամիս,
Մի՛ առաքեր գի յայլ տեղիս,
Որ այլ գատ կոտոր[եմ] կամ միս»[33]։



Ձեռագրերը տողում էին **տողաշարով**։ Այդ գործիքը երկու էջի մեծությամբ մի շրջանակ էր, որի աջ և ձախ կողմերում, հավասար հեռավորության վրա, կային անցքեր, որտեղից ձգվում էին աղիքի բարակ լարեր[34]։ Տողելու ժամանակ մագաղաթը քիչ թացացնում էին և տողաշարը սեղմում վրան. տողաշարի լարերը հավասար հետքեր էին թողնում մագաղաթի վրա։

Ուշ միջնադարում՝ երբ գրանյութը, հիմնականում, թուղթն է դառնում, սկսում են տողաշարով միայն նշումներ անել և քանոնով գծել, քանի որ թուղթը ջրի մեջ գցելու դեպքում կարող է փչանալ։ Տողաշարին շուտով փոխարինում են **փարտավարը** և քանոնը։ Փարտավարը էջի մեծությամբ մի շրջանակ էր, որով սահմանագծում էին բնագրերի չորս բոլորը։



---

[32] Էջմիածնի ձեռ. № 16 թ. 350ա (տե՛ս «Էջմիածին», հուլ.-օգոստ., էջ 86)։
[33] Նույն տեղում։
[34] Գ. Լևոնյան, Հայոց գիրը և տպագրության արվեստը, Երևան, 1946, էջ 14։

Փարտավարով և տողաշարով աշխատելիս, ի դեպ, տողերը գծում էին ոչ թե մատիտով կամ գրչով, այլ երկաթե կամ ոսկրե սուր գործիքով։ Այդ գծումների հետքերը էջերի վրա կարելի է տեսնել անգամ այժմ։ Հակոբ գրիչը քանոնին և փարտավարին նվիրել է երկուական տող.



«Հինգերորդ՝ ասեմ քանոնիս,
Որ ճշմարտութեան օրինակիս։
Վեցերորդ՝ փարտավարիս,
Որ կու քաշէ պարիսպ գրիս»[35]*։*



Հակոբ գրիչը հիշում է նաև **փարկալ** *անունով մի գործիք, որ կարկինի արաբերեն անունն է։ Հայ գրչության մեջ կարկինն օգտագործվել է շատ վաղուց։ Այդ մասին հիշատակություն ունի Անանիա Շիրակացին։ Տոմարական բովանդակությամբ ձեռագրերում հանդիպում են բազմաթիվ բոլորակներ, որոնք գծված են կարկինով և երևում են նրա սուր ծայրի թողած հետքերը։ Ուշագրավ է, որ փարկալը օգտագործվել է նաև տողաշարի չափերը որոշելու համար։ Հակոբ գրիչը հիշել է հենց այդ կապակցությամբ.*

«Ութերորդ՝ վասն փարկալիս,
Որ շինող է նա տողաշարիս»[35]*։*

Եվ վերջապես, գրենական պիտույքներից էին **սաղաֆները**՝ *խեցիից պատրաստված փոքրիկ ամանիկներ, որոնց մեջ գունավոր թանաք էին լցնում։ Հակոբ գրիչը սաղաֆներին նվիրել է հետևյալ քառյակը.*

«Չորրորդ՝ ասեմ սաղաֆներիս՝
Մինն ղնջիւ, մինն ղրմզիս.
Յորժամ գրեն գլուխ բանիս,
Նա կու խնդա[յ] սիրտս ու հոգիս»[37]*։*

Ներկագույնները նախապես ստուգելու համար օգտագործվել է մարմարի տախտակը։ Խաչատուր գրչի 1499 թ. գրած հիշատակությունից երևում է, որ չի կարողացել ճարել մարմար և նրա փոխարեն օգտագործել է տանձենու տախտակը.

«Մարմարս տանձի փայտ էր,
Կոկիչս՝ խոզի ա(տա)մն էր,
Եւ գրիչս չեմարժան էր,
Թղթի գինը խիստ թանկ էր»[38]*։*

---

[35] Էջմիածնի ձեռ. № 16, թ. 350ա (տե՛ս «Էջմիածին», 1950 թ., հուլ.-օգոստ., էջ 86)։ [illegible]ում է, որ քանոնը հիշված է լինում «Ճարտավար» անունով, որը, անշուշտ, փոխառություն է արաբերենից։

[36] Էջմիածնի նշվ. ձեռագիր, թ. 350ա։

Հին դարերում, սեղանից բացի, սովորական է եղել պնակիտ տախտակի գործածությունը։

Ձեռագրերում ավետարանիչներին նկարում են նստած վիճակում՝ պնակիտ-տախտակները դրված ծնկներին։ Քառակուսի տախտակի երկու անկյունից եռանկյունի ձևով կապված է լինում պարան, որն ամրացվում է առաստաղից։ Գրելիս այդ շարժուն սեղաններին տալիս էին համապատասխան թեքություն. նրանք ունեին այն առավելությունը, որ կարելի էր թեքել ցանկացած ուղղությամբ։ Տախտակն ունենում էր հատուկ հարմարանք՝ վրան դրած թերթն ամրացնելու համար[39]*։*

Ձեռագրի պատրաստումը փաստորեն կոլեկտիվ աշխատանքի արդյունք էր. մեկը ճարում էր գրանյութը, մյուսը՝ գրում, երրորդը՝ մանրանկարում, չորրորդը՝ համեմատում բնագրի հետ և ուղղում բաց թողած սխալները, մեկ ուրիշը թուղթն էր կոկում, մյուսը՝ թանաք պատրաստում, հաջորդը կազմում էր, դարբինը կազմի կոճակն էր պատրաստում և այլն։ Հիշատակարաններում սովորաբար հիշվում էին ձեռագրի վրա աշխատող բոլոր մարդկանց անունները։ Իհարկե, պատահում է, որ այս ամբողջ աշխատանքը կատարում էր և մի անձնավորություն, բայց ձեռագրերի մեծ մասը ընդհանրապես համատեղ աշխատանքի արդյունք է եղել։

Գրչության բոլոր մեծ դպրոցներում պահվում էին հատուկ կազմարարներ։ Կազմարարի պարտականությունն էր համարակալված պրակներն իրար մոտ բերել, սոսնձել և ամրացնել կազմին։

Կազմը, սովորաբար, պատրաստում էին տախտակից և վրան կաշի քաշում։ Ձեռագրի երկու երեսներին նրանք զանազան զարդարանքներ էին դաջում ճնշումով։ Կազմի ներսից, երկու կողմերում, փակցնում էին կտորներ՝ մետաքսից, շալից և կտավից[40]*։ Այդ կտորները արվեստի պատմության համար ունեն մեծ արժեք, որովհետև նրանց նկատելի մասը նկարազարդված է լինում և կամ ասեղնագործված։ Չէ՞ որ միջին դարերում գործածված կտորը մեզ հասել է միայն ձեռագրերի կազմերի մեջ, իսկ հողի տակ եղածը փտել է։*

Եթե ձեռագրերի կազմողները այլ անձնավորություններ էին, ապա նրանց անուններն անպայման հիշվում են հիշատակարաններում։ Կազմարար Մատթեոսը Մատենադարանի № 148 ձեռագրում թողած հիշատակարանում խնդրում է հիշել իրեն՝ «տերևաթափ և անպտուղ զկազմող սորա զՄատթէոս»։ Թորոս գրիչը 1318 թվականին գրած հիշատակարանում խնդրում է հիշել Սահակ քահանային, որը բախտակից է եղել իրեն Կիպրոս կղզում և կազմել ձեռագիրը[41]*։ Այսպիսի հիշատակարաններ շատ կարելի է բերել։*

---

[39] *Այս շարժուն տախտակները ամրացվում էին առաստաղից՝ երդիկին մոտիկ, որպեսզի լույս լինի։ Սակայն այդ ուներ այն անհարմարությունը, որ երդիկից ոչ միայն լույս էր թափանցում, այլև անձրև։ Անհիմն չէ Կարապետ գրչի գանգատը. «Ո՞հ, ո՞հ, զայս ոչինչ տունս, զինչ յերդէն կու անկանի՝ թոր ի գիրս և ապականէ» («Ցուցակ Մայր աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացած ձեռագրերի», «Էջմիածին», 1950 թ., հուլիս-օգոստոս, էջ 85)։*

[40] *Տարբեր ժամանակների այդ կտորների նմուշները հրատարակեց Լ. Ա. Դուռնովոն 1953 թ.,* „Армянская набойка" *վերնագրով։*

Գրչության դպրոցների կարևոր գործերից մեկն է եղել քայքայված ձեռագրերի նորոգումը, կազմահան եղածները նորից կազմելը։ Հայ գրասեր շըրջանում այն կարծիքն է գոյություն ունեցել, որ քայքայված ձեռագրի նորոգումը մեծագույն բարեբարություն է։ XVII դարի աչքի ընկնող տաղերգուներից մեկը՝ Վարդան Բաղիշեցին, իր թողած մի հիշատակագրության մեջ գըտնում է, որ 30—40 ձեռագիր նորոգելը, քայքայված մասերը վերականգնելը «մեծ է, քան զեկեղեցիս շինելն»[42]։ Քայքայված ձեռագրերի վերականգնման ուղղությամբ բացառիկ մեծ գործ է կատարել Բաղեշի գրչության դպրոցը։ Միայն XVII դարում, Վարդան Բաղիշեցու ուսուցչապետության շրջանում, նշանավոր ծաղկարար և կազմարար Սահակ Վանեցին կազմել է ավելի քան 30 ձեռագիր[43]։

Հայ գրիչների մոտ սովորություն է եղել հիշել ոչ միայն ձեռագրի գրչության վրա աշխատողներին՝ ընդօրինակողներին, մանրանկարիչներին, այլև բոլոր նրանց, ովքեր որոշ նպաստ են բերել։ Մատենադարանի № 4613 ձեռագրի գրիչը ըթերցողներից խնդրում է հիշել Հեթումին, որի դուստրը «երեսգշապկացու կտաւն»։ Նույն գրիչը խնդրում է հիշել նաև Աֆինդ անունով երկաթագործին «որ աշխատեցաւ ի փակ և կոճակ գրոցս»։ Կաշեպատ տախտակե կազմի մեջ դրված ստվարածավալ ձեռագիրը հավաք պահելու համար պատրաստել էին տալիս ամրացնելու կոճակները, որոնք կոչվում էին ճարմանդ:

---

[41] ՄԱՄ ձեռ. № 242, թ. 392ա։

[42] ՄԱՄ ձեռ. № 2748, թ. 358բ (հմմտ. Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ. XIII—XVIII դդ., հ. II, Երևան, 1956, էջ 386)։

[43] Ն. Ակինյան, Բաղեշի դպրոցը, Վիեննա, 1952, էջ 243։

XVI. ԱՂՃԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ

Վաղ շրջանի հայ մատենագիրների երկերը, ինչպես ասել ենք, մեզ չեն հասել իրենց ինքնագիր օրինակներով, այլ՝ հետագա ընդօրինակություններով։ Ձեռագրերը ձեռքից-ձեռք ընդօրինակելու ժամանակ գրիչները թույլ են տվել բազմաթիվ սխալներ և աղճատումներ, որոնք հաճախ լուրջ դժվարություններ են ստեղծում ուսումնասիրվող բնագրի օգտագործման և արժեքավորման խնդրում։ Նկատված է, որ այդ աղճատումները և աղավաղումները, հիմնականում, լինում են հինգ կարգի. 1) բացահայտ կեղծիքներ, 2) խմբագրական և սրբագրական կարգի նպատակային փոփոխություններ, 3) ընդմիջարկություններ, 4) բնագրական կրճատումներ և 5) գրչական սխալներ։

Բացահայտ կեղծիքներ կատարվում են երկու դեպքում. կեղծվում են ձեռագրերի գրչության ժամանակը և գրչի անունը։ Այդ կարգի մի քանի փաստեր են հայտնի։ Բանասիրական բուռն վիճաբանության տեղիք է տվել Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի մի ավետարանի գրչության տարեթիվը, որը, եթե հավատալու լինենք հիշատակարանում մատնացույց արած թվականին, գրված պետք է լինի 602 թվականին։ Այնտեղ ասված է. «Հյց թուական ԾԱ.։ ՋԾԲ.։. գրեցաւ յԱւձ ի յաւուրս Մուշեղի։ Գրիգոր երէցէ»[1]։ Առաջին՝ ԾԱ(51) թվականը, հայկական մեծ թվականն է, որին 551 գումարելով, ստանում ենք 602 (51+551=602), որը և համապատասխանում է ներկայիս ՋԾԲ (602) թվականին։ Ձեռագրի հնագրական ուշադիր քննությունը պարզել է, որ այդ թվականները կեղծված են· ձեռագիրը 10-րդ դարից առաջ գրված լինել չի կարող։

Կեղծված թվականով մի այլ ձեռագիր գտնվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում։ Նրանում Սարգիս գրիչը թողել է հետևյալ հիշատակարանը. «Ես Սարգիս անարժան քահանայ գրեցի զսուրբ աւետարանս ՆԺԵ (415) թուականիս թագաւորելոյ ի վերայ մեր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»[2]։ Այսպիսով, եթե հավատալու լինենք այդ թվականին, ապա ձեռագիրը պետք է համարենք Մաշտոցի ժամանակի գրվածք։ Իրականում թվականը թյուր է և կամ կեղծված, ինչպես նշված է հիշատակարանի հրատարակիչ Բ. Սարգիսյանի կողմից։

Թվականները կեղծելու պատճառը մեծ մասամբ այն է, որ նրանց տերերը ցանկանում են իրենց ձեռագրերին հնություն տալ, սակայն ծանոթ չեն հնագրությանը և թվականների գործածության պատմությանը, որը և մատնում է նրանց։

---

[1] *«Հանդէս ամսօրեայ», 1901, էջ 33—35 (հմմ. Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 169)։*

[2] *«Ցուցակ ձեռագրաց Վենետիկի», հ. Բ, էջ 1248։*

Բավական նկատելի թիվ են կազմում ձեռագրի գրչի և ստացողների անունների կեղծումները. ձեռագրերի հիշատակարաններում ջնջել են գրիչների անունները և իրենց դրել նրանց տեղը։ Երբեմն այդ կատարվել է այնքան անշնորհք, որ նոր գրված անվան տակ կարելի է լինում կարդալ ջնջվածը։ Այս պարագայի թելադրմամբ է, որ գրիչներն իրենց հիշատակարաններում անեծք են գրել այն մարդկանց հասցեին, ովքեր համարձակվում են կտրել ձեռագրերի հիշատակարանները կամ ջնջել գրիչների անունները։ Բրիտանական թանգարանի սեփականությունն հանդիսացող հայկական մի ձեռագրի հիշատակագիր անիծում է. «...ինչ մարդ որ յիշատակարանս կտրել և ջնջել կամի, անուն նորա ի գրոյն կենաց ջնջեալ լինի»[3]։

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 154 ձեռագրի գրիչ Հովհաննեսը 1310 թ. գրած հիշատակարանում ցավով է նշում ձեռագրի նախկին գրչի անունը ջնջելու տգեղ սովորության մասին. «Գիտէք եղբարք, զի է սովորութիւն ոմանց, որ վերջին ժառանգաւորք գրոցն զառաջնոյն զանուն կու ջնջեն և զիւրեանցն կու գրեն. և չար է սովորութիւնս այս։ Աղաչեմ մի՛ գործել զչարդ զայդ մեծ. ապա թէ արժան է գրելոյ, գրեսցէ զիւր անունն յայլում տեղւոյ, և զառաջնոյն մի՛ ջնջեսցէ անուն կամ գիր։ Եւ որ ոք յայս յանդգնի և ջնջէ՝ ինքն ջնջի ի կենաց գրոյն՝ ո՛ ոք և իցէ՝ եթէ մեծ ոք և կամ փոքր»[4]։

Պետք է նկատի ունենալ, որ 7—8-րդ դարերում, երբ քրիստոնեական եկեղեցին Հայաստանում ստեղծեց իր կանոնական գրվածքները և, իր ժամանակի տեսանկյունով, վերանայեց գոյություն ունեցող գրականությունը գրաքննության ենթարկեց ու «զտում» կատարեց, գրաքննչական այդ «զըտումների» ժամանակ որոշ աշխատություններ կրճատվել են անճանաչելի աստիճանի, իսկ որոշ աշխատություններ՝ խմբագրվել։ Տեղեկություններ կան, որ այդ մտայնության հետևանքով ոչնչացվել են հին հայկական մի շարք արժեքավոր աշխատություններ[5]։

Ուսումնասիրությունից պարզվում է, որ միջին դարերում ամենից շատ փոփոխում, խմբագրում, բնագրի վրա ավելացնում կամ պակասեցնում էին հիմնականում պատմագրական և մեկնողական գրականությունը։ Կանոնական համարվող աշխատությունների փոփոխությունը խստիվ արգելվել է։ Վերջիններիս մեջ սխալ կատարելը համարվել է աններելի, ուստի գրիչներն ամեն կերպ աշխատել են ավելի զգույշ ընդօրինակել, իսկ ընդօրինակությունը վերջանալուց հետո, համեմատել նախագաղափար օրինակի հետ։ Ընդօրինակած բնագիրը նախագաղափարի հետ համեմատելու այդ աշխատանքը հայ մատենագրության մեջ ուշ դարերում կոչվել է «դորդել»։

---

[3] F. C. Conybeare, նշվ. աշխ., էջ 193։

[4] Ա. Սիւրմէեան, Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի, էջ 334։

[5] Ձեռագրերում մեկ-մեկ պատահում են աղանդավորական համարված և արգելված գրականության կամ նրանց հեղինակների ցանկեր։ Այսպես, Մատենադարանի № 1869 ձեռագիրը, որն ընդօրինակված է Անդրեաս գրչի կողմից 1585 թ., պարունակում է արգելված գրականության հետևյալ ցանկը. «Այս են անուանք ԺԶ (16) սուտ գրոցն, որ եկեալ են ի հերձուածող ասորոցն, ոչ յուղղափառ ասորոցն, ծածուկք, որ է այս. Ադամայ կտակն, Ծիրն աւրհնութեան, Փիիեանն, Գորտոսակն, Սիրակոսակն, Կոսիմոսն, Պետրոսի տեսիլն, Դիաթեկն, Աստուածածնին ատմութիւնն, Սերիոսն, Փիլոհնացիքն, Մանկութիւն տեառն, Լուսաւորչին տեսիլքն, զԱնթապլի մատեանն, Գրիգորի և Թէոդիկի հարցմունքն, զՄանեայ մեկնութիւնն աւետարանին։ Եւ որ ստանայ նոցա՝ նզովի» (ՄՄ ձեռ. № 1869, թ. 391ա, հմմ. Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ

Համեմատության աշխատանքներում գրիչներին հաճախ օգնության են գալիս իրենց գրչակից ընկերները։ Այդ մասին կան մի շարք հիշատակություններ։ Այսպես, Հովհաննես գրիչը Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն կաթողիկէից թղթոց» աշխատության 1413 թ. ընդօրինակության առթիվ թողած հիշատակարանում խնդրում է հիշել դասակալ Մատթեոս կուսակրոն քահանային «որ զգիրքս ղորդեաց և աւգնական եղև մեզ բազում անգամ»[6]։ Գրիգոր Ծաղկեցին իր ձեռագրի վրա աշխատող և վաստակ ունեցող մարդկանց շարքում հիշում է նաև ձեռագրի «ուղղիչին»։

«Եւ համօրէն վաստակողաց,
Ի սրբագիրս աշխատողաց,
Որք առաջին և ի վերջին
Ի կենաց գիրն արձանասցին։
Ախոյժ մտօք ընթերցողաց,
Եւ բարեսէր ընկնդրողաց,
Եւ զօրինակն շնորհողաց
Եւ ուղղիչն սխալանաց»[7]։

Սահակ անունով ասորի մի գրիչ 1274 թ. ընդօրինակել է «Հին կտակարանը»։ Ընդօրինակած այդ բնագրում սպրդել են մի շարք սխալներ, ուստի հանձնարարվել է Կոստանդին անունով մեկին «ղորդելու» այն։ Վերջինս կատարել է այդ աշխատանքը և թողել հետևյալ հիշատակագրությունը. «Ո՜վ աստուածարեալ մանկունք վերին Սիոնի, որք ագտիք ի սմանէ՝ բազմամեղ ստացողի սորա...մեղաց թողութիւն հայցեցէք ի տեառնէ և սխալանացս որ ի սմա անմեղադիր լերուք, զի գրողն ասորի էր և յոյժ թիւր էր գրել և անյարմար։ Ես ըստ կարի իմում համարձակեցա ուղղել զսա ի ստոյգ աւրինակէ և խիստ վիշտ կրեցի յուղղել սորա, զի կարի սխալ էր, որպէս և տեսանէք»[8]։

Որոշ գրիչներ, բնագրերի ընդօրինակությունները անթերի տեսնելու ցանկությամբ, այնքան են խստապահանջ գտնվել, որ ձեռագրի ընդօրինակությունը նախագաղափարի հետ համեմատել են ոչ թե մեկ, այլ՝ մի քանի անգամ։ Այսպես, Կարապետ գրիչն իր թողած հիշատակարանում գրում է. «Մի՛ իշխեսցէ ոք ի հոգոյն սրբոյ տգիտաբար բան թիւրել և կամ զգրեալսն չատուցել յաւրինակէս, որպէս և ես, որ թէպէտ և գիրս յոյժ անարուէստ է. այլ զբանն ուղղեցի կրկին և երեքկին»[9]։

Հաճախ է պատահում, որ գրիչներն, ընթերցողների վստահությունը շահելու համար, անհրաժեշտ են համարում նշել, որ ձեռագիրն իրենք ընդօրինակել են «ընտիր» և «ստոյգ» օրինակից։ Այսպես, Հովհաննես գրիչը 1331 թվականին ընդօրինակած «Ճաշոցի» հիշատակարանում նշում է. «Գրեցի անարժան ձեռաւք իմովք յընդիր և ի ստոյգ աւրինակէ, կենաւք տառապանաւք և բազում պանդխտութեամբ»[10]։

Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 298 ձեռագրի գրիչը իր

---

[6] *«ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 155։*

[7] *Նույն տեղում, էջ 73։*

[8] *«Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. Բ, էջ 270։*

[9] *«Ցուցակ ձեռագրաց Վենետիկի», հ. Ա, էջ 266։*

[10] Արտ. Սիւրմէեան, *Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի, էջ 224։*

ընդօրինակած ձեռագիրն արժեքավորելու համար անհրաժեշտ է համարում նշել, որ նա արտագրված է մի ձեռագրից, որը «ստուգեալ և սրբագրեալ էր ինքն Գրիգորիս կաթողիկոս Աղթամարցին բազում աշխատութեամբ ի սխալ յաւրինակէ»[11]։

Պատահում է, որ գրչության ասպարեզում մեծ հմտություն ու պատրաստություն չունեցող գրիչները, տառասխալներ թույլ չտալու համար, տառացի նկարում են նախագաղափարը՝ տող առ տող և առանց որևէ շեղումների վերարտադրում բնագիրը։ Մաթեոս Ապուչեխցին 1785 թ. տառացի ընդօրինակել է «Սաղմոսգրքի» մեկնությունը և իր թողած հիշատակարանում խնդրել ընթերցողներին անմեղադիր լինել սխալների համար, «Վասն զի անտեղեակ գոլոյս իմ արհեստի քերականութեան և այլոց, յերկիւղէ կարծեաց սխալանաց, գրեալ եմ զերկուս և զերեք հեղինակ սորին, նայելով ի վերայ նոցա զգրեալսն նոսա, իսկ նկարագիրն և զտիպն առեալ գրեցի, և ոչ գրագարձութիւն արարի, այլ միայն և եթ զնոցին տիպն նկարեցի և ծրեցի»[12]։

1243 թ. Սսի ազգային-եկեղեցական ժողովը հատուկ որոշում է կայացրել, որ կրոնական-կանոնական գրականության ընդօրինակությունը հանձնարարել միայն գիտուն մարդկանց։ Այդ որոշման ԺԱ կանոնում ասված է. «Եւ հրամայէ եպիսկոպոսն զսուրբ գիրս գրել արուեստաւորաց, և գիտնոց ի կայութեամբ կատարելոց»[13]։

Ինչպես արդեն նշեցինք, միջնադարյան բնագրերը երբեմն նպատակային կրճատումների կամ հավելումների են ենթարկվել, որը չի կարելի նույնացնել սովորական աղճատում-աղավաղումների հետ։ Օրինակ՝ վարքաբանական երկերի հայսմավուրքային խմբագրություն կազմելու համար անհրաժեշտ է եղել համառոտել ընդարձակը, իսկ երբեմն էլ գրիչ-խմբագիրներին տվյալ երկի այս կամ այն հատվածը անհարիր է թվացել, ուստի անհրաժեշտաբար միջամտել են։

Այսպես, ուշ դարերում Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունը կրճատել և ստեղծել են Կորյունի բնագրի համառոտ տարբերակ, որը բանասիրության մեջ հայտնի է «Սուտ Կորիւն» անունով։ Շիրակացու «Աշխարհացոյց»-ի բնագիրը կրճատվել և կազմվել է նրա համառոտ կամ «Աղվեսգրքի» կոչվող բնագիրը, որը զգալի չափով պակասավոր է, քան «Ընդարձակ»-ը։ Նույն Շիրակացու «Տիեզերագիտության» բնագիրը կրճատվել է, նրանից կազմվել է համառոտը՝ Պատկանյանի հրատարակությունը, որը զգալի չափով տարբերվում է մեզ հասած ընդարձակ բնագրերից։

Ուշագրավ է Շիրակացու «Տիեզերագիտության» կրճատումներից մեկը, որ ցուցանշական է կրճատում կատարող հեղինակի միտումները նկատելու տեսանկյունից։ Շիրակացին խոսում է քաղդեական բախտագուշակների առաջ քաշած այն կարծիքի մասին, որ երբ երեխաները ծնվում են առանձին աստղերի տակ, որի հիման վրա կարելի է և գուշակել՝ թե տվյալ երեխան հարուստ է լինելու, թե աղքատ, չար է լինելու, թե բարի և այլն։ Այս առթիվ Շիրակացին սրամիտ տրամաբանում է. եթե փոքրիկ անմեղ երեխայի մեջ աստված նախապես չարություն է դնում, ինչո՞ւ են ապա դաստիարակում երեխային, քանի որ դաստիարակությունն անկարող է փոխել երեխայի «աստուածատուր յատկութիւնը»։ Եթե երեխայի չարությունը բնածին է, շարունակում է նա, ինչո՞ւ են ապա դատավորները պատժում չարություն անողներին, քանի որ չարությունը բնածին է։ Եվ վերջապես, եթե անմեղ փոքրիկ երեխայի մեջ աստված ի սկզբանե չարություն է դնում, այն դեպքում չար է ինքն աստված։ Քրիստոնյա ընդօրինակողը Շիրակացու՝ աստծուն չար անվանելու այս հատվածը համարել է անպատշաճ և կրճատման է ենթարկել։

---

[11] «Ցուցակ ձեռագրաց Վենետիկի», հ. Ա, էջ 1098։

[12] «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. Դ, էջ 13։

[13] Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմու-

Որոշ բնագրերի ընդօրինակման ժամանակ գրիչներն ըստ իրենց նախասիրության որոշ բառեր և հատվածներ են ավելացնում լուսանցքներում կամ ձեռագրի բացատներում։ Այդ նախատելի չէ, մանավանդ, երբ կարելի է տարբերել նախնական բնագիրը լուսանցագրությունից։ Բայց նրանք այլ բնույթ են ստանում, երբ արտագրվում, ձուլվում են բնագրի հետ, և ջնջվում են նոր ավելացվածների հետքերը։ Բերենք նման աղճատումներից երկու օրինակ։ Ըստ «Աշխարհացոյցի» հնագույն ընդօրինակության, Գերմանիայի արևելյան սահմանը տարածվում է մինչև «զՍարմատացւոց լերինսն և զԴանուբ գետ»[14]։ «Աշխարհացոյցի» ուշ դարերի ընդօրինակողներից մեկը, ցանկանալով բացատրել Դանուբ գետի նոր անունը, իր կողմից ավելացրել է. «Դանուբ գետ, որ է Յոզու ռուսաց»[15]։ Այդ ավելացումը կարող էր կատարվել 13—14-րդ դարերից հետո, երբ ռուսական Յաուզա գետը ծանոթ էր հայկական շրջաններում, Յոզուն կարելի էր շփոթել այդ անվան հետ։ «Աշխարհացոյցի մեջ Սարմատիայում հիշվում է Խերսոնես թերակղզին. «Եւ ունի Սարմատիա...քրիստոնէից զՔեռսոն ցամաք կղզի...»[16]։ Նոր ժամանակների ընդօրինակողներից մեկը ցանկացել է բացատրել, թե որն է Խերսոնեսը և նշված բնագրի վրա ավելացրել է. «Քերսոն՝ Խրիմ, որ է ցամաք կղզի»[17]։ Պարզ է, որ եթե մենք չունենայինք «Աշխարհացոյցի» հին ձեռագրեր, հարկադրված պետք է լինեինք նրա հեղինակին տեղաշարժել մինչև 13—14-րդ դարերը։

Բնագրերի վրա հավելումներ կատարելը սովորական է եղել առանձնապես տարեգրություններում։ Այս դեպքում գրիչներն իրենց բավական ազատ են զգացել։ Դրա ապացույցը մեզ տալիս է Սամուել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» աշխատությունը. երբ այդ բնագրի հնագույն ընդօրինակությունը (օրինակ՝ 1176 թ. ձեռագիրը) համեմատության մեջ ենք դնում ուշ դարերում կատարված ընդօրինակությունների հետ, պարզվում է, որ ուշ դարերում Անեցու ժամանակագրության վրա ավելացված հատվածներն իրենց ծավալով չեն զիջում հեղինակի բնագրին։ Այդ ավելացումները, իհարկե, արժեքավոր են, քանի որ գրված են ժամանակակից և ականատես անձնավորությունների կողմից։ Բայց իրողություն է, որ ավելացած այդ հատվածները, ձուլվելով նախկին բնագրի հետ, ակամա աղճատել են այն։

Բնագրային աղավաղումների և գրչական սխալների շարքում ամենից մեծ թիվ կազմում են ոչ այնքան դիտավորյալ կատարված փոփոխությունները, որքան նախկին բնագրերի անուշադիր վերծանությունը և սխալ ընդօրինակությունը։ Այդ բնույթի բնագրային աղավաղումները և գրչական սխալները բացահայտելու և ճշգրտելու տեսանկյունից ուսուցողական մեծ արժեք ունեն նշանավոր բանասեր Նորայր Բյուզանդացու երկու աշխատությունները՝ «Հայկական բառաքննութիւնը» և «Նախնիքը» (վերջինս անտիպ է)։ Վաստակաշատ գիտնականը այդ աշխատություններում ուղղել է 5—17-րդ դարերի հայ մատենագրության մեջ սպրդած հարյուրավոր սխալներ։

---

[14] ՄԱՄ ձեռ. № 1883, թ. 148բ։

[15] «Աշխարհացոյցի» Saint-Martin-ի հրատարակություն, էջ 336։

[16] ՄԱՄ ձեռ. № 1883, թ. 149ա։

[17] «Աշխարհացոյցի» նշված հրատարակություն, էջ 338։

«Նախնիք» աշխատության առաջաբանում նա անհրաժեշտ է համարել ընթերցողին ծանոթացնել իր աշխատանքային լաբորատորիայի հետ. «Երբոր կտեսնեի,—գրում է նա,—թե հեղինակը կհիշատակե մասնավոր բան մը, զոր չէի կրնար մեկնել իր գործերու միջոցով, թե իր մտածումը հակասական կամ անհեթեթ կերևար ինծի, թե իր ոճը համաձայն չէր իր ապրած դարուն քերականության և բառարանին, կանգ կառնեի և կհարցնեի...»։ Բյուզանդացին այնուհետև թվարկել է իր հարցումները՝ ամփոփելով նրանք քսան կետերի մեջ.

1. Հեղինակն արդյոք ուրիշ աղբյուրից չի՞ օգտվել, և այդ աղբյուրը չի՞ կարող օգնել ուղղելու նկատվող սխալը։
2. Սխալավոր բառը հատուկ անուն չի՞ եղել, որը հրատարակիչը հասարակ է կարծել։
3. Հակառակը, այն հասարակ անուն չի՞ եղել, որը հատուկ է կարծել։
4. Աղավաղումը կետադրության սխալանքի հետևանքով չի՞ առաջացել։
5. Ուշ շրջանում ձեռագրի լուսանցքում և կամ բացատում գրված ընդմիջարկություն չէ՞, որը նոր արտագրողը բնագրի մեջ է մտցրել։
6. Մի գլխի վերջը չի՞ միացված հաջորդ գլխի հետ։
7. Մի գլխի սկիզբը չի՞ խառնված տվյալ գլխի տակ շարադրված բնագրի հետ։
8. Պակաս բառի կամ տառի մոռացություն չկա՞ արդյոք։
9. Չկա՞ արդյոք էջերի ետևառաջություն։
10. Ընդօրինակող գրիչը տառերի շփոթություն թույլ չի՞ տվել։
11. Նույն բառերի շփոթություն թույլ չի՞ տվել։
12. Սխալ ըմբռնումով կրճատումներ չկա՞ն։
13. Չկա՞ն իրար միացված երկու կամ երեք բառեր։
14. Ամբողջական բառը չի՞ անդամահատած մասերի։
15. Բառի մի մասը չի՞ միացված առաջին կամ հաջորդ բառերին։
16. Բառի առաջին տառը չի՞ կրկնված նախորդ բառի վերջում։
17. Ջանց չի՞ առնված սկզբի տառը, որն առաջին բառի վերջին տառն է։
18. Վանկը չի՞ կրկնված հարևան բառերի մեջ։
19. Վանկը չի՞ հապավված նույնաձայն վանկի մեջ։
20. Բառի վանկերի կամ տառերի տեղափոխություններ չկա՞ն[18]։

Գրչական սխալների մի մասն առաջացել է հին բնագրերի ոչ ճիշտ բառանջատման հետևանքով. մաշտոցյան երկաթագիրը, ինչպես հայտնի է, չունի բառանջատում, և ուշ միջնադարում արտագրության ժամանակ գրիչներին ոչ բոլոր դեպքում է հաջողվում այդ կատարել անսխալ։ Դժվար է լինում բառանջատումը մանավանդ այն դեպքում, երբ խունացած մագաղաթի կամ թղթի

---

[18] Տե՛ս Գ. Մանուկյան, Հայ նշանավոր բանասերի մի անտիպ աշխատությունը («Գրական թերթ», 1969 թ., օգոստոսի 22)։

վրա գունատված տառերը վատ են երևում։ Անհիմն չէ Ներսես գրիչը, երբ իր ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում խնդրում է անմեղադիր լինել նկատվող սխալների նկատմամբ, որովհետև նա արտագրել է այնպիսի մի ձեռագրից, որի «գիրն լիզած» էր[19]*։ Հորդանան անունով ուրիշ մի գրիչ գանգատվում է, որ իր արտագրած ձեռագիրը՝ «Աւրինակս եղծած է, փտեալ մագաղաթ է, և ոչ կարեմ վերծանել»*[20]*։*

Բերենք ոչ ճիշտ բառանջատման հետևանքով առաջացած սխալների մի քանի օրինակ։

«Ո՞ւր է ծննդեան **անփոփոխ անունն**» *(Փիլոն, Յաղագս յառաջխնամութեան, Ա, էջ 40»)։ Բյուզանդացին առաջարկել է ուղղել. «Ուր է ծննդեան ան*-**փոփոխ Ռանոն**»[21]:

«Իսկ շնորհատուր Հոգւոյն լցեալ զնա, գիտութեանն էր աղբիւրացեալ զամենայն **լսելեացն ցուցս** *ականչացն և սրտիցն երկրին» (Փ. Բուզ., Գ, ԺԲ, էջ 30)։ Ն. Բյուզանդացին առաջարկել է ուղղել* «**լսելեացն ցնցուղս**»[22]:

«Զի առ քաղաքօքն երկոքումբք և առ ամենայն նահանգաւն նոցունց քաղաքաց՝ **անցանէր Ռոդոնոս** *գետ բազում յորդութեամբ ջուրց իւրոց» (Եւս., Պատմութիւն, Ե, Ա, էջ 322)։ Ն. Բյուզանդացին առաջարկել է ուղղել* «**անցանէ Ռոդոնոս գետ**»[23]:

Գրչական սխալների զգալի մասն առաջացել է նմանաձև տառերի շփոթության հետևանքով։

Երկաթագիր բնագրերում երբեմն շփոթվում են հետևյալ տառանիշերը.

Գ—Դ Ի—Ր Մ—Ս
Լ—Ը Ի—Ւ Յ—Ց
Է—Լ Մ—Տ Ք—Բ

Բոլորգիր բնագրերում շփոթվում են հետևյալ տառանիշերը.

ա—ա ե—է տ—ու
գ—դ ժ—ծ ր—բ
գ—զ զ—ղ տ—փ

Նոտրգիր բնագրերում շփոթվում են հետևյալ տառերը.

ա—ու ղ—դ ղ—շ
ե—է ս—ո վ—զ
խ—իւ յ—ց ջ—չ

Որպես նմուշ բերենք գրչական սխալներից մի քանիսը.

Տ—Մ-*ի* **աղավաղում.**

«**Ի տօծկէ** *և ի մժխկաց կերակրին ի խնամոցն աստուծոյ՝ մինչ ի դառնալ ծնողացն» (Վարդան, Մեկնութիւն սաղմոսացն)։ Բյուզանդացին ուղղել է «մո*-**ծակէ**»[24]*։*

Յ—Ց-ի աղավաղում.

«Թէ ընդէ՛ր, վասն զի քաղդէացւոց և յԱսորեստանեաց մատենից ցան-

---

[19] *Տե՛ս «Վիեննայի ձեռագրաց ցուցակ», Հ. Ա, էջ 150։*

[20] *Նույն տեղը, էջ 162։*

[21] *Ն. Բյուզանդացի, Հայկական բառաքննություն, Կ. Պոլիս, 1880, էջ 24։*

[22] *Նույն տեղը, էջ 30։*

[23] *Նույն տեղը, էջ 31։*

[24] *Ն. Բյուզանդացի, նշվ. աշխ., էջ 19։*

կագոյն են մեր իրք ի յունականէն կամեցաք մեք ցուցանել» (Խորենացի, Ա, Բ)։ Ն. Բյուզանդացին առաջարկել է ուղղել «յանկագոյն»[25]։

Կ—Հ-ի և Ս—Մ-ի աղավաղում.

«Իսկ բարեացապարտին յանկարծակամ *կենացն ամենեցուն լինէր...» (Կորիւն, Գ. Ֆնտգլյան հրատ., 920-րդ տող)։ Հրատարակիչն ուղղել է* «յանկարծահաս»[26]:

Ա—Ս-ի աղավաղում.

«Ասորիք... *ունի ...վայրս ընդարձակս և* բարիս» *(Աշխարհացոյց)։*

Ուղղվում է «բէրրիս»[27]։

Ի—Ր-ի աղավաղում.

«Իսկ Պաւղոսի, ի մտի եդեալ էր շրջեցուցանել *զքրիստոսադիր կարգացն պայծառութիւն» (Կորիւն, Ֆնտգլյանի հրատ., 115-րդ տող)։ Հրատարակիչն ուղղում է* «շիջուցանել»[28]։

Ի—Ռ-ի աղավաղում.

«Եւ ի սոցա ի հարաւոյ աշխարհ մի առ Անծանօթ երկրաւ, յորում է գաղան ինչ՝ կանացի ունելով գլուխ զձեոս» *(«Աշխարհացոյց», էջ 599)։ Ուղղվում է* «կանացի ունել ձեւս»[29]:

Ա—ՈՒ-ի աղավաղում.

«Ապա յետ այսորիկ գայր Դանուն ոմն զամապետ *սպարակրացն գնդին մանուէլեան զօրացն» (Փ. Բուզ., Ե, ԼԷ, էջ 243)։ Ն. Բյուզանդացին առաջարկում է ուղղել* «զումապետ»՝ *զորապետի նշանակությամբ»*[30]։

Գ—Դ-ի աղավաղում.

«Գրէ և Փլիեղոնիոս. *ամենայն թագաւորաց հուժկու եղեալ պարթեն Արտաշէսս» (Խորենացի, Բ, ԺԳ)։ Պետք է ուղղել* Փելիգոնիոս *(երկրորդ դարի պատմիչ է, Լյուդացի՝ Տրալլա քաղաքից)*[31]։

Սխալ բառանջատումը կամ գրչական մի տառի սխալը հաճախ պատճառ է դառնում ոչ միայն մի բառի, այլ տվյալ բառն օգտագործած ամբողջ նախադասության աղավաղման և միանգամայն այլ բովանդակություն ստանում։ Բերենք այդ կարգի մի քանի օրինակ։

«...շնորհօքն աստուծոյ մերոյ, մերձաւոր կենակից փայլէր, եւ զի ըստ կրելոցս առ ի մէնջ հարքն ի կափարումն *դարձեան» (Կորիւն, Ֆնտգլյան հրատ., 924-րդ տող)։ Հրատարակիչն ուղղում է* «ի կատարումն»: *Պարզ է, որ երկաթգիր Տ և Փ-ն իրար հետ շփոթվել չէին կարող, այստեղ աղավաղվել են բոլորգիր տ և փ տառերը։*

«Եւ այս է չարութիւն եղեալ յորդի կայսերն Երակղի՝ ի յանցս մեծս, որում անուն էր Աքալարիկոս *որ և* խոռխոռունեաց *զսիրտն հաւրն և խրամատեաց զհրաշալի անձն...» (Սեբեոս, էջ 103, տ. 14—22)։ Գ. Աբգարյանն ա-*

---

[25] *Նշված աշխատությունը, 21։*

[26] Կորիւն, *Վարք Մաշթոցի, Երուսաղէմ, 1930, էջ 70—73։*

[27] Ա. Գ. Աբրահամյան, *Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյցի» հեղինակի հարցի շուրջը, էջ 42։*

[28] Գ. Ֆնտգլյան, *նշվ. աշխ., էջ 9։*

[29] Ա. Գ. Աբրահամյան, *Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյցի» հեղինակի հարցի շուրջը, Երևան, 1940, էջ 45։*

[30] Ն. Բյուզանդացի. *նշվ. աշխ., էջ 3։*

[31] Գ. Ֆնտգլյան, *նշվ. աշխ., էջ 73։*

առաջարկում է **խոռխոռունեացը** ուղղել **խողխողեաց**[32]։ Այստեղ ևս աղավաղումը պետք է կատարված լինի բոլորգրի հիման վրա։

Մաշտոցի անվան մատենադարանի № 3722 ձեռագրի հիշատակարանում գրչության տարեթիվը տրված է չորս զուգահեռ թվականներով՝ քրիստոնեական, արարչության, քրիստոնեական հայկական և հայկական մեծ թվականով. «Արդ, վիրաւարտեալ եղև սայ ի թուաբերութեանս ըստ յաբեթական տումարիս հընգետասան յոբելենիս յաւելեալ եռակի թուով, և ի յելանելոյ նախաստեղծին ի վայելչութեան վայրէն և ծաղկազարդ բուրաստանէն մինչև ցսոյն ամ յարաբարդին միահամուռ միանգամայն ամք իբրև ՉՌ և Չ յաւելեալ քառակի թուով։ Եւ ի կենարար յայտնութեննէն աստուծոյ բանի մինչև ցսոյն ամ շարամանեալ պարփակին ամք իբրև ՌՅ և Դ, յորում և թուականս Հայոց ՉԾԳ էր»[33]։ Ըստ այս հիշատակարանի, ձեռագիրը գրված է քրիստոնեական հռոմեական թվականի 1304-ին (753+551=1304)։ Քրիստոնեական հայկական հաշվով 1306-ին, որից հանելով մեզ ծանոթ ավելորդ երկու տարիները, ստանում ենք 1304։ Արարչության թվականը՝ յոթանասնից կոչվող թվականն է, որից անհրաժեշտ է հանել 5200։ 6704 թվականից հանելով 5200, ստանում ենք 1504, երկու հարյուր տարվա տարբերություն։ Պարզվում է ՉՌ և Չ թվանշանի մեջ տեղի է ունեցել աղավաղում. Չ-ի փոխարեն պիտի լինէր Շ։ Ըստ որում, անկասկած աղավաղված է բոլորգիր չ տառը շ-ի հետ։

Քիչ չեն պատահում նաև առանձին տառերի մոռացությամբ բացթողումներ, որոնց հետևանքով նախադասությունը բոլորովին այլ իմաստ է ստանում։ Բերենք մի քանի օրինակ։

Սեբեոսը խոստանում է նկարագրել «զամս և զաւուրս հինգ թագաւորացն» —(էջ 3)։ Բնագրում սխալ է սպրդել. դժվար չէ նկատել, որ նախնական բնագրում եղել է «...զամս և զաւուրս հին թագաւորացն»[34]։

Նույն հեղինակի մոտ կարդում ենք. «Ապա ասէ. Ես գամ ի Կարնոյ քաղաք և եկայր դու առ իս։ Ես գամ առ ձեզ օգնութիւն **հոռգի**» (էջ 141, տ. 8—11)։ Ասողը բյուզանդական կայսրն է՝ ուղղված Թեոդորոս Ռշտունուն։ Խոսքը զորքով օգնության մասին է։ Գ. Աբգարյանը համոզեցուցիչ ձևով առաջարկում է բերված նախադասության մեջ «հոռգի»-ն ուղղել «ՀՌ (70 000) ոգի» ձևով, այսինքն՝ խոստանում է օգնել 70000 հոգով[35]։

Ցույց տալու համար, թե գրչական նման սխալները աղբյուրագիտական ինչքան մեծ աղավաղումների տեղիք կարող են տալ, ուզում ենք մատնացույց անել մի սխալ, որ բանասիրական մեծ վեճերի առարկա է դարձել։ Շիրակացու «Աշխարհացոյցի» նոր ընդօրինակությունների մեջ գրիչները նրա հեղինակ են համարում Մովսես **Խորենացուն** և նրա անունը դնում վերնագրում։ «Աշխարհացոյցի» ձեռագրերի ուսումնասիրությունից հայտնի է, որ 17-րդ դարից առաջ ընդօրինակված ոչ մի ձեռագրում չկա **Խորենացու** անունը։ Հնագույն ընդօրինակությունները մեզ հանդիպում են առանց վերնագրի։ Հետագայում նրա խորագիրը դարձնում են բնագրի սկզբի առաջին երեք բառերը՝

---

[32] Տե՛ս Գ. Վ. Աբգարյան, «Սեբեոսի պատմությունը» և անանունի առեղծվածը, Երևան, 1965, էջ 175։

[33] ՄԱՄ ձեռ. № 3722, թ. 356բ—357ա (հմմ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 24)։

[34] Գ. Աբգարյան, նշվ. աշխ., էջ 41, 189։

[35] Նույն տեղ, էջ 195։

«Յաղագս աշխարհագրութեան ստոյգ»։ *17-րդ դարից հետո դրան ավելացնում են Խորենացու անունը. վերնագիրը դառնում է.* «Յաղագս աշխարհագրութեան ստոյգ Մովսիսի Խորենացւոյ»։ *Անուշադիր գրիչներից մեկի մեղքով այս վերնագրում բաց է թողնվում «ստոյգ» բառի վերջին «գ» տառը, որի հետևանքով վերնագիրը բոլորովին այլ իմաստ է ստանում.* «Յաղագս աշխարհագրութեան ստոյ Մովսիսի Խորենացւոյ»։ *Եվ ահա եղել են հայագետներ, որոնք այս նոր վերնագրի հիման վրա ստեղծել են մի ամբողջ տեսություն, որ իբր թե գոյություն է ունեցել երկու Խորենացի՝* ստույգ *Խորենացի և* սուտ *Խորենացի, և «Աշխարհացույցի» վերնագրում հիշված Խորենացին այդ* սուտ *Խորենացին է։*

Հայագիտության մեջ պակաս վեճեր չեն եղել Կորյունի մի արտահայտության շուրջ. խոսելով Մաշտոցի Վրաստան կատարած առաքելության, վրաց այբուբենի ստեղծման և հովիվներ կարգելու ստուգապատում եղելությունների մասին, Կորյունն ավելացնում է. «...յորոց և իմ անարժանիս *եղեալ ի կարգ եպիսկոպոսութեան...»։ Շատ լրջմիտ հայագետներ այստեղից եզրակացրել են, թե Կորյունը վրացի կամ վրաստանցի է եղել։ Մինչդեռ տակավին դարասկզբին Ն. Բյուզանդացին կռահել էր ընդգծված արտահայտության աղավաղված լինելը և առաջարկել նոր ընթերցում՝* «գտան արժանիք»[36]։ *Հետագայում Թադ. Ավդալբեգյանը, սույն իրավացի սրբագրությունը նկատի ունենալով, առաջարկեց կարդալ «գոմանս արժանիս», որը ըստ էության իմաստով նույնական է[37]։ Դրանով իսկ կանխվեց աղավաղման հետևանքով առաջացած տեսական թյուրիմացությունը։*

Բնագրային աղճատումներ են տեղի ունեցել նաև ձեռագրերը կազմելու ժամանակ։ Գրիչները սովորաբար ձեռագիրը գրում են պրակներով և, կազմարարին օգնելու նպատակով, պրակների սկզբից և վերջից դնում նրանց համարները։ Մեկ-մեկ պատահում են անուշադիր կազմարարներ, որոնք շփոթում են պրակների համարները և խառնառաչ կազմում։ Թերթերի խառնաշփոթություններ են պատահում նաև հին, քայքայված ձեռագրերի կազմման ժամանակ։ Բավական է, որ քայքայված ձեռագրի որոշ էջեր սխալ տեղադրված լինեն (իսկ խունացած էջերի տեղադրությունն այնքան էլ հեշտ չէ) և հետագայում այդ ձեռագիրն ընդօրինակվի՝ բնագրի լուրջ աղճատման տեղիք է տալիս։

---

[36] Ն. Բյուզանդացի, *Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք*, Տփղիս, 1900, էջ 385—386։

[37] Թադ. Ավդալբեգյան, *Հայագիտական հետազոտություններ*, Երևան, 1969, էջ 136։

XVII. ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԳՐԻՉՆԵՐԸ ԵՎ Ի՞ՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՆ ՆՐԱՆՔ ԱՇԽԱՏԵԼ

Միջին դարերում եղել են գրչությամբ զբաղվող և նրա մեջ մասնագիտացած հատուկ անձինք, որոնք կոչվել են «գրիչներ»։ «Գրիչ» ասելով մենք այժմ հասկանում ենք ծայրը կամ գրչակոթը ծայրի հետ միասին, իսկ հնում այն ուներ բոլորովին այլ նշանակություն. «Գրիչ» ասելով նկատի ունեին այն անձնավորությունը, որը ձեռագրեր է ընդօրինակում։ Գրիչներն իրենք իրենց գրառումների մեջ անվանում են «գծող», «ծրող», «մրող» և այլ նվաստացուցիչ անուններով։

Գրիչները ձեռագրեր ընդօրինակելուց բացի, կատարել են շնորհակալ մի այլ գործ ևս. Նրանք իրենց ընդօրինակած ձեռագրերի բացատներում կամ տեքստերի վերջում թողել են գրառումներ և հաղորդել անչափ արժեքավոր պատմական տեղեկություններ ձեռագրի արտագրության հանգամանքների, գրության վայրի, պատվիրատուի, ժամանակակից քաղաքական իրադարձությունների և բազմաթիվ այլ հարցերի մասին։ Այդ տեղեկությունները անգնահատելի պատմական աղբյուրներ են, որովհետև գրված են իրադարձությունների ականատես, ականջալուր անձնավորությունների կողմից։ Նրանք երբեմն գրի են առնված այնքան անմիջական և ճշմարտացի, որ դրանց միջոցով ծանոթանում ենք ո՛չ միայն գրած ժամանակաշրջանի իրադարձություններին, այլև մեզնից հարյուրավոր, իսկ երբեմն նաև հազարից ավելի տարիներ առաջ ապրած մարդկանց ներքնաշխարհին՝ նրանց հույզերին, զգացմունքներին ու երազանքներին։ Գրիչների այդ գրառումները կոչվում են **հիշատակարաններ** *և* **հիշատակագրություններ** *(եթե գրիչն անմիջապես իր կողմից է կատարել գրառումը՝ կոչվում է* **հիշատակարան**, *իսկ եթե ուշ շրջանում ուրիշ մեկն է գրել՝* **հիշատակագրություն***)։*

Հիշատակարանների և հիշատակագրությունների որոշ մասը հրատարակված է ձեռագրացուցակներում, իսկ առանձին մի ժողովածու հրատարակել է Ղ. Փիրղալեմյանը։ Նոր ժամանակներում հիշատակարանների հավաքման և հրատարակման գործում շնորհակալ նախաձեռնություն ցուցաբերեցին Գ. Հովսեփյանը և Լ. Խաչիկյանը։ 1951 թ. Անթիլիասում լույս տեսավ Գ. Հովսեփյանի կազմած հիշատակարանների ժողովածուի առաջին հատորը՝ ընդգրկելով սկզբից մինչև 13-րդ դարի կեսը, իսկ ակադ. Լ. Խաչիկյանը հրատարակեց 14—15-րդ դարերի հիշատակարանները՝ չորս ստվար հատորով։ Սակայն աշխատանքը սպառված չէ. հազարավոր հիշատակարաններ դեռ սպասում են իրենց ուսումնասիրողներին և հրատարակիչներին։

Տպագրության բացակայության պայմաններում գրիչներն անչափ շնորհակալ գործ են կատարել ինչպես նոր երկեր ստեղծելու, այնպես էլ բնագրեր արտագրելու և նրանք կորստից փրկելու գործում։ Հաստատապես կարելի է ասել, որ եթե չլինեին միջնադարյան գրիչները, ապա հայոց հին մատենագրությունից փշրանքներ կհասնեին մեզ։



IX դ. դրչության նմուշ ՄԱՄ-ի № 9465 ձեռագրից։

Միջին դարերում գոյություն են ունեցել գրչության հատուկ դպրոցներ, որոնց շուրջն են համախմբված եղել գրիչները։ Հայագիտության համար խիստ կարևոր հարց է գրչության օջախների ուսումնասիրությունը։ Մենք նկատի ունենք ոչ միայն նրանց տեղագրությունը պարզելը, գործունեության ժամանակը որոշելն ու բանասիրական նման այլ հարցեր, այլ նաև՝ գրչության դպրոցները որպես ստեղծագործական օջախներ՝ իրենց գրչական ավանդույթներով, ներքին կյանքով և հայ մշակույթի ասպարեզում իրենց խաղացած դերով ու խնդիրներով։ Առաջադրված հարցերից շատերը ժամանակին ուսումնասիրվել են Հ. Ոսկյանի, Ն. Ակինյանի կողմից[1], թեև կատարելիքը ևս քիչ չէ։ Այդ դպրոցների շարքում եղել են այնպիսիները, որոնք կոչվել են նույնիսկ համալսարան, «երկրորդ Աթենք», «մայրաքաղաք իմաստության» և այլն, ինչպես, օրինակ Գլաձորը։

Միջնադարյան հայ գրիչների համեստությունը երբեմն հասնում է ծայրահեղության. պատահում են դեպքեր, երբ հարյուրավոր էջերից բաղկացած ձեռագրերի ընդօրինակությունը վերջացնելուց հետո, գրիչը խուսափում է հաղորդելու իր անունը և կամ հիշում է նվաստացուցիչ մակդիրներով, իրեն անվանելով փանաք, ապիկար, եղկելի, թերավարժ, անարվեստ, ագայուն, ծույլ, միինաս, մատնադեղն, չքին, սխալգիր, սուտանուն, ախմար, փծուն, տրուպ, աղեխացեալ, յիմար, ապիկար, յոռի, թարմատար և այլն։ Պատկերացնելու համար, թե ինչպիսի ինքնանվաստացման էին հասնում գրիչները միջնադարյան իրականության մեջ, ավելորդ չենք համարում բերել Բաղդասար գրչի 1617 թ. հիշատակարանից մի հատված. «Եւ արդ՝ ես անպտուղս ի բարեաց, մեղաւորս յարդարոց, անկատարս ի կատարելոց, մեղանչականս յանմեղաց, անկարգս ի կարգաւորաց, անսուրբս ի սրբոց, չարս ի բարեաց, յիմարս յիմաստնոց, անմիտս ի մտաւորաց, անբանս ի բանականաց, անարուեստս ի յարուեստաւորաց, անյիշելիս ի գրչաց, տգէտս ի գիտնաւորաց. տունկս դառնոստեան, բարունակս ապականաբերս, Քանանու զաւակս և ոչ Յուդայի, բազմամեղ և սուտանուն երէց Բաղդասար գրիչ...»[2]։

Ծանոթանում ես ձեռագրի հետ. հարյուրավոր թերթից բաղկացած ձեռագիր է գրել, նրա յուրաքանչյուր տառը ոչ թե գրել, այլ գծագրել, նկարել է, չունի գրեթե ոչ մի սխալ, ոչ մի ջնջում և այնպիսի բազմատքուն ու խնամքով աշխատանքից հետո իրեն անվանում է ծույլ, անարվեստ, սխալագիր...

Գրիչները մեծ մասամբ հասակ առած, տարեց մարդիկ են եղել, բայց մեկ-մեկ պատահում են նաև երիտասարդներ, նույնիսկ՝ պատանի գրիչներ. Հայտնի է, որ Թոխաթում գրված գեղեցիկ գրչության մի ձեռագրի ընդօրինակողը 12 տարեկան պատանի է «...դեռևս ԺԲ (12) ամաց զոլով... գրեալ եղև սա ի քաղաքն Թոխաթ»—կարդում ենք պատանու հիշատակարանում։ Պատահում են նաև գրչուհիներ։ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերից մեզ հայտնի են տասնյակ գրչուհիների անուններ՝ Հեղինե, Շուշանիկ, Եղիսաբեթ, Մարիամ, Մարգարիտ, Բրաբիոն, Պայծառ և ուրիշներ։

Գրչության օջախներում վարպետ գրիչների մոտ սովորում էին և նրանց օգնում երիտասարդ մարդիկ, որոնք կոչվում են «գրոց աշակերտներ»։ Նրանք սկզբում օգնում էին գրչին թուղթը կոկելիս, ձեռագրի էջերը տողատելիս և նման մանր այլ գործերում, իսկ հետո, երբ վարժվում են, սկսում են ձեռագրեր գրել, մանրանկարել, կազմել և այլն։ «Գրոց աշակերտները» մեծ երախտագիտությամբ են հիշում իրենց ուսուցիչներին. Նրանց համարում են «Հոգևոր հայր» և հիշում «մարմնաւոր հոր» կողքին. «Յիշեսջիք զհոգևոր հայրն մեր և զմարմնաւոր հայրն»[3]։

---

[1] Մենք նկատի ունենք Ն. Ակինյանի «Բաղեշի դպրոցը» ուշագրավ աշխատությունը, Հ. Ոսկյանի Բարձր Հայքի, Գուգարքի, Կարինի, Վասպուրական-Վանի, Տարոնի, Սեբաստիայի և այլ գրչության օջախներին նվիրված արժեքավոր ուսումնասիրությունները։

[2] **Առ. Սիւրմէեան**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու, հ. 1, Փարիզ, 1950, էջ 27։

Ուսուցիչները, ինչպես երևում է, խստապահանջ են գտնվել իրենց աշակերտների նկատմամբ, անհրաժեշտության դեպքում անգամ ծեծել են։ Հակոբ գրիչը 1450 թ. գրած հիշատակարանում խոստովանում է, որ իր աշակերտը վայր է գցել գրչության տախտակը, որի համար ինքը ծեծել է նրան, և աշակերտը մորմոքելով խնդրել է իրեն. «Մի հարկաներ զիս, ղարիբ եմ և անմխիթար»[4]։ Իսկ ուրիշ մեկը, ավելի նոր շրջանում (18-րդ դ.), գնացել է վանք սովորելու. ըստ երևույթին լավ չի սովորել, այդ պատճառով էլ նրան ծեծել են, ոտքերը ֆալախայի մեջ դրել։ Երեխան փախել է վանքից, իսկ ինչ որ մեկըն այդ առթիվ գրել է ծաղրական բանաստեղծություն, որի ամեն մի տունը վերջանում է հետևյալ քառյակով.

«Ես եմ փոքրիկ երեխայ, երեխայ,
Ջոտերս եւին ֆալախայ,
Վասն այն ելեալ ես փախայ
Վա՜յ ինձի»[5]։

Երկարատև, ծանր աշխատանքը գրիչները սիրով են կատարում։ Քիչ է պատահում, որ գրիչները ձանձրանան, դժգոհեն գրչության աշխատանքի ծանրությունից։ Միայն մի դեպք է հայտնի, երբ հիշատակագիրը առաջիկա աշխատանքի մեծությունը նկատի ունենալով, գրել է.

«Ո՜հ, կաղ իշովս մինչև յե՞րբ հասից յաւարտ գրոցս»[6]։

Ձեռագրերի հետ գործ ունեցող մասնագետը չի կարող պատկառանքով վերաբերվել դեպի գրիչները, որոնք մեծագույն խանդաղատանքով, ճրագի ղոտ, դժգույն լույսի տակ, ամիսներ, երբեմն տարիներ են աշխատել մի ձեռագրի վրա, համբերությամբ ու խնամքով գրել և ավարտել իրենց ձեռագիրը։ Ահա՛ ինչ է գրում հայ բազմերախտ գրիչներից մեկը՝ Մխիթար Անեցին.

«(Հ)ասրաթ ունիմ ի յիմ սրտիս,
Միշտ տագնապիմ վասն այս բանիս,
Որ մինչ հոգիս է ի մարմնիս
Ես տեսանեմ զթամամ գըրիս»[7]։

Գրիչների և ընդհանրապես հայ մատենագիրների առաջին խնդիրն է եղել ել և ընդօրինակել այնպիսի բնագրեր, որոնք օգտակար են, որոնք հասարակական արժեք են ներկայացնում։ Լեհաստանի Կամենից քաղաքի բանաստեղծ րծիչներից մեկը թողել է ուշագրավ հիշատակագրություն, ուր գրիչը համեստության մեջ է դրված մեղուի հետ. մեղուն ծաղիկներից հավաքում է մեղրի

---

[3] ՄԱՄ ձեռ. № 843, թ. 25ա։

[4] «Յուցակ ձեռագրաց Երուսաղէմի», № 1622, էջ 156—157։

[5] ՄԱՄ № 8213, թ. 32բ—33ա։

[6] ՄԱՄ ձեռ. № 46, թ. 138ա։

[7] «Թամամ գրիս»՝ գրի ավարտելը, ձեռագրի վերջացնելը։

Հիշատակարաններից մեկում հմուտ գրիչը համեմատված է վարժ նավավարի հետ. ինչպես նավավարն աշխատում է վարպետորեն տանել և հասցնել նավն իր նշանակված հանգրր, «նոյնպէս և գրչին՝ ի յետին գիծն», այսինքն՝ մինչև ձեռագրի ավարտը (ՄԱՄ ձեռ.

հյութը, սակայն նույն ծաղկից հյութ է հավաքում նաև օձը, որից թույն է պատրաստում։

«Զհիւթ ծաղկանց մեղուաց կերչի
Ծծէ և օձ չարաթոյն,
Այլ երկոցունց այլատեսակ
Բաշխէ գնիւթ այլագոյն.
Մեղուն ծծեալ զմեղր յօրինէ,
Գոգ աշխարհի սիրելի,
Բայց օձն ծծեալ նիւթէ զթոյն
Ամենեցուն խորշելի»[8]*։*

Եզրակացությունն այն է, որ գրիչը պարտավոր է բազմապիսի նյութերից ընդօրինակել այն, որը օգտակար է։

Գրիչների մեծ մասը, որքան էլ նրանք գեղեցիկ գրելու լինեն, սովորություն ունեն ընթերցողից ներողամտություն խնդրել գրի մեծության և կամ անհաջող գրչության համար։ Այսպես, 12-րդ դարի Կիլիկիայի աչքի ընկնող քերական Ստեփանոս Գույներիցանցը իր ընդօրինակած ձեռագիրը չի հավանում, գտնում է, որ «խոշոր և մացառոտ գծիւ ծաղրատեցի», ուստի ընթերցողների ներողամտությունն է հայցում[9]*։ Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի մի ձեռագրի գրիչ հիշատակարանում ընթերցողներից խնդրում է բարի ողորմիսով հիշել իրեն և անմեղադիր լինել գրչության խոշորության համար, քանի որ «այսչափ էր կար մեր»*[10]*, այսինքն՝ այսքան էր մեր կարողությունը։*

Նույն մատենադարանի գրչագրերից մեկ ուրիշի գրիչը խնդրում է անմեղադիր լինել վատ գրչության համար, քանի որ իր շնորհքն այդքան է։ Իրեն արդարացնելու համար նա օրինակ է բերում ջուլհակին. մարդ կա մետաքս է գործում, գրում է նա, և մարդ էլ կա՝ շալ կտոր։

Գրիչներից շատերը աշխատել են նյութական խեղճության մեջ։ Լայն գործածություն գտած այն արտահայտությունը, թե մեր գրիչները աշխատել են «մի նշխարք հացով», «մի կում ջրով» ստեղծվել է գրիչների աշխատանքային պայմանները նկատի ունենալով։

Ահա ձեզ բարբերդցի մի գրչի թողած հիշատակագրությունը. «Զվարդան աղքատս յիշեա ո՛ տէր իմ, և անմեղադիր լեր... Այսօր բորբոսած հաց եմ կերել և ջրհորի կրաչուր խմել և գրել յԵրուսաղէմս բազում վշտով»[11]*։ Ջմմառի սեփականությունը հանդիսացող 1414 թվականի ընդօրինակության ձեռագրի գրիչը՝ Հովսեփը, ընթերցողներից հետևյալն է խնդրում. «Ո՛ աղաչեմ անմեղադիր լերուք խոշորութեան, զի ցամաք կորեկ հաց կերայ և գրեցի, անմեղադիր [լեր]»*[12]*։ Գրիչն իր այդ խնդրանքը կրկնել է նույն ձեռագրի այլ էջում ևս. «Աւրն պահք էր և հացն ցամաք կորեկ, աղաչեմ անմեղադիր լեր»*[13]*։*

Անկյուրիայի Կարմիր վանքի ձեռագրերից մեկի գրիչը աղքատության մասին հետևյալ հիշատակագրությունն է թողել.

«Կերայ զդառնիճն, զի ոչ էր լեղի, քան զաղքատութիւն,

---

[8] *ՄԱՄ ձեռ. № 3965, թ. 87բ։*

[9] *«Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. Դ, էջ 277։*

[10] *Նույն տեղում, էջ 216։*

[11] **Արտ. Սիւրմէեան**, *Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի, էջ 283։*

[12] **Մ. Քեչիշյան**, *Ցուցակ ձեռագրաց Ջմմառի, էջ 48։*

[13] *Նույն տեղում, էջ 49։*

Շալկովս բարձի զաղն, զի ոչ էր ծանր, քան զաղքատութիւն»[14]։

«Դառնիճ»-ը Lactuca virosa բույսն է, որ սարսափելի դառն է։ Գրչի համոզմունքն այն է, որ աղքատությունը այդ դառնիճից էլ ավելի դառը, ավելի լեղի է։ Ղ. Ալիշանը հրատարակել է մի հիշատակարան, ուր գրիչը վըշտով արձանագրել է. «Ջի նիւթս՝ պակաս, թանաքս՝ աւեր և իմ պիտոյքս՝ ոչինչ, բայց միայն ցամաք հաց»[15]։

Խեղճության մեջ է գտնվել իր ժամանակի խոշոր հեղինակություն հանդիսացող այնպիսի անձնավորություն, ինչպիսին Եսայի Նչեցին է. Գլաձորի դպրոցի րաբունապետը իր ընդօրինակած ձեռագրերից մեկում գանգատվում է, որ ձեռագիրը գրել է աղքատ սեղանով. «...գրեցի զսա աղքատ և չքաւոր սեղանով զծառայակիցսն կերակրելով...»[16]։

Պողոս գրիչը ձեռագիրն ընդօրինակել է թշնամու կողմից իր ապրած բնակավայրը շրջապատման մեջ գտնված ժամանակ և կարոտ «մի գդալ» կաթ ու մածնի։ Իսկ Սիմեոն գրիչը (Եկեղյաց գավառից) 1493 թվականին գրած հիշատակարանում հետևյալ գանգատն ունի իր պատվիրատուից. «Գրոցս տէրն օր մի զմեզ մէկ հացիւ չյիշեց»[17]։

Մեզ է հասել մի հետաքրքիր բողոք-հիշատակարան, որ գրել է Գրիգոր Ախալցխացի գրիչը Հերմոնի վանքի միաբանության դեմ՝ իր նկատմամբ ցուցաբերած անբարյացակամության համար։ «Ու ամէն խուց ունէին, ու ես՝ ոչ, ու ամէն հաց ունէին ու ես ոչ, ու զվանիցս հացն վերայ իւրեանցն բաժանեցին ու ինձ ոչ տվին, թէ նայ ղարիպ է, նրայ բաժին մի տէք։ Ու ամէնն մոնթ, սպասաւոր ունէին ու ես ոչ, ու ամէնն սիրելի ունէին, որ հաց ու թաց կու բերէին ու ինձ ոչ, ու ամէնն կու երթէին ի վարդապետի խուցն, ուտէին և խմէին, ու ես ոչ, ու վարդապետն զամէն մարդու քաղցր գիտենէր ու զիմն ոչ, ու զամէն մարդ միաբանքն մին մին տանէր ի խուցն ու կերակրէր ու զիս ոչ, ու զամէն մարդու գոհ ու գանգատ հարցանէր ու զիմն ոչ, ու զամէն մարդ մխիթարէր ու զիս ոչ, ու իս... Նստեալ էի կու գրէի սոված ու քաղցած ու գնի ոչ։ Տնտեսին գնալն մին դիրն (այսինքն՝ մեկ անգամ—Ա. Ա.) Գ(3) օր հաց չկերայ ու ես ուզեցի ոչ։ Մի դիրն եկու օր անօթի կացի ու ուզեցի՝ նա հաց տվին ոչ։ Ու մին օր մինչև իրիկուն անաւթի կացի... ու մենակ մինչ յիրիկուն, գիր կու գրէի...»[18]։

Միջնադարյան հայ գրիչների ապրած պայմաններն ամփոփ պատկերված են Գլաձորի շնորհալի գրիչներից մեկի՝ Մխիթարի չափածո հիշատակարանում, զետեղված իմաստասիրական բովանդակություն ունեցող մի ստվար ձեռագրի վերջում.

«Տես թէ քանի աշխատեցայ
Ես Մխիթար գրիչ սորա.
Թուղթս անկոկ ու գրիչ չկայ,
Աւուրքըս ցուրտ ու պարզկա,

---

[14] Բ. Կյուլեսերյան, նշվ. աշխատություն, էջ 426։

[15] Ղ. Ալիշան, *Սիսուան*, էջ 104։

[16] ՄԱՄ ձեռ. № 5566, թ. 356 բ։ «Ծառայակից» ասելով նա նկատի ունի իր աշակերտներին։

[17] «Ցուցակ ձեռագրաց Վիեննայի», էջ 49—50։

[18] Մ. Շչեդրինի անվան Լենինգրադի հանրային գրադարան, ձեռագրերի բաժնի հայկական հավաքածու № 31, թ. 390ա—390բ (հմմտ. «ԺԵ դարի հիշատակարաններ», Հ. Ա, էջ 657—658)։

Զարտախս բարձր ու կրակ չկայ.
Դոներս[19] չոր ու սալաս չկայ.
Ու այս Գլաձորն ո՞վ գիտենայ.
Ես յոյժ նեղած և ճար չկայ...»[20]։

Հակոբ գրիչը 1491 թ. թողած չափածո հիշատակարանում նկարագրում է իր հոգեկան ծանր վիճակը՝ մահացած եղբոր որբերի համար.

«Զձեզ աղաչեմք, հայրք իմ գթածք,
Անմեղադիր լեր սխալանաց,
Զի իմ եղբայրն յիսնէ գնաց,
Էր շնորհալից ՝ւ անուշասաց.
Որբերն խիստ են չուարած,
Ուրեանց կտրիչ հայրն է մեռած,
Մէկն է բոբիկ ու գլխիբաց,
Մեւսն տկլող՝ մարմինն բաց։
Նոքա կարօտ ամէն բարեաց,
Տխուր նստին և դեգերած։
Փորս և աղիքս է գալարած,
Էլ ճար չունիմ, քան տէր աստուած...»[21]։

Ժողովուրդը, պետք է ասել, հաճախ հոգատարությամբ է շրջապատել բազմաշխատ գրիչներին, հատկապես նրանց, որ տուն-տեղ չեն ունեցել, եփող-թխող չեն ունեցել և տեղից-տեղ թափառելով՝ պատվերով ձեռագրեր են գրել։ Հիշատակագրություններում պատահում են գրառումներ, ուր խոսվում է գրչին ցույց տված հոգացողության մասին։ Թովմա գրիչը 1393 թ. ընդօրինակած «Մաշտոց»-ի հիշատակարանում իր գոհունակությունն է հայտնել բարեբար Ատոմից, որը՝

«Բերէր խաղող մեծ կողովով,
Գինի բերէր մեծ տկերով,
Քաթա բերէր անուշ խոնչով»[22]:

Խաչատուր գրիչն օրհնում է Ջունայիթին այն բանի համար, որ նա «...մին քաթեղէն մածուն և երկու հաց եբեր, որ կերաք և գոհացաք»[23]։ Նույն ձեռագրի մի այլ էջում գրիչը արևշատություն է մաղթում Կանեքին, որը ճմբուռ է բերել՝ հացը վրան։ Հակոբ գրիչը ողորմիս է տալիս Խերխաթունի հոգուն, որ նա «մեզ ոսպն եբեր և չիր, որ կերանք...»[24]։

Գրիչների հիշատակարաններում բազմաթիվ գանգատներ կան աշխատանքի ծանր պայմանների մասին. նրանք գանգատվում են աննպաստ քաղաքական իրադրությունից, գրանյութի վատությունից, հրագ-լույսի պակասությունից, բնակարանների մութ և նեղ լինելուց և այլն։ Գլաձորի գրիչ Մկրտիչը գանգատվում է, որ գրչության վայրը բացօթյա է եղել, որի հետեվանքով թանաքը անվերջ թանձրացել է («մածնոյր»), իսկ շրջապատը՝ աղմըկոտ, որի հետևանքով ինքը սխալներ է թույլ տվել («...աղմուկ գրուցաց յոլով լինէր մերձ իմ, յորմէ սխալէի»—գրում է նա)[25]։ Ծերունի մի գրիչ խընդրում է անմեղադիր լինել, գրի խոշորության համար, քանի որ աչքերը վատ են տեսնում, նեղվում է ծխից, բքից և կաթիլքից, ինքն է վառում թոնիրը և դրում ձեռագիրը. «...վերացեալ մարմնով, կուրացեալ աչքով՝ ի ծխէն, ի բքէն, ի կաթ[իլ]էն. ջոջ մարդ եմ, զթոնիրն եմ վառեր, երեք շայոյ զփայտն փներ, կարս մեր այս է»[26]։ Կարապետ գրիչը գանգատվում է իր տան երդիկից, որից անձրև է թափվում.

---

[19] «Դոներս», այսինքն՝ չոր հացի փշրանքները։

[20] Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 526։

[21] ՄԱՄ ձեռ. № 5438, թ. 245բ (հմմ. «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Գ, էջ 175)։

[22] Ղ. Փիրղալեմեան, Նօտարք Հայոց, Կ. Պօլիս, էջ 4։

[23] ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունք, հայկական հավաքածու, ИВАН В-7։

[24] «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Գ, էջ 415։ (Ձեռագիրը Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի սեփականությունն է և գրանցված է № 1622-ի տակ)։

«Ո՜հ, ո՜հ, զայս ոչինչ տունս.
Զինչ յերդէն կու անկանի՝
Թոյ ի գիրս և ապականի»[27]։

Հովհաննես գրիչը գանգատվում է լվից. «Այլ լուն խիստ զահմաթ կու տայր, զի բազում էր խուցս, զի այլ մարդ չկայր ի ներս և ամենին փոխան զիս կերան»[28]։

Գրիչները, մեծ մասամբ, գրել են խուցերում, ճրագի լույսի տակ, ուստի և հաճախ կարելի է լսել նրանց գանգատը ճրագլույսի վատության մասին։ Մեֆիլ Օհանը 1663 թվականին գրած իր մի ոտանավոր հիշատակարանում հետևյալ գանգատն ունի ճրագի մթության և թղթի վատորակության մասին։

«Ի հազար հարիւր երկու թվին,
Գանգատ ունիմ ճրագի մթին,
Այլ և յետոյ այս խամ թղթին,
Որ չի երթար յետ իմ սրտին...
Աչուերս է բաց. լուսոյ պակաս,
Գրիչը չերթար հետ շար տողին,
Որն է կաղ և որն է կոր,
Թանաք տղցի ի մէջ թղթին»[29]։

Մելիքսեթ գրիչը 1428 թվականին գրած իր հիշատակարանում հայտնում է. «Եթէ յոճ չնստի քեզ գիրս, նա պատճառն այն է եղբայր, որ ձիթի տակն էր և ճրագնլուս պակաս»[30]։

Ծերունի Մխիթար Անեցին 1338 թ. գրած չափածո հիշատակարանում գանգատվում է հիվանդության, ձեռքերը դողալու, թանաքի թանձրության, ճանճերի շատության և այլ անպատեհությունների համար.

«Մեծ վտանգի կամ յայս նեղուս,
Զի խիստ յաղթեց ցաւն մարմնոյս։
Եւ ի ձեռացս ի դողալուս,
Այլ չեմ կարել տալ շատ գրոյս։
Եւս առաւել ի յայլ շողուս,
Ու ի թանաքի թանձրանալոյս,
Եւ մանաւանդ ի յայս քնուս,
Զաւր հասարակ մրափելուս,

---

[25] ՄԱՄ ձեռ. № 6558, թ. 628բ («ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 7)։

[26] Ե. Լալայան, Ցուցակ ձեռագրաց Վասպուրականի, էջ 749։

[27] «Ցուցակ ձեռագրաց էջմիածնի» (տե՛ս «Էջմիածին», 1950 թ., № 11—12, էջ 85)։

[28] «Ցուցակ ձեռագրաց էջմիածնի» (տե՛ս «Էջմիածին», 1951 թ., № 10, էջ 83)։

[29] ՄԱՄ ձեռ. № 5623, թ. 224բ։

[30] ՄԱՄ ձեռ. № 6050. թ. 82ա։

Եւ յանիծեալ այս ճանճերուս,
Ի սնավաստակ ա[յ]ն կենդանուս,
Որ միշտ նստին ի վերա գրչուս,
Ծրծեն զթանաքն գրերուս։
Կելնեմ ի սիրտ այս ոչընչուս
Չգիտեմ թե ի՞նչ անեմ նզովծնուս...»[31]։

Ադամ գրիչը խնդրում է ներողամիտ լինել բաց թողած սխալների համար. որովհետև ձմեռ էր, ցուրտ և «...ձեռիկս կու մրրսէր ի գրելն»[32], մինչդեռ Թումա գրիչը (1409 թ.) գանգատվում է թղթի վատության համար («Աւա՜խ տառապանացս. բաղձանքս նեղէ զիս, և թուղթս վատ»)։ Մութն է եղել նաև գրչի բնակարանը և անձրև գալիս տանիքը կաթել է. «Աւա՜խ, որ մութ է և չեմ տեսնել, հոգիս կու ելանէ, ո՞նց գրեմ, և կաթիլքս՝ աւելի»[33]։

Զաքիոս Վայոցձորցի գրիչը ընթերցողի ներողամտությունն է խնդրում գրչության անհաջող լինելու համար և այդ բացատրում է նրանով, որ նա մանգաղով կտրել է իր մատը, որից շատ արյուն է գնացել և հազիվ է ինքը կարողացել այդպես գրել. «Թողութիւն արարէք ո՜վ եղբարք, մատս մանգաղով կտրել ի,—ասում է նա,—հէնչանք կարացի գրել, փառք աստուծոյ Ա(1) ոչխարի արիւն գնաց»[34]։

Ծերացած, աչքերը վատատես գրիչները գործ են ածել ակնոցներ։ Այդ մասին տեղեկություն ունենք 14-րդ դարից։ Հովհաննես գրիչը 1317 թ. Կիպրոսի Կանչուտի գրչության օջախում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում հայտնում է, որ իր աչքի լույսը նվազել էր, կարողացել է հայթայթել «աչքի ապակի», որն օգնական է եղել իրեն և որի մասին հիացմունքով է խոսում։ Եվ նա խորհուրդ է տվել. «Եւ զի յաչաց լուսոյ նուազեալ էի ըստ մարմնոյ որպէս եւ հոգւոյ, եւ գտի հայթհայթել աչքապակի, որ աւգնական եղեւ բնական վատելոյն, զոր հիացման արժան է գտողացն, որ են ֆռանգ, եւ այնիւ աւարտեցի զգիրս։ Եւ ամենայն ոք որ ի լուսոյ պակասեալ է եւ պատահէ ապակոյն, յոյժ ձեռնտու լինի նմա ի կարդալ եւ ի գրել, զոր տեսաք յայտնի ի բազումս, եւ փորձիւ եւ անձամբ կատարեցաք»[35]։ Ֆռանգ գրիչը Ներսես Լամբրոնացու աշխատությունը 1402 թ. արտագրել է «Օտար աչօք»[36], այսինքն՝ ակնոցով։ Նույնը և Հակոբ գրիչը. «Վատնեալ էր աչքս, եղի աչք, և բազում աշխատանաւք գրեցի վասն փափաքանաց սրտիս»[37]։

---

[31] Հիշատակարանի վերջում Մխիթար Անեցին դիմում է իր աչքերին, նրանցից լույս խնդրում, որպեսզի կարողանա գրերին շար տալ և «գրչության նավը» անվնաս հասցնել հանգրվան (Հմմ. «ԺԴ դարի հայ. ձեռ. հիշատ.», էջ 312)։

«Այլ ե՞րբ կու տաս իմ աչքս լոյս,
Որ ես այլ շար տամ գրերուս։
Եղբայր, մեզ մի դնէ գրերուս.
Այս տառապեալ 'ւ ողորմելոյս,
Իմ հնացաւ տարիք մարմնուս
Պէսպէս ցաւեր յայտնի ծերուս։
Ո՜խ, թէ լինէր ճար այս նաւուս,
Որ հասանէր յեզր ի ծովուս,
Որ ես տեսնում զվերջք գրուս...» (ՄԱՄ ձեռ. № 4429, թ. 247բ)։

[32] «Ցուցակ ձեռագրաց Վենետիկի», հ. Բ, էջ 846։

[33] Նույն տեղում։

[34] ՄԱՄ ձեռ. № 6268, թ. 333ա։

[35] «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. Դ, էջ 227։

[36] Ա. Տեր-Ավետիսյան, Նոր Ջուղայի ձեռագրաց ցուցակը, էջ 1242 (Հմմ. «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 26—27)։

Գրիչները բացառիկ սիրով են կապված եղել իրենց արվեստի հետ։ Այդ տեսակետից ուշագրավ է Գրիգոր Խառաբաստցու թողած փոքրիկ մի հիշատակությունը. «Վա՛յ ի գլխի ցաւէս, թէ որպէ՞ս նեղիմ, բայց փափաքումն բանիս կու յաղթէ»[38]։

Հարց է առաջանում, ի՞նչն է եղել գրիչներին այդպիսի մղում խթանողը, ի՞նչ հեռանկարով են ձեռնարկել նրանք այդպիսի մի ծանր ու չարքաշ աշխատանքը։ Այդ հարցի պատասխանը մասամբ տալիս է Բասիլ գրիչը 1288 թ. գրած չափածո մի հիշատակարանում.

«Վերծանութեան հետևէի՝
Նա գրչութեան սէրն ստիպի։
Քանբար չգոյր զի վարձէի՝
Մատամբս բանի՛ ես գրէի...»[39]։

Այսինքն՝ փող չունեի, որ ուրիշին գրել տայի, և ինքս էի գրում։ Սակայն գրելու միջոցին գրիչը տարակուսանքի մեջ է ընկնում, թե ի՞նչ օգուտ ունի ինքը. չէ՞ որ մահանալու է, և ձեռագիրը ուրիշին է մնալու։

«Էր զոր անձամբ ես գրէի,
Էր զոր այլոց գրել տայի։
Յայս միջոցի անձն իմ կոծի
Եւ վարանի յամենայնի՝
Թէ զի՞նչ աւգուտ ինձ յայս ջանի,
Թէ ընթեռնուլ ինձ ոչ լինի...» (թ. 128ա)։

Բայց շարունակության մեջ հեղինակը հուսադրում է ինքն իրեն հետևյալ խորհրդածությամբ.

«Զի թէ այս ոչ գոյր առաջի՝
Կարծեմ սակաւ գիր գոյր յերկրի,
Որպէս և ես վարանէի
Աւաղ թէ ընդվայր ջանս իմ լինի։
Եւ զամենայն, որ զայս խորհի,
Սակաւ տանի հոգք այս գործի,
Այդ ըստ յուսոյն որ կայ առաջի
Միշտ յաւժարեալ գիրս ոք ստացի...։
Մի յոյս միայն դերոյս թողի,
Թէ եկեղոց վայել լինի»[40]։

Ընդօրինակած ձեռագրերի նկատմամբ գրիչների ցուցաբերած նախանձախնդրությունը և ջանակուռ հոգածությունը պատկերացնելու առումով ուշագրավ է Անկյուրիայի երբեմնի հավաքածուի սեփականություն հանդիսացող № 35 ձեռագրի գրիչ Հովհաննեսի հետևյալ կտակ-քառյակը.

---

[37] Նույն տեղում։

[38] ՄԱՄ ձեռ. № 917, թ. 224։

[39] ՄԱՄ ձեռ. № 1418, թ. 127բ—128ա։

[40] Հիշատակարանի վերջում գրիչը դիմում է գալիք սերնդին հետևյալ վերջաբանով.

«Թողի բզտաւս ցանկալի՝
Զկնի եկեղոցդ վայելս բարի։
Ով ազատեսցի յիշել պարտի
Զտառապեալս այրի հոգիս (թ. 128ա)։

«Սևանկերեալ ի սպիտակէն, թո՛ղ մնացէ այդ դրօշուած,
Իսկ առ վաղիւ մատենագիրդ, քա՛ւ թէ բնաւ յոյս մնաց։
Ես չգիտեմ[41], ո՛վ ընթերցցի զգրենւոյս մնացուած,
Ես մեռանիմ, այս անշուշտ է, յաւէտ մնայ իմ գրուած»[42]։

Գրիչների մոտ լիովին արմատացած է եղել այն համոզումը, որ անցավոր աշխարհում իրենք մահկանացու են, մահանալու են, սակայն իրենց թափած վաստակը չի կորչելու, այն մնալու է իբրև «բարի հիշատակ» եկող սերընդին[43]։ Ձեռագրերի էջերի վրա հաճախ կարելի է այդ բնույթի գրառումներ կարդալ.

«Ձեռքս փտի հող դառնայ
Գրեալ գիրս յիշատակ մնայ»։

Կամ՝

«Ձեռս երթայ, դառնայ ի հող,
Գիրս մնայ յիշատակող»։

Գրիչ Աստվածատուրն այդ գաղափարն արտահայտել է ավելի ընդարձակորեն.

«Ո՛ գիր որ մնաս,
Ո՛ ձեռ որ հողանաս,
Ո՛ եղբայր որ կարդաս,
Ո՞հ թէ գործս չմոռանաս.
Աղաչեմ, աղաչեմ,
Հանդիպողացդ պաղատեմ,
Մեղաւք մածեալ և սևերես եմ,
Գծողիս աստուած ողորմի խնդրեմ»[44]։

Գրիչների մեծ մասի համար գրչության արվեստը մասնագիտություն է եղել։ Գրչատուփը և կաղամարը կողքից կախած գրիչները գնացել են տեղից տեղ, ուր աշխատանքն է կանչել իրենց։ Այդ աշխատանքով են ապահովել իրենց օրվա ապրուստը՝ մինչև խոր ծերություն։ Այդ կարգի գրիչներից նշանավոր է Հովհաննես Մանկասարենցը, որի գրչական արգասիքների մասին հիշատակարան է թողել իր աշակերտ Զաքարիան (1505 թ.)։ Հովհաննես Մանկասարենցը, գրում է նա. «ՀԲ (72) տարի՝ ամառն և ձմեռն, գիշերն ու ցերեկ ի գրել եկաց։ Որ գրեալ եղև ձեռամբ նորա Խ(40) Այսմաւուրք և Տարեգիրք. իսկ փոքր գիրք՝ Տետր և Աղօթամատոյց, Շարականոց և Սաղմոսարան, Մաշտոց և Գանձատետր՝ Ծ—Կ (50—60), և այլ աւելի, և Աւետարանս՝ ԼԲ(32)։ Եւ զայս Յոհան գլուխս (այսինքն՝ աւետարանի, նկատի ունենալով Հովհաննես ավետարանիչը—Ա. Ա.) [գրեաց] ի ծերութեան ժամանակիս, որ աչք չէր հայիլ և ձեռքն կու դողայր, բազում չարչարանօք հազիւ կարաց աւարտել, և այլ չկարաց գրիչ բռնել մինչ ի վախճան, որ հանգեաւ ի Քրիստոս ՁԶ (86) ամաց»[45]։ Փաստորեն Հովհաննես Մանկասարենցը 72 տարիների ընթացքում ընդօրինակել է այնքան ձեռագիր, որ նրանցից կարելի էր մի ամբողջ գրադարան կազմել։

---

[41] Այս քառյակի երրորդ տողի «Ես չգիտեմ» տպագրված է «Եա չգիտեմ» և չորրորդ տողի «Ես մեռանիմ» տպագրված է «Եա մեռանիմ», ուղղումը կատարել ենք մենք՝ ելնելով իմաստից։

[42] «Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ», էջ 198։

[43] «Շնորհաւոր լինայ ձեռ ընթերցողի,
Եւ բարով վայելէք ի ձերում միջի,
Դուք բազում ժամանակ ապրեք յերկրի,
Եւ սիրով ընթեռնուք ի մէջ աշխարհի» (ՄԱՄ ձեռ. № 2706, թ. 676ա)։

[44] «Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ», էջ 350։

Մանկասարենցի ուղիով է ընթացել Սարգիս Ընկուզագոմցի գրիչը։ Նրա թողած հիշատակարաններից ևս երևում է, որ ողջ կյանքում գրչությամբ է զբաղվել. «Վա՜յ, որ ձեռս կու դողայ, ու ազգի ազգի կիրս կու աւիրեմ, ի՞նչ անեմ, որ ծեր եմ ու աչքս վատատես է. Խ(40) տարի է, որ գիր կու գրեմ, թողութիւն արարէք»[46]։

Սարգիսն այդ նույն տարին գրել է մի այլ ձեռագիր և թողել սրտառուչ հիշատակարան՝ իր զառամած լինելու, աչքերը վատ տեսնելու, ձեռքերը դողալու և գրչամատը չորացած լինելու մասին. «Բայց գիտեմք—գրում է նա,— որ գիրդ բազում պակասութիւն կայ և անթիւ, թէպէտ որ շատ կայ՝ մեր կարն այդ չափդ էր, ձեռս կու դողայր և աչքս բնաւ չէր տեսնուլ, գրչի մատն չորացած էր, միջին մատամբս ծրեցաք... Ո՜հ տէրդ իմ, հիմայ ԽԲ (42) տարի է, որ մեր բանս այս է, ապա այսոր նման անդէպ չէր եղեալ, խիստ կու ամաչիմ ի ձեզնէ, թողութիւն արարէք»[47]։

Մատենադարանի մեկ այլ ձեռագրից երևում է, որ Սարգիս գրիչը դեռ երկու տարի ևս շարունակել է գրչությունը, ձեռագիր է ընդօրինակել, բայց՝ մեծ դժվարությամբ. «Գրեցաւ վերջք գրոյս յաւուր համբարձմանս, շատ և անհուն դառնությամբ»—գրում է նա և հայտնում, որ իր գրչամատը չորացել է, գրչությունը իր սրտով չի եղել. «ԽԲ (42) տարի է, որ կու աշխատիմ, բանս իմ [սր]տովս չէ, մերն այդչափ [էր]»[48]։

Վաստակաշատ գրիչներից է Գրիգոր Սասնեցին։ 1662 թ. թողած նրա հիշատակարանից երևում է, որ գրչությամբ զբաղվել է 15 տարեկան հասակից և շարունակել մինչև 45 տարեկան։ Երեսուն տարիների գրչության աշխատանքի ընթացքում նա գրել է 20 Շարականոց, երեք Հայսմավուրք և այլ գրքեր, որ «համար չիկա»[49]։

Վարդան գրիչը «Ճաշոց» գրքի ընդօրինակման առթիվ 1377 թ. գրած հիշատակարանում ընթերցողից խնդրում է անմեղադիր լինել ձեռագրի գրչության անհաջողության համար «...զի ծեր էի և աչքս չի տեսնուլ և միտքս և ամենայն ւպայարանս բդել է, բայց անանկնցայ և գրեցի»[50]։

Պատկերացնելու համար, թե ինչպիսի սիրով են կապված եղել գրիչներն իրենց գործին և ինչ խանդաղատանք են տածել գրչագրության հանդեպ, պետք է կարդալ Սիմեոն գրչի 1439 թ. թողած հիշատակագրությունը. «Ո՜վ եղբայր թողութիւն հայցեցէք... մին աչքս կու ցաւէր, նա խփեցի և մին աչովն գրեցի խիստ աշխատանաւքս»[51]։

---

[45] ՄԱՄ ձեռ. № 5256, թ. 291բ—292ա (Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Հ. Ա, էջ 567)։

[46] ՄԱՄ ձեռ. № 4309, թ. 100ա (Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Հ. Ա, էջ 184)։

[47] ՄԱՄ ձեռ. № 4107, թ. 503 (Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Հ. Ա, էջ 245)։

[48] ՄԱՄ ձեռ. № 8123, թ. 171ա (Տե՛ս «ԺԵ դարի հիշատակարաններ», Հ. Ա, էջ 297)։ Նույն ձեռագրում նրա աշակերտ Հունան գրչի հիշատակագրությունից երևում է, որ ուսուցչին չի հաջողվել ավարտել ձեռագրի ընդօրինակությունը. 22 պրակից հետո նա վայր է դրել գրիչը, և ձեռագրի մյուս մասերը ընդօրինակել և ավարտել է ինքը՝ Հունանը։

[49] «Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ», էջ 221։

[50] Արտ. Սիւրմէեան. Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի, էջ 139։

Գրիչները հաճախակի գանգատվում են պանդխտությունից։ Նրանք պանդխտության են դիմել երկու պատճառով. բռնագաղթի ժամանակ քշվել են օտարություն և կամ՝ աշխատանք ճարելու համար տեղափոխվել շատ թե քիչ բարեկեցիկ վիճակում գտնվող գաղթավայրեր։ Պանդուխտ գրիչների հիշատակարաններում հուզիչ խոսքեր են արձանագրված ղարիբության մասին։ Ներսես գրիչը 1318 թ. գրած հիշատակարանում պատմում է, թե ինչպես դուրս գալով իր հայրենի գավառից՝ տարաշխարհիկ շրջել է՝ բաժանված հարազատներից[52]։ Գրիգոր գրիչը 1335 թ. չափածո հիշատակարանում ցավով է նշում իր թափառնիկ վիճակը.

«Բայց թէ կամիս հարցող լինել,
Չեմ յայս տեղեաց ես բնական,
Այլ և աւտար ի սահմանացս
Եւ անբնակ մոլորական,
Չունիմ դադարք ի մի տեղի
Ոչ մի աւուր հանգստարան»[53]։

Գրիգոր Ախալցխացին իրեն դժբախտ է համարում, որ ղարիբ է և խորհուրդ է տալիս ամենքին ղարիբության չգնալ. «Աստուծոյ համար, ով որ ղարիպութիւն չի գնացել, թող այլ չերթայ...»[54]։

Մխիթար գրիչը 1570 թ. գրած հիշատակարանում հայտնում է, որ ձեռագիրը գրել և ծաղկել է տառապանքով, որովհետև գտնվում է ղարիբության մեջ՝ օտարների դռներին[55]։

Ղարիբության մեջ գտնվող գրիչները հաճախ են կրկնում այն դառն իրողությունը, որ «Ղարիպի հացը լեղի է, իսկ ջուրը՝ արյունն», ինչպես միջնադարյան ողբասացն է գրել.

«Ղարիպին հացն է լեղի, որ ճաշակէ,
Դառն ու լեղի խառն արտասուաւք ջուրն որ ըմպէ,
Թէ զաւրն տան նուշ ու շաքար, որ ճաշակէ,
Երբ հառաչէ՝ նա սրրտէն արիւն կաթէ...»[56]։

Ստեփանոս գրիչը 1632 թ. գրած հիշատակարանում ցավալի է համարում «ղարիպի» վիճակը. Ո՜հ, ո՜հ, ղարիպի հալն, թէ ինչ դառն և լեղի է հալն ղարիպի»։ Եվ անիծում է. «...ով որ զաղքատն կամ զղարիպին ատէ՝ անճառ լոյսոյն զրրկեսցի»[57]։ Ավելի սրտառուչ է Մկրտիչ Լեհացու արտահայտած վիշտը պանդխտության մասին. «Բայց անմիղադիր լերուք սղալանաց և խոշորութեան գրիս, քանզի զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, որ կիսէն ի վեր խոշորացուցի զգիրն. այլ ոչ իմ կամաւ, քանզի տնանկութիւն, օտարութիւն և պանդխտութիւն նեղեցոյց զիս, վասն այդ պատճառին համար շտապեցին զգիրն և խոշո-

---

[51] «Ցուցակ ձեռագրաց Վիեննայի», էջ 50։
[52] ՄԱՄ ձեռ. № 356, թ. 251բ (հմմ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 143)։
[53] ՄԱՄ ձեռ. № 2776, թ. 263ա (հմմ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 269)։
[54] «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 658։
[55] «Ցուցակ ձեռագրաց Վիեննայի», էջ 885։
[56] ՄԱՄ ձեռ. № 8298, թ. 242ա—247ա։
[57] «Ձեռագրաց ցուցակ Վասպուրականի», էջ 39։

րացուցի, զի միտք իմ ցնորեալ էր ի նեղութենէ և ի խնղճութենէ և ի գթոյ ծնողացըս, ընտանեաց և հայրենեաց։ Քանզի դուք լաւ գիտէք, սիրելի հայրք իմ և եղբայրք, որ պանդխտութիւն ծանր և դիժար ցաւ է, որպէս ասէ թե՝ լաւ է անկանիլ ի ձեռս բարբարոսաց, քան թէ յօտարութեան և ի պանդխտութեան կեալ։ Եւ իմաստուն Խիկար ասէ. Բարձի բեռ մի աղի յուսս և ոչ էր ծանր, քան զաղքատութիւն և զտնանկութիւն։ Եւ դարձեալ միւս եւս՝ Բարձի արճիճ բեռ մի յուսս և ոչ տեսեալ ծանր և դժար, քան զղարիպութիւն և զպանդխտութիւն»[58]։

Հայ գրիչները գրել, ստեղծագործել են նաև քաղաքական ծանր պայմաններում։ Հիշատակարաններում հաճախ կարելի է կարդալ նրանց գանգատները ժամանակի դառնությունների և դաժանությունների մասին։

Թերթելով հարյուրավոր ձեռագրեր, երբեմն զգում ենք, թե հիշատակարաններից գալիս է լացի ձայն, ուրախության՝ խիստ հազվադեպ։ Նրանք իրենց ժամանակը համարում են դառը, նեղ, անձուկ, անհանգիստ, տխուր, անբարի, չար, դժնդյա, վշտաշատ, դառնաշունչ, սառնացյալ, դժնաբեր, խավարամած և այլն։ Երբեմն տեղի են ունեցել այնպիսի ծանր իրադարձություններ, որ ցնցել են գրչի հոգեկան ներաշխարհը։ Ահա ձեզ Կիրակոս Աղբակեցի գրիչը, որն այնքան ուժեղ է ազդվել ժամանակի դառնություններից և չարություններից, որ ձեռքը դողացել է գրելիս.

«Գրեցաւ ձեռամբ մեղապարտիս,
Եւ ի ձմերան ժամանակիս.
Մի մեղադրէք ինձ՝ գրողիս,
Վասըն խոշոր և սխալ գրիս,
Զի դողութեամբ ախն էր սրտիս...
Զի ահն և դողըն պատէր զիս,
Ձեռս դողայր ի վեր[այ] թղթիս»[59]։

Գրիչը բնագրից 5 թերթ բաց է թողել այն պատճառաբանությամբ, թե «ահ ու վախ էր», թուղթ չէր ճարվում, և ամեն ժամ մահ կար։

Պատկերացնելու համար, թե ինչպիսի աննկարագրելի ծանր պայմաններում են գրել, ստեղծագործել մեր գրիչները, ստորև քաղվածքներ կվկայակոչենք իրենց իսկ հիշատակարաններից՝ ժամանակի քաղաքական ծանր պայմանների, սրածության մասին, որին ենթարկվել են նաև գրիչները։ Հովհաննես գրչի հիշատակարանից երևում է, որ նա այնպես է ահաբեկված եղել Դամուրղաշի՝ Երզնկայում 1338 թվականին կատարված անօրինակ վայրագություններից, որ ի վիճակի չի եղել շարունակել ձեռագրի ընդօրինակությունը[60]։ *Մատենադարանի № 862 ձեռագրում հիշատակագիրը սոսկումով է նկարագրել Ջահան Շահի Հայաստանում կատարած վայրագությունները։ 1441 թ. նա Հայաստանում սրախողխող է անում հինգ հազար հոգի։ Շատ մանուկների, պատմում է հիշատակագիրը, խլում էին մայրերի ձեռքից և քարին խփելով սպանում, շատ անմեղ երեխաների մերկացնում էին և սրով խոցոտում։ Երեխան ճչում էր, աղաղակում, իսկ վայրագները ծիծաղում էին և ասում. «Ահա ձայն, որ ի յիւրեանց բէճէչտէն կու գայ», իսկ երեխայի մայրն այդ տեսնե-*

---

[58] Արտ. Սիւրմէեան. *Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի*, էջ 122։

[59] *ՄԱՄ ձեռ. № 4311, թ. 141ա (հմմ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 395)։*

[60] *ՄԱՄ ձեռ. № 7643, թ. 314ա (հմմ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 305)։*

լով աղեխարշ մորմոքում էր և լալիս, ոչ մի օգնություն չկար։ Շատ կանայք, երեխաները գրկած, իրենց նետում էին քարաժայռից[61]։

Բախտիկ անունով կին պատվիրատուի թողած մի չափածո հիշատակարանից երևում է, որ երկրում ստեղծված է եղել այնպիսի կոշմարային դրություն, որ հայրերն իրենց որդիներին էին ուրացել.

«Յութհարիւրին կատարեցի,
Ի դառն և ի նեղ ժամանակի,
Որ հալածին բազում յերկրի.
Ոմանք մնացի(ն ի) մէջ թփի,
Ոմանք կերակուրք եղան գայլի,
Սովով անցան շատ մին ոգի,
Հարք ուրացան զիւրեանց որդի,
Ամ իմ կամք չէր, որ ես ծաղկի...»[62]։

Ըստ Մշո Առաքելոց վանքի «Ճառընտիր»-ի մեջ 1488 թվականին թողած մի հիշատակագրության, երբ Շահ Սեֆին վերցնում է Շամախին, այնտեղ գտնված քրիստոնյա և մահմեդական բնակչությանն ամբողջությամբ սրի է քաշում։ Նա գազանաբար սպանում է նաև մանկահասակ երեխաներին՝ աննկարագրելի տանջանքով. «...զմանր տղայքն ժողովեալ առ ինքն և դիզեալ ի վերայ միմեանց հինգ և վեց, և ինքն ի վերուստ նիզակաւ անցուցանէր մինչև ի ներքին տղայն. և վերացուցեալ նիզակաւն կանգնէր, և տղայքն աղիողորմն թալկանային ոտիւք և ձեռօք ի ծայրս նիզակացն, և նա ծափս հարկանէր որախութեամբ և ասէր. Այս է ճշմարիտ զաղայն (այսինքն պատիժը—Ա. Ա.)»[63]։ Այսպիսի ցնցող իրադարձություն տեսնող գրչի ուղեղը, բնական է, չէր կարող չցայթել և դուրս չհանել նրան բնականոն վիճակից։

Գրիգոր Խլաթեցին իր չափածո հիշատակարանում, մանրամասն նկարագրելով թշնամու՝ Հայաստանում կատարած վայրագությունները, ամփոփում է հետևյալ տողերով.

«Տապալեցին եւ յատակեցին,
Անխնայաբար խոցոտեցին,
Ձարըս սըրոյ ճարակ տուին,
Եւ ըզկանայսըն գերեցին.
Զոմանս զգլուխսըն քերթէին,
Հանդերձ հերաւքըն խըլէին,
Զայլոց ըզշունչսըն արգիլուին,
Եւ հեղձամահս խեղդէին,
Որպէս ոչխարըս մորթէին,
Փոկս ի թիկանցըն հանէին.
Զկէսըս հըրով խորովէին
Եւ ճենճերովքըն ցընծային»[64]։

Տեսնելու համար, թե ինչպիսի դառնությամբ են ընդունել մեր վատաբախտ գրիչները ժամանակի քաղաքական խժդժությունները և ինչպիսի ոգայուն գրչով արձանագրել այն իրենց հիշատակարաններում, պետք է կարդալ Անդրեաս Եվդոկացի գրչի 1598 թ. գրած հիշատակարանի հետևյալ տողերը. «Եթէ սղալ կամ խոշորագիր, կամ անախորժ մտաց ձերոց գտցի ի սմա, անմեղադիր լերուք... զի ի մէջ դառնութեան գրեցի զսայ, այնպիսի դառն և դժուար տանջանօք... երբեմն տրտմէի, և երբեմն հառաչէի, էր որ երբեմն լայի, և էր որ ողբայի ըստ անձուժ բնութեամբն իմոյ։ Արդ, զի՞նչ երկարեցից ազգի ազգի տառապանացս, որ ունէի... Բազում վշտօք հասայ ի վերջ գրիս»[65]։

---

[61] ՄԱՄ ձեռ. № 862, թ. 301բ (հմմ. «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 514)։

[62] «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 388։

[63] «Ցուցակ ձեռագրաց Վենետիկի», հ. Բ, էջ 1160։

[64] ՄԱՄ ձեռ. № 5798, թ. 312ա (հմմ. «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 274)։

Իսրայել գրիչը, թշնամու՝ Հայաստանում կատարած հարստահարությունները պատմելուց հետո, եզրակացնում է. «...գերեցին, թալանեցին, որ հայր զորդի կանչէր, իսկ մայր՝ զդուստրն, վայ և եղուկ ազգիս Հայոց։ Ի թիվս Հայոց ՌԻԹ (1580), երանի մեռելին, վայ կենդանոյն»[66]։

Հայկական ձեռագրական ժողովածուներում բավական թիվ են կազմում այն գրչագրերը, որոնք գրվել են մի քանի տեղ. սկսել է ձեռագիրը գրել, հանկարծ հարձակվել է թշնամին, փախել է ժողովուրդը, նրա հետ նաև գրիչը և շարունակել ընդօրինակությունը նոր վայրում։

Հովհաննես Որոտնեցու աշակերտներից Հակոբ գրիչը 1386 թվականին գրած հիշատակարանում պատմում է, թե ինչպես ինքը ձեռագիրը գրել սկսել է Որոտանում, ուր նա գտնվելիս է եղել Որոտնեցու 60 աշակերտների հետ միասին, թշնամին հարձակվել է Որոտանի վրա, և իրենք հարկադրված են եղել փախչել ու երեք տարի շարունակ թափառել Հայաստանի զանազան գավառներում, և նա իր ձեռագիրը գրել, ավարտել է թափառումների ճանապարհին. «Ու ես ծանրաբեռն մարմնով,—գրում է նա,—զթուղթ և զօրինակ, զգրիչն և զթանաք ի յուս իմ բարձեալ, ի հետ գնայի, կարդայի, և որչափ ժամանէի՝ զսուրբ մատեանս գրէի, բազում նեղութեամբ և չարչարանօք, զի ուր սկսաւ, անդ ոչ էառ զկատարումն»[67]։

Ներսես Ամասիացի գրիչը դժգոհ է 1480 թ. իր ընդօրինակած ձեռագրից և ընթերցողների ներողամտությունն է խնդրում, որովհետև «...ի մէջ դառնութեան գրեցի զսա, զի բռնութեամբ և ակամայ ի յԱմասիու զմեզ բերին ի Կոստանդինուպալիս, և ես լալով և բազում հառաչանաւք գրեցի զսա...»[68]։

Գրչի թափառիկ վիճակը պատկերացնելու տեսակետից ուշագրավ է Վայոց Ձորի մի գրչի թողած հիշատակագրությունը. գրիչն իր ձեռագիրը սկսել է գրել Վայոց Ձորի Փանձաթաղ գյուղում, թշնամին հետապնդել է նրան։ Նա փախել է Ձորավանք և, ինչպես ինքն է ասում, «փախչելով գծագրեցաք»[69]։ Այնտեղից եկել է Սակքար կոչվող վայրը, այստեղ էլ, սակայն, հետապնդել է թշնամին, և ինքը ձեռագրի օրինակը վերցրած փախել է և մեծ դժվարությամբ տարբեր վայրերում ավարտել ընդօրինակումը։

Թումա Մինասենց գրիչը 1425 թ. Աղթամարում գրած ձեռագրի հիշատակարանում հայտնում է, որ բանաւոր Սքանդարը հարձակվել է Ոստանի և նրա

---

[65] ՄԱՄ ձեռ. № 1869, թ. 393ա։

[66] ՄԱՄ ձեռ. № 4173, թ. 95ա։

[67] ՄԱՄ ձեռ. № 5707, թ. 485բ (հմմ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 560)։

[68] «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. III, էջ 251։

[69] Գ. Հովսեփյան, [illegible]

հարևան շրջանների վրա և սկսել կոտորածը։ «Եւ բնակիչք աշխարհիս մերկ և բոկ և սովալլուկ տարաշարհիկ եղեալ» փախուստի են դիմել[70]։

Սարգիս Երզնկացի գրիչը 1446 թ. գրած հիշատակարանում խնդրում է անմեղադիր լինել գրի խոշորության և թույլ տված սխալների համար, որովհետև «...յահ և ի փախ էար... և մարդիկ երկրիս ամենեքեան յօտար երկիր վտարեցան, և երկիրս մնաց անբնակ»[71]։

Սոսկալի վիճակում է գտնվել հայ ժողովուրդը մանավորապես Լանկ-Թեմուրի վայրագությունների շրջանում։ Ժամանակակից գրիչներն արյուն են լաց լինում՝ ավերածություն, կոտորած և գերեվարություն։ Կարապետ գրիչը 1389 թ. Աղթամարում գրած «Ճառընտիր»-ի հիշատակարանում իր ապրած ժամանակն անվանում է «սասկակսկիծ», իսկ Լանկ-Թեմուրին համեմատում է Գողիաթի և «վայրենաբարո Նաբուպալասարի» հետ։ Նա պատմում է, որ Լանկ-Թեմուրի զորքերը մորեխի նման ցրվում են Հայաստանում և սկսում իրենց վայրագությունները. «...Քանդէին, քարայատակէին, փորէին, փոս հատանէին, կոփէին, կոանէին, զամաց հազարաց շինուած՝ միաւրեա անհետ կորուսանէին ...Անդ էր տեսանել վլաց ծնաւղաց, զաղետ զաւակացն, զգալարումն դիմացն, զդեղնանալ երեսացն, զնուաղումն ձայնից... Աւա՜ղ ժամուն, ոմն արիւնաթաթախ դիագլոր թաւալէր ի մէջ արեան ծովուն, ոմն կիսակտոր գլուխն ի յանձնէն ջուր խնդրէր և ի ծարաւոյ անդէն մեռանէր, ոմն անկեալ գլուխ ի վայր և արեան աղբիւրն ի բերանոյն ելանէր։ Ո՜հ ձայնին, ո՜հ աւաղին, ո՜հ կսկծոյն արտասուացին... Յագեցան գազանք, ձանձրացան թռչունք, տարակուսեցան գայլք՝ թէ զում ուտէին միս...»[72]։

Թումա Թավրիզեցի գրիչը 1403 թ. հիշատակարանում հայտնում է, որ Լանկ-Թեմուրի սրածությունից թեև ոմանք փախչում թաքնվում էին այրերում, ծերպերում, սակայն նրանց էլ ազատում չկար, որովհետև սովից, տոթից և ծարավից էին մահանում, իսկ ոմանք թշնամու ահից և երկյուղից «զինքեանս քարավէժ առնէին»[73]։

Գրիգոր Խլաթեցին իր չափածո հիշատակարանում պատմում է, որ Լանկ-Թեմուրի զորքերը 26 օր շրջապատել են Վանը և վերցրել։ Բնակչությանը սկսել են քարաժայռից ցած նետել։ Քարաժայռի տակ ստեղծվել է մսադեզ այնպիսի բարձրությամբ, որ վերջին ընկնողներն, այլևս չէին մահանում[74]։

Իրենց շրջապատում այս ամենը տեսնող գրիչները, հասկանալի է, չէին կարող հոգեկան խորը ցնցումներ չապրել, չէին կարող հանգիստ շարունակել իրենց սիրած զբաղմունքը։ Մատթեոս գրիչը 1469 թ. գրած հիշատակարանում պատմում է, որ ինքը, Հասան Ալիի գազանություններից սարսափահար, թերավարտ ձեռագիրը վերցնում է հետը և փախչում։ «Եւ մեր առեալ զգիրքս,— գրում է նա,—փախեաք ի տեղէ տեղ, և յամենայն ժամ փախուստ և սասանումն գայր և հասանէր ի վերայ...»[75]։

Կարապետ գրիչը 1634 թ. ընդօրինակած «Ոսկեփորիկ»-ի հիշատակարանում հայտնում է, որ Ռուստամ խանը երբ հարձակվել է Վանի վրա, ինքը՝

---

[70] ՄԱՄ ձեռ. № 5542, թ. 239ա (Հմմ. «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 326)։

[71] Ղ. Փիրղալեմեան, Նօտարք Հայոց, էջ 151։

[72] «Արարատ», 1911, էջ 760—765։

[73] ՄԱՄ ձեռ. № 5232, թ. 248բ (Հմմ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 31)։

[74] ՄԱՄ ձեռ. № 5798 (Հմմ. «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 287)։

[75] ՄԱՄ ձեռ. № 4515, էջ 198 (Հմմ. «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Բ, էջ 283)։

գրիչը, թաքնված է եղել, բայց հետո «...եկեալ գտին զիս և զականջս կտրեցին, և խիստ վահեցայ և տկարութիւն շատ քաշեցի»[76]։

Գրիչներից մեկը հայտնում է, որ եթե ինքը հրեղեն լեզու անգամ ունենա, չի կարող նկարագրել այն չարչարանքները, այն դառը բաժակը, որ վիճակվել է ըմպել Արարատյան նահանգի բնակչությանը[77]։ Իսկ մի ուրիշը՝ Սոսթենես գրիչը, անդրադառնալով իր ապրած «դառը և անբարի» ժամանակին, որը ծանր է համարում, նախընտրում է լռել, քան թե գրել. «...ոչ կարեմ գրով արկանել, բայց միայն լռել...»[78]։

Գրիչներն իրենց հիշատակարաններում վրդովմունքով են խոսում նաև ժամանակի ծանր հարկապահանջության մասին։ Սարկավագ գրիչը պատմում է, որ 1310 թ., Ղարապանդ խանի տիրապետության շրջանում, հայ ժողովրդի համար այնքան ծանր վիճակ էր ստեղծվել, որ մարդիկ հարկ վճարելու համար ստիպված են եղել իրենց երեխաները վաճառել։ «Բայց զաղէտ և զողբ տարակուսանց ո՞ պատմեսցէ,—գրում է նա,—զի ի խիստ և յանհնարին հարկապահանջութենէ ծախեա[լ] լինին ուստերք և դստերք աշխարհիս մեր, և բազում գեղք և վանորայք՝ աւէր և անհանգիստ...»[79]։

Մի ձեռագրի հիշատակագիր հայտնում է, որ սուլթանը երեք տարվա հարկը մեկ տարում վերցրեց և ավերեց երկիրը։ Գրիչը փրկության ճար չգտնելով, անիծում է սուլթանին. «Աստուած իւր ումրն (կյանքը—Ա. Ա.) կարճ անէ»[80]։

1307 թ. հիշատակագիր Դանիել գրիչը գանգատվում է Հուլաու խանից, որը քրիստոնյաների վրա ծանր հարկ է դրել և կարգադրել է որպես նախատինքի նշան մարդկանց ուսերին սև կտավ կարել, որպեսզի տեսնողներն ճանաչեն, որ քրիստոնյա է և անարգեն[81]։

Ստեփանոս Զմշկածագցին, 1476 թ. ընդօրինակած «Տաղարանում», խոսելով Ուզուն Հասանի հարկապահանջության մասին, ցավով նշում է.

«Հարկապահանջն յամէն տեղի
Քաշէ ծեծէ զազգըս Արամի,
Խընդրէ արծաթ 'ւ ընտիր ոսկի,
Յայնմ որ չունի փող պըղնձի։
Կապուտ նշան եդ քրիստոնեաց,
Զի բաժանին յանօրինաց,
Զմեռեալն ի ցած տանել ասաց,
Ջուանով չափել զվիզս մանկանց...»[82]։

Վարդան Արևելցու «Պատմութեան» 1307 թ. ընդօրինակության հիշատակագրի տեղեկությունից երևում է, որ Հուլաուն, որին նա անվանում է «սատանայի արբանեակ», կարգադրել է «Դնել նշան խայտառակութեան քրիստոնէից և հարկ առնուլ ըստ մարդաթուի Խ(40) արծաթո մինչ և Ժ (10)՝ ըստ կարի»[83]։

---

[76] Արտ. Սիւրմէեան, Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի, էջ 93։
[77] Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Վենետիկի», Հ. I, էջ 443։
[78] Արտ. Սիւրմէեան, Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի, էջ 115։
[79] ՄԱՄ ձեռ. № 350, թ. 811բ (ՀՄԺ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 66)։
[80] ՄԱՄ ձեռ. № 3072, թ. 80բ։
[81] ՄԱՄ ձեռ. № 4881, թ. 272բ—273ա (ՀՄԺ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 47)։
[82] Բ. Կյուլեսերյան, Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո, էջ 69։

Հովհաննես Խիզանցին 1661 թ. «Շարակնոց»-ի հիշատակարանում անդրադառնալով Մուհամմեդ Խոնդքարի տիրապետության ժամանակ ժողովրդից գանձվող հարկերի մասին, հայտնում է, որ հարկերը շատ են ծանրացել. եթե առաջ գանձում էին հարյուր կամ երկու հարյուր դրամ, ապա այժմ այլևս հարյուրը չեն հիշում և ոչ էլ՝ հազարը, այլ 10 քիսա, 5 քիսա, որի հետևանքով ժողովուրդը գտնվում է վշտի և տառապանաց մեջ[84]։

Ժողովրդի, այդ թվում նաև գրիչների համար ստեղծված քաղաքական ծանր պայմանների պատկերացման տեսանկյունից տեղին է Կյուրեղ գրչի (17-րդ դ.) իր պատվիրատուին արած դիտողությունն այն կապակցությամբ, որ վերջինս պահանջել է գրիչից շքեղ ձեռագիր գրել։ «Ո՞վ պատուական սրբազան ուսումնասէր… ի ժամանակի ձմերան ծաղիկ վա՞րդ փնտրես…»[85]։

Միջին դարերում ժողովրդին դժբախտություն պատճառող մեծագույն արհավիրքներից մեկը համաճարակն է եղել, որին հայ մատենագիրները հիշում են «մահտարաժամ» անունով։ Համաճարակը երբեմն ամայացրել է մարդաշատ գյուղեր, փակել շատ տների դռներ՝ անմխիթար վշտի մեջ թողնելով կենդանի հարազատներին։ Թե ինչ ահռելի վնաս է հասցրել այն ժողովրդին, կարելի է պատկերացնել 1549 թ. գրած հիշատակարանի հետևյալ տողերից. «Ի թուականիս Հայոց ՋՂԸ (1549) ամի,—գրում է գրիչը,—որում եղև մահտարաժամ աշխարհիս Հայոց, և շատ տուն աւերեցաւ, և շատ ապրանք անտէր մնաց՝ գեհով (այսինքն՝ հոտով—Ա. Ա.) ոչխար մնաց, շատ ցութան խափանաւ, քանի՜ հայր առանց որդի մնացին, քանի՜ մայր առանց դստեր և եղբոր մնաց… հենց որ կալոյ ժամանակն [եղև], տղայ չկայր, որ գկամն քշէր»[86]։

Գրիգոր գրիչը խոսելով 1431 թ. Ամիդում տեղի ունեցող մահտարաժամի մասին, հայտնում է, որ անկարելի է նկարագրել այն ողբը, կսկիծը և հառաչանքը, որ լսվում էր ժողովրդից՝ իրենց կորցրած հարազատների համար. «…աչք ամենեցուն [եղեն] յաղբերս արտասուաց, յամենայն ուրեք ողբ հառաչանաց և յամենայն տուն կոծս տարակուսանաց, լալումն որբոց և աղաղակ այրեաց, կըսկիծ ծերոց և մաղկատումն մանկամեռ մարց, յամենայն լեզուէ վայ և յամենայն բերանոյ ապաշաւանք»[87]։ Ըստ նրա տեղեկության, միայն Ամիթում մահտարաժամից մահացել է 6000 հոգի, չհաշված քաղաքի մոտի գյուղերը և ավանները, որոնցից շատերը անմարդաբնակ են դարձած եղել այն աստիճանի, որ, ըստ գրչի տեղեկության, անասուններին տիրություն անող չկար և նրանք «յամայի շրջէին»։

Մեզ է հասել Տիվրիկցի Ներսես անունով մի գրչի մահտարաժամի մասին գրած հիշատակարանը, որից երևում է, որ նա ձեռագիրն ընդօրինակել է դիակների մեջ, մահվան սարսափի տակ. «Արդ, աղաչեմ չմեղադրել սխալանացս… քանզի տեսանէաք զբազում դիակունս մարդկան մեռեալս առաջի մեր և ցնդէր միտս իմ իբրև զվայրագնաց գազան և հազիւ առ իս ժողոելի յերկիւղէ մահուն, եթէ ոչ ժամանէի յաւարտումն տառիս, քանզի առ մեզ այլ եհաս ի ցաւոց տարաժամ մահուան, այլ ներողութեամբ աստուծոյ զերծաք»[88]։ Գրիչը հանգամանորեն նկարագրել է մահտարաժամի առանձնահատկությունները։ Առաջինը, ասում է, այն էր, որ երկար է տևել՝ տարի և երեք ամիս, երկրորդը՝ մարմնի վրա խոց է դուրս եկել և լավացել, անցել են օրեր, կրկին խոց է դուրս եկել, և մարդը մահացել է, երրորդը՝ մահտարաժամը ում տունը որ մտել է, բոլոր տնեցիներին բնաջինջ է արել և չորրորդը՝ ցավը իրեն իմացնել չի տվել և մարդը մահացել է։

---

[83] ՄԱՄ ձեռ. № 3074, թ. 80բ (հմմ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 46)։

[84] «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. Գ, էջ 275։

[85] ՄԱՄ ձեռ. № 4355, թ. 488բ։

[86] ՄԱՄ ձեռ. № 9222, թ. 1ա։

[87] ՄԱՄ ձեռ. № 6430, թ. 301ա (հմմ. «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 404)։

Գրիչներն իրենց մոտիկ հարազատներին կորցրած օրերին անգամ, արցունքն աչքերին, շարունակել են ձեռագրեր ընդօրինակել և հուզիչ հիշատակագրություններ թողնել։ Ահա թե նրանցից մեկը ինչպես է արտահայտում իր վիշտը. «...միշտ շմորեալ էր այս (շփոթված էր—Ա. Ա.), արտաքուստ ի դեղրունքն (այսինքն՝ ներկերի հետ—Ա. Ա.) կու խառնէր ի դեղոց կսկծու, որ աստուած փոխեցաւ երեք տղայ, որ նման էին ոսկւոյ և մարգարտի։ Աչքս չեմ իստակել յարտասուաց. աւա՜ղ եղկելւոյս, որ զօրն ի բուն ձեռն ի ծնոտիս հայեմ յՕփրատէս, ա՜հ հանեմ հոգւոյս»[89]։

Մահտարաժամից պակաս վնաս չի պատճառել երկրաշարժը, որի առանձին դեպքերի նկարագրությանը հանդիպում ենք հիշատակարաններում։ Ղուլօղլի Երզնկացի գրիչը երկրաշարժի փլատակների տակ թաղելով մահացած մորն ու տղային, իր խեղճությունը ողբում է հետևյալ քառյակում.

«Ես Ղուլօղլի Երզնկացի
Քեզ ի եղբր խել մի զիան,
Դու ես եղբր խեղճ ու գերի,
Հողն ես դրել մայր ու տղան»[90]։

Բնական մի շարք արհավիրքների մասին հետաքրքիր չափածո հիշատակարան ունի 1713 թ. Երևանում գրված ձեռագիրը.

«Ի թիւ հազար հարիւր վաթսուն,
Երկու աւել ի հետ ի նոյն,
Եկաւ մարախ բազում անհուն
Ի քաղաքն Երևանուն։

Ծածկեալ եղև երես օդոյն,
Եհեղ երկնից իբրև զձիւն,
Թռաւ իջաւ մէջ արտերուն,
Սկսաւ ուտել իբրև զշուն։

Մահն եկաւ ի նոյն տարին,
Հաւասարեաց ամէն տեղոյն,
Խիստ կոտորեաց մար ու մեծոյն
Փառս տածուք ի աստուծոյն։

Սովն եկաւ ի նոյն տարին,
Խանն շահի նղաւ դարին,

---

[88] Գ. Սրվանձտյան. Թորոս աղբար, հ. II, էջ 307։

[89] ՄԱՄ ձեռ. № 6433, թ. 217ա—218բ։

[90] Գ. Սրվանձտյան, Թորոս աղբար, հ. I, էջ 374։

Սովն փարդեց (ծածկեց) դաշտ ոյ սարին,
Աստուած փրկէ եկող տարին։

Սովն եկաւ ի նոցն տարին,
Հաց ոյ դարման յախիր արին,
Խոտ չմնաց բնաւ ի սարին,
Էլ չտեսնենք էսպէս տարին»[91]։

Մատենադարանի № 34 ձեռագրում մանրամասն նկարագրված է 1679 թ. հունիսին տեղի ունեցած երկրաշարժը։ Ըստ տեղեկությունների, երկրաշարժը Երևանում սկսվել է հունիսի 4-ին։ Շարժի սաստկությունից քարուքանդ են եղել քաղաքի շենքերը, բերդը և քաղաքի պարիսպները։ Նկատի ունենալով, որ այդ հիշատակարանը բացառիկ արժեք ունի մեր մայրաքաղաքի պատմության համար, անհրաժեշտ ենք համարում հրապարակել այստեղ ամբողջությամբ։

«Իսկ ի թուականի մերում ՌՃԻԸ (1679) յամսեանն յունիսի ի չորրորդումն աւուր, յաւուր չորեքշաբթի, յետ համբարձման տեառն, և որպէս թէ ի չորրորդումն ժամուն, յանկարծակի դղրդեալ շարժեցաւ յերկիրն Արարատեան և անքան սաստկագոյն մինչ զի թուէր որպէս թէ նաւ ի վերայ ծովու՝ ի սաստիկ հողմոյ ալեկոծելոյ։ Եւ ի սաստիկ շարժին բալավ քաղաքն Երևան հանդերձ բերդով և պարսպաւ։ Կործանեցան տունք և ապարանք գեղեցկաշէնք։ Քակտեցան եկեղեցիք և վանորայք։ Ցամաքեցան աղբիւրք և ելին ջուր սեաւ. պատառեցան վէմք և լերինք, և ի պատառմանէ վիմացն՝ բոց ծիրանագոյն ելանէր յօդըս։ Բարձրացաւ մառախուղն և ծածկեաց զերկիր ի դաւառէն Գառնւոյ մինչև ցլեառն Արագած հանդերձ լերամբք և դաշտօք, մինչ զի արգել ճառագայթս արեգական. և թուէր որպէս թէ կատարածն լինիլ աշխարհի։ Իսկ մնացելոցն ոչ գոյր թիւ։ Անդ էր տեսանել զտապ մեծի տագնապին և զանբաւ աղէտս տարակուսանաց մնացելոցն։ Անդ էր տեսանել զկոծ և զկսկիծ ծնողաց և զաւակաց։ Անդ էր տեսանել վա՜յ և զեղո՜ւկ սիրելեաց և բարեկամաց։ Գոչէին և հառաչէին, և ոչ ոք էր որ օգնէր նոցա։ Դառնային և ձեռամբ պեղէին այսր և անդր, և ոչ զօրէին սիրտք նոցա։ Եւ ի կսկծոյն դարձեալ զօրանային, ձեռամբ պեղէին և զհողսն և զքարինսն, հանէին զմարսն ի փիրկս ունելով զորդիս իւրեանց՝ եդեալ ի բերանս նոցա զստինս իւրեանց։ Հանէին զհարսն՝ ի ձեռն ունելով զորդիս իւրեանց, զեղբայր՝ պատուտեալ զեղբարբ և զքոյր՝ զքեռբ։ Եւ բազում կանայք ի յեփելն զհացի՝ անկեալ էին ի վերայ թոնրի և խորովեալ։ Եւ արք հանէին, կարգաւ առ իրեարս դնէին և ղշուրջ նոքօք պարէին գլուխ ի բաց, և ողբային կսկծալի։ Եւ տարեալ մի գերեզման՝ չորք և հինգ ի միասին թաղէին հանդերձիւք իւրեանց առանց օրինաց և քահանայի։ Գային յալոց զաւառաց յօգնութիւն նոցա և զաւուրս բազումս պեղէին, և ապա հազիւ գտանէին և հատեալ ի փոս արկանէին։

Եվ դարձեալ շարժէր շարժն ի տուէ և ի գիշերի մինչև յաւուրս ինն։ Եւ յիններորդումն աւուր, յաւուր հինգշաբաթոջ և էր որպէս թէ ժամս հինգերորդ՝ ըստ նմանութեան առաջին շարժին։ Եւ դարձեալ շարժեցաւ և զոր ինչ խախտեալ մնացեալ էր յառաջին շարժէն, և սա իսպառ կորոյս և տապալեցաւ։ Եւ դարձեալ շարժէր շարժն ի տուէ և ի գիշերի։

---

[91] ՄԱՄ ձեռ. № 2444, թ. 1ա։

Եւ յաւուրս ութերորդի ամսոյն սեպտեմբերի պատահեցաք դամբարանի սրբոյ վարդապետին Յովհաննիսի, մականուամբ Կոզեռն կոչեցելոյ, ի դիտին ի վերայ Հրազդան գետոյ, որ է հանգստարան ննջեցելոցն Երևանայ քաղաքին։ Եւ էր ժամ որպէս թէ երրորդ, յանկարծակի դղրդեաց շարժեցաւ երկիր, և ի սաստկութենէն շարժին զվիմատաշ քար գերեզմանացն հարեալ յիրեարս ճռնչային։ Եւ հիացեալ ասեմք. փա՜ռք քեզ աստուած, փա՜ռք քեզ, եհաս ժամ, զի յարիցեն մեռեալք ի գերեզմանաց իւրեանց։ Եւ յերկարեալ շարժն մինչև ի գլուխ ամին, և այլ՝ աւելի։ Իսկ այս ամենայն եկին ի վերայ մեր վասն ծովացեալ մեղաց մերոց»[92]։

Պատվիրատուն։—Ընչազուրկ և իր արհեստի եկամտով ապրող մասնագետ գրիչներն իրենց գոյությունը, բնական է, չէին կարող պահպանել, եթե չունենային ձեռագրերը վաճառելու և իրացնելու հնարավորություն։ Այստեղ նրանց օգնության են եկել պատվիրատուները՝ այն անձնավորությունները, որոնք պատվիրել են գրել կամ ընդօրինակել այս կամ այն ձեռագիրը։

Պատվիրատուներ մեծ մասամբ հանդիսացել են ունևոր մարդիկ՝ թագավորներ, իշխաններ, բարձրաստիճան եկեղեցականներ (կաթողիկոսներ, եպիսկոպոսներ), ականավոր խոջաներ և այլն։ Սակայն մեկ-մեկ պատահում են և արհեստավորներ, գյուղացիներ, որոնք դրամ են հավաքում և պատվիրում գրել իրենց ցանկացած ձեռագիրը, ապա այն նվիրում այս կամ այն եկեղեցուն, վանքին[93]։

Ձեռագիր գրելու պատվերը, սովորաբար, ձևակերպվում էր հետևյալ կերպ. պատվիրատուն հանձնարարում էր գրչին գրել իր ցանկացած ձեռագիրը և նկարազարդել այն՝ խոստանալով վճարել համապատասխան գումարը՝ ըստ պայմանավորվածության։ Ձեռագրի ընդօրինակությունը վերջացնելուց հետո գրիչը, պատվիրատուի ցանկության համաձայն, կազմում է ձեռագրի հիշատակարանը, հիշելով այնտեղ ոչ միայն իրեն՝ պատվիրատուին, այլև նրա կնոջը, որդիներին և մոտիկ ու հեռու այլ բարեկամներին։ Հաճախ պատվիրատուի «արյունակից ազգականներ»-ի անուններն ամբողջ էջեր են զբաղեցնում։ Ձեռագրի հետագա տերերը ևս անհրաժեշտ են համարում գրել իրենց անունները որպես ստացողների։

Պատահում է ձեռագրի վաճառքի այլ ձև ևս. գրիչն ընդօրինակում է ձեռագիրը վաճառելու համար, առանց նախապես իմանալու, թե ո՞վ է լինելու գնորդը։ Այդ դեպքում գրիչը, ձեռագրի ընդօրինակությունը վերջացնելուց հետո, գրում է հիշատակարանի ընդհանուր, կանոնականացված մասը, իսկ պատվիրատուի անվան տեղը բաց թողնում։ Ձեռագիրը հանում է շուկա և այստեղ, վաճառելու դեպքում, անմիջապես ավելացնում պատվիրատուի անունը և հանձնում նրան։ Մեզ են հասել մի շարք ձեռագրեր՝ պատվիրատուի անվան տեղը հիշատակարաններում բաց թողնված ձևով՝ վաճառքից հետո լրացնելու համար, սակայն այնպես է պատահել, որ վաճառքը չի կայացել, և հիշատակարաններն այդպես էլ մնացել են թերավարտ։

Նախապես պատվիրած ձեռագրերը, մանավանդ, երբ պատվիրատունեիր մեծահարուստ մարդիկ են լինում, գրչից պահանջում են ավելի գեղեցիկ գրել և լավ նկարազարդել ձեռագրերը։ Այն դեպքում, երբ գրիչը մանրանկարելու և ոսկելու շնորհք չի ունենում, այդ աշխատանքը հանձնարարվում է կատարելու մասնագետ մանրանկարչին։

---

[92] ՄԱՄ ձեռ. № 34, թ. 354ա—355բ։

[93] Քիչ չեն, իհարկե, և այնպիսի ձեռագրեր, որոնք ըստ նախասիրության գրված են առանձին գրասեր անձնավորությունների կողմից։

Միջնադարյան Հայաստանում գոյություն է ունեցել լայն տարածված մի սովորություն, որն զգալի չափով խթանել է գրչության զարգացմանը. այն մարդը, որ երեխա չի ունեցել, իր բարոյական պարտքն է համարել հիշատակ թողնել մի ձեռագիր, որը համարվել է տվյալ ընտանիքի «որդեգիր»-ը, նրա ժառանգորդը։ Հետենս անունով մի պատվիրատու իր թողած հիշատակարանում հայտնում է, որ ինքը միայնակ էր բաց դաշտի մեջ բուսած թփի նման, զավակ չուներ, ուստի գնել է տվյալ ձեռագիրը 1100 դրամով և իբրև հիշատակ ու «ժառանգորդ դարձրել»[94]։

Անպետք որդի Մուրատը Ոստան քաղաքի եկեղեցուն է նվիրում մի ձեռագիր Ավետարան և իր թողած հիշատակարանում հայտնում. «Եւ արդ ո՛վ եղբայրք, զաւակ ոչ ունիմ յաշխարհիս», ուստի Ավետարանը համարում է իր թողած հիշատակը։ Ըստ որում, նա պահանջում է, որ իր հիշատակը ոչ ոք չհամարձակվի վաճառել, գողանալ կամ այլ միջոցներով հեռացնել այն Ոստանի եկեղեցուց[95]։

Գոյություն է ունեցել մի այլ սովորություն ևս. ձեռագիր են գրել տվել մահացած մարդու հիշատակը հավերժացնելու նպատակով։

Ձեռագրի պատվիրատուն ընդհանրապես լինում է մեկը, բայց կան ձեռագրեր, որոնց պատվիրատու են մի խումբ մարդիկ։ Այդպիսիններից է Սուրխաթ քաղաքում գրված նշանավոր «Ճառընտիր»-ը, որը գրված է տասնյակ արհեստավորների և մի առևտրականի պատվերով։ Ձեռագրի հիշատակարանում խնդրվում է հիշել կոշկակար Պարոնշահին, բազազ Կարապետին, ճոն Կիրակոսին, ջուլհակ Թորոսին, բազազ Սարգսին, ոսկերիչ Մելիքսեդեկին, ներկարար Գևորգին, քաթանագործ Մարգարին և շատ ուրիշների[96]։

Ձեռագրի գրիչները և պատվիրատուներն իրենց հիշատակարաններում և հիշատակագրություններում թողել են կտակ-հանձնարարականներ՝ ձեռագրերը խնամքով պահելու և աչալուրջ օգտագործելու մասին։ Բազմաթիվ հիշատակարաններ են հասել մեզ, որոնց մեջ նրանք խանդաղատագին խնդրում են, որ հոգատար ու սրտացավ լինեն ձեռագրերի նկատմամբ։

Գրիչների առաջին խնդրանքն այն է, որ ձեռագրերն առուծախի առարկա չդառնան՝ ձեռագրերի տերերը չծախեն և կամ գրավ չդնեն։

Մատենադարանի № 7446 ձեռագրի գրիչն իր թողած չափածո հիշատակարանում խստիվ պատվիրել է.

«Իշխանութիւն ոչ ոք չունի
Տալ գրաւական վասն արծաթի,
Կամ վաճառել ընդ քանքարի,
Զի է յազատ ամենայնի»[97]։

Դավիթ անունով մեկը ձեռագիր է հիշատակ թողել իր որդի Շահնազարին և հանձնարարել նրան.

---

[94] **Ե. Լալայան,** Ցուցակ ձեռագրաց Վասպուրականի, էջ 362։

[95] ՄԱՄ ձեռ. № 3797 (տարբեր էջերում)։

[96] ՄԱՄ ձեռ. № 2670, թ. 327բ։

[97] ՄԱՄ ձեռ. № 7446. թ. 1ա։

«Ո՜վ Դաւիթ իմ սիրելի
Եւ հարազատ որդի՝
Յուսյ ծերութեան իմ յուսալի,
Գիրքս յիշատակ ես ինձ թողի
Ի վայելումն քեզ լիցի...
Խնդրեմ ազատ պահել ամենայնէ՝
Ի գրաւէ, ի վաճառէ,
Ի հրոյ և ի ջրոյ և ամենայն որոգայթէ.
Որպէս զբիբ երկու աչէ
Եւս առաւել զլոյս միջէ»[98]։

Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի ձեռագրի գրիչն անեծք է դրել այն անձնավորության վրա, որը կհանդգնի գրավ դնել և կամ վաճառել ձեռագիրը. «...թէ ով ոք յանդըգնի լրբաբար և դամահի (այսինքն՝ թամահ անի—Ա. Ա.) ծախելոյ, ինքն առցէ զվրէժ յաւրն ահեղ ատենին»[99]։

Գրիչների մյուս խնդրանքն է՝ հատուկ ուշադրություն դարձնեն ձեռագրերի պահպանությանը. շորով բռնեն, կեղտոտ ձեռքերով ձեռք չտան, խոնավ տեղ չդնեն, մոմ և ձեթ չկաթեցնեն վրան, հեռու պահեն ցեցից և միջատներից, թաց մատներով չթերթատեն, չաղտոտեն և այլն։

Մատենադարանի № 2394 ձեռագրի գրիչը իր չափածո հիշատակարանում տաղարանի օգտագործման և պահպանման մասին հետևյալ հանձնարարությունն է տալիս.

«Ո՜վ սիրելի եղբայր որ էք,
Ձայս քեզ խրատ տամ որ լսես.
Յորժամ ըզտաղս եղանակես,
Թուղթըն թքով չապականես,
Ջկողն անողորմ յետ չպարզես,
Հանց որ կայլին վնաս գործես,
Կամ անգէտին ձեռըն դընես,
Խոզաց մարդկան կոխան շինես։
Ջոր տաղ կամիս որ ասես,
Յանկին համարն յառաջքըն տես.
Տգիտութեամբ չի չարչարես,
Այլ համարով շուտ գտանես,
Ի սօղ պաթներն վայր չի ձգես,
Կամ երկու մարդ բռնես քաշես,
Կամ ի վերան գինի վաթես,
Կամ եղ և մոմ կաթեցընես,
Այլ յոյժ սիրով նախախնամես,
Սրբեալ ձեռօք, լաթով բռնես,
Ի հրոյ, ի ջրոյ ի զատ պահես,
Ի չորային դեղի դնես»[100]։

Երուսաղեմի մատենադարանի սեփականություն հանդիսացող № 283 ձե ռագրի Ստեփանոս գրիչը խնդրում է ընթերցողին կեղտոտ ձեռքով ձեռագրին ձեռք չտալ, կազմը չափից ավելի բաց չանել ու խնամքով պահել.

---

[98] «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. Բ, էջ 193։

[99] «Ցուցակ ձեռագրաց Վենետիկի», հ. II, էջ 548։

[100] ՄԱՄ ձեռ. № 2394, թ. 4բ—5ա։

«Ով ընթերցող այսմ տառիս,
Յորժամ կարդաս կամ բան ուգտիս...
Այլ և խընամ տար դու գրիս...
Ճենճոտ ձեռաւք մի՛ աստ հպիս,
Թէ կատարեալ սէր դու ունիս։
Մի՛ հանց բանար քան զչափն ի վեր...
Յերակ խնամ տար իմ ընկեր...»[101]։

Գրիչների հաջորդ խնդրանքն այն է, որ ահ ու փախ լինելու դեպքում չմոռացվի վերցնել նաև ձեռագիրը. «Թէ խռովութիւն և փախուստ լինի,— կարդում ենք 1331 թ. գրած մի հիշատակարանում,— հող տարցեն և փախուցեն»[102]։

Գրիչները բարոյական պարտք են դրել գալիք սերնդի վրա, որ ձեռագրերն ավար տանելու դեպքում ետ գնեն։ Ստեփանոս գրիչը 1653 թվականին գրած խրատ-հանձնարարականների շարքում խնդրում է ձեռագիրը ավար տարվելու դեպքում, գնել և ետ վերադարձնել.

«Խան մի խրատ տամ լսեցէք.
Գիրքս ամանաթ ձեզ պահեցէք,
Գերի երթայ՝ նայ դարձուցէք,
Գէշ և ի կաթիլ տեղ մի դրէք,
Ջմոմս ի վերայ մի թափուցէք,
Թքոտ մատով մի շրջէք,
Եւ լրբութեամբ մի պատառէք,
Թէ պատուած խիք լինիցէք,
Բանիս ասարտ կայ, գիտացէք,
Մեր կուսէն շատ չձանձրացնէք,
Երկու շորով և շագուսով պակաս չանէք»[103]։

Բազմաթիվ ձեռագրեր են հասել մեզ, որոնք ժամանակին գտնվել են գեյության մեջ, և առանձին հոգատար բարերարներ են գնել և վերադարձրել նրանք։ Այսպես, Մանչեստրի մատենադարանի սեփականություն կազմող հայկական մի ձեռագրի հիշատակագրությունից երևում է, որ այն ժամանակին գտնվել է գերության մեջ։ Գյուղացիները դրամ են հավաքել և ձեռագիրն ազատել գերությունից՝ թողնելով հետևյալ հիշատակությունը. «Գնեցաք ի գերութենէ գեղով, մեր հալալ մալովն առաք»[104]։

---

[101] «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. Գ, էջ 111։

Մենք ունենք մի շարք ձեռագրեր, որոնք բաժանելով մեր ժողովրդի դաժան ճակատագիրը թափառիկ կյանք են ունեցել՝ փախչող գաղթականներն իրենց հետ տեղափոխել են և ձեռագրերը։ Այդ տեսակետից ուշագրավ է հռչակավոր Մշո «Ճառընտիր»-ի արկածալից պատմությունը։ 1204 թվականին սելջուկները սպանում են ձեռագրի տիրոջը և այն ավար վերցնում։ Մի շարք հայ բարերարներ հավաքում են 4000 դրամ, գնում ձեռագիրը ավարառուից և ետ վերադարձնում։ Մեծ եղեռնի ժամանակ՝ 1915 թվականին, Մուշից գաղթած երկու քույրեր, մոտ երկու փութ ծանրություն ունեցող այս ձեռագիրը բաժանում են երկու մասի և շալակած փախցնում բերում իրենց հետ։ Ճանապարհին դժվարանալով տանել, հարկադրված են լինում մի մասը թաղել Էրզրումի եկեղեցու բակում, իսկ մյուս մասը երկուսի բաժանելով, մեծ դժվարությամբ բերում հասցնում են Էջմիածին։ Հետագայում ռուսական ծառայության լեհ սպաներից մեկը պատահաբար գտնում է Էրզրումի եկեղեցու բակում թաղված ձեռագրի մասը։ Այժմ այդ ձեռագրի բաժանված մասերը բերված են իրար մոտ և այն պահվում է Մատենադարանում։ Այս ձեռագրից մի քանի թերթ բաժանվել և հասել է մինչև Իտալիա, և այժմ Մխիթարյան հայրերի մատենադարանի սեփականությունն է։ Ձեռագրից մի քանի մանրանկարներ պոկված են։

[102] «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. Գ, էջ 106։

[103] Օգտվել ենք Տիրայր եպիսկոպոսի ձեռագրաց ցուցակից, որը պահվում է Մատենադարանի արխիվային բաժնում (ՄԱՄ-ի արխիվային բաժին, Տիրայր եպիսկոպոսի ֆոնդ, գ. 118)։

Մատենադարանի № 4687 ձեռագրի հիշատակագիրը հայտնում է, որ խոջա Մուրադշահը վճարել է տվյալ ձեռագրի փրկագինը և ազատել այն գերությունից՝ խնդրելով «ողորմիս» ասել իր հիշատակին որպես «ազատարարի»[105]։

Ուշադրության արժանի է այն, որ միջին դարերում չէին ասում, թե ձեռագիրն ավար տարան կամ ձեռագիրն ավարառությունից ազատեցին, այլ՝ ձեռագիրը գերի տարան, ձեռագիրը գերությունից ազատեցին։ Ձեռագրի վրա նայել են իբրև սրբության, իբրև շնչավոր էակի։

Ձեռագրի գրիչները կողկողագին խնդրում են, որ երբ ուզում են ընդօրինակել տվյալ ձեռագիրը, դժվարություններ չհարուցեն։ Նրանց համոզմամբ «փակված ձեռագիրը՝ կույր է»։ Վարդան գրիչը, Եղիշեի Վարդանանց պատերազմի պատմությունը բովանդակող ձեռագրի ընդօրինակման առթիվ գրած հիշատակարանում, պատվիրել է. «Բայց եթէ խնդրեսցեն զսա վասն կարդալո[յ] կամ ընդօրինակելո[յ], մի՛ խնայեսցէն, վասն զի զսա այսր աղագաւ եմ գրել, զի ամենեքեան աւգտեսցին»[106]։

Մատենադարանի № 5034 ձեռագրի գրիչը ևս խնդրել է, որ դժվարություն չհարուցեն ձեռագիրն ընդօրինակել ցանկացողների առջև.

«Ով սիրելի եղբայր բարի,
Ես եմ թշուառ չնչին թշուառ գերի,
Գրքոյկս այլոց մի դարձրի (այսինքն՝ դժվարություն
մի հարուցիր—Ա. Ա.)
Այլ օրինակ տուր կամ գրի»[107]։

Պատահել է, սակայն, որ ձեռագրերի տերերը որոշ դժվարություն են հարուցել՝ չեն տվել կամ տվել են կարճ ժամանակով։

Ամեն տեսակի անպատեհությունից ազատ պահելու համար, գրիչները խորհուրդ են տալիս երեխաների և տգետ մարդկանց ձեռքը ձեռագիր չտալ, քանի որ նրանք կտրում են էջերը, խզմզում են, պոկում մանրանկարները, ջնջում հիշատակարաններում նախկին գրչի անունը և իրենցն են գրում և այլն։

Հիշատակարաններում անեծքներ կան նաև ձեռագիր գողացողների հասցեին.

«Ով որ զսա գողանա,
Երկու աչօքն կուրանայ,
Հոգւով և մարմնով կապեալ մնա,
Այժմ և յաւէտ և ապագայ»[108]։

---

[104] Ե. Լալայան. Ցուցակ ձեռագրաց Վասպուրականի, էջ 41—42։

[105] ՄԱՄ ձեռ. № 4687, թ. 1ա։

[106] ՄԱՄ ձեռ. № 4809, թ. 212բ (հմմ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 70)։

[107] ՄԱՄ ձեռ. № 5034, թ. 229բ։

[108] Արտ. Սիւրմէեան. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի և Անթիլիասի ու մասնաւորաց, հ. Բ, Հալէպ, 1936, էջ 9։

Ցավալի փաստ է, որ միջին դարերում գտնվել են անազնիվ մարդիկ, որոնք դիմել են խարդախության, ջնջել են վաստակաշատ գրչի կամ բարերար պատվիրատուի անունները և նրանց տեղ իրենցը գրել՝ նպատակ ունենալով, իհարկե, ուրիշի «ողորմիսը» հափշտակել։ Այդ երևույթը հայտնի է եղել գրիչներին, ուստի նրանք իրենց կտակ-հանձնարարականներում անհրաժեշտ են համարել զգուշացնել ընթերցողին։

Հովհաննես գրիչը 1310 թ. իր ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում խոսելով գողության մասին, գրում է. «Գիտէք եղբարք, զի է սովորութիւն ոմանց, որ վերջին ժառանգաւորք գրոցն (այսինքն՝ ձեռագրերի տերերը—Ա. Ա.), զառաջնոյն զանուն կու ջնջեն և զիւրեանցն կու գրեն. և չար է սովորութիւնս այս։ Աղաչեմ մի՛ գործել զչարդ զայդ մեծ։ Ապա թէ արժան է գրելոյ, գրեսցէ զիւր անունն յայլում տեղւոջ, և զառաջնոյն մի՛ ջնջեսցէ անուն և կամ գիր։ Եւ որ ոք յայս յանդգնի և ջնջէ, ինքն ջնջի ի կենաց գրոյն՝ ո՛ ոք և իցէ»[109]։

Ձեռագիրը գրելիս հաճախ է պատահում, որ նախագաղափարը պակաս էջեր և հատվածներ է ունենում կամ գրիչը ինչ-ինչ պատճառով ի վիճակի չի լինում գրել և ավարտել իր ընդօրինակած բնագիրը, սխալներ է թույլ տալիս, այդպիսի դեպքերում հիշատակարանում խնդրվում է պակասը լրացնել և սխալներն ուղղել։

Թումա Ստամբոլցին 1666 թ. հիշատակարանում խնդրել է. «Եղբայրասէր կամօք աղերսեմ զպակասն լնուլ»[110]։

Գրիգոր Տաթևացին 1407 թ. գրած իր հիշատակարանում հիշման արժանի է համարում ձեռագրի սխալներն ուղղողներին.

«Աշխոյժ մտօք ընթերցօղաց
Եւ բարեսէր ունկնդրօղաց
Եւ զօրինակն շնորհօղաց
Եւ ուղղիչն սխալանաց...»[111]։

Ձեռագրի պակասը լրացնելու և կամ սխալներն ուղղելու գործը սակայն գրիչները չեն վստահում ամենքին, այլ միայն նրանց, ովքեր գրչության մեջ մասնագետներ են։ Այսպես, Խոսրով գրիչը Ղրիմում 1356 թ. ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում նախ գանգատվում է տեղի «երթևեկիս»-ի բազմությունից, որի հետևանքով սխալներ կան և խնդրում պակասն ուղղել սիրելաբար, և միաժամանակ պահանջում. «...այլ ոչ է ամենեցուն իշխել գիր յաւելուլ կամ պակասեցուցանել, այլ՝ իմաստուն գիտնականաց...»[112]։

Ձեռագրի բնօրինակման մոտավոր տևողությունը։—Այս հարցի լուսաբանությունը կարևոր է միջին դարերում ձեռագրի մոտավոր արժեքը պատկերացնելու համար։

Դժվար է, իհարկե, ձեռագրի գրելու տևողության հարցում որոշակի չափանիշ գտնել, որովհետև այդ կապված էր գրչի վարպետությունից, գրելու թափից, գրչի զբաղվածությունից, նրա համար ստեղծված պայմաններից և այլն։ Որոշ հիշատակագրություններ սակայն հնարավորություն են տալիս մեզ մոտավոր ձևով որոշել ձեռագրերի գրելու տևողականությունը։

---

[109] Արտ. Սիւրմէեան. Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի, էջ 334։

[110] «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. Գ, էջ 226։

[111] ՄԱՄ ձեռ. № 2072, թ. 231բ (հմմ. «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 78)։

[112] ՄԱՄ ձեռ. № 2943, թ. 554ա (հմմ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 420)։

Կարապետ Տյուրիկեցին 1331 թվականին ձեռագիրն սկսել է ընդօրինակել օգոստոսի 17-ին և ավարտել դեկտեմբերի 20-ին[113]։ Ձեռագիրը բաղկացած է 278 թերթից։ Յուրաքանչյուր էջի վրա միջին հաշվով կա 550 տառանիշ։ Եթե գրիչը 123 օրվա ընթացքում վերջացրել է ձեռագրի ընդօրինակությունը, ապա նա յուրաքանչյուր օր, միջին հաշվով, ընդօրինակած պետք է լիներ 5 էջ։

Ստեփանոս գրիչը ձեռագրի ընդօրինակությունը սկսել է 1369 թվականի հունիսի 10-ին և ավարտել նույն թվականի սեպտեմբերի 30-ին[114]։ Ձեռագիրը միջին մեծություն ունի. յուրաքանչյուր էջի վրա հաշվվում է մինչև 750 տառանիշ։ Ձեռագիրը բաղկացած է 468 թերթից։ Գրիչն օրական մոտավոր հաշվով արտագրել է 8—9 էջ։

Մխիթար գրիչն իր հիշատակարանում նշում է, որ նա ձեռագիրն ընդօրինակել է 30 օրվա ընթացքում[115]։ Ձեռագիրը բաղկացած է 111 թերթից, հետևապես գրիչն օրական ընդօրինակել է 6—7 էջ։

Երուսաղեմի Հակոբյանց մատենադարանի № 154 ձեռագրի հիշատակարանում՝ ձեռագրի ընդօրինակման ժամանակի մասին հայտնում է, որ նա սկսել է գրել «...ի ՌՃՁԶ (1737) թվին, յունիս ամսոյ ԻԱ (21) յաւուրն երեքշաբթի... և աւարտել ի ՌՃՁԸ (1739) թուին յուլիսի երեք, յաւուրն ուրբաթու»[116]։ Այդ հաշվով ձեռագիրը գրված է 742 օրվա ընթացքում։ Ձեռագիրը «Ճառընտիր» է, ունի մեծ չափս (31×22), գրված է երկսյուն, յուրաքանչյուր էջի վրա տեղավորված է 44 տող, ծավալն է 365 թերթ։ Գրիչը, ինչպես երևում է, օրական միջին հաշվով ընդօրինակել է մեկ թերթ։

Նույն մատենադարանի № 231 ձեռագրի գրչության հիշատակարանից երևում է, որ Հակոբ գրիչը սկսել է գրել սեպտեմբերի 9-ին և ավարտել հաջորդ տարվա հունվարի հինգին[117]։ Ձեռագիրն ընդօրինակվել է 140 օրվա ընթացքում։ Ձեռագիրը տաղարան է, բաղկացած միջին մեծության 541 թերթից։ Այդ հաշվով, գրիչը օրական, միջին թվով, ընդօրինակել է 7 և կես էջ։

Դավիթ Բջնեցին Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» ընդօրինակությունը սկսել է 1322 թվականի դեկտեմբերի 15-ին և ավարտել 1323 թվականի մարտի 30-ին[118] (գրել է 104 օրվա ընթացքում)։ Ձեռագիրը բաղկացած է 369 թերթից, մեծ չափի (29×21), գրված է երկսյուն։ Գրիչն օրական միջին հաշվով գրել է երեք և կես էջ։

Մաշտոցի անվան մատենադարանի № 6050 ձեռագրի գրիչ Մելիքսեթը խնդրում է անմեղադիր լինել ձեռագրի տառերի խոշորության. «Գիշերն եմ գրեր ի ճրագն. յամէն գիշեր Ը(8) թուխթ և ցորեկն՝ երկու թուխթ կամ իրեք»[119]։

Կարելի է բերել այլ օրինակներ ևս։ Բոլոր դեպքերում պարզվում է, որ գրիչը մեկ օրվա ընթացքում, միջին հաշվով, կարող էր գրել 5—10 էջ ձեռագիր՝ նայած էջի մեծությանը։ Միջին մեծության ձեռագիրը, կարելի էր ընդօրինակել 5—6 ամսվա ընթացքում, իսկ մեծ ծավալի ձեռագրերը՝ մեկ տարվա և կամ տարի ու կեսվա ընթացքում։

---

[113] ՄԱՄ ձեռ. № 149, թ. 278ա (հմմ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 244)։ Այդ նույն հաշվարկը կատարել է նաև Լ. Խաչիկյանը տողատակ ծանոթագրության մեջ։

[114] ՄԱՄ ձեռ. № 5883, թ. 468 (հմմ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 489)։

[115] ՄԱՄ ձեռ. № 4171, թ. 3ր։

[116] «Ցուցակ ձեռագրաց Երուսաղեմի», հ. Բ, էջ 66։

[117] Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Երուսաղեմի», հ. Բ, էջ 253։

[118] ՄԱՄ ձեռ. № 1481, թ. 325ա։

[119] ՄԱՄ ձեռ. № 6050, թ. 387ա։

Պետք է նկատի ունենալ, որ գրիչներն աշխատում էին մեծ խանդաղատանքով, աշխատում էին ամբողջ օրը և հաճախ նաև՝ գիշերը ճրագի աղոտ լույսի տակ։ Պատահում էր, իհարկե, որ գրչի համար ստեղծվում էին աննպաստ պայմաններ, և նա հարկադրված էր լինում ընդմիջել իր աշխատանքը, որի հետևանքով ձեռագրի ընդօրինակությունը ձգձգվում էր։ Մեզ հայտնի են ձեռագրեր, որոնց ընդօրինակությունը ձգձգվել է յոթ-ութ տարի։ Այսպես, օրինակ, Մատթեոս գրիչը 1378 թվականի Անգեղակոթ գյուղում գրած ձեռագրի հիշատակարանում հայտնում է, որ այն «յոգնակի սիրով» գրել է յոթը տարի[120]։ Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի № 317 ձեռագրի գրիչը հայտնում է. «...գրեցի ի դառն և յանանդորր ժամանակիս, որ ոչ գոյր հանգիստ ի տեղի գրելոյ. ի թվականի ՊԺԳ (1364) սկսայ ի գրել և աւարտումն եղև ՊԺԹ (1370)»[121], այսինքն՝ ձեռագիրը գրել է վեց տարում։

Ձեռագրի արժեքը։—Գրանյութի թանկ գնով ձեռք բերելու հանգամանքը, գրելու տառապալից աշխատանքը, թղթի կոկելը, կազմելու դժվարությունները և այլն, անդրադարձել են ձեռագրի արժեքի վրա։ Միջին դարերում այնչափ բարձր է եղել ձեռագրի գինը, որ միջակ հարստության տեր մարդու համար դժվար է եղել սեփական ձեռագիր ունենալ։

Մատենագրությամբ զբաղվող գիտակ մարդկանց համար ընդունված է եղել ասել, որ ձեռագիրն «անգին» է, նրա արժեքը դրամական չափանիշով չի կարելի չափել։ Այդ հասկացողությունը շատ հակիրճ ձևակերպված է Հակոբ գրչի 1386 թվականին գրած չափածո հիշատակարանում.

«...Առ յիմարն գրչագիրը ոչինչ արժէ,
Ի առ իմաստունն՝ գինն աշխարհի»[122]։

Մեզ հասած մի շարք հիշատակություններից երևում է, որ միջին մեծություն ունեցող ձեռագիրը գնահատվել է շուրջ հազար դահեկան։ Ձեռագրի արժեքը կապված է եղել ոչ միայն թղթի արժեքի և գրչի թափած աշխատանքի հետ, այլև՝ նրա ծավալի և զարդանկարված լինելու հետ։ Հովհաննես Ապարանցին իր ընդօրինակած ձեռագիրը վաճառել է 2000 դահեկանի[123], Էլբեկ անունով մեկն իր 1382 թվականին գրած հիշատակարանում հայտնում է, որ Ավետարանն ընկել է «ի ձեռն այլասէրից ի գերութիւն», ինքը 100 դահեկան դրամ է տվել և ազատել ձեռագիրը գերությունից[124]։

Ներսես գրիչը գրում է, որ ինքը շատ է ցանկացել ձեռագիր ունենալ, սակայն դրամ չի ունեցել. «Ես էի աղքատ և ոչ ունէի և ոչ փող մի»։ Դիմում է իր մերձավորներին և բարեկամներին։ Նրանցից տասնութ հոգի, ամեն մեկն իր կարողության չափ, դրամ է տալիս։ Այդ դրամով նա թուղթ է գնում Թավրիզում, գալիս Վայոց Ձոր և բանակցում Գլաձորի համալսարանի երկու գրիչների հետ, գրել տալիս մի Աստվածաշունչ՝ վճարելով 1500 դրամ։ Հետագա-

---

[120] ՄԱՄ ձեռ. № 2680, թ. 369ա (հմմ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 526)։

[121] «Ցուցակ ձեռագրաց Վիեննայի», էջ 757։

[122] ՄԱՄ ձեռ. № 2178, թ. 91բ (հմմ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 555)։

[123] ՄԱՄ ձեռ. № 184, թ. 3բ (հմմ. «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 15)։

[124] ՄԱՄ ձեռ. № 4171, թ. 3բ (հմմ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 543)։

յում, սակայն, գրիչները այդ դրամը քիչ համարելով, նրանից պահանջում են ևս 300 դրամ[125]*։*

Անիում 14-րդ դարում գրված մի Աստվածաշունչ գտնվել է գերության մեջ։ Գրասեր որոշ մարդիկ 112 թուման վճարելով գերությունից ազատում են։ Հովհաննես քահանան այդ մասին հետևյալն է գրում. «...ոչ գոյր ուրախութիւն սրտից մերոց վասն **գէրի** *(բոլոր ընդգծումները հրատարակչինն են—Ա. Ա.) լինելոյ սուրբ և ամենասքանչ Աստուածաշնչիս, ոչ լինելով թէ ո՛ւր իցէ. այլ աղէկիզեալ յոգնատենչ սրտիւ բազում որոնմամբ խուզեալ գտաք զգանձս գալս անգին ի հին քաղաքն* **Երեւան՝** *բազում ժամանակաւ գերի արարեալ* **տանօք իբրև եօթանասունօք.** *եւ մեք յոյժ ուրախացաք ի գիւտ սորին. շատ ջանիւք և բազում աշխատութեամբ և երթևեկութեամբ ՃԺԲ (112) թուման տուաք և ազատեցաք զսա ի ձեռաց օտարաց և ի տեղաց անպատշաճից»*[126]*։*

Նշանավոր մանրանկարիչ Թորոս Ռոսլինի մանրանկարած ձեռագրերից մեկը ընկնում է Ղրիմում ապրող Ասլանին ասորի մի առևտրականի ձեռքը։ Հռոմկլայի կաթողիկոսության պատվիրակ Կոստանդին եպիսկոպոսը, 1413 թվականին գտնվելով Ղրիմում, մեծ դժվարությամբ, միջնորդների միջոցով, գնում է նրանից՝ վճարելով հազար դրամ (22 ֆլորին)։ Այնուհետև ձեռագիրը կազմել և երեսն արծաթել է տալիս՝ վճարելով 900 դրամ (20 ֆլորին), կազմի արծաթե երեսը ոսկեջրել է տալիս՝ վճարելով երեք ֆլորին։ Ձեռագրի վրա ողջ ծախսը նա հաշվել է 46 ֆլորին[127]*։*

Դժբախտաբար, մենք չգիտենք այն ժամանակվա դրամի գնողունակությունը և դժվար է այժմ համեմատել մեր ներկա գների հետ։ Բայց մեզ հասել է մեկ-երկու հիշատակարան, ուր ձեռագրերը գնահատված են եղել անասուններով կամ բնամթերքով, որոնցից, այնուամենայնիվ, կարելի է որոշ գաղափար կազմել ձեռագրերի մոտավոր արժեքի մասին։

1668 թվականին ընդօրինակված հիշատակարանից երևում է, որ մի ձեռագիր փոխանակվել է երկու եզան, երկու ձիու և մեկ կովի հետ։ Հիշատակարանում այդ մասին ասված է. «Դարձեալ յիշեցէք զգնող սուրբ Աւետարանիս զՄարգարիտն, որ ետ երկու եզ, երկու ձի, կով մի և էառ յիշատակ ի մեր երիցուս՝ Մեսրոպիս, վկայութեամբ բռայես Խուկասին...» (Արթիկի ավետարան)։ Այսպիսով, ձեռագիրն արժեցել է երկու ձի, երկու եզ և մի կով։

Մատենադարանի № 212 ձեռագրի (1337 թ.) ուշ շրջանում գրված հիշատակարանից երևում է, որ այն գտնվել է գերության մեջ, Մուրատ-Բախշին և իր հորեղբայր Անդրեասը տվել են «...հալալ վաստակոցն կով մի՝ Ե (5) փապասի արժէ, Ժ (10) շահի դրամ, Ե (5) քիլայ ցորեն, Ժ (10) փապասի. առին. ազատեցին յանօրինաց գերութեանցն»[128]*։*

Մատենադարանի № 5339 ձեռագիրը ընդօրինակելու համար (1488 թ.) պատվիրատու տեր Հայրապետը, ըստ իր թողած հիշատակարանի, վճարել է 110 դուռուշ և մեկ ձի[129]*։*

Մատենադարանի № 7305 ձեռագրում ասված է, որ ձեռագրի նախկին տերը՝ Թադեոս քահանան, մահացել է, նրա որդին՝ Մարտիրոսը, հոր թողած ձեռագիրը վաճառել է Հակոբ քահանային՝ 600 դեկանի, իսկ այդ դրամով գնել է մի կով և մի եզ ու հոգեհաց տվել իր մահացած հոր հիշատակին։ Վաճառքի այդ գրի տակ վկաներ է ցույց տրված մի շարք մարդիկ[130]։ Այս տեղեկությունը պատմական մեծ արժեք ունի այն իմաստով, որ նրա հիման վրա մենք որոշ պատկերացում ենք կազմում ո՛չ միայն այն ժամանակ վաճառվող ձեռագրերի արժեքի (դեպքը տեղի է ունեցել 1433 թվականին), այլև՝ այդ ժամանակվա դրամի փաստական արժեքի մասին. 600 դրամով, ուրեմն կարելի էր մի կով և մի եզ գնել։ Հովհաննես Խիզանցին «Հայսմավուրք»-ը ընդօրինակելու համար վարձատրություն է ստացել 2150 դրամ, թուղթը կոկելու համար՝ 200 դրամ, եպիսկոպոսին՝ 450 դրամ (հավանական է ձեռագրի մայրը ստանալու համար)։ Վերջում գրիչը 200 դրամի արժեքով ցորեն է ստացել։ Այսպիսով, ողջ ձեռագրի վրա ծախսվել է 3000 դրամ[131]։

---

[125] *Տե՛ս Ղ. Ալիշան. Հայապատում, էջ 546։*

[126] *«Ցուցակ ձեռագրաց Վիեննայի», էջ 260։*

[127] *Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի», հ. Գ, էջ 18։*

[128] *ՄԱՄ ձեռ. № 212, թ. 811բ։*

[129] *ՄԱՄ ձեռ. № 5339, թ. 184ա (Հմմ. «ԺԵ դարի հիշատակարաններ», հ. Գ, էջ 122)։*

Այսպիսով, եթե մենք վերցնելու լինենք ամենից ցածր արժեք ունեցող ձեռագիրը, որը փոխանակվել է, ենթադրենք մի կովի և մեկ ձիու հետ, ապա մեր ներկա դրամով այն կարժենար շուրջ 600—700 ռուբլի, որով կարելի է այժմ հարյուրավոր գրքեր գնել։

* * *

Շատ ժամանակներ են անցել ձեռագրերը գրելու շրջանից։ Տպագրական տեխնիկան փոխարինելու եկավ գրիչներին և աստիճանաբար նրանց դուրս մղեց մատենագրության ասպարեզից։ Սակայն եկող սերունդները մոռացության չտվեցին նրանց ստեղծած մեծարժեք գանձերը և ըստ պատշաճին գնահատեցին նրանց վաստակը։

Մենք երախտագիտական խորին ակնածանքով ենք հիշում մեր գրիչներին։ Ժամանակակից սերնդի երախտագիտական պարտքի լավագույն ապացույցը՝ Խորհրդային Հայաստանի կառավարության հոգատար ջանքերով կառուցված Մաշտոցի անվան մատենադարանի հոյակապ շենքն է, ուր իրենց հանգիստն են գտել դարեր շարունակ անհանգիստ կյանք՝ սով, սրածություն, գերեվարություն և բազմատեսակ պատահարներ տեսած մեր խունացած ձեռագրերը։

Ինչ վերաբերում է հայ ձեռագրական մշակույթի արժեքին, ապա այդ շատ պատկերավոր ներկայացրել է ակադեմիկոս Ա. Պանկրատովան՝ Մաշտոցի անվան մատենադարանի այցելուների գրքում թողած հիշատակագրության մեջ.

«Որպես պատմաբան, որի համար հին ձեռագրերը մարդկության առաջընթաց շարժումն ապացուցող մի վեհագույն գանձ են, արտահայտում եմ իմ երախտագիտության խոր զգացմունքը հայ տաղանդավոր ժողովրդին՝ համաշխարհային մշակույթի գանձարանում նրա կատարած հոյակապ ներդրման համար։ Ցանկանում եմ, որ մեր ամբողջ սովետական ժողովուրդը ավելի շատ ու ավելի լավ իմանա հայ ժողովրդի մասին ընդհանրապես և նրա թանկագին մատենադարանի մասին՝ առանձնապես»։

---

[130] ՄԱՄ ձեռ. № 7305, թ. 202։

[131] «ԺԵ դ. հիշատակարաններ», հ. Ա, էջ 71։

АРМЯНСКОЕ ПИСЬМО И ПИСЬМЕННОСТЬ

Резюме

В 406 г. Месроп Маштоц создал армянское письмо и письменность, благодаря которых дошла до нас огромная литература — оригинальная и переводная. Среди памятников этой литературы имеются многочисленные уникумы, которые представляют большую ценность для изучения экономической, политической истории и истории культуры не только армянского народа, но и других народов Ближнего Востока. Написанная на древнеармянском языке (грабаре), эта литература в настоящее время изучается востоковедами ряда стран. Изучение армянских первоисточников ведется на основании их публикаций, но в настоящее издана лишь сравнительно небольшая часть этих текстов.

Зародившись в V веке, армянское письмо и письменность впоследствии подверглись значительным изменениям. Изменились формы букв, орфография, пунктуация, манера письма. Менялись и каноны письма. В рукописях различных эпох нередко встречаются иероглифические знаки, бревиатуры, лигатуры, криптограммы. Настоящая работа, содержит необходимые сведения об армянском письме и письменности, она привана познакомить с принципами правильного чтения армянских средневековых рукописей.

В средние века появились сочинения, посвященные армянской каллиграфии: искусство каллиграфии преподавалось в школах. О том, какое значение придавалось этим занятиям, говорит их название: «Канон форма всех искусств», т. е. руководство по всем наукам[1].

Число дошедших до нас армянских рукописей составляет около 5 000. Крупнейшее собрание рукописей хранится в Научно-исследоваельском институте древних рукописей при Совете Министров Армянкой ССР (Матенадаране) — 10 500 манускриптов. В это число не входят рукописи на других языках, фрагменты и документы. Рукописные собрания имеются также в Библиотеке армянского патриаршества в Иерусалиме, в библиотеках научной конгрегации мхитаристов в Вене и Венеции, в армянской церкви Всеспаса в Н. Джульфе, в Британском музее, Ватиканской библиотеке, Парижской национальной библиотеке, в ленинградских хранилищах (Государственная Публичная библиотека им. М. Е. Салтыкова-Щедрина, Институт востоковедения АН СССР и др.), в Институте рукописей им. К. С. Кекелидзе АН Грузинской ССР и т. д.

---

[1] Научное изучение армянской палеографии было положено монографией венского мхитариста А. Ташьяна «Очерк армянской палеографии», Вена, 1898 (на арм. яз.). Ряд вопросов армянской палеографии рассмотрен в монографии акад. Р. Ачаяна «Армянское письмо», Вена, 1928 (на арм. яз.). Особенно важным для изучения рмянского письма и письменности является труд Г. Овсепяна «Искусство письма у редневековых армян», сб. «Шогакат», Эчмиадзин, 1912 (на арм. яз., издан в ознаенование 1500-летия создания армянской письменности и 400-летия армянского книопечатания, опубликованы образцы армянского письма, взятые из рукописей и надисей). Отдельные вопросы истории армянского письма и письменности рассмотрены источниковедческих работах К. Кафадаряна, С. Коланджяна и нами.

Дошедшие до нас рукописи являют собой части некогда существовавших больших библиотек. Армянские рукописи разделили тяжкую судьбу создавшего их народа; периодически вторгавшиеся в Армению иноземные захватчики уносили их в качестве добычи, зачастую уничтожали. Писатель XIII в. Степанос Орбелян рассказывает, как сельджуки, занявшие в 1170 г. Сюник, уничтожили библиотеку Татевского монастыря, где хранилось до 10 000 рукописных книг.

Невыносимые условия заставляли многих армян покидать родину и искать приюта на чужбине. Вместе с ними распространялись по свету рукописи (также как и другие культурные ценности). Но и в армянских колониях рукописи продолжали переписываться. В средние века появилось много таких новых культурных центров: в Индии, Египте, Польше, в Крыму, на Кипре, в Иране и др.

* * *

В первой главе «Проблема дохристианской армянской литературы» рассматриваются вопросы существования армянской литературы в языческий период. Автор склонен признать ее наличие, основываясь на следующих данных.

Древнейшие обитатели Армении (хетты и урартийцы) имели письменность уже во II—I тысячелетии до н. э. Естественно поэтому, предположить, что сложившийся этнически армянский народ не мог остаться непричастным к этой письменности, тем более, что армянское государство должно было организовать сбор налогов, вести дипломатические переговоры, учредить в стране порядок, вести войны и пр. Сохранились достоверные сведения о том, что в Арташесидской Армении, при дворе Тиграна Великого покровительствовали греческим ученым и писателям (Амфикрату, Метродору и др.). Согласно Плутарху, армянский царь Артавазд был автором речей, трагедий и исторических сочинений. Часть его трудов сохранилась до времени Плутарха[1].

---

[1] По мнению некоторых ученых, греческие легенды на монетах Тиграна, Артавазда и других царей Арташесидской династии подтверждают отсутствие в этот период армяноязычной письменности. Это неверно — монеты предназначались для обращения не только в Армении, но и за ее пределами. Следует помнить, что греческие легенды имелись на монетах, которые чеканились не только в Армении, но и в других странах эллинистического мира.

Проблема письма и письменности языческой Армении связана с вопросом о храмовой литературе. Как в прочих странах, так и в Армении храмы были не только религиозными центрами, но также очагами культуры. Жречество в Армении должно было располагать литературой, касающейся обрядов, справочниками для календарных расчетов, судебниками и пр. К счастью, у древних армянских историков сохранились попутные сведения, которые подтверждают наличие армянского письма и письменности в домаштоцевский период.

В армянский языческий пантеон входил также Тир, которого считали богом словесности и искусства. Народ, который создал бога письменности, должен был, разумеется, иметь собственное письмо. Мовсес Хоренаци рассказывает, что в древней Армении (в Ани Даранալийском) хранился храмовый архив и он пользовался одним из сочинений этого архива, автором которого был жрец Олимп. Об анийском храмовом архиве отец армянской истории упоминает рассказывая, что в Армению прибыл сирийский христианин Бартацан, дабы проповедовать христианство, но успеха не имел. Он проник в храмовый архив Ани, там перевел какое-то сочинение на сирийский язык, впоследствии оно было переведено им уже с сирийского на греческий. Этим переводом и пользовался Мовсес Хоренаци.

Другим обстоятельством, подтверждающим наличие в дохристианской Армении письма и письменности, является высокий уровень развития литературного языка, который в готовом виде унаследовала школа Маштоца. Богатый язык, великолепный стиль, высокое риторическое искусство свойственны всем армянским сочинениям V в.— как оригинальным, так и переводным.

Авторы III в. Филострат и Ипполит определенно свидетельствуют о наличии армянского письма. Ипполит в особой главе перечисляет народности, обладающие письменностью, среди них и армян.

О наличии домаштоцевского письма и письменности свидетельствуют также сочинения, датируемые IV в. Есть сведения, согласно которым существовал перевод Библии на армянский язык, выполненный до Маштоца. Автором этого перевода считался Григорий Просветитель, не говоря уж о ряде канонических сочинений IV века.

Лазарь Парбеци определенно говорит об армянском письме в IV в. Осуждая богослужение на сирийском языке, которое имело место до изобретения Маштоцем алфавита, он указывает на наличие армянских письмен.

Недавно в сборнике «История естествознания и техники в Армении» автор настоящего труда опубликовал отрывок армянского перевода, оригинал которого утерян. Речь идет об отрывке из календарных исчислений Андреаса Византийца. В этом тексте дата весеннего равноденствия приводится как по римскому неподвижному календарю, так и по армянскому подвижному. Это дает возможность установить, что перевод был выполнен до 381 г. При этом следует иметь в виду, что Армения, которая в начале IV века официально приняла христианство в качестве государственной религии, не могла на протяжении столетия обходиться без письма и письменности, поскольку христианство распространялось и проповедовалось с использованием письменной литературы и хотя бы Новый завет должен был быть переведен.

Армянские писатели обходят молчанием наличие домесроповской армянской литературы, ибо будучи христианскими авторами, они стремятся представить языческий период временем варварства и всю древнюю армянскую культуру связать только с христианством.

Таким образом, вышеприведенные факты приводят автора к убеждению, что столь развитая армянская литература V в. опирается на литературный язык и культурное наследство языческого периода. Очевидно, в Армении существовало армянское храмовое письмо и письменность. Мы, разумеется, не отрицаем наличия в языческой Армении также арамейских, греческих и сирийских письмен.

* * *

Мы располагаем тремя историческими первоисточниками о создании армянского письма: «Житие Маштоца» Корюна, «История Армении» Мовсеса Хоренаци и «История Армении» Лазара Парбеци. Писатели позднего средневековья, касаясь этой темы, в основном повторяют сведения трех названных авторов. Наиболее достоверным источником является сочинение Корюна, который будучи учеником Маштоца, был хорошо осведомлен о деятельности своего учителя.

Маштоц родился в деревне Ацекац области Тарон, образование же получил в знаменитой школе Антиохии, которую возглавлял философ и ритор Либаний. Здесь учились выдающиеся деятели раннего христианства—Иоанн Златоуст, Василий Кесарийский, Григорий Назианзин, Феодор Мопсуестский, Леонтий Армянин. По возвращении, Маштоц в течение некоторого времени был секретарем при дворе, потом перешел на воинскую службу. Но здесь он оставался недолго, а приняв духовный сан удалился в один из монастырей области Голтн[1].

Близкое общение с народом помогло Маштоцу увидить насколько греческое и сирийское влияние угрожают местной культуре и какими прочными были основы язычества. Маштоц возвращается в Вагаршапат, предстает перед католикосом Сааком Партевом. С одобрения царя Врамшапуха он принимает решение взяться за создание армянского письма, но тогда же становится известно, что у сирийского епископа Данила уже имеются армянские письмена. Получив их, Маштоц открывает школу и обучает учеников, но вскоре убеждается, что Даниловы письмена весьма несовершенны и не отражают фонетических особенностей армянского языка. Стремясь восполнить этот недостаток Маш тоц, по поручению Саака Партева, возглавив группу учеников отправляется в Месопотамию с тем, чтобы там разрешить проблему армянского алфавита. Он побывал в Амиде и Эдессе; ученики разделились на две группы, одна изучала греческий, другая сирийский язык. Сам же Маштоц, при содействии местных ученых, ревностно отдался созданию армянского алфавита.

---

[1] Маштоц быстро возвысился на церковной иерархической лестнице и достиг сан хорепископа, занимался проповедями. В то время в горных районах Армении язычество было еще довольно крепким, и проповедническая деятельность была неизбежна

Добившись успеха, Маштоц с двумя учениками приступил к переводу «Притчей Соломона» и возвратился в Армению. Здесь были открыты школы, где Маштоц и Саак Партев начали обучать детей новому письму.

Маштоц, Саак Партев и их ученики плодотворно занимаются переводческой деятельностью. Переводят как с сирийского, так и с греческого. Согласно первоисточникам, Маштоц создал также грузинский алфавит (с помощью грузина Джалы) и албанский (с помощью албана Вениамина).

Во второй главе подробно говорится о значении нового письма в связи с социально-экономическим и политическим положением Армении в V в.

В III в. н. э. в Армении утвердились феодальные отношения. Новый господствующий класс не мог, разумеется, ограничиться идеологией умирающего класса. Христианская церковь приняла деятельное участие в создании и утверждении новой феодальной идеологии. Не случайно вопросом создания армянской письменности озабочены крупнейшие государственные деятели — глава светской власти царь Врамшапух и глава духовной — католикос Саак Партев.

